



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԵՆՐԻԿ ԲԱԲԵԱԽԱՆՅԱՆ

## ՄԱՐԴՈՒ ԱՌԵՊԾՎԱԾԸ

Բանաստեղծություններ



Երևան 2011

ՀՏԳ-891.981-1 Բարախանյան

ԳՄԳ-84Հ-5

Բ122

Կազմող և նախաբանի հեղինակ՝  
Ներսես Աքաբեկյան  
Բանասիրական գիտությունների թեկնածու

Բարախանյան Հենրիկ

Խ 330 Մարդու առեղջվածը:Բանաստեղծություններ/ Հենրիկ Բարախանյան.-Եր.:«Գրական Հայրենիք» ՓԲԸ, 2011թ., 616 էջ:

Գրքում ամփոփված է Հենրիկ Բարախանյանի բանաստեղծությունների ընտրանին:

ՀՏԳ-891.981-1 Բարախանյան

ԳՄԳ-84Հ-5

ISBN 978-5-540-02249-1

© Հ. Բարախանյան, 2011թ.:



Հ. Բարախանյան

## ԽԵՆՐԻԿ ՔԱՐԱԽԱՆՅԱՆԻ ՄԵՐՈՒՆԴԻ ԸՆԴՊՈՂՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Հենրիկ Քարախանյանի սերունդն ընդունված է անվանել «70-ականների» կամ «գարունականների» սերունդ: Պայմանականություն է, իհարկե, գրականության պարբերացման միջոց, որովհետև Գիրը մենակի աշխարհ է, և Գրելը՝ Անհատականության շնորհ: Եվ եթե ընդհանրություններ, այնուամենայնիվ, կան էլ, չեն վերածվում ընդհանրականության, մնում են ժամանակի, ոչ թե գրողների ընդհանրություններ:

70-ականները մեր գրականության նոր սերնդի համար բնորոշվում էին ազատամտությամբ. բոլոր ոլորտներում՝ ազգային խնդիրներ, պատմության վերընթերցում, պոեզիայի արվեստի վերանայում, ժամանակակիցների ներաշխարհի ու կենակերպի նորովի ստուգաբանում և այլն:

Բանաստեղծության տարածքին նետված այդ նոր հայացքը Պարույր Սևակը բանաձևեց հանրահայտ նոյակ հարցադրումով, իսկ մինչ այդ և իր բանաստեղծությամբ, և տեսական հոդվածներով ու հարցադրույցներով հաստատել էր գլխավոր ճշմարտությունը՝ ժամանակակից բանաստեղծության համար «չի կարելի»-ներ չկան:

Վյափիսով, Հենրիկ Քարախանյանի գրողական սերունդը ուներ մի քանի ամուր մեկնակետ՝ Չարենցի, Բակունցի, Թոռովենցի, Մահարու, սուալինիզմի շրջանում գրականությունից դրւու մղված մյուս մեծերի վերադարձն ու վերահաստատումը որպես գրական օրենսդիրներ, Պարույր Սևակի նորարական հեղափոխությունն ու «հայրությունը», 1965-ին սկիզբ առած հզոր ազգային շարժումը, որն իր հետ մեր ողջ պատմության վերահմաստավորման անխուսափելիություն էր բերում, կոմունիստական գաղափարախոսության սնանկության վերջնական բացահայտումը, մանավանդ 60-ական թվականների վերջի Չեխովովակիայի իրադարձություններից հետո, և այլախոհական շարժման սկզբնավորումը, որն իր արձագանքներն ունեցավ նաև Հայաստանում...

Սկիզբը պայրուցիկ էր, ժամանակը՝ բարերեր, ճանապարհը՝ նշագծված, բայց հենց այսքանով էլ ավարտվում են, այսպես ասած՝ սերնդի ընդհանրությունները, որովհետև յուրաքանչյուրը յուրովի էր անցնելու այդ ճանապարհը, և հանրագումարն էլ, որ ժամանակի անաշառ հայացքն է, անհատական գնահատական էր տալու:

«Սերունդ» եզրույթով քողարկվելը (խոսքը միայն «գարունականնե-

րի» մասին չէ, այլ բոլոր սերունդների) ոչ միայն փոքրոգություն է, այլև միամտություն, որովհետև հատկապես բանաստեղծությունը, գաղտնագիր լինելով հանդերձ, մերկացնում է ոչ միայն իր ժամանակը, այլև ստեղծողին, և անհայտ ու չվերծանված ոչինչ չի մնում:

Հենրիկ Քարախանյանը բանաստեղծին վայել անցավ իր ճանապարհը: Քարձահունչ կամ հավուր պատշաճի խոսք չէ. իր բանաստեղծությունն է այդպես ստուգաբանում ստեղծողին, իսկ մենք ընդամենը վավերագրողն ենք:

Ազատության հնարավորությունը միշտ էլ գայթակղություն է: Մասնավորապես՝ պոեզիայում: Պատմության ցավը կարող է դառնալ թեմա, լեզվական որոնումներն ու այլացումները՝ մանվածապատություն, պատկերավորության պահանջ՛ խրճնարանություն, նորարարությունը՝ ինքնանապատակ ցատկուուք: Սերնդից քանի՞որ կարողացան դիմակայել ազատության գայթակղությանը՝ այլ խոսակցության նյութ է. Հենրիկ Քարախանյանը կարողացավ: Իր համար բանաստեղծությունը ոչ թե միջոց է, այլ՝ նպատակ, և ինքն էլ ոչ թե բանաստեղծ է (մեծամոլության ու մեծախսության հանրահայտ շեշտադրումներով), այլ՝ կապավոր, հաղորդիչ, միջնորդ, հենց այն միջոցը, որ Սևակի խոսքով Աստծու քարտուղար է կրչվում:

Բանաստեղծության վերաբերմամբ ես-ի գերակայության բացառումը, ընդհանրապես հակակշռման և դրա միջոցով հաղթանակի հասնելու բացառումը Հենրիկ Քարախանյանի առանձնահատկությունն ու նրան ճիշտ ընթերցելու բանալիններից է: Իրենը հաղթանակը չէ, այլ՝ հաղթահարումը: Եվ այդ ճանապարհին միշտ չէ, որ պարտությունը խուսափելի է: Նախ՝ իրեն, ապա և՝ սիրուն, մարդկային բոլություններին, հավատարմությանն ու հավատավորությանը: Եվ պարտությունը դառնում է բանաստեղծություն, այսինքն՝ փորձը դառնում է պատում: Պարտությունը պատմելու վաստակած իրավունքը: Որովհետև ինչպես հաղթանակը՝ պարտությունն էլ կովողինն է. փախչողը ո՛չ այս, ո՛չ այն է ունենում: Վհա, մինչև վերջ կովելու, պարտվելով հաղթելու, անկումներով վեր բարձրանալու այս հավատամբն է Հենրիկ Քարախանյանի բանաստեղծության արյունատար համակարգը և ոչ մի տեղ բանձրուկ ու խցանում չունի...

Որտեղի՞ց են այս կարծր, փշրվող, բայց չճկվող շիտակությունը, անսակարկությունը, կիսատոնների ատվերում պահվելու անընդունակությունը: Բանաստեղծի հոգենոր տոհմածառը պատկերելու միակ միջոցը իր գրի ճիշտ ընթերցումն է: Ըստ այդմ՝ գուցե նրա աշխարհի՞կ տոհմածա-

ոից են, նախնիներից, պապերից, ծնողներից, ցեղից, որի մարդիկ հսկում են ընթացքը՝ շեղվելու միտքն իսկ բացառելով: Գուցե երկրի և ժողովոյի արյունոտ, շարունակ վերավող պատմությունի՞ց, որ թեմա չէ, նոյնիսկ շհանդարտվող ցավ չէ, այլ՝ ամենայնը և ամենուրեք: Միրո՞ւց, գուցե, որ իր-անում է անունների, դեպքերի, իրողությունների մեջ, բայց և մնում այն միակ վերերկրայինն ու աներկրայինը, որին ամեն ինչ է տալիս ու տիրանում մի անչափելի հարստության, որի նժարելին միայն անմնացորդ կյանքն է: Գուցե աստվածների՞ց, որոնց դավաճանեցինք, և աստվածներից, որոնցից դավաճանված ենք ու՝ նոր աստվածների փնտրութի մեջ: Ապագայի՞ց, որը տեսնում ու տեսանում է բանաստեղծը՝ դիմելով զավակներին ու բռներին, և՝ ոչ միայն իր, բայց ամենից առաջ՝ ընթերցողին, որը բացելով Գիրքը՝ ուշիմ ունկնդիր, ապա՝ գրուցակից, վերջապես՝ ոգու ընկեր ու դաշնակից է դառնալու...

Հենրիկ Բարախանյանի պոեզիան հյուսվում է այս ամենից՝ տիեզերքից, երկրից, մարդկանցից, երազանքներից ու պատրանքներից, կորուստներից ու գյուտերից, հաղթանակներից ու պարտություններից, և մանրամասն ընթեռնելի է, քանի որ իհմնված է խսկան բանաստեղծության երեք խարիսխների վրա՝ ճշմարտախոսության, անկեղծության և խիզախության:

Բանաստեղծությունը զգեստ չէ, որ բաքցնում է թերություններն ու ընդգծում ընդդեմին: Բանաստեղծությունը հենց ինքը մերկանալու հնարավորությունն է, և նա, ով բանաստեղծությունը զգեստ է դիտում, առնվազն ծիծաղելի է:

Հենրիկ Բարախանյանի բանաստեղծությունն այնքան մերկ է, ինքնատես և ինքնադատ, հաճախ՝ անխնա ինքնադատ, որ նյարդի շոշափելի տրոփը փոխանցվում է քեզ, դառնում քոնը, տեղափոխում այն լարված, գերզայուն աշխարհը, որի տիրակալը սպառվում է արարումով, բայց գուգահեռարար տիեզերաշափ մեծանում է քո աշխարհը:

Այսպես յուրաքանչյուր «մեծ պայքարնից» արարվում է այն տիեզերքը, որ կոչվում է Բանաստեղծություն՝ ըստ արարչի պատկերի ու նմանության, բայց և բնակելի՝ ընթերցողի համար:

Միննույն ժամանակ՝ երկրային է Հենրիկ Բարախանյանի բանաստեղծությունը՝ հիշատակարանի նման և օրագրի պես: Բանը կենսակից անձանց հականե հանվանե հիշատակելը կամ իրադարձությունների վավերագիր շարադրանքը չէ. կյանքի օրագրումն է հենց դառնում բա-

նաստեղծական պատումի սկզբունք:

Հենրիկ Բարախանյանի համար վերացարկումը երբեք վերացականություն չէ: Բանաստեղծության շնչառությունն իրական է, երկրային, այսօրեական, նույնիսկ՝ այսպահային, որովհետև բանաստեղծությունը այլ չի խնում: Անկախ նրանից՝ էափրամ է, քաղաքական պամֆլետ, թե պատմական պոեմ, անկախ նրանից՝ հերոսը սերնդակից գրաքննադատը, ժամանակակից քաղաքական գործիչը, թե Տիգրան Մեծը կամ Գառնի տաճարն է, բանաստեղծությունն այսօրեական է, այսինքն՝ արդի և արդիական:


Բանաստեղծը կարող է և պետք է ապրի միաժամանակ բռլոր ժամանակներում, սակայն ժամանակի բանաստեղծությունը ժամանակակից չլինել չի կարող: Ժամանակավրեպությունը բանաստեղծության մահն է: Եվ Հենրիկ Բարախանյանի բանաստեղծությունն էլ այսօր, 21-րդ դարի արդեն երկրորդ տասնամյակում հնչում ունի, որովհետև չի վրիպել ի՞ր ժամանակից և ի՞ր ժամանակի մեջ:

Խոսքը բանաստեղծության հայտանիշերի՝ հանգի, չափի, կշռույրի մասին չէ, այլ՝ Մարդու և Գործի, Սկզբունքի և Արարքի, Կյանքի և Մահվան միջուկի, որ անփոփոխ ու հավերժական է բռլոր ժամանակներում: Սա է Հենրիկ Բարախանյանի ստեղծագործության խորհուրդը՝ խիզախ հավատարմությամբ ցուցանել միջուկը՝ հանկարծակի և ինքնահատուկ պատկերներով, բռլոր լեզվաշերտերի կիրառմամբ, բանաստեղծության կառույցի ոչ թե փոլոզմամբ, այլ նորացմամբ ու հարստացումով:

...Դժվար է ժամանակակից մասին գրել անցյալ ժամանակով, սակայն կենաց անարդարությունն անգամ բանաստեղծության մեջ այլ խորհուրդ է առնում: Մարդն է վերջավոր, բանաստեղծությունը՝ երբեք: Որովհետև մարդը բանաստեղծությամբ պատմում է ոչ թե իր, այլ ժամանակի ու տարածության, անսկիզբ-անվերջազգորի մասին: Ու եթե տարածությունը մեզնից գողանում է մարդուն, իսկ ժամանակը՝ նրա մասին հիշողությունը, ապա բանաստեղծությունն անկողոպատելի է, քանի որ հենց ինքն է տարածություն ու ժամանակ: Եվ անվերջության մեջ ի՞ր արարչի անունն է կրում: Այս դեպքում՝ Հենրիկ Բարախանյան:

Իսկ մնացյալը՝ Գրքում...

ՆԵՐՍԵՍ ԱԹԱՔԵԿՅԱՆ



27.7 ± 1.8

### ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Նա եկավ այսպես...  
Մի մութ գիշեր  
դուռն առանց բակելու,  
լույսն առանց վառելու,  
բառն առանց հաշվելու,  
և ասաց՝  
գրիք...

### ՆԱԽԱԲԱՆ ԿԱՄ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Աստծու կամքով, արդարությամբ  
մենք ամենքս աշխարհ եկանք,  
մեր դեմքերին կնիքը հոր,  
և մեր հոգում՝ խիղճը մեր մոր,  
եղայր, քույրեր իրար ննան,  
ամեն մեկս՝ տարբեր զարնան,  
նաև տարբեր ցավ ու հոգսի,  
նաև տարբեր բառ ու խոսքի,  
նույն արյունի տարբեր եռքով,  
տարբեր հերթով ու հավատով,  
բայց ամենքից, ամենքից զատ  
մեր հեգ հոգում  
ծնողների շունչն հարազատ:

Զարմանում եմ, և զարմանքս չունի սահման,  
զարմանում եմ ծնողներիս հավատամքով,  
մորս խղճով այն անսահման  
և բարությամբ ինքնախոռվ:  
Լուս կնստեր՝ պատին հենված,  
թեպես ջահել, բայց ծերացած,  
հոգում հազար առ ու տալիք,  
ծնած յոթը ջահել զալիք  
ու յոթ խորհուրդ իր հոգու մեջ,  
ու յոթ հոգսեր:

Լուս կնստեր, և աչքերը մերկ, լուսավոր  
հառած կետի մի անորոշ՝  
կրափառեր ճամփաներով իր մանկության:  
Եվ շրբները իրար սեղմած,  
պապակ՝ օդին մեր լեռնային,  
աչքերը մեծ, մի քիչ արբած  
բուռ արցունքով կարտասվեն:

- Մամ, հերիք է, մամ, ի՞նչ եղավ,-  
արցունք-թաղանքն աչքի վրա,  
դեմքին ժախտ, շրբները՝ խուփ,  
մայրս կուզար, մայրս անզութ:  
Հետո զարթնած աղջիկ-խանդով,  
կարբեր նա աչքերն իր թաց,  
կհեծկլուար խորունկ խանդով  
ու կսկսեր գործն իր կիսատ:

Հայրս խոժոռ կգար միշտ տուն,  
շլեցի ու չտեսա խոսք ու խնդում,  
միշտ լրակյաց, ուշիմ, զգոն,  
հավատարիմն իր լուրջյան:  
Գարասկզի ահեղ կովից  
մինչև կրիվն Հայրենական  
հայրս անցել էր մեկ առ մեկ,  
հայրս ինչի՞ վրա խնդար:  
Էլ գերություն, էլ փախեփախ,  
էլ կոտորած, էլ ցավ, էլ վերք,  
ամենն այդպես տեսել մեկ-մեկ՝  
հայրս ինչի՞ վրա խնդար...

Ու եղ մորից ու եղ հորից  
ծնված վերջին զավակը՝ ես,  
մանկությունս՝ կովի բերան,  
որը ասեմ, որը պատմեմ:  
Գուրք էր մայրս, հայրս՝ խոռվը,  
մայրս հույս էր, հայրս՝ բոլոր,

ավերակ էր մայրս շահել,  
հայրս՝ կովիվ, հայրս՝ ավեր...  
Քույր ու եղբայր հանդիպելիս,  
հասկանում էինք իրար անքառ,  
ամեն մեկն՝ նոր տան ճրագ,  
ամեն մեկն՝ մի կտոր մայր:  
Աստծու կամքով, արդարությամբ  
մենք ամենքս եկանք աշխարհ,  
մենք՝ նույն մորից, մենք՝ նույն մարդիկ:  
Մեր դեմքերին՝ կնիքը հոր,  
և մեր հոգում՝ խիզճը մեր մոր,  
և հայրենիքը մեր տեսանք  
արդեն զարկված ու վիրավոր,  
և բզկտված, և թալանված,  
մեր հողը մենք տեսանք մանկուց  
ու թեն մենք վիրավորված,  
մեր մեջ գործ կա՝ մորից ծնված,  
սակայն և մեր լուս հոր նման  
միշտ լրակյաց և միշտ զգոն...

Ճիշտ է, հայրն ու մայրն են ծնում,  
և հայրենիք ունենք մենք նոր,  
սակայն վերքն է մարդուն սնում,  
և վերքով ենք մենք վիրավոր:  
Վյս աշխարհում կա մի հին խաղ,  
որ կոչվում է ճակատագիր,  
որքան կուզես աչքդ փակիր,  
այս աշխարհում կա մի հին խաղ:  
Եվ ողորմի անցյալներին,  
նրանց շիրմին՝ հազար ծաղիկ,  
իսկ նորածին մանուկներին՝  
պայծառ, պայծառ, պայծառ գալիք:

\*\*\*

Հերոսական ասք չէ սա սոսկ  
և կամ հզոր փառաբանում,  
և ոչ զրոյց մի ինքնակամ,  
որ կրքեր է սոսկ բորբոքում:

Հավատարիմ ձռն է սա մի՝  
ապրած օրվա ու արքայի,  
այստեղ փաստն է սոսկ տիրակալ,  
մնացածը՝ չեղյալ մի բան...

Լեռը ծնվեց երկրաշարժից,  
Վստծու մատն է նրա տերը,  
որքան կուգես խոսիր փորձից,  
եղած բանն է իրեղենը...

Չկա այստեղ ո՛չ սեր, ո՛չ փառք  
և ոչ անուն հավերժական,  
այստեղ անունն է իր հնչում,  
որպես օրենք մի իրական...

\*\*\*

Ուզում եմ նկարել հոգին,  
նկարել բառերով մարդու,  
չքողնել ոչ մի մուր գաղտնիք,  
չմնա գաղտնիքը հոգու:

Ամեն ինչ վերծանել այնպես,  
որ հոգիս չցավի գիշերում,  
որ հանգիստ ապրեմ հոգեվարք,  
ոչ թե այն, այլ այս աշխարհում:

\*\*\*

Գրիչ բռնելը նոյնն է,  
թե ձեռքիդ ջերմաշափ պահես,  
իսկ ավելի ճիշտ՝ ավելի դժվար,  
երբ 38 ես:

Անցան օրերը, երբ քնում էի ես բոլորից շուտ  
և արքնանում ուշ,  
երբ օրը օր էր, պատրաստի մի օր,  
իսկ ինձ մնում էր միայն վայելի:  
Տարիներն, իրոք, զարմանալի են,  
իսկ գրիչ բառը՝ նաև խենթություն,  
երբ ամենքն արդեն հասուն այրեր են,  
իսկ դու՝ դպրություն,  
երբ բոլորն իրենց գործին բանիմաց,  
երեխադ անգամ հանձնել քննություն  
ու մայրենից իինք է ստացել,  
իսկ դու՝ բան ստեղծող,  
ծիծաղելի է լուսավոր դպրում  
կրկնվել այնպես, հոլովվել անվերջ,  
երբ բոլոր մարդկանց վերջը հայտնի է,  
իսկ օրը մի զի՞ծ՝ տարին հաշվելու:

Զարմանալի է այս հոլովույթը  
և համառությունն այս գրացավի,  
ժամանակը սև՝ նման ագռավի,  
կախվել է զիխս և ասում է ինձ՝  
հրամայում եմ, որ մատյան պահես:  
Գրիր ինչ եղավ և որ տարիքում,  
ով է վախավորած աչքերը փակել,  
ով է աղոթում հանուն տոքք լույսի,  
կապույտը ինչպես զատել շողերից,  
ամպը՝ քողերից,  
երեխան ինչպես խուսափի գրքից,  
որ հեռու մնա գայթակղանքից:

Գիտե՞ս, մի տան մեջ մի զիժ հերիք է,  
որ բողած գործը՝ գրում է այլոց  
վարքը մեծատառ,  
մի քիչ ավելին՝  
ուզում է գրել վարքը օրերի...

**Այսպես,**  
զիշերվա այս բանձր ժամին,  
երբ որ քննել է անգամ զիժ բամին,  
տեսնում եմ երազ, ու հետզհետեւ  
թվում է, թե ես արթնի եմ դեռ,  
մոծակի խայթից, իսկ ավելի ճիշտ՝  
հոծ մոծակների բանակ-խայթոցից  
արթնանում եմ ես,  
մարմինս, ասես, ասեղների դեմ,  
կծու, սուր ցավեր,  
իսկ դուրսը, աչք բացելուց հետո՝  
բափանցիկ կապույտ,  
շուշանի թևեր, կապուտաչ շուշան,  
իսկ ավելի ճիշտ՝ ծնվող մագաղաք...

**Արթնանում եմ ես, ու աչքերիս դեմ՝**  
իրդեհ կապույտի, որի արանքից  
քիչ հետո՝ ծիրանի կարմիր և  
արքայավայել շողեր ու շաղեր...

**Արթնանում եմ ես ու**  
դիտմամբ, ասես, եիշում եմ արդեն  
որերորդ անգամ...

**Հունիսի 17,**  
տարիները, այն՝ բռան գնացին,  
պատերազմ ու բռ,  
գնացին իրենց մեղքը քավելու,  
անցյալի համար ո՞վ է մեղավոր,  
անցյալ էր, անցավ:

Եկան նորերը,  
սով էր, թե ահ էր,  
ով որ ատել էր, բռող նա մտածի,  
իսկ դու մեծացիր:  
Լույսը բացվում է,  
կապույտը քիչ-քիչ փոխվում է լույսի,  
Աստված կարող է վայրկյանը ներկել,  
իսկ ժամանակը՝ թոշող քառարեն,  
շինում է օրեր, դեմքեր ու դեպքեր...

**Հետո հասկացա,** որ օրացույց է  
աշխարհը համայն,  
թղթե օրացույց,  
մարդկային ձեռքով հատ-հատ սոսնձված,  
իսկ մենք ...  
**Հետո ի՞նչ ասեմ այս բացվող օրվան,**  
թոշուններն արդեն օդն են մշակում,  
ձնում ու կարում:

**Թող բարի լինի առավոտը այս,**  
հանճարեղ ո՞վ այր, շիրիմիդ բարի,  
որ հազար օրեր անքուն, աչք բաց  
տարութերվեցիր այս օրվա առաջ,  
օրերիդ առաջ,  
իման ննջում ես հովերի երգով:  
**Ու ես՝ մոռացած արթնացման պահը,**  
պատճառը ամեն,  
բարի լույս նախ քեզ, հետո բոլորին,  
անմեղ ու անքեն լույսի զավակներ,  
հետո՝ ապրողաց:

17 հունիսի, 1979 թ.

## ՄԱՐՏ ԱՌԱՅՑ ԶԵՆՔԻ

Սովորական մի դպրոցում ուսում պիտի ես առնեի,  
հապատությամբ այսօր միայն պիտի ասեմ՝  
այն օրերին դժվարությամբ դպրոց մտա:  
Հաղթանակներ, ինչքան ասես, տարել էին երեխերը,  
նրանք կարծես փողոցում էին ծնվել-սնվել,  
ինձ մնում էր ընտելանալ կամ էլ կովել,  
ինձնով ծնել հաղթանակը:  
Մտրուկի պես ոև ու ճերմակ,  
միջանցքներում՝ փոքրիկ տղերք,  
որ սովի հետ երես-երես կովել էին, հաղթանակել,  
մահից խել գոյամարտը,  
կրիվ ունեին այս կյանքի հետ, կովում էին:  
Մերկ երկարէ դանակներով ելան իմ դեմ,  
մահը մեր մեջ մտել էր դեռ քաղց-սովի հետ,  
վախից առաջ խելքն է ծնվել այս աշխարհում,  
դրա համար հաղթանակին ժանգ չի պատում:  
Եվ սիրեց լավը լավին, ընտելացան վատերն իրար,  
մի տաք ապտակ ծանրացրեց մեզ նորերին,  
ջերմությունը բառ չդարձավ, ապրեց մեր մեջ,  
ճակատագիրն արդեն գիտեր՝ ով ինչ կանի:  
Դասարանը, ուր ներս մտա ես առաջին զինվորի պես,  
խաղաղ օրվա պատերազմի շունչը փչեց,  
այս սենյակից կրիվ էին մեկնել մի օր  
ավագները մեր երկվորյակ՝ եղայր ու քույր:  
Ասեղի պես ցավը հոգին իմ սողոսկեց,  
ինձ մնում էր կրիվ անել իմ անձի հետ,  
ոչ ոք այստեղ, այս դպրոցում, ամենուրեք  
չէր պատրաստվում ազգանունն իմ Բայրոն կնքել:  
Հետևակի ոտքով պիտի ես քայլեի՝  
ոտնահոտի զգացումը իմ սրտի մեջ,  
աստվածներն իրենց իրաց պիտի ժխտեին,  
ինձ մնում էր ճակատագրին լուս հետևել:  
Ճակատագիրը՝ ամբարտավան, տարիքով մեծ,

առել էր ինձ պտույտի մեջ իր քմահաճ,  
մանում էր լուս, լուս մանում էր թելք բրդյա,  
սովի դիմաց մի տաք գուլպա պարզելու:  
Ինչ էլ լինես, ուր էլ գնաս քո երազով,  
ճահճից լոտոս չի ելնելու,  
գործում էի տարերքի դեմ ես մանկամիտ,  
բայց ափ ոսկյա, սեր ոսկեաչ չէի գտնում:  
Խոկում էի ինչ պատահեր՝ անդեմ, անմիտ,  
չգիտեի ինչ է, բնավ, սիրոս ուզում,  
կովում էի առանց զենքի, աննպատակ...  
Թող օրինվի գալդ բարի, ով խե՞նք ասպետ:  
Թող օրինվի, երազների իրեւ թևե՛ր,  
ձեր գալուստը, ազատումը իմ չարիքից,  
ու մի գիշեր, կիսախոռով ինքս ինձ հետ,  
հանձնվեցի գրացավի դյուրող խոսրին:  
Հետո պիտի ընկալեի, որ երգը՝ ցավ,  
մարտնչելու, հաստատումի խոռվը է մի,  
ծլում է նա հոգիներում աններդաշնակ,  
որ ուզում են ազատումի ամուր թևեր:  
Հետո պիտի զգայի, որ երգը այն լուրք  
ծնվում է լոկ հոգիների հայրենիքում:  
Իսկ դպրոցում՝ դասե՞ր, դասե՞ր, էլի՞, նորի՞ց,  
դաստիարակող, ինքնորոշման, հաստատումի,  
մտրուկների նման վազող տղա, աղջիկ,  
սովից փախած, մահկան ընդդեմ գոտեպնդվող...  
Մի առավոտ մի դեմք սահեց պատի մոտով,  
հետո ցանցը հնչեց ուժեղ, հետո՝ բառեր,  
և ուսուցչի տիտոր դեմքով դեմքս սահեց  
ու կանգ առավ աղջնակիմ՝ նատած մոլոր...  
Սեր, հայրենիք, հետո բառերը ուսուցչի.  
արդյոք շատ չէ՞ մի մտրուկի՝ երեք կարոտ,  
մի սրտի մեջ, մի մարմնի մեջ դյուրագրգիռ,  
որ դեռ չունի սահման գծած հայրենիքն իր:

\*\*\*

Մեր այգու բարդին շրջում է կամաց,  
տերևների հետ քամին է խաղում,  
նայում եմ անշարժ պատուհանից բաց  
ու իմ մանկության կածանն եմ փնտրում:

Բայց դժվար գտնեմ քեզ, իմ մանկություն,  
իմ հոգու բերկրանք, իմ անմեղ խաղեր,  
այսօր դուք հուշ եք կորած հավիտյան,  
այսօր նոր կյանքի ուղի եմ գտել:

Ինչպես անդարձ հուշ, մի տեսիլք որպես,  
կորել եք փոշոտ կածանի նման,  
կուզել անմեղ, քնըուշ խաղի պես  
ծով երազներս իմ ճամփին մնան:

Ու ճամփիս տեսնեմ խաղերն ուրիշի,  
մանկան բորովանք, գուրզուրանքը մոր...  
Ա խ, մանկությունս ես էլ չեմ գտնի,  
բայց մանուկ կզգամ կյանքում ամեն օր:

\*\*\*

Քանաստեղծությունը ծնվում է բանտում,  
սնվում է միայն ճշմարտությամբ,  
դրա համար են նրան ատում  
և փառաբանում հավերժությամբ:

Խաչվում է ամեն ճշմարիտի հետ  
և հազար անգամ իջնում խաչից,  
բայց անհնար է ջնջել իսպան  
այն, ինչ հաստվել է սուրբ մարմնից:

Եվ այդ մարմինը դու ես, իմ զո՞հ,  
և նպատակ՝ կիսով հաստված,  
ով չի հրկիզվում քո բազինին,  
չի փրկի նրան ոչ մի ասոված:

1986թ.

\*\*\*

Երեխային համբուրելու չափ մի սեր,  
նամակի մեջ ամփոփված լուս մի կարոտ,  
աստղերի հետ կայծ առկայժող աշխաներ,  
լուսնի պայծառ լոյսի հետ մի երազող...

Հավատարիմ՝ Ողիսևսի շան նման,  
և մտերիմ, ինչպես Դավթի հզոր ձին,  
անկրկնելի, ինչպես մորս ձեռքերը, անհայր,  
ինչպես զինվորի ձեռքը սանձին...

Դժբախտ, որպես անհող, անջուր երազող,  
թշվառ, ինչպես իր խակ հողից վտարված,  
անկրկնելի, անբուժելի և անհող,  
քե չունես դու ո՛չ հայրենիք, ո՛չ աստված:

\*\*\*

Ո՞ւր եք շտապում,  
խելահեղ երազներ,  
տեսիլներ վայրի,  
և սերեր հուսաքեկ,  
օրացույցի թերթիկի պես  
ընկնում են օրերը,  
ուր որ է կչորի գիշերը:  
Պատռեցեք լուսնոտ  
տեսիլները ձեր,  
ինչպես բողբոջը  
կեղևն է պատռում,  
կապվեցեք ամուր  
հողին ու ջրին.  
տեսիլքն այս մեկ,  
մեկ անգամ է տրվում:

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄԵՂԵԴԻ

Մնացի մենակ  
արևներիս հետ,  
երազներիս հետ  
մնացի մենակ,  
աշխարհը լցվեց  
հոգու երազով,  
ես իմ լուսնի հետ  
մնացի մենակ:  
Հույսիս ճամփեքին  
շարեցի անհոգ  
տեսիլները իմ  
ճերմակ ու կապոյտ,  
հոգուս դրներին  
փորագրեցի  
երազիս լուսե  
աչքերը խորում:

Մնացի մենակ  
թռչուններիս հետ,  
տեսիլներիս հետ  
մնացի մենակ,  
աշխարհը լցվեց  
հոգու երազով,  
ես իմ լուսնի հետ  
մնացի մենակ:

## ԽԵՂԿԱՏԱԿԸ

Ծիծաղի միջից է աշխարհը զինջ,  
թներիս վրա իմ սերն է հանգչում,  
նա ուներ երկինք եղնելու հմայք,  
իմաս անցյալը՝ այլևս ոչինչ...

Սեր, երկինք, թներ ու էլի բառեր,  
ծիծաղի միջից է աշխարհը զինջ,  
Կտակարանի պատվիրանները  
մեծահամբավ են, կներեն, ոչինչ...

Զննոցով ընկավ դրամը հողին,  
ո՞վ է հանդգնում խոսել ճշմարտից,  
գերիների պես անցնում են մեկ-մեկ  
ազնիվ տղերը՝ հոգնած ճառերից...

Ես խեղկատակ եմ, սակայն մեկ օրում  
կորցրի իմ մեջ ապրող ձայնը հին,  
զավեշտը, իրոք, իմձնից է ծնվել,  
բայց արցունքս, ահա, կոկորդ է խեղդում...

Իմ աչքերի դեմ աշխարհը փոխվեց,  
գաղափարները դարձան ուրվական,  
ամեն օր՝ մի նոր գայթակղություն,  
ես սպառվեցի խոսքերից ունայն...

Աստված, ազատիր ինձ ճշմարտից,  
մնացածներից կազատվեմ ինքս,  
թներիս վրա իմ սերն է հանգչում,  
ծիծաղի միջից է աշխարհը զինջ...  
1985թ.

## ՄԱՐԴ ԲԱՆԱԿԱՆ

Հեռավոր կարոտի պես կմնա կանգնած  
վեհաշուր սարք՝ մշուշում կապույտ,  
և կհեռանաք երազով անդարձ՝  
ձեր մեջ պահելով խոհերը ծեր, անփույր:  
Բայց մինչ հեռացումը և կարոտը մինչ  
կլրծի հոգին ձեր չարությունը,  
նախանձով կիշեք օձերին անգամ սև,  
որ վխտում են լեռան ստորոտում:  
Ահա հողե մի տուն՝ առավոտվա միզում,  
կծկված քարե հին սյուների վրա,  
և նրա դեմ փոված ճանապարհ մի լայն,  
որ ձգվում է դեպի լեռը լայնանիստ:  
Ճանապարհին երկու, ինչպես նկարում,  
փետուրե գրիշների պես երկինք միարժված  
քարդիների շարքեր՝ քամուց նազող,  
և հեռվում դաշտն Այրարատյան՝ լոյսերի մեջ,  
և վեհափառ արդեն միլիոնավոր տարի,  
դարձած միֆ կապույտ, երազ կամ կարոտ,  
լեռն այն՝ մշտնշենական խոռով  
և արժանավայել նատած գահին:  
Ահա, ելնում է տնից գունատ ու լուր՝  
նախնիների պես մտազրադ,  
փոքրիկ տղան այն, նստում քարին  
ու նայում է կարոտով հեռուն անծայր:  
Նստում է քարին ու կարոտով  
նայում է հեռուն երկար-երկար՝  
ծեր գուսանի պես իմաստնացած,  
հոգում՝ հազար խոհեր չվերծանված:  
Նա գիտե երգեր հազար-հազար  
իր նախնիներից մոտիկ-հեռու,  
բայց կարոտն այն չմահացած  
կրծում է հոգին ցավերով լի:  
Եվ երգերն այն զուզալ ու ջինջ

թափվում են բացվող առավոտվա դեմ,  
և հիշում է նա հենց այն մեկին,  
որի երգերը մոտ են անշափ:  
Եվ երգերն այդ՝ սրտեր մաշող,  
թափվում են հոգնած, թափվում են ջինջ,  
մշուշը ցնդում, բացվում են լույսը,  
լեռան վեշերը, կուրծքը, հոգին:  
Ու մտածում է, խորհում տղան  
ծեր գուսանի պես՝ միտքը հեռուն,  
հազար երգեր են վխտում հիմա  
և պատերազմներ՝ բարի ու չար:  
Եվ նա տեսնում է աշքերով իր,  
հոգու աշքերով իր կարոտի  
պատերազմն այն ոգով արդար,  
որ միրաժիկ է լեռան ստորոտին:  
Հանուն հացի և հանուն սիրո,  
ամենի համար և իր համար,  
նա տեսնում է իր սուրբ աշքերով  
ժամանակներն այն ոգով արդար,  
և պոետին այն՝ բազմաչարչար,  
որ երգում էր սեր, կարոտ ու կյանք,  
և հաղթանակի երգը շուրթին՝  
գրոհները վեհ, գրոհն արդար:  
Եվ լցվում է իր սիրտը ցավով,  
և լցվում են իր սիրտը կոտրված  
ցասումներ հազար ու խոռվշներ,  
և զգացումներ՝ արդեն ապրած:  
Եվ լցվում է նա առավոտվա  
լոյս ու շաղով, իմաստնությամբ,  
և միտքը պայծառ, զգաստացած  
թորվում է իր ուսերը բաց:  
Եվ մրմնջում է բառեր զգոն,  
բառեր իմաստուն ու իրական,

և հողի մասին հայրենական,  
և սիրո մասին՝ եղբայրաբար:  
Հողը պահվում է միայն արյամբ,  
ով չի գիտակցում զինը արյան,  
ապավլինվում է միֆ ու կարոտի:  
Որ հողը միայն, միայն արյամբ,  
արյամբ են գնում, ոչ կարոտով,  
վկա՝ մատյանները քափառական  
և կտոր հողն այս՝ գնված արյամբ:  
ճանապարհին երկու, ինչպես նետեր,  
կանգնած է շարքը բարդիների,  
և ձգվում է հեռուն ասֆալտապատ  
ճանապարհը կապույտ մշուշում:  
Եվ վեհափառ արդեն միլիոնավոր տարի,  
դարձած միֆ կապույտ, երազ կամ կարոտ,  
լեռն այն՝ մշտնչենական խոռվ  
և արժանավայել նստած գահին...  
Ահա ելնում է տնից գունատ ու լուս՝  
նախնիների պես մտազբաղ,  
փոքրիկ տղան այն, նատում քարին  
ու նայում է կարոտով հեռուն անծայր:

\*\*\*

Աստվածամոր աշքերի մեջ  
շարություն եմ փնտրում,  
շար դևերի աշքերի մեջ՝  
բարություն,  
խառնվել են չարն ու բարին,  
դև, աստվածություն,  
տիեզերքի կույր բիբերում  
տիեզերք եմ փնտրում:

\*\*\*

Աստված ինքն է գծել ճամփան,  
գնում եմ ես, ինչպես որ կա,  
նրա հզոր առեղծվածին  
ականատես, հզոր վկա...

Զեռքի ամեն մի շարժումով  
նա կարող է ինձ կործանել,  
և շարժումով ինձ անծանոթ  
նա կարող է և վերածնել...

Խաղալիք եմ, սարք մի չնչին՝  
շարտված այս հողի վրա,  
սպասում է, որ սխալվեմ,  
հետո ասեմ՝ մեղա՝, մեղա՝...

Ծանոր է խաղն աստվածային,  
ու չեմ կարող հպատակվել,  
գուցե դրա համար է նա  
վարքիս նայում ներողամիտ...

Բայց, դե, նա էլ ունի, անշուշտ,  
համբերության չափ ու սահման,  
կպատվե՞մ, թե՞ կազառվե՞մ  
բռղել է նա հույսն ինձ վրա...

Նրա հզոր առեղծվածին  
ես անցավոր ու ես վկա,  
գնում եմ ես, ինչպես որ կա,  
Աստված ինքն է գծել ճամփան...  
1989թ.

## ՄՈՏԵՅՈՒՄ

Երբ ուրիշները խլում են երազներդ  
և տանում են երգդ իրենց երգերի հետքից,  
և բառերը կորցնում են իրենց հերթագայությունը,  
կարդա բանաստեղծությունդ, երբ անձնն է գալիս:

Երբ հոգնել ես խոստովանությունից  
և տարիների վաստակդ թվում է անիրական,  
նատիր սենյակի տաքուկ անկյունում  
և ընթերցիր երգերդ կրակների առաջ:

Երբ սերդ՝ միակդ, թվում է ավարտված,  
և այլևս դու չկաս նրա համար,  
ընտրիր քեզ համար մի պայծառ լուսաբաց  
և կարդա երգերդ նրա առաջ:

Եվ օտարացումից հեռացիր դու  
և մոտեցիր դանդաղ ինքդ քեզ,  
հիշի՛ր, երգն ապրում է արյան մեջ՝  
արեգակի, սիրո, լույսի նման:  
1974թ.

\*\*\*

**Հանգի՞ստ,**  
աշխարհի բախտը լուծված է վաղուց,  
մեր նպաստակը տարածվելը չէ,  
կարո՞՞ն ես փոքրիկ շվի պատրաստել,  
գտնել մի լճակ անտառի ափին,  
նատել,  
մոռանալ թեմք շեքսպիրյան,  
խելագարությունը Դոն Քիշոտի,  
վերածնությունը Բեատրիչեի:  
Պարզապես նստել կապույտ լճափին  
ու լուսնասրինգ մի երգ նվագել,  
թեկուզ լուսնաափ լճակի մասին,

թեկուզ սրնգի,

որ ներքողում է փոքրիկ հայտնություն:  
Հանգի՞ստ,  
աշխարհի բախտը լուծված է վաղուց,  
նվագի՛ր մի բան:

## ՀԵՌԱՅՈՒՄ

Այս վայրկյանը՝ դատարկված բոլորից,  
ազատված անդորրից,  
ազատված խոստումներից, բառերից և  
սիրուց՝ օրերիս մեջ մեռնող:

Մոտեցող կամուրջները և օրերը ճոճվող,  
գայլաձկների մասին առասպեկները,  
ցանկություններն ու պաշտամունքները բոլոր  
այս վայրկյանից դատարկվում են ամենից:

Խոսքերը՝ խոտերի պես մենակ ու հոգնած,  
սպասումները՝ գոնաքափ երգերի պես,  
պատշգամբները՝ կրծքերի պես ծեր,  
և բառերը՝ խոստումներից հոգնած:

Այս վայրկյանից փոխում եմ տողերս,  
ընտրությունը՝ վաղուց մտացածին,  
ծառերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը  
և վերաբերմունքը հասկացությունների:

Ուզում եմ ապրել առանց մտածելու,  
առանց խոնարհելու և խոնարիվելու,  
ներում եմ բոլոր պատահականությունները  
և կատարվելիքը, որն անխուսափելի է:

\*\*\*

Իմ մարմնի ու իմ միջով  
անցավ արդեն երկու սերունդ,  
երկու սերունդ երգում է արդ  
իմ մարմնի ու իմ միջով...

Դժվար է շատ լուռ սպասել  
և հետևել դժվար է շատ,  
բայց առավել դժվարին է՝  
իբրև ցնորք առաջ ընկնել...

Հավատից է սերը ծնվում,  
ես՝ անհավատ իմ օրենքով,  
իմ հավատի և իմ միջով  
անցավ արդեն երկու սերունդ...

Իմ երգերից՝ ես հոգնարեն  
և անցյալից չնշին՝ ես նոր,  
երկու սերունդ երգում է արդ  
իմ մարմնի ու իմ միջով...

\*\*\*

Իմ հոգնած տարիների մուժից  
բարձրացավ քո դեմքը,  
մոլորված քոչունների երամը  
մնաց երկնքում,  
աշխարհն անձանաչելի էր  
անգամ Նարեկացուն,  
ես սիրում եմ այս հողը:  
Առյուծների բներին չմոտենալ,  
կինը հոգնած է,  
մարդիկ սիրում են իրար  
միայն գերեզմանոցում,  
հանկարծ փոխվե՞ր աշխարհը,  
հանկարծ փոխվե՞ր աշխարհը...

**ԱՂՈԹ-Ք**

Աղտեղություն չունեմ իմ մեջ, Տե՛ր,  
ոչ կնոջ և ոչ դրամի հանդեպ,  
մեղապարտության շապիկն անդեմ  
թույլ տուր, որ հանեմ հազիցս, Տե՛ր...

Հոգնել եմ ճշտից ու ճշմարիտից,  
բայց և չեմ լրել քեզ, Տե՛ր,  
աչքս՝ լի ու լի բարիքից, լարից,  
բայց չեմ կարող մենակյաց ապրել...

Ինչ կարող էի, լրեցի մեկ-մեկ,  
ամեն բան բողեցի՝ վայելը ու իրձվանք,  
հացը պաշտեցի ոչ իբրև գերի  
և չդարձա երբեք ես հացկատակ...

Եվ ճշմարիտը պահել եմ իմ մեջ,  
երբ դատի նատես, պարզեմ դեպի քեզ,  
առանց մարմնի ու առանց ցավի  
ճշմարիտը այն, որ կտակել ես...

Աղտեղություն չունեմ իմ մեջ, Տե՛ր,  
ոչ կնոջ և ոչ դրամի հանդեպ,  
մի անկյունն ինչ էր, չտվիր մեզ, Տե՛ր,  
որ անմեղության շապիկը հազնենք...  
1988թ.

\*\*\*

Թեպես երկար է ուղին,  
գիշերային է ճամփան,  
բայց կրակ կա իմ ձեռքին,  
և հոգիս է հոլորիան:  
Նա կոփվել է դարերի  
արևացոլ զնդանում,  
նրան դարերն են քերել,  
նրան դարերն են տանում:  
1965թ.

**ԳՆԱՇ, ԵՍ ԿԳԱՄ**

(1967 թ.)

**-1-**

Ծրբունքներին սառել է լույսը,  
օրը անցնում է,  
օրը լցվում է մեռնող աչքերով,  
գիշերը ծանր բողնում է խաչը,  
գնում է պարտված՝ դեպի արշալույս:  
Հաղթանակները տաք գոլորշու պես  
բարձրանում են վեր՝ կաթիլ դառնալու,  
անձրևում է երկինքը՝  
լվանալով բոլոր, բոլոր մեղքերը:  
Գնա՛, ես կգամ:

**-2-**

Արևը ցրեց արշալույսը լույս,  
արևը ցրվեց գիշերվա մթնում,  
ծանր երկունքում գիշերը ծնեց  
աղամամութը,  
արևագալը լույս է խոստանում:  
Գնա՛, ես կգամ:

**-3-**

Գնա՛, ես կգամ,  
կգամ քո հետքով,  
հետքը չի կորչում,  
ինչպես չեն կորչում  
մարմիններն հանգչող:  
Խաղալու ոչինչ չկա,  
չկան մարմինները  
անլույս ու մարող,  
չկա անցյալի  
հեթանոս ոգին:  
Գնա՛, ես կգամ:

**-4-**

Արյունը սառում է,  
այդ նրա ոգու,  
նրա մարմնի ամբողջությունն է:  
Երգը հարբած է արյամք  
ու նրա ոգելիությամբ:  
Հայտնությունների մատյանը, ահա,  
իրդեհների մեջ լույսեր է մարում,  
ծարավ են երգը, մատյանները դեղին:  
Երգի փոխարեն  
երգողները հարբած  
խմում են սառած արյունը լույսի,  
խմում են համբույր:  
Գնա՛, ես կգամ:

**ԱՐՁԱՆԵՐԻ ԽԱՂՄԵՐՈՒԿՈՒՄ**

Թողություն եմ խնդրում, Տե՛ր,  
իմ երկրային այս մաքրությամբ,  
երեխայի համբերությամբ  
թողություն եմ խնդրում, Տե՛ր:

Արձաններն են քայլում, ահա,  
ատոմային անմահությամբ  
և քառերի չքմեղությամբ  
արձաններն են քայլում, ահա:

Արձանները կիշնեն մի օր  
այս դասական վեհությունից,  
և քառերը օտար ու խուլ՝  
իմ անսահման տերությունից:

Թողություն եմ խնդրում, Տե՛ր,  
իմ երկրային ջինջ պարզությամբ  
և հավատով նայում եմ քեզ  
երեխայի համբերությամբ:

\*\*\*

Չնչեի ես օդն ազատ  
և չապրեի ես ազատածին,  
քանի որք կա և կիմ՝ բռնաբարված,  
ուրեմն կա շղթա երազներին...  
  
 Ինձ սպանեց ներսից ոգին անդավ,  
և բախվեցի անվերջ քարե պարհսպներին,  
ես չտարա արցունը՝ աղ ու լեղի,  
և ցուրտ իջավ կանաչ իմ երգերին...  
  
 Եվ զարկեցին անվերջ ու ատեցին,  
թույն խառնեցին նրանք իմ օրերին,  
սուտը եղբայր եղավ, քաղցը՝ ընկեր,  
և անեծքի որմը՝ խուղ որբերի...  
  
 Եվ քալանված, քշված ու անիծված  
կանգնել եմ ես, ահա, աշխարհի դեմ,  
քամին նվազում է իմ մազերին  
աստվածների հիմնը հին օրերի...  
  
 Օրինվես դու, արև, միակ աղբյուր,  
անտարազիր, մաքուր, անհանգրվան,  
օրեան դու միակ, միակ դու քոյր  
ազատության, աստված ու քալասան...  
  
 \*\*\*

Ապրեցիր, ինչպես հնում  
ճգնավորը,  
քո մերկ կացարանում  
երկնքում պահպանելով  
Աստծուն,  
ցածում՝ հոգիդ...  
Շուրջ վլսում եր ամբոխը  
և կանչում արի՝:  
Գու ընտրեցիր դժվարը՝  
լույսն ընդդեմ խավարի...  
1998թ.

\*\*\*

Երբ իրիկունը դողալով  
ընկնում է գիրկը երկրի,  
ու ափից ափ անզուսպ ծովը  
թաղվում ծոցում մթի,  
ինձնից անկախ ոտքերն իմ  
նորից ընկնում են ճամփա,  
համր ու լուռ, որպես արձան,  
քարանում են ծովափին:  
Ալիքի հետ ելնում են վեր  
տեսիլըներն արծարե,  
ուզում են ինձ խորքը տանել,  
ծովի ընդերքը հակինքե:  
Ու ես ահով հետ եմ քաշվում՝  
սարսած բյուր տեսիլքից,  
ահարեկված շոշափում եմ  
շրջապատն իմ, հետո՝ ինձ:  
Ու լուախնը ամորահար  
ու քող է առնում երեսին,  
ես համրաքայլ ճամփա եմ ընկնում՝  
կախարդված բյուր երազից:  
Ու հովերը՝ քաջքերի պես,  
համոզում են ինձ, կանչում հետ,  
ես սարսափած փախչում եմ,  
կորչում դաշտերում անհետ:  
Սակայն ուր էլ փախչեմ, կրկին,  
երբ շաղվում են աշքերն իմ,  
նորից ընկնում համր ճամփա,  
քարանում եմ ծովափին:

## ԱՇԽԱՎԱՅԻՆ ԽՐԱՄԱԿԱՆՔ

Թափվում էր զինին ու առավոտը,  
և օրը բացվում էր դանդաղ,  
ողջ գիշեր քամին աշխատել էր,  
լույսի տակ դիակներ կային անթաղ:  
Տերևները, խսկապես, արդեն հոգնել էին  
և հանձնվել քամու մահվան,  
աստղերի պես ընկել մայթերին  
ու սպասում էին խաչին:  
Պիրկ կոշիկներով անցավ տղամարդը,  
հոգնել էր նա էլ զիշերը,  
ու սահեցին աղջկա հպանցիկ ոտքերը՝  
բողնելով հետևից հառաջանք:  
Փողոցում խանվեցին անցողիկ զոյգերը,  
ծերերը՝ եռավոտ ու տխուր,  
լսվեցին զանգերը, բարձրացան խաչերը,  
աղմուկը արքնացավ նորուտ:  
Չոհերը գիշերվա մատնվեցին լոռության,  
ու քամին՝ վախեցած արյունից,  
բարձրացրեց թները, տերևները գունեղ  
խաղացին դեմքերին մարդկանց:  
Թափվում էր զինին ու առավոտը,  
և օրը բացվում էր դանդաղ,  
շտապում էին մարդիկ դեպի տուն ու գործը,  
շենքերը խաչվել էին անթարք:

\*\*\*

**Փողոցում մի շուն գիշերվա մթնում  
զիլ կլանչում էր,  
իիշեցի մի պահ. երկու օր առաջ  
տիրոջն էին թաղել:**

**Աստված թող ների, բայց ես հասկացա  
ցավը հոգեմաշ,  
ինքն էր, լրակնը և բանաստեղծը՝  
նույնպես ցավատանջ:**

**Հավատարմության ոչ մի զուգահեռ  
և ոչ մի ներում,  
կլանչում էր նա այնքան հուսահատ,  
ասես, տիրոջը հենց նոր էին թաղում:**

**Մտարերեցի իին ու նոր ցավեր՝  
շան խսկ օգնությամբ,  
զարմանալի են բանաստեղծները  
երևակայությամբ:**

**Փառք շատ լինի, Աստված վեհաշուր  
և ամենատեր,  
որ արարածին մարդ արարածից  
խիստ չես տարբերել:**

\*\*\*

**Ինձ օտար է այսուհետ  
հեկեկանքիդ երգը պաղ,  
կարոտանք ու սպասում,  
անրջանք ու կապույտ խաղ:  
Վաղոց, վաղոց է ծանոք  
անկումների այս ճամփան,  
ինչ զգացումն է ծնում,  
մոռացումն է գերեզման:**

### ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՂՈԹԻՐ

Վախվորածի նման, որից միայն ոչինչ,  
որից չնշին բան է միայն ծնվում  
և այդ չնշին բանի, չնշին բանի համար  
իզուր եռանդ ու ուժ, իզուր երգ է ծնվում...

Ես ասում եմ, այո՛, ասում եմ ես կրկին,  
որ առաջին լոկ զոհ, լոկ առաջին չկա,  
որ օրերի շղթան ճգլում, գնում է հար,  
մինչև անցյալը մեր, որից դեռ լուր չկա...

Եվ աչքերս, ահա, և մարմինս չնշին,  
որպես մի կերակուր, առած վարձիս համար,  
դեն նետելով կեղծմիտ, սուտ պատրանքները հին,  
նվիրում եմ, ահա, չտվածիս համար...

Ինձ խարել են նրանք,  
խաչել են ինձ նրանք,  
և վարձը իմ չնշին՝  
քարե երկիրն այս...

Իմ դեմ՝ կապույտ անցյալ,  
իմ դեմ՝ մորթված սերունդ,  
քարե երկիր իմ դեմ  
և մորթոտող մի սուր...

Ես եմ եղել նրա վավերագիրը միշտ,  
և իմ մեջ որոնեք թուլությունը ազգի,  
ոչ ոք երբեք չի կարող մեզ փրկել,  
բանի դեռ չի ծնվել պաշտամունքը մահի...

1986թ.

\*\*\*

Տե՛ր, դու կապրես հավիտենական  
ընտրյալներիդ անփոփած  
իշշողության դաշտում,  
իսկ ի՞նչ կմնա ինձնից...

Ես լսել եմ քո և դաշտում ամփոփված  
ընտրյալներիդ ձայնը...  
Մի՞թե հնչյունի չափ աղմուկ չէ  
հետմահու կյանքը,  
այդչափ մահվան քո՞ւն...

Վյաքանը բավական է, որ դառնամ  
անհավատ,  
քայց ես չեմ կարող,  
դու ես իմ մեջ վառել այդ կայծը,  
դու...

Անցյալս սարսափելի չէ,  
որովհետև մեղքերի քանակով  
զիջում եմ բոլորին,  
հավատով՝ քչերին:

Ես քեզ երբեք չեմ մոռացել, Տե՛ր,  
ես քեզ չեմ մոռացել...

Փորձությանդ քարը ծանր է  
ամեն ինչից,  
ծանր և անտանելի...

Ազատիր ինձ կամ ընդունիր,

ես ավարտել եմ այս կյանքի դասերը,

Տե՛ր, հերիք է...

1998թ.

### ՎԱՅՐԿՅԱՆԵՐ ՀԵՏՈ

Հիշողության փայլի հետ,  
վայրկյանի հետ հուշերի  
անմիտ քոչուն ես մենակ,  
և կեղծամ է միտքը սին...

Հիշողություն է արդեն  
սերը՝ ձեռքերիդ մեջ սուրբ,  
դու աչքերը համբուրիր,  
աչքերն ապրում են երկար...

Դու ձեռքերը համբուրիր,  
նրանք զգվում են փութով,  
և շարժումները նրբին,  
որ մեռնում են խոսքերով...

Վայրկյանների մասին դու  
մոռացիր, մա՛րդ, ու անցիր,  
վայրկյանները գեղեցիկ  
պատրանքներ են պացիկ...

Վայրել կարող է միայն,  
ով խոսք չունի բառի հետ,  
պատվաստումն այդ ահով լի  
կեղծ հավերժ է, կեղծ պատրանք...  
1985թ.

### ԴԻՄՈՒԿԱՅՐ

Վայրելու չափ ուրախություն,  
խնձորի ծառ, հայացքի խաղ,  
ծաղկից ծաղիկ մեղլի խոռուտ,  
դաշտի բուրմունք, խուճկի բուրմունք...

Երկնքից վար լույսի կարոց,  
կապույտ ամպոց լույսի կարոց,  
աշնան լոին անտաղի մեջ  
մանկան աչքեր ու մանկություն...

Եվ ոչ մի հուշ, և ոչ մի փակ,  
երկնքի ձայն, արև-զնիքոց,  
դաշտի խշշոց, մեղմիվ երազ,  
մայրական աչք՝ հառած վրաս:

### ՀԱՅՆԵԱԿԱՆ

Գինի, եղբայր հասակակից,  
ունայնության սպեղանի,  
փակվիր բոլոր նրանց առաջ,  
ով ապրում է սոսկ երկրային:

Դաժանությամբ մի լցրու դու  
առանց այլ էլ լցված հոգին,  
քեզ դատելը դժվար է քիչ,  
դատում է նա ուրիշներին:

Բանաստեղծը օվկիանոսում,  
ակոսելով ալիքը մեծ,  
մաքառումի երգն է երգում  
ճշմարտության իրով անեղծ:

Բայց ալիքը քո իին, դաժան  
սուրբ թներ է տալիս դևին,  
խղճա, եղբայր իմ հարազատ,  
խղճա գոնե արարողին:

\*\*\*

Ու ցուրտ լիներ, ու լուռ,  
դու փակվեիր քո մեջ,  
բառերը նեղ ու լայն  
չարքնանային մեր մեջ,  
բառերը լույս ու ցավ,  
նաև անգույն ու տաք  
չխոսեին, չասեին,  
մնային փակ, մենակ:  
Դու նայեիր երկինք,  
աստղոտ, անքառ երկինք  
ու հրաշքներ տեսնեիր,  
ու բառերդ քնին,  
պետք չեն խոսք ու զրույց,  
պետք չեն օտար խոսքեր,  
ու ցուրտ լիներ, ու տաք,  
լուռ տխրեինք մեր մեջ:

\*\*\*

Կրակներդ զուր մի մարիր,  
օրերն անգութ, օրերը խեղճ  
կրավալվեն ու կմարեն  
իրենց արնոտ մահիճի մեջ:  
Մրտիդ զարկը զուր մի համրիր,  
նրանք՝ կարմիր ու խելագար,  
իրենց հերում պիտի մարեն  
օրերն հեղձուկ ու ցավազար:  
Եվ հուսարեկ, և խելագար  
պիտի անցնի օրերի դին,  
որպես ամպի մի սև պատառ,  
որ ծածկել է արեգակին:

\*\*\*

Գ-ժվել եմ ես, այո՛, գժվել,  
զզվել եմ ես, զզվել,  
և զզվել եմ, և գժվել եմ  
բառերից ձեր անդեմ...

Առավոտյան հերանոս եք,  
ճշմարիտ եք այնքան,  
երբ դեռ լույս է ու զվարք եք,  
երբ դեռ մութ չէ այնքան...

Հոգեցունց է, հոգեպարար  
լարախաղաց ձեր ձին,  
երբ վարակը առատ ու թարմ  
դրված է ձեր թամբին...

Ամեն ինչի առաջինն եք  
և վերջինը անգամ,  
երբ առատ է քիմքի հոտը  
և ժայխոր՝ ներող...

Ա յս, գժվելով թե վերջանար,  
տանեի ողջն ինձ հետ,  
բան է, թե, ա յս, լուռ վերջանար,  
գժվելն է կեղծ ելք...

\*\*\*

Իշեցրու պատից խաչը,  
ճանապարհ պիտի ընկնես,  
չկորանաս երբեք,  
չհավաքես սուտ նշխարներ,  
չուրանաս թեզ սիրողին,  
հավատիդ այունը ջրանդես,  
գերեզմանաքար սարքիր  
պապերիդ գերեզմանոցում:  
Իշեցրու պատից խաչը,  
ճանապարհ պիտի ընկնես:

## ԳԻՇԵՐԸ ՎԱՅՄԱՐՈՒՄ

Լայմարում հազար սերեր կան պահված  
և հազար դավեր՝ գիշերվա խորքում,  
իսկ դու նատած ես արդեն ճերմակած,  
կոտրված սրտով անմահ Ֆառատի:

Գաղտնի՞ք է արդյոք, թե՞ չար խրախճանք  
տառապանքները այս մեկ հերոսի,  
...իսկ եթե ինքը, այս բնությունը հարատև հոսի՞,  
և... թշվա՞ն Ֆառատ...

Ես իմն ապրեցի, օտարված եմ ես  
և օտարված եմ ինքս իմ ձեռքով,  
ապրած վայրկյանով չափեցի տարին  
և արդեն ծեր եմ, արդեն անցողիկ:

Միրեցի ես շատ, եղա չափից խիստ,  
չափաքերեցի և կարոտ, և հույզ,  
միակի տեսքով քեզ արարեցի,  
որ ամենքի հետ և մենակ մնաս:

Կանգնել եք, ահա, հիմա իրար դեմ,  
թեպետ տկար են շուրբերն արարող,  
և դու պատրաստ ես այդ ծեր շուրբերով  
հաստատել նորեն...

Կինը սիրում է, օրը՝ լուսանում,  
և արեգակը՝ միշտ պտույտի մեջ,  
Տե՛ր Աստված, ապրողն ինչո՞ւ է մեռնում,  
երբ հավերժողի լեզուն է միակ:

Չար Մեֆիսոսներ, կարող ես խնդալ,  
առաջին կյանքս տվեցի երգին,  
արարման պահը խինդով էր հպարտ,  
երկրորդին՝ սերս կինի ահեղ:

\*\*\*

Լինել բոլորի հետ,  
լինել բոլորի մեջ,  
լինել բոլորի հետ  
մենակ:

Լինել բոլորի պես,  
ամենքի պես հստակ,  
ամենքի հետ սիրով,  
մենակ:

Ու չխորհել ոչինչ,  
ու չգրել ոչինչ:

\*\*\*

Այնպես ուզում եմ խոսել մերկ,  
հոգնատանց աշքերս բանալ,  
բարձրաձայն լաց լինել անվերջ  
և ցավոտ ձեռքերս լվանալ:

Չիշել մեղքերս անգամ,  
հեռանալ լավից ու վատից,  
ես ինքս իմ մեղքը լամ,  
և ցավեմ կորուստս մեռած:

Չնատեմ քարերին դարավոր,  
չմեմ շառաչը ջրերի,  
չիշեմ աշխարհը եղծված  
և ապրած, մոռացված մարդուն:  
Բարձրաձայն լաց լինեմ մենակ,  
չմեմ հեկեկանքս սեփական,  
մեղավոր, անմեղից հեռանամ,  
հեկեկամ բարձրաձայն ու լամ:

## ԱՆՀԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ուզում եմ ես ինձ հավատալ,  
բայց չեմ կարող,  
և դրանից ավելի եմ ես զայրանում,  
այն ե՞րբ էր, որ չարածին էի հավատում,  
և երկար էր առավոտը, կեսօր՝ ջինջ...

Եերը սեր չէր, այլ՝ այլացում,  
գույնը գույն չէր, սոսկ՝ ներմուծում,  
սակայն մեկ է, հավատում էի ես ինքս ինձ,  
հավատում էին նաև նրանք...

Լուսաբացը պատուհանս ծեծում էր զիլ,  
և այդ ձայնի արձագանքը  
բափում էր բաց պատուհանից,  
որին հոգի էինք կոչում:

Խելագար էր առավոտը,  
ասես, ես էի ծնել նրան,  
քրքջում էր, ես էլ հետը,  
ու հոսում էր մի ամբողջ դար մինչև կեսօր:

Կեսօրին ես ուրիշ մարդ էի,  
ճիշտ իր նման,  
ի՞նչ խելագար, հարսնացու էր արևային,  
արևաշող, տավղահար էր, քնար ու սեր...

Գիշերը, աշխա, երկարախոս բանաստեղծն այդ  
քերքում էր ու քերքում անվերջ  
աստղահուզում, աստղալեզու պոեմը իր,  
ես հարբած էի, ինքն էր հարքում:

Հիմա, երբ ես իրավես եմ ինձ հավատում,  
էլ այնպես չեն ինձ հավատում,  
ծիծաղում են, համբուրում են,  
հեռանում ենք ու մոռանում,  
մոռանում ենք մենք միմյանց ու հեռանում:

\*\*\*

Մարդկային սեր՝ մարմնից հեռու,  
մարդկային սեր՝ մարմնին իլու,  
տարօրինակ, տարակշիռ,  
բայց հաղթում է մարմինն արշիռ:

Եվ հաղթում է, երբ հոգու մեջ  
զոյց ափսեից մեկն է ծանր,  
տարողունակ ափսեն այդ լի,  
որ կարող է հոգի կշռել:

Գու հիշեցիր հենց այն մեկին,  
ես՝ մյուսին, որ ինձ էր մոտ,  
քեզ համակեց խոսքը շոյող,  
իսկ ինձ՝ բառերն անմեկնելի:

Երևի թե պատմությունը  
կրկնվում է սոսկ յուրովի,  
չարժե, ուրեմն, մեր սերը  
վերականգնել հենց մտովի:

Թող ես ապրեմ ինչ-որ իմն է,  
իսկ դու հիշիր քոնք, անշուշտ,  
անհնար է տեղավորել  
զգացումները անզգույշ...

Հանդիպում չէր բոլորովին,  
հանդիպում է ամեն մի դեար,  
բայց այն մեկը, որ ես տեսա,  
չեմ մոռացել կյանքում երբեք:

Ես շիմացա, թե ինչ ասվեց,  
իսկ նա ժպտում էր անտարբեր,  
բայց խոսքերում կարծես բացվեց  
ժպիտը իր, մտքերը մեր:

\*\*\*

Վարդ՝ կիսաքանդ ավերակ,  
ներաշխարհի լույս-պսակ,  
ցավի ծաղիկ,  
կույսի երգ,  
տաճ մեջ վառվող արեգակ...

Անխոս թռչուն,  
անբուն սեր,  
բաժանող սեր, միացում,  
վարդ՝ հավերժի խոսքի տուն,  
սրտեր, սրտեր ավերող...

\*\*\*

Կարապի երզն է, որ մուգ երկնքից  
իշնում է՝ հզոր քևերը բացած,  
մի վերջին անգամ երկնքը ճեղքած՝  
իշնում է դեպի լեռը վեհանիստ:

Այդպես և երգը՝ երկրից ելնող,  
թռչում է անձայր կապույտի միջով  
դեպի հեռավոր գահը սրբացած,  
դեպի մարդկության երազի հեռուն:

Կարապի երզը մշուշի միջով  
իշնում է՝ կապույտ քևերը բացած,  
Աստված իմ, Տե՛ր իմ, այդքան ակնդիր  
ցավին, կարոտին, ամենքին ներհակ:

Եվ այս երգերի անփույթ մշուշում  
հպարտ ճախրում է երկնային մի սիրտ,  
տեր՝ հողին, սիրուն, լեռներին, ջրին  
և այն Աստծուն՝ ամենքից վերում:  
1976թ.

\*\*\*

Հավատից շատ է իմ հավատամքը,  
սերս ուրիշին եերիք է անում,  
բայց ես կանգնած եմ այս խաչմերուկում  
ու միտք եմ անում:

Գտե՞լ եմ կյանքում մի հավատարիմ,  
անարող մի բառ,  
տրվե՞լ եմ երբեք ցանկություններիս,  
որոնք մշտապես ուսուցչապեսի խասությամբ գունատ  
նայում են դեմքիս:

Ո՞ւր է արարվող երջանկությունը,  
հեզ մանկությունը, պատանեկությունը,  
ջահելությունս էլ բռավ իմ ձեռքից՝  
կարգ ու կանոնի ոսկե շղթային օղակ դառնալով,  
մինչդեռ ուրիշներն ամեն ինչ արեցին  
կորցնելով նույնիսկ պարկեշտությունը,  
և լրբությունը դարձնելով օրենք՝  
օրենքի լեզվով դատապարտում են  
համբերությունն:

1976թ.

\*\*\*

Հավատում եմ արևներին,  
անձրևներին,  
հավատում եմ քո աչքերին,  
քո ձեռքերին,  
հավատում եմ երազներին,  
անգամ սև ու մուր,  
բայց ոչ երբեք օրենքներին  
արյունահոս:

\*\*\*

Թե ուզում ես լեռան հասնել,  
նախ վազքդ սանձիր,  
գազարներ բարձրանում են  
ոգով ձյունածիր,  
շրջանցում են համոզմունքով  
ամեն քար ու քուփ,  
ոգելից չէ քոիչքն անմիտ  
և վերելքն անփույթ:

Արահետ է անբիծ ճամփան  
և ուղին քարոտ,  
հանգստացիր, երբ երազին  
հոգիդ է կարոտ,  
թե ուզում ես գազաք հասնել,  
նախ վազքդ սանձիր,  
գազարները մոտենում են  
ոգուն ձյունածիր:  
1976թ.

\*\*\*

Իրիկունն իշավ աշքերիս մենակ,  
ու շուրջս մարդիկ դարձան ստվերներ,  
ծավալվեց օրվա աղմուկն անկանգ,  
սիրտս սպասող դարձավ երգ ու սեր:

Դարձավ շուրջը իմ խելազար մի պար,  
անհոյս կարոտի տագնապող երազ,  
ու կապույտի մեջ անուրջ իրիկվա  
սիրտս ինձ համար դառնում է անհաս:

\*\*\*

Հիմա լրության եմ մատնել երգերս,  
նինջը իջել է կապույտ վարդերին,  
հույսը քանդել է հոգուս վերքերը,  
հիմա լալիս են զարնան վարդերը:

\*\*\*

Երկինքը՝ կապույտ  
հրաշքների ծով,  
ու մենք լողում ենք  
խենք ու ապահով,  
լողում ենք զիտուն  
հիմարի նման,  
ոչ վախճան ունենք,  
ոչ էլ զերեզման:

\*\*\*

Խոնարհվիր քամու,  
բուքի առաջ,  
խոնարհվիր լույսի,  
զինու առաջ,  
խոնարհվիր սիրո,  
հույսի առաջ,  
խոնարհվիր մարող  
կույսի առաջ,  
մի տրոտմիր երբեք,  
ոք աշխարհում  
քիչ երջանկություն,  
քիչ բախս է տրվում:

\*\*\*

Մի քիչ շատ է լրությունը,  
մենակությունը ընկերացել է,  
հոգուդ քառեկ է հոգնությունը,  
կեսօրդ, թվում է, եկել է:  
Հավատդ հպարտ է էլի,  
աշքերդ՝ կապույտ ու ջինջ,  
ու ծով է ծիծաղդ լրության,  
ու ծով է ծիծաղդ էլի:

\*\*\*

Տուր ինձ մի վայրկյան  
մահից առաջ,  
մեկ անգամ համբուրեմ,  
մեկ անգամ հայինյեմ,  
մեկ անգամ ծիծաղեմ,  
մեկ անգամ լացեմ,  
մեկ անգամ քամբասեմ,  
մեկ անգամ անձրևեմ,  
մեկ անգամ արևեմ,  
հոգնեմ ու հոգմեցնեմ,  
անիծեմ ու պաշտեմ,  
չէ, մեկ վայրկյան ևս՝  
լրե՛մ...

\*\*\*

Երազիս մեջ քեզ տեսա,  
տեսա սերը մեր մեռած,  
երկինք ու խոլ ծով տեսա  
ու ճակույկ մի մոլորված,  
մուր ամպերի ծրարում  
անհոյս հեռող մի կարապ,  
երազիս մեջ քեզ տեսա  
ու մուր գիշեր մի անափ:

\*\*\*

Մեկ կորցնում եմ ամեն ինչ  
ու մեկ գտնում ամեն քան,  
ոչ կորցրածն է իմը,  
ոչ գտածս՝ ինձ նման:  
1965թ.

\*\*\*

Դրսում անձրևը լալիս է մենակ,  
տանիքս ծեծում,  
մրմնջում է լուս ինչ-որ եղանակ  
մոլոր ու տրտում...

Մերթ դոդրջում են մատներն ապակե  
ու լալիս անձայն,  
մերթ մրմնջում է անավարտ մի երգ,-  
աշխարհն է ունայն...

Մերթ հեկեկում են զարկերը քարե՛  
վերջին ուժն առած,  
մերթ շոշափում է իր լույս մատներով  
տանիքս սառած:

Դրսում անձրևը լալիս է մենակ,  
տխուր ու մոլոր,  
խոռված հոգուս երգերն է հյուսում  
օ՛րօռ՞՛րօռ՞՛ր...

\*\*\*

Հեռու է իմ տունը, մշուշոտ,  
արևի արձարով լվացած,  
ձյունի պես ճերմակ է, երազկոտ,  
արձաքե քրիչից ծնված:  
Իմ տունը խաղաղ է, մաքուր,  
իմ տունը՝ լուսավոր մի ճրագ,  
միտքն իմ պայծառ է, երահուր,  
սեղանիս վառվում է արեգակ:

\*\*\*

**Մոռացիր դու**  
**քեզ տանջողին,**  
**չարչարողին**  
**մոռացիր դու,**  
**դուր բացողին**  
**ու փակողին**  
**հանդարտ նայիր,**  
**հեռացիր դու:**  
**Թող հոխորտան,**  
**քող հայիոյեն,**  
**արյունոտեն,**  
**վերացիր դու,**  
**ինչ լինում է,**  
**քող որ լինի,**  
**բայց քո ձեռքով՝**  
**մոռացիր դու:**

\*\*\*

**Ես էմ հոգմել,**  
**մարել է հույսիս վերջին կանքեղը,**  
**բայց կանգուն եմ, տե՛ս,**  
**հյուսիս օվկիանում**  
**փշրվել է լուսե նավերիս կայմը,**  
**թիրերս դողուն խոռվի ծովում**  
**դեգերում են լուս,**  
**երազիս ոսկե ափն են որոնում:**  
**Իսկ արշալույսը որքա՞ն հեռու է,**  
**ես էմ հոգմել:**

\*\*\*

**Շնորհակալ եմ, Աստվա՛ծ,**  
**ամեն ինչի համար,**  
**ծառերի համար, որ կան,**  
**ստվերների համար,**  
**որ չեն կաշառվում,**  
**գիշերների համար**  
**այս անժածկոց:**  
**Շնորհակալ եմ, Աստվա՛ծ,**  
**իմ լինելու համար,**  
**իմ զույգ աչքերի,**  
**որ նայում են քեզ,**  
**ժամանակի համար,**  
**ուր ապրում եմ ես,**  
**այն անձրևի համար**  
**որ թափվում է:**  
**Շնորհակալ եմ, Աստվա՛ծ,**  
**լուրք երկնքի համար,**  
**բոշունների, ամպերի համար,**  
**և մարդկանց համար,**  
**որ սիրում են:**

\*\*\*

**Երեկ ես Մարտին Իդենին ասացի,**  
**որ չարժե մնալ օվկիանում,**  
**որ կյանքը՝ կյանք,**  
**բայց ուղին ուղի է մնում:**  
**Չփորձեցի համոզել նրան,**  
**քանզի ոսկու իր դարում**  
**ամեն ինչ սկավում և**  
**վերջանում էր այդպես:**

\*\*\*

**Իմ օրերը**

դասնում են դար,  
օրերը իմ հավերժաբար:  
Ես՝ օրերում փոքրիկ թռչուն,  
և նրանց հետ ունեմ իմ չուն,  
որ անցնում է խաղաղ, անթով  
մեծ դարերի խաչմերուկով:  
Իմ օրերը աններդաշնակ՝  
խաղաղության հզոր բանակ,  
իմ օրերը՝ հավերժ արթուն,  
պատերազմող խաղաղություն:

**Իմ օրերը՝**

երազանքի մի մեծ պատառ,  
իմ օրերը՝  
դատողության հզոր անտառ,  
իմ օրերը՝ թոխը ու քն  
և պատրաճներ հրաշակերտ:

**Առանց հրաշը՝**

օրերը իմ լաց ու խարկանք,  
իմ օրերը՝ բախիծ ու բույն,  
իմ օրերը՝ արծվի բույն,  
իմ օրերը և լավ, և վատ  
բարձունքներ են աննպատակ,  
իմ օրերը՝ հավերժող չու,  
իմ օրերը՝ կապույտ թռչուն:

\*\*\*

**Ինձ կախարդել են,**

երբեք ու երբեք  
ես չեմ արթնանա  
հավերժահանգիստ  
իմ լոյս աշխարհից:  
Ինձ գերեվարել,  
տանում են կապած  
դեպի հեռավոր ափերը ոսկյա՝  
չգիտեմ, դափնեպսակ դնելո՞ւ,  
թե՞ զիստելու:

\*\*\*

**Մայրս՝ տիսրությունս,**

հայրս՝ խռովքս,  
հայրենիքը՝ երջանկություն,  
հողը՝ կարոտս,  
Աստված՝ սփոփանք,  
սերը՝ հավատս,  
զիշերը՝ սատանա,  
ցերեկը՝ բախկա,  
ինչպես ամփոփեմ,  
հավաքեմ ի մի,  
միտք դժոխք է,  
աշխարհը՝ զինի...  
Մայրս՝ տիսրությունս,  
հողը՝ կարոտս,  
Աստված՝ սփոփանք,  
սերը՝ հավատս:

### ՆԺՈՒՅՆ ԻՄ

Ճանապարհիր ինձ, նժո՞յզ իմ,  
ճանապարհիր մինչև լուսաբաց,  
հոգնության ճամփան անցել ես լրին  
ու չես խոնարհել գլուխդ հպարտ:

Այրվել ես ինձ հետ իմ ճանապարհին,  
կիզված աչքերում պահած հոգնություն,  
չես դավաճանել ու չես ընկրկել,  
երբ արցունքներդ են հորդացել վարար:

Ապրել ենք մի տեղ, սնվել միասին,  
մենք միասին ենք գնացել լուսին,  
որպես մատանուն դրշմված  
խաչքար՝ հավերժ միասին:

Արյունոտվել են սորերդ բռիկ,  
ձիերը համք են եղել քո ցավին,  
տառապանքներիս միակ ակնդիր,  
չգրված իմ երգ, մեն միակ մոտիկ:

Ճանապարհիր ինձ, նժո՞յզ իմ,  
ճանապարհիր մինչև լուսաբաց,  
հոգնության ճամփան անցել ես լրին  
ու չես խոնարհել գլուխդ հպարտ:

\*\*\*

Թե հոգնել ես,  
աչքերդ փակիր,  
օգնել ես դու,  
գնա, հետացիր:

Թող որ երկիրը  
մնա իր տեղում,  
ինչ որ բացել ես,  
ընն է, հասկացիր:

\*\*\*

Ես գնում եմ  
ուղիղ գծված իմ ճանապարհով,  
իմ ձմռան, ամռան, գարնան,  
աշնան ճանապարհով,  
գնում եմ ձյունոտված,  
տերևածածկ:

Ես գնում եմ  
քիշ-քիչ թերվելով դեպի իմ հավատը,  
սերը, արցունքը, արևը,  
Ես գնում եմ  
իմ ոտնահետքերով:

\*\*\*

Թղթի վրա իջնում են բառերը,  
ինչպես ձյունը՝ երկրի,  
օրը կիսատ կարող է մեռնել,  
եթե սերը չկա:

Տորը փողոցում դեմքեր է խեղդում,  
և բառերը մնում են օդում,  
թպրտացող թռչունի նման:  
Զարմանալու չափ սիրում եմ աշխարհը,  
բայց ոչ բառերը:

Ես սիրում եմ իմ երկիրը,  
ես սիրում եմ իմ դրոշը,  
բայց ոչ երբեք բղավելով,  
բայց ոչ երբեք այլանդակելով բառերը,  
նրանք իջնում են թղթի վրա,  
ինչպես ձյունը՝ երկրի:

\*\*\*

Մի մութ զիշեր  
ու մի մակույկ լուսնաբի  
պաղ սահում են  
արծաթափայլ ջրերում,  
ալիքները՝ որպես երազ հակինքե,  
կայլակում են,  
երազներս օրորում:

Շշուկները խով ու ազդու ջրերի  
հրմշտում են ու կանչում են ընդերքից,  
ու մակույկը օրորվում է հեշտանքով  
ափին տեսած ոսկետեսիլ երազից:

\*\*\*

Երբ իջնում է զիշերը,  
երկու լուսնոտ թռչուն,  
երկու ուրու  
ելում են լուսնե մոխրից  
ու քափառում:  
Նրանք անցնում են  
հանդարտ ու պացիկ  
հյուղակներով հողե,  
շիրհմների վրայով:  
Երկու լուսնոտ թռչուն,  
երկու ուրու  
զիշերային հյուրերն են իմ  
հավերժական:

\*\*\*

Ծաղիկները մեռնում են,

մեռնում է վիշտը,

ինչ-որ իմն է այսօր,

որիշինն է վաղը:

Արևերը այրվում են,

խամրում է երազը,

լուսնի լոյսը քանվել,

մնացել է հույսը:

Ծաղիկները մեռնում են,

մեռնում է վիշտը,

տարեք ինձնից, խնդրում եմ,

որիշների մեղքը:

\*\*\*

Նրանք, որ երբեք չեն լրել մեզ,  
հավատարիմ են մնացել ուխտին,  
նրանք մարդիկ էին պարզապես՝  
համառ, աներեր՝ կյանքին ու բախտին:  
Ժամանակը մեզ չդավաճանեց,  
փոքրիկ խրճիթում ապաստանեցինք,  
երկի մենք ենք, որ անտարակույս  
ըղոր կողմերից քալանվեցինք:  
Բայց զոհ մեզ տրված ճակատագրից,  
քայլում ենք մանրիկ այս հսկա դարում  
և չենք բողքում մեզ տրված դերից,  
և ոչ էլ հաճախ մոմեր ենք վառում:  
Ու հավատարիմ, այսպես զլխահակ  
մենք քայլում ենք լուռ, անվրեժխնդիր,  
թեպետ չենք եղել կյանքում ստահակ,  
չենք էլ ընդունել և ոչ մի ուխտ:

\*\*\*

**Օքը դաշնում է առասպել,**

**և ո՞վ է, որ մեզ պատմել**

**ու պատմում է դեռ, թե**

**անվերջ է ու անհատնում**

**օրերի այս երթն անտուն:**

**Օքը մքնեց, օքը անցավ,**

**զիշերը ծեր ջահելացավ,**

**ու անցողիկ հերթափոխն այս.**

**ա՝ իս, կդառնա անցած երազ:**

\*\*\*

**Մարդիկ խնջույք են սարքել**

**ու նստել են սեղան,**

**ձեռքերին՝ զինու գավ,**

**աշքերում՝ խինդն արևի:**

**Մարդիկ երգում են արբած**

**ու խնդում են, ու լալիս,**

**ծիծաղում են լիաբոր,**

**բերկրանքը կյանքի վայելում:**

**Ես հուսահատ, ես մենակ՝**

**լալիս, խնդում եմ իմ մեջ,**

**մարդիկ խնջույք են սարքել**

**ու նստել են սեղան:**

\*\*\*

**Ես իմ երգը դեռ չեմ երգել,**

**ես իմ մասին դեռ չեմ երգել,**

**ինչ ապրել եմ՝ ձեզնից առած,**

**ինչ զրել եմ, ձեզ եմ տվել:**

**Սիրտս է լոկ մնացել ինձ,**

**ամեն երգից արյունոտված,**

**ու էս սիրտն էլ ես չեմ առել,**

**ձերն է, սակայն տվել եք ինձ:**

\*\*\*

**Վյդ ես եմ միայն,**

**որ լեռները վեհ կանգնած են իմ դեմ**

**իրենց բարձրությամբ,**

**ծովերը կապույտ՝ իրենց պարզությամբ,**

**երկինքը անափ՝ իր ջինջ խորությամբ,**

**աստղերը՝ բոցով,**

**ծիլ, ծառիկ ու ցող՝ իրենց գոյներով:**

**Իսկ երեւ ուզեմ՝ ճիշտ մի վայրկյանում**

**կդառնան նրանք հանգած հրաբուխ:**

\*\*\*

**Քայլում եմ ու դեռ կամ,**

**այս իմ ներկան է:**

**Իսկ վա՞ղ...**

**Վյս է երգերի այն երթը,**

**որ վախով,**

**որ հույսով,**

**չըռնած, չտեսած այդ վաղը,**

**խենթացած բյուր կարոտով,**

**տենչանքով, հավատով լույսերի**

**նետվում է,**

**ձգվում է,**

**ցանկանում:**

**Իսկ մա՞իր,**

**մահն այդ անգոն,**

**որքա՞ն իմաստնություն ունի:**

**Տարեկ է,**

**տանում է**

**ինձ, բոլորին...**

**Օ՝, ներկա,**

**թող որ կարոտով քո երկնած**

**մերձենամ, ձուլվեմ թեզ,**

**ինեմ մեկ:**

**1967թ.**

\*\*\*

Ես երգում եմ լոկ հավերժությունը,  
բայց խարիսս չունեմ, օ՛, Տեր իմ, փրկիր,  
ես քեզ դարձրի հավերժությունս,  
ես մեն-մենակ եմ, օ՛, Տեր իմ, փրկիր:  
Թողել ես դեմքս իմ դեմքի հանդեայ,  
ձանձրույթը ծանր է, իսկ հույսը՝ խավար,  
դեմքս դեմքիս դեմ համր ու լուռ է,  
Տեր իմ, ձանձրույթս վանիր՝  
գոնե քեզ համար:

\*\*\*

Ես, որ դեռ որոնում եմ ինձ  
ձեր մեջ, քարայրի  
ու այս նոր սերնդի,  
ես, որ համրում եմ հանգիստ  
արշալույսներն իմ բոլոր անցած,  
մի օր, սովորական մի օր  
կարթնանամ քնից,  
կվառեմ ծխախոտը,  
կնայեմ հայելուն ու գտած,  
վերծանած իմ երգը,  
կփակեմ կրպերս առանց աղմուկի:  
Ու նրանք, որ կզան,  
նրանց կիսախոռվ երազների ներքո  
փակած աչքերով կշրջեմ ես:  
1967թ.

**ԾԱՌԵՐԸ ԶԱՐԴԱՐՎՈՒՄ ԵՆ**

Երբ ցնդում է միֆը,  
և մերկությամբ հայտնվում է նա,  
այդ ողորմելի գեղեցկությունը,  
զարդարված համաշակությամբ,  
որքա՞ն մերկ է, որքա՞ն մանրակերտ...

Տե՛ր, մուսաների՝ հայր,  
մի բող ինձ մենակ  
շնաձկների ու մարդկանց մեջ,  
ես գեղեցիկ եմ քո ներկայությամբ,  
քեզնով:

Երբ դու կաս, իմ խոսքը լոկ խոսք չէ,  
մարմինս՝ մարմին,  
տեսանելին և լսելին, զարդերս՝  
քեզնով շաղախաված:  
Մահը՝ մարմինը այդ դիակ,  
որքա՞ն մահարույր է...

Ես քեզ հետ եմ եղել իմ  
շողուն մանկության տարիներին,  
պատանության՝ աստվածամերձ,  
երիտասարդության՝ հրեշտակաքն...

Թող իմացությունը չխանգարի ինձ,  
բող ճանաչողությունը չխանգարի,  
բող, բող իմ մահկանացուն կնքեմ  
քեզ հետ, քո ձեռքերում...

Թներս, թներս մի փետրաբափիր,  
բող տեսակս ավարտվի, ինչպես կյանք մտա,  
այս է խնդիրը,  
ազատիր ինձ մարդկային պչրանքներից,  
ապրելու վերջը գեղեցիկ մահն է,  
մի զրկիր ինձ իմ միֆից...

1997թ.

\*\*\*

Նա, ով չի կարող իր վաղվա մասին  
մտածել այսօր, նա, ով չի կարող,  
չի ապրի այսօր...

Մայրը չի կարող լքել զավակին,  
հողը չի կարող սերմը սպանել,  
հույսը մի դիր դու,  
մի դիր հույսը քո աստղերի վրա,  
թեկուզ աստղերի...

Աստվա՛ծ, լրիր դու, ինքդ լրիր մեզ,  
հեռացիր, Աստվա՛ծ, մեր հնձաններից,  
ամենքից, մեզնից քոդ ու հեռացիր...

Հավատափոխը չի կարող ապրել,  
դավանափոխը՝ մի պարզ դավադիր,  
լրիր մեզ, Աստվա՛ծ, Աստվա՛ծ, մեզ լրիր...  
1989թ.

## ՆԺԱՐ

Ես՝ թագավորը ճշմարտության,  
այս ողբերգության եղբայրն ընտիր,  
ժամանակավոր ճորտը գոյության  
և հավերժության չլուծված խնդիր...

Կյանքս՝ ինչ-որ բան անլուծելի,  
իմ ժամանակի քառորդ երգ,  
մարմինս՝ ապրող զոհասեղան,  
որ չընկնծվեց կյանքում երբեք...

Ես՝ այս որք կյանքի ականատես,  
Աստծու զույգ աշքով կշռաքար,  
հողմերի առաջ ելած ծաղիկ՝  
ցավի իր հոտով ու անաղարտ...  
1996թ.

## ՀՈՒՍՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հուսահատ պահին սարսափում եմ ես,  
երբ մտածում եմ, թէ Աստված չկա,  
ուրեմն իզուր եր, որ ապրեցի այսպես՝  
հավատի թեռ ուսերիս վրա...

Գահից ու փառքից քեզ բարձր դասեցի,  
ցամաք նստեցի խնջույքներում տաք,  
լկեցի ես ինձ՝ սանձը բերանիս,  
ասում եմ, Աստվա՛ծ, դու միակ վկա...

Եվ չեմ ափառում եղածի համար,  
շնորհակալ եմ իմ ապրած կյանքից,  
բայց սարսափում եմ, երբ մտածում եմ,  
որ այն աշխարհում էլ գեր Աստված չկա...

Ամեն բան տրվեց խնջույքիդ համար,  
քո սուրբ սեղանին՝ հոգեղենության,  
մի վայրկյան միայն ապրելու համար,  
որ զգամ ես ինձ իբրև գոյություն...

Թե խարված եմ ես և հույսերս զուր  
վատնել եմ չարի ծնած հնարքին,  
անիծում եմ քեզ, կորուսյալ աշխարհ,  
և գոյությունն իմ միամիտ, չնչին...

1997թ.

\*\*\*

Բոլորի նման՝ դու էլ գնացող,  
ի՞նչ ես կատաղել, տո հիմա՞ր, տո խե՞նք,  
բոլորը՝ ճշգրիտ, գործին բանիմաց,  
դու հորջորջել ես արդեն քեզ պոետ:

Բարեկամներից հեռանում մեկ-մեկ,  
թշնամիներին դարձել ես ընկեր,  
ով էլ սխալ է շարժվում հանկարծ,  
կարծիք ես հայտնում այստեղ ու այնտեղ:

Խոսում ես անվերջ լույսերի մասին,  
ասես, լոկ քեզ է Աստված աչք տվել,  
մի հարցնող լինի՝ ո՞վ է երեխիդ  
մի կտոր փալաս կամ կոնֆետ տվել:

Ուսիդ ես առել քեռը ուրիշի,  
երբ ուրիշն ինքը անքեռ է ապրում,  
խուզաքու շան պես վերքերդ փակել,  
բոլորի մեղքից, սիրոց ես խոսում:

Մի հարցնող լինի՝ ախր, ո՞վ ես դու,  
ի՞նչ ես բաց հողին պառկել մոլտում,  
ապրել ես կյանքում հյուրակներում խեղճ,  
բայց խոսում ես դու արքայի լեզվով:

Բոլորի նման՝ դու էլ գնացող,  
ի՞նչ ես կատաղել, տո հիմա՞ր, տո խե՞նք,  
բոլորը՝ ճշգրիտ, գործին բանիմաց,  
դու հորջորջել ես արդեն քեզ պոետ:

1976թ.

\*\*\*

Տե՛ր, քող շունչն իմ տամ այս թղթին,  
ինչպես ոգիդ արարչական  
տալիս ես, Տե՛ր,  
արևներին, ծաղիկներին ու դաշտերին:

Բառն է խաղում շրթունքներին,  
բառը՝ խոցող ու տիրալից,  
ինքին պեղող բառը բանոված,  
որ ենում է, ենում ինձնից...

Ես՝ անկարող ու ես՝ արքած,  
շպրտում եմ, Տե՛ր, բառերն այդ,  
շպրտում եմ բառերը ծեր,  
բառերը ինքնած՝  
առանց խղճի, առանց Աստված...

Թշնամիներ՝ որքա՞ն ասես,  
բարեկամներ՝ մինչ կախաղան...  
Վյապես ապրել,  
այսպես հարքել  
կարելի չե, Տե՛ր, հավատա...

Սիրոք իմ խենք,  
բանոված մարմնիս նկուղներում,  
թպրում է արնաշաղախ:  
Տե՛ր, Տե՛ր, կեցո  
արևների, ծաղիկների ու դաշտերի  
աշխարհը մեծ,  
ինձ էլ փրկիր,  
նայիր ինձ էլ ծաղկի նման:

Վարդը միայն փուշ չե, այլ իոտ,  
վարդի նման նայիր ինձ, Տե՛ր,  
շնչող, հնչող վարդի նման,  
կարմիր ու ալ,

արնաշաղախ...  
1996թ.

### ԱՍՏՈՒ ԱՌԱՎՈՏ

(Այսպես եղավ, սիրելի Եվիկ, Եվելինա...)

Էլ աղոթող չի մնացել,  
եղածներն էլ կորան, անցան,  
ինչ ունեի՝ հալվեց, հանգավ  
դիմակների դեմ անթափանց...

Խիղճ՝ քարի դեմ հանդիման,  
ծախվեց տաքուկ մի ջերմության,  
պաղ աչքերով նայում են ինձ,  
ի՞նչ են ուզում՝ չեմ հասկանում...

Կարծ ու երկար օրերը ձիգ՝  
բնժիշտաղի նման անփույր,  
քամու նման անհայրենիք,  
զարկվում են ինձ ու հեռանում...

Ի՞նչ էր պահված ամենի մեջ,  
սիրոս ինչո՞ւ այրեցի ես,  
էլ ո՞վ պիտի կողքիս նստի,  
էլ ո՞վ մնաց մեզ կարեկից...

Վատվա՛ծ, ներիր մեղքիս համար,  
զոհ եմ քեզնից, ներիր հոգուս,  
շնարածին կյանքիս համար,  
որ բաժանվեց իզո՞ր, իզո՞ր...

Ինչ որ եղավ, անցած է արդ,  
բող այս մեկն էլ այսպես լինի,  
արդարության համար քափած  
արյունն իմ տաք դառնա զինի...

1996թ.

\*\*\*

Կանցնի, ասում եմ, կանցնի, իմ սիրտ,  
համբերություն քեզ, քարի հանգիստ...  
Մի շտապիր դու, ասում եմ ես,  
անցյալիդ բախտը՝ օրինակ քեզ...

Երջանիկները, ահա, նայիր,  
ժպտում են խինդով հավատարիմ,  
իսկ դու իին թելը, ցավերը զոր  
թերել խառնել ես այս օրերին...

Նրանք երգում են, դեռ ավելին՝  
փառաբանում են չեղած բաներ,  
իսկ դու կանցնել ես ճանապարհին  
և հարցնում ես՝ ինչպե՞ս, ինչե՞ր...

Հիվանդի նման մի դիվական,  
որ ոչ զտնում է, ոչ ընդունում,  
երազն ես ուզում անէական  
և չես հարցնում ախր ինչպե՞ս...

Մոլագար ես դու, իմ սիրելի՛,  
չեղած բաների մի հետևորդ,  
անտուն, աներկիր, անհայրենիք,  
կորցրածի չափ դու անհագուրդ...

Կանցնի, ասում եմ, կանցնի, իմ սիրտ,  
համբերություն քեզ, քարի հանգիստ...  
Մի շտապիր դու, ասում եմ ես,  
անցյալիդ բախտը՝ օրինակ քեզ...

\*\*\*

**Հոդ ունենայի և ձեռքերով այս**  
 շարեփ տան պատերը քարերով խաս-խաս,  
 շարեփ տան պատերը՝ նայելով հողին,  
 ու փառք տայի աղոթքով հոդ ստեղծողին...

Հազիս բաճկոն հողոտված, դեմքս՝ արևին,  
 փառաբանեփ ես քար ստեղծողին,  
 աշխան գծերին, վերելիք շուրով  
 շարեփ քարը քարին ոսկե հատման օրենքով...

Մոռանայի թագ ու գահ, գրքեր ու բառեր,  
 տառերի պես հառնեին պատերս ջահել,  
 ու ես պատի շվաքին, աշխարհից հեռու  
 ժամեփ հացը ցամաք, մաքուր, անաղարտ...

Ու քնեփ պատի տակ փուփած շվաքին,  
 հողի աստծու երազով, լորի, անորի,  
 քարնեփ կիսախուփ աչքերով խոնարի  
 այս աշխարհի անցվորին՝ շարի դեմ խավար...

**Հոդ ունենայի ու ձեռքերով այս**  
 շարեփ տան պատերը քարերով խաս-խաս,  
 շարեփ տան պատերը՝ նայելով հողին,  
 խոնարհաբար փառք տայի հոդ ստեղծողին...  
 1986թ.

### ՎԱՅԵԼՔԻՑ ԱՌԱՋ

Երբ որ հոգնում ես մեծ-մեծ բաներից  
 (և իզուր վատնած օր ու ժամերից),  
 և անկեղծության զգացումը խենք  
 պարուրում է քեզ պարզ ու սերևներ,  
 գալիս է հենց նա, այ քեզ չար կատակ,  
 գալիս է, նասում իբրև հպատակ,  
 նասում է կողքիդ և հեզ, և բարի,  
 կարծես ծանոթ է քո ողջ աշխարհին,  
 նայում է, նայում աչք-աղբյուր ակին՝  
 ունկնդիր քո մեջ ապրող հերիաքին,  
 և նման է նա քույրերին երեք,  
 որ մեկը մեկին չներեց երբեք,  
 և սիրահարի տեսքով դյուրաքեք  
 ծամերն է խառնում, մտքերդ մեկ-մեկ:  
 Ու զգում եմ ես, որ ձմեռն անցավ,  
 որ հողը շուտով կպայրի ցավից,  
 և աղբյուրները՝ լիացած հողից,  
 կիորդեն, ինչպես անցած գարունքին,  
 կպայրեն հողի սառած երեսին,  
 և հովին կարուտ ծառ ու ծաղիկներ  
 երկինք կպարզվեն, արևի առաջ:  
 Ուրեմն գարուն, գարուն է գալիս,  
 և գարնան հետ է գալիս սերը մեր,  
 և ծառ ու ծաղկի, ծիլ ու հովի հետ  
 մաքրվում է մեր արյունը անտես:  
 Ու թե մաքրվում է արյունը անտես,  
 Աստված, ինչո՞ւ չեն մաքրվում հատ-հատ  
 վշտի ծովերը, հոգնությունը մեր,  
 որ տանջում են մեզ ամեն ակնքարք:  
 Ու հայտնվում են վշտերը մեր խոր  
 սիրած աղջկա սիրտ ու երազում,  
 գարունն էլ այդպես դառնում է խոլոր,  
 ու նա չի ապրում, ու նա չի ապրում:

Իսկ այս գարունը շոայլ է այնպես,  
այնքան դյուրաքեք, ու այնքան հեզիկ,  
ինչ-որ ունեի, մոռացել եմ ես,  
ու նստած ենք մենք, ու նայում եմ քեզ...

### ԻՆՔՆԵՐԸ

Հավանական մի առավոտ  
դու արքնացար բոլորի պես,  
բոլորի հետ հաշո-համերաշխ,  
բոլորի դեմ ընդլգերով:

Ոչ ոք, սակայն, գեր մի վայրկյան  
չփորձեց քեզ հասկանալ,  
և ներելու ոչ մի վայրկյան  
չի լինելու այսուհետեւ:

Եվ ներում է սոսկ շնորհում  
ինքնախլման քո լուռ ճամփան,  
և կողոպուտ, և ավերում,  
այն, որ հետո է սոսկ առկա:

Ու թե թարգման լինես դու քեզ,  
էլ ոչ ոք չի անիծելու,  
նահանջելու և ոչ մի թիզ,  
ոչինչ չունես թաքցնելու:

Գերանների ձայնն եմ լսում  
մաշվող ամեն բառի տակից,  
ապրող բառի ցավն է միայն  
թշնամին քո՝ քեզ կարեկից:

\*\*\*

Օրերիս պես ծանր  
և կյանքիս պես դաժան,  
շապրեցի իմ նման անհոգ  
և թեթև՝ հոգու պես ծավալվող,  
անցողիկ այս փոքրիկ աշխարհում,  
նավակում այս փոքրիկ ու չնչին...

Մի վառվող կրակ կար իմ հոգում,  
բորբոքեց հար ու հավիտյան,  
և կյանքն այս չնչին, արևոտ  
դարձավ դարի չափ ծավալվող...

Խմացա, չխմացա հաճախ,  
հեռացա, մոտեցա ինձ,  
մի կյանք էր օրորվող, բեկրեկուն,  
Վստծու աշքերի տակ մեռնող...

Տեր իմ և մայր իմ չարչարված,  
զոհ եմ և դժգոհ, անշուշտ,  
ապրեցի ձեզ նման, ձեզ պես,  
պատվեր էր, համարենք կատարված...  
17 հունիսի, 1997 թ.

\*\*\*

Վստված այսօր որոշեց  
դեռ իմ կյանքը չընդիատել,  
բժշկի պես կյանք տվեց,  
որ մեղքերս ավարտեմ...

Դատաստանի ատյանում  
հարցեր կան դեռ չպարզված,  
Վստված ուզում է դատել  
հոգուս գործը ավարտված...  
1998թ.

\*\*\*

Հափշտակության ծովը ինձ առել  
ու ալիք-ալիք քաշում է ներքև,  
ընդդժմադրելու և ոչ մի ալիք,  
այսպես կարող եմ և հանգիստ խեղդվել:

Մի պարկն ինչ էր, որ  
չվերցրի ինձ հետ,  
այժմ փրկության և ոչ մի խարիսխ,  
դաժան է հավատը, երկնային Ասոված,  
առավել դաժան՝ անտես զոհվելը:

Ու սպասում ես, ու սպասում եմ՝  
կյանքս նվիրած երկնային ծովին,  
քամին է միայն ոռնում ականջիս,  
երկինքն է լալիս մաղվող անձրևներ:

Եվ հրաշքի դեմ կանգնած անքեն զոհ՝  
ծանրութերև եմ անում հավատս,  
ես կարող էի այստեղ չհայտնվել  
ու խաղաղ մարել երկնային պարտը:

Ո՞ւր են մտերիմ խոսքերն ընկերոջ,  
հավատարմության արցունքներն ո՞ւր են,  
բոլորը իզուր, բոլորը խոսքեր,  
պարտամուրհակս՝ տքնանք մի անխոնք:

Պատահականը քեզ, ճակատագի՛ր,  
մի պարկն ինչ էր, որ չվերցրիր քեզ հետ,  
ծո՛վ, հրաշքդ բաց, և ես լուր կգամ,  
կընդունեմ ես քեզ, որպես լուրք երկինք:

\*\*\*

Սերն է մարդուն բերել աշխարհ,  
սերն էլ նրան կտանի,  
վայ, հազար վայ, ով աշխարհում  
բանն այս հունից կհանի...

Բումերանգի հզոր խաղով,  
օրենքով այդ ճշմարիտ  
ամեն մի բան աշխարհ կգա  
ու դուրս կենի աշխարհից...

Տիեզերքի կապոյտ ծովում,  
ուր աստղերն են առկայժում,  
վայրկյանի պես՝ հրաշք բարթում,  
ամեն բան զուր, զուր կանցնի...

Կմնա լոկ աննյութ մի բան,  
անձայն մի բան դողանջող,  
տիեզերքի սուրբ հյուավածքում,  
որպես մի լույս թափանցող...

Հիանալու քիչ բան չունես,  
նայի՛ր, խնդա՛, զարմացի՛ր,  
հպարտության ու կարուի  
շղթան կտրիր ու անցիր...

Անցիր շանցած ճամփաներով՝  
ներողամիտ ու խնդուն,  
կյանքը տոն է, զվարճալիք,  
ինչպես հրաշք մանկություն...

## ՄԱՀԱՊԱՐՏԻՍ ԵՐԳԸ

Դատարկության առաջ անգո պատի,  
կույրի նման ապրող միայն հոգով,  
խարխափում եմ, ահա, իբրև պատիժ  
երեք սերնդի երգ՝ իրեն խարող...

Նվազում են նրանք ինքնամոռաց,  
և ամբոխն է պարում զվարճադեմ,  
իսկ հայրերը մեր՝ վաղուց մեռած,  
էլ չեն կարող պարն ընդհատել...

Պարն այդ կապկող, ոչ բնական,  
մեկի ձեռքով տրված, ոչ կենդանի,  
կապիկների պարը, որ խելահան  
շարժ ու ձև է հուշում և՝ ընտանի...

Ո՞ւր են գնում այսպես, օ՝, Տեր Աստված,  
մի՞թե երգիս ճամփան արդեն վերուստ  
այսպիսին էր հենց՝ կապիկական,  
և չունեի ես ժողովուրդ...

Դրա համա՞ր արդյոք Նարեկացին՝  
հուսահատված, մենակ, անժողովուրդ,  
իբրև լրված նավակ միածին,  
գնում էր մեն-մենակ դեպի Աստված...

Հավա՞տն էր իր հզոր, թե՞ կորստի թեռը,  
ո՞րն էր դաժանակիր, ուրկի՞ց փախավ,  
ահա խոռվյալը երկրից այս ցուրտ,  
հալածական, մենակ, անժողովուրդ...

Քաց դոմերդ, Աստված, և ընդունիր  
զավակներիդ հոգնած ու տքնաշան,  
որոնց համար կյանքն այս եղալ  
մահվան սարսուռ միայն, ցավի պատյան...

Նրանք տարան միայն պարում կապկող,  
խորդներից փախչող հալածական,  
խաչերի երգ ջարդված՝ իբրև խաչյալ,  
զոհի երկինք միայն՝ իբրև պարտված...  
1996թ.

## ՄԻՐՏՍ ՑԱՎԼՈՒՄ Է...

Երկու քարերի արանքն եմ ընկել,  
ոչ աշ և ոչ ծախ կարող եմ թեքվել,  
անհնարին է բացել և հոգին,  
արհամարհանքը հարված է սրտին...

Քոնն է հայրենին և քոնը չէ այն,  
քոնն է արտաքին կեղևը նրա,  
ծառը սնվում է ուրիշ արմատով,  
սնվում է այն սոսկ վարակված գետով...

Դեմքիդ փշում է հողմը կեղծիքի,  
շնչում է նա. «Լսի՛ և ստի՛ր,  
այս է օրենքը հավիտենական,  
ուժն է օրենքը՝ միակ, իրական»:

Ես չեմ վախենում մահից արնագույն,  
քառերը և ես եղայր ենք հանդուզն,  
ամեն մի գիշեր մահվան հետ եմ ես,  
ծանոթ եմ նրան երես առ երես...

Երկու քարերի արանքն եմ ընկել,  
ոչ աշ և ոչ ծախ կարող եմ թեքվել,  
անհնարին է բացել և հոգին,  
արհամարհանքը հարված է սրտին...

\*\*\*

Լուսավոր է, ձեն-ձուն չկա,  
զիշերվա մեջ մենավոր  
հոգիս՝ թերև, կապույտ թռչուն  
սլանում է հեռուներ...

Չկա սահման, նյութ հողեղեն,  
չար ու բարի և Ասոված,  
խաղաղ, անքեն, որպես մանուկ  
տրոփում եմ երերում...

Մերք ելնում եմ լեռներն ի վեր՝  
սիրու ու հոգի տարածած,  
մերք ավելի ճգնում եմ վեր՝  
միտք ու հոգի մոռացած...

Լոկ մի ձայն է լավում իմ մեջ՝  
թռչող հոգու հաճույքի,  
մանկությունն է, թե՝ մանկության  
մտերմությունը հոգուն...

Ե՛վ տեսնում եմ, և հասկանում,  
որ զուր ջանք էր կյանքը այս,  
տառապանքի ծանք մի բեռ՝  
մեր իսկ ձեռքով հաստատված...

Երջանիկ էր հոգիս խաղաղ,  
չկար ճգնում ու տենչանք,  
գնում էի, որ միանամ  
Աստծու սիրուն միայնակ...

Տեսնում էի ցածում կրվող  
մարդ Էակին՝ ջանքով լի,  
կապկանման... մութ տարերքով,  
երազներով խարուսիկ...

- Երջանիկ եմ,- լսում էի  
ես կանչը իմ սեփական,  
զիշերվա մեջ կապույտ թռչուն,  
գնում էի անկայան...  
1998 թ.

## ՓՈՍՔ

Արդեն հիվանդ եմ,  
գերեզմանի փոսք ես տեսա,  
հատակը խոնավ, խորունկ, միայնակ:  
Պաշտամունքը իմ իշեցրին այնտեղ,  
թաղեցին այնտեղ, թողեցին մենակ,  
հիվանդ եմ, հիվանդ:  
Թողեցին մենակ, թաղեցին այնտեղ,  
լցրեցին փոսք հեղեղով մաղձի,  
ցավս, հույսերս, սերս, արյունս,  
երազս թաղեցին:  
Խոնավ է փոսք, խորունկ ու մենակ,  
երազիս դեմքը պիտի պառավի,  
թոշնի, հեռանա, վերանա պիտի:  
Երազիս դեմքը պիտի համրանա,  
մաղվի ու փլչի:  
Փոսք ես տեսա  
խորունկ ու խոնավ,  
հույսս թաղեցին, թողեցին մենակ,  
հիվանդ եմ, հիվանդ:

### ՊԱՐՍՊՈՒԹՅՈՒՆ

Գիշեր է լուս, կեսօհշեր մքին,  
ընած են ծանոթ, անծանոթ մարդիկ,  
աստվածների հուշը վաղուց մոռացած՝  
նստած եմ լուս՝ գրքերի հետ մտերիմ...

Նավը կորցրած նավազի նման,  
ծովեր կորցրած, ամեն, ամեն բան,  
ցավն է ընկերս, բուղը՝ հայրենիք,  
մենակ եմ, ինչպես սառույցը տապին...

Երեկվա կիսատ քեֆի սեղանից  
պատառիկներ են թափալվում իմ մեջ,  
ի՞նչ քեֆ, ի՞նչ խնջույք,  
ողջը կատակ է, ողջը՝ ցավ անվերջ...

Ու քիչ անց լույսը կրացվի նորից,  
նորից կիսնդանք, կրայլենք կրկին,  
դատողությունների անվախճան շղթան  
կսպանի օրը, ժամ ու հայրենիք...

Ինչպե՞ս ազատվեմ ինքս ինձանից,  
այս պարապ կյանքը ես ինչո՞վ լցնեմ,  
զարմանում էի, երբ հոգնած մարդիկ,  
հոգնած դեմք էի տեսնում լույսի դեմ...

Առեք, ծախում եմ ունեցվածքը իմ,  
ինչ ունեմ՝ էժան, համարյա ձրի,  
մայր իմ, ինչ լավ է կարդալ չգիտես,  
մայր իմ, դու չկաս քառասուն տարի...

Թույլին՝ հենակ, սրբին հավատ ընծայող,  
մանուկ սիրող, ճշնարտության ահազանգ,  
ասա, թեզնից ի՞նչ է հիմա մնացել.  
Եռագոյնի պարապ-սարապ երազող...

1990 թ.

\*\*\*

Իմ ձեռքը կրակն եմ ընկել,  
ուրացել եմ սերը,  
մոմերս մեկ-մեկ մարել,  
նստել խավարում...

Ասում եմ՝ ո՞ւր է հավատս,  
տաճարը, շինված անթերի,  
տարիներ, դարերով շինված,  
ասում եմ՝ ո՞ւր է...

Աղոթքն այնքան է բարակել,  
կախվել եմ անմիտ մազից,  
շինվածքս խարխալվել է,  
հոգնել եմ ինքս ինձնից...

Անմիտ է, օսուր է երազս,  
երազս, ասում եմ՝ ո՞ւր է,  
զարուն էր, երբ ընկա ճամփա,  
արևը թրատում էր...

1998 թ.


\*\*\*

Բժիշկները կարծում են,  
որ ես կարող եմ ապրել  
ևս հարյուր տարի,  
երես սիրոս անջատեմ  
մարմնիցս  
կամ թե քննեմ անընդհատ...

1998 թ.

\*\*\*

Արշալույսներով անցել եմ հանդարտ,  
կանգնել ծխացող մոմի առաջ,  
.....  
դողում է հոգնած մարմինս:



---

### Պատառիկներ մանկությունից

Ամեն մի նեղ ազգային մտածողություն սահմանափակում է մարդու աշխարհը: Սակայն յուրաքանչյուր անհատ նախ պարտական է այն աշքերին, որոնք խոնարհվել են իր օրորոցին, այն լեզվին, որով սկսել է զգալ ու հասկանալ աշխարհը: Այդ աշխարհը սահմանափակում չի կարող ունենալ:

Մորս՝ Հայկանուշ Շահինյանի հիշատակին

### Ա

Աստվածամոր տեսքով,  
զլիսիմ՝ լաշակ մի սև,  
ձեռքերը խաչ դրած կրծքին,  
աշքերում մութն անձայր,  
հավատի մեջ անձայն  
կնատեր լուռ, մենակ:

Տրտմությունից բարակ դեմք,  
երազներից հուսաբեկ  
և խոսքերից հեռու,  
պատի տակ լուռ ու անձայն,  
որպես բարակ մի արձան,  
կլոեր անվերջ...

### Բ

Ամուր, ամուր սեղմեմ կրծքիս  
ու մոռանամ վիշտ ու ցավ,  
երկինք, երկիր, աստղ ու լուսին,  
օրերը իմ, որ անցան:  
Խոստումները իմ լավ սիրո,  
և վշտերը նրա հեզ,  
մանկությունը՝ կապույտ նժույզ,  
և տարիները իրավեզ:  
Ամուր, ամուր սեղմեմ կրծքիս  
զլովսդ սեզ, զլխահակ,  
տառապանքիդ հլու ու հեզ,  
մայր իմ, անօք ու մենակ:

**Գ.**

Թողած ամեն, ամեն բան,  
թողած և սեր, և բախիծ,  
հասել եմ մանկությանս  
և հիշում եմ քեզ ու ինձ:

Գլուխը քո գլխահակ,  
իջած հոգնած քո կրծքին  
և մատները քո բարակ  
մազերի մեջ իմ նրբին:

Դու նայում ես տրտմագին,  
ու հոսում է քեզնից ինձ  
քո կարոտը սրտամաշ  
և բախիծդ ահագին:

Ես արևի, իրի հետ,  
ես՝ մանկամիտ, անկարոտ,  
վազում եմ մեր հին բակում՝  
ազատ, անմիտ ու անհոգ:

**Դ.**

Մի տխուր երգ ու հոգնարեկ  
զույգ աչքեր,

անանց բախիծ, անբառ շշուկ,  
լուս մատներ,

օրերի մեջ, մանկության հետ  
ոսկեվառ,

գլխին՝ սև շալ, մի Տիրամայր  
լրամբաս:

Մի ոսկեվառ, գլխին աստղ  
մանկություն,

անմաս բերկանք, կարմիր, կապույտ  
խնդրթյուն,

բարակ մատներ՝ մազերի մեջ  
նրբահյուս,

մի զույգ աչքեր՝ սիրո առջև  
լուս Հիսուս:

**Ե**

Օրերից հեռու և սիրուց անզամ,  
կնատեր տխուր, կնատեր մենակ  
պատի տակ լուս ու տրտում,  
կիյուսեր ամպամած աչքերով,  
կարկամած ու խոռվ,  
կմաներ բախիծը կյանքի  
բեկրեկուն ու տրտում,  
հավիտյան դուռը գոց,  
որպես խոռվքը բախտի:

**Զ**

Շշուկները ոսկյա և աչքերն անտուն,  
բախտի հետ մենակ ու լոին,  
հավատից կարկամած և սիրուց խոռվ  
կլոեր՝ որպես մութն անձայն:  
Ոչ խորքեր հիվանդոտ, ոչ սերեր փայլփլուն,  
ոչ մտքեր, ոչ զգվանք ու խոստում,  
բոլորն՝ աչքերում, բոլորը՝ սրտի հետ,  
բոլորից խոռվ ու մենակ:  
1976 թ.

**Է**

Մորս համար մինչև դժոխք կգնամ,  
վկա՝ օրերն իմ ապրած  
թե թշնամուն էլ պիտի սիրեմ մորս պես,  
ո՞րն է ճիշտը, Տե՛ր Աստված...

Աստվածամայր ենք կոչում Մարիամին,  
որ անմեղ է մորս պես,  
ես չեմ կոչում ինձ Հիսուս,  
նա մորս անզամ ուրանում է հանուն քեզ...

Տարեք գրքերը եղծված,  
ես չեմ կարող ուրանալ,  
թե Աստված էլ մոր պես է մեզ արարել,  
օրինվես դու, Աստծուն ծնած մայր Աստված...  
1998 թ.

**Ը**

Մորս մասին գրելիս  
դառնում եմ ևս մանկամիտ,  
աշխարհը՝ շեն մի դրախտ,  
ես՝ դրախտի սուրբ ժաղիկ...

Եվ Աստված է ամաչում  
մահվան համար իր տված,  
թե մայրն է կյանք արարում,  
մահը ի՞նչ է, ո՞վ Աստված...

Խառնվում է զլիսիս մեջ  
դրախտն էլ այն մանկամիտ,  
մայր, դրախտը քո գիրկն է,  
ես՝ դրախտի սուրբ ժաղիկ...

1998 թ.

**Թ**

Մայրս եկավ ինձ երազիս,  
նայեց, նայեց, ոչինչ չասաց,  
բայց կարոտով նայում էր ինձ  
և խոսում էր ինքնարավ:

Մարդիկ էին անցնում փութով,  
օտարոտի, իրենց մեջ փակ,  
ու պատմում էր մայրս այնպես  
մանկան մասին՝ իբրև հերիար:

Այս աշխարհում կրվից հետո,  
հենց այս ճամփին թողել է նա  
ուր տարեկան մի մանուկի,  
սև աչքերով տղա էր նա:

Գարեհաց էր մորս ձեռքին,  
պոճկում էր նա ու թոցնում,  
աղավնիներ հավաքվեցին,  
ո՞նց էին կտցում ու բարձրանում:

- Սև էին աչքերն իմ տղայի,-  
կրկնում էր մայրս ջահել,  
իսկ ես նստած ծիծաղում էի,  
գուցե տեսիլքն էր հմայել:


Նա պատմում էր, ես՝ ծիծաղում,  
խնդություն էր իջել հոգու,  
երազիս մեջ մայրս էր եկել,  
մայրս էր ու ինձ չէր ճանաչում:

**Ժ**

Օ՛, մանկություն, անուժ թևեր,  
փխրուն, թերև ու քափանցիկ,  
ձեր ուսերին պահում եք դեռ  
սիրո բույնը աստվածածին...

Մինչդեռ բնում՝ հողմեր տեսած,  
ուշակորոյս որպես տեսիլ,  
մեռնում է սերմ արդեն հոգնած,  
վեհության մեջ լուռ ամփոփված:

Օ՛, բնություն, իրաշը կատակ,  
իմանալի իրարանցում,  
գորգ բազմազան, անդեմ դրախտ,  
խորհրդավոր, կեղծ կրկնություն:  
1984 թ.



\*\*\*

Տաք արյուն,  
ափիս մեջ բափված տաք արյուն,  
ես չեմ ուզում հավատիս մասին դատել,  
շրջիր դեմքդ:  
Քառերի ծանրությունից հոգնում է մարմինս,  
մոռացումի և ոչ մի խոսք,  
ափս ցավում է:

Քառասուն ձիավոր բարձրանում են, ահա,  
լեռը կըել է ծերացած երազներից,  
հավքերի լեզուն ազռավները տարան:  
Տաք արյուն,  
ափիս մեջ բափված տաք արյուն,  
օրը մեռնում է:

\*\*\*

Եքե մի օր  
դու փորձես տնից  
ելնել անհավասարակշիռ,  
կհանդիպես մարդկանց,  
որոնք կընդդիմանան քեզ  
անհավասար մարտով:  
Այսպես,  
եքե մի օր  
բանաստեղծությունդ  
դուրս ելնի տնից,  
ոչ քե անհավասարակշիռ,  
այլ մի քիչ հոգնած,  
կմեռնի անտես, անհարկի՝  
չանցած պատշզամբը:  
Օրենքը պաշտպանում է  
քո իրավունքը, մարմինդ,  
նույնիսկ եքե հիվանդ է,  
բանաստեղծությանը՝  
միայն ժամանակը,  
եքե հավատարիմ է:

\*\*\*

Ինչ եմ ուզում ինքս ինձնից,  
այս փոշոտված կածաներից,  
այս քարերից քարակոծված,  
մամուռներից այս մամոռտված,  
քարափներից այս հոշոտված  
և գրքերից այս փոշոտված:  
Չկա հանգիստ ու չկա քոն,  
ականջներիս՝ ձայներ բեկված,  
աչքերիս՝ քարեր խաչված,  
միշտ անհանգիստ, անհանգրվաճ,  
ասես, հսկա քարավանից  
մնացել է զանգ մի լոին,  
ծովերից ու Ծովասարից՝  
գետ մի ելման,  
հուշերի իմ անդաստանից՝  
Անհուշ մի բերդ,  
անգիր մի երգ,  
որ շուրթերի ստվերներում  
թրռում է, մարում է մերք,  
ծառս է լինում ինքը իր դեմ,  
մերք կորչում է, մերք հայտնվում:  
Շներն անգամ մունջ են քնում  
իրենց հողե, քարե քարձին,  
գիշերները մութ են ցանում  
ճառագայթվող լուսաբացին,  
ստվերներն են ելնում ոտքի,  
երք արեգակն ամենավեհ  
կապում է իր արժաք գոտին:

Ինչ եմ իզուր ինքս ինձ տանջում,  
հաշվում հազար ու կրկին մեկ,  
այս ամենին սուտը անգամ չի հավատա,  
լոիր և կամ դարձիր վկա այս ամենին:

\*\*\*

Մենք այն սերունդն ենք,  
որ իմաստնություն չփնտրեց կյանքում,  
և բանականը պահելով իր մեջ՝  
քայլեց մեն-մենակ:  
Մենք այն սերունդն ենք,  
որ սիրահարվեց և չհավատաց,  
մտածելով, որ նա բանականը  
պահում է իր մեջ:  
Ամենից հետո  
մենք այն սերունդն ենք,  
որ չենք հանձնվում քմահաճույքին  
և հավատում ենք զայլիք փորձանքին:  
Եվ սերունդը մեր չի մեռնի երբեք,  
քանզի հաստակ տեսնում է հիմա:  
Մենք սերունդն ենք այն,  
որ ծնունդից մեր տեսնելով մահ՝  
երկրպագում ենք խաղաղությանը  
և մեր բանակին, որ իր խոսքն ունի:  
Եվ երեւ կյանքում կան խոշլնդուներ,  
որոնք զրկում են ապրելու հույսից,  
մենք այն սերունդն ենք,  
որ պիտի ճեղքենք պատյանը կեղծի  
ու եղենք փողոց՝ աղաղակեղով.  
- Մենք այն սերունդն ենք,  
որ կյանք է բերում խեղճին և խղճին,  
մենք ձեր սերունդն ենք,  
առեք ձեր գիրկը, թեկուզ և մեռած:

### ԽՃԱԿԱՐ

Ժառանգություն չէ թախտն այս հին,  
որ պահել եմ իմ սենյակում,  
այն դրված է, որ միշտ իշեմ  
ապրելակերպն իմ այս կյանքում:

Խեղված իրն այս իմ ողջ կյանքի  
պատմություն է իր մեջ պահում,  
հպարտության մասին է լոկ  
իրն այս անշունչ միայն լռում:

Եթե մի օր հուշագրողը  
փորձի պատմել կյանքն իմ անցած,  
նրա առաջ պիտի դնել  
թախտն այս՝ կյանքին պես հնացած:

Չարմանալի փայտերը ծեր  
կախարդական հայելու պես  
ցույց կտան խեղճ պատկերը իմ,  
որ խոսքերով են զարդարված:

Եվ ի՞նչ մնաց ինձ ասելու  
իմ հնառն թախտի մասին՝  
փայտերն այս ծեր զառանցում են  
երգերին պես տափակ ու սին:

Նկարագիրն իմ հին թախտի  
բողնում եմ ես վիպասանին,  
փայտոջիլները խելահան՝  
առողջ, սրափ պատմաբանին:

\*\*\*

Դեղին մոմի նման,  
լույսի նման մոմի,  
մարուր-մարուր հալվել,  
վառվել կարիլ-կարիլ,  
ոչ մորմորից ծխալ,  
ոչ սրբությամբ երդվել,  
ոչ կասկածով մխալ  
երկա՛ր, երկա՛ր:

\*\*\*

Ես չեմ ուզում, որ գլուխն իմ զարդարի  
դափնեպսակը կամ ճյուղերը մրտենու,  
հավերժական չէ և չկա ոչ մի բան,  
երբ խաչված է սրբազնը՝ հայրենին...

Ավերակված ամեն քաղաք հայրենի  
ոգու սով է և օղակը շղրայի,  
ո՞ւր է քաղաքը, որի հզոր պարսպի տակ  
դափնին պիտի գլուխը իմ զարդարի...

Պիտի քայլեմ միշտ զլխահակ ու մոլոր  
զոհվածների շշուկներին ընդառաջ,  
նրանց ձայնը կարեվեր է ավելի,  
քան նշանով պոետների վայրահաչ...

Լուռ է Մասիսը հավերժակոս լրությամբ,  
բանաստեղծը և մեծ ոգին ստեղծողի,  
պիտի նայեմ, մինչև Մասիս ահոելի  
մեր պիղծ հոգին լավայի պես դուրս ժայթքի...

Եվ հոգնարեկ մահվան քնից արթնացած,  
ցնծության հետ հոգիս պիտի խլրտա,  
այնժամ դափնին և կամ ճյուղը մրտենու  
ազատ ոգուս, գլխիս վրա կշողա...

1986 թ.

\*\*\*

Ինչպես դահիճը կացինը արած,  
այդպես ես գրիշը ձեռքս առա,  
խնամքով քիթը մաքրեցի նրա,  
որ բառերն իմ քիրտ չփայլեն լորի,  
որ նրանք ելնեն քնից դարավոր,  
որ ելնեն նրանք արդարն մարտի,  
հայրենիքն է իմ տվել աղ ու հաց,  
դե, բարի եղիք, պարտքը հատուցի...

Բառեր խեղճության, անհոգ ու անտուն,  
հալ չի մնացել ոչ մեկի վրա,  
շողոքորբության սարդոստայնը պերճ  
կնգուղ է դարձել ոսկրերի վրա:  
Բանաստեղծական մի ամբողջ սերունդ,  
ժամերգության պես ժամանակավրեալ,  
երգեր է ասել ու երգում է դեռ  
երկիրը վերջին՝ վակված վանդակում...

Եվ բոլորն ի մի երգում են փութով  
երգը երկնիք, անորոշության,  
այստեղ է ասված՝ կերը մեզանից,  
իսկ ձուն ածում են ուրիշի դռան:  
Շողոքորբության ու սիրո մասին  
և գեղեցկության՝ միշտ հավատարիմ,  
անաստղ երկնի ու ճշմարտության,  
անցավ, անանուն, անհավատալի:

Հայտնի է, սակայն, որ երկրում մեր իին,  
նա, ով բռնում էր երկար ճանապարհ,  
ըստ սովորույթի ու երկրի կամքի  
նժարին է միշտ՝ ճշմարտի առաջ:  
Կանգնած եմ, ահա, զույգ զանգակի դեմ,  
Մասիս է աշնան ճնաբուրի մեջ,  
առաջին ձյունը մերմակ-արծարե  
զգոնություն է ներշնչում իմ մեջ:

Կապույտ մի ցուրտ է տեսիլքը ձերմակ,

հավատարիմ է ու հանդիսավոր,  
զլուկս, ահա, խոնարհում եմ ես,  
ոչ իրեւ անցորդ, այլ մի մեղավոր:  
Ու պետք չեն բառեր՝ մեղա ու վայ մեզ,  
ե՞րբ է սփինքը ուրիշին հարցնում,  
նրա զլխով է ամեն ինչ անցել,  
փորձիր վերանալ, փորձիր վեր հառնել:

Եվ ինչպե՞ս անցնել Մասիսի կողրով,  
մեռած եղբայրս է, կենդանի վկա,  
անկարող եմ ես հոգուս հանել,  
հսկայի համար գերեզման չկա:  
Ու բարձրացնում եմ զլուկս վեր,  
առաջին ձյունն է դումանել վրան,  
նայում է պարզկա հեռավոր վերից  
Մասիսը մերմակ, աղամանդեղեն:

- Օրինություն տուր, հայր,- ձայնում եմ ցածից,-  
քող որ անց կենամ ճամփան իմ հոգու,  
քո վշտերի դեմ՝ ականջները քար,  
քող որ անց կենամ, օրինություն տուր, հայր:

Դու մի վշտանա օտարությունից,  
օտարություն է մեր սրտերում էլ սև,  
անկիրք երգերից դու մի վշտանա,  
նրանք ծնվել են դատարկությունից:

Վախի երգեր են, ագռավների կանչ,  
կռունկները մեր մնացին հեռվում,  
ականջներիս մեջ մեն մի երգչի ձայն,  
նրա բերանը սև հողն է ծածկում:

Շիրմաքարերը՝ անթաղ դիակներ,  
շիրմաքարերը ծանր ու անզոր  
ընկած են այստեղ, ընկած վիրավոր,  
կիսաքաղ, ջարդված, մեռած խաչքարեր...

**ԿՏԱԿ**

(Բաբախանյանական)

Որդիս, քեզ նման ապրիր այս կյանքում,  
հոգուդ կտակի համապատասխան,  
սիրիր ու ատիր սրտիդ մեջ թաքուն  
և բնավ երբեք՝ բանաստեղծական...

Նահատակության շապիկը մետիր,  
հեզնանքով նայիր չարին ու թաքուն,  
թարին կատարիր իբրև պատվիրան  
և Աստծուն միայն կամքով ծառայիր...

Սերն էլ է այրվում մոմի, փայտի պես,  
սիրիր առավել քեզ սիրողներին,  
սերը ատում է մոլորվողներին,  
սիրիր ու վաճիր, վաճիր ու սիրիր...

Կրակը քո տան պահիր սրտիդ պես,  
նա է լինելու միակ ապաստան,  
կրակը պահիր սրտիդ սրտի մեջ,  
հեռավոր մի տեղ, որ չգողանան...

Տուր ու հեռացիր, հեռացիր ու տուր,  
մարդը ծարավ է զաղտնիքին ունայն,  
միակ զաղտնիքը, որ քոնն է կյանքում,  
Ե-ի սովերն է հավիտենության...

Եղիր, որ լինի, եղիր, որ մնաս,  
դու ես պահելու հողն ու հայրենին,  
ծառը ծաղկում է, երբ գարնան շունչը  
խաղում է Աստծու շնչի տակ անմասն...

Վերջինը անգամ հայրենիք է դեռ,  
մենակ արարիր կամքով Աստծու,  
քե Աստված անգամ խոռվի քեզնից,  
ապրիր ու գործիր Աստծուց խոռված...  
1997 թ.

\*\*\*

Եվ սերն է մեր ափոփանքի հզոր զինին,  
նախնիների երբը ժխտող սուրն այդ կրքոտ,  
այդ սևուկ ձին, որ ձերմակ է արտաքինից,  
սիրով, սակայն, կանգուն ենք մենք նրա թամբին:  
Արարումի ու վեհության քողն այդ դյուրող,  
որ շուքով է պահում միշտ մեզ նրա թամբին,  
և պացքը լինում է միշտ առաքինի,  
երբ արբած ես, երբ տերն ես քո ժամանակի:

Եվ տասնվեց տարիներդ զմայլը է մի,  
օրորոցից խաչդ է ենում լույսերի մեջ,  
և դու գիտես, որ հավատդ բերես ի մի  
քեզ չի կարող փականք դնել ոչ մի արգելք:  
Սերը մեր մեջ լուս ծաղկում է, յոր տարին մեկ,  
Ամեն անգամ հրավառվող նոր գույներով,  
և անցյալը ժխտում է նա, և դու երբեք  
էլ չես կարող նրան սանձեկ մերկ խոհերով:

Իսկ նա թաքուն, ամեն մեկին իր թներով,  
սողոսկում է քո մաշկի տակ, մտնում խորքեր,  
երակներում արեի հետ, սրտում քո տաք  
հարսանեկան առագաստն է պարզում վերև:  
Եվ օրինանք է կործանումի սկիզբն այդ մեծ,  
ինքնաժաման ու հաստատման կամքը Աստծու,  
այն հղվել է երկինքներից, աստվածներից,  
որ դու ժխտես և դրանով դու հաստատվես:

\*\*\*

Շահ մաքրում եմ ապակու վրայից,  
առավոտվա վրայից  
գիշերվա ծանր մուժը,  
և հոգերով խոսողվանությունները  
խայտխայտում են  
ծնվող առավոտվա տեսքով:

Բարի լույս, բառերն անգիտակից, օտար  
և ցավի պես ճնշող ու հարազատ  
արքնանում են մարմնիս, աչքերիս մեջ:

Եվ խոսոում չկա, չկան բառերը  
աղոթելու տովոր այն շուրթերից,  
մնացել եմ կանգնած լույսին ներհակ:

Այս մոլորակն ինքն էլ՝ աղոթատուն միակ,  
բազմամասուու լեզու, հրաշադու,  
ամեն խոկում, ամեն ծաղիկ ու թուփ  
զիշերվա մեջ մահի ահից պոկված:

\*\*\*

**Բանաստեղծությունը**  
ինձ դարձեց մոլագար,  
հարբեցող մի, որ չի տեսնում ոչ մի բան,  
կյանքս անցավ խնջույքներում տար ու պաղ,  
աշխարհը՝ հերիաք և օրերը՝ շարական...

**Աստծու խոսքը թերեւորեն, հպանցիկ**  
բրուաց իմ մարմնի մեջ ու անցավ,  
սերը՝ կատակ, սերը՝ ծաղիկ վաղանցիկ,  
բույր արձակեց, չքացավ...

Լայն բացեցի աչքերն իմ, որ տեսնեմ,  
մեծ գգվանքից տեսողությունս շիշեց,  
սպասեցի վայելքի մեջ գինովցած,  
զգացումս բանականին գերիշխեց...

**Կյանքս դարձավ գեղատեսիլ մի հերիաք,**  
ավա՞ղ, անցան օրերը իմ լուսատու,  
այսպես միայն հարբեցողն է արքնանում,  
երբ բացվում է լույսն արդար Աստծու...

Լավի շատը վատից վատքարն է միայն,  
չարը ցնծաց, և վարագույրը իջավ...

### ԲԸՆԱՍՏԵՂԾԻՆ

Ինչ իմանաս՝ ուր է գնում  
քամին ինքնամոռաց,  
և ում դռնից ինչ է առնում,  
ինչ է տալիս մարդկանց:  
Ում ձեռքից է խլում հացը,  
ում է տալիս համբույր,  
քանի սեր է իրար կապել,  
խախտել քանի խոսոում:  
Ինչ իմանաս՝ ուր է գնում  
քամին ինքնամոռաց,  
և ում դռնից ինչ է բերում,  
ինչ է պատմում մարդկանց:

\*\*\*

**Մեկը ուրացավ**  
իր ունեցածը,  
իր չունեցածը,  
ապրած, չապրածը,  
ելավ ու գնաց:

**Իսկ մեկը եկավ՝**  
իմ ունեցածը,  
իմ չունեցածը,  
ապրած- չապրածը  
առավ ու տարավ:  
Ինչո՞ւ ես չեկավ:

\*\*\*

**Սպասիր,**  
 այդ ո՞ւր ես քևում,  
 դրանք պատրանք են դեղին,  
 խարուսիկ, աննյութ, անմարմին,  
 դրանք մարմին են եթերում,  
 ուր կրակ է ամեն հղում:  
**Իսկ այստեղ,**  
 արևկող դահլիճում՝  
 շշուկներ, շորեր, շրբեր,  
 միալար, միաձույլ, միատարր  
 հրդեհ են շնչում,  
 ճշում են, կանչում են, ծովում,  
 ո՞ւմ:  
**Ի՞նչ ես սուլում, մտիր դահլիճ,**  
 այնտեղ անմարմին հոգին  
 անզին է, էժան,  
 այնտեղ մտել են, մտնում են  
 կորած հոգիներ վաղաժամ:  
**Այնտեղ ցնորը է անտես,**  
 անկիրք, անհավատ,  
 տե՛ս,  
 կապույտ է, հեռու է, անհաս,  
 ահա, այստեղ է այս ամենը,  
 ամենը և դու:

**Լալիս է դահլիճը, լալիս է երգը**  
 մարդու,  
 փողեցեր, ցնցեր աշխարհը,  
 պարում ենք ես ու իմ դարը:  
**Չփնտրես, իզուր է,**  
 ել չկան զահեր, արքաներ,  
 նրանք ցնցվել են, ցցվել են,  
 ապրել են դարերն իրենց ավեր,  
 նրանք քաղվել են, կալսվել են,

**նրանց փոշին արքայական**  
 հողմերն են փշել:  
**Ի՞նչ,**  
 մուսյո՞, մադա՞մ,  
 սուս է բոլորը, եղել է  
**Եվա, Աղամ:**  
**Այստեղ, դահլիճում այս շրեղ,**  
 համայնքի անհագուրդ օրբանում  
 ելել են ոտքի հույս, երազ,  
 ցնորքն արբունքի,  
 տալիս են, քաշում են, մաղում,  
 հղում են, գնում են, շոյում,  
 ո՞ւմ,  
 ամենքը՝ ամենքին:  
**Նրանք պատրանքներ են հին,**  
 աննյութ, անմարմին,  
 այստեղ, հենց այստեղ, քո կողքին,  
 նայի՛ր,  
 ճոճվում են, ճռում են՝  
 երկարեւ թեր հազմերին:  
**Իսկ հիմա դահլիճում լուսե,**  
 նայի՛ր, բեմ կելնի  
 զուվար ուսի:  
**Մի փնտրիր, ցնդես, կա՛ց,**  
 արյունը, երազը, սերը  
 մեկտեղ են ճուղված:  
**Տե՛ս, աշքերում անթարք**  
 և խոհը, և սերը, և հոյաք,  
 և դարը, և հոգին  
 մեկտեղ են ճուղված:  
**Խոր նայիր, պաղ նայիր,**  
 ոչ որպես պարող մի կին:

\*\*\*

Հետադարձ է ամեն մի քար,  
ինչպես զցես, հետադարձ է,  
հետադարձ է ամեն մի քառ,  
ինչպես ծնես, ինչպես անես...

Հետադարձ է դեռ էն զլխից  
զրոյցը չար և թե բարի,  
ինչ աշքերով նայես մարդուն,  
այն աշքերով քեզ կնայի...

Հետադարձ է սերը ծաղկի,  
ծառ ու ծաղկի սերմը ամեն,  
ինչ ցանեցիր, այն կհնձես,  
ամեն ծաղիկ իր բույրն ունի...

Սերն էլ այդպես ու այդպես է,  
սիրո համար չկա անցյալ,  
սիրո համար ի՞նչ մահացյալ,  
ի՞նչ ինձ համար, ի՞նչ քեզ համար...

Ապրում ենք մենք հարևանցի,  
հարևանցի՝ հույսի հետ պերճ,  
տափս-առնում, առնում-տափս,  
իբրև գիտենք սկիզբ ու վերջ...

Մեր սարերի ու մեր հողի,  
մեր արևի ու մեր ցողի,  
մեր ձորերի, ցալի մասին  
խոսում ենք մենք հարևանցի...

Հայրենիք ենք ասում այնպես  
և քառարան թերթածի պես  
մի նոր բայ ենք գտնում հարմար,  
որ վայել չե ոչ ինձ, ոչ քեզ...

Խոսում ենք մենք երազներից,  
Արածանուց ու Արարսից,

Խոսում ենք մենք, խոսում ենք մենք,  
խոսում՝ մեր սուրբ սար ու ձորից...

Ինչ էլ անենք, ուր էլ զնանք,  
նման ենք մենք մեր գտածին,  
ամիր ինչպե՞ս, ինչի՞ համար  
չհասկանանք մեր ծնածին...

Թե դու ինչպես, բայց ես գիտեմ  
հավատու է լոկ մեզ պահպանել,  
ինչ էլ անես, հասկացիր ինձ,  
պետք է լինել հավատարիմ...

Նայիր կյանքի անց ու դարձին,  
ապա՝ լեռանը քո սգավոր,  
կնքիր, ինչ էլ որ դու անես,  
նրա դեմքով, նրա կերպով...

Հասկացողին մեկն էլ բավ է,  
խնին խրատը ինչ կանի,  
քայլիր քո սուրբ ճանապարհով,  
ինչ լինում է, բող որ լինի...  
1989 թ.

\*\*\*

Մարդը չի ներում իրենից բարձրին,  
իրենից ցածին մարդը չի ներում,  
բավալվում է նա, խարանում իրեն  
և բարձրանում է, և ընկնում նորեն...

Անհագուրդության մի կծիկ է նա,  
վեր ու վար զարկվող և միշտ շղթայված,  
ներքեսում է նա աստված որոնում,  
երկնքում՝ հավերժ դև ու սատանա...

Եվ հոգիները խաղաղ ու բարի  
ապրում են դնի ու աստծու միջն,  
մինչև իջնում է անուշ նիրվանա  
կյանքի ու մահվան սահմանագծին...

\*\*\*

Հանգիստ խոսիր, տղա՞ս,  
բառերն արճճապատ չեն,  
նրանք գործածվում են  
սպելանի իբրև:  
Քեզ մտահոգում է  
թալանվածների ճակատագի՞րը,  
մի գիր, որի հետ ոչ մի կապ չունի  
այս բնույթունը:  
Քեզ մտահոգում է,  
թե ինչո՞ւ արքան  
չի պահում իրեն արքայավայել:  
Հանգիստ խոսիր,  
արքայի տառապանքն ուրիշ է,  
ամեն նոր ոճիր  
մղում է նրան սրբազնության,  
ու նա՝ արնոտված իր ոճիրներից,  
ուզում է քերել սառած արյունը:  
Դու հանգիստ խոսիր,  
տեսէ՞լ ես գայլի վարժեցում,  
սահմանի վրա ամեն արարած  
իր ձևն ունի:  
Քեզ մտահոգում է  
մարդու վարժեցման դանդաղությո՞ւնը,  
դու հոգնել ես դարերի վազքից,  
խոսիր,  
բայց հանգի՞ստ խոսիր:  
Ո՞վ է, որ կերել է  
ու չի հագեցել,  
ամեն ինչ իր չափն  
ու սահմանն ունի,  
արքայավայել թե արքան լիներ,  
բանաստեղծների կարիքը չկար:

Հանգիստ,  
միայն հանգի՞ստ խոսիր:

**ՈՒՐԻՇԻ ԵՐԱԶՋԸ ՎԱՃԱՌՈՂԸ**

Երազներ էր նա վաճառում,  
բարի, անմեղ, անճառ,  
ամեն երազ իր գինն ուներ,  
գործն էր հմուտ, անշառ...

Բայց չար մուկը՝ երազահան,  
թղթերն ամեն կերավ,  
ասել է, թե իր ապրուստը  
թշվառ մուկը տարավ...

Այսպիսի գո՞րծ ձեռքից բողնել,  
թիչ է ասել՝ կորավ,  
ապրուստի հետ սովորույթը  
խելքն ու միտքը տարավ...

Մկան համար բողնել կյանքը,  
ի՞նչ սուկալի հարված,  
շրջում էր նա փողոցներում  
համարյա միշտ հարբած...

Եվ հանդիպած ամեն մկան  
հարցնում էր ահով՝  
ինչպես գտնել հենց այն մեկին,  
երազի պես մաքուր...

Երազի հետ մուկը գնաց,  
մկան երազ մի կյանք,  
ապրողներին բարի երազ,  
ընկածներին՝ հարգանք...

\*\*\*

**Փախած դարերից,**  
**փախած խավարից այն միջնադարյան**  
**և լույսերի մեջ գտած նոր խավար,**  
**աչքերս երկինք՝**  
**բեզնից եմ հայցում, Տե՛ր, երկնային շշունջ,**  
**բեզնից աղերսում խավարի մեջ լույս,**  
**փրկիր գազազած մարդ արարածին,**  
**փրկիր, երկնային, փրկիր, երկրային...**

**Հոգնել եմ խոսքից մութ միջնադարյան,**  
**աղոքներից կեղծ, խոսքերից երկմիտ,**  
**լույսերից այս կեղծ, քառսից բորբոս,**  
**քառսից փախա, այս ի՞նչ նոր քառս,**  
**կեղծիքից փախա, այս ի՞նչ նոր կեղծիք,**  
**խարկանքից փախա, այս ի՞նչ նոր խարկանք,**  
**երանի, Աստված, չգայի այստեղ,**  
**շիասնեի ես լույսի այս ծովին,**  
**որը մարել է հույսը քանական...**

**Քանական սպանդ, քանական քծնանք,**  
**մտածված սպանդ, քանական չարիք,**  
**իմացված հերում, ծշմարիտ կեղծիք,**  
**մերկ հեղվածություն, անամոք կրքեր,**  
**ինքնահաստատում այլանդակության,**  
**ո՞վ պատժեց, Աստված, ո՞վ հաստատեց այս,**  
**և մի՞թե մեղքը, միակ մեղքը այն**  
**ճշտելու համար, Աստված, ո՞վ Աստված,**  
**պետք էր ծշմարտել մարդուն այս ուղով,**  
**որ պատիժը մեր լիներ կատարյալ...**

1985 թ.

\*\*\*

**Պարզապես եկել ու անց ենք կենում,**  
**թալանված, ծեծված ու անդրոշակ,**  
**մենք մեզ կոչում ենք պարզապես մարդ,**  
**որ կարող է միշտ քայլել մեն-մենակ:**

**Լինել մտերիմ, լինել միշտ սիրով**  
**և հավատ տածել բոլոր մեծերին,**  
**և երբեք, երբեք չենք կովլի սրով,**  
**ոչ եւ կիխնենք օրենքին գերի:**

**Պարզապես ծնվել ու գնում ենք մենք՝**  
**մեզանից անկախ աշխարհում այս մեծ,**  
**և քե չենք ծոել ճամփեն մեր երբեք,**  
**չենք եւ տրորել լեզուներս կեղծ:**

\*\*\*

**Ծերերը չեն գրում երգեր,**  
**նրանք երգում են**  
**ջահելությունը:**

**Չգույշ,**  
**ժամանակը խոսում է**  
**ծերության հաշվին,**  
**ծերության ժամանակը**  
**ջահելությունն է;**

**Լավ նայիր, լավ նայիր կյանքին,**  
**ժամանակն անցնում է:**

**Ո-ԱՀՎԻԲԱ**

Այրեցի՞ն,  
մի՞թե չկա այն ոգին տրտնջող,  
ցնորող մտքերի երազանքը,  
կիզում է արևը նորից,  
ճաճա՞նչ է, թէ՞ փայլ ֆոսֆորե,  
սնուցման արյո՞ւն է, թէ՞ ռահվե,  
մոռացի՞ր, մոռացի՞ր...

Լուսինը զիշերվա սև ձեռքում  
ապշահար դողում է,  
սյուները երկնասույզ,  
մարմարե սյուները  
դողում են պաղ փայլից, պաղ լուսնի:  
Հատակից մարմարե,  
դեղին հատակից քարշ են մազերը մթին,  
փայլում են սառը ֆոսֆորի նման  
ատամները մարգարտե:

Մազերն ու ատամները,  
էլ ոչինչ,  
քայլում է զառանցված, տենդազին,  
քայլում է անմարմին  
ոգին...

Ո-ահվիրա՝,  
դողում են սյուները մեղմազին,  
հնչում են հյուզե-հյուզե,  
մութ մանվածքը՝ որպես արձագանք,  
շնչում է՝  
ո՞ւր է...

Սառել է լուսինը,  
ճաճա՞նչ է, թէ՞ փայլ ֆոսֆորե,  
սնուցման արյո՞ւն է, թէ՞ ռահվե,  
մոռացի՞ր, մոռացի՞ր...

**Քայլում է,**  
ահա, նրա դեմ,  
դեմ դիմաց, որպես մահ,  
ձգվում է դեղնադեմ ու խոսուն  
սյուների երանը մարմարյա:  
Խոցում են,  
թրատում կայծակները ճայթող,  
որպես սուր,  
հյուսքերը, սիրտը,  
մարմինը աներևույթ,  
որպես մուր:

Ծիծաղում են ու ծփում  
մազերը, ատամները փայլող,  
ծիծաղում են,  
ծփում հյուսքերը,  
մարմինը խուսափող,  
որպես հող,  
լոյս կամ մուր,  
ծփում է ու ծիծաղում  
մարմինը աներևույթ:

**Ո-ահվիրա՝,**  
հեկեկում է օդում.  
զիշերը սահել է ու նորից,  
նորից որպես հոյս  
հրճվում է արեգակը ոսկյա,  
հրճվում է, խնդում:

Հատակից մարմարե,  
դեղին հատակից քարշ են մազերը մթին,  
փայլում են սառը ֆոսֆորի նման  
ատամները մարգարտե:

Խինդարեր արևի ճաճանչում,  
լոյսերի քառսում հուսաբեր  
դողում են սյուները մարմարե,  
դողում են մթին ու համբ:  
**Ո-ահվիրա՝ ...**

**Որպես մահի մահ**

կամ որպես մահ անմահ,  
որպես սարսուռ մթին  
կամ որպես շնչի ոգին,  
որպես լույսը շնչի  
կամ որպես կյանք մահի  
խարխլում է, ցնցում  
սյուները ծիգ, դեղին:

Ու ցնցում է ցնորք  
ցնորումը լուսնի,  
ու դողում են դեղին  
լույս սյուները լուսնի,  
ու անդադրում,  
ու իր ձայնով մետաղ  
բռըօրում է, հուզում,  
ու հալում է,  
ու պաղ  
ցնորումով իր ցունց,  
ավերումով իր հուռ  
մարում,  
սահում,  
կանչում,  
շշնջում է  
մի բառ՝  
Ռահվիրա՝...

Ու ծնկեց Ռահվիրան  
աղորքի շուրբերով զիշերվա,  
աշքերով ահարեկ,  
մերկ՝ որպես կարոտ ու բախիծ,  
մերկ՝ որպես կսկիծ:

Խրիսինջներ լավեցին հեռվում,  
ու բամբած նժույգներ հրդեհում,  
ասես, խրխնջում էին, կանչում...  
1965 թ.

\*\*\*

Կեսօրին է մեր ստվերը խիստ երկարում,  
և սերը մեր կեսօրին է դառնում հասուն,  
կեսօրին են հանճարները հուսահատվում,  
երբ տեսնում են մյուս կեսը:

Ծովն ու գետը, ծառ ու ծաղիկ, արևն անգամ՝  
մեր ստվերով, մեր գոյությամբ,  
իբրև հասուն իրավագետ,  
հուշում են մեզ արարքը մեր, ավարտն, ավա՝ դ,  
որ կոչվում է մեր երկրորդ կես:

Իսկ առավել ամբողջացած հանճարներին  
պետք չէ բնավ զգուշացում,  
քայլը թերև, թեոր ծանր սուրբ այրերին  
պետք չէ բնավ զգուշացում:

Նրանք գալիս, գալիս են լուռ  
մեր գոյության հետուներից,  
մի ձեռքին անցյալն է մեր՝ որպես կնիք,  
իսկ մյուսում՝ օրերը մեր, ոնց խաղալիք:

Նրանք գալիս, գալիս են լուռ  
մեր գյուղերից, քաղաքներից,  
քարանձավի մատյանները կրծքին սեղմած,  
պատմությունը՝ հուշամատյան, կրկնելով,  
ոտնափոշին գետի ջրով լվանալով,  
լվանում են հանգնության գաղափարին իշած փոշին,  
իրենց ճամփին մանուկների նկատելիս,  
նկատում են դիցարանի ասովածներին:

Նրանք գալիս, գալիս են լուռ  
և լուրջան ձայնը սասառող,  
ունկնդիրը՝ սոսկ նախանձող,  
սոսկ նախանձող ունկնդիրը ժամանակն է,  
նա, միայն նա, որ լավ գիտե  
իմացության առասպելը:

Նա՝ առասպելն այդ ազգածին,  
թեև ծնվում է զյուղերում, քաղաքներում ինքնաժխտող,  
տանու տված իր լճերում թռափում է ճամփի փոշին,  
բայց կեսօրին հաստատման  
գրանցվում է քարտեզների հայտագրում,  
ինչպես գետը, ծովը, քաղաքը, երկրամասերն են գրանցվում:

\*\*\*

**Մենք այստեղ հասանք.**  
այն ափին, ահա, հանգչում են կրկին  
երազները մեր հարազատների,  
նրանց, ում երբեք էլ չենք տեսնելու:  
Հողմի սիրահար մեր երազները  
քշում են նավը,  
առազատները պարաներով պիրկ,  
ինչպես մկանն ու միտքը մարդկային,  
տանում են նավը ափերից ափունք,  
դեպի անհայտ հորիզոններ:  
**Մենք ճամփա ընկանք**  
զվարք ու խնդուն,  
և մեր մանկական նավակը ոսկե  
տարութերվում էր՝ բեռնված երազով,  
իսկ հիմա, ահա, նավը այս հուժկու  
բարձված է խոհի, մեր կորուստների,  
չնչին գտածի ծանր բեռներով...  
Ժառանգությունը մսխած մարդու պես  
նայում եմ նորից անհայտ հեռուներ...  
Հայաստան աշխարհ, երբեմնի փառքի  
ու հզորության,  
թեզ ի՞նչ կտակեմ,  
ի՞նչ ցանկանամ ինձ:

1984 թ.

**ԱՐՔԱՆԵՐԻ ԱՂԱԹՔԸ****-Ա-**

Արքան ապրում էր թռոան հետ՝  
միակ ավարը,  
ուներ գանձեր անքանակ,  
կյանքի ծարավ էր...

Ապրել էր թե լավ, թե վատ  
տեսել ու լսել էր կյանքում,  
կյանքը տարել էր լույսը,  
թողել խավարը:

Պալատ ու ծառուղի թռղած՝  
շրջում էր ճամփերով նեղիկ,  
նստում վերթ ու քերծերին,  
խմում աղբրի ակից:  
Կավից տներ էր քանդակում,  
դեմքեր՝ անցյալից մնացած,  
օրերով չեր ուտում, խռովում՝  
ապրում էր ծերությամբ արքած:  
Շնչում էին նաժիշտներն իրարու,  
տարօրինակ էր վարքն արքայի,  
արքան տալիս էր չտեսնելու,  
ժպտում էր ծերությամբ բարի:

**-Բ-**

Լքվում էր պալատը հետզիետե,  
ծառաները՝ դառնում անօրեն,  
աչքաբող երկրի տերերը  
օրեցօր դառնում էին ցինիկ,  
խնջույքները՝ անիմաս, անհագուրդ,  
նաժիշտները՝ արքա ու տեր:

-Գ-

Սիրելին՝, պատմությունն այս թիրտ  
օրերի մասին է այն հին,  
երբ տեր ու ծառաներ կային,  
երբ ուսին ոսկեփայլ ու կավատ  
շրջում էր խրճիքի շուրջքողոր,  
երբ մարդիկ՝ զգացմունքի ծարավ,  
ատում էին տերերին սրտով:

-Դ-

Ծրջում էր արքան պարտեզում,  
մտքերը՝ ցրիվ ու խոխիվ,  
սիրե՞լ էր արղյոր իր կյանքում,  
ատելլ՝ ատել էր, գիտեր:

- Սիրե՞լ էր,- պնդում էր ինքնիրեն,  
պատախանը փակված էր ահով,  
չէր լսում իրենից ոչ մի բառ,  
մտքերը ծպտվում էին թաքուն:  
Ատելլ՝ ատել էր, գիտեր,  
դե հիմա, էլ ո՞վ չի ատում,  
սիրում ես, իբրև պատախան  
ատելն է հայտնվում թաքուն:

Ծրջում են ծառաներն ամենուր,  
շշուկներ են խառնվում իրարու,  
քաղցր հուշը հայտնվեց արքային,  
ու ծնկեց արքան ծառուղում:  
Քարալիկ մի աղջիկ  
(այն ե՞րբ էր),  
իսկ ինքը՝ արքայազն ու փոքրիկ,  
պեպեններ՝ այտերին, քրին,  
իսկ ինքը նայում էր զարմացած,  
աղջիկը ծպտաց ու մնաց...  
Ու արքան ծպտաց ինքնիրեն,  
ու բարին խլրտաց հոգում...

Արևը խաղում էր պարտեզում,  
խոտերը դողում էին հաճույքից,  
մի աղջիկ հենվել էր ճաղերին,  
նայում էր արքային անփույթ...

-Ե-

Արքան էր, ապրում էր թռոան հետ՝  
միակ ավարը,  
լրել էր գանձերն անքանակ,  
կյանքի ծարավ էր...  
Ապրել էր թե լավ, թե վատ  
տեսել ու լսել էր կյանքում,  
կյանքը տարել էր լույսը,  
թողել խալարը:  
1979 թ.

#### ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԸ

Մահը փրթում է մեր ծնված օրից,  
թևավորվում է՝ թառած մեր ուսին,  
խրախանքի մեջ համբուրում է մեզ,  
խոկումի պահին պարում ուորի տակ:

Եվ հետևում է սուրբ եղբոր նման,  
որ ոչ ոք զոհին ճամփից չշեղի,  
դերոշներ սարքում տեղի-անտեղի՝  
պահելով անվերջ իրե պարի մեջ:

Խսկ երբ հողն է քո խուժում թշնամին՝  
ատելության հետ թոյն ու քեն առած,  
մահը սարսու է ծնում մեր հոգում,  
որ մենք համբուրենք կյանքը ավետյաց:

Հին խաչ է, սակայն՝ կրկնվող անվերջ,  
հավատարմության երկվորյակը մեր  
կյանքում սնվում է մեր արմատներով,  
մեզանից հետո՝ խոհերով անեղծ:

\*\*\*

Չարչարված ու չարչրկված՝  
մարդն էր անցնում անապատով,  
վրան դեղին, մաշված փոշի  
և ամոռը՝ փշով ծածկած...

Չուներ ոչ տուն, ոչ հայրենիք,  
Աստված ինքն էր հայրենիքը,  
խիզը հոգում լուս ծվարած,  
և տունն էր իր անապատը...

Հզորաբաշ շեկ առյուծներն  
անցնում էին նրա կողքով,  
և սնվում էր մարդը մենակ  
փշի դառը պտուղներով...

Լի էր հոգին և սիրտը՝ փակ,  
կուշտ ամենայն անցավորից,  
աշխույժին էին տալիս անցնում  
օձ ու կարիճն անապատի...

Բիրս օրենքի սպիները,  
օձերի պես խայտազալար,  
պապում էին մարմնին հեզ,  
և շնչում էր մարդը արդար...

Նրա հացին չէին մոտենում  
ոչ թույլ, ուժեղ և ոչ հզոր,  
մարդն ապրում էր օրենքով այն,  
որ կոչվում է ամենազոր...

\*\*\*

Մեզ թվում է, թե մենք ճիշտ ենք,  
ինչպես այն անձրևը, որ բափվում է,  
թվում է ճիշտ է այն շարժումը,  
որով մեր առջև դրուք փակվում է:  
Աշխատում ենք մենք ողջը լուծել մեր մեջ,  
լուծելու համար ամեն կասկած,  
այստեղ արդեն գործը բարդանում է,  
և չի փրկում մեզ ոչ մի աստված:

\*\*\*

Մուրն ընկապ,  
թռչուններս թռան,  
լողացին հեռու-հեռուներ,  
նրանք կգան միայն առավոտյան,  
բայց արդեն՝ ճերմակ ուրուներ...

Մուրն ընկապ,  
թռչուններս թռան  
ու տարան խոհերս իրենց հետ,  
կրացվի լույսը, կելնի արեգակը,  
արեգակը հուստ է հավետ:  
1969 թ.

\*\*\*

Պատառության ով իրաշք ձի,  
անսանձ, անքեն ու անաստված,  
ազատության, անմտության իրարանցում:  
Դափնեպսակ կրել ճակատիդ  
նույնն է, ինչպես դեմքի՝  
վանդակապատ ցանցը ժանգոտ,  
և դու պիտի ծաղկես այնտեղ,  
որտեղ չկա բառը չկա:

Եվ դու պիտի ծաղկես այնտեղ,  
երկինքներում հազարանուն,  
բնավ պետք չէ բանաստեղծել,  
բանաստեղծ է ամեն մանուկ:

Սակայն ուսիդ եթե իջան  
պողպատակուու աստղերը ջինջ,  
և հայացքն հեռացավ  
աստղայինը ամենակուլ,  
եթե սրտիդ, սրտիդ իջան  
մտածումի խոհերը ծեր,  
մնաս բարով, հեզ մանկություն,  
մնաս բարով, երջանկություն...

\*\*\*

Մոռացված լուցկու մի քանի հատիկ,  
ու մի դատարկ գլանակատուփ,  
ահա, երեկվա խրախճանքի սեղանը,  
որ այնքան սիրառատ էր ու մի քիչ էլ անփոյք:

Առավոտյան արդեն ոչինչ չկար այգում,  
քանձր մառախուղ էր իջել սեղանին,  
ու երկու սիլուետ՝ ամքնությունից համբ,  
քարացել էին՝ ծիծաղը դեմքներին:

Առավոտյան դառը ծիծաղեց ծերունին,  
վառեց զլանակը, մաքրեց փոշին  
ու կարդալով մի ձիգ մենախոսություն՝  
ամեն ինչ հանձնեց աղբակույտին:

\*\*\*

Սերմը ցանիր գարնանը վաղ  
և հավատով ջրիր,  
օրերի հետ նա կարքնանա՝  
կրծքում բույրը հողի...

Օրերի հետ դու բարձրացիր,  
բայց մի տրվիր նրան,  
սիրիր, որքան մորն են սիրում,  
մի օրորվիր տարտամ...

Երբ չես լինի, և օրերի  
փոշին կիջնի մեռած,  
քո տողերից ու քո սիրուց  
կհառնի օրն անցած...

Սերմը ցանիր գարնանը վաղ  
և հավատով ջրիր,  
դարերի հետ նա կարքնանա՝  
կրծքում բույրը հողի...

1988 թ.

\*\*\*

Մեզնից շատ խղճում եմ ես թոշուններին,  
նրանք թոշում, թոշում են վեր

և հաստատում սահմանն իրենց վերջնակետի:  
Հետ դառնալիս տխուր են խիստ,

բայց հույս կոչված մարմինը ծեր  
ստիպում է նորից դառնալ, նորից փորձել:

Վմենից շատ խղճում եմ ես առյուծներին,  
կորյուններ են աշխարի բերում,

սակայն աշխարիը էլ այն չէ,  
հիմարացած առյուծները  
պատեպատ են իրենց զարկում,

իսկ անտառը՝ խորագույնս խուզված արդեն,  
չի բաքցնում մերկությունը մարդ-աստծու,

ոտաքորիկ, ծիծաղելի, խեղճ առյուծներ:

Թե խղճալով ու խիղճ բառով պիտի սկսեմ,  
խղճում եմ ես նաև մի քիչ կետ ձկներին,  
խեղճ կետ ձկներ, շատությունից ճարպակալած,

հա պեղում են օվկիանոսը, պեղո՞ւմ, պեղո՞ւմ,  
և պեղածը կուտակում են հորում հսկա,

որ կոչվում է փոր:

Եվ քանի որ երկինք, երկիր, ջուրը պեղվեց,  
ու մնում եմ ինքս իմ դեմ,

խղճալ բառը թողնում եմ ձեզ  
և հավատով ասում եմ ես՝

հավատում եմ տիեզերքի հետախույզին,  
և հավատը, և սերը մեր քող բույն լինի

վերը նշված աշխարիններին,  
սիրել է պետք և ոչ խղճալ:

## ՀՈԳՆԵԼ ԵՄ ՍԻՐՈՒՑ՝ ՀԱՆՈՒՆ ՍԻՐՈ

Դժվար է գրել երգեր սիրո մասին,  
դժվար է ապրելու մասին գրել,  
միանգամից երկու զգացում  
կրկնակի դժվար է ապրել:

Ապրելու համար զինվորներ են պետք,  
որ միշտ ծաղիկները ծաղկեն,  
ես հոգնել եմ սիրո մասին գրելուց,  
սերը չի սիրում շատ խոսքեր:

Դժվար է գրել երգեր սիրո մասին,  
դժվար է ապրելու մասին գրել  
այս ամենն առավել դժվար է,  
երբ ժամանակը լի է տեսիլներով:

Խսկ սրճարաններում պոետիկները  
զինու դատարկ բասերի մոտ  
վախենում են մտքեր արտաքերել,  
ժամանակը լի է բարսողով:

Մինչեռ խանդը՝ քամու ընկերակցությամբ,  
ժամանակի անստույգ մառաններն է մտել,  
ու սուլում է երգն իր ինքնամոռաց,  
ժակ գրանը պարզած, քիթը տնկած վեր:

Օ՛, տրեխավոր ճշմարտություն,  
սկիզբը բոլոր տիպի եղեռնների,  
ոտք վերմակիդ չափ երկարի՛՝  
զիտակցելով ձևերն օրերի:

1979 թ.

## ՄԻԶՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Եղբորս՝ Սերգեյ Բաբախանյանի հիշատակին

1

Աստծու տաճար է մարդը,  
զանգի պես հնչեց ու անցավ,  
ահի անդունդ է մարդը,  
խոսքից չքացավ.

Տե՛ր, մարմին էր այս սարդը,  
լոկ սիրող բեկրեկ,  
ավելո՞րդ էր այդ զարդը  
տաճարում քո մերկ...

2

Տե՛ր, հազցրու այս մարդկանց  
մարմինը սովյալ  
և ճոխացրու սեղանդ,  
և կտտանքը առ,  
և բերանն այս արշիո  
լցրու դու հոտով,  
Տե՛ր, մոտեցրու բաժակդ  
խնկարույր խոսքով...

3

Յամարեկ է առուն,  
և սառեկ է ջուրը,  
երկում են, տե՛ս,  
հատակն ու դուռը.  
միայն մարդը՝ տկար,  
միայն մարդն է անզոր,  
միշամտիր, Ասովա՛ծ,  
քո մինուճար Որդով...

4

Փոփոխվեց աշխարհը,  
ծառազարդ է կրկին,  
մարդը՝ լերկ անապատ  
և քարանձավ մթին.  
և հովիվները հոտի՝  
գահի անհագ ծարավ...  
Տե՛ր, ծաղկի պես փոխիր  
էությունն խավար...

5

Հարբել է մարդը գոռոզ,  
հարբել է մարդը ոսկուց,  
հարբել ու ունկնդիր չի  
ծովածավալ քո խոսքին...

6

Փոխի՛ր, փոխի՛ր, փոխի՛ր ինձ,  
ես՝ ամենից անկատար,  
այս ամենի հետ անհաշտ  
և ամենքից ես տկար,  
և դեռ նայող ու հայցող,  
և դեռ միջնորդ ինքս ինձ,  
փոխի՛ր, փոխի՛ր, փոխի՛ր, Տե՛ր,  
ազատիր ինձ ինձանից...

7

Աղջիկն անցնում է առավոտվա միջով,  
ծերծերում է քնարը լուսաբացի,  
զրնգում է լույսն արծար-արծար,  
և աղջիկը՝ մութ առեղծվածի,  
խառնել է քայլը թերև  
առավոտվա հետ,  
աղջիկ՝ կին արարած  
ու մի քիչ եթեր...

8

Երկու աշխարհ իմ կյանքի մեջ,  
երկու գարուն,  
մեկը՝ մեղքի անոք մոռացումի,  
մյուսը... Տե՛ր, ներիր...

9

Գահակոփի է, գայլակրիփ,  
ամեն ինչ ծանոք է,  
ամեն ինչ՝ խոփ,  
եզ ու որձի պայքար,  
անկար խարեռություն,  
փոքրիկ մի տերություն՝  
մոմի լույսից խավար...

10

Ոչ ոք չիմացավ,  
հովվապետն անգամ,  
ոք կյանք կոչվածը, տրված մեկ անգամ,  
անվերադարձ է, անվերապահ,  
իսկ վերադարձը  
տրված է պահ...

11

«Հենց ոք տեսալ՝ մարմինը վտանգի մեջ է,  
սկսեց մտածել հոգու փրկության մասին»:

Հին իմաստնություն

Թողություն չեմ խնդրում ես, Տե՛ր,  
թող օրերս լինեն վկա,  
արարքներիս համար, իմ Տե՛ր,  
ինչ եղել է ու պիտի զա:  
Թողություն եմ խնդրում ես, Տե՛ր,  
շապրած իմ ողջ կյանքի համար,  
սպասումի, սպասումի,  
ոք դեռ չկա, չկա, չի զա...

12

Երանի նրանց,  
որոնց աչքերին լուսաբաց կգա,  
որոնց աչքերին՝ արեգակ արդար,  
աչքին՝ մանկան քուն,  
ծաղիկ անարյուն,  
սեր հավատածին,  
երկինք կապտաքույր,  
գահ ճշմարտախոս,  
հովիկ անմեղա,  
երանի նրանց, որ կյանքի վերջին  
չեն ասի՝ մեղա, **Տե՛ր Աստված, մեղա՝...**

13

**Այս ո՞ւմ հետ ես ճամփա ընկա,**  
նստեցի ու քայլեցի,  
**Տե՛ր, քեզանով հանգստացա,**  
քո օգնությամբ մաքրվեցի...  
Եվ դեռ կանգուն կանգնած եմ  
ձեր լայն բացված աչքերի դեմ,  
որքան հեշտ էր թվում ճամփաս,  
ասացի ու խնդացի ես...

14

Ինչ կարող էիք, կատարեցիք  
և մնացիք անկատար,  
դուք ձեզնից ձեզ բաժանեցիք  
և չգտաք ճիշտ հնար...  
**Անհնար է և անիմաստ**  
չհավատալ ու սիրել,  
մի ձեռքով սերն ուտել կյանքի,  
իսկ մյուսով՝ խաչ հանել...

1995 թ.

\*\*\*

**Մարդու առեղծվածն այնքան է մրին,**  
որքան թռչնակինը,  
նրանցից մեկը երկնքին է մոտ,  
մյուսը՝ երկրին:

**Նրանք ապրում են հարևանների պես,**  
իրար նեղելով, իրար սիրելով,  
նրանք վախվորած բնազդներ ունեն,  
իերիար լսելիս դյուքվում են լիին,  
ծով տեսնելիս, կրծքից են ուղղում,  
խավար գիշերին քայլում ու թռչում  
թիչ երկչոսությամբ:

**Նրանք ուզում են ազատազրվել,**  
մեկը՝ բնազդից, մյուսը՝ լծից:  
**Մարդն ու թռչունը առեղծվածներ են:**

\*\*\*

Ինչ լինում է,  
լինում է միշտ միանգամից,  
միանգամից ենք մենք սիրում,  
տիրում ենք մենք միանգամից,  
զրոհում ենք, թե նահանջում,  
սիրում ենք, թե չարչարում,  
խարում ենք, թե խարվում,  
հարզում ենք, թե վիրավորում,  
կամքով է, թե անկախ կամքից,  
լինում է միշտ միանգամից:  
Ու թե մեկը ասի հանկարծ՝  
այսօր չեղավ, արի վաղը,  
գիտցիր, խարում է անկասկած,  
թե կրկնում է հաճախակի՝  
սերը փորձիր ժամանակով,  
հավատա՝ նա խարում է  
ժամանակով:  
Ինչ լինում է,  
լինում է միշտ միանգամից,  
ուրիշ է, թե սիրում է քեզ ու վախենում,  
ուրիշ է, թե ոչինչ, ոչինչ չի խոստանում,  
ուրիշ է, չէ,  
ինչ լինում է,  
լինում է միշտ միանգամից:

\*\*\*

**Մեռավ գիշերը**  
մտքի տքնության ու առաքինության,  
մեռավ գիշերը  
ավագակության, ոճրագործության,  
անձրևի տեղակ կապույտ մշուշ է  
երկինքը մաղում,  
ու հղացումը գիշերային  
մտքի արգանդից արև է ծնում:

\*\*\*

Իմ բոլոր աշունները  
տխուր են, բայց մաքուր,  
կուսական որպես արևը,  
նվազում են նրանք  
ինչպես բոյլ տերևներ,  
երբ մարում է  
արևը հուրիբան:

Բացատում անտառի  
սառել է երկինքը,  
աշունը նվում է հուսաբեկ,  
ամեն ինչ այնպես է,  
ինչպես հողի վրա,  
երբ լոռում են ծաղիկը,  
քարը և գետը:

Չքացել է ներքին  
տագնապը ամառվա,  
և ցուրտը իջել է թևավոր,  
թափվում են տերևները  
թռչունների նման,  
երբ նրանք անլյանք են  
ու սևավոր:

Իմ բոլոր աշունները  
տխուր են, բայց մաքուր,  
կուսական՝ որպես արևը,  
նվազում են նրանք  
ինչպես բոյլ տերևներ,  
երբ մարում է  
արևը հուրիբան:

\*\*\*

Լսո՞ւմ ես,  
մի օր կարկատելու ես  
հարսանյաց զգեստդ  
և սենյակում փակված,  
հուշերիդ հետ մենակ՝  
փորփելու ես հանգած օջախտ:  
Լսո՞ւմ ես,  
փակիր հիշողություններիդ դռները  
և սիրիք բոլորին:

\*\*\*

Դու ամեն օր մենակ  
մտնում ես անտառ,  
ինչ-որ քան բռնած  
ձեռքիդ,  
քո շուրթերին պահած բառեր՝  
դու լուս անցնում ես  
անտառով փակ:  
Ու տերևների տարափից հոգնած  
և խոնջացած, դարձած երազ՝  
հայտնվում ես դու իմ ծովափին,  
որպես հույսերիս հավերժահարս:

\*\*\*

Ինչքա՞ն տխրություն,  
չեմ կարող ողջը դնել մեկ տողում,  
ասել չասելին  
ու հետո,  
հետո սպասել անսպասելիին:  
1967 թ.

\*\*\*

Եվ քո սերը, և հոգին,  
և բախիծը քո  
տանում եմ ես լիասիրտ,  
տանում եմ ես զոհ:

Եվ հոհոցը մարդու՝  
ատելությամբ լի,  
տանում եմ ես հրճվանքով,  
հաճույքով լի:

Տանում եմ ես անտրոսում  
դարերի հոյսով,  
տանում եմ ես անտրոսում  
գալիքի լոյսով:

\*\*\*

Ինչ-որ տեղ հեռու,  
աշխարհից հեռու  
մի սիրտ է լալիս:

Մի տխուր կակիծ  
տագնապի նման  
գալիս է, գալիս,  
գալիս բարուրում  
ու տանում է իմձ:

Տանում է հեռու,  
մի ուրիշ աշխարհ,  
մի ուրիշ կակիծ  
բարուրում է իմձ:

Ինչ-որ տեղ հեռու,  
աշխարհից հեռու  
մի սիրտ է լալիս:

\*\*\*

Ծով գիշերվա զիսերի տակ,  
որպես մռափ անվերադարձ,  
արևային գունդը դեղնած  
դեգերում է լուս...

Ճաճանչները արևաբաց  
մուր գիշերվա բիբերի տակ,  
որպես մուրի զառանցանը  
դեգերում են տիսուր...  
1965 թ.

\*\*\*

Աստծու արցունքը ընկել երկնքից  
ու վեր է ածվել փաթիլների հորդ,  
դարեր են անցել, թափվում է նորից,  
սիրո նման տաք, լուս ու ամոռող...

Անրիծ ու ջինջ են փաթիլները այդ,  
հոր արցունքի պես անիմանալի,  
իր Հիսուս որդու ողբի արցունքը,  
որ թափվում է լուս սիրո պես հղի...

Եվ մանուկների սրտի նման ջերմ,  
և մանուկների սրտի պես անրիծ,  
զրույց ու խաղ է, խաղ է ու զրույց,  
արցունքն Աստծու, անքեն ու մաքուր...

\*\*\*

Հրե կածան,  
իրե երկինք,  
իրե աշքեր  
ակնքարթում  
արտացոլեց  
մեռած արփին:

\*\*\*

Լիճը սառել էր,  
ու կապոյտը լճի  
ծածկվել փարթամ  
փաթիլներով:  
ճերմակ կղզին,  
որ կոչեցին կարապ,  
ասես սահում էր  
երազների հետքով:  
Լուսինը երգ էր հյուսում,  
սառը, տիսուր մի երգ  
մոռացված սիրո  
և հավերժի մասին:

\*\*\*

Ծառերը թափեցին իրենց սաղարքը  
և նրանք նոյնափես մերկ էին,  
անպաճույն, հոգնած,  
նվիրված իրենց երկրայինին:

Նա եկավ այնպես,  
ինչպես հրավիրվել էր,  
թողեց բոլորին և անզամ  
իրեն ձոնված երգերը:  
Եղան բարի բառեր,  
շիասկանալու պես պարզ,  
և օտարացած սիրո  
խոստովանանք:

Ներքին ձգողությամբ մերձեցան  
իրերը, երգերը, սերերը, երազները,  
թաքնված խոստումները՝  
նման ընկոտ բանաստեղծությունների:

\*\*\*

Մահը՝ կյանքի գերխնդիր,  
մահը՝ կյանքի հանելուկ,  
մահվան երգ է երզը ձեր,  
կյանքի առաջ՝ հեզ մանուկ...

Մինչդեռ կյանքը երկնային  
սայրի վրա պարող երգ,  
խելահեղ մի խնդրություն  
և խենքություն՝ մի ողբերգ...

Կան ու չկան՝ եղբայրներ,  
որ դարձել են հանելուկ,  
ցալից ծնված ամեն բան՝  
մի մարմին, մի էություն...

1996 թ.

\*\*\*

Երբ տեսնում ես քո մեջ  
տիսրությունը հոսող,  
դու մի կասկածիր,  
մի բռնիր իսկույն աշունքվա ճամփան,  
ու քե զգում ես, որ հիմա,  
ահա, կպայթեն շուրթերդ փակված  
ահեղ ծիծաղից,  
դու մի կասկածիր,  
հարցուու բոլորին,  
նրանք նույն մարդիկ են,  
մեր մարմինների անխոս մարտիկները,  
նույնը,  
անկասկած:  
1967 թ.

\*\*\*

Հենց նրա համար փառաբանեմ,  
որ առաջինը եղար կովում,  
որ գիտենիր ինչի համար,  
ինչի համար էիր արյուն հեղում...

Վտելությունն էր դրոշը քո,  
և ճշմարտությունը՝ խղճուկ ծառա,  
փառաբանեցիր քո Աստծուն,  
հետին էիր դու և տեր դարձար...

Կույր էիր դու, հետին մի կույր,  
և կուրացրել էին խղճի մտոք,  
հենց նրա համար փառաբանեմ,  
որ կովի ելար արյուն-ոգով...

Սերդ ընկած էր՝ արյուն-շապիկ,  
պոռնկուհու պես զահիդ առաջ,  
սերը ծաղկում է, ծաղկել է միշտ,  
սերը ծաղիկ է մահահառաչ...

Հենց նրա համար փառաբանեմ,  
որ հաղթահարեցիր նախ ինքդ քեզ,  
բառերի որչից նախ ելար դու,  
արջ-բառաբնից խղճուկ ու հեզ...

Եվ լոգանքով քո աստվածահեզ,  
անցած երկու բյուր մթին դարեր,  
կորցրած քեզ հազար-հազար անգամ,  
ասացիր՝ Աստված, հոգնած եմ ես...

Վտելությունդ փառաբանեմ՝  
մեն մի աստծու շապիկ հազած,  
դու հենց Որդին ես, Աստծու Որդին,  
տեսած դժոխք, մահ ու հառաշ...  
1999 թ.

### ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՏԱԿԻՑ

Խորհրդավոր թռչուն՝ երամից կտրված,  
այդ ո՞ւր ես պանում անհանգրվան,  
սրտիդ վերքեր, սպիներ բարձած,  
անտեր, այլև անաստված, մենակ...

Չա՛րկ, զա՛րկ ժայռերին մենավոր,  
կատարներին սեզ, շեկ ժայռերին,  
մարմինդ տաք զարկիր,  
ավարտդ թող լինի ավերումդ,  
մինչն խավարը, մինչն ավարտ...

Կիշե՞՞ս արդյոք, իշշո՞ւմ ես,  
բազեներն արյունոտ կտուցներով  
քրքրում էին, և փետուրները խղճի  
լողում էին օդում վայրէջքներով խեղճ...

Հիշո՞ւմ ես, ասա, կոփմերդ անբեկ  
սև դահիճների հետ,  
և գեղեցիկ էիր դու, և պացիկ,  
և խեղճությունդ՝ խեղճ, անօգնական...

Վայրկյան մի, մի հեգ վայրկյան,  
և անկումդ հպարտ, տիրական,  
և մարմինդ՝ դագաղ կապույտ ծովում,  
և անկումդ քեզ պես իրական...

Չա՛րկ խեղճության ծովում, զա՛րկ,  
և թող Աստված տեսնի, և թող ապշի,  
սովորելու բան կա այս աշխարհում,  
թող շտկվի սխալը եղերական...

Չարկն է գոյությունը տիրական...  
1999 թ.

\*\*\*

Խորամանկ է սատանան մարդակերպ,  
թարնվելով քղանցքի տակ Աստծու  
և նետերն արձակելով անվրեա՝  
մարդ է որսում թաքստոցից մեկ առ մեկ...

Մարդն անզոր է քղանցքից վեր բարձրանալ,  
սերն Աստծու ամենքինն է հավասար,  
և օրենքով հավասարի, բարեգութ  
մարդը որսն է սատանայի անկատար...  
1998 թ.

### ՀՐԱՃՔ

Ոչ ոսկե կառքն է թռչում երկնքով  
և ոչ էլ ոսկյա երազն է պատել,  
ծույլ հորանջում է աշնանամուտի  
դեղին նկարված, գունատ մի պատկեր...

Եվ պատկերի մեջ այդ դեղնադեղին,  
իբրև մի տեսիլ, երկնային ուժով  
հայտնվում է նա՝ ցոլուն ու բեկրեկ,  
վառված աստղային մաքուր մշուշով...

Սիրո կրակը հավերժ կենդանի  
ցոլում է վառվող ակն-աչքերում,  
և անունը իր՝ հանկարծ սրավկած,  
արտաբերում եմ հանգած շուրթերով...

Օ՝, երկնային Տեր ամենակարող,  
որ ձեռք ես մեկնում հուսահատ պահիս,  
վառում ես միտքս, սիրտս կիսավեր՝  
հեռու վանելով մոտեցող մահը...

Եվ տեսիլն այդ աստղուտ ու արձաք  
զնոցում է իբրև կիսավեր վանքի՝  
երկինք արքնացնող անքեն հոգեդարձ,  
և երկրի հոտը՝ ապրելու, կրքի...

\*\*\*

Բռնկվեցին հորիզոնում  
արշալույսի գույները պերճ,  
ու ծավալվեց դաշտի վրա  
ամպե քանձր մի մառախուլ:  
Կոպերից ցած սահեցին  
գիշերային երազ ու հույս,  
ու հրդեհվեց հորիզոնում  
կապույտ բոցով մի արշալույս:

\*\*\*

Չիրենիների պտուղն արդար  
զործածում ենք մենք կեցության համար,  
ձիրենիների հսկա մի անտառ  
ոչնչացնում ենք անխոհեմարար:  
Օրերի առաջ կանգնած ենք, ահա,  
և արևի դեմ, և քամու, և բբի,  
ձիրենիների շշուկը մեղմիվ  
օրիներզում է մեզ, որ հարատևենք:

Մենք ակնածանքով նայում ենք նրանց  
օտար բառերի, կարոտի միջով,  
նրանք գրությամբ ներում են անբառ՝  
օտարությունը դարձնելով վճար:  
Եվ կխաղաղվենք համոզմանք մի սուրբ,  
դաշնությունը մեր կլինի արդար,  
պտուղը գոյի կատանանք ցավով,  
իսկ վարձը կտանք մենք խոհեմարար:

\*\*\*

Անձրևում է ընդհատված մի երգ,  
քամին կարդում է մենախոսություն,  
փողոցները քաց, պաղ լուսթյամբ  
ունկնդրում են համբ:

Ծառերը ծանոր խմբավարի պես  
վերսկսել են նվազավարել  
երգը ընդհատված,  
ու սովում է փողոցը կոյր  
հնչյունները ծնված:

\*\*\*

Վսում են Նապոլեոնը  
տիրել է, տարել է,  
դավել:  
Վսում են՝ ո՞ւր է այն  
Նապոլեոնը,  
որ տիրել, տարել է,  
դավել:  
Վսում են՝ եղել են  
թագավորներ,  
որ եկել են, տիրել են,  
դավել:  
Վսել են, ասում են...

\*\*\*

Նա գրեց երգեր,  
հետո ավարտեց գրքեր,  
աշխարհ եկավ, զնաց:  
Նա թերթեց մտքեր,  
նա սերտեց հետքեր,  
աշխարհ եկավ, զնաց:  
Նա լլկեց հոգին,  
արթնացրեց ոգին,  
նա ընկավ ելնելուց առաջ:  
Նա ընկավ անվերջ,  
վերծանեց անտենչ,  
նա եկավ, մնաց:

\*\*\*

Գիտեմ, մենք կանցնենք այսպէս անծանոք,  
նորոտ ու մռայլ, չենք նայի իրար,  
չենք փոխանցի միմյանց վիշտ ու սպասում,  
և աչքերը մեր կլինեն պարզ, անխինդ:  
Սակայն, սիրելին, զուր մի ամփոփվիր,  
Տերը ժանոք է բոլոր ցավերին,  
ամբողջությունը պահեց իր համար,  
իսկ մանրութները՝ մեզ սպեղանի:  
Գիտեմ, մենք կանցնենք այսպէս անծանոք,  
նորոտ ու մռայլ, չենք նայի իրար,  
չենք փոխանցի միմյանց վիշտ ու սպասում,  
և աչքերը մեր կլինեն պարզ, անխինդ:

\*\*\*

Չկարծեք, թե փոխավել է աշխարհը,  
թե մարդը բարեկամ է մարդուն,  
և արդեն անցել են դարերը,  
երբ Թեմուրը իր սուրճ էր ճոճում:

Երբ հիմա այս գնդի կես մասում  
խոսում են մարդիկ բարեկիրք,  
չկարծեք, թե փոխավել է մարդը,  
երբ գրում է օրենքներ հակիրճ:

Եվ կանգնած ամեն պատվանդան  
ծովված չէ հավերժի ոսկով,  
նրանցից շատերը գնված են  
մարդկային ոճրի արյունով:

Չկարծեք, թե փոխավել է աշխարհը,  
թե մարդը բարեկամ է մարդուն,  
և արդեն անցել են դարերը,  
երբ Թեմուրը իր սուրճ էր ճոճում:

### ԿԱՊԻԿԸ

Վմենից շատ  
խղճում եմ ես  
կապիկներին,  
վանդակի սովոր,  
վանդակի մի մաս  
կապիկներին,  
նատած է, նայիր,  
ինչպես նորեկ հարս...

Հիմա հասկացա  
և վերջնականապես,  
ինչքան էլ թվա,  
ինչքան էլ ամաշեմ,  
նայում եմ նրան  
ու ճանաչում մեզ...

Հենց նա է դրել  
մեր հոգուն շղթա,  
հետնարարերի  
այդ ճորտը՝ նման  
մարդկային ցեղին...

Եվ հաստատում եմ  
վաղուց հաստատված  
զյուտը Դարվինի,  
և քող ինձ ներեն,  
վկան է նա մեր՝  
զուսպ ու իրեղեն...

Վմենից շատ  
խղճում եմ ես  
կապիկներին...  
1987 թ.

\*\*\*

Լինում է քարի,  
լինում է չար,  
այսպես եղել է,  
այսպես էլ կա,  
միայն ասում են՝  
լինում չի լինում  
լինում է միայն  
հեքիարներում:

\*\*\*

Մի կտոր լույս՝ քարի վրա,  
մի բուռ արև՝ ծնկած ծաղիկների մեջքին,  
իրար գրկած լեռներ՝ երկար ստվերներով,  
ոսկեծիլ ծառեր ծիրանի՝ լույսից իրդեհված,  
մի բուռ ցորեն արտերի եզրին,  
ստվերներ մարդկանց՝ լույսից խտացած,  
մի աղջիկ՝ հեռո՞ւ, հեռո՞ւ դաշտերում,  
շրմերին՝ բողբոջը լույսի, ու աշքերը թաց:

\*\*\*

Ունայնություն չէ, ինչ մենք սիրում ենք,  
ունայնություն է, ինչին տիրում ենք,  
թեկուզ և լինել վարձու քագավոր,  
անկախ մեր կամքից՝ փառք է հարկավոր:  
Այն, ինչ գնվում է սեփական ձեռքով,  
ոտնահարվում է ամբոխի կամքով,  
ուրիշ է այն, ինչ կյանքում սիրում ենք,  
ուրիշ է, ինչին ափրում ենք:

\*\*\*

Որքան կորած սերմեր կան,  
որ նոր են ծիլեր տալու,  
որքան չասված երգեր կան,  
որ նոր են աշխարհ գալու,  
քայց, ա՝ և, որքան սրտեր կան,  
որ անցան ու չեն գալու:  
1963 թ.

\*\*\*

Մամուռ է նստել խաչքարի վրա,  
քայց երևում է արվեստն անցած,  
այն նոր է և հին է հիմա,  
այն ուորերիս հողն է սրբացած:  
Ես գուրգուրանքով մաքրում եմ քարը,  
որպես սուրբ մասունք,  
սակայն ո՞ւր է այս դարի քարը,  
որի վրա էլ ծնծղա մամուռ:

Ու երբ նայում եմ քարին ու ձեռքիս,  
ինչ-որ քախիծ է պատում հոգու,  
թե դարեր եեսոն ի՞նչ է պատմելու  
այս դարի ոգին դարերի մարդուն:

\*\*\*

Անկաշառ է սերը ձեր,  
ինչպես գինին հուր,  
երբ չի ծծվել դեռ հոգու  
անդունդը քափուր:

Քայց և պիղծ է, և տկար  
այն գինու պես հուր,  
երբ դառնում է խելագար  
ձեր հոգին մաքուր:

\*\*\*

Օ-իշերային մի ուրվական՝  
երկու ստվեր դարձած...  
Ծուկեցին աշնան ճամփան  
ու հեռացան անդարձ:  
Պաղ լապտերի հալոցը քոյլ,  
բոքախտավոր, դեղին  
ըմպեց նրանց շշուկը լուրք  
ու զառանցված ուղին:  
Երկու ստվեր, լուսնոտի պես,  
գգվաճճներով աննյութ  
խենք շշուկներ քողին անցան  
աշնան շնչում անփույք:  
1965 թ.

\*\*\*

Լուսե ճամփա,  
կանաչ ջահեր ճամփի եզրին,  
երկու ճամփորդ՝  
տեսիլների պարկն ուսերին,  
մի քիչ այն կողմ՝  
դժոխատիպ սրբնթաց գետ,  
և ամենին իբրև վկա՝  
փոշոտ լուսին:

\*\*\*

Ծառերի խոնավ ստվերներում  
դեռ քաց աչքեր կան, ծիծաղներ քծնի,  
այգիների մութ մուժի մեջ՝  
կապոյտ երազներ պատառուված,  
և հոգնած հույսեր կան անտառների մուտքին,  
և բազում գերեզմաններ՝ նրանց խորքում:

\*\*\*

Կյանքի ամենալավ երգը  
այս կանաչ ծիլն է,  
ամենալավ բառը՝  
կարոտ,  
ամենահիվանդը՝  
սեր:  
Մեռնող հավատ չկա,  
սպասումից չեն ծերանում,  
երանելի են բոլոր պաշտամունքները,  
մարդիկ անմահ են միայն բառերի մեջ:  
Կյանքի ամենալավ երգը  
այս կանաչ ծիլն է,  
ամենալավ բառը՝  
կարոտ,  
ամենահիվանդը՝  
սեր:

\*\*\*

Ցալն ամեն ճանապարհով սիրու է մտնում,  
լույսին կարոտ մուրացիկի նման,  
արդեն քանի անգամ հարցնում է նա ինձ  
ծագող լույսի, արևի, վաղվա մասին:  
Ես շրջվում եմ դեպի երկինքն անծայր՝  
մութ քողի տակ դեմքս ծածկելու,  
այս լրված հողի կսկիծը պահած,  
սրբության նախն միտքս կեղծելու,  
լուրջան հանդեպ խախտելով սերս:  
Նայիր քարտեզին այս ծամածոված,  
ուր ամեն օր փոխվում են գույները՝  
երկիրը երկրից տարբեկու հույսով:  
Ո՞վ մարդկային անզոր ճշմարտություն,  
խարիսխիր պատյանս, որ քայրայես:  
1979 թ.

\*\*\*

**Գիշերն իջավ**  
 համբույրի նման,  
 ու հովը ահով շոյեց  
 հյուսքերը ծառերի:  
**Ներքին մի ահ**  
 անցավ թափով խոտերի մեջ  
 ու երկյուղած ինքն իրենից՝  
 փակվեց ծառի հաստ փչակում:  
**Լույսը բացվեց,**  
 ու գիշերվա սարսափն հովի  
 քիչ-քիչ մարեց...

\*\*\*

**Կապույտ երկինք,**  
 կապույտ աղջիկ,  
 կապույտ ծով,  
 այս ամենը տեսավ  
 կապույտ աչքերով:

\*\*\*

**Արտասվեր, աչքեր,**  
 երե խարել եք,  
 արտասվեր, աչքեր,  
 երե ատել եք,  
 արտասվեր, աչքեր,  
 երե բանտել եք  
 դիվային խոսքի  
 շղթաներով պիրկ  
 աչքերն ուրիշի:  
**Արտասվեր, աչքեր,**  
 մուրն է վարագույր,  
 և ժամանակը  
 անվերադարձ:

\*\*\*

**Դու փնտրում ես ինձ նման,**  
 ես փնտրում եմ կարտով,  
 և դարեր են ոտնատակ,  
 մենք չենք հասնում  
 մեկմեկու:  
**Դու փնտրում ես,**  
 ես՝ նորից,  
 և հոգնել ենք փնտրելուց,  
 անհավատ է երազն իմ,  
 որ չի բերել քեզ երկնից:  
**Ես մեռնում եմ,**  
 դու՝ նորից,  
 և չենք հասնում իրարու,  
 և մեռնող է օրերի  
 կրկնությունն անմարուր:

\*\*\*

**Ծառերը խոսում են կանգնած,**  
 ճանաչում են բոլորին,  
 վախենում են մենակությունից  
 և մրսում սիրուց:  
**Ծառերը մեռնում են անխոս**  
 և զիտեն հանդիպման մասին,  
 դեռ չի լսել դատավարություն  
 ծառասպանության հարցով:

\*\*\*

**Աշունը գալիս է,**  
 ու սիրտն իմ լալիս է,  
 ախ, սիրտս գուշակեց, ի՞նչ անեմ:  
**Ծառի տակ մի աղջիկ**  
 թրջվել ու լալիս է,  
 աշունը գալիս է, ի՞նչ անեմ:  
 1963 թ.

\*\*\*

Արտասլիր, անձրև,  
շաղ տուր ամենուր  
արցունքներ դեղին,  
երեկ այս պահին  
մեկը շշնչաց  
անցողիկ խոսքեր:

Արտասլիր անդուռ  
բոլոր սերերի  
կորսոյան համար,  
նրանք կորցրին  
հավիտյան անել  
սերերը անքառ:

Արտասլիր, անձրև,  
վարար արտասլիր  
գալիքի համար,  
անհայտ գալիքի  
անհայտ մարդկության  
շիրիմի համար:

\*\*\*

Ինչ պարզ է  
ճակատագիրը մարդու,  
և մարդիկ նորից,  
նորից թալանում,  
կախում են նորից  
ու քահ-քահ խնդում:

Ինչ դառն է  
ճակատագիրը մարդու,  
չկա ոչ խարիսխ,  
ոչ էլ փրկություն:

\*\*\*

Հայրենիքն իմ, չներեց ինձ...

Զ. Բայրոն

-Ա-

Թողնելով անափ բնությունը կույս  
անհոգ փրբող վարսերն ուռենու,  
մի թափուր գիշեր մենակ ու անհույս  
բախտիս մակույկով պացա հեռու:

Ծովն էր երերում իմ ոտքերի տակ,  
հեռվում սահում էին առազաստները,  
ես անհոգ էի շղթաների տակ,  
չէ՞ որ թռչում էին ջրահարսերը:

Նրանք խոլական իրենց խոյանքով  
վետվետում էին ալիքների վրա,  
ու սիրատոշոր լուսնե սրինգով  
մեղեղի ծորում աշքերիս անքարք:

Իրենց կուսական եկաէջներով  
ու զգվանքներով երանավետ  
թռչում էին անքառ, լուսնի հետքերով,  
կույս անուրջների տեսչանքով արքած:

Սակայն պատրանքը ամենակարող  
հավերժական է ակնբարքի մեջ,  
սրտիս մեջ հեծծաց գաղտնի ինչ-որ դոյ,  
ու ցնդեց աշքիս կյանքը սնամեջ:

Մակույկը դանդաղ լողում էր ծովում,  
բռնելով դեղին փրփուր իր հետքից,  
ծովի պաղ քամին միտքս օրորում,  
անցած իմ կյանքն էր նորից պատմում ինձ:

Շոայլ պարզեից իմ հայրենիքի,  
որի բորք խայրից վիշտս կուրացավ,  
եսամոլության տոփանքից վայրի  
ծիածանը արցունքներ դարձավ:

Այն երանավետ գիշերվա մասին,  
որի կոյս գրկում պոռնիկ էի գրկել,  
արցունքներով ու պատրաճներով սին  
մանկական շուրջերս էին հեգել:

Անձայր դաշտերի թավշում թունոտ  
հեծկլտում էին մեխակներ դողդոշ,  
և արեգակի փրփուրից քինոտ  
համայնանում էր դեղնաբույր քրքիչ:

.....  
.....

Ու ծովի վրա, որպես մենություն,  
վառվում էր անբարք մոմք լուսնյակի,  
հոգուս խոռվ էին երգ ու սրբություն,  
ու չէր շոշափվում ոչ լույս, ոչ հոգի:

Ու ծովը մարեց աշքերիս մեջ մուր,  
անեզրությունը ծանրացավ ուսիս,  
որպես երազիս միակ սուրբ հազուրդ,  
մարեց գիշերում կանքեղը հույսիս...

-Բ-

Ու ծիծաղախինդ լույսն արշալույսի  
հրճվանքով վայրի ճաճանչեց իմ դեմ,  
որպես մի քրքիջ կյանքի ու հույսի,  
որպես լուսածոր Աստծու եղեմ:

Նորից ինձ գտած, նորից ինքս իմ մեջ  
տիեզերական անհուն օրրանում,  
կյանքի ու մահի խուլ տարերքի մեջ  
անհազ ծարավով լոյս էի խմում:

Ու զգում էի բնագլով վայրի  
ամեն մի շարժում, արթնացումը վաղ,  
ու աճում էի զոռ ալիքների  
տարերքին ընդեմ, ցոլանքներում պաղ:

Հեռվում երերաց մի ժայռի բեկոր,  
որի գագարին լույսն էր փշրվում,  
աչքիս դեմ շաղվեցին զոյները բոլոր,  
սիրտս արնածիչ վառվում էր, մարում:

Լերկ ժայռի վրա խլացած ու բիրտ  
կանգնած էր քարե մի մեծ շինություն,  
կանգնած էր անբարք, որպես քարե սիրտ,  
որպես կույր շղթա, որպես մոլություն:

Ու պաղ աղմուկով երկարային  
իմ դեմ բացվեց անլուր մի ստվեր,  
ու խուլ աղմուկով վայրի ու սին  
իմ դեմ գոցվեցին երկինք ու երեր:

Անափ մքություն, լրության խուլ կանչ,  
ճոճվող կմախքներ անբիվ, անհամար,  
գանգերի փլզում, շրբների հառաչ,  
հեռվում առկայժող ֆոսֆորե պաղ փայլ:

Ու ես քայլեցի, որպես զառացանք,  
անտես ուրվական անցած դարերի,  
ես՝ մեղապարտս, անմեղ, անհանցանք,  
ես՝ ոգին արյունոտ կրքերի:

Ու իմ աշքերի խորշակներում մուր  
ստվերներ դարձած կմախքները սև,  
հորիզոն դարձած աներեր ու բուր՝  
մարմինս լուսե դարձրին տձև:

Բուր մքության մեջ դողդոջուն ու պաղ  
լոկ հառաջանքն էի լուս խուլ ծովի,  
ուր կայլակում, խայտում էր խաղաղ  
մեղմ շնօջունը հալվող գիշերի:  
1965 թ.

\*\*\*

Ոչ սիրել գիտես,  
ոչ ատել սովորեցիր,  
մնացիր դու օղում կախված՝  
թերև, թերև օդապարիկ...

Այս, առանց սեր այս խեղճ կյանքում,  
ապարանքում այս՝ առանց սեր,  
սերն ինչ է որ, այ անաստված,  
ձրի տվող սեր էլ չունես...

Գոնե ատել իմանայիր,  
ատեիր ինձ, խոլ ատեիր,,  
ատելլ նույն է, թե սիրելլ,  
ատեիր գոնե անկրակ...

Մազերդ բափել ես ուսերիդ,  
խաղում ես Շամիրամ պազշոտ,  
գարունը փարարվել փեշերիդ,  
քայլում ես, քայլում ես անհոգ...

Ոչ սիրել, սիրել գիտես,  
ոչ ատել սովորեցիր,  
մնացիր դու հեռվում ճախրող՝  
թերև, թերև օդապարիկ...

1990 թ.

**ՊԱՏԿԵՐ ՍԻՐՈ ՈՒ ՄԵՂԿՈՒԹՅԱՆ**

Երբ աչքերս ներս են սահում  
երկար ու ձիգ բափառումից,  
ուրիշների փուշ ու վարդի  
դաս-դասումից,  
երբ հոգնում են աչքերը իմ  
ուրիշների անմիտ վազքին հետևելուց,  
հասկանում եմ, որ չեմ ապրել երկար օրեր,  
որ խոհերն ինձ ետ են պահել,  
ինչքան օրեր ես չեմ եղել այս աշխարհում:  
Արեգակը (հրաշագեղ երկեղ պատկեր)  
ցած է իջել իր բարձունքից  
ու քայլում է մեր երազած փողոցներով:  
Խունջիկ-մունջիկ, հեղիկ-նազիկ կին ու աղջիկ  
շտապում են ու ձևացնում, թե իրավես շտապում են...  
Եվ աչքերն իմ նոր սրափված  
կծկվում են ու կախվում ցած,  
ինչպես, երբ որ նայում ենք մենք արեգակին:  
Երեկո է,  
ի ցույց սիրո մի երեկո,  
առուժախի, ամոքումի ու զգացման,  
որին հաճախ հանդիպում ենք ակամայից:  
Սերը թիչ է (այդպես է միշտ),  
ու կիրքը տաք հոսում է լուս մարմնից մարմին,  
չնչին սերը թագուհու պես թափառում է,  
դեմ առնելով ծեքծեքանքի  
զուսպ, հարդարված ու վայելուչ հանդերձանքին:  
Իսկ այս մեկը իր առաջին փորձն է անում,  
մարմինն իրեն չի ենթարկվում,  
քայց բանտել է նրան այնպես,  
ինչպես մակույկը հուզված խորշում:

Ու աչքերը չեն հանդարտվում ոչ մի կետում,  
ու իր կապույտ շրջազգեստի ալիքի մեջ  
կաս-կարմիր են այտերը ջինջ,  
աչքերը՝ զույգ կրակարան,  
որ այրվել են Անահիտի դիցարանում:  
Ու զգում է (ինչպես կինն է կնոջն զգում),  
ու այտերը բուրովել են բոստրագույն,  
ու աչքերը՝ քիչ նշանն ու քիչ խունար,  
խուսափում են ինչ-որ մեկին նկատելուց:  
Ծանոթ իմ սեր,  
տեսել եմ քեզ ի սկզբանե,  
և Նանե եմ մեկ քեզ կոչել  
(իբրև անցյալն է հանճարեղ),  
մեկ Աստղիկ եմ անվանել քեզ,  
ու իմաս ես, որպես սրափ մի գիտնական,  
դասը առած, դասից փախած մի հետախույզ,  
հետևում եմ միմիայն քեզ:  
Քայց և անշուշտ դու այդ գիտես,  
որովհետև քո մտքերի անցումներով  
քո աչքերը բարթվում են ու կանգ առնում  
իմ մտքերի ու բարթումի վերջնակետում:  
Պարզ է, թեպես ոչինչ պարզ չէ,  
հիմա տեսնենք երեկոյի ուրիշ անձանց,  
որովհետև միշտ այդպես է,  
չափում է սերն ուրիշների համ ու հոտով:  
Ու հայացք քո հայացքով կանգ է առել մեկի առաջ,  
որի ծիծաղը զուտ արծար  
(հին դրամի նոր զնդոցով),  
որ ենում է կործը ու սրտի զուգորդությամբ,  
իր վրա է գամել, ահա, բազում աչքեր՝  
բախծոտ, վայրի, ներողամիտ, նույնիսկ պազշոտ:

Ծանոթ կատակ,  
մենք տեսել ենք նրան մեր լուրք գիշերներին,  
անքնության, հիվանդագին գիշերներին  
(երբ հասարակ չիր ես հազցրել աստվածներին),  
որ նա այդպես նատի կողդիդ, պարզ, հասարակ,  
երբ որ սեր ես ուզում մուրալ, մի քիչ զգվաճք:  
Ու երկուսով չենք մենք հիմա, երրորդը կա,  
ու երրորդն այդ գիտե իմ, քո գոյությունը:  
Ու զնգում է ծիծաղն արծար՝  
կործը ու սրտի զուգորդությամբ,  
ու շարժվում է ձեռքը այնպես,  
ասես, նկար պիտի դառնա մեր հայացքում:  
Փղոսկրյա իր ճակատին կնիքը կա աստվածային,  
դողլոց աստղի փայլն առկայծող, որ իշնում է  
դեպի աչքերն ինքնավստահ և այտերն, ուր փոսիկները՝  
հրեշտակաբույն, բրոռում են նուրք շարժումից:  
Խոկ նա ուղիղ նայում է քեզ, իսկ դու իբրև  
չես նկատում,  
նա ինձ բնավ չի էլ տեսնի, որովհետև քո աչքերում  
պարզ, հասարակ, շարժումներդ ես զսպանակել:  
Ու շարժում է մարմինը զիրգ՝  
հրավերի հնչեղությամբ,  
ու առաջին հանդիպողին տալիս ձեռքը,  
ինչպես պարողն այն առաջին, որ չգիտեր  
նպատակը իր ցանկության:  
Քայց մենք գիտենք, որ նա իմա գիտի արդեն,  
և պարը այդ նման էլ չէ մեր նախամայր այն հին պարին,  
որի շարժումը չուներ խոսք,  
և ոստյունն էր վերածնությունն:  
Շեփ ու ճերմակ իր զգեստին համահնչուն  
(նա ընտրել է սև կոստյումով մի տղայի),

աղամանդն է շողում, ահա, ձյունից ճերմակ մատի վրա,  
ձեռքը՝ կրքոտ աղավնու պես,  
բուն է դրել այն տղայի ուսի վրա,  
և ինչպիսի հաշվեկշիռ,  
հալվող բառեր են դուրս բափվում պիրկ շուրթերից,  
իր լրախոհ շրբների դեմ:  
**Սերը գաղտնիք չունի, զանս,**  
ու տես, ահա, չորրորդն է մեզ հետապնդում՝  
ճարպիկ ու տաք իր ոստյունով,  
ցորենագույն իր այտերով և աչքերով իր սևաբույն,  
կարավ ու լոր տրորելով,  
վրիպելով ու ներելով,  
և լայն բացած իր թևերով,  
ճապուկ խաղող,  
հեշտ ու դյուրին իր սահանքով,  
նկատելով  
աչքով անում,  
իր մարմնից իրեն հանում,  
իր մարմնով ներկայանում,  
ձեզ երկուափի ձեզնից հանում,  
ցորենամաշկ աղջկը այն,  
տես, թե ինչպես, ինչ է անում:  
Ու թերվում է մեկ աջ, մեկ ձախ,  
մանրիկ ոտքերը թերում առաջ,  
լանջը դարձնում մեր երրորդին,  
աչքը հեզ, բառը շուրթին՝  
զրուցում է պարողի հետ:  
**Ասես, թի էր կարմիրը թեզ,**  
շիկացել ես կարմիր որդան,  
ու ամոքի երկու հրեշտակ  
սեղմել են քո շրբները փակ,  
իսկ նա՝ երրորդը մեր լուսաշող,  
զրնգում է արծաթ ծիծաղ,  
և մարմինը, և խանդ, և դող,

և կրծքերը՝ իրավիրող,  
հարասոությամբ, հանդարսոությամբ,  
և աչքերը՝ աստվածազարմ,  
քրջում են, վառվում հպարտ:  
**Ել չեմ ուզում ուրիշներին նկատել,**  
ուրիշներով ել չեմ ուզում քեզ դատել,  
և խարվելու մի զգացում՝  
բարձրացնում եմ ձեռքն իմ վերև  
և ի նշան իրավերի  
ուզում եմ ես թեզ հետ պարել:  
**Եվ պարն այդ թող որ լինի մոռացումի,**  
չէ որ մենք է, անկախ կամքից, համոզմունքից,  
ցանկանում ենք մի քիչ խարվել,  
ապրել մի քիչ:  
**Պարահանդես, թող որ լինի պարահանդես,**  
բայց դու, զանս, մի թրոռա սիրո համար,  
այսօր ես եմ, վաղը դու ես, հաջորդը՝ նա,  
թող որ լինի ինչ ուզում ես, թող պահ մնա,  
թող պահ մնա քո այս անվարժ շարժումներից,  
բայց երանի չարթնանաք մենք այն իին պարից,  
որից մեկ է, արքնանում ենք:

**Չհասկացա, թե ուր հասա**  
(այ թե ինչ է արքնացումը),  
բոլորվել է շուրջս հիմա  
քո կաս-կարմիր այտերի տաք  
շիկացումը,  
ու ես այդպես իիշողության գիրկն էի ընկել,  
և դու հիմա այն երկրորդն ես կամ երրորդը,  
որ պարում էր թևերը բաց,  
լոր ու կարավ տրորելով:  
**Այդպես է միշտ**  
(տառապանքը երբ մեռնում է),  
երբ ուզում ես, որ ազատվես տառապանքից,  
հանձնում ես այն մաքուր թղթին:

**ԵՎԱ**

Աղամամութը անցել էր արդեն,  
և Աղամն ինքը արթնացել էր վաղ,  
օրվա բառերը քամու, հովի հետ  
փախում էին բացատում խաղաղ։

Արթնացած Աղամը նայեց իր շուրջը,  
վայրի բներով ծառերին հսկա,  
բացատը անշունչ հանկարծ արթնացավ՝  
տեսներով անփոյք մեկնված Եվային։

- Եվա, չքնաղ կին,- շշնչաց Աղամը  
ու ծնկեց, որ իր սերը գողանա:  
Եվան շրջվեց, աչքերը՝ Աստծուն,  
ու հովը շոյեց մազերը նրա:

Գգվանքի գիշեր, անտեղյակ սիրուց,  
անտեղյակ աշքից, մտքից ու հոգուց,  
գգվանքի գիշեր, երբ սերը անփոյք  
շոնի ոչ բառեր, անոն և ոչ փորձ։

Պառկել էր Եվան մերկ ու անմարմին,  
երազի նման թերեւ ու հանգիստ,  
ու քնքությունը հոսում էր անդեմ՝  
խաղաղ մի պատկեր գծելով հեռվում։

Աշխարհից հեռու, հեռու աշխարհում,  
երբ դեռ չէին ծնվել չարը ու բարին,  
երբ դեռ բառերը քիչ էին գործածվում,  
երբ դեռ օտար էին մոտիկն ու հեռուն,  
երբ օրերի մեջ ահազանգ չկար,  
չկար բառերի արթնաբույր լեզուն,  
ասում են հեռու այն հին աշխարհում,  
սիրո, ծառերի, ծաղկանց հետ մեկտեղ  
ապրում էր Եվան, մի չքնաղ դուստր,

Աստծու պատկերով կույսը այն միակ,  
որին դարերը՝ մարդկանց բերանով,  
դարձրին տարփանք, դարձրին պազշոտ,  
խորամանկ ու չար, քնքուշ ու նախանձ...

Եվան ապրում էր կարոտի տեսքով,  
անշուր ու նրբին լոտոսի տեսքով,  
ապրում էր անհույս, անհավատ, ինքնին,  
որպես ծառերը՝ ուրին կամ սոսին։

Անապատներով, ծովերով հազար,  
լաստերով բազում, ջրվեժներով խոլ,  
անցել էր Եվան, անցել էր՝ հոգում  
Աստծու առինքնող ժպիտը պահած։

Եվ Աստված ինքը՝ կամոք Աստծու,  
Եվային բերեց լեռներից հզոր,  
դեպի անտառը՝ շոյող ու գգվող,  
դեպի հովերը՝ հոգուն բամբասող։

Ու երբ ոտք դրեց Եվան անտառն այս,  
դարձավ ինքնասաց, դարձավ քմահաճ  
ու հովերի հետ հեռացավ նազով  
դեպի աստղերը հեռու ու անհա։

Դանդաղ փորորկվեց իր հոգու ծովը,  
խութեր ու գետեր, ջրեր գոյացան,  
Եվան կորցրեց ափերն իր, սերը,  
և հոգուն հազար մրրիկներ անցան։

**ՆՈՐ ԴԱՆ ԺՈՒԱՆ**

- Գու զիտես, որ քեզ չեմ խարում իհմա,  
թեպետ տեսնվում ենք առաջին անգամ,  
բայց ոչ առաջին, և ոչ վերջին կա,  
երբ հասկանում են առաջին անգամ...

Քո մեջ խոսում է կինը գաղտնապահ,  
որ չի լնդրումել և ոչ մի խոսում,  
առաջին անգամ դու կհասկանաս,  
թե ինչ կա մարդու, ճիշտ է՝ իմ սրտում...

Ծարավ ես սիրո, ճշմարիտ սիրո,  
ում սիրուն է խուժում արյունը ջահել,  
նա կհասկանա արյունը երե,  
և այդ պրոռով եմ ես քեզ մոտ եկել...

Ծարավ ես սիրո, բայց հավատարիմ,  
ով դեռ չի պղծել շուրթերը երթեք,  
դու, դու լավ զիտես, թեպետ սիրել ես,  
և քո հոգում կա մի թարուն գաղտնիք...

Դրա համար եմ եկել ես քեզ մոտ,  
եկել՝ պատմելու քո հոգու մասին,  
այն, որ գաղտնիք է, և դեռ ոչ մի մարդ,  
նույնիսկ քո սերը չի կարող ասել...

Սիրել ես, բայց դա ոչ թե սեր,  
դա մանկամարմին մի խաղ է եղել,  
սերը իմաստ չէ, սերը՝ խաղաիք,  
սերը հաճույք չէ և ոչ էլ կարիք...

Սերը մարդկային, օ՛, ինչ եմ ասում,  
սերը՝ մանկամիտ, երկնային հաճույք,  
որից ծնվում է հենց քո պատկերով,  
հենց քո մարմնով, հենց քո աշքերով...

Գիտեմ, սիրել ես և տրվել մեկին,  
բայց ի՞նչ եմ ասում, ի՞նչ սեր, ի՞նչ հաճույք,  
մանրաքայլ հոգիդ հանձնել ես այնպես,  
ոչ ամբողջովին, ոչ որպես մանուկ...

Ես հետեւել եմ քո ամեն քայլին,  
դաշույն եմ իսրել սիրոս վիրավոր,  
բայց չեմ մոռացել, չեմ անարգել քեզ,  
քանզի կարծել եմ՝ դու ինձ չես տեսել...

Քո սերը թշվառ և հավատարիմ  
միշտ համարել եմ իմը, և միայն,  
և չեմ եկել ես, ես քեզ չեմ եկել,  
համարել եմ ես սերդ անմարմին...

Հիմա չեմ կարող, չեմ կարող պարզվել,  
թեպետ վիշտ կա դեռ քո մանկան դեմքին,  
բայց բունավոր է սիրոս վիրավոր,  
ես էլ չեմ կարող, ես էլ չեմ կարող...

Գու ասում էիր՝ սպասիր թիշ էլ,  
թիշ էլ սպասիր, սպասիր մենակ,  
և ես քեզ կգամ, կգամ, սպասիր,  
մի ննջիր այդպես և աշքերդ բաց...

Աստված պատժել էր, միտքս բանտել էր,  
և չի կարող ազատվել բանտից,  
ձեռքերս՝ կապված, բանտված էր միտքս,  
բայց ննջում էի... ելնում քո գրկից...

Եվ քո գաղտնիքը մեկն էր, սիրելին՝  
ա՝ խ, գոնե մեկը զոհվեր քեզ համար,  
ես իիմա եկա, եկել եմ, ահա,  
որ լյանքս հանձնեմ քո սուրբ կարոտին...

Վերցրու դաշույնը, որ քոնն է մենակ,  
վերցրու դաշույնը՝ սրտիս տակ պահած,  
շատ եմ փայփայել, և տաքությունը  
կարող է մեղմել վիշտս բորբոքված...


Եվ քող իմած քաղեմ քո ոսքերի տակ,  
և քո ոսքը քող կանգնի իմ կրծքին,  
և գերեզմանն այդ քանկ է իմած համար,  
ինչպես մանկամիտ խաղը քո սրտի...

Ես չեմ հազենա քո շրթունքներով,  
շնչով քո, սիրով և հմայքներով,  
արյուն եմ ուզում քափել քո առաջ,  
ես եմ քո սիրո երգը հավատարիմ...

Դու իմած ասում էիր, երբ մենակ էի ես,  
քանի մազերս, մտքերս քանդիր,  
քանտիր իմ հոգին, քանտիր իմած լրիվ  
աշխ, ես հոգնել եմ կիսատ մտքերից...

Ասում էիր, այո՛, երբ մենակ էի ես,  
հոգնել եմ, լսիր, հոգնել եմ խոսքից,  
և ականջներիս շնչում էիր,  
շնչա այդպես և կիսիր հոգիս...

Կարող եմ, այո՛, կարող եմ մեռնել,  
բայց թող որ ձեռքս մեռնի քո ձեռքին,  
շուրբս՝ շրթունքիդ, կուրծքդ՝ մարմնիս  
և շշուկներս՝ նուրբ լսելիքիդ...



167  
f + f = f - 1 = 0

### ՍԵՐՆԳԱԿԻՑՆԵՐԻ ԵՐԳԸ

Դրսում ձյունը վեր է ածվել մերկ սառույցի,  
ասեղնագործ փաթիլները հիմա չկան,  
շրբունքներիս ծխախտի կրակը տաք  
բորբոքում է անցած երգը այգաբացի:  
Ու մենք ջահել, թոշնի նման նոր թև առած,  
դրախտ ընկած կատվի նման մոլտալով՝  
Տերյան էինք հանգարանում, կապկում Չարենց  
և մեկ-մեկ էլ անցնում ճամփով հին գինետան:  
Անհոգությամբ գրում էինք երգե՞ր, երգե՞ր,  
որոնք բնավ բուն չեն դրել օրորոցում,  
Երևանում այդքան սիրված, ո՞վ է, ասա,  
մեր երգերին, շարժ ու ձևին սիրահարվել:  
Որովհետև գրում էինք տաղ անձնական  
և անցական, և ոչ ի լուր, և ոչ ամեն,  
ժպոտում էինք դրացիական, կեղծ, անհամեստ,  
լավիրշության լիրիկան էր մեր մեջ ծաղկում:  
Ապրած կյանքի ստվերն եմ ես,  
դեռ ցավը չի ներծծվել իմ մարմնում,  
ավագ եղբոր, մեռած հորս պակասը կա,  
ձայնն ապտակի, որ պիտ լսվի մեր ապրելիք  
ամրող կյանքում:  
Դրսում ձյունը վեր է ածվել մերկ սառույցի,  
ասեղնագործ փաթիլները վաղուց չկան,  
շրբունքներիս ծխախտի կրակը տաք  
մրմնջում է անցած երգը այգաբացի:

\*\*\*

Վաճառվեցին բոլոր  
բանաստեղծությունները,  
մեխակները հոգնեցին կրակից,  
հերոսները դափնի ստացան,  
մեռածները՝ փառք:  
Բնորդները ծափահարվեցին,  
բանաստեղծները մնացին մենակ,  
լուսնի շապիկը հանվեց քնքշորեն,  
հովհվը հոտը բողեց լեռներում՝  
կայծակ տեսնելու,  
վարիր այս մոմք օրը ցերեկով,  
մոմք ցրում է տիսրությունը,  
մոմք սիրում է բանաստեղծներին:

#### ՀՈՒՇԱՐՁԱՆ 1937 Թ.

Այստեղ անուն և ազգանուն չէ,  
այստեղ միտք ու մարմին չեն թաղված...  
Մի նկարեք այդպիս հապճեապ  
և մի պատկերեք վեհորեն  
հուշարձանն այս կանգնած...

Դժոխքն է անցել այստեղով,  
մի խոսեք առանձին անձանց մասին,  
սա գաղափար է մի ամբողջ՝  
Ների կողմից մորթված...

Հուշարձանը քարից է և չհղկված,  
պետք չէ հարթել, ծաղիկ կամ խոտ պետք չէ,  
այստեղ ուղեղների մի ամբողջ երթ,  
այստեղ սերունդներ են եղծված...

Տեսեք նրանց և ոչ հուշարձանն այս քար,  
այստեղ սառեցված է ժամանակը,  
աշխարհում և ոչ մի կորող կամ հուշարձան  
չի կարող պատկերել դժոխքն այդ սե...

#### ՏԻՐԱԿԱԼՆԵՐԻ ՊՍՎԿԸ

Ծանր է պսակը տիրակալների,  
նրանք չափվում են մեղքի սաստկությամբ,  
սնվում են արյամբ խեղճ աղքատների,  
անիծվում, սակայն, մարդկանց բարկությամբ:

Առաջալների դասն են միշտ ատում,  
բայց չափվում նրանց առաքելությամբ,  
ումից սնվում են, նրանց են ատում  
ու երդվում նրանց հոգու բարությամբ:

Ժողովուրդների արյան ծովի մեջ  
լողում են իրեն հմուտ նավազներ,  
արքայակայել ապրում նրանց մեջ՝  
արհամարհելով և հավատ, և սեր:

Քարերի վրա թշվառ մարդկության,  
ժայռերի վրա թողնում են դրոշմ,  
ապավինելով հաղթանակներին,  
որոնք դառնում են անեծքի որմեր:

Թշվառ աստվածներ, արքաներ թշվառ,  
բոլորի նման մորեմերկ, տկլոր,  
այս հողի վրա ամենքն են անցվոր՝  
և ումիկը մերկ, և թե քագավոր...

Մի բան կա, սակայն, այն էլ հիվանդ է,  
խելահեղ մոր պես՝ կորցրած որդուն,  
հիշողությունը, միակ անմեռը,  
այն էլ ուզում եք գերի՝ դարձնել...

Ծանր է պսակը թագավորների,  
որ միշտ չափվում է մեղքի սաստկությամբ,  
սնվում են արյամբ խեղճ աղքատների,  
անիծվում, սակայն, մարդ-հիշողությամբ:

### ԵՐԲ ՏԵՐԸ ՄԱՐԴՆ Է...

Օրենքներ անուս, միաշբանի,  
դուք՝ հիվանդ, երբեք չապաքինված,  
գեղեցիկի դեմ պարզված դրոշ,  
այլև անխոհեմ ու անաստված...

Օրենքներ անուս ու անաստված,  
խղճի դեմ ելած անթիվ բանակ,  
դուք՝ միշտ անվրեալ բռնադատում,  
խղճի ձեռքերին՝ օղ ու պարան...

Խղճի ձեռքերին՝ օղ ու պարան  
և նրա ոգու ժանգոտ կողպեք,  
անեծքների որմ ու սրտի դավ,  
ազատության հանդեալ անիրավ...

Հար և նման ձեզ ծնողին,  
դուք անհայր, անմայր, դուք ընկեցիկ,  
ծաղիկները ձեր և սերմն անբոյր  
գարշահոտում են աճում միայն...

Ամեն մի օրենք՝ և նոր, և հին,  
ենթակա է լոկ բռնադատման,  
ազատության դեմ պարզված դրոշ,  
ազատության հանդեալ միշտ անիրավ...

\*\*\*

Խելահան մի դուդուկի երգ,  
մարդերգական ողբերգություն,  
աշխարհակալ պետության մեջ  
իրավունքի սորկացում:

Քոնարաված բառերի շարք  
և երգերի պիրկ լրբություն  
ուռաների տարափի տակ՝  
ճառախոսի ընկերություն:

Հացի ծարավ ու հացի սով,  
դրախտային խոաք ու զրոյց,  
վախի շարան ու ահի տունկ,  
անապատի ծարավություն:

Անել անտառ, անտարած ծուխ,  
նսեմության անծայր ճամփա,  
հանգարաններ, հացկատակներ,  
բանաստեղծներ աղվամազ, թուխ:

Մանկան արդար մի մեղմություն,  
արյան ծարավ զորքերի դեմ,  
աշխարհակալ մի պետություն  
ահից կծկված հողագնդում:  
1986 թ.

\*\*\*

Անձրնը չի ննջում,  
չի ննջում քամին,  
չեն ննջում ծառերը  
ծեր, թե ջահել,  
արնը գնում է,  
լուսինը՝ գալս,  
օրերը թռչում են,  
թե լի, թե սին,  
տարին թռչում է,  
հաշվում է դար,  
չի կորչում հաշիվը  
անթիվ, անհամար:

\*\*\*

Իմ մեղքերի վրա դրված է ծանր քար,  
ասա, Տե՛ր իմ, ասա, ինչպե՞ս ազատվեմ,  
բողոքյուն չէ լոկ սա և կամ խոստովանանք,  
այս ծանր խաչի տակ ինչպե՞ս քայլեմ...

Պիղատոսն է, ահա, բիրտ օրենքի տեսրով  
նշակները երկու կառավարում,  
նժարներից մեկին մեղապարտն է կանգնած,  
իսկ մյուսին՝ Աստծու Որդին արդար...

Գողն ու Աստծու Որդին նժարների վրա,  
ներիք, Տե՛ր իմ, ներիք այս ամրոխին,  
ու նրանցից վեր, գահիդ քո սրբազն  
Պիղատոսն է բազմել արքայաբար...

Պիղատոս է ամեն կառավարիչ,  
մունետիկը մուրի, երկդիմուրյան,  
նա չի կարող երբեք երկնքից լույս հայցել,  
խոստովանել, զգալ և կամ ներել...

Արդեն սրբի տեսրով նա եկեղեցի մտավ  
և օրինուրյուն առավ հովիվներից,  
կաշառված են, Տե՛ր, եկեղեցի ու գառ,  
և ժողովուրդն արդ դարձել է ամրոխ...

Իմ մեղքերի վրա դրված է ծանր քար,  
ասա, Տե՛ր իմ, ասա, ինչպե՞ս ազատվեմ,  
բողոքյուն չէ լոկ սա և կամ խոստովանանք,  
այս ծանր խաչի տակ ինչպե՞ս քայլեմ...

1991 թ.

\*\*\*

Ուղեղի մեջ մեռնող օրը  
աշքերի մեջ բացվող օրն է,  
ես հոգնել եմ այս կրկնվող  
պատմությունից,  
այս դարավոր, անվերնագիր  
հսկա վեպից:  
Այսպես մի օր, մի իրիկուն,  
որ շատերը դար կոչեցին,  
ուղեղի մեջ մեռնող օրը  
բացեց աշքում.  
«Սրտի խորքից խոր Աստծուն»:

Այսպես մի օր  
ուղեղի մեջ մեռնող օրը  
բացեց աշքում  
«Եղիցի լույս»:  
Եղիցի լույս, բայց եղալ խավար:

Մեռնող օրը  
առավոտվա լույս աշքերում  
գրում է իր վեպը նորեկ,  
որ կամ «Արեգ» և կամ  
«Հույս» է վերնագրում:  
Իսկ ես կասեմ՝  
գիշերն ինչքան էլ խտանում,  
Աստծու ստեղծած արարածի  
մուր մանվածքի թելն է բանում,  
հյուսում է պարզ հանդերձանք,  
առասպելի դուռը բացում,  
կոտրած լեզվի ահը վանում,  
մանկան լեզվից բառը հանում  
և գիշերվա խավար գրկից  
մարդավայել տառն է հանում,  
որ տառ չէ լոկ, այլ վերնագիր,  
որ զարդարի գիրքն այն շրել,

գիրքը այն պարզ, մարդավայել,  
որ «Արեգ» է կամ թե «Հույս»:  
Ուղեղի մեջ մեռնող օրը  
աշքերի մեջ բացվող լույսն է,  
արշալույսն է ամենօրյա,  
որ թարմացնում ու նորացնում,  
որ վերացնում ու խորացնում,  
դարձնում է ազգը հավատ,  
սերը՝ կրակ,  
հույսը՝ կտակ:  
Մարդանման այս աշխարհում  
քնում ենք մենք հազիվ ու հազ  
և արքնանում հազարերազ,  
լցված մուրով գիշերային՝  
ահի դիմաց,  
և մեր դիմաց՝ սրբված ու պարզ:

\*\*\*

Հայրենիքը հեռվից, օ՛, ինչպես են սիրում,  
ինչպես են փայփայում հուշերի մեջ գունատ,  
կարոտախտը ջերմում, տարածվում է անվերջ,  
և երակներն արյան տրոփում են ցավից...

Ատում եմ սերն այդ փափուկ, դիվական,  
բանական ու սրափ գաղափարները կույր,  
որ ճիվաղին հատուկ զգոնությամբ  
ժանք ու թերևն են անում սեր ու շուր...

Այդ անսիրտ դևերին գիտեմ վաղուց,  
նրանք ամեն տեղ են՝ միայն փափուկ,  
հրանոթ ու հրացան մեզ են ուղղված,  
իսկ նրանք կերգեն հոգեհանգիստ...  
1996 թ.

### ԱԴՐՅՈՒԹ

Մարդկային ցեղի արդարացումը  
նման է ծարավ այն անցավորին,  
որ անապատի շեկ այրվածքներում  
կերտում է պատկերն իր իսկ դրախտի...

Օազիսների նրբերանգներում  
ծագում է միտքը՝ աղբյուրների ցուրտ,  
և լուսաքողարկ մեծ սաղարթների  
պատկերը հրաշք կերտում է արագ...

Երևակայության դու միակ հրաշք,  
կարողությունների աղբյուր լուսավոր,  
կեղծիքի անոր և չարի հնձան,  
աստվածահաճն և նրա կրկնակ...

Հերքիր կեղծիքը և վերջին անգամ  
բարձրացիր հոսի քայլից համընթաց,  
խոնարհվիր բանող և հեզությամբ լի  
կերտվածքի առաջ աստվածաբարո...

Մարդկային ցեղի արդարացումը  
նման է ծարավ այն անցավորին,  
որի կորուսոր հիշողությունն է,  
հավատը՝ պատրանք, ձգտումը՝ չնշին...  
1988 թ.

\*\*\*

**Խոռոչների նման**  
 դատարկ, գլխատված  
 երկինք են պարզվել  
 պատվանդանները...  
 Մի քանի օրում,  
 այդ ինչպես եղավ,  
 չքվեցին, կորան  
 արձանիկները...

Արձանիկները  
 չքվեցին, կորան,  
 դատարկ է տեղը,  
 իսկ փողոցներում  
 հպարտ քայլում են  
 նրանց գովերգող  
 պոետիկները...

Վեհարաններում  
 ժողովից ժողով  
 գլուխ են հանել  
 կեցվածքները նոր,  
 և բարձրանում են  
 պատվանդանն ի վեր  
 նորերս ձուլված  
 արձանիկները...  
 1991 թ.

\*\*\*

Հիմա չգիտեմ, թե ով եմ ես,  
 օրերը՝ ծանր ու խուսափող,  
 օրենքը նույնն է, ու նույնն են դեռ  
 երկինքը, ծառը, արև ու հող...

Նայում եմ անցած ճանապարհիս,  
 ինչ-որ տխոր քան նայում է ինձ,  
 ինչ որ երգել եմ, սուս է թվում,  
 ազատ ու անկախ Հայաստանից...

Արդյոք այսպե՞ս էր, այսքա՞նը լոկ,  
 ելի ճամփո՞րդ եմ հավերժական,  
 ինչին ձգտել եմ, սո՞ւս է եղել,  
 ցանկություննե՞րս են լոկ թեական...

Գուցե չգիտեմ, չեմ հասկանում  
 օրենքներից այս խառնիճաղանց,  
 կրվարը եմ դարձել գուցե,  
 Ժխտումը պաշտող մի արարած...

Արևը նույնն է, հողը, ծառը  
 և ջրերը մեր լուս ցամաքող,  
 լեռները՝ համր, ցավերը՝ ծանր,  
 և իրիկունը՝ արյուն քամող...

Նայում եմ անկախ Հայաստանից,  
 նույն զառացանքն է Մասիսը ծեր,  
 գուցե աշո՞ւնն է այս առաջին,  
 գուցե չե՞մ եկել դեռ անցյալից...

Հիմա չգիտեմ, թե ով եմ ես,  
 օրերը՝ ծանր ու խուսափող,  
 օրենքը նույնն է, ու նույնն են դեռ  
 երկինքը, ծառը, արև ու հող...

1991 թ.

\*\*\*

Չեր ճշմարտությամբ ինձ մի զարմացրեք,  
կեղերված փորձով, վարժությամբ գտած,  
հայր ու մայր չունեն փորձերը ձեր կույր,  
զենքի զորությամբ մեզ մի վախեցրեք:

Երեկ մենք էինք պատմության թեմում,  
սարսում էին մեզնից պարսիկն ու հույնը,  
դավադրության անվախճան շղթան  
լուծեց, սպառեց հզորությունը:

Կախաղանների հետքը չմնաց,  
մի խաչ չմնաց անցյալից դաժան,  
ծովից ծով փուլած բիբիխական հողից  
մնաց մի ծաղը, բմծիծաղ էժան:

Վստծու մեծ գորգի գույների վրա  
հետք չի բողնելու ձեր մատի խաղը,  
ով ականջ ունի և սիրտ պատմության՝  
կիսեղաբյուրի կեղծ գաղափարը:

Պատժված ազգի մենք վերջին նմուշ,  
ծեր՝ մեր պատմությամբ, փորձություններով,  
մեզ համար քանի է ճշմարտությունը,  
իսկ գոյությունը առավել է քանի:

Հեշտ է պատռել թաղանքն ականջի,  
միջամտիս լինել կեղծիք ու ստին,  
ոտնակոխ անել խիդիք ու իրավունք  
և բռնաբարել հավատը վերջին:

Երեկ մենք էինք պատմության թեմում,  
սարսում էին մեզնից պարսիկն ու հույնը,  
նրանցից, ումից աշխարհն էր սարսում,  
խորշում է հիմա արդարությունը:

1985 թ.

## ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Չինել՝  
չտեսնելու,  
չլսելու անի խոսքեր,  
չկանչելու արդարություն,  
չմաշելու ճամփաներն այն,  
որ այս էլ արդ  
բյուրավոր դարեր  
ոտնատակ են արվում ստի,  
սուտ աղոքքի,  
սուտ օրենքի,  
սուտ սրբության  
անվան երդմամբ:  
Սակայն սուտ են այս խոսքերը՝  
լինել,  
լինել միայն  
և խարանել,  
և խոնարիել սուտ աղոքքը,  
ցույց տալ ուղին այն խսկության,  
որի համար ընկան հազար  
անգամ հազար-հազար զոհեր,  
քող օրիներգվի առավոտը,  
որ շատ է մոտ,  
այստեղ՝ մեր տաք ափերի մեջ,  
մեր աշքերի,  
մեր կոպերի հորիզոնում,  
մեր երգերի,  
սուրբ երգերի ավագանում,  
հորիզոնում մեր հառաջի,  
մարտիկների սուրբ շառաջի,  
գնդակների տարափի տակ,  
գրիչների հատու խոսքում:

Լինել  
միայն լինել,  
մեռնել միայն  
լինելության ճանապարհին:  
Այսպես է մեզ վերուստ տրված,  
մենք ծնվել ենք,  
ոչ թե մթին հեքիաբները  
վերծանելու,  
այլ մեր խոսքով,  
մեր արյունով  
մուր ու խրին  
կուրությունը խարանելու,  
մեր գոյությամբ, դավանանքով  
ճշմարտության փակ ականջը,  
փակ աչքերը,  
փակ շուրթերը  
և կոպերը՝ ահից փակված,  
լուս բացելու:  
Միայն լինել,  
լինել արթոն  
ու զոհվելու համար պատրաստ,  
ինչ տվել է վերից Աստված:  
Լինել  
լինել զոնե  
չինելու հակառակը,  
որ մեծանա այս բանակը:

\*\*\*  
Նինվե՛ քաղաք հզորագույն,  
ասորական մայրաքաղաք,  
որ խառնացեղ, ամբոխավար  
կովում էիք, մրցում անվախ...  
Անգաղափար և անհամայնք  
կուտակում էիք թշնամիներ,  
որոնց առաջ պիտի ծնկեիք  
իբրև հզոր բարեկամներ...  
Զեր նետերի սև տարափով,  
ցաք ու ցրիկ խմբվածությամբ,  
ցրում էիք տոհմ ու բանակ՝  
շահելով սոսկ կեղծ ժամանակ...  
Ընկավ ուժը գոռողության,  
փայլը ընկավ կեղծ բարբառի,  
այն, որ ինքը չէր ատեղծել,  
պարզվեց օտար աշխարհներին...  
Ներկայացումն ավարտված է,  
դարերը՝ կեղծ թեմ ու վահան,,  
արհամարհանքը ժպտերես  
դեմքը թեքեց փառքերից սոստ...  
Առանց դատի, դատաստանի,  
որպես մաշված, իին բաշկինակ,  
ամբոխավար կեղծ ատյանի  
դրոշակն է ընկել արնոտ...  
Նա կործանվեց, լա՞մ ես դու,  
որոշումը հար պատմական,  
նա կործանվեց, որովհետև  
չուներ ոչինչ բանկ, սոսկական...  
Դիմակ, վահան և սուրբ կեղծ,  
օտարամուտ և ամեն բան,  
նա կործանվեց, որովհետև  
չուներ ոչինչ նա սեփական...  
182

Ծնել էին և սնուցել,

օրորել էին օրորոցում,

ասել էին՝ ապրիք, ապրեց,

և նա էլ հենց ասաց՝ մեռիք...

Եվ պատմության դիակառում

դին է գտնում ամեն մի ազգ,

ով ուրիշից հեշտ է ապրում,

ով չի ապրում, ով չի ապրում...

Նինվե՝ քաղաք հզորագույն,

ասորական մայրաքաղաք,

որ խառնամբոխ, անգաղափար

ապրում էիք իրոն դիմակ...

\*\*\*

Եվ տեսնում եմ, ահա, տափաստանում,

անծայրածիր, անտակ տափաստանում,

մեղուների պես ժիր, աշխատունակ

կոտորում են իրար երկու քանակ:

Կոտորում են իրար գիշեր-ցերեկ,

ու արևն է հալվում մուրի տեսքով,

և վաղորդյան ցողի, լոյսերի տակ

նորից, նորից շարժվում են նրանք:

Եվ փոխում են, ահա, օրերն իրար,

և խմասուն, հանդարտ, հանդիսավոր,

և բոլորն են փոխվում, և արմտիր,

և բներն են կանգնում ուրիշ ոտքի:

Եվ արնահամ, փոշոտ տափաստանում

մի բուռ հողի, կտոր թիֆի համար

նորից, նորից անհաշտ, անհանգրվան

արնոտ ցեղերը, ահա, կոտորում են իրար:

Ժամանակի անհույս աչքերի դեմ

արևը հոնքն արնոտ դեպի մուրն է տանում,

և դարերն են համառ փոխում իրար

արյունոտված, ցամաքած տափաստանում:

## ԲՈՒՄԵՐԱՆԳ

Ոչինչ չի լինում կյանքում հենց այնպես,  
ամեն ինչ իր գույն ու ձև ունի,  
եթե վակված է հունը, պարզապես  
մեկ է, ջուրը իր ճամփան կգտնի:

Բուրգ կառուցելով չես հասնի նրան,  
արևի վազքը նման է մերին,  
խաղողը պետք է որ հասնի աշնանը,  
ծառն է բնորդը նկարիչների:

Կեղծիքը ստի եղբայրն է հալայ,  
սակայն բանալին ծշմարտի մոտ է,  
հետախույզները մարգարիտների  
լույսով են գտնում խեցին գաղտնապահ:

Իսկ ժողովուրդը՝ հալածված, բայց վեհ,  
ցավը տվել է հեզ պոետներին,  
նրանք, որ այնպես փորձում են ստել,  
կախվում են ծառից ժամանակների:

Գայթակղուրյան քարը սին փառքի  
վարձատրվում է ոսկի, արծարով,  
շնորհը, այո, կոչվում է տաղանդ,  
բայց այն չի գնվում կեղծիք ու ստով:

Հին է խորհուրդը իմաստունների,  
բայց ամեն դարում նորանում է նա,  
բայլիք ուղիղով ապուպապերի,  
ինչ-որ տվել են, այն էլ կմնա:

\*\*\*

Ո՛չ դու հերոս չես սովորական,  
որ աշխարհ եկար փառքեր մուրալու,  
քո մեջ խառնված են հին երբայական  
արյունը չար՝ մեր հին թշնամու...

Փառքն ու գանձերը հատուկ են մարդկանց,  
և կինը՝ նաև ծնկի բերելու,

քո մեջ սառել է վրեժ մի դաժան՝  
արյունը հայոց պապակ խմելու...

Ամեն քան այնպիս դյուրին էր ու հեշտ,  
հրապարակներ ու խոսքեր չքմեղ,  
քացված սպիներ և զավեշտ ամրոխ,  
և տապալումի կոշնակներ անմեղ...

Նստած է, ահա, կիկլոպի նման,  
սպանած ամեն ներվ ու զգացում,  
և պաղամենուր անխոհեմ, անքան  
ինչ-որ օրենքի բառեր է հածում...

Իսկ հողը մեր իին՝ զոհերի սեղան,  
պատառութվում է հուսաբեկ ու հեշտ,  
վաճառվում է այն լուռ, կիսաբերան,  
և մորթութվում են մի քանի տղերք...

\*\*\*

Երեկ մեկը պատմեց,  
թե մի քագավոր  
ծախել է իր ձին  
և դրամ տվել  
փոքրիկ մի կույրի:  
Ես հավատում եմ,  
որ կա քագավոր,  
կա փոքրիկ մի կույր,  
և տեղ, ուր միայն  
ծախվում են ձիեր:  
Ես հավատում եմ,  
որ կա քագավոր,  
կույրին, որ կույր է,  
ձիուն, որ ծախվեց,  
քայց ես տեսնում եմ  
հրապարակներ,  
որ իրեմց մեջքին  
պահում են ձիեր:

**ԳԱՅՃ ՄԱՐԴՈՒՆ ՉԻ ՊԱՐՁՆՈՒՄ ԹԱԳՎԱԼՈՐ**  
(1991 թ.)

-Ա-

Քանաստեղծություն գրելուց առաջ  
պիտի ամրացնես ամրակապերդ,  
ինչպես թոփշքից առաջ...

Այսպիս առագաստներն են երկինք ձգվում,  
երբ նավատերը ավարտում է իր գործը  
և երկինք նայում՝

փառաբանելով Աստծուն աղոթքի լեզվով...  
Թող ճշմարտությունը լինի ուղեկից  
և ազատությունը՝ հովանի գլխիս,  
հայտնություն լինի ամեն պատահար,  
Աստծու աշքի տակ ծաղկող ամեն իր:

Չեմ գերադասում ես ինձ ոչ մեկից,  
և չեմ երկնչի ոչնչից բնավ,  
նրանց նման եմ ծնվել աշխարհում,  
Աստծու աշքի տակ ամեն ինչ նույնն է...

Խելքիս փչածը կդատեմ սրտով,  
սիրտս չի խարել, չի մատնել երբեք,  
աշխարհը երբեք չի զարկվել սրտից,  
եղել է միայն ձիշտ հակառակը...

Պարզվիր կրկին, սիրտ,  
առագաստներն էլ նման են հենց թեզ,  
թեպետ կարկատված, բայց ամուր են դեռ...  
Եվ ով Աստծուն է հայտնում մեղքը իր,  
ստանում է նա հույսի նոր թևեր,  
խոստովանում եմ որերորդ անգամ  
արած ու չարած մեղքերս թերեւ...

-Բ-

**Գ-Ասիս փշե պսակ՝**  
 մեղքերով զարդարված,  
 նման ապրած կյանքիս...  
 Կասկածների նման փայլվում եմ,  
 լույս տալով միայն ուրիշներին,  
 խավարի միջով քայլում եմ ես  
 դեպի հույսի նավն ու բարձրանում,  
 ուրացողների այս որքա՞ն խճեր  
 զայս ու անցնում են շուրջով...  
 Վանգնեցեք մի պահ, ո՞վ անցող-դարձողներ,  
 խղճացեք, նեղսրտվեք մի քիչ,  
 ճակատներին ձեր լույսն է երկնքի  
 և ուրիշ ոչինչ...  
 Երկնչեք մի քիչ  
 այս ժող մթի մեջ,  
 մերքընդմերք խոստացեք, լոեք,  
 լույսից, արևից կկոցում եք աշք-ունքը,  
 խավարում դառնում եք վամպիր...

-Գ-

**Արարող լույս,**  
 անստվեր դու արարած,  
 բրրուում ես բիբերիս տակ ու սրտիս,  
 զուրգուրանք, խայտանքը քո ծիծաղկուտ  
 դուրս է թռչում աշքերիցս, սրտիս միջից ...  
**Ողողվել եմ, ծփում է քո լույսն արդար,**  
 օծելու եմ, օծվելու եմ անընդհատ,  
 բրրուումով քո կենսախինդ,  
 հավատ հագած գնալու եմ ընդառաջ...  
**Չհավատաս կասկածներին մթուրյան,**  
 օրենքներին ինքնամխտման, հաստատման,  
 քաց է դուռը, և օրինանքը հարուրյան  
 սպասում է միայն ծարավ սրտերին...

-Գ-

**Օ՝ երանելի, դառը ծաղիկներ,**  
 սնված աղքատի արցունքներով շինջ,  
 արհամարհանքի պտուղներ մաքուր,  
 հալածված բախտի խրախճանքից ճոխ...

**Զգուշավոր ու հալածված անվերջ,**  
 քամու երազով օրորված, սնված  
 ձեզանից վերն՝ հայացք հեզնանքի,  
 մահապուրծ փախսած մահի փեշերից...

**Պատիվն է միայն ձեր թագն ու գահը,**  
 և զսպությունը՝ գայխանը պերճ,  
 դուք սիրո ծաղիկ, լրված, անարատ,  
 Աստծու արտասուր՝ խեղճերի համար...

-Ե-

**Լուն ունի իր ապրուստը,**  
 մարդիկ՝ իրենցը անշուշտ,  
 լվի անմիտ կորուստը  
 չի ընդունում մարդը կուշտ...

**Չարխանդում է միշտ նա**  
 ու կծոտում նմանին,  
 լուն՝ մարդկուրյան արյունակիցը,  
 մարդը նրա թշնամին...

-Զ-

**Փողոցներում խարդավանքի ու սիրո,**  
 ուր պճնանքը գահի վրա է բազմել,  
 ամբոխի մեջ, հորձանքի մեջ վայրենի  
 կանգնած է նա՝ հավեժուրյան արագեղ...

**Կնոջ տեսքով կամ գուցե և Ցերերի,**  
 բազեի շեղ աշքերը մուր խոլորած,  
 ճեմում է նա, ցամքած շուրբերը լիզում,  
 ֆշում, թշում, ագռավի պես պառաված...

Կծոտում է, քըսում է ու լալիս,  
ճանկերը կեռ խրում թիկունքը մարդկանց,  
մուր ու թունոտ, դավերի հետ անցյալի  
ժիվաղն իրեն անվանում է արալեզ...

Մերք լալիս է, մերք փրփրում, մերք խնդրում,  
կուզը դրած չոր ու ցամաք ոտքերին,  
փողոցներում խարդավանքի ու սիրո  
կանգնած է նա՝ արալեզը վահրով լի...

-Ե-

Չար են բարքերը,  
և մարդկային օրենքները՝ առ ու ծախ,  
իրը ժանգոտ դարձավ սիրո առարկա,  
վաղուց ժախված հոգիները՝ նոր պետեր,  
սիրտ իմ, լրիր, օրերը քո դեռ չկան...

Նրանք անկուշտ մկների պես փափկասուն  
գարու շեղջը և ցորենի, և ոսկու<sup>1</sup>  
կուտակել են պահեստներում առ ու մութ,  
վաճառված են հոգիները գաղտնատես...

Օրենքները, ճառերը զիյ ու զնգուն  
ուղղված են անձարմների ականջին,  
խեղճը միայն վայելում է խոսք ու գույն  
և վայիփայում երազները երկնային...

Իրի վեճ է, ոսկու վեճ է, ցորենի,  
զահի առաջ, զահի շուրջը պտտվում,  
հոգիների նկուղներում ցուրտ ու մութ  
նույն պարերգը, նույն խաղերն են կրկնվում...

-Ը-

Միայն օրենքը ազատություն կտա մեզ...  
Վ. Գյորե

Բարձրացել է սուրբ անմիտ ու վախկոտ  
ազատության, ճշմարտության անունից  
և ճոճվում է փողոցներում խառնածին  
ամրոխների զլսի վրա սուտ ու մութ...

Անձրևի պես բառակույտներ են թափվում,  
գաղափարներ՝ թղթի վրա նկարած,  
իրարամերժ ամբոխն ի ցույց է հանում  
խարված հոգին խավարի մեջ մրափած...

Բարձրախոսներ զառանցում են օրն ի բուն,  
օդն է լցվում ազատության պատրանքով,  
խումբը խմբին միանում է, բաժանվում,  
ծիծաղաշարժ հանդես է, մի հոգերով...

Եվ սատանան քահանայի անունից  
թագադրման պատրանքներ է սուեղծում,  
ավերակված քաղաքներից, գյուղերից  
մանուկների ողբն ու աղերսն է լսվում...

\*\*\*

Պու ծիծաղո՞ւմ ես,  
բայց այդ ծիծաղում ինչեր կան պահված,  
և ինչո՞ւ է լոկ ինձ մոտ բռնկվում,  
ոչ ոք չզիտե:  
Ոչ ոք չզիտե ինձանից բացի,  
որ ծիծաղներն այդ հենց նույն զիշերը  
փոխվում են լացի:

### ԿՅԱՆՔԻՑ ՄԻ ՎԱՅՐԿՅԱՆ

Անանցանելի անտառի մեջ,  
ուր ճյուղերն են գրկում իրար,  
տանում էր ինձ շավիղն անվերջ  
դեպ անտառի խորքն անծայր:  
Քայլում էի լուս ու մունջ՝  
երազներով համակված,  
երք դուրս եկավ՝ սովեր որպես,  
գունատ մի դեմք՝ ճերմակ հազած:  
Ոտարորիկ ու հերարձակ,  
որպես ցնորք մութ անտառի,  
կանգնեց իմ դեմք քիչ համարձակ,  
թույլ ժափտով մեղմ ու բարի:  
Ու ինձ թվաց վաղուց ծանոք,  
համրութեցի ձեռքը շաղոտ,  
և նա՝ կարծես սիրո ծարավ,  
համրութեց ինձ, գիրկս ընկավ:  
Ու ձգվում էր շավիղն այնպես,  
ինչպես ճամփան իմ երազի,  
ուզում էինք քայլել անվերջ,  
մինչև շավիղը կնվազի:  
Երք դուրս եկանք մի արձակ դաշտ,  
թողած հեռվում անտառը խոր,  
արդյոք ի՞նչ էր, որ շնչաց,  
ու ինձ թվաց ցնորք մի նոր:  
Ու նազանքից նրա արրած,  
ընկա հետքին այդ աղջկա,  
վազում էր նա ինչպես քարայժ,  
մազերն արձակ, ու վերջ չկար:  
Այսպես տևեց երկար ժամեր,  
ես ուժասպառ ընկա գետին,  
հետո նորից աշքերը մեր  
տեսա՝ հառած խոր երենքին:

Եվ համարձակ, քայլով հուշիկ

նորից մտանք խորքն անտառի,  
գտանք շավիղը մեր անցած,  
համբույրները՝ մեղմ ու բարի:  
Որոտածին անտառում խոր  
Շշուկներ կային խուլ, ամենի,  
և շրացան աշքիս առաջ  
երազներս ցնորալի:  
Տուր ինձ միայն աղջիկն այս սուրք,  
թող ինձ անտառն անանցանելի  
ու հանքյուրը շուրբերի:  
Պահիր դու ինձ կրքից կարու,  
պահիր կրքից այդ վավկաշու,  
թող համբույրից կյանքը ծնվի,  
բյուր երազներ թող վերծանվեն,  
ինչ կա արդյոք սուրք, անաղարտ,  
քան մեր կյանքը՝ երազով լի:

### ՈՒԶՈՒՄ ԵՄ ԴԱՌՆԱԼ ԱՆՀԱՎԱԾ

Այս խառնակությանը Աստծու մատն է խառը,  
և Աստված ինքը անստված է մի,  
հերիք է այլոց մեղքերի համար  
չաշարել մարդկանց, մարդուն չաշարել:

Եվ երանի թե արքնանայի ես  
ուրիշ մի տեսքով, խղճով մի ուրիշ,  
Աստված բառը մոռացած հավետ,  
աստվածայինը չսեի ես:

Եվ բոլորի պես գործիմաց, հանգիստ  
օրերի միջով քայլեի անզեն,  
անքեն քայլեի, անզրադ, անմիտ,  
հոգնել եմ, Տե՛ր իմ, այլոց խոսքերից:

Տես, նշոյլի պես առկայծեց նորից  
հավատիդ վերջին ծվենը բեկրեկ,  
ինչ անաստված են գործերդ, Աստված՝  
և բազմադեմ են իրերդ բոլոր:

\*\*\*

**Մի տեսակ վազքի մեջ են  
ձիերը խուճապահար,  
խուրձ-խուրձ վայր թափվող  
տերևներն աշնան,  
ասես ուշանում են  
մի մեծ ճանապարհից,  
ուր որ է սամումը  
կամ բուքը կհասնի:**

**Վազում են ծառերը,  
փողոցներն ու տները,  
ծուխը երդիկի,  
որ միշտ խաղաղ էր,  
անշարժ քարերը,  
դարերը պատմության,  
և փոքրիկ տղան այս՝  
անգարմանը ու պարզ:**

**Վազում են ժայռերը՝  
դարերից արքնացած,  
ալիքներն ահեղ,  
հողմածեծ ու վայրի,  
փախչում են ամենը՝  
և քամին խելահեղ,  
փախչում են գիշերը,  
Լուսինն ու սերը:**

### ԲԱՑ ՆԱՍՍԿ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

**Շուկայական այս օրերին,  
երբ առատ է ամեն գեշ բան,  
Տե՛ր, խնդրում եմ մի թող դու մեզ  
չարիքի դեմ ամբարտավան...**

**Մի կտոր թուղթ, մի քիչ թանար,  
որ մասնակցենք քո հանդեսին,  
ընտրարշավի վազքուղում այս  
հիշիր և մեզ՝ պոետներիս...**

**Մի կտոր թուղթ, մի քիչ թանար,  
որ գրոտենք խիղճ ու հոգի,  
ընտիր թղթեր ճերմակ-ճերմակ  
դարձան ստի, հողմի ճարակ...**

**Չարանում եմ, Տե՛ր, հավատա,  
հացը հալալ լինի նրանց,  
բայց թղթերը մաքրամաքրուր  
ազատիր այդ պիղծ ձեռքերից...**

**Օդը մաքրիր ՄԱԿ-Դումայով,  
լուման, ոսկին տուր գողերին,  
բայց թղթերը՝ ձյունից մաքուր,  
խլիր ձեռքից պատգամավոր...**

**Տե՛ր, օրերին այն չարանենք  
իր տեղն ուներ ամեն մի գող,  
մի քիչ թուղթ տուր, մի քիչ թանար,  
գիրը մնա հիշատակող...**

\*\*\*

**Գահը** մարդուն չի դարձնում թագավոր,  
փայտողիներ կարող է այն կուտակել,  
վերջը դա է, երբ պարապ մի սինլքոր  
տեր է դառնում աստիճանին երկնաքեր:

**Նախ որսում** է սրիկաներ նա բազում  
և բաժնում պաշտոնները նրանց մեջ,  
ավագանում աստվածային դյուքական  
ավագակը հեշտությամբ է լողանում:

**Շորջը** նրա հավաքվում են պոռնիկներ՝  
պճնազարդված գոհարներով լուսատու,  
փայլն աչքերի, գոհարների և ոսկու  
զայխոնը դարձնում է ալ կարմիր:

**Եվ պալատում** պճնանքներից գրգռված,  
զինվորներն են քայլում տեղոր ու բռիկ,  
կուշտ ու տոռոզ փորերն իրենց վեր տնկած,  
կրակում են աննպատակ ու անհոգ:

**Ուսում,** խմում և լցվում են օրեցօր,  
փափկամազիկ փարզում զահին ավելի,  
ժողովրդի, Աստծու աչքից խույս տալով՝  
դառնում զահ ու զայխոնի փայտողիլ:

1991 թ.

\*\*\*

**Փառքից** են խոսում ու սիրուց  
պոետներն Հայոց աշխարհի,  
կայրից ու պատվից աշխարհի,  
հնամյա ցեղից Նախրի...

**Բայց** սերը՝ գրպանից ծակ  
թափվում է, թափվում է արագ,  
և քիքը վեր ցցած նախրցին  
քայլում է սին փառքից առաջ...

1998 թ.

\*\*\*

**Քնել,** ննջել անվերադարձ,  
ծղոտի չափ և հարդի չափ շունչ շունենալ,  
Էլ չտեսնել ծառը շնչող,  
մանուկներին՝ մեղվափերակ...

**Գերի** լինել մահվան սմբած,  
պատան՝ դաժան, չար լուրջյան,  
սակայն հույսը, սերն էության  
գոյությունը կմորմորի իբրև կրակ...

**Մահը** մահ չէ,  
և ոչ էլ ցավ՝ լուրջյունը,  
կորուստ չեն չէ՝ ուղիներն անվերադարձ,  
երբ երկինքը ապրում է, կա,  
և շնչում է Մեծն Աստված...

**Մարդ** մեռնում է մի պարզ ցավից,  
երբ ապրում է, և երբ դեռ կա.  
մահը ներսում է, երկրի ներսում,  
երբ չես կարող լինել սատար...

**Արդարության** կեղծ մունետիկ,  
ով որկրամոլ և սուտ պաշտպան,  
դու, հենց դու ինձ սպանեցիր  
առանց արյուն, առանց դանակ...

**Եվ թշնամին** ներսում է միշտ.  
նա, ով լայն է դուռը բացել,  
ով սրտի մեջ չի լսում ձայն,  
ով ապրել է առանց Աստված...

1999 թ.

**ՄԱՀԵՐԳ**

Ապականված է ձեր հոգին վաղուց,  
դուք ոչ Տերյան եք, և ես՝ ոչ Չարենց,  
ինձ բաժին ընկած ժամանակն այս սուտ  
դատապարտել է մահիցս առաջ...

Ոչ գարուն, ոչ սեր, առանց հայրենիք,  
մենք՝ քամու բերանն ընկած տերևներ,  
զնում ենք անկանգ, անել, անուղի,  
և զառացանքն է առաջնորդը մեր...

Այսպես փոտում է նավախորշերում  
ծեծված ջրերի քամուկը նսեմ,  
և ոչ մի դրոշ, և ոչ մի գրոշ  
ձեզ չի հանելու ճամփաներ լուսե...

Սերմնացանները մարգարեացած  
սերմն այս երկար պահեցին հողում,  
և հոգիները վաղուց մզլոտած  
հոգնած այս հողում չեն ծլարձակում...

Ոչ Մաշտոց և ոչ Եղիա մարգարե,  
ոչ ոք չի կարող ձեզ առաջնորդել,  
այս փափուկ նիճնը՝ զլսատման պատրաստ,  
ուրացման օրն է Աստված արարել...

Զարթնիք, ժողովուրդ, զարթնիք անօրեն,  
դու ես պսակը դրել մեր զլսին,  
և օժել է նա՝ նեռն այն վախվորած,  
որ պսակվել է անմեղ զոհերին...

Հուղայի դրստրը բազուիին է քո,  
մեզ չի ներելու և ոչ մի աստված,  
վերջին ժամն է սա, վերջին վարագույր,  
և մարմինը քո կընկնի զլսատված...

Եվ պատմությունի՝ ոռմանտիկ մի երգ,  
կրոչի, ինչպես ագռավների չու,  
ով կատակում է աստվածների հետ,  
չի ըմբռշխներու ոչ կարոտ, ոչ սեր...

Օքք իջնում է սև վարագույրով,  
պատմությունն է մեզ նայում հեգնախառն,  
մի վերջին ժայիտ, թմրության մի պահ,  
և արարվածը կավարտվի խաղաղ...  
1993 թ.

\*\*\*

Երազիս մեջ տխուր, տրտում  
նստած էի պատի տակ,  
դեմս դաշտ էր, անտակ մի դաշտ,  
ձիս՝ զլսահակ ու մոլոր:

Դեմս դաշտ էր, անտակ մի դաշտ,  
քար ու քոփ մեջ փակված,  
ձիս քայլում էր ծույլ, պարկուտ  
քարերի մեջ անհատակ:

Ու սև, կապույտ ուրուները  
քոչում էին երկնքում,  
նրանց ողբաձայն քրքիջները  
սիրտս էին արնոտում...

Ուզում էի ելնել քնից  
ու ազատվել եղ ցավից,  
սրտից, ասես, քար էր կախված,  
չէի ելնում խոր քնից:

Ու սև, մռայլ երազիս մեջ  
ուրուն զարկեց իմ ձիուն,  
արքնացա ես եղ խոր ցավից,  
ձենը մնաց ականջիս:  
1976 թ.

## ԱՊՈԹ-Ք ԻՆՔՆԱՍՈՌԱՅՈՒԹՅԱՆ

Չվերջացող մի տիսրություն,  
հոգի մաշող մի ցանկություն,  
անհատնելի, անհանգրվան մի ճանապարհ,  
անուրախ երգ, անուրախ խինդ, մորմոքող ցավ...

Հատված-հատված, բեկոր-բեկոր կորած երկիր,  
երկրե երկիր անվերջ մաշվող, անվերջ կծկվող,  
զսպված ցավեր, կորուստ անվերջ, կորստի երգ,  
ու ցավերից ազատվելու և ոչ մի ելք...

Որքան պիտի հոգին ապրի այս վանդակում,  
զաղափարի, կաղապարի անել բանտում,  
երբ հոյաք՝ ցավ, լույսը զվարք՝ անհյուրընկալ,  
ըմբռաստությունը՝ դավաճան, սերը՝ պատրաճ...

Դեպի երկինք դուռը փակ է,  
փակ է դուռը դեպի երկիր,  
հոգու վրա, սրտի վրա՝ հզոր փականք,  
լեզվի վրա, խոսքի վրա՝ կապ ու կնիք...

Չվերջացող մի տիսրություն,  
հոգի մաշող մի ցանկություն,  
գնալ անվերջ այս ճամփերով անհատնելի  
դեպի սուրբ մահ, դեպի անքեն հանգստություն...  
1984 թ.

## ԱՐՅՈՒՆՈՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Սրտխառնուրից արքնացա քնից,  
աշքերս բացի, տեսա վերևում՝  
մորս աշքի տեղ ու հորս ձեռքի  
մի սև պատկեր է կանգնած օրորվում...

Հին ծանոթի պես նա ժպտաց մեղմիկ,  
տապարը ձեռքի շարժելով աջ, ձախ,  
նրա բարեգուր ժպիտից հասկացա,  
որ մեզնից ազնիվ ընկերներ չկան...

Երեսուն տարի հետևել է ինձ,  
տապարը ձեռքին, անթեք, անվլեպ,  
կոմունիստական պահակնորդը այդ  
չի դավաճանել հոգուն իր երբեք...

Մրձարաններում, թե զետի եզրին,  
օվկիանից այն կողմ, թե մահճիս առաջ,  
ամեն տեղ պահնորդն արյունածարավ  
հսկել է, որ ինձ ոչ ոք չդիպչի...

Զոհը մեկինն է, և կա մի նախանձ  
անվտանգության մեր կոմիտեում,  
որ ոչ ոք, ոչ ոք չփորձի հանկարծ  
հիշյալ անհատին իր ձեռքից խլել...

Հոյիվուրի աստղերից անգամ  
շատ եմ խաղացել ՊԱԿ-ի ֆիլմերում,  
միայն թե այստեղ զեղումներ չկան՝  
ինչպես է տղան աղջկան սիրում...

Այստեղ մեկ դերով ու դերասանով  
մնջախաղի նուրբ արվեստ է անանց,  
իմ ամբողջ կյանքը, շարժումներս ողջ  
ժապավենների վրա են քաշված...

Թե խոսք էլ լիներ, ինչ բարբառել եմ,  
գրելու կարիք չէի ունենա,  
ափսոս, որ նրանց գործերում տամուկ  
ատելությունն է կարմիրի հանդեպ...

Հայ գրողները՝ փառքի սիրահար,  
կրազմապատկենն ատելությունը,  
երե իմանային որքան եմ հայտնի  
պետությանը այս՝ ՊԱԿ-ի արխիվում...

- Բարեկա՛մ,- հարցը ես կարեկցանքով,-  
ասա անունդ և գործդ բարի,  
որ ես իշխարժան, պատշաճ ընկալեմ  
ծառայությունդ, վարքդ հանձարի...

Կրկին նա ժպտաց, շարժեց տապարը  
և անխոս նայեց ճիշտ աչքերիս մեջ,  
նրա շարժումը և հայացքն անթեր  
դժվար բարգմանվեն իմ խեղճ մատյանում...

- Ես սոսկ դիտող եմ, ձայնագրող մի լուս,  
ինչ ես պարզամիտ հարցեր տալիս ինձ,  
իմ օրավարձը քո տարուց բանկ է,  
հանիր հարցերիդ օդակն ինձանից...

- Իսկ ես կարծում էի, իմ խեղճ բարեկա՛մ,  
թե մենակ եմ ես, զոմե գրեիս:  
- Մխալվում ես դու, եղբայր պատվական,  
թեզ հետ եմ անգամ անունդ տալիս...

- Բավ է, հասկացա, անցիր քո բանին,  
կատարիր, ինչ որ պատվիրել են քեզ,  
ծանաչում եմ ես հայ գրողներին,  
որոնց հսկել ես, անվերջ, մշտապես...

Նրանց գործերում, արարքներում ողջ  
կարմիրն է հոսում գետի նման սև,  
բարտեզի վրա չեն տեղադրվել,  
բայց երգերը այդ արյամբ են ներկված...

Նրանք գրում են լավից ու վատից,  
խոսքը դրամ է, և դրամ՝ խոսք,  
գրում են վարից, գրում են վերից,  
և նյութն ու բանը մերկ են ու ամորֆ...

Ինչ-որ կամենաս, լուս կկատարեն,  
սիրտ, ուղեղ, հոգի չկան նրանցում,  
բայց ամենից շատ խոսում են նրանք  
հենց դրանց մասին, ինչ որ շեշտեցի...

Հաշվել են նրանք փայտե հաշվիչին  
ատամները ողջ մեր ժողովրդի,  
և նյութ, և թեմա, տաղաչափություն,  
ինչ-որ կամենաս, իմ լուս բարեկա՛մ...

Ես էլ ասում եմ՝ ինչպե՞ս պատահեց,  
որ պետականը տրվում է նրանց,  
իմ ամբողջ կյանքում այնպես ապրեցի,  
որ արտիս վրա էլ հալ չմնաց...

Հայրս էլ այդպես, միայն կամավոր,  
կովեց նենգ թուրքի սրի դեմ ծարավ,  
ոռմանտիկ էր նա և ինձ պես խելառ  
ու այս աշխարհից ոչինչ չտարավ...

Բայց մահվան մահճում, թնի մեջ խորունկ  
շրմերին ժախտ ուներ մի բարուն,  
որ թե բարգմանեմ, կստացվի գուցե.  
- Որդի՛ս, ինչ ունեմ, թեզ եմ կտակում...

Եվ ունեցածը՝ լոկ մի պատվիրան,  
որ թպրտում է սրտիս մեջ արնոտ,  
այնքան պտտվեց պատվիրանը այդ,  
որ դարձավ սրտիս խարան ու ամոր...

Լսում է խոսք դահիճն արնաքամ,  
և դեմքը նրա սառն է ու անգոհ,  
բարեկամը իմ տապարն է շարժում,  
որ բարգմանվում է «Երիցս ամոր»,...

Եվ անունը իր չի տալիս բնավ,  
բայց այն հայտնի է աշխարհում մեր հին,  
և այդ անունը չենք կարող ջնջել,  
փոխանցում ենք մենք նոր սերունդներին...

Քանի կապաճը կա սրտին ու մտքին,  
մենք չենք կարող նրան վանել մեզանից,  
նման ենք մենք այն անբույն թռչունին,  
որ սուր ճանկերով աչքերն իր հանեց...

Եվ այդ անունը աշխարհի չորս դին  
ոչ թարգմանվում է և ոչ էլ մեռնում,  
և այն ծաղկում է, ուր հողն է արդար,  
և ուր աճում է արճոտ մայրենին...

1981 թ.

\*\*\*

Ինչոք տեղ կպայթի ոռումբը,  
ինչոք տարածք կամայանա,  
ինչ-ինչ մարդիկ  
կմեղադրվեն անշուշտ,  
ինչ-ինչ մանուկներ կորքանան:  
Կանցնի ժամանակ ինչ-ոք չափի,  
նոր սերունդ կգա առաջադեմ,  
կգրի մեղքերը բանաստեղծաբար,  
ոմանք տոն կտան, ոմանք նորից  
դավեր կնյութեն գաղտնի:  
Կմնան հավերժ առվի կարկաչը,  
որբույրունք մանկան, դավերն անտեղի,  
և բանաստեղծ՝ դավերին ընդդեմ,  
և միշտ իբրև զոհ:

\*\*\*

Երևանից իմ հին,  
այս հին Երևանից,  
ի՞նչ են ուզում պոետները,  
պոետները թխսկան...

Քաղաքից են խոսում նրանք,  
խոսում վարժ ու անգիր,  
ասես, խոսք ու բառերից է  
շինվել քաղաքն այս հին:

Ոչ հայրն է իր արյունը բափել  
Սարդարապատի դաշտում,  
և ոչ ինքը քրտինք բափել  
կրակ ու բոց տապում...

Բառերի այս հեղեղատում,  
գեր, անարյուն խոսքի  
զգվեցրել են ամեն վայրկյան  
աճպարարի ոսկով...

Ոչ զիր հարգող,  
ոչ խոսք լսող մարդիկ,  
Երևանը ուժացրել եք  
միլիոն ու կես մարդով...

\*\*\*

Երեխաներին մի վախեցրեք,  
աշխարհում պատերազմ չի եղել,  
մարդիկ իրաք չեն սպանում  
հանուն գաղափարի,  
ծերերը չեն մեռնում,  
անտառները վանդակներ չեն  
կենդանիների համար:  
Աշխարհի բոլոր երեխաները  
սիրում են իրաք:

\*\*\*

Քսաներորդ դար, զլիսիս մեջ ծափեր,  
հեռվից մոտեցող որոտ,  
պայթող ծիծաղներ,  
փուշիկներ՝ երկինք համբարձվող,  
և աչքեր կանացի՝ հուսահատության մեջ մոլեգնող:

Քսաներորդ դար,  
խորհուրդների աճածավ,  
հրճվանք՝ վաղվա մասին,  
չափերի դանդաղ խախտում,  
մնջախաղ, հետիոտն քայլող անցորդ:

Քսաներորդ դար,  
բարձրացող դրոշների շքերք,  
մտրակի շաշյուն,  
ամեն ինչ իմանալու տենչանք,  
հոգնած ցավ, հոգնած հոգնություն,  
հավատի մահ և սպասումի կենսագրություն:

Քսաներորդ դար,  
բունքերիս մեջ պայթող երազ,  
գարուն և արյան լճացում,  
հանճարի վեհացում և սպանություն շնորհի,  
քսաներորդ դար,  
մեռնող և ծնվող իրապաշտություն:

1974 թ.

\*\*\*

Ոչ հողմ կա, ոչ քամի,  
նվում է սիրտն իմ,  
նվում է աշունը մենակյաց,  
քամին ամրացել է փշակում վայրի,  
ու հողմը քնել է մեջքը բաց:

Դեղին է շուրջն իմ,  
և աշունը դեղին դարձել է  
քանդակված մի պատկեր,

սառել է հողը իմն, կեղևը ծառերի,  
և սիրտը՝ վայրի թռչնի:

Թափվուն են հուշեր՝  
երգերի վերածված,  
թափվում են տերևներ մեռած,  
նրանք իշնում են խաղաղ՝  
արևի համբույրը վաստակած:

Անխոռվ է բացատը,  
և օդը՝ զուլավ,  
խլրուում է առուն ուշաթափ,  
քչքում են դեմքին տերևներ գումեն,  
ինքնարուխ հաճույքից վերացած:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՑԻՎ

Աստծու պատժից ազատվեցինը,  
ստամոքսի ցավից նաև,  
ել ոչ մի ուժ մեզ չի հաղթի,  
շենք վախենում դավից...

Կեցցե ազատ Հայաստանը,  
որ մեր հոգին փրկեց,  
առանց հացիվ Հայաստանը  
դեպի դրախտ ուղղվեց...

Գրությունն է ծաղկում, ահա,  
փողոցներում անփույր,  
ժողովուրդը, մանուկները  
առնում են սուրբ հագուրդ:

Մանուկներն են անցնում հպարտ  
կաք ու մածնի կողըով,  
ծծակները երկինք պարզած  
ազատության ոգով...

Սովորական մի ուղերձով  
թագավորը մեր մեծ  
հղեց պատգամ՝ որպես զեմք,  
ապրել առանց հացի...

\*\*\*

Գլուխ տալու արվեստն հզոր  
դու այդպես էլ չհասկացար,  
ժամանակ ես վատնում իզուր,  
իսկ անցածը ետ չի դառնում:

Միջակության հզո՞ր աստված,  
քեզ եմ պաշտում այսուհետև,  
առատության ծառից հատած  
քո սեղանը՝ ճոխ ու թերև:

Պարն եմ պաշտում ձեր անարվեստ,  
հայացքները ձեր անսրող,  
հայացքները ձեր անստվեր,  
հրավերները՝ հրահրող:

Այրում եմ ես մեծ հաճույքով  
ձեր սեղանի ոսքերի տակ  
օժտված, փրկած, դիրք ու ձիրքով  
գրքերն ամեն՝ ձախով գրկած:

Նրանք միայն տանջել են ինձ,  
շոյող աչքից հեռու վանել,  
լիքը հասկով կույր մաղն առած,  
բայց հարդին եմ ապավիճել:

Գիտեմ, դժվար կլինի քեզ հետ,  
բայց երդվում եմ խոնարհարար,  
եթե դու էլ ինձ չներես,  
ապրելն իզուր է ինձ համար:

Մեծահոգի ու միշտ հզոր,  
առատության դու իին սեղան,  
ընդունիր ինձ՝ խեղճ հայցողիս,  
ինչպես որդուն վերադարձող:

\*\*\*

Խաղաղություն ամենեցուն  
և մեզ, որ դեռ նոր ենք անցնում  
այս իին հողով,

խաղաղություն այս իին երկրին  
և մեզ, որ դեռ նոր ենք դառնում  
նրա որդին,  
ու սերնդին խաղաղություն,  
որ ծնվեց ու ապրեց

արյունոտված առավոտին:

Խաղաղություն նրանց, որոնք  
մահվան աշքով մեզ են նայում՝  
զարմացած այս լուսաբացից,

և ձեզ, և ձեզ խաղաղություն,  
որ չտեսաք այս երկիրը  
առավոտյան,  
և մեզ, որ դեռ աչքներս թաց  
մտորում ենք ձեր հավատի,  
ուժի և այն սպասումի մասին,  
ուր մեզ թողիք:

Խաղաղություն սերունդների անհաշտ երթին,  
խաղաղություն ամենեցուն,

որ կամեցավ խիղճը պարզել,

խաղաղություն և հարություն հոգիներին,

որ հոգնաբեկ ու խոնջացած  
ննջում են հար,

ու սպասում են մեր վերելքին:

Խաղաղություն իմ սերնդին,

որ հույսով նայում է դեռ  
մեռածներին ու ողջերին:

## ՈՒՂԵՐՉ ՀՈՒՍԱՀԱՏԱԿԱՆ

Եթե իրապես ինձ սիրեր Տերը,  
և առատ լիներ շնորհը վերին,  
չեմ չափչի ես փողոցները  
և կիխնեմ հավատին գերի...

Խիստ եղավ Տերը նմանիս հանդեպ,  
տվեց, որ կրեմ լուծը դժվարին,  
ճշնարսությունը՝ ահեղ, սոսկալի,  
դրեց ժանրորեն փխրուն ուսերիս...

Եվ հանդիպակաց ամեն ստահակ,  
որ վայելում է բարիք ու բերկրանք,  
արհամարհական ժպտում է դեմքիս,  
արտահայտելով միայն չոր հեզնանք...

Հոհոում են լիբր, ծաղրում, ծանակում,  
և հասնում ինձնով քղանցքին Աստծու,  
սխալ է, անշուշտ, զոհելով տիրել  
այս մարդանման, բիրտ կապիկներին...

Տեր, սխալվում ես որերորդ անգամ  
և քո որդուն էլ իզուր զոհեցիր,  
նրանք վախից են քեզ փառարանում  
և ատում են քեզ, և վատարանում...

Եվ խոռվածիդ էլ չեն սպասում,  
և մոռացել են դատաստանը քո,  
զույգ մատներով մեր աշքն են հանում,  
երբ խոսում ենք ճշմարտությունից:

1997 թ.

\*\*\*

Օ՛, ոքքան գաղտնիք  
կարող է բացվել  
մեկ գիշերվա մեջ...

.....  
Կուսանոցների դրմերը փակեր:

## ԶԻՎԱՆՈՒ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ականջիս մեջ է դեռ ձայնը պապիս,  
խնջույրի պահին, և թե տխրության,  
աքսորի ճամփին, ճամփին ցավերի.  
- Զախորդ օրերը կուգան ու կերպան...

- Կուգան ու կերպան,- զիլ կանչում էր նա՝  
խեղդելով վիշտը թունդ տողերի մեջ,  
ամեն ինչ կարօղով մնում էր նորից,  
ու տառապանքն էր անսկիզբ, անվերջ...

Հետո օրերին հորս տքնության,  
պապիս հուշերը տողերում բեկրեկ,  
երգում էր հայրս վշտից խելահան.  
- Զախորդ օրերը կուգան ու կերպան...



Երգում էր կարգով, խանդաղատանքով,  
ականջը ձայնի, սրտով հոգնարեկ,  
և հոլովույրը հար փոփոխական  
զնոցում էր հոգուս, ականջներիս մեջ...

Հիմա օրերին մեր խելակորույս,  
երբ ցավերն ամեն եկել, կուտակվել,  
երբ փնտրում ենք ելք, երբ փնտրում ենք հույս.  
- Զախորդ օրերը ձմռան նման...

Ի՞նչ ասեմ, ասեք, այս ուրախ պահին,  
ինչո՞վ սփոփեմ ձեր վշտերն ամեն,  
հուսանք, մարտնչենք, ասենք միաձայն.  
- Վիատելու չե, կուգան ու կերպան...

1990 թ.

= f + z + e + c + t + e +





**ՀԱՅՐԵՆԱԿԱՄՆՉ**

Նորից կանգնել դեմ դիմաց  
նայում ենք իրար,  
նա՝ իր կանչող հմայքով,  
ես՝ մշուշով հար:  
Նորից կանչում է հեռվից  
Արարատը ճերմակած,  
ես քայլում եմ համրաքայլ  
դեպի հեռու, դեպի ցած:  
Նորից մնում է նա վեր,  
ես՝ ցած աչքս հառած,  
նա գնում է դեպ դարեր,  
ես՝ նախնիներս մեռած:

\*\*\*

Արդյոք կարո՞ղ եմ ես  
սուզվել խորքը լեռան,  
ուր բիբլիական անհուն տարածությամբ,  
մազաղաթիդ դեղին շապիկն ի վար  
ողբ ու երգդ են փոված...  
Քարանձավիդ մթին առեղծվածում  
շնչահեղձ է լինում հոգիդ միջնադարյան,  
քո ժանրաքայլ, արյունոտ պատմությունից  
ի՞նչ ջանքերով, ասա, ինչպե՞ս  
ելնեմ դիմացը մեր լեռան...

Խառնվել է մեր մեջ, ահա,  
քո անցյալը հախուսն, բազմաշարչար,  
և ես, ինչպես քնից ելած,  
չեմ գտնում ինձ, երգդ գովալ...  
Եվ վառվում եմ իմ մեջ, և իմ արյան,  
մի անհարիբ ցավից տարութերվում,  
մեկ օր ապրում եմ այստեղ,  
տասն օր՝ մթին միջնադարում...

1986թ.

\*\*\*

Նայեմ, նայեմ Արարատին,

աչքս մշուշով լցվի,

սիրտս սև ձյունով լցվի,

նայեմ, նայեմ Արարատին:

Քար սիրտս զովանա մի քիչ,

քար հոգիս խենթանա մի քիչ,

մինչև որ հոգիս բանա

կարոտիս դրները սառած:

**ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Լեռ հավերժող ու տիրական,  
ճերմակ սավան ու ճերմակ քող,  
արյան բողոք, արյան վրեժ,  
կարմիր- ճերմակ, ճերմակ-կարմիր:

Հոգմել եմ ես քեզ նայելով,  
հոգմել եմ իմ վեճ ու կռվից,  
քո մաքրությամբ ստորացնող,  
ցնորեցնող քո մաքրությամբ:

Գոտեպնդվիր, ելիր ոտքի,  
խիղճը՝ վանդակ, սերը՝ ստրուկ,  
կարոտը՝ քեն, ցավը՝ դանդաղ,  
այսպես դանդաղ ո՞ւմ են մորթում:

Պատիվ ունի ամեն մի սեր,  
ամեն մի կին ունի պատիվ,  
այսպես երկար նայել պատին,  
մնալ այսպես, այսքան անկիրք:

Իմ մայր, իմ հայր, իմ հին օջախ,  
երգ ու վերքիս իմ միակ տուն,  
կորած հավատ, կորած երդում,  
մահով հաստված իմ լրություն:

1984թ.

\*\*\*

Լեռ մշտական ու վիրավոր,  
հնամենի որպես արքա,  
որ պահում է հոտն իր արդար՝  
պահպանելով շունչը նրա:

Տարածվել են քո փեշերին  
ծաղիկներդ բազմալեզու,  
նինջ է իջնում իմ հուշերին,  
ինչպես փեշիդ թիկնած մարդուն:

Սակայն չկա ավելի վատ  
և քնարեր ուրիշ մի դեղ,  
ինչպես ծաղիկներդ վիատ,  
ինչպես ծաղկունքդ քնարեր:

Եվ սիրելը քիչ է իիմա,  
այն լսվում է ամեն կողմից,  
մոռացումի ոսկե շղթա,  
սպասումի կարեկցանք ինձ:

Բառերն այնպես թույլ են ու խեղճ  
և տեսիլը վիրավորող,  
իսկ տեսածն հապատ ու պերճ,  
հայացը քո՝ մանկան ներող:

Ու հավատի հզոր մի լեռ  
գախս է քեզ փոխարինող,  
արքայական լեզուն է դեռ  
ճախրում՝ քեզնով սաղմնավորող:

Եվ դառնում է իմ քերանում  
իմ մայրենին սուրբ մանանա,  
մանկան շուրբին՝ հավատ ու սեր,  
որ Արարատ բառը մնա:

Մի քիչ տգեղ եղիր, չքնա՛դ,  
խեղճին նայիր քիչ խեղճի պես,

թե չէ այդպես շռայլորեն  
պետք չէ հոգի արյունոտել:

Լեռ մշտական ու վիրավոր,  
հնամենի՝ որպես արքա,  
որ պահում է հոտն իր արդար,  
պահպանելով շունչը նրա:

\*\*\*

Հիմն արևի,  
ով Արարատ լեռ,  
որ հոլովոյք այդպես կերտեցիր:  
Վսում եմ՝ իբրև քեզնից ոչ մի գետ  
ու ոչ մի աղբյուր չեն սկզբնավորվում,  
դարեր ծարաված ամեն մի կարիլ  
քեզնով ցած բափկում, քո մոտ է պարպվում:  
Մինչդեռ ոչ մի ջուր,

ոչ մի ծիլ, ընձյուղ, շունչ կամ մահ քո դեմ  
չեն բաքցրել երբեք պատկերն իրենց ջինջ:

Արարա՛տ,  
իմ լե՛ռ,  
բոլոր օրենքներն աստվածաբար  
կերտվեցին քեզ մոտ, հայացքիդ ներքո,  
և հերանոսի երգեր երգվեցին,  
մոմեր վառվեցին քո սորերի տակ,

և գեղեցիկները մնացին այդպես,  
և տգեղները մնացին նույնը,  
ամենքը առան, ամենքը տարան,  
գաղտնի մնաց քո աստվածայինը:

Դու կրակարան զգացումների  
և լեզու միակ, որի գրգիռը,  
լուրյունը պերճ ավելի խոսուն են  
ու անբարգմանելի:

Հիմա հասկացա և պիտի ասեմ,  
եթե ուզում են մեր ոգին հատել,  
սրբին սիրող մատնիշի նման  
պիտի հրդեհեն պատկերդ վառման:

\*\*\*

Այս լեռան պես ճերմակություն,  
հանդարտություն այս լեռան պես,  
խորհուրդներ, խոհեր բազում  
չեմ տեսել ես այս լեռան պես...

Կանգնած է նա հարթավայրում,  
գլուխը սեգ՝ երկինք-դրախտ,  
անհաղորդ է նա մարդկային  
վեճ ու կրվին, խոռվշին տաք...

Թագ է դրվել նրա գլխին  
Նոյյան ապուպապից առաջ,  
լույսն է, ահա, ճամարտակում,  
և տարերքն է նրա՝ շառաչ...

Այս լեռան հետ զգույշ վարվիր,  
այս լեռան հետ համբերատար,  
ծնվել է նա հարթավայրում,  
միաձուել ավագ ու քար...

Ու թե երկնեց, Աստված վկա,  
երկունք չէ դա, այլ ավերում,  
ով երկար է վիշտը կրել,  
բարկության մեջ նա չի ներում...

Ով անցավոր սովորական,  
ունայնության հունդից ծնված,  
խոնարհվիր դու նրա առաջ,  
քանզի Աստված է կնքել նրան ...

Ժամանակն է նրա տարին,  
և դարերը՝ սոսկ թռչուններ,  
ունկնդիր է նա շշուկին,  
համբերության բաժակն է մեր...

1987թ.

**ԳՈՂԳՈԹԱՅԻ ԾԱՂԿԻ ՆՄԱՆ****-Ա-**

Գլուխը վեր, ամպերից վեր,  
ոտքերը՝ խոր անդունդներից,  
արմատներով հողում քո հին,  
ձյուն գլուխը՝ աստղիկներին...

Զյուն գլուխը քերծեր փերք-փերք,  
ադամանդե ցոլքերի երք,  
աներկրային ծաղկի նման՝  
աստղից կրակ առնող...

Կանգնած է նա, ահա, այնուեղ,  
միշտ տիրաբար ու լքելայն,  
աստղերի հետ ու իր հողի,  
Գողգորայի ծաղկի նման...

**-Բ-**

Կանգնած է ոչ խաչված, ոչ կապույտ,  
հավերժ է անունը, ինքը,  
երբնէ սիրել եմ նրան,  
երբեմն անունս նույնն էր...

Ես նրան, նա ինձ է երազել,  
երազը եղել է իրական,  
ես նրան, նա ինձ է տեսել,  
տեսիլը եղել է իրական...

Առավոտ սառը, ձմեռոտ,  
փայլը սառույցի կապույտ,  
մի տեսիլը, մի ճերմակ ուրվական,  
տեսիլըն այդ սահմանն է հոգուդ...

-Պ-

- Չնչին, ինչպես Արարատին նետած քար,-  
հայացըները և խոսքերը մեր հոգու,  
այդքան մոտիկ, այդքան ցնորք հեռակա,  
որ չի կարող և ոչ մի սիրտ երազել...

Ել ոչ մի քառ, ոչ մի զեղում երազկոտ,  
նա այստեղ է, մեր ափի մեջ, մեր հոգու,  
քայց և չկան ընդուստ բառեր ու տեսիլ,  
և չի կարող մուժը ցրել մեր հոգու...

Քնած եմ ես, և ոչ մի ուժ իրական  
ինձ չի կարող վեր բարձրացնել իմ քնից,  
այն մոտիկ է և հեռու է այն այնքան,  
որ չեմ կարող ես արթնանալ երազից...

Սեր, հայրենիք, հող, սրբություն և ուրիշ,  
ուրիշ բառեր, որ գալիս են հետմահու,  
ինձ չեն կարող, ինձ չեն կարող արթնացնել,  
որովհետև ես հիվանդ եմ ահարկու...

-Պ-

Լեռն է, ահա, մեր ձյունածիր  
Գողգորայի ծաղկի ննան,  
բրատված են ծաղկեները,  
տիրությունը՝ լուռ հանգրվան...

Կանգնած է նա հավերժանիստ,  
խառնարանը՝ կապույտ բազալտ,  
և անքարք է հայացը իր  
աշքերիս դեմ, որպես նշան...

Ճերմակ քող է ոտքից գլուխ,  
սերն են այդպես թագաղրում,  
ես էլ, նա էլ՝ անվերջ տիսուր,  
ո՞վ է սերը անտեր բողնում...

Խաչն է վառվում լուռ ճակատին,  
շանթերի դեմ շեկ կայծակի,  
խաչակնքիր աղաչում եմ,  
խառնարանդ որ հանդարտվի...

Խաչակնքիր, ի սեր մեր իին,  
որ ժողովուրդդ բարձրանա,  
համբերանքից մոխրանում են,  
սև մորմոքից չեն քաղցրանա...

\*\*\*

Հացից բարձր էիր, ցորենից մաքուր,  
երկնքին մոտ էիր, երկրից օտար,  
խզվել էր կապը, հոտը ցրվել էր,  
երբ երկրիդ շուրջը գայլն էր տիրակալ...

Հացդ համով էր, երազդ՝ պայծառ,  
երկինքդ՝ մաքուր ու հանդիսավոր,  
պատվիրանները կատարում էիր  
կամոք Հիսուսի, կամոք Աստծու...

Ցնկնող գայլերի ոհմակի առաջ  
սիրտդ անմահ էր և խիդդ մաքուր,  
և քիչ էիր դու, և սերդ՝ նշխար,  
ու նրանք դանդաղ դարձան ահարկու...

Աստված երկիրն այս հոչակեց դրախտ,  
մոտիկ, հեռավոր եկան քեզ ուխտի,  
տիեզերական դու մի մեղավոր,  
նորեն միամիտ, Հայաստան աշխարհ...

\*\*\*

Դու սիրո մասին ինձ մի պատմիր,  
սիրտս արյուն է, արնեղեն գունդ,  
տառապաճները՝ խճողված երգ,  
զայրութը՝ ծաղր, բառը՝ անհունդ...

Ամեն բան դարձավ ծաղր ու սուտ,  
ամեն ինչ՝ այնպես սովորական,  
գիտեմ, լավ գիտեմ, ում էր օգուտ,  
և ում համար մահ հազար անգամ...

Երկիր իմ, այո՛, դու ես մենակ,  
երկիր իմ, այո՛, պիտի ասեմ,  
բայց ի՞նչ ասեմ ես, ծաղրն անգամ  
քմծիծաղ է շրբներին սն...

Չափերդ ծաղր է, սարքած մի բան,  
հատած կնոջ նուրբ կիսադեմով,  
գուլիվերյան մի հմուտ ծաղր՝  
պոռնիկ աշխարհի ձեռքով նշած...

Խաղաղությունը, որ մանկան պես,  
տառերի պես եմ սիրել կյանքում,  
հիմա ամենից, բոլորից շատ,  
հիմա այդ բառն եմ միայն ասում...

Մտել են տունդ խարդավաճռով,  
մորթել տանն ապրող վեցից հիգին,  
և վեցերորդին, որպես նմուշ,  
աղաղակել են՝ խաղաղ ապրիր...

Դու սիրո մասին ինձ մի պատմիր,  
սիրտս արյուն է, արնեղեն գունդ,  
տառապաճները՝ խճողված երգ,  
զայրութը՝ ծաղր, բառը՝ անհունդ...

1985թ.

### ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

Հանճարներին մեկ վայրկյանում  
կանգնեցնում են պատի տակ,  
որպես եղած, որպես չեղած  
պատմություն.

և վայրկյանն այդ  
դար է տևում, մի ողջ կյանք,  
և ամենն այս կրկնվում է  
անընդհատ...

Հո՞ն հայրենի, դու սոսկ հայր չես  
և ոչ մայր,  
դու մանուկ չես ծլարձակած  
կրծքի տակ.

աստվածների կորողները՝ հերոսների  
բափած արյուն,  
և կրկնվում է այս ամենը  
անընդհատ...

Հո՞ն հայրենի, դու բանկ չես լոկ նրանով,  
որ թշնամին վերցնում է քեզ արյունով,  
բափած արյուն, մորթված մանուկ,  
մորթված մայր,  
և ամենն այս,  
ամենն այս անընդհատ...

Հո՞ն իմ, երկիր՝  
հազեցած լերդ արյունով,  
սերունդների պղծված, սրբված արյունով,  
դու սոսկ բանկ չես,  
դու սոսկ հող չես ինձ համար,  
կոփվների, խոռվների մի ողջ կյանք...

Դու՝ շարակամ՝ ծորուն արյան շիթերով,  
դու՝ մագաղաք՝ ծվեն-ծվեն վերքերով,

դու՝ դպրույուն, ավերակված վաճք ու դուռ,  
դու՝ խաչված քար՝ երազ ու խազ հետքերով,  
դու՝ միջնադար, խելահան ծոմ, դպրույուն,  
խարազանված, ինքնահալած քուրձ ու ծոմ...  
Մթին և սուրբ, և ինքնասպան հանուն քեզ,  
դու տքնություն դարեր երկար՝ մութ ու հեզ...  
Ըմբռասության շապիկ հագած սերունդներ,  
դարեր անթիվ՝ ծափյալ ու լուս ընդվզում,  
մի խիզախում, որ չի կարող բարգմանվել,  
օրոցքի երգ, օրոցքի գովք, աստվածներ...  
Հողը չեն տալիս այնպես, հենց այնպես,  
հողը չեն առնում, ինչպես չեն տալիս,  
ինչպես չեն առնում արյունը մարդու,  
հողը շնորհ չէ և ոչ էլ պարզ...

\*\*\*

**Մեր ցավը չդարձավ ուրիշներին ցավ,**  
**ուրիշների ցավը կուտակվեց մեզ վրա,**  
**մեր մահն անգամ բաժին հանեցինք ամենքին,**  
**մոռացանք մեր մահը, մեր ցավը մոռացանք...**

**Ու թե մեկ-մեկ խոսում ենք մեզանից,**  
**հազար ժակ ու մաղ անցկացնելուց հետո,**  
**ծիծաղելի մի բան խայտում է իմ ներսում,**  
**ցավից հառնած մի ցավ, ծիծաղ մի պստիկ:**

**Ստրուկ երկրի վրա և երկրագնդի**  
**դեռ երկար պիտի ապրի դաժանությունը,**  
**ուժը տեր է, օրենք, խիղճը՝ ուժ է, օրենք**  
**պոռնկությամբ ապրող ստրուկների համար...**

\*\*\*

Այս, այս ծանր Արարատը,  
այս հուսակերտ աշտարակը,  
ծանրագույնը այս աշխարհում  
ծանրացել է մարմնիս վրա...  
Գիտեմ՝ քանի՛, քանի՛ սերունդ  
հովերգակի սոլերով իր,  
նախներգակի իր թներով  
կուգե գորիից լեռն այս հանի...  
Ա՛յս, մեր մահի այս հրաշը,  
վերջնավերջի մեր դրախտը...

\*\*\*

Քաղաքակրթության ու սիրո միջև  
լնկած է երկիրս ավերակ,  
դու մի զարմացիր,  
մի դատապարտիր,  
քանզի ինձնից վեր մայրս է,  
նրանից ներքն՝ Աստված հուսահատ...

Մեռած են բոլոր հրաշները կեղծ,  
թվարկումները բարեպաշտության,  
զաղափարները տարալուծելու,  
եթե ծաղկի հետ սերը չի ծաղկում,  
եթե չի ծաղկում սերն ազատության...

Հրաշը է հասնել կատարելության,  
ինքնազգացման հրաշքին անգույն,  
սակայն չեմ փոխի բոլորը մեկտեղ  
օրոցքում ծաղկող սուրբ բալիկիս հետ,  
շփոք բառերի, թլոր, անարվեստ...

Այս կեղծ արվեստի ու սիրո միջև  
լնկած է երկիրս բգկտված, բայց սուրբ,  
դատապարտելը հեշտ է աշխարհում,  
համոզումները համոզեն է հեշտ,  
ապրելն է դժվար հավիտենությամբ:

**ԵՐԵՒԱՆ ՄԵՐ՝ ԱՅԲՈՒԹԵՆԸ**

Դատերս՝ Լիլիթին

Փողոցներով մանուկներն են անցնում, ահա,  
ժիր, աղմկոտ, հայացքներով անըմբոնելի,  
և օրերի խիղճն են նրանք,  
և պատմության վկայականը քննելի...  
Թորովում են բատեր, թլուում խոսքը,  
որոնք իբրև ճակատագիր  
սեղմ ցանված են մեր անցյալի ճանապարհին,  
որպես մասունք, որպես ճայնը մեր գոյության...  
Իսկ մենք, ահա, նայում ենք լուռ,  
չենք ըմբռնում մեղոնների ոսկեքնիկ բախսունը մեղմ,  
որովհետև ձայնը հեռվից է սկսվում,  
իսկ մենք միայն գարնան ճիշն ենք որսում հատ-հատ,  
ու դարսվում են մեր մեջ բատեր, խոսքի շղթա,  
որոնց համը, հոտն են ննջում մեր արյան մեջ:  
Ու ձգվում է մանուկների պարսք հրաշք,  
ու խոսվածքը, շարժումներն անմեկնելի,  
զրուցում են նրանք այնպես պարզ, հասարակ,  
ինչպես տառերն այրութենի...  
Այս ձայնները լսել է մեր նախապապը,  
երբ արբել է արարումի սուրբ ծնունդով,  
որովհետև նա է ապրել մահվան պահը  
ժողովրդի...  
Ու անցնում են մանուկները հեղիկ, նազիկ,  
արամական, վահագնացած, գոռ, ինքնիշխան,  
ու խոսում են խոսվածքներով և մեզ անհայտ  
(օրինված է բնությունը, այսքան զարմա՞նք)  
կրկնությունն այնքան ջերմ է, և խոսքը՝ տաք:  
Չեզ տեսնելիս, ո՞վ մանուկներ հրաշագեղ,  
հացն եմ տեսնում սուրբ սեղանի,  
ծովալը, ձեռքերը՝ հացի կարոտ,  
և հրճվանքը զինվորների, երբ քաղաքներ են ազատում...

**Իմ մեջ լավաշն է հոլովվում,**

**և աղոքքը՝ հացի հանդեպ,**  
**և ուզոս եմ ծնկի իշնել՝ համբուրելով ձեռքերը ձեր,**  
**ինչպես մեղում՝ ծաղկաթերթի բաժակը սուրբ,**  
**մեղում՝ արքած նեկտար-բույրով,**  
**մեղր-ծնունդն է օրիներգում...**

**Թրքում է նրանց այտին**  
**աստեղային հեզ Սիրիուսի ժամանակը,**  
**թլոր խոսվածքն է բարբառում նրանց լեզվին,**  
**մեր գոյության հաստատումը, օ՛, ինչ կատակ,**  
**ամփոփված է միայն նրանց բույլ ձեռքերում:**  
**Հասկանում եմ և սքափվում,**

**որ հավերժը պահպանվում է մի պարզ տեղում,**  
**որին, այնպես, անվանում ենք ճակատագիր...**  
**Հասկանում եմ, թե ինչու է յարաղանը՝ սուրբ այդ կեռ,**  
**մանուկների ու մայրերի մեջքը գրկում,**  
**և ինչու են հանճարները ոսկու գնով**  
**մանուկներին՝ ճակատագիրը մեր փրկում...**  
**Հասկանում եմ, որ տառերն ու մանուկները**  
(և որքա՞ն են իրար սազում)

**թերթերն են մեր չգրոտված,**  
**մեզ հետ քայլող մեր անցյալը**  
**և հացը մեր, որ դրվել է հենց այն քիվին,**  
**ուր ճորտերը՝ գմբեթ տաշող,**  
**մեզ են նայում մեր անցյալից...**

\*\*\*

Մի ժողովուրդ եմ ճանաչում,  
որ ապրում է հին դարերից,  
ուրիշներին նա չի ատում,  
բայց խոսում է իր ցավերից:

Անխան է ինքն իր հանդեպ,  
քարկոծում է ամեն հարցում,  
այլոց մեղքը մեջքին առած՝  
տրտնջում է ու հալածվում:

Հնարում է միշտ մի նոր ցավ,  
գանակոծման մի եղանակ,  
կրոնական մի հին վերմակ  
ծածկում է նրա ոտքերը բաց:

Առաջինն է ամեն լավի,  
ու պատառը կու չի գնում,  
տառապելով ճանապարհին՝  
ունեցվածքն է տանու տալիս:

Նման է նա երեխայի,  
որ խաղալիքն ամենաթանի  
զիջում է միշտ ուրիշներին՝  
անկերծ, անբառ ու առանց վարկ:

Ինքնահալած երկրում այդ հին  
կնքվել է մի ծշմարտություն՝  
ամեն ինչ նախ ուրիշներին,  
միայն վերջինը՝ իր մարդուն:

Արդյոք հենց դա՝ չեն վկայում  
պարտություններն անհամար,  
երբ կոիվն է անգամ վարում  
ինքն իր մեղքի քավման համար:

Եվ զայրութի հզոր պահին  
նա դառնում է խիզախ, հպարտ,  
հալածելով դաժան չարին՝  
երկիրն է իր դարձնում անխախտ:

Ճշմարտության մերկ սրով է  
պահում պատիվը երկնածին,  
և մաշվելով, տանու տալով  
փոքրանում է երկիրն այդ հին:

Զարմանալի մի ժողովուրդ եմ ճանաչում,  
ուր աճում են բանաստեղծներ՝ ծաղկի տեսակ,  
սերմը նրանց իրենց երկրում է միշտ աճում,  
բայց ծաղկում է ուրիշների երկնքի տակ:

\*\*\*

Այս լեզուն, բարբառն այս տանջող  
դարձել է աներես մի հյուր,  
գալիս է կնոջ պես կարավող,  
նայում է աշքերով լազուր:

Խննում է, քաշում է մտքից,  
քափում է մազերը ոսկյա,  
ծով է ծիծաղը ծավալուն,  
վառվում են շորերը ոսկյա:

Ոչ գիտե լսել, հավատալ,  
ոչ հարցմունք, պատասխան խոսքի,  
կյանքերի, սերերի վրայով  
քայլում է կարավող խոսքով:

Այս լեզուն, բարբառն այս տանջող  
դարձել է աներես մի հյուր,  
գալիս է, նատում կողքին,  
աշխարհս դարձնում խոռով:

1979 թ.

\*\*\*

Նորից վայրենի բարբարոսը նենգ  
քո հողն է խուժել օրը ցերեկով,  
և հազարապատիկ խաչված ոստանդ  
փոքրացել կրկին, դարձել արճաքամ...

Ո՞վ աստվածներ, իին և նոր աստվածներ,  
որ ցավ ծնեցիք սիրո բերանով,  
ահա, ձեր առջև այրվում է կրկին  
երկիրը խաչի, հողը բիրլիական...

Եվ տասնապատիկ նահանջից հետո  
մի բուռն էլ պիտի ուժեն, վերջացնեն,  
նետիր կրոնի, հավատդ նետիր,  
ես ձեզ կոչում եմ բարբարոսության...

Ատիր մարդկուրյան հավատներն ամեն  
և արցունքը կեղծ, և դրոշը պիղծ,  
նետիր ինչ-որ կեղծ տվել են քեզ,  
թշնամու ձեռքից հաց մի վերցրու...

Կանգնիր, ասում եմ, կանգնիր աննահանջ,  
վերջին ճիգերդ հավարիր ի մի,  
քեզ չի ներեկու անմիտ թշնամիդ,  
քեզ քաղելու է ծիծաղով վայրի...

Անեծք հայրենի թշնամիներին,  
առաջնորդներին՝ թուլամորք ու նենգ,  
բոլորիդ համար գերեզման է մի,  
ու երբեք, երբեք այն չի հիշվելու...

1989 թ.

\*\*\*

Վոավոտն է բուն դրել Արագած լեռան,  
փայլատակում է հեռվից կապոյտ ու ճերմակ,  
ոչ մի մշուշ չես գտնի վառվող ճակատին,  
ամպերը հեռվից են անցնում մշուշարերան:  
Ու քառարն արծվենին՝ վեհափառ ու մուսչ,  
քառել է լեռան բրծված քերծերին  
ու անքրիթ հայացրով՝ ծով կապոյտն անց,  
տեսնում է երկիրը իին, հացի ու կավի:  
Իր դեմ փոված են անծայր, ոսկե դաշտերը բերրի,  
խնկարույր ու գինովցած այգիները բեռնավոր,  
ոսկերերան լճակներ ու կածաններ անմեկին,  
իին աշխարհից փրկված, գալիք դարերը տանող:  
Ծաղիկների հետ խայտող ծաղկանկար աղջիկներ,  
որոնց կուրծքը արևի համբույրներից է բրծվել,  
մայրեր՝ կյանքի ու բերքի, ու մանուկներ երկնարեր,  
որոնց աշքերը կապոյտ արևից են սևացել:  
Ու խորհում է ինքն իրեն դարագլուխ արծվենին  
երկրի մասին այս քարե, երկրի մասին այս կավե,  
որ սերել է բյուր դարեր, տեսել ավար ու ավեր,  
որ սիրել է լեռն իր քար ու լճակներ մարմարե,  
որ երկնել է սուրբ լեզու, որ կրել է սուր սուսեր,  
երկարակուռ ուսերին՝ վառվող, մարող կրակներ:  
Հավատի մեջ մթագնած եկեղեցներ երկնային,  
որ եկել են ծխացող համր ու լուռ վանքերից,  
ու աստվածներ հերանոս՝ սիրո, զինու ու հրի,  
երակների մեջ արև, աշքերում խինոր վերի:  
Դարերն անցել են, ահա, չի մնացել ոչ մի հետք,  
կանգուն կանգնել է նորից արևմուտքից արևելք,  
ազգեր, ցեղեր ու քանակ մոխրացել են հրերում,  
բայց նախրյան դաշտերում գինու երգն է դեռ եռում:  
Լեռները համր են նորից, ինչպես լեռն այն հսկա,  
որ միարձմած երկնքում գնում է մեր ապագան:

\*\*\*

**Պարտվածի երգը լինում է ընկճված,  
ձայնը՝ կերկերուն ու բառերը՝ խեղճ,  
հողը հայրենի՝ վերքերով սնված,  
և վիշտը, վիշտը՝ հայրենիքից մեծ:**

**Շրջում է մոլոր, որովհետև նա  
չի կարող անթարթ մի կետի նայել,  
ամեն մի ճեղքից այս երկրի վրա  
ամորի խոսքն է դեմքին ծվարել:**

**Խսկ ես ասում եմ իմ երկրին պարտված,  
որ քո քշնամին դավադիր ու չար  
երկիրդ է խուժել, մորքել է նա քեզ,  
բայց բղավում է. «Փրկիր մեզ, Տեր...»:**

**Պարտված չես երբեք, հայրենիք իմ սուրբ,  
դու զոհ ես, ինչպես միակն այն վսեմ,  
մատնված քաղաք, երգ՝ ամենազոր,  
որին ուզում են ամենքը տիրել:**

**Չի կորչում երբեք արյունը թափված,  
այն ծավալվում է թշնամու մարմնում,  
և երբ բացվում են դոները փակված,  
վրեժի թույնն է թանձր բարձրանում:**

**Պարտվածի երգը լինում է ընկճված,  
ձայնը՝ կերկերուն ու բառերը՝ խեղճ,  
հողը հայրենի՝ վերքերով սնված,  
ցասումը, սերը՝ հայրենիքից մեծ:**

### ԱՂԹԱՄԱՐԻ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

**Կտուցի կտցի, մեղմ ու բարի,  
մեջքը դարձրած չար աշխարհին,  
աղավնիներն Աղթամարի  
բար են կտրել երկար դարեր...**

**Չույզ աշքերը ծովին անմեռ,  
իրար եենված երկու ախաղեր,  
խաղողի կութ ոտքերի տակ  
տրորում են հույսով ներհակ...**

**Քար են կտրել քարի վրա  
եղնիկները Աղթամարի,**

**և քարակոփ մարդիկ, ահա,  
տեգ են պարզել նրանց վրա...  
Արջն է հսկա ու բամբ թարով  
պատրաստվում իր որսը խլել,  
սուրը ձեռքին մարտիկը բազ  
արջի կողն է սայրը խրել...**

**Պոզահարող վարազն, ահա,  
միսրակել է մարտի մեջ թեժ,  
խսկ ներքնում կուրծքը բերնին  
ձագն է ծծում մոր կարը խեժ...**

**Պատուհանի հենց գոզի տակ,  
որպես երկու արդար լծակ,  
թագավորն է՝ լույսը ձեռքին,  
Ասոծու Որդին է նրա կողքին:**

**Եվ կորողը Աղթամարի՝ որպես վկա,  
ձախ ափի մեջ բարձրացրել է լույսը դեպի,  
հեղաքարոն աստվածների Հիսուս որդին  
օրիներգում է ծնունդը առլը շինարարի:  
ճառագայթներն արեգակի ձգվող մրգեր՝  
նուռ դասական, որից տուֆն է դարձել կարմիր,  
և ամորը՝ ծածկող տերևն,  
որ կառչել է կարմիր քարին և ուզում է հավերժ սնվել:**

Ու խոսում են պատկերները հարքաքանդակ՝  
ամենքի մեջ պահված հավատն այս կյանքի,  
ու շարժվում են նոր պատկերներ՝ հույսին ներհակ,  
երազային ու իրական՝ հավերժ կյանքի լույսից կառչած:  
Տիրամայրն է ոսկեպսակ գահին նստել  
և հայացքը հառել է նա հողի մարդուն,  
նրա գրկին, որ պատրաստ է երկինք թռչել,  
Աստվածամոր սուրբ հայացքով Հիսուս որդին:  
Եվ շարժվում են իրար հակիված բազում դեմքեր,  
որոնց վրա ծանրացել է տանիքը քար,  
ու կենդանի դեմքերը այս պիտի հերքեն  
մեր աշխարհի դեպքերը չար:  
...Հեռու կղզում Աղքամարի,  
ծովի ծփուն հայացքի տակ  
կանգնած է սուրբ Աղքամարի  
վանքը լրված, վանքը մենակ:  
Եվ քարերին, քանդակներին  
աններդաշնակ ու անարվեստ  
բացվել են, տե՛ս, գնդակների  
փոսերը սև, չարով հաստված...  
Բարքարոսի հետքերը այդ,  
պարզված սրտին գեղեցիկի,  
երկար, երկար պիտի մնան,  
վերքն այդ երկար պիտի ծաղկի,  
խղճի նման ժողովրդի...  
Լքված վանքն է լուս աղոթում,  
սպասում է, թե երբ պիտի  
աղոթքը իր հասնի մարդուն:

## ՀՈՒԾԱՐՁԱՆ ԱՊԱՐԱՆՈՒՄ ԶՈՂՎԱԾՆԵՐԻՆ

-1-

Արևն ելավ դառը, անիրապույր,  
այրելու տենդով և ավերումի,  
խայտում են, ահա, բորիկ ոտքերով  
փոքրիկ տղերքը՝ թլոր բարբառով...  
Օ՛, Մշոն դաշտով անցած հերոսներ,  
որ արարում եք երկիրը ձեր քար,  
սարերը կույտ-կույտ  
այրվում են տապից, ցրտից մենավոր:  
Ես այցի եկա անցյալի հուշով,  
եկա սիրելու հուշ ու հիշատակ,  
արևը զամբիկ լեռներից պոկված  
ոտնատակ տվեց և կարոտ, և հուշ:  
Չարացած աստված, այս ի՞նչ շնորհ է,  
այս ի՞նչ կարկուտ է կրակ ու բոցի,  
դժոխքի բերանով, թևերով դժոխք,  
այս ի՞նչ անեծք է թափվում երկնքից:  
Եվ մարդիկ խինդով նայում են երկինք,  
և հնագանի չեն անգամ Աստծուն,  
ազատությունն են ընտրել թագավոր,  
դրա համար էլ բարբառում են բիրու:

-2-

Ուշագնացի դեմքը համբուրող  
ապահովները տաք և ուշքի բերող,  
այդպես վարմեցիր, հայտնվեցիր այդպես  
և հիմա խինդով ծավալվել ես քաց,  
մամոռա, ինքնամոռ քարերիդ առաջ:  
Ի՞նչ ես պատմելու, ասա՛, լսում եմ,  
փորձության ժամը անցել է վաղուց,  
փորձաքար դարձած կտորն այս հողի  
երեկ չէ՞ր, որ իր կրակը վառեց:  
Երեկ չէ՞ր, որ այս սարերի կրծքին

տուն ու տեղ լքած ասպետների պես,  
խոռվ Աստծուց, երկրից խոռվ  
ընկան մամոռտած քարերին թիկնեղ:  
Առաջին անգամ, առաջին անգամ  
սև ազռավները խղճացին մարդուն  
և կտուցները դիակի սովոր  
թաղեցին ժայռի խոռչներում չոր:  
Մայրերը նորից առաջին անգամ,  
խախտելով իրենց օրենքները սուրբ,  
կարմիր շոր հագած ծնկեցին հանգիստ  
փշի պես բացվող վերքերի առաջ:  
Առաջին անգամ, առաջին անգամ  
մանուկները որք՝ կապույտ աչքերով,  
խոտի չոր շյուղը ձեռքերն առած  
խաղացին քո բորբ, բացված վերքի հետ:  
Ազատությունդ, ազատությունդ  
կարմիր է, ահա, բափված արյան պես:

\*\*\*

**Սի** քանի տող վրիպումներ,  
մի քանի տող սիրո,  
ահա, ինչ եմ քեզնից պեղել  
երկիր հողե, կլոր:  
  
**Քարտեզիդ** դեմ կանգնած նորից,  
նորից համառ, իլու,  
երազներս քամուն տվել,  
երգում եմ սերն իմ լուռ:  
  
**Մոռացումից** փրկված մի երգ,  
փրկված մի դեմք սիրո,  
այս մարդաշատ հին աշխարհում  
մի բուռ կարոտ հողե:

**ԿԻՍԱՐԹՄՆԻ ԵԲԱԶ**

Երգել և սեր, և կարոտ,  
և փառք վաղանցիկ,  
ուշ է մեզ համար,  
գերեզմանները կիսաքանդ,  
շիրիմները քարե  
ծիծաղում են բերանքաց  
արդեն մեզ վրա:

Եվ խաչքարեր զարդարուն,  
և քարեր տաշված,  
մամուակալած անուններ  
և փառեր անցած  
պար են բռնել իմ առաջ,  
կոկորդս են սեղմում,  
զվարք երգերը շրթիս  
մեռնում են հատ-հատ:

Ո՞վ է խիդճը մաքրելու  
տեսած, լսածից,  
ո՞վ է ծաղիկ դնելու  
բաց շիրիմներին,  
ծիծաղելը ամոք է,  
լացը՝ խեղճություն,  
իսկ երգելը առավել՝  
մեծ նեղմտություն:

Պիտի խոսեմ ու ապրեմ  
անցյալի հուշով,  
տրորվեմ ու թափալվեմ  
խոսք ու շշուկով,  
և հերոսներին անցած,  
ոք ծեր են հիմա,  
կիիշեմ փառքը նրանց  
նեղմիտ կարոտով:

Եվ ժամանակն արյունոտ,  
և սերերս սուս  
քուրձի նման կլրեմ,  
որպես ամորում,  
թող կարողները խնդան,  
չարք՝ բամբասի,  
այսպես խաղաղ կննջեմ  
բարձին սպասումի:

\*\*\*

Մեր հայրերի շիրիմների  
ու մայրերի սուրբ անունի,  
նրանց ձայնը մեր մարմնի մեջ,  
հոլովույթն այսպես անվերջ,  
կրկնությունը հող ու մարդու՝  
մահերով ու հարությունով,  
բարձրությունով ու անկումով,  
այս ամենով, ամենի մեջ  
հայրենին է անվերջ, անվերջ...

Դրա համար, երբ թշնամին  
ոտք է դնում հողն հայրենի,  
մեր սրտի մեջ վերը է բացվում,  
դող է անցնում սրտի միջով,  
վայրագության, անէացման  
ու վրեժի, ցավի, ցասման,  
գիտակցության սուր կորստի  
նոպաներ ենք մենք ունենում...

Լուծ է սուրբ մեր թշնամու,  
այն անցնում է  
մեր հայրերի շիրիմների  
ու մայրերի սուրբ անունի,  
ապա միայն մարմնով մեր թաճկ...  
Հողը՝ պատիվ, հողը՝ կտակ...

1989 թ.

\*\*\*

Երգի՛ր, պոե՛տ, երգիր սերը  
և քո հողը, և հայրենին,  
հորովելիդ անուշ կանչը  
և հառաջը ընկածների  
թող զիլ հնչեն քո ականջում,  
որպես կյանքիդ չերգածը:  
Կանցնեն օրերը, ինչպես գարուն,  
ինչպես ձմռան իրիկնամուտ,  
տեսիլների նման գումեղ,  
երազների նման անգութ,  
կզա ձմեռ մի իրիկուն  
քո մարմնին և քո հոգուն,  
կշափես դու սիրո ճամփան,  
հայրենիքիդ սերը անհուն,  
թե չգտնես սերը անբիծ,  
թե չգտնես քո հայրենին  
քո օրերի նման մաքուր,  
դու կմնաս մենակ ու մերկ,  
դու կմնաս անօթևան,  
որպես կյանքում չգրված երգ,  
որպես կորած մի հանգրվան:  
Ու կծխա քո հայրենին,  
որպես հոգուդ օտար մի բառ,  
քո երգերի նման անտուն,  
քո երգերի նման անտեր:  
Երգի՛ր, պոե՛տ, երգիր սերը  
և քո հողը, և հայրենին,  
հորովելիդ անուշ կանչը  
և հառաջը ընկածների  
թող զիլ հնչեն քո ականջում,  
որպես կյանքիդ չերգածը:

**ԵՐԵՎԱՆ****-Ա-**

Երևանի մասին խոսելիս  
հիշում եմ վանեցուն այն ժեր,  
որի աչքերը խորն էին ընկած,  
և նայում էր խիտ խորշոմներից:  
Իմ կարոտից իր կարոտն էր առնում  
և նայում էր ինձ՝ կլոցելով աչքերը,  
մերք խաղում էր դեմքը, մերք՝ տագնապում,  
ուզում էր միշտ մեղմել իմ խոսքերը...

Եվ փոփոխվում էին դեմքի գծերը,  
և գույները՝ բոլոր երանգներով,  
խաղ՝ մոռացման մեջ, անսքող մի խաղ,  
որից ապշում էին իմ աչքերը:

Երևանի մասին խոսելիս  
էլ ի՞նչ կարող եմ ասել ձեզ,  
եթե դուք չեք տեսել այն ծերունուն  
և, ուրեմն, չգիտեք սիրել:

Ոչ ոք չի կարող հասկանալ մեզ  
և արդեն ծերունու հետ՝ նաև ինձ,  
Երևան, ես սիրում եմ քեզ,  
ինչպես սիրում է Վանը վանեցին:

**-Բ-**

Ուզում եմ քեզ բողնել, հեռանալ  
ու ես չնայել, ու չնայել քեզ,  
կամարներ, փողոցներ, նեղինի փողոցներ,  
Երևան, իմ սեր Երևան:

Չնայել աչքերիդ, սերերիդ չնայել,  
մոռանալ ծառերդ մենակյաց,  
աշունդ ուշարափ, փոքրիկ աշունդ,  
Երևան, իմ միակ Երևան:

Արևի ծակծկող, ծույլ ու հիվանդոտ,  
սճարաններդ բամբասող ու գորշ,  
մարդկանց՝ խոռված, վեհերոտ ու ինքնիշխան,  
Երևան, միամիտ Երևան:

Թողնել ու գնալ, անդարձ ու մենակ,  
շոգից ու ցրտից հեռանալ,  
փողոցներում ջրի հետ մանուկներ սևաչ,  
չտեսնել, չկանգնել, հեռանալ:

Աղջիկներ արևոտ, կռապաշտ աղջիկներ,  
հոնքերի տակից հետախույզ,  
արևին հանձնված, արևից խանձված,  
Երևան, սիրակե՛զ Երևան:

Ուզում եմ քեզ բողնել, հեռանալ,  
չտեսնել, չսել քեզ երբեք,  
բայց ջնջել աչքերից գծերն այդ լեռան,  
անզոր եմ, իմ բախիծ Երևան:  
1979 թ.

\*\*\*

Թող աշխարհն իր երգով խնդա,  
մարդիկ ցնդած ծափահարեն,  
դու երգերիդ բեռով տնքա,  
իմ ժողովուրդ, իմ ապավե՛ն:

Ժամանակը բող մոլորվի,  
և ազգերը ձգտեն փառքի,  
դու ազգերի բախտով ցնծա,  
մի բուռ արյուն, իմ ժողովուրդ:

Եվ դարերում հազարամյա,  
հազարամյա քարերիդ հետ  
ազատության տենչով խնդա,  
ազատածին իմ ալեհե՛ք:  
1970 թ.

**ԱՏՎԿ**

Քո թշնամին ուզում է, որ մոռանաս,  
որ չի շենք քո անցյալն էլ մոտակա,  
որ փառք տաս գոյությանը քո ներկա,  
և ապրես երազի մեջ ու անմասն...

Եվ կտրես շղթան ապուպապերի,  
ինչպես հավը և բռչունը մեզ ծանոթ,  
անկապության օրենքների աստվածը  
չունի ոչ հուշ և ոչ հավատ ազգերի...

Նա ծաղկում է չեղոքության օրենքով  
և գաղտնատես միշտ իրենն է մատուցում,  
իրենից դուրս թշնամի է ամեն բան,  
և առավել՝ արարածը մտածող...

Իմ ժողովուրդ, մարդկության չափ տառապած,  
ամենքի հետ, ամենից շատ միշտ ներող,  
իմացիր դու, որ թշնամին միշտ արքուն  
չի ներելու անգամ սերը քո հորդող...

Ինչ տվել ես, համարվել է մի քիչ քիչ,  
պարտական ես ապրել ամեն մի դարում,  
կեղեքել են, համարվել ես կեղեքիչ,  
մոխրից ելել՝ համարել են արարում...

Դ-քա համար Աստված լրեց Աղամին,  
դրա համար դեմքը շրջեց նա մեզնից,  
քե ուզում ես տառապյալին քո հիշել,  
շրջիր դեմքդ անհայր, անմայր ծնունդից...

Եվ բարձրացիր, և նզրվիր քո լեզվով,  
և խոռվիր, ինչպես արյունդ է խոռով,  
երգ չի գրվում մեռած և ոչ մի լեզվով,  
երգ չի գրվում մոռացումի արյունով...

1986 թ.

**ԱՆԱՀԻՏԻՆ**

Եվ դու ճախրում էիր այս երկրի վրա,  
և դու բերրի դաշտերի վրա լցնում էիր գինի,  
և հայտնվում էիր աստվածությամբ հպարտ,  
իբրև հավատ, իբրև սեր և հղիություն:

Եվ տավիր կար քո ձեռքին, և կին էիր դու,  
քո մատների շեղ, համանվագ զարկից  
զարթում էին մարդիկ, շեներ ու ցեղեր,  
և դու նվազում էիր առավոտվա տեսքով:

Եվ տաճարներում, և քո տաճարում  
քրմերը՝ ցավից ու հավատից  
ամփոփված իրենց էությունում,  
երազում էին թեզ ու արև էին երգում:

Խլրտում էր հողը բերրի ու վայրի,  
խլրտում էր սիրտը պարմանուիու այն շնկ,  
և աշքերում կապույտ, կապույտ աշքերում  
արքնանում էին պատկերներ սիրո ու մայրության:

Եվ ցավի պես ճնշող ու հոգնաբեկ,  
և հույսի պես տիսուր ու միամիտ,  
աշքերում այդ կապույտ, աշքերում այդ ծավի  
օրորվում էին սիրո լուսարացներ:

Քույր իմ անիրական, և երազ, և միփ,  
հեռուների իմ սեր, հեռուների կարուտ,  
քո տեսքով և շարժումով մանկան  
փողոցները լի են աստվածներով:

Եվ տավիր կա նրանց ձեռքերում մանկական,  
և սերեր՝ աշքերում, և կարտուներ՝ հոգում,  
ես չկայի, և դու ճախրում էիր այս երկրի վրա,  
իբրև հավատ, իբրև սեր և հղիություն:

\*\*\*

Առավոտ է իջել,  
բարձրանում է օրը,  
ու աղմուկ է դառնում  
լոյսի մերկոքյունը:  
Քամին մի պահ սառել,  
բողել բան ու գործ,  
կացնում է իրար  
երազները քնկոտ:  
Մինչդեռ լեռն անբիծ,  
արքայավայել թիկնած,  
փեշերին է գցում  
զիսի մշուշն անթագ:  
Պարզ երկնքին նայող  
զույգ աչքերի նման,  
սպասում է խինդով՝  
հույս ու կարոտ պահած:

\*\*\*

Ելի արյուն, ելի գետեր,  
արյան երգիչ դարձա, Տե՛ր,  
ինչի՞ս են պետք նման երգերը,  
Տե՛ր, ասա մեղքը մեր...

Չոհված երկու առաքյալի,  
սրբերի տեղ երկու զոհված,  
Տե՛ր, միքե դրա համար,  
չես հանդարտվել դեռ:  
Անմեղ մանկանց նախճիրների,  
կես միլիոն մանկանց համար,  
ո՞վ պիտի մեզ մխիթարի,  
խաղաղեցնողն ո՞վ է, Տե՛ր...

Գնում եմ ես առանց բարի,  
բարի գիշեր ասելու,  
Տե՛ր, մխիթարվիր մխայն,  
մենակությամբ մխիթարվիր...

1991 թ.

**ՍՊԱՍՈՒՄ**

Հայ ենք մենք, սիրասուն եղբայրներ,  
արյունով, հավատով, կամքով մեր,  
թշնամին զոյի պես թաքուն  
մեր տուն ներխուժեց զիշերով...

Արյունը մեր գետի պես հոսեց,  
դիակներ թռղեցինք դաշտերում,  
մեռնելով կրվեցինք՝ մեր հոգին,  
հավատը մեր պահած դրոշի պես...

Դաշտերում դիակներ անհամար  
(մարդկության կրթության թանգարան),  
զայի պես քրքջաց թշնամին,  
շարության ուժերը միացան...

Խնդացին դիակին մանկամարդ,  
լիգեցին ոսկորները մեր մանկանց,  
կաղկանձը ծխի պես բարձրացավ,  
թշնամին դարձավ կատարյալ...

Հավատի սուրբ լեռան կարոտով  
և սուրբ Աստծու ոգով հավերժող,  
տվեցինք տաճարներ ու վանքեր,  
տվեցինք և մարմին, և ոսկոր...

Տվեցինք անցողիկ ամեն բան,  
բյուրի գեմ մենք ելանք շապիկով,  
զայլերը հազեցան մեր արյամբ,  
զայլերը ամրացան մեր ոգով...

Խաչվեցինք Աստծու պես մեր միակ,  
ազգովի բարձրացանք Գողգոռա,  
Տե՛ր, փրկյա,- գոչեցինք միաձայն,  
ձայնը մեր տարածվեց ծագեծագ...

Աշխարհը՝ մանկամիտ քնի մեջ,  
աշխարհը՝ արքեցած քնքանքից,  
մեզ պատաճ, թաղման հաց առաքեց,  
աշխարհը՝ պոռնիկի լացի մեջ...

Տասն անգամ մորթեցին մի դարում,  
տասն անգամ հատեցին մարմինը,  
տասն անգամ լափեցին մեզ լույսի տակ,  
լուսինը լոկ սուլաց արյունից...

Եվ ջարդված, հալածված ու անտուն  
բռնեցինք նահանջի մեր ճամփան,  
մեր ճամփան՝ գայլերի աչքի տակ,  
սեփական հողի մեջ՝ աքսորյալ...

Եվ հիմա քարավանը մեր հալածված  
կանգնած է լեռան մոտ ծովացած,  
ձգվում է լեռն ի վեր առ Աստված,  
փորձության աղոթքով մի վերջին,  
որ փրկվենք կամ հանձնենք մեր հոգին...

1991 թ.

\*\*\*

Քեզ ասելու ոչինչ չունեմ,  
արյունս քոնն է,  
և եթե պետք է ինչ-որ բան ասել  
փրկելու համար հուշարձանները,  
և եթե պետք է գրել ինչ-որ բան  
ծածկելու համար մազաղաթները,  
քոնն է արյունս,  
ու հաստատ գիտեմ,  
որ այն չի կորչի,  
վկա անցյալի հուշարձանները,  
մազաղաթները,  
վկա այս ներկան,  
ու աչքերը մեր՝ գալիքին հառած:  
1967 թ.

## ԶԻՆՎՈՐԻՆ

Այսօր քեզ եմ երգում, զինվոր,  
ինչպես հին քերթողները մուսային,  
և քո ոտքերի տակ ժաղիկները ցանելով՝  
վերակոչում եմ ապրելու, ապրողներից առավել:

Դու բառից մեծ և մեծ պաշտամունքից,  
խաղաղության հասնող դու միակ ճանապարհ,  
հպարտ են ժողովուրդները, որ հաղթելով կներեն,  
և հաղթությունն է միայն սիրո ճամփան:

Ընկած են աստվածների մարմինները մարմար,  
և արյուն է կարում պարտվածների սրտից,  
ժողովուրդն իմ ծարավ է քո հաղթության քայլքին,  
դու ամենաքանիկ աստված աստվածներից:

Ո՞վ աստվածներ հին ու նոր,  
հպարտ ու ինքնասաց արքաների նման,  
դուք հաղթելիս շներող, պարտվելիս՝ նույնպես,  
խոնարհեցեք զուխնները ձեր գոռող:

Մեզ չփրկեց և ոչ մի պաշտամունք,  
վկա՝ ավերված Բագարանը մեր հին,  
մեր աստվածները՝ գերի օտար զինվորներին,  
մեր երկրից մեկ-մեկ վտարվեցին:

Սակայն ամենաշնչին հաղթանակը վկա,  
որ վերադարձեց մեզ հայատությունը մեր հին,  
ահա, նրա անունից երդվում եմ հիմա  
զինվորի առաջ, խոնարի մինչև գետին:

Ո՞վ խաղաղություն զինվորի շրջունքից,  
որ ծնվում է միայն դաշտերում կանաչ,  
այդ դաշտերից բերված կարմիր ժաղիկները  
շաղ եմ տալիս, ահա, սուրբ ոտքերիդ առաջ:

Մեր ոգու զինվորին, որ կյանքն է մեր,  
մեր գերության բոլոր ճամփաններին,  
խոնարիում եմ կամքս, սիրտս միակ,  
ինչպես քերթողները հին մուսաններին:  
1981 թ.

### ԹԵՇԼԵՐՅԱՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԻՆՈՆԿՄՈՒՄ

Գնդակ էր թողած մի ազգի վրա,  
բայց դատարանում մի լավ ժաղըեցին,  
նրան, որ եկել էր ազատ ապրելու,  
մարդասպանի շապիկ հազցրին...

Ծաղրեցին խոպոտ հազ ու ծիծաղով,  
խելարյուրեցին փաստ ու փաստաքուղը,  
օրը ցերեկով մարդկության առաջ  
առևանգեցին մի ողջ ժողովուրդ...

Արեցին, ինչ որ կարող էին իրենք,  
հաշվարկ անելով խիդը մարդկային,  
հուսահատված եմ, Աստված՝ չարակամ,  
որ չես տարրերում մարդուն ու դնին...

Մարդուն ու դնին խառնելով իրար՝  
եկել հասել ենք ասոմի դարին,  
լինել-չլինել, ծիծաղելի բան,  
այսպիսի լինել պետք չէ աշխարհին...

Գնդակ է թողած մի ազգի վրա,  
բայց դատարանում մի լավ ժաղըեցին  
նրան, որ եկել էր ազատ ապրելու,  
մարդասպանի շապիկ հազցրին...

\*\*\*

Ելնեմ սարերդ, ձորերդ, լացեմ,  
փակեմ աշքերս, կապույտով օծեմ,  
վարագոյրները՝ բառերով փակված,  
ուշիմ գրտած երգերով բացեմ,  
խաչեմ քարերդ՝ արդեմ մամռոտված,  
թերթեմ երգերդ վաղուց մոռացված,  
զծեմ սահմանդ քո անքննելի,  
ելնեմ բերդերդ՝ մահով ահալի,  
փորեմ անհատակ մի մեծ գերեզման,  
թաղեմ անցյալդ ու խնդրությամբ լամ:

\*\*\*

«Ո՞ւմբ, ո՞ւմբ հասցրեք...»:

Ումբ հասցնողը 14-ամյա պատանի Կ. Թևքելյանն էր:  
Շապին Գարահիսարի պաշպանությունից

Մայրդ պիտի քեզ օրորեք,  
մանչուկ հայի՛, քաջ տղա,  
դեռ նոր պիտի սովորեիք,  
որն է լավը, որը՝ վատ...

Իսկ օրենքով ատելության  
կանգնած էիր դիրքերում,  
մահը՝ որպես սուրբ խաղալիք,  
կատակում էր քո դեմքին...

Վազգում էիր դու երկիմաստ,  
խաղը մահ էր, մահը՝ խաղ,  
ընկնում էին ջահել տղերը,  
(դու այդ երբեք չտեսար)...

Ու ծպտում էր նա ծարավի,  
ծպտուն դեմքով հպանցիկ,  
և անաստված գնդակները  
թվում էին բափանցիկ...

Բերդի շրջանն էր օղակվում,  
քարերն անհույս էին լալիս,  
դատարկվել էր կողովդ ծակ,  
կյանքիդ կողովը լույսի...

Մայրդ պիտի քեզ օրորեք,  
մանչուկ հայի՛, քաջ տղա,  
վերքդ երկինք, սերդ՝ հողին,  
մահդ է լալիս, հայ տղա...

### ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ...

Դու հեռացար, Էլ չես զալու,  
որպես մի հին անուշ երազ,  
և դարերի վրա անծայր  
հայացքը քո պիտի մնա...

Կյանք եղավ մի խոտացում,  
և դու երբեք չխօսր վերից,  
հայացքը քո չկտրեցիր  
այս աշխարհից, քո երկրից,  
ժողովրդից քո ինաստուն,  
որ չարի հետ եղավ դրկից...

Մնաս բարով, իմ հին երազ,  
մոր պես լյուբոյ, հոր պես խոժոն,  
և դու պիտի մնաս անհաս,  
ինչպես լեռն այն կրակ ու բոց,  
երդեկող լեռն այն ինչպես,  
որ բխում է կարոտ ու հուշ,  
ինքը մքնում, ցավի մեջ խոր,  
սիրտը պայծառ, ձայնը հզոր,  
հզոր ինչպես Դավիթն անվախ,  
որ չի տարել քար ու կապաճ,  
և զայրութի ահեղ պահին  
պիտի ժայրքի բույն ու սարսափ...

Եվ աստվածներն հազարամյա  
պիտի դառնան տունը իրենց,  
ոչ անառակ որդու նման,  
այլ՝ որպես տերն այս երկրի,  
ու հայրաբար պիտի ներեն  
ժողովրդին ճամփից շեղված...

Դու չես եկել, բայց դու կգաս,  
որպես մի հին անուշ երազ,  
և դարերի վրա անծայր  
հավատը քո պիտի մնա...  
1985 թ.

\*\*\*

Օրերի փոշին դեմքս կմաշի,  
և կարոտներս կմերնեն հատ-հատ,  
դու չես մոռանա վիշտը ուրիշի,  
քո թշնամին է խավարը անտակ:

Քեզ համար մեկ է հնդիկ, թե հարեշ,  
միայն թե սերը մարմին ունենա,  
միայն թե դեմքը ցավից չտնիքա,  
միայն թե հոգին վերքեր չունենա:

Ու թեկուզ, այո՛, երկիր Նախրիմ՝  
հազար վերքերի, երգերի երկիր,  
թեկուզ Նախրին ցավերից տնրա,  
բայց հավատամքի դեմքը չխամրի:

Քո երգը սերն է, քո ուղին հստակ,  
դու չես կորցնի ոչինչ դարերում,  
թող հորովելդ հավիտյան զնուա,  
տխուր, համրորեն, որպես արալեզ:

Երկի՛ր իմ, սե՛ր իմ, իմ պայծա՞ն երազ,  
ես հավատում եմ քո ծաղկող օրվան,  
թեզ՝ կարոտների անսպառ երազ,  
ինձ՝ երգդ կյանքի, անկումներդ չար:

### ՃՇՄԱՐԻՏԻ ԿԵՂԾ ՄՈՒՆԵՏԻԿԸ

Քեզ քողություն, իմ իին երկիր,  
քեզ քողություն,  
արևմուտքից մինչ արևելք  
և դարերից այն հեռավոր,  
որ բոնեցիր քո սուրբ ճամփան,  
մահվան ճամփան ճշմարտության,  
քեզ քողություն:

Կուրանում է հավատը իմ  
կեղծ խոսքերից բացահայտման,  
և կույրի պես ճշմարտախոս  
կրկնում եմ ես հազար անգամ՝  
քեզ խաչեցին ու պարզեցին  
սրտի վրա քար մարդկության,  
ու ոնց ներեմ խոսքերը կեղծ  
ամենօրյա զրպարտության:

Դու խիղճ էիր, ոչ երբեք խեղճ,  
գերիվարած չունես մի կին,  
բայց խաչեցին ու թքեցին  
մարդուն նայող քո պարզ դեմքին,  
և հաղթ պահին քո վեհության,  
և մորքուված պահին քո սուրբ  
դու խղճի հետ էիր բարուն,  
և ոչ երբեք մութ կրքերի:

Արյան դիմաց մանուկների,  
զոհված հղի կանանց դիմաց,  
զոհված բոլոր հանճարների  
և այրերի՝ խաչքար դարձած,  
այս ամենի համար մի օր,  
այս ամենին ի պատասխան  
երկիրն այս հողե, կլոր  
վարձն իր չար պիտի ստանա:

Պիտի խնդա աղջիկն հայոց  
և պատանին՝ ցավից կծկված,  
ահը մահվան պիտի ցնդի  
այն օրերի պես հաղթապանն,  
և հատուցման հզոր պահին  
թշնամի է ամեն մի մարդ,  
ով թշնամուն չնշին զրա,  
ով հավատա չարին ընկած:

### ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀՈՒԾԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Բոլորդ,  
խոնարիեցեք բոլորդ  
զլուխները ձեր,  
նրանք իրենց կյանքը,  
իրենց եռթյունը  
խոնարիեցին անմասն  
աներկվությամբ:  
Ոչ մի բառ,  
շշուկ,  
բացականչություն,  
անգամ մտովի,  
անիրաժեշտ չէ:  
Խոնարիվեցեք, մարդիկ,  
նրանց մեջ ամեն ինչ  
վեհ էր ու սուրբ:

### ՕՐՀՆՅԱԼ Է

Ասա՝ լո՛յս, լո՛յս, լո՛յս,  
կրկնիր առավոտից,  
թող հոգնություն զա և  
օրը կեսօրվի:

Ասա մինչև կեսօր,  
մինչև մայրանալը,  
և երբ ծնվի նորից  
հազար անգամ ծանոք  
քո արևիկ որդին,  
հոժարությամբ կոչիր  
Մհեր, Վահագն, Արեգ:

Ասա՝ լո՛յս, լո՛յս, լո՛յս,  
թող բարություն լինի,  
և առավոտ լինի,  
և արեգակ:

Սովորեցրու նրան,  
ասա՝ լո՛յս, լո՛յս, լո՛յս,  
այստեղ կանգնիր, լոիր,  
մնացածը ինքն է:

\*\*\*

Նետի՛ր, լսո՞ւմ ես, մոմը դյուրաքեկ,  
հերիք է չարի յուղով լուս ծխալ,  
թեզ թալանել են, այրել են, խարել,  
ուղիղ ճշմարիտ դարձրել սխալ:

Արևն են առել սրտիդ մեջ այրվող,  
մորթել բագինիդ աստվածներին մեծ,  
Վահագնի սուրբ ձեռքիցդ խվել,  
բուրվառ ու խաչ են տվել լուսնից լուս:

Անահիտ աստծու զոհասեղանին  
ցոլում է տիսուր պատկերը սրբի,  
ո՞վ պիտի նրա մարած սրտի մեջ  
հզոր մայրության հավատը կնքի:

Ո՞վ պիտի երգի բամբ երգերդ զիլ,  
Գողթան կարոտը ո՞վ պիտի ծնի,  
ո՞վ է իմացել այս լոյս աշխարհում  
մայրը հաղթական իր որդուն լրի:

Նետիր, լսո՞ւմ ես, մոմը դյուրաքեկ,  
հերիք է այլոց հավատով տնքալ,  
արքայական էր և լեզու, և խոսք,  
և արեգակունք աչքերը նրա:

**...ԵՎ ԱՆՎՆՅ ՓԱՌՔՈՎ**

Կայքով հասարակ և անանց փառքով  
ճոխ սեղանի շուրջ կնատեր ծերը,  
նրանից ձախ, աջ, ին արյան կարգով  
կնատեին տան բոլոր մեծերը...  
Եվ նահապետի հոգնած բազկի հետ  
կշարժվեր տիկնոց և հարսի օրը,  
պետության ներսում պետություն էր նա,  
և նրա բառով կապրեին բոլորը:  
Ըստ կարգի շարված և ըստ տարիքի,  
և զրոյցն անգամ պատշաճ ու հարգի,  
հավատի անթեք կրակը վառած՝  
ճաշը կընթանար մեծ ընտանիքի:  
Լոկ փոքրիկ տղեն, վերջին թռոն արու  
իր անկապ խաղով ու ազատությամբ  
կիսառներ կապը մեծի ու փոքրի  
ու կելներ գիրկը ծեր նահապետի...  
Իսկ զրոյցն իրենց գինու հետ խառնած,  
Տիրն էր սրբազն ու Վահագնը քաջ,  
օրհնություն կտային Անահիտ աստծուն  
ու նոր կրմաքեին շեմին հաղթության:  
Սեղանի վրա կենար գինին,  
լույսեր կվառվեին սեղանի վրա,  
մեծ տիկնոց հայացը ծեր նահապետին՝  
մինչև ավարտվեր ճաշը սրբազն:  
Եվ ամեն մի խոր, և ամեն մեկ բառ  
կարտասանվեր օրվա, երկրի գործերից,  
տունը՝ զիվորյալ, ամենքը՝ զինվոր,  
բացի ալևոր, ծեր նահապետից:  
Կրուրեր դաղձի, ծիրոնի բույրը,  
կելներ գոլորշին կավե գավերից,  
մորթված երինջի բառաչը վայրի  
կմարեր տտիալ գինու խավերում:

Դաս էր սրբազն ամեն ճաշկերույր,  
և հյուրը՝ օրվա սրբազն պատզամ,  
կանայք սևաթույր՝ հարս ու աղջիկներ,  
պատիվ ու հարգանք՝ հյուրի աշքերում:  
Չկան խնկահոտ կանքեղմներն իհմա,  
բայց հոտը վաղուց ներծծված է մեր մեջ,  
և վայ, ով չարի կարը կրմպե,  
գինու հետ խառնած կիրքն անպարկեշտ:  
...Եվ խուլ թնդյունից արբունքի, սիրո,  
զինանոցների նետերը սուրսայր  
կորոյային վերձիգ, կպարեին համառ,  
ինչպես տղերքը քեֆի սեղանին:  
Կայքով հասարակ և անանց փառքով  
ճոխ սեղանի շուրջ կնատեր ծերը,  
նրանից ձախ, աջ, ին արյան կարգով  
կնատեին տան բոլոր մեծերը...  
Եվ նահապետի հոգնած բազկի հետ  
կշարժվեր և լի, և դատարկ օրը,  
պետության ներսում պետություն էր նա,  
և նրա բառով կապրեին բոլորը:

\*\*\*

Գինետան դրները փակեր,  
կարսները, հորերն ամեն,  
վանքերը, գրքերը փակեր,  
գրքեր՝ աշքեր կապող:

Երկիրն այս և իին, և փոքր  
կարուս է ձեռքերի մաքուր,  
երկիրն այս սովի, ավարի  
կարուս է ձեռքերի ամուր:

Շրջեցեք ձեր դեմքերը հոգնած  
ավերից, խաչերից բոլոր,  
թշնամին զալիս է հավաքված,  
չի սիրել, չի սիրում աղոթող:

\*\*\*

Յավն է եղել ինձ առաջնորդ,  
և այդ ցավը դու ես,  
հազար անգամ մորթված հանձար,  
Հայաստան իմ երկիր...

Անարգել են դահճի նման,  
քրել են քո դեմքին,  
ոտքերիդ տակ խարույկ վառել  
ու ժպտացել հանգիստ...

Հոգեւոր է խաչդ եղել,  
տնքացել ես ցավից,  
միշտ հպարտ ես դու քեզ պահել,  
անարգված իմ երկիր...

Այդպես ամեն մի հանձար  
բարձրանում է խաչի,  
մարդկությունը խավարի մեջ  
ուշ քեզ կճանաչի...

Ո՞վ է տեսել մեծ կամ հզոր՝  
խայտառակ իր փառքով,  
դու հասարակ, դու իին ու նոր,  
իմ Հայաստան երկիր...

1986 թ.

\*\*\*

Ինչպես սերը խոպացի Դանթեի  
աճում էր լուս վտարանդի սրտի տակ,  
այդպես սերն իմ նվազում է օր օրի  
այստեղ, ահա, հայրենական հարկի տակ...

Կրկնակի է ցավը սրտիս ծանրացել,  
օտար շունչը էլ չի բերի մոռացում,  
հայրենիքում ծանր է ապրել շղթայված,  
հայրենիքի մահը ցավ է կրկնակի...

**ԳԵՂԻ ՄԵԶ ԵԿՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ**

Մի ոտնաչափ տարածություն,  
փոքրիկ, փոքրիկ մի Հայաստան,  
և գրիչներ բազմավաստակ,  
և պատմություն վիրահատված;

Հազար ճամփով անցած կարուտ  
և հավատի ընդուստ երգեր,  
փոքրիկ քառս, փոքրիկ երգեր,  
ապագայի առողջ սարսու:

Բլուրների վրա կարմիր,  
կարմիր սովեր, կարմիր արև,  
հեգ ճամփորդներ կապույտ կանչի՝  
բլուրներում լուս բափառող:

Եվ անսասան մրիկ ու հողմ,  
անօրեկան ուղնորներ՝  
հայացքները մի սուրբ լեռան,  
և հորիզոն մի մշուշոտ:

Տարածայնիկ ու տարեգիր  
Խորենացուց մինչև Չարենց  
մի լուս ճամփորդ՝ աչքը երկինք,  
աստվածապաշտ ու մարդամոտ:

Սերը՝ հառաչ, ցավը՝ հառաչ,  
երազները՝ կապույտ, կապույտ,  
Աստծուց ծեծված, մարդուց ծեծված,  
մոլորվել է իր ձորերում:

Ո՞վ պատմության դժբախտ կատակ  
և մոլորված իմ պատմություն,  
և լեռներից քո հալածված,  
և մարդկանցից ինքնապաշտպան:

\*\*\*

Այնպէս խաղաղ են ծնվում հանգերը  
կարոտով անափ Գողթան երգերի,  
բողեցինք եեռվում մեռնող երգերը,  
սրտի հետքերը՝ Գողթան երգերում:

Մատյաններ թողինք,  
թողինք տուն ու տեղ,  
հավիտյան լացող սերերը մաքուր,  
թողեցինք ապրած մեր տարիները,  
սարերը մեր սուրբ թողեցինք այնտեղ:

Օտարուրյան մեջ մնացին անդուռ  
մեր շեն ու ավեր շինուրյունները,  
մեր աստվածների սեղանը թափուր,  
թափուր մնացին մեր տունն ու տեղը:

Մարեց ծուխը ամապ մեր երդիկների,  
պատշզամբները մնացին անդեմք,  
հավատի սյունը կտրեցին տակից,  
չորացավ անհետ մեր սրտի բարդին:

Այն ե՞ր էր պոետն իր երգերով զինջ,  
հանգերով զնզուն երգում իր հողը,  
թողեցինք ամենն ու հիմա նորից  
երգում ենք կյանքի նորելուկ ծուխը:

Երգում ենք, քանզի երգն է դարերում  
մոռացման տախս վերքերը մեր սուրբ,  
երգում ենք, քանզի երգերի հրում  
անհաշու է կոփվում հաղորուրյան սուրբ:

Մատյաններ թողինք,  
թողինք տուն ու տեղ,  
թայց, տե՛ս, ելնում է հայրենի ծուխը:

Այնպէս խաղաղ են ծնվում հանգերը  
կարոտով անափ Գողթան երգերի,  
թողեցինք եեռվում Գողթան երգերը,  
նորելուկ վերքեր՝ Գողթան երգերում:

\*\*\*

Հոր Երանելու փորձությամբ խսովվ  
և առանց ժամկետ չարչարեցիր ինձ,  
շահից ու փառքից քշվեցի մի կողմ,  
բայց նորից, կրկին ինձ հալածեցիր...

Հանապազօրյա հացը՝ սուրբ նշխար,  
տվեցիր դառը արցունքի միջով,  
անգութ վարվեցիր, Հայաստան աշխարհ,  
օրիներգուիդ հետ՝ փառքիդ տենչացող...

Որովհետև քո տերերն ընչաքանց  
անօրեն են միշտ և միշտ անաստված,  
զավակներին քո տիեզերաբաղձ  
այլոց ձեռքերով դու դասդասեցիր...

Ինչո՞ւ չզգամ ես ինձ ապարինված  
և ինչո՞ւ նայեմ քինոտ աշքերով,  
ճակատագիրը այդպես է գրված՝  
հավատարիմն է սպանվում սրով...

1987 թ.

**ՊԱՍՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔԱՐՏԵԶԻ ԱՌԱՋ**

Եվ դու իմը կլինես մի օր,  
երբ ոչ մի տեղ, ոչ մի ժայռում  
երկրագնդի  
չի արձակվի ոչ մի գնդակ  
(անհնարին խաղաղություն):

Անհնարին դու իմ բերկրանք,  
այդքան մոտիկ ու հարազատ,  
այդքան հեռու հայրենի հող  
և նույն սերմից սերած իմ ցեղ:

Եվ դու իմը կլինես մի օր,  
երբ աշխարհը դառնա իլու,  
երբ գետերը վազեն հանդարտ,  
երբ խոհերն աննպատակ  
դառնան ներդաշն միասնություն...

Խաղաղություն այս աշխարհին,  
խաղաղություն ծեզից մինչև ծեզ,  
հողագնդին ոչ մի արցոննք,  
և օրինություն ողջ աշխահին:

Եվ դու իմը կլինես մի օր,  
երբ որ չարը երկրից ցնդի,  
երբ անմիտը կգա խելքի,  
երբ աշխարհը արդարամիտ  
կրողոքի:

**ԽՈՍՔ ՀՐԱԺԵՇՏԻ ԵՎ ՍԻՐՈ**

Գու տուն մտար, երբ հայրենի քո երկնքում  
տերյանական տխրությունն էր թևեր առել,  
համատարած մի տխրություն, մի որբ նվազ  
նախրական շրբունքներին էր քո սառել:

Կարսից փախած, քո աշքերում տեսիներ չար,  
հալածական, որպես նվազք քեզ դյութող,  
մի սուրբ նվազ՝ նվաղումի ու հարության,  
որից զատվել ու ազատվել չէիր կարող:

Սակայն քո իին, դանքեական առասպելում  
ուրվագծվող պատկերները քեզ հալածող,  
պրկում էին քո շուրթերից սրինգն այդ մեղմ  
քո նվազով քո տեսիլքը օրիներգելու:

Եվ դու այդպիս չհասկացար, և ձեռքը քո՝  
համանվագ նույն մեղեդու օրիներգության,  
առավ սրինգը նույն դյութող ու մեղմորեն  
երգեց երգեր վաղուց ծանոթ, վհասումի:

Չայն էր ծանոթ, լսում էին քեզ շուտափույթ,  
հիշում էին քո նվազով հենց այն մեկին,  
որի սրտում նախրյանն էր այնպիս տխուր,  
նախրյանը անհուսալի, նախրյանը այնպիս քեկող:

Եվ սրինգը քո ձեռքերից ընկավ գետին,  
դու կանգնած էիր իին նախրյան փոշոտ ճամփին,  
և արևն էր նորից ելնում քրմի նման,  
արևը իին նոր հագուստով՝ բոց ու վառման:

Եվ ենում էր արևը ծեր շտապումով  
իին ճամփերի, քաղաքների, մարդկանց վրա,  
առասպելված ցավիդ վրա իիր ցանելով,  
լսում էիր ծնծղաների ձայնը դյութող:

Եվ դու այդպէս չհասկացար, որ քո սրտում  
նաիրյանը դարձել է մի անհուն կրակ,  
քո մատների դողդոջ զարկը համանվագ  
դարձել է լուրջ ծննդաների արթնացման զանգ:

Վաղուց դյուրված քո շուրջերի ոլորանում  
ուրիշ մի սեր, ուրիշ աշխարհ է վեր հառնել,  
և նաիրյանը փոշոտ, գետնատարած  
քո հոգու մեջ արևների նոր եղերքով է բարձրացել:

Գու հասկացար, որ մեռնողի քո աշքերի դեմ,  
մարմնի առաջ պետք չէ բնավ ճամարտակել,  
և արձագանքը քեզ կանչող, քեզ ստիպեց՝  
հավերժական կրակի երգը երգել:

Բյուրապատիկ վահագնների երգը վսեմ,  
որ վառվում էր ընկածների սուրբ արյունով,  
վիատումի, աճյունների, սարսափի դեմ  
անհուն ցավի ու վրեժի երգը լուսե:

Ու դու եկար քո հին տնից, քո ետևում  
քաղաքներ էին կրակի մեջ, երազ մի հին,  
և կրակե քո շորերում, և շրներին քո կրակե  
անհունորեն արագացող մքրիկներ էին:

Յաք ու ցրիվ կրակներ էին քո ետևում,  
որ մխում էին անցյալների դամբարանից,  
մորթված այրերն ու հանճարներն անգերեզման  
դեպի վառվող արեգակն էին ճանապարհվում:

Ու չիմացան ծխում խեղդվող քաղաքներում  
ցաք ու ցրիվ կրակները լուս առկայօղ,  
որ արեգակը բարձրացող, որպէս վահան,  
մեռածների դամբարանն է լուսավորում:

Ու դու այդպէս Կարսը թողած, Երևանը քեզ հմայող,  
այրած բազում զագել, սիրո երգեր նվազող,  
թողած հեռվում քաղաքը ծեր, երգիշներիդ փանդիռավոր,  
դեմքիդ՝ արյուն, լույսի գծեր, երգում էիր դու մենավոր...

Եվ երգերում քո ամենի, և սրտում քո բյուրկարուտ,  
հազարների ցառումն է բորբ, վրեժները ընկածների,  
նաիրյանն էր արդեն նազում, և իրական քո երազում  
տեսնում էիր քաղաքդ հին՝ կարմիր, կարմիր իր շորերում:

Եվ դու՝ ճամփորդ նաիրական, քո ձեռքերում բազմապատիկ  
լույս է վառվում կարմիր ու բորբ, քո երգերում այդքան մոտիկ՝  
հիմն հավերժի արեգական, և դու՝ Վահագն զորավոր,  
կրակներից վեր բարձրացող, և դու՝ ճամփորդ նաիրական:

\*\*\*

**Մի ողջ գողգորա,**  
և հսկա մի խաչ լեռան ստորոտին,  
այնտեղ, որտեղ Աստված արարեց  
մարդկային ցեղը...

**Կանգնած է խաչը**  
և օրորվում է քարավանը խեղճ,  
գալիս է, գալիս ու բարձրանում է  
ոսկրացած խաչին...

**Նայում է Աստված,**  
ու ապշանքից քարացել է, տե՛ս,  
ցավն իր Որդու և ցավը մարդկանց  
ելնում են երկինք...

**Սև խնկի նման**  
բուրվատի ծուխը հառնում է երկինք,  
ոսկրների ճիչ, մանկանց խլրտոց  
ու էլի ոչինչ...

**Մի ողջ գողգորա,**  
և հսկա մի խաչ լեռան ստորոտին,  
այնտեղ, որտեղ Աստված արարեց  
մարդկային ցեղը...

1990 թ.

\*\*\*

Այս բառերի այր ու բենը,  
այս երկրի սերն ու քենը,  
նախահաշիվ  
ու նախնական մատյանները,  
դրոշներն այս բանակի,  
մատենագիր մատյանները  
և ցեղերը նախահայկի  
խոռվ, խորվ անցել են լուս՝  
թողնելով մեզ մի բուռ կարոտ,  
մի բուռ ցորեն,  
ճարած մի տաշտ՝ մեջը խմոր,  
մի բուռ նազանը՝ ոչ հնազանդ,  
այս ամենը թողել են մեզ,  
որ մենք ձուլենք ու միանանք,  
որ այր ու բեն կոչվող զրի  
սիրտը բանանը,  
որ մոտենանք նախահայկին ու  
ես դառնանք,  
բերենք, ձուլենք մեր օրվա հետ  
և խանանք՝  
ինչ ենք արել մինչև էսօր,  
և ինչ պիտի անենք վաղը:

Այս բառերի այր ու բենը,  
այս երկրի սերն ու քենը,  
նախահաշիվ  
ու նախնական մատյանները,  
դրոշները այս բանակի  
այսօր պիտի ելնեն երթի:

\*\*\*

Թէ որ բոլոր հայերը իրեկուն ուստ էնին մեռնիլ,  
առաւտաւ արեւ դրո չժագած՝ ազատ էն:

Գեւորգ Չավոնց

Մուշ քաղաքից արևելք,  
Սիմ սարի թիկունքին,  
Լենկրեմուրից վիրավոր  
Առաքելոց վանքն է հին:  
Ակն աղբյուրներ գիլ-գլոր  
կրոլորեն շուրջը իր,  
և ծաղկունքը հոգեքով  
կզմայէն անցորդին:  
«Աչերով բակ» կկոչվեն  
Առաքելոց աշքի տակ  
կանգնած մամոռտ խաչքարերը,  
որ պահում են հիշատակ:  
Գերեզմանոց մի փոքրիկ,  
հիշատակի մի բեկոր,  
որ արթնացնի անցորդի  
մտածումները մոլոր:  
Անշուք, ինչպես ապրած կյանքը,  
հրաշք, որպես ծաղկած քար,  
ամփոփված է հողի տակ  
Խորենացին պատմահայր:  
Գերեզմաններ, խաչքարեր  
անխնամ ու ծերացած,  
որ նայում են անցորդին  
Ժամանակից վերացած:  
Եվ դարերն են թռչում  
մեռելային լոռոթյամբ,  
այստեղ ասկյարն է շրջում  
մեղքերով արյունուշտ:

Ամեն գարնան ծաղկանց հետ,

որպես մանկան մարուր ճիչ,  
հողից ելնում են նորից  
վառողի ծովս ու քրքիչ:  
Այսուղի ասկյարն է շրջում  
սահմանային տերությամբ,  
խառնված են խաչ, լուսին  
մեռելային լուսությամբ:

\*\*\*

Դառն է խորհուրդը հայրենի,  
և ընթացքը՝ միշտ դեպի վար,  
քաղցրապուղ այդ ձիթենին  
կանչում է մեզ հեռվից, ավաղ:  
Խշում է նա մեղմ շրջումով  
հնամենի իր պատմությամբ,  
սաղարթը խիստ երկինք պարզած,  
պատաճեկան խոհեմությամբ:

Եվ ետքարձի ոչ մի ճամփա,  
ով տեսել է արմատը իր,  
հմայումից այդ քաղցրախոս,  
քարքառումից ավետարեր:  
Եվ մենք տրված այդ հին ճամփին՝  
քայլում ենք լուս ու զլասահակ,  
մինչև մահվան բառը վերջին,  
մինչև արևը կիսամերկ:

Եվ շուրջքուր այդ ձիթենու՝  
այրեր խոժոռ, մարգարեափայլ,  
անլուր միմյանց, անքեն, անդավ,  
մտամոլոր, մտազբաղ:  
Իսկ կենարոնում ձույլ արծաթե  
քաղցրապուղ սեզ ձիթենին,  
հողմերի դեմ՝ ժպիտ անանց,  
հողմերի դեմ՝ միշտ դեպի վեր:

### ԱՅՍՈՒ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՆԵՐ

Վյաբան երգեցին երկիրն այս փոքրիկ՝  
հուսառատ ու շատ,  
որ հոգիս տիսրեց Էրգրի համար՝  
մահերով առատ...

Ոչ ոք չի կարող Մասիսն ընդունել  
մեկ կողմից միայն,  
միակողմանի աստվածն անզամ  
դատարկ է, ունայն...

Այս Հայաստանը եղբայրն է փոքրիկ  
մեծ Հայաստանի,  
եղբայրասպան է, ով մեծ կամ փոքրիկ  
եղբայր կսպանի...  
1988 թ.

\*\*\*

Իմ ժողովուրդ կրկին, ահա,  
խոնարհում եմ գլուխն իմ սեզ  
և թագ դարձած, և թագադիր երգիդ առաջ,  
անթագակիր հոգուդ առաջ, որ բյուր դարեր  
չնշին ուժով կովում ես հար դու չարի դեմ:

Եվ կոիվ չէ կոիվը քո,  
մահ չեն բնավ մահերը քո,  
դու կովել ես հանուն լույսի,  
երբ խավար է եղել հոգու:

Ո՞ւր է կրծքիդ զարդը ոսկյա՝  
հանուն բարու, խաղաղության,  
դու հասարակ իմ հայրենիք,  
տասնապատիկ զարկված, խաշված  
և քառատված տասնապատիկ,  
իմ հայրենիք փոքրիկ, բայց մեծ:

**ԽԱԶՔԱՄ**

Եվ ոչ հիմնը մահվան,  
տապանաքար չնշին,  
որ պահում է խորքում  
մեռած մարմին,  
խորհրդավոր, խոհուն,  
աստվածային մի հունդ,  
քարե պահվածք,  
վերածնունդ:

Եվ երկնքում ցավի,  
մահվան մասին մի ասք,  
իր խորքում խոհուն  
պահված մի գանձ,  
որ հառնում է, ահա,  
որպես քարե տեսիլք՝  
զարդարելով մահը<sup>1</sup>  
նոր երկունքով:

Ո՞վ ժողովուրդ անցած,  
զարմանալի, զառամ,  
մահին հաղթող միայն  
քո գոյուրյամբ,  
ահա, ինչու դու կաս,  
և գերեզմանն անզամ  
խոյանում է որպես  
արվեստի քար...

\*\*\*

Անդնդախոր ձորերի ստվերում  
դեռ շարժվում է քուրմերի քափորք,  
իրենց ուսերին դրած խաչքարեր՝  
սև մքջնաերթը ծգվում է դեպի  
ձորի կենտրոնը,  
ավարտելու արևի հոյակերտ տաճարը:

\*\*\*

15 թիվ, մանկան ճիշեր,  
ահից սառած մանկան աշքեր,  
սովի գարուն, մահվան ապրիլ,  
և «Մեղա, Տե՛ր», և «Փրկիր մեզ»...

Դիակների բաց թանգարան,  
ծխող զյուղեր, այրված դրներ,  
անտերուրյան շտեմարան,  
հարբած գայլեր, գառներ խարված...

Կլոր սեղան, ճերմակ սավան,  
քաղաքակիրք խոսք ու շարժում,  
ելորպաներ ու ասիաներ,  
ու որդում է արյունը տաք...

«Տե՛ր, ողորմյան» բառաչի պես  
համբառնում է խնկի նման,  
քառերք ցուրտ, քառը մահվան,  
«Փրկիր մեզ, Տե՛ր, Տե՛ր, մեզ փրկյա»...

Ելուզակի աստվածն ահեղ  
նստած է մեր իսկ աստծու ձին,  
նամազների ձայնը զորեղ  
տանում, սփռում է մահվան ճամփեքին...

Խաչված փայտեր բյուր, անանուն,  
գերեզմաններ անհող, անձայր,  
կարկամած լաց, ողը ու կական,  
ո՞ւր ես, Աստված, դո՞ւ էլ ես քար...

Չես երևում, ո՞ւր ես, Աստված,  
իոգեհանգիստ էլ ո՞վ կարդա,  
քո հավատով լցվածները  
ո՞ւմ հաղորդվեն, Տե՛ր, մեզ գրա...

,Փրկի՛չ, փրկյա, դու՝ մարդասեր,  
դու՝ աջ, չարյաց փրկող,  
փառք քեզ, ամեն,  
հավիտյան»:  
24 ապրիլի, 1991 թ.

### ԾԱՂԿԵՊՍԱԿ

Բառակույտեր են հողից բարձրանում  
մերձավորներին սիրելու տեսքով,  
Հիսուս, ներիր ինձ, միամիտ Հիսուս,  
ձևված են նրանք քո իսկ տեսիլքով...

Խորհրդի նստած սատանաները,  
դարասկզբից մինչև դարամուտ,  
ծամծմում են լուս հայոց երկիրը,  
սեղանն է ցամքել մանկանց արյունից...

Սիրիր թշնամու՝ բարբառում ես դու  
քո իսկ շտեսած թշնամու մասին,  
ես ինչպե՞ս սիրեմ քեզ խաչողներին,  
Պիղատո՞ս ես դու, անհասանելի՞...

Ետ առ խոսքերդ, միամիտ Հիսուս,  
քող որ կշռենք չարը ու բարին,  
ինտերնացիոնալ քարոզությունն այդ  
չարի երկիրը կոչում է բարի...

Հայտնվիր, Տե՛ր իմ, բարձրացրու աջդ,  
մեղավորներին տար այս դժոխքից,  
երկակի պատիժ մեկ մեղավորին,  
անարդար է, Տե՛ր, եղիր գթասիրտ...

Բառակույտեր են հողից բարձրանում  
խաչին կաթ-կրող քո արյան գույնով,  
Հիսուս, ներիր ինձ, միամիտ Հիսուս,  
մորթում են նրանք քո գաղափարով...  
1991 թ.

\*\*\*

Դու քո երգը չես կարող երգել,  
ասա՝ ի՞նչ մարդ ես, ջանա,  
չեղած երգեր են երգում ուրիշները,  
և այն էլ ինչպե՞ս, և այն էլ ինչպե՞ս...

Քո մայրամուտը դու չես տեսնում,  
արևը՝ Մասիս մայրամուտով,  
լեռներից այն կողմ է քո կարոտը,  
հանգիստ անցնում ես բարի կողքով...

Քո դպրոցներին նայում ես դու,  
ասես, չես ծնել Նարեկացի,  
պատերազմը քո զիշել ուրիշներին,  
ցավերիդ նայում ես հարևանցի...

Ա՛յս, զիտեմ, զիտեմ, հոգիդ անդավ  
նման է երգող թռչունների,  
իր ցավի մասին ոչինչ չասող,  
բայց երգող ցավերն ուրիշների...

Եվ ինչպես հասար դարին այս ծով,  
Նոյյան այդ փոքրիկ, չոր տապանով,  
ամեն ինչ թողած հատակում խոր,  
իմ խենք, իմ խելառ, իմ ուրացող...

Ժամանակները ուրիշ են հիմա,  
ուտող-ուրացող ժամանակներ,  
մի ուշը դարձրու տապանիդ վրա,  
և ոչ մի թռչուն չմնաց այնտեղ ...

Դու քո երգը չես կարող երգել,  
ասա՝ ի՞նչ մարդ ես, ջանա,  
տես, թե ինչպես են երգում քո երգերը,  
և այն էլ ինչպես, այն էլ ինչպես:  
1985 թ.

\*\*\*

Քառատվելու, ամոթվելու որքան դարեր,  
որքան ցավեր, որքան սարեր օտարակուզ,  
համբերանքի ու բարության որքան դարեր,  
որ ճկվելով, բարուց հոգնած կդառնան սուր...

Ով էլ լիներ, չէր դիմանա քո վազքին,  
սիրող պարզած, սերդ պահած ամենքին,  
դու խելահան, աստվածածին ժողովուրդ,  
բարկությունդ հավասար է քո բարքին...

Ես էլ քեզ պես հոգնել եմ լուռ ներելուց,  
ամոք ու սուրբ անունները կրելուց,  
զազանի հետ, կարիճի հետ քնելուց,  
մարդ լինելուց, մարդ ապրելուց հոգնել եմ...

Փորձիր իիմա ուրիշներին, Տե՛ր Աստված,  
Տե՛ր իմ, ինչ-որ խոստացել եմ էն զլսից  
անհավասար այս մարտի մեջ ընկնելով,  
զազանատիպ կդարձնես ինձ, Տե՛ր Աստված...

\*\*\*

Ով երկինք չունի,  
չունի և տուն,  
անտունի մարդը  
չունի հանգիստ,  
արևը որք է  
նրա աչքում,  
և մահը նրան՝  
հոգեհանգիստ:

Երկիր իմ պարզ ու  
անզարդակիր,  
դու՝ իմ աչքերն  
ու իմ հոգին,  
որքան ուզում ես  
աչքդ փակիր,  
ես հնազանդ եմ  
քո սուրբ կամքին:

\*\*\*

Ոչ տարել է ցավը սրտի մեջ,  
ոչ խմել վշտից հուսահատ,  
առատ է եղել սեղանն իր,  
հարբել է՝ բարձերին թիկնած...

Մոլեռանդ վիճել է ցավից,  
խաղացել դերը կարուտի,  
շրբները յուղոտ են, նայիր,  
մազերը՝ օպայած ու պիրկ...

Երկիրն ինչքան նվազի  
և որքան բքանա ցավից,  
երգերը եռակի տիրաժով  
կհառնեն մելանե բղրից...

Օրենքը փոխվում է ամեն օր,  
չար են ուժերը դեկավար,  
երկիրը՝ չնչին ու փոքրիկ.  
դարձել է պոռնիկի ավար...

Կտրում եմ՝ որտեղից հասնի,  
ներսից է խուժել թշնամիոյ,  
Հայաստան, լրված իմ երկիր,  
մահահոտ այս անել ժամին...

1987 թ.

### ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒ...

Ներիր, Տե՛ր Աստված,  
կրկնակի ներիր,  
որ ես չեմ կարող հատուցել նրան,  
այն մերկանդամին,  
որին հոշոտեց, բզիտեց այնպես  
միակ քշնամին:  
Տեսնում եմ, ահա, սարերի վրա,  
լեռների լանջին,  
վերջին գալարման ցավերում անվերջ  
և աչքերը բաց անթաղ դիակներ,  
որոնց կողքին մանուկներ պառկած,  
մայրը և հայրը, կինը՝ պղծված,  
և գերդաստանի ամեն մի անդամ՝  
և եղբայր, և քույր,  
ըստ ցավի, սիրո,  
որոնք ճիշերով փորձել են օգնել,  
և պատկերը այս նման է դժնի  
իրականության...  
Եվ այսպես անվերջ՝  
դիակներ, մահեր ողջ գերդաստանի,  
մի ողջ ավանի, զյուղ ու քաղաքի...  
Այստեղ երեխան մահվան բարութում,  
կողքին հայրն է իր՝ տկլոր ու բոկոտ,  
մայրը՝ պղծված և աչքերում սառը  
ամորի վերջին խոսքերն անբառ,  
և նրանց դիմաց փայտե ծուռ խաչին  
ջահել աղջիկը՝ մազերը կրծքին,  
և օրորվում են քամու հպումից  
լաթերը նրա մերկ անդամների...

Քիչ այն կողմ, ահա,  
հենց դռան շեմին  
ընկած է պապի մարմինը անփոյք,  
և ոչ թե անզեն ու առանց կրիվ,  
ու ոչ թե մազերն ու միտքն են խոհիվ,  
այլ անզորության շապիկն արյունոտ  
ծածանվում է լուր քամու թերանին...  
Անձարակության և անհուսության  
կենդանի պատկեր...  
Եվ ես ուզում եմ, և իրավացի,  
ել չխավատալ,  
զզվել եմ խոսքից ճշմարիտ ու ճիշտ,  
մեզ և ուղիղ մեզ ուղղված խոսքից,  
իբրև եղել ենք մենք անմիաբան,  
իբրև միամիտ,  
կամ հանդգնել ենք խոսել Աստծու հետ,  
և այդ ամենը եղել է պատգամ,  
և կամ փորձել ենք լինել ինքիշխան...  
Հազար տարի է՝ մորթում է նա մեզ,  
և դեռ չգիտենք՝ որքան ժամանակ կլինի այսպես,  
հազար տարի է՝ համոզում ենք մեզ,  
որ սխալներ ենք գործել հենց այնպես,  
և հազար անգամ հավատացել ենք,  
ու թե չլինեին իմաստունները մեր ժողովրդի,  
ես վաղուց, վաղուց կիավատայի,  
որ մենք պարզապես խելագարներ ենք:  
Եվ ահա ինչու, և քանի անգամ,  
գիշեր, թե ցերեկ,  
ապուապերիս ձայնն եմ լսում ես,  
և ձայնն այդ հեռվից  
կրկնում է ինձ.  
- Մերձավորին անգամ մի լսիր,  
կեղծ է պատրանքը կրոն մոլության,  
խոսքի խորության...

Խաղաղությունը ոսկու գին ունի,  
բայց ես ի՞նչ ասեմ ձայներին այդ բյուր,  
որոնք գալիս են գերեզմաններից,  
վառարաններից մարդահոտ ու չար,  
կլոր սեղանի շուրջը նստոտած  
այդ միմոսներին, ախր ի՞նչ ասեմ,  
որոնց ուղեղում դժոխքն է եռում,  
բայց ատամները սեղմված են իրար,  
և լեզվին սիրո բառեր են շողում...  
Որոնք հարց չունեն մի հարցից բացի  
(ամեն ինչ իրենց),  
արյան ծովերի թագավորներին  
ես ինչպե՞ս դիմեմ,  
որ հարցն իմ, այո՛, նախ լինի հստակ,  
և ապա՝ պատշաճ կլոր սեղանին...  
Ահա թե ինչու  
ասում եմ բոլոր սուս աստվածներին,  
եղած-չեղածին, նոր ընտրվածին  
և աղորում եմ միակ այն քրմին,  
որ արևին էր նայում աչք-անթարք,  
մեռնում էր հպարտ,  
և նրա տնից եղնում էին կրկին քուրմ ու քրմապետ...  
Սուրբ է ինձ համար ամեն ժողովուրդ  
և կրկնակի սուրբ,  
ով պահպանում է մորը, մանուկին:

ՀՈՒՆԻՍԻ 22, 1941 թ.

Նա տուն եկավ հանդից,  
տեղավորեց մանգաղը,  
նրա մեջքը թաց էր,  
քաղը՝ կիսատ:  
Նա դուրս եկավ տնից  
վիրավորված սրտով,  
չտեսնելով անգամ  
երեխային:

Հավաքվեցին մարդիկ  
ու դարձան շարք,  
ժամանակը կարճ էր,  
ասելիքը՝ շատ:  
Շակատագիրն ամենուր  
հետևում էր նրանց,  
նրանք ճամփա ընկան  
կրակոցից առաջ:

Սովորեցեք, մարդիկ,  
սիրել իրար,  
սովորեցեք, մարդիկ,  
տեսնել բարին,  
նրանք ընկան, ինչպես հերոս,  
լինելության ճանապարհին:

**ԳԵԿՏԵՄՔԵՐԻ 9, 1988 թ.:**

Քեզ,

քո եղեգության օրը,  
նոր, անհմանալի  
ցավի ու ողբերգության օրը,  
դարավերջին մեզ բաժին ընկած  
նոր կոտորածի, բնավերման...

Չեմ օրորելու մահիճն  
և փառավորյալ խոսքերի շարքով  
չեմ բաղելու քեզ,  
չեմ բողելու ննջես  
այն քնով, որով ննջում են հավիտենապես...

Թշնամիդ արթուն երգում է երգն իր,  
դարեր շարունակ զարկում է ծննդղա,  
դրա համար ես՝  
պատմություններդ սերտած ծաղկողդ,  
եղեգության շապիկս հանած  
երգելու եմ լոկ փառաբանություն...

Նվազեցին կրկին աղյուրներդ զինջ,  
հոտդ բալանված է, մարմինդ՝ մերկ,  
մանուկներդ որք քարերին զարկված  
ընկած են էլի ծաղիկներիդ հետ...

Թալանված են քաղաքներդ ու գյուղերդ,  
աստվածավայել կերպդ՝ խաքարված,  
հատ ու կենտ մարդիկ, մահից ետ խված,  
ցնորամիտ են,  
բանականության թելն է կտրված...

Հանիր շապիկդ քրիստոնեության,  
բալանի հանդեպ մի եղիր գրուտ,  
մի ներիր,  
կանգնիր ուրացումի դեմ, ավարառուից,

մահվան շապիկդ գողացողից,  
մանուկներիդ աշքերը հանող,  
արյունդ խմող բորենիներից  
գութ չաղերսես դու...

Եվ փառավորյալ չեմ բաղելու քեզ,  
հրկիզման տարեք դիակները սուրբ,  
բոլ մահից հետո ինքնագիտակցման  
և սրափության գետերով անցնեն...

Վերջին պուտները երգերով վերջին  
բաղել են արդեն հույս ու արահետ,  
այրեցեք բոլոր դիակները սուրբ,  
այրեցեք մանկանց դիակները խեղճ  
ու նրանց կողջով անցեք երդումով,  
զայրույրով մթար, անեղծ կրոնով...

Տվեք հավատը անհավատներին,  
խեղճությանը՝ անցյալ, պատիվը՝ ճորտին,  
կրակի շապիկ և խոսքի կրակ,  
մահվան կրակ հագեք այս պահին...

Մահից ետ խվեք անունը ձեր բանկ,  
մահից ետ խեք ապրելու դասեր,  
մեռնում են նրանք, ովքեր ապրում են  
զգացումի ծովով,  
ես ձեզ կոչում եմ միասնականության,  
կոչում եմ կրվի արհավիրքի դեմ,  
կրվի եմ կոչում կեղծ բանականի,  
խղճի ճորտության,  
քար լուրջան դեմ,  
կրվի եմ կոչում մութ ստորության,  
դավաճանության, սուստ սիրո ընդրեմ...

Սիրով են ուզում մորբել քո ոգին,  
փաղաքանքով դնում սև դագաղ,  
անիծում եմ քեզ, եք չես լսում,  
փառաբանում՝ արքնացման համար...

### ԳԻՇԵՐԸ ԶՎԱՐԹՆԱՅՈՒՄ

Մութ էր արդեն,  
ու վերևում երկինքը կապույտ  
հալվել, հալվել  
ու դանդաղ ձուվել էր սկին:  
Հայոց երկինքն՝ արև,  
հողը՝ կավել ու արնոտ,  
զիշերվա մութ բիբերին  
ցողած լույսի պատառիկ,  
արևներից հալածված,  
խորհում էր լուս ինքն իրեն:  
Ինքը հոգի մեն-մենակ,  
այս ավերված վանքի պես,  
այս կարկառած ձեռքի պես,  
որ կանգնած է մեր առաջ:  
Շուրջը սև-սև քարեղեն  
արելաներ ծնկաչոք,  
սև-սև քարեր ավերված,  
ծնկակոտրուկ, հույսը՝ ծով:  
Կանգնած է լուս, անքրիք  
վանքը ցրիլ ու խոժոռ,  
դարեր ի վեր հալածված,  
սիրտը՝ քարե ու կոպիտ:  
Թաղված դարեր հողի տակ  
վանքը մենակ ու խոժոռ,  
դարեր քարե մոլորված,  
ուրացած սեր ու Աստված:

Ու հույսով լի քարերի  
դեմքերը մութ ու մքար,  
ոչ թե այնպես, որպես քար,  
որ պահում է դարերի  
խավար գույները մեռյալ,  
այլ լեռնելյայն՝ որպես քախտ,

Ժիջած հույսի հավատից  
և որպես սառը մագաղաք՝  
գունաթափ իր սովերից:  
Պահած հույսը հավերժի,  
պահած հույսը վրեժի  
վառվում էին մքի մեջ  
քարերը սև՝ աչքեր սև:

Գիշեր էր լուս,  
երբ մտանք Զվարթնոց,  
երբ մեզ հառնեց ավերված,  
ավերակ ու ավերծոց,  
ներիր, ներիր, ներիր ինձ,  
ել ինչ երգ ու երգի դրոյ,  
անեծքն անցել երկնքով  
ու պիտ չկեր դեպի մահ,  
կրինչներով սևաթույր  
թափեր ցավի թեն ու թույն,  
ներկեր հրաշքը սևով,  
օծեր մեռնող ձներով,  
մորթեր խոյակ ու սատար,  
քանդեր զմբեր ու քիվեր,  
քանդեր պյուներ ու կամար,  
թափեր արյուն, խունկ ու մոս  
ու բարություն իբրև նոր՝  
թաղեր ողջը հողի տակ,  
իբրև չկա, չի եղիլ  
Աստծու երազն այս ճերմակ:

Գիշեր էր լուս,  
երբ մտանք Զվարթնոց,  
մեր դեմ ելան սևասքեմ խինդ ու կոծ,  
ավերակներ՝ փոշեպատ ու փոշեկուր:  
1964 թ.

\*\*\*

Բանաստեղծության ամեն մի կարիլ  
ոչ թե նշխար է, այլ մահվան երկիր,  
դու մի արտապիր, խոճա դու ինձ, քո՞ւր:

Թանձը է հոգնությունը, և սերն է կապանը,  
մենք կիանդիպենք և հեզ, և տրտում  
մեր կորցրած երկիր արյունոտ հովտում:

Սեզ կտակեցին պոետները վերջին  
և կտակեցին մի չնչին երկիր,  
և մահվան հոտ է ծխում երգերից:

Զվարք փողոցներ և դեմքեր դժգույն,  
սիրտս թնդում է խենթությամբ արի,  
ո՞ւր ես, սիրելիս, կանչում եմ, արի:

Քեր սիրտդ թունոտ, արհամարհական,  
խնդա լիասիրտ և իրավունքով,  
արքաները խեղճ այլս չկան:

Այլս չկան չար ու նենգամիտ,  
արի ու հզոր այլս չկան,  
դու իմ նահատակ անվերծանելի:



Շեպետ դմկար է գտնել մի ազգի տարեգրություն,  
որն ավելի վեռծ լինի արատավորող ոճիրներից,  
քան հայերինը, որոնկ առաքինությունները  
խաղաղասիրության արգասիք են,  
իսկ արատները՝ բռնադատման հետևանք:

Չ. Բայրոն



### ՆՈՐԻՑ ՔԵԶ ՀԵՏ

Նորից քեզ հետ, իմ հայրենիք,  
նորից մենակ, նորից տրտում,  
վշտերը քո ցավի կրակ  
տրոհվում են և իմ սրտում...

Հոգնել եմ ես խոստումներից,  
ինքս ինձնից հոգնել եմ ես,  
անկարեկից, աննպատակ  
խոստումներից հոգնել եմ ես...

Այսպես մանուկն է բավագլոր  
երեսնիվայր ցեխն ընկնում,  
ամոթն այսպես է կորավում  
և պատիվը՝ անթագակիր...

Անկամության և թուլության,  
և քաջության պակասը ծեր  
աղբակույտի մոտ է ընկած,  
և բզզում են այնտեղ ճանճեր...

Ելիր խանդով միասնության,  
ինքնակարոտ ու տիրաբար,  
ելիր, ինչպես զոհողություն  
և վրեժի խանդով հպարտ...

Քաղց է եղել միշտ քո հոգում,  
դու չես եղել հացին գերի,  
հացկատակի արհեստը ծեր  
եղել է քեզ ցավ ու լեղի...

Կանգնիր ընդդեմ չար հողմերին,  
բյուր կողմերին դարանակալ,  
հոգևոր է եղել ուղիղ,  
մենք չենք ապրել միայն հացիվ...

1987 թ.

**-Ա-**

Պարծենում էր նա կրոնով իր իին  
և քերում անչափ թիվ օրինակներ,  
և առաջինը մենք էինք իրոք,  
որ կրոնը այդ դարձրինք օրենք...

Ուրեմն, այո՛, այդ մենք էինք հենց,  
որ առաջինը այն ընդունեցինք,  
և այդ կրոնը ննջում է մեր մեջ,  
պարզապես նրան մենք կյանք տվեցինք:

Քարության հանձար և հարգանքի տուրք,  
և էլի ուրիշ շլացնող բառեր՝  
նա պատմում էր ինձ, իսկ ես մտովի  
գնում էի դարի սկիզբն արնաներկ:

Կես միլիոն մանկանց ճիշերի միջով  
քայլում էի ես ուրվականի պես  
ու անիծում էի կրոն ստեղծող  
և այն տարածող մարդկանց աներես:

Անիծում էի ամկրոն, անօրեն,  
խեղճությամբ խորհող այրերին դժբախտ,  
որոնք «քարություն» և «սուրբ» բառերը  
քարձրացրին մինչև օրենքի աստիճան:

**-Բ-**

Վեռվ ահարկու և գերի գրքին՝  
փակվում էինք մենք մթին այրերում,  
և զառացանքի, ցալի օրերին  
գալիք օրերի ծխով էինք մխում...

Խոլ հառաջանք էր, անվերջ պատարագ,  
անիմանալի բարբառ կիսամեռ,  
հանձնվում էինք բարությանն անկարգ,  
և մեր մարմինը՝ մի քուրծ ծանրաբեռ...

**Ճոճվում էինք մենք կախաղաններից**  
հանուն մի մոմի և սուրբ պրության,  
և խաչելության պիրկ գերաններին  
գնում էինք մենք սուրբ օտարությամբ...

**Ոչ որ չէր շրջում դեմքը կիսամեռ,**  
չէր գտնում ելքը բանականության,  
կամքը՝ կոտրված, սուրբ՝ պատյանում  
երգում էինք սուրբ աստվածներ ունայն...

**Ո՞վ էր շփոթել, և ի՞նչ էր արդյոք**  
համոզել նրանց ու բերել դարձի,  
կրակը հանձնել բարությանն անմիտ,  
և ճանապարհը՝ անվերադարձին...

**Վյապես քայլեցինք մենք տասը դարեր,**  
մի ողջ միջնադար՝ մահվան միջ մեջ,  
տվեցինք, ինչ որ թանկ էինք գտել,  
տվեցինք կամքի կրակը անշեշ:

**-Գ-**

**Եվ միջնադարի մաս մթության մեջ**  
ես քեզ եմ երգում, իմ ճորտ բարեկամ,  
որ մուրճի ուկյա հասումների մեջ  
գնում էիր կամք և սուկում, և երգ...

**Խոռվ խզումի մեջ ձեռք ու ուղեղի**  
դու զարկում էիր մուրճով ոսկեզամ,  
ուրիշ աստվածներ և ուրիշ ցեղի՝  
փորձում էին խցկել ոգիդ սեփական...

**Եվ քարանձավի մթության մեջ մաս**  
գծվում էր քարին մի ուրիշ աշխարհ,  
բայց պեսոք է ուրիշ մի անուն տայիր  
և այն մեկնեիր իբրև այլ աշխարհ...

**Եվ երկպառակված, երկսայրի վրա**  
դու պիտի խաղայիր դերը միմոսի,

մենության պահին ձեռքերով ոսկյա  
ծնեիր տաճար, գմբեթներ լուսի...

Ո՞վ ատելության աստված շարանենգ,  
որ փաթաթել էիր մեր վզին շղթա,  
և չեզոքության աստվածների հետ  
խնջույքի նատել սեղանին անթագ...

Որ նախ առել էին ուղեղը թագի,  
ապա ներարկել զիսուղեղ ու միտք,  
և պոռնկության հեշտանքը զահի  
լցվել էր հանուր աշխարհը մեր մեղք...

-Գ-

Կինն էր պարում կրակի հետ,  
կին էր՝ հողմով, իրով թրծված,  
աստվածները ժպտում էին,  
ժպտում էր հեգ կինը՝ աստված...

Ալիք-ալիք ծավալվում էր,  
ուժ էր առնում հող-աստծուց,  
և իր երկրում ծավալում էր  
երկիր, արև, հող ու աստված...

Ծլարձակված ծառ ու ծաղիկ,  
թռչութեան էին արմատ զցում,  
արևն Աստծու փեշերի տակ  
թրծած ողի էր տարածում...

Մաճն էր հողին կպած ամուր,  
սայլն էր ճռուում եզան քայլով,  
ճորտը եզան, եզը ճորտի  
արյունով էին նրանք եղբայր...

Շորում էր տաք, արևարույր  
համայնական շնչառություն,  
ցալը ցալ էր, սերը՝ կարոտ,  
խինը՝ անկարգ համբերություն...

Կինն էր պարում կրակի հետ,  
կին էր՝ հողմով, իրով թրծված,  
ծնում էր նա հողին կպած,  
ժպտում էր հեգ կինը՝ աստված:

-Ե-

Հատուկենատ տեղ էր մոմբ կարկրում,  
ամեն տեղ չէր աղոքքը թռվում,  
դրները բաց էին անհավատի դեմ,  
և նա գործում էր հավատին ընդդեմ...

Դեռ չէր ավարտվել խոսքը հովվի,  
խուժանն էր հորդում վայրը արերի,  
գերեվարում էր, պղծում կամքով իր,  
շկար գեր մեկը, որ դեմն առներ...

Ինքնասպանություն ասած բառը սոսկ  
ինքնաձաղկումն էր և քուրձը փշոտ,  
մենակության մեջ, ըստ պատվիրանի,  
ինքնասպանություն առանց աղմուկի...

Մահը դրախտ էր, ներսից էր մահը,  
մատնված լրիվ, կանգնած սրի դեմ,  
ալլահը եթե գուր ու խիղճ ունի,  
ուրեմն կա և փրկության մի դուռ...

Ու նա մորթում էր խմբով ու հատ-հատ,  
կրոնն էր գարձել հեգ խմբավորում,  
հեզությունը սուրբ՝ կամքի թռվություն,  
սրի դեմ միայն բուրվառ ու աղոք...

Քնած էր, այո՛, սուրբը մեր պատում,  
և առաջինը մեճք դարձանք նրան,  
և դրախտ կոչվող բարին ու լավը  
դարձավ շարերի արերին հնձան...

-Զ-

Դարեր շարունակ փչում էր հավատի քամին,  
որպես զյուտ փրկության և ինքնության,  
և կուերվ խեղճության ոսկե շղթան,  
գալիս էին դեպի մեզ այրերն ինքնազոհությամբ...  
Եվ դպրոցներում, ինչպես քյոշերում անապատների,  
բազում սերունդներ սերտում էին անկուշտ  
հեղություն՝ խանդաղատանքով,  
խեղճություն՝ հանճարեղատիայ,  
և լցնում մեր կյանքը ապագա կրակներով...  
Եվ այն տրվել էր ձրի, որովհետև չէր գնվում,  
և ազատվել էր տերը՝ կատարելով խոստումը,  
և ժողովորդը մեր՝ քնացրած իր հանճարը,  
դարձել էր ոգու աղոթք և բարության տաճար...  
Եվ այդ տաճարից խունկ էին ծխում,  
ծովս էին ծախում իբրև գաղափար,  
միլիոնավոր մարդկանց արյուն քրտինքը  
դարձել էր մեկ սրնդի առուժախ...

-Է-

Գծել եք ճամփաներ բազում,  
որ գան ու գնան ազատ,  
կամուրջներ, որոնց վրայով  
տուն մտնի քշնամին գաղագած...

Լայրշին լեզու եք տվել,  
ատողին՝ պատճառ խորհելու,  
որբերին՝ օթևան և ձի,  
դաշտերում ազատ վարգելու...

Խիլճը բեռ եք առել ձեր ուսին,  
Ասոծու հետ խոսել եք դու-ով,  
ծառեր եք տնկել ու ջրել,  
քշնամու, օտարի անունով...

-Ը-

Եվ ինձում էին ըստ դուրանի,  
դաշտ էր ամայի, դաշտում՝ քշնամի,  
արքնացել էին ցեղերը թուրան,  
հերոս էր, ով որ գյավուր կսպանի...

Իսկ վանքում ծորուն հոսում էր մեղքը,  
հազար Նարեկ էր վանքում աղոթում,  
հազար հազարից ջոկվել էր մեկը  
և մութ ամրոխի մեղքերն էր քավում...

Հանճարակերպ էր և հանճարաշատ,  
լեզուն՝ դյուրաքեկ և սիրտը՝ խոռվ,  
նա ցավակորույս առնում էր մեղքը,  
և շուրջը նրա դատարկ էր ու սով...

-Թ-

Եվ այս հոգնատանց, արնաքամ երթից  
հատուկենու ելնող մուրճի զարկի տակ,  
իբրև արթնացում նոր հավատի,  
ելնում են, ահա, քյոշերից մթին  
լույսի մուրացիկ զավակներն այն,  
որոնք դարերի արնաքամ երթից,  
իբրև առանձին և ուշին զավակ,  
պիտի թափառեն և պիտի մուրան  
դարերի խորքից լույսի շիքն այն,  
որն ընդունել էին ազգերը օտար,  
բայց և չէին կանգնել իրենց հավատին...

Եվ մարգարեի քղամիդը հազին,  
սրտի մեջ պահած «Ողբը» Մովսեսի,  
բափառում էին նրանք տարագիր,  
որ գութ արթնացնեն, որ իրենց լսեն,  
որ իրենց լսեն, թէ ինչպես մի ազգ,  
դարերի խորքից ելած մի սուրբ ազգ

դաշնում է, ահա, ոտքերի կոխան,  
որ իրենք նույնապես կրոնին գերի,  
որ հացի տեղակ լույս են ծամծմել,  
որ թեպետ չունեն վառողի մոխիր,  
բայց և եկել են, որ իրենց օգնեն...

Աշխարհը սրով, իսկ իրենք ոգով,  
ոգին է եկել մերկ սրի առաջ,  
արնաշաղախ է ու ոտքի կոխան...

-Ժ-

Թագավորն ինքն էր գողանում սկզբից,  
հետո գալիս էին արքանյակները,  
ոչ ոք չգիտեր, ոչ ոք նրանցից,  
ինչքան կտնի իշխանությունը...

Չկար ոչ կենտրոն, ոչ կենտրոնական,  
չկար առաջին, և վերջին չկար,  
ոչ գենը, ոչ հաշիլ, ոչ արդարություն.  
- Իմը, լոկ իմը, իմն է պետական...

Եվ այսպես հանճարտ ի մի բերելով  
կրոնը՝ իրրև հանճարեղ մի զյուտ,  
հնազանդության իրաշալի գենը,  
որով կերտվում էր մի նոր ժողովուրդ...

Մայուն էր լսում ամեն կողմերից,  
իրաշալի կավ, դյուրաքեք, փափուկ,  
ով ըմբոսսության շապիկ էր հազնում,  
նա համարվում էր օրենքից դուրս...

Մորքում էր, ով սուր էր բարձրացնում,  
շապիկ էր հազնում ինքնազիտակցման,  
ով իր խոհերն էր կիսում ենց այնպես,  
զլսին զցում էին պարկը ստորացման...

Եփկում էր կավը հնոցում հսկա,  
ոչ երբեք կրկին թրծվելու համար,

«ապագա», «վաղը» բառերն ասողը  
դասնում էր մեղքի, հանցանքի ավար...

-Ի-

Եվ դարերի խորքից, որպես դաժան նզովը,  
բարձրանում է ձայնը Նարեկացու,  
անեզրությամբ արբած և եզերքից եզերը  
կանչն ամենատես, սերն ամենեցու...

Քարի վարպետների նման՝ ոգին երկինք հառած,  
ապշահայաց ցավից ու սոսկումից,  
փախած խիղճ ու թենից և հավատից փախած՝  
ծնում էր նոր հավատ ավերումից...

Ո՞վ կրվի դաշտ՝ սիրո և հավատի,  
ո՞վ դու սեղան՝ բարու և փրկության,  
ճաշակ դու համայն միջնադարի  
և խիղճ, և հաց դու գրության...

Սեղանիդ էր սև անձրևը խղճի՝  
և բռնություն իրրև, և իրրև ուժ,  
դու՝ առաջին զոհ, դու՝ թիրախ վերջին,  
այս աշխարհի կարգով վաղուց հաստված...

Քեզ էր տրված լինել ամենազոհ,  
և այդ ցավից ոգել՝ քեզ էր տրված,  
անոր ամենատես, խոհ ամենազոր,  
և այրվելով այրվել՝ քեզ էր տրված...

Եվ տեսնում եմ, ահա, այն ցուրտ միջնադարում  
կայծակների անձրև և լույսերի հեղեղ,  
խոռվահույզ երկինք, դարը ծնող արյուն,  
քեզնից է միայն սիրո, լույսի խորձը հեղվում...

**-Լ-**

Ու թե լոյս է եղել, երբեմնի լոյս,  
մեղմ, անարև, ծառախիտ ու տոշոր,  
զգուշավոր մի լոյս՝ հոգի այրող,  
ո՞վ իմաստուն այլեր, հոգի տաճող  
այդ շողերից հյուսած գոհարով ձեր  
երգել եք դուք լոին, անմխիթար,  
ծարավ հողի նման, երազածին...

Եվ այդ լոյսի ճեղքի միջով,  
կտրելով մի ողջ երկրի պատկեր,  
ժամ խստումներով, մարմնահալած,  
գարեհացի նշխար օրիներգելով,  
վայելումի մեղա մեղանչելով  
և անիմաստ մեղքի բեռ-բարձումով  
երգել եք դուք երկիր մի ինքնամոռաց...

Ըլացուցիչ սերը պահած խորքում,  
ժամ բառերի լուռ արանքում,  
վարդ ու սոխակի ներդաշնությամբ,  
բառ-բռչումների ծլվլոցով  
երգել եք գարունն այս երկրի,  
գարունը շոայլ ու արնաներկ,  
ինչպես վերջին խստում և վերջին երգ...

Թալանված մարմնի ամեն գուրով  
և Գողգորայի սուրբ հավատով,  
և Գողգորայի շապիկ հազած,  
սրբ բերանին ընկած ծաղիկ,  
անմոռնչ, անտեր ու անաստված  
երգել եք սերը և նոր աստված...

Իսկ աստվածն այդ՝ լուռ կաշառված,  
պահել եք ձեզ լոկ դրա համար,  
որ փառաբանող մեկը լինի,  
որ հավատն իր պահի անշեց,  
պահի այն ավեր ու մոխրի մեջ,  
և այդ հավատը չունենա վերջ,  
և այդ հավատը՝ մորթված երկիր...

**-Խ-**

Ինչ ներշնչել էին այրերն հանձարեղ,  
փոխվում եր, ասես, արյունն են փոխել,  
աստվածայինը հանել էին հոգուց  
և դարձրել էին սոսկ աստվածավախ...

Լեզուն դարձել էր բարբառի գերի,  
լեզու, որ միայն լեզու չէր, մարմին,  
լեզուն դարձել էր խառուկ անթերի,  
ոգին՝ կաղապար մեռած մարմնի...

Քծնանքը՝ դրոշ, թալանը՝ հիմն,  
առ ու ծախու եր, ինչ պետական եր,  
ով հանդգնում էր իր ազգից խոսել,  
խարանում էին իբրև դավաճան...

Սերը բառ էր՝ կամքից հալածված,  
հայր ու մայր՝ օտար, հողը՝ կրու կով,  
ինքնախարանման քուրձը՝ ապաստան,  
դավաճանելը՝ նորընտիր պաշտոն...

Ամեն ինչ հանուն բաժան-բաժանի,  
հանուն ամեն բան «սուրբ» մասնատումի,  
ով օրենքից եր, նա՝ օրենքից դուրս,  
դուրս եր օրենքը, ներալ՝ վատնումը...

Դոներն էին բաց, գերանը՝ փտած,  
լոյսն եր վարակված, սեղանը՝ անիմք,  
օտարն եր տերը, տերը՝ փտարված,  
քիմքը՝ խարարված, տերը՝ մոռացված...

-Ծ-




Չհասցրիր իմանալ, հանձարե՛ղ պոետ,  
քանի երկիր մեզ համար դարձավ չարաղետ,  
թե մարդկության օրբանում մարդ արարելիս  
բումերանգի օրենքով ինչն էր ես գալիս...  
Ինչ էր եղել մեր կյանքն այն հին օրերին,  
երբ աստվածներն էին բարի, մոտ ու բարերար,  
որտեղ չարին հարևան երեք հազար դար  
կովում էին գոյության ու պատվի համար...  
Պետություններ բարձրանում, ազգեր ու ցեղեր  
մորթոսում էին իրար և հառնում նորից,  
և ամեն մի ելնողի ցուրտ խաչմերուկում  
մեր մարմինը՝ իբրև զոհ, արյունն էր որվում...  
Եվ այն վերջին աստծոն խաչվելուց առաջ,  
որին իբրև սուրբ տիրոջ պիտի ընդունեինք,  
որքա՞ն մորթված աստվածներ հեզ Բագարանում  
առուտուրի առարկա դարձրին այնպես...  
Դոնորի պես ապրեցինք մարդկության համար,  
ողջ մարդկության աշխի դեմ, նրանից լկված,  
մեկն աղի համն առավ, հազարը՝ լրեց,  
ժպիտով լուռ հեգնեցին, ժպիտով անլուր...  
Չհասցրիր իմանալ, հանձարե՛ղ պոետ,  
քանի երկիր մեզ համար դարձավ չարաղետ,  
թե մարդկության օրբանում մարդ արարելիս  
բումերանգի օրենքով ինչն էր ես գալիս...

○

→↑↑↑↑↑↑↑↑↑↑

○

↑↑↑↑↑↑↑↑↑↑



\*\*\*

Արևն է ելնում լեռներից մեր պերճ,  
խայտանքն է դողում ծաղիկների մեջ,  
գուգվել են այգի, անտառ ու տնակ,  
չորս կողմը կանաչ՝ բիլ երկնքի տակ:

Հովհիկն է շոյում դեմքը աղջկա,  
փսխում խոսքեր անտառի մասին,  
քամին առնում է բառերն աղջկա,  
որ մի երգ հյուսի նոր գարնան մասին:

\*\*\*

Գիշերն իջավ  
համբույրի նման,  
ու հովը ահով  
շոյեց հյուսքերը ծառերի,  
ներին մի ահ  
անցավ քափով խոտերի մեջ  
ու երկյուղած ինքն իրենից՝  
տագնապալի  
փակվեց ծառի հաստ փչակում:

Լույսը բացվեց,  
ու գիշերվա սարսափն հովի  
քիչ-քիչ մարեց:

\*\*\*

Արևն անզոր է,  
դողում են անզոր վարդերը գունատ,  
ալ է արևը,  
ու ցուրտ են նրա խոսքերը վհատ...  
Անուրջ վարդերի շշուկները զոց  
տարածվում են լուս  
ու տախս են բուրմուճքով իրենց  
լուսնե պաղ համբույր:  
1965 թ.

\*\*\*

Ծովերն հովերի բերանով մեղմիվ  
շնջում էին մի կապույտ երազ,  
լուսինը դալուկ ճոճփում էր խաղաղ  
ծովի հայելում, որպես ջրահարս:

Լեռներն ամենի սլացք էին քարե  
և հույսի աղամանին պատճեց,  
երկինքը՝ կապույտ տիեզերական ծով,  
և հույլը աստղերի՝ լույսի ջրվեժ:

## ԱՇՈՒՆ

Եղենական մի երգ,  
մի տիսուր երգ՝ աշուն,  
ցանկապատել միտքս,  
խոռվել է սիրտս:

Այսքան խազալ այս միրաժում,  
փոքրիկ այգին կծկվել է վախից,  
ու երկիրն է խուլ կաղկանձում,  
և բառերը հեկեկանք են ուզում:

Եվ բառերը՝ արյան, կյանքի սովոր,  
դարձած տիսուր մի շարասյուն,  
ամփոփել են քամու թևերի տակ  
ու մեռնում են անմիտ, աներազանք:

Ցուրտն է վնագում, ահա, փողոցներում,  
դեմքերը պաղ, օտար, անիրական  
փաքարվել են փափուկ մշուշներում՝  
և անձանոթ իրար, և խելազար:

Չառացանք է, իրոք, աշունն այս պաղ,  
փողոցները, մարդիկ լույս են մուրում,  
և այստեղ է պետք խարույկն արդար,  
և սեր, և հավատ, և հույսը վառ:

\*\*\*

Իրիկնամուտ,  
ամպը ամպին ներկեց կապույտ,  
կապույտ ներկվեցին ժայռերը բիրտ,  
ալիքները կոհակ-կոհակ իջան ափ,  
դեղնակտուց արփին թողեց վերջին շողը,  
նավերը սն՝

իրենց ճերմակ առագաստով,  
ծիծաղն ուսերին,

փետրատվեցին ծովի վրա:

Լուսինը վեր ելավ դանդաղ  
արքայական մենաստանն իր,  
մելանագույն ներկվեց տիեզերքն ամբող:

\*\*\*

Նորից աշուն,  
նորից մեզ,  
նորից կարոտ ու կսկիծ,  
անդառնալի պաղ շշուկ,  
չվերծանված լուռ թախիծ:

Սավերներում ծառերի  
դեռ մորմոքող երգի ձայն,  
չոր ու պարզված ճյուղերի  
աններդաշնակ հեկեկանք:

Նորից աշուն,  
նորից մեզ,  
ընկնող դեղնած թշուններ,  
չվերծանված խազ ու զիր,  
կոմիտասյան կուց-կուց երգ:

\*\*\*

Ծոճվում են ծառերը քամու կատակից,  
քամին նվազում է ինչ-որ ոռմանս,  
մեռնող տերևները շշնջում են ինձ.

- Սի տիսրիր, ո՞վ մարդ, քանի դեռ կաս:  
Այսօրն ու վաղը, որպես թիվ, հաշիվ,  
կկորչեն գալիք ցնորդներիդ մեջ,  
և աշնան դալուկ համբ երազին  
կրուտ գարունը կրերի վերջ:  
Շուրջ զոյզերը երազում են լուս,  
քամին նվազում է ինչ-որ ոռմանս,  
ուզում են խենթացած բղավել.  
- Բնություն, նվազիր ինձ համար գեթ մի վալս:

\*\*\*

Սրվել է ժայռի վրա  
քարայծը պողերով սուր,  
զիշերը՝ ֆոնը նրա,  
լուսինը՝ կոտրած եղջյուր:  
Ու ծովն է ժայռը լիզում,  
թափելով աղը լեզվի,  
քարայծը սպառնում է  
պատռել կողը լուսնի:

\*\*\*

Գնում է աշունը,  
նա մի տերև է հիմա,  
մենակ մնացած մի տերև,  
այսքան տիսրություն ո՞վ է տվել նրան,  
տերև մի... մի ամբողջ աշուն:

Այս աշունը մնում է իմ մեջ,  
և այս տերևը,  
հավատից կառչած,  
զնում է աշունն այս բոլորի նման՝  
դարձած մի տերև... մի աշուն:

\*\*\*

Աշուն,  
անքան աշուն,  
ուրիշ ես դու այստեղ՝  
փոքրիկ Երևանում:  
Երկու փոքրիկ պուրակ՝  
վրձնի դեղին գույնով,  
երկու փոքրիկ ճամփա՝  
անգույն տերևներով,  
երկու փոքրիկ կածան  
ու մի փոքրիկ քամի,  
երկու փոքրիկ զոյզեր՝  
երազների կայմին,  
ու հեռուներ անծայր,  
ու համրացած մի սար,  
կապույտ, կապույտ, կապույտ  
մշուշի մեջ անծայր:

Աշուն,

դեղին աշուն,  
աշուն, համբ աշուն,  
ուրիշ ես դու այստեղ՝  
փոքրիկ Երևանում:

\*\*\*

Կապույտ տերևներ թափվեցին,  
ու ճերմակ ծառերը լաց եղան,  
զունատ արագիլներ հայտնվեցին՝  
տեպացած հրաշք ճերմակից:  
Գարունն այս եղավ շքեղ,  
հողը հավատով շնչեց,  
ու կապույտ ծվիկներ հայտնվեցին  
ճերմակ ծառերի վրա:  
Ու արևը լուս հեկեկաց՝  
սև բծեր տեսնելով իր վրա,  
ու կապույտ ծիլեր արձակեց  
ճերմակ ծառերի վրա:

\*\*\*

Լուսայզը փոել է թևերը,  
որպես քնարը անտառի,  
կոպերին դողում է արևը,  
անտառը նիրիել է լրին:

Լուրյունն անհուն, անտարած,  
լուսայզի լարերով կապույտ,  
շշնջում է շուրթերով կամաց  
լուսացող մեղեղի մի լուրբ:

Ու քամին, որպես չար մի քանթեր,  
պոկում է դեղինը հատ-հատ,  
դողում է լուսայզը անհամեր  
ու դառնում և արցունք, և կատակ:

Մեղեղի՝, մեղեղի՝, մեղեղի՝,  
նիրվանա՝, նիրվանա՝ կապույտ,  
ու քացվող լուսայզի շուրթերին  
մեռնում է իրիկունը հոգուդ:

\*\*\*

Լուսինը սարը ելավ,  
իրիկունն իջավ հանդ, ձոր,  
սրտում կցկտուր մի ցավ՝  
մնացի յարիս հնձվոր:

Արտերը՝ լալ ու մարջան,  
կալյակներ կուտան կոհակ,  
լուսինը թիկնեց սարին,  
մութն իջավ ճամփին մենակ:

Լուսինը ձորը սահեց,  
արտերը՝ մրմունց ու հուշ,  
մութն իջավ, ճամփեն փակեց,  
հովերը՝ ցնորք ու հուշ:

### ԳԱՐՈՒՆ Է, ԳԱՐՈՒՆ

Քարերի տակ վեճ է բացվել ծիլ ու ծաղկի,  
մահվան վեճ է ու տարերի,  
արեգակի մի փոքրիկ շող, մի գոլ շշուկ,  
ծաղկի բույլը պիտի պայրի...

Օդը ցավ է ու երկունք է ապրում կրկին,  
տաք մարմինները թպրտում են անջուր օդում,  
ինչպես ծովում պատերին է զարկվում ձուկը,  
արծվի թեր զրնում է սահմանների երկարներից...

Արքնանում են քաղաք ու գյուղ,  
ճամփաներն են ելնում ոտքի,  
հրանոքներն ինքնակամ  
պատրաստվում են համազարկի...

Եվ պայրյունով բողբոջների  
հասկանում եմ հազար անգամ,  
որ գարունն է տերը երկրի,  
և սիրուց է սիրտն արնաքամ...

Ճշա՛, արև՛ ու որոտա՛  
և շանթերով արևախուրձ  
այրիր ամեն դուռ ու փական  
և սահմանները երկարակուու...

Բռնակալի դուռը կոտրիր,  
այրիր զենքերը հսկաների,  
ինքնակոչի հնձանները  
դարձրու ավեր, դարձրու մոխիր...

Ծովին պատնեշ հարկավոր չէ,  
լույսին՝ վանդակ, ծաղկին՝ թևեր,  
զինվորներին անհիշատակ՝  
բռնաբարված գերեզմաններ...

Քարերի տակ վեճ է բացվել ծիլ ու ծաղկի,  
մահկան վեճ է ու տարերքի,  
արեգակի մի փոքրիկ շող, մի գոլ շշուկ,  
ծաղկի բույլը պիտի պայթի:

\*\*\*

Հանկարծ կարմրեց երկինքը կապույտ,  
կապույտ երկինքը կարմրեց հանկարծ,  
լեռները կարմիր կապեցին հանկարծ,  
ջրվեժներ երկինք խոյացան հանկարծ,  
ծվարեցին ամայի քուլաներն արնոտ,  
լեռները պարիսպ կապեցին ծովին,  
հանկարծ թուլացավ կուրծքը լեռների.  
- Բռնեցե՞ք,- հորդաց ծովը արևի:

\*\*\*

Ինչ-որ ծիծաղելի մի բան է կատարվել,  
անշուշտ, հորինվածք մի սուտ,  
քարձրացել է աշնան խաչմերուկում բանուկ  
մի վիրխարի արձան՝ Դոն Քիշոտ:  
Թրատում է դեղին տերևներն աշնան,  
Ռոսինանուն է վարզում մի աջ, մի ձախ,  
քրքչում են մարդիկ պատահարից այս մաս,  
պատշգամբները ծիծաղում են լիարոք:  
Տերևները գունեղ պար են բռնել մահկան  
ու բափում են անսուզ, անբողոք,  
ու կովում է ինքը՝ Դոն Քիշոտը նույն,  
հազին նոյն գրահը, գլխին՝ լազան:  
Ամբոխը հոհուում է, տեսիլ է դյուրական,  
վախենում է ցնդի միրաժն այս,  
ասպետը կովում է արյունաքամ,  
վերքերը՝ տերևներ կարմիր:  
Ինչ-որ ծիծաղելի մի բան է կատարվել,  
անշուշտ, հորինվածք մի սուտ,  
քարձրացել է աշնան խաչմերուկում բանուկ  
մի վիրխարի արձան՝ Դոն Քիշոտ:

\*\*\*

Աշնան խոր լոռության մեջ  
կաղնիներն իրենց  
պտուղները բափեցին,  
բամին ծածկեց նրանց  
տերևնակույտով:  
Կաղնիները ապրում են  
երկար,  
իրենց հաստ մաշկի  
լոռության հաշվին:

\*\*\*

Աշունը նորից  
փոել է դեղին,  
բռնկվել է ողջ  
աշնան ծառուղին:  
Միի մեջ հատ-հատ,  
որպես մերկ ջահեր,  
վառվում են դեղին  
ծառերը ջահել:  
Ու տոն է նորից,  
աշունքվա հանդես,  
նոր ծես է բնդում  
Երևանում ծեր:  
Բարդիները լուռ  
թաճրվել են վաղուց,  
բամին քշում է  
ջահերը այգուց:  
Միայն գույգերն են  
թաղված մշուշում,  
հարսանքահանդես  
աշնան հետ խշշում...  
Աշունը նորից  
վառել է դեղին,  
բռնկվել է ողջ  
աշնան ծառուղին:

\*\*\*

Աշուն,  
ինչպես երգեմ  
տիսրությունիդ դալուկ,  
մայրամուտիդ աճրոց  
հեկեկանքը չոր,  
երազներիդ անդարձ  
տեսիլները քարե  
և վարդերիդ փշե  
գերեզմանները բաց:  
Երկինքը՝ քոն ու բաց,  
հողը՝ խոնավ ու հեզ,  
արս տանող ճամփի  
կուրծքը՝ ողորկ,  
ու պարտեզում մեռնող  
թել-թել ոսկերից  
տերևներ բազում,  
բյուրալեզու:

Աշուն,  
ինչպես երգեմ  
տիսրությունիդ դալուկ...

\*\*\*

Ոսկեծիլ ծառերն այս առավոտ  
թափեցին տերևներ ոսկերել,  
աշունը թխպակալ ու նոքոտ  
արտասվեց տիսրալուր թեյթեր:

Ծառերը մի վերջին անգամ  
ձգվեցին արևն անարև,  
աշունը դողդողաց, հանգավ՝  
փոնլով ստվերներ թեթեւ:

\*\*\*

Աշուն է  
դեղնած, դողուն,  
տերևները թույլ ու դեղին,  
տենդագին  
ծածկել են մերկ ծառուղին:

Դողում է աշունը ուշ,  
աշուն է, մարռող աշուն,  
ծառերը մերկ ու դողուն  
շշնչում են ցնորք ու հուշ...

Անրառ ու անողորմ,  
ցրտահար՝ որպես սև հույս,  
հեկեկում, պատմում է պատ  
զառամած պատրանքը կույս:

Աշուն է  
անել, անդրու,  
անհաղորդ ու անհավատ,  
քրքմնջող ու ծաղրամիտ,  
աշուն է դեղնած, վիատ:

Աշուն է  
անհյուրնկալ,  
անքերքի ու անպտուղ,  
անհույս է, մահվան շրջյուն,  
աշուն է կրակամար...

Ոսկեվառ ու ոսկեհուռ  
երկիրը կրել է լուռ,  
երկիրը՝ կրած շան պես,  
աշուն է, ցնորք բուռ-բուռ...

Աշուն է,  
հրթիռ ու հիռ,  
մելանխոլ ու մարմրած,  
աշուն է, քնքուշ իմ քույր,  
կրակը սրտում բաղած:

1965 թ.

\*\*\*

Ելի ձմեռ ու էլի ցուրտ,  
դրսում բարակ ձյուն է մաղում,  
ու ես նորից վառարանի  
ջերմին մոտիկ,  
փախած սրված ականջներից՝  
հին օրերի թելն եմ մանում:

Չշուկներից, բարակիրան խոստումներից,  
շիկնանքներից,  
չբարձրացրած, բայց կուսացնող  
մեղմ խոսքերից,  
տաք աչքերից,  
փակ շուրթերից թել եմ քաշում  
ու լուակյաց,  
վառարանի շուրբին մոտիկ,  
գործում եմ իմ նոր երազը:

Ի՞նչ նոր երազ,  
հազար անգամ մտածել եմ,  
մտերմացել ու հեռացել:  
Հազար անգամ ընտելացել,  
խոռվել եմ:  
Թելն եմ քաշում հին օրերի,  
ու ձյունը մեղմ փաթիլվում է,  
կուտակվում է իմ կողերին,  
կրծքի, ապա իմ աչքերի, դեմքի վրա:

Փաթիլվում է ձյունը մեղմիվ,  
երազներն են առնում թևեր,  
ու վերևում, աստղերի մոտ  
գծվում սերս՝ հուր աչքերով,  
անթարթ, անթառ,  
մթից, լույսից, ձյունից հաճառ:  
Ելի ձմեռ ու էլի ցուրտ:

ԶՅՈՒՆ, ԶՅՈՒՆ, ԶՅՈՒՆ

Պատուհանիս տակ՝  
ձյուն թագավորական  
և արքայական լաց,  
պատուհանիս տակ՝  
ճերմակ, ճերմակ, ճերմակ  
երազների վերմակ:  
Երկար, անդարձ զիշեր  
մի տեսլացած ճամփորդ  
հոգիների խաղաղ  
ձյունափոշում:  
Նվազում է մեկը  
սառցե քնարը իր,  
սառցե մատներով իր  
ձյունատեսիլ:  
Պատուհանիս տակ՝  
ճերմակ, ճերմակ, ճերմակ  
աղբատության վերմակ,  
պատուհանիս տակ՝  
ձյուն թագավորական  
և արքայական լաց:

\*\*\*

Վերջին աշուն, վերջին տերև, վերջին սեր,  
լրված բառեր, ապակու դեմ զոր հույսեր,  
ու նվազներ, ու նվազներ ոսկեհատ՝  
պատուհանի ապակու դեմ հուսահատ:

Քայլող ծառեր, քայլող այգի, քայլող երգ,  
քայլող նեղիկ, փոքրիկ, փոքրիկ արահետ,  
ու հեկեկոց ապակու դեմ վաղորդյան,  
հրաժեշտի, ամոքումի ու լրման:

Ու լուսնահար, մի կապտաթույր առավոտ,  
նեղիկ, նեղիկ, լույսի նեղիկ արահետ,  
հոգին տանող ծանր ու նեղ մի կածան,  
վերջին աշուն, վերջին տերև, վերջին սեր...

\*\*\*

Մազերդ քափվել է ուսերիդ,  
աշուն է, խռոված իմ սեր,  
քամի է ու դավ է, ու ցորտ՝  
վարսերիդ, խելահան իմ սեր:

Փողոցում՝ տերևներ ոսկեհատ,  
ու լրված ոտնահետք, ու զարուն,  
այն ո՞վ է պատմում հուշերը,  
հուշերս այն ո՞վ է քրքրում:

Սիրելին, գնում ես մոլորված,  
քայց ինչքան հոգմած ես ու մոայլ,  
աշունը փովել է ուսերիդ,  
աշուն է...ոսկեհատ...ոսկերեր...

\*\*\*

Ելնեմ, ընկնեմ ճամփա  
այս աշունքվա միջով,  
գնամ, ինչքան որ կա,  
գնամ ճամփով աշնան:

Թափվեն սերերն իմ սուրբ  
մազերիս ու դեմքիս,  
խարվեմ լրմամբ նորից,  
խնդամ ու լամ էլի:

Նվազներով ծննդա  
թափեմ արցուքն իմ տաք,  
թող անձրեր լվա  
հեկեկոցը մենակ:

Չասեմ թարև ու թառ,  
չընկնի տերև իզուր,  
անցնեմ չանցած ճամփա  
այս աշունքվա միջով:

### ՆՈՐ ԱՇՈՒՆ

Երկու ձեռքեր են օդի մեջ այրվում,  
որպես գունազարդ հրավառություն,  
հավատարմության ու ցավի միջից  
փայտի ճայրճայրյուն ու հոգեհանգիստ:

Օդը խտացել՝ մի քարե արձան,  
երկինքը բարակ իրանն է ճկում,  
արևը աաշել, զալարվում է ցած,  
քամին տերեկն շունչ է ներարկում:

Եվ ծեր աղոքքն է հողի թաց գուղձից  
բարակ ու անտես երկինք բարձրանում,  
աղոքքը ինչ է՝ մի փոքրիկ հանգիստ,  
որ երկնքին է լուս ապավինում:

Այսպես կարող է ամեն ինչ կորչել,  
մատնվել ամեն ինչ հուսահատության,  
օրինիր, ծեր արև, օրինիր, ծեր երկինք,  
կորչում է հույսը հավատարմության:

Աշունը ինքը՝ փորձության մի քար,  
և բնական է վախճանը հոգու,  
արև՝, աստված իմ, դու միակ սատար,  
մի կործանիր դու քնարը գոյության:

Զարթնիր և կանգնիր, և ժպտա նորից,  
երկնքից է մեր հավատը անշեշ,  
աշնան խարույկը, հավատի պես քար,  
տրտում խոսքերից կարող է սառչել:

\*\*\*

Զյունը հյուսել է փողոց,  
տանիքներ ու ծառեր,  
ձյունը հյուսել է սրբոց  
խոսումներ ու բառեր,  
ձյունը հյուսել է և քեզ,  
դու՝ փաթիե աշխարհ,  
ձյունը հյուսել է և ինձ,  
կարոտ, և սեր, և իղձ:  
Զյունը հյուսել է երկինք,  
ձյունը հյուսել է դաշտեր  
ու հերիաքե մի գիրք  
փոել երկնե-երկիր:  
Նկարել է հենց նա  
իմ երազը անկիրք,  
որ ճերմակով այդ ջինչ  
իջնի սերս երկիր:  
Զյունը հյուսել է փողոց,  
տանիքներ ու ծառեր,  
ձյունը հյուսել է սրբոց,  
խոսումներ ու բառեր:

1973 թ.

\*\*\*

Ժայռը թիկնել է ծերունու նման,  
արևն օրհնանք է վերից մաղում,  
խենք ալիքները բռուների նման  
լցվում են պապի գիրկն ու խաղում:  
Ժայռը ցնցվում է՝ բերկրանքով արբած,  
հատակն է սուզվում ծով անուշների,  
ու ալիքների շորջպարով տարված,  
փրփուրն է խմում մարմար ջրերի:

\*\*\*

Այս աշունը  
բանաստեղծուիի էր,  
շուայլ վաճառական,  
հոգնած մի հարթեցող:  
Նա բողեց գույնզգույն  
բանաստեղծություն,  
ոսկեղբամներ  
և մի փոքրիկ ողբերգություն:  
Մենք հեռացանք նրանից՝  
մեր մեջ սպանելով մի վարժված  
տիրություն,  
մի բնանկար  
և նի սեր:  
Ու փոքրացավ ամեն ինչ,  
տիրությունը  
և հեռու հեռվում ձեռքը մեզ  
պարզած  
մեր սիրո նկարը:  
Այս աշունը անցավ տիրությանք,  
ցնցոտիավոր  
մի բանաստեղծուիու նման:

\*\*\*

Պահ է լինում այնպես մոլոր, այնպես լուռ,  
սրտիս հետ եմ գրույց անում գիշերով,  
շշուկներիդ ծայնն է հասնում ինձ տիսուր,  
ու ապրում եմ նոր արթնացած հուշերով:  
Արտավում են աստղերն, ասես, երկնքից,  
ու այնպես է հոգիս այսօր հեղեղված,  
որ երկինքը սև աչք թվաց իմ աչքին,  
լուսինն ասես արցունք մի բյուրեղյա:

## ՏԱՂ ԱՌԱՎՈՏԻ

Առավոտյան մեռնում է գիշերը,  
և հոգնություն կա բռչունների թևին,  
ծաղիկները լուսնոտ օրորվում են  
և բացում աչիկները անկիրք արեգակին:  
Եվ անկողնում արքնացած աղջիկների նման  
ծովը օրորում է մի հոգնած մեղեղի,  
արեգակի ուսին մեռած գիշերը  
օրինություն է կարդում բացվող առավոտին:  
Ծառերը տրորում են սաղարթները փարքամ  
և հոգնած երգեր մեներգում կաղնուն,  
բռչունների պազշոտ ջերմությունը  
ավետում է բարի ու ջերմիկ առավոտ:  
Հույսը ուսն առած աղջիկն այն կածանի  
շտապում է ձուլվել բռչունների երգին  
ու սափորը ուսին՝ գողտրիկ մի տրսմությամբ  
կանգնած շշնչում է հոսող առավոտին:  
Տեսիլքների ճերմակ, անվերջ կածաններով  
սերմնացանի գունատ ուրվականն է սահում,  
օրը երգ է դառնում, աղջիկը՝ բռչուն ճերմակ,  
և արեգակը՝ առավոտ լուսու:

\*\*\*

Գարուն է, գարուն,  
իսկը դասական,  
ոչ աղմուկ, ոչ կանչ:  
Ծաղիկը ցավից տնքում է, հեռում,  
ձյունը ամոթից գլուխն է պահում,  
լաշակներն հանել են ծառերը մայրի,  
երկնից կառչել թփերը վայրի,  
լուռ ծիծաղ, լուռ կանչ,  
գարուն է, գարուն,  
իսկը դասական:

Ծիծեռները, ահա, օդը թրատում,  
մրջյունները մեղմիկ խոտն են հոտոտում,  
բռնվել են ողջ երկինք ու երկիր,  
մահ է և ցավ է,  
տնքոց ու պայթյուն,  
անզեն պատերազմ,  
ծնունդ ու մահ,  
գարուն է, գարուն,  
իսկը դասական:

Եվ դու կանգնել ես,  
և ես կանգնած եմ  
քո ու գարնան մեջ,  
ոչ կրիվ, ոչ վեճ:  
Ծնունդ է ապրում ամեն արարած,  
և ծիլ և՛ ծաղիկ, և՛ ամպի շողիկ,  
և՛ գարնան հովիկ,  
ի՞նչ խլոտոց է,  
ի՞նչ իրարանցում:

Սպիսներն իմ փափկել են, իմ սեր,  
ես չեմ հանդիմի արևից խոսել,  
ես էլ չեմ խոսի,

իսկ դու խոսում ես,  
իսկ դու, անիրավ,  
իսկ դու առել ես գարունը քո մեջ,  
լուս ցավեր, լուս կանչ,  
իսկը դասական,  
պատերազմ ու վեճ:

Մազերդ թել-թել, ձմեռվա քնից,  
ձմեռվա քնից ելել են, ելել  
աչքերդ ծավի,  
ծիծաղդ ծավի,  
ձմռան ցրտերից փախել են, փախել,  
հողի պես ձգվել,  
ծաղի պես ձկվել,  
ձկվել ես, կանգնել:  
Դասակա՞ն գարուն,  
դասակա՞ն իմ սեր:

Ուզում ես, որ ես հողը համբուրեմ,  
փաթաթվեմ մնամ մայրենու քնին,  
անձրևի տեղակ, ամա ու շամբի հետ  
ծննդի խոսքեր մրմնաց հողին,  
իսկը դասական:

Դու, որ այդ գիտես,  
բայց ես, սիրելիս,  
քող որ հիանամ,  
քող խարվեմ-մնամ,  
քող արբեմ մի քիչ,  
նախ գարնան այս լուս  
դասական ճիշով,  
հողի տակ ապրող  
անցած գարունքի քնած ծաղկունքի  
խոտացրած բույրով,  
մանկան աչքերում արարվող լույսով,

մարմինը ճկող ծաղիկ ու բույսով,  
հետո, և հետո, և անվերապահ  
քո և միայն քո  
դասական ու միշտ  
հավերժող լույսով:  
Իմ նորեկ գարուն,  
նորացող իմ սեր:

### ՍԵՎԱԹՈՒՅՐ ՎԱՐԴ

Վարդ սևաթույր, հրապուրիչ,  
որոգայթի լուսե պատկեր,  
տագնապներ կան քո աչքերում,  
քո թերթերում՝ լույսի ծալքեր...

Ծամիրամի դու նոր դուստր,  
Աստծու դեմքին ժատացող հարս,  
իրե դուստր, իրե պարան,  
փշերի մեջ փակված տապան...

Հմայումի դու մութ գիշեր,  
խոցված դու սեր՝ միշտ անհագուրդ,  
քո թերթերը վառվող շուրբեր,  
և երազ՝ գիշերներ մութ...

Վարդ հմայող, հրապուրիչ,  
գիշերների անուշ երազ,  
աստվածուիի դու սևաթույր,  
չարի ձեռքով երկրում ծնված...

1991 թ.

\*\*\*

Ծառն այնպիս է քափում տերևները,  
ինչպիս աղջիկը՝ զգեստն իրեն նեղող,  
աշունը գալիս է անթել զանգակներով,  
ու սերն է քաքում հպվում աղջնակին:

Ու սիրահար սղջիկները տիսրում են աշնանը,  
ու քախծոտ երգեր են նվազում սրտում,  
այդպիս նվում է ջուրակը մենակյաց,  
երբ տերը մեռնում է անել անապատում:

Բայց սերը ունի պատախանը սիրո,  
աղջիկը հորինում է գարուն և նոր սեր,  
ու տերևները բացում են շրբունքները,  
ու աղջիկները հագնում են նոր զգեստներ:

Աշունը տիսրությունն է սիրահարների,  
գարունը՝ հերիաքը կրկնվող:

\*\*\*

Բարակ ձյուն եկավ,  
բարակ անձրև,  
սարերը շուր եկան  
գարնանաձև:  
Ծաղիկներ ելան  
սարերն ի վեր,  
առուներն անուշ  
առան թերք:  
Օդն աղմկեց  
բռչնանկար,  
զմրուխտով ծաղկեց  
ամեն մի քար:  
Ու հնսեց երգը  
մեղմիվ ու պարզ,  
աղջիկը հև առավ,  
դարձավ երազ:

\*\*\*

Քեզ ի՞նչ եղավ,  
դե, օրորա, խոսի՛ր, խոսի՛ր,  
ի՞նչ ես լրել տուն ու այզի,  
ծիծենակին բնից խլել,  
աշունն առել ոտքերիդ տակ,  
գլխիդ կապույտ լաշակ փոել,  
նստել քանդված էդ պատի տակ,  
եղքան սիրուն, եղքան մենակ,  
դեմդ դրել հին տաղարան,  
աշքերդ՝ բոց, սիրտդ՝ ելման,  
սերդ՝ հոյզով,  
էլի նորի՞ց «Դե յաման» ...  
Վեր կաց, Շուշո՛,  
վեր կաց, նազով,  
վեր, պար պարենք իրար սազող,  
վեր, շորորա, դե, օրորա,  
քափիր շողեր,  
քափ տուր թեեր,  
բարակիրան, ցող ու դողեր,  
աման, յաման,  
հերիք եղաւ,  
քափ տուր մի քեզ,  
«նազո՞վ աղջիկ»  
դե, օրորա,  
եղքան բարակ, եղքան թերևն,  
այ քեզ պատրանք աչքի առաջ,  
դե, որոտա,  
զարկիր գետին,  
ցրիր մշուշը,  
մեջքիդ գոտին պնդիր, անուշ,  
«Ես ինչ զուլում աշխարհ է»  
եղպես, ամուր,  
թունդ տուր, զոռա,

... աչքերը սև,  
մազերը ծիգ,  
մեջքը բարակ,  
դեմքը լուսե,  
«Լուսնակ գիշեր»,  
«Լուսնակն անուշ»,  
չէ՛, չես կարող, Շուշո չկա,  
վեր կաց, իմ սե՛ր,  
քնից էղ խոր,  
առնենք արև, ծովեր ու հով,  
առնենք սերերն էն արևկող,  
առնեն ես քեզ,  
փախցնեմ ես քեզ հին գրքերից,  
լրված իմ որք Գառնո սրբից,  
անցնենք սարով մախմուր կանաչ,  
ոտք կամաց,  
քար է, ա՛յ խենք,  
ա՛յ քեզ կարոտ,  
ա՛յ քեզ շողեր,  
ա՛յ քեզ Շուշո,  
էս ի՞նչ դավ է,  
կամաց, աղջի՛,  
կամաց, հորիե՛ր,  
... մարմինը՝ քոց,  
թերը քոց՝  
լիքը ցավեր,  
աչքերը սև՝  
բեկված լույսից,  
մազեր թել-թել՝  
փոփլած ուսին,  
էլ ի՞նչ գոտի ու պարեզոտ,  
ի՞նչ գուլպաներ,  
ոտքերը քոք  
զարկվում հողին, քարին, ցողին,

արև գուլնա, ծննդա արև,  
կարմիր, կապույտ, չկա վերև,  
վերը՝ մշուշ, կարմիր ու որք,  
վերը՝ ապշանք, անտեր աստված,  
որ մոլորվել էս խենք պարից  
ու հալվում է սուրբ հաճույքից:  
Ու ի՞նչ պար է,  
ա՛յ քեզ պատրանք,  
ա՛յ քեզ զգվանք ու հալածանք,  
ա՛յ քեզ կարոտ, այ քեզ սիրերզ,  
ա՛յ քեզ տաղեր, այ քեզ պարերզ,  
լուսին, արև խառնվել իրար,  
ի՞նչ զարքոնք է, էս ինչ նկար,  
քող է իշել ոտքից գլուխ,  
ճերմակ մի քող, ճերմակ փրփուր,  
ու հուր աչքեր, ծխող մի քոց,  
մազերը՝ թել, աչքերը՝ գոց,  
նազանքը՝ հուր, մարմինը՝ հույզ,  
թեթև, ծանր, դրախտի լույս:

\*\*\*

Կապույտ երեկոն իշել է պարտեզ,  
անուրջ սոսյուն է տարածվել չորս դին,  
ես քարացել եմ՝ լույս արձան որպես,  
մարմնացած՝ քոչող ծաղկանց երգին:  
Լուսինն ամորիսած, կապույտ շղարշով  
ծածկել է ուզում դեմքը կուսական,  
լոկ բնությունն է սրտի դողանջով  
մեր ամուսնության ամորիսած վկան:  
1965 թ.

### ՀԱՅ ԿԻՆԸ

Անեծքի նման կախվել է դեմքիս,  
չի բողնում ապրեմ.  
մայրը թաղել է որդուն մինուճար,  
խելագարվել է:

Գերեզմանոցը դարձել է սուրբ տուն,  
չկա վերադառն,  
աղջիկը կոթնած պահ պատուհանին,  
սպասում է նրան:

Մազերն է քանդում սև, զիսախոխիվ,  
հայելին վկա,  
օրեր են անցնում, տարիներ՝ տամուկ,  
հերոսը չկա:

Ժամանակը հեզ բռչում է, վարգում  
զիշեր ու ցերեկ,  
ամեն ինչ այնպես հրաշք, գեղեցիկ,  
թվում էր երեկ:

Պատուհանի դեմ զիսերը խոխվ  
դարձել են ճերմակ,  
պաղ ապակու հետ խոսքեր են ձուլվում.  
- Ու՞ր ես, իմ միակ:

Գերեզմանոցում սև քուի նման  
թևերը արնոտ  
մի բռչում է լուռ զարկվում սև քարին՝  
հավերժ վիրավոր:

### ՕՐԱՏՈՐԻԱ

Երբ ոտք դրի կառքը այդ հին  
և հենվեցի բարձին փափուկ,  
ձիերը զիլ խրխնջացին  
իրենց հատուկ խոսք-խորհուրդով...

Երեք ձիերը գեղանի  
ծափ տվեցին ու պլացան  
ես հասկացա, որ դրախտին  
մոտենում ենք մենք ականա...

Ոսկերիգ կառքն է շողում  
արկի տակ հնամենի,  
դաշտերն անծայր կու են գնում  
վազքի առաջ մեր ամեհի...

Հենվել է նա փափուկ բարձին՝  
Կլեոպատրա թագուհու պես,  
և ես՝ արքա Արայի պես,  
մոռացել եմ Շամիրամին...

Ոչ մի սուլթան Արևելի  
չունի նման զարդ պալատում,  
ոչ իմաստուն հնոյիկ Գանդին՝  
Էությունն այս իր ուղեղում...

Գեղեցիկը և խոկն արդար  
ամփոփված են նրա հոգում,  
թագավոր են և գահը ին  
մատնել են խոլ այս տարերքին...

Աչքերի մեջ նրա մեղսոտ  
էությունն է անծայրածիր,  
և բառերը տաք ու քնկոտ՝  
ճորտեր ճապուկ ու պացիկ...

Նա ինձ պատմում է մանկացած,  
և խոսքը այդ գորովազութ  
տանում է ինձ դրախտը այն,  
որից Աղամն է արբեցած...

Տրտում են սեզ ու ծաղիկ,  
ուշում է կուրծքը ձիերի,  
ապարանքը մեզ սպասող  
անհամբեր է ինձնից հիմի...

Կառապանը զույգ պողերով,  
զիմին դրած կապույտ թասակ,  
շշնջում է սուրբ ձիերին.  
- Դե սլացեք, արագ, արագ...

Կտամ վարսակ մարգարիտով,  
կմրափեք սեգերի մեջ,  
և ձիական ամեն պատրանք  
կկատարեն այսօրվա մեջ...

### ԶԱՐԹՆԻՐ, ԻՄ ՍԵՐ

Վայրի մի սեր,  
նման զարնան վայրի վարդի,  
ակոս-ակոս բացված հույսեր՝  
երազների ու կարոտի,  
և դու, ահա, հայտնվում ես  
մի հրաշքով,  
և ես, ահա, քո հրաշքով  
լուսավորվում...

**ՈՒՏԱԲՐՈՒԺԻԿ**  
քայլում ես դու շատ ու շողով՝  
ծաղիկները ու խոտերը տրորելով,  
ու հայացք քարանձավին,  
ինչպես հայացքն Աստղիկի՝  
սիրո պահին:

Դու գնում ես,  
ու ես, ահա, զալիս եմ քո ոտնահետքով,  
և քարերի սրությունը  
ինձ ծունկի է քերում հաճախ,  
քայց քայլվածք՝ նազանքի ծով,  
ինձ չի քողնում մնամ գետնին...

Ու շրջվում եմ ու նայում ետ,  
դու քայլում ես քարանձավի քո լությամբ,  
ու զիտեմ՝ կհասնե՞մ քեզ,  
քեն ինձ այդպես ցած կրերի  
հոգնությունը քո նազանքի:

Հիմա արդեն չես երևում,  
ճապուկ ցատկով սահեցիր ներս,  
դու՝ քարանձավ, քարանձավի լության մեջ,  
և ես արդեն նոր ուժ առած,  
և քո վառած ոտնահետքով  
զալիս եմ քեզ...

- Դու ինձանից չե՞ս ամաչում,-  
ի պատախան իմ հարցումի  
գլուխն է նա ժխտող ճռում...  
Ու ճռվում է մարմինը իր  
մի հին ցավից,  
որից միայն աստվածները չեն ամաչում...

Մերկ է մարմինը կուսական  
(և խոսքերը՝ երգ երգոց),  
որի ճկուն նվազումից քարանձավը՝ իբրև վկա,  
հափովում է շշունջների անդրադարձից...  
Քարանձավում Վեներան է ննջում, ահա,  
մի լուռ աստղ քրքում է խոլ ճակատին,  
և անձրևը հիմա, անշուշտ, կորոտա,  
և պատկերը նոյնն է, ինչպես մեր երազում:

Մանկաժախտ իր հայացքում  
ակոս-ակոս լույսն է քացվում,  
և հնչում է քարանձավում  
արձագանքը լույս-քրքուն:  
Այս ամենը, այո՛, այնպես,  
ինչպես գիտենք հեքիաքներում,  
քայց շարժվում են թևերը, տե՛ս,  
և նա ինձ իր մոտ է կանչում:  
Այս մերկությամբ և մեղկությամբ այս լուսավոր,  
այո՛, միայն տառապել են քրմերն արդեն,  
որոնց աչքերը սև ու խոհուն  
ճիշտ նման էին քարանձավի մքությանը:

Եվ Աստղիկը չի ամաչել  
սևությունից նրանց լուսեն,  
որովհետև աչքերը այդ քող են դարձել  
ամոքումի ու ամոքի մերկությանը:

- Աստղիկ, իմ սե՛ր, նույնն են, ահա, իմ աչքերը,  
իսկ դու չկաս,  
ես պատռել եմ քողերն ամեն կեղծ ու մոլոր  
և մշուշը՝ քեզ բոլորող,  
և աչքերս՝ անապատի շեկ առյուծի,  
գամել անթարթ արեգակին:

Սի՞թե սուս է և կամ թե մի  
շինծու լեզենդ, հորինվածք է  
գոյությունդ,  
նման հազար երազների,  
որից միայն պատաճին է քրտնաքոր  
զարբնում հանկարծ  
և անկողնում ալեկոծվող,  
հուսախարված ամփոփվում է քնի մեջ խոր...

Լեզենդների կործանումը  
կկործանի, անշուշտ, և մեզ,  
որովհետև առօրեական խոսք-զրույցից  
և զրույցից առօրեական  
չեն ծնվելու ոչ աստվածներ և  
ոչ էլ սեր աստվածային...  
Այնպես ուզում եմ խոր քնել:

ՁԵԶ, ԱՆԾԱՆՈԹՈՒՀԻ

Ձեր աչքերում երկինքներ կան,  
արևներ կան շիրդեհված,  
օվկիաններ կան, առազաստներ,  
մակույկներ կան ալեկոծված,  
հավատի մեծ լուսիններ կան,  
կարապներ կան լուսաբոիչք,  
և հինավուրց երազներ կան  
ասպետների սուրբ ձեռքերին,  
ու հավատի խոստումներ կան՝  
կարոտների կայմին գամված:  
Ձեր աչքերում խոստումներ կան,  
լուս երազներ՝ չվերծանված,  
ձեր աչքերում թռչուններ կան,  
սպասումի երգը պահած,  
ու հավքեր կան հազարանուն,  
հազարամութ, խորիրդապաշտ,  
ու ձեռքերում կանքեղներ կան  
երազակուլ, լուս մթանած,  
ու զանգեր կան առափոտի՝  
արշալույսին լուս հեկեկող:  
Ձեր աչքերում մատույցներ կան  
նավակներին ի հատուցում,  
չվերծանված ձեր աչքերում  
թռչուններ կան խելազարված:



\*\*\*

Քեզի եկա՝ իբրև ուխտավոր մի հոգնած...  
Դ. Վարուժան

Լուր՞մ ես, վեր կաց,  
գմա և ասս նրան.  
- Աշունը ուշաթափ է արդեն,  
հարկավոր է խոսել,  
լրությունը շատ է,  
հարկավոր են բառեր գունեղ:

Աշխարհը աշնան  
երգ է դարձել,  
լսո՞մ ես, շտապել է պետք,  
մահաբեր աշունը  
խախտել է ամեն բան,  
և ցուրտ է, և մերկ է, և տխուր:

Դու նրան պատմիր,  
թե ինչպես է օրը,  
գարնան օրը վարարում գունեղ,  
հոտը սար է ելնուն,  
հոտը ձգվում է վեր,  
դեպի ծաղիկը կարմիր,  
արնաներկ:

Ասա, որ սարերում  
ծաղիկներ կան աշնան՝  
բռնկված կարմիր բոցով,  
ասա, որ այնտեղ կարմիր է ամեն բան,  
որ ցողն է լոկ ճերմակ՝ ոնց փարիլ:

Ասա, որ արեգակը փայլում է սիրակեզ  
և տապ է վար քափում շուրթերից,  
ծաղիկներն այնտեղ սիրո պար են բռնել  
ու երգում են հրկեզ-հրկեզ:

Տես, վերջին տերեւը  
հիմա վայր կրնկնի,  
և ուշ կլինի, և տխուր,  
լսու՞մ ես, սպասում է  
նա աշնան շուրթերով,  
լսիր, շտապիր, ուշ է:

ՍԵՐԻ ԵՐԿՆՔԻՑ ԸՆԿԱԾ ԹԻԹԵՌ.

Սեր՝  
Երկնքի թերև մի բառ,  
ամպի ծվեն, երկնքի քար,  
դու՝ ցուրտ խորշակ, դու՝ վառ խարամ,  
մահվան հանդեպ կանգնած դու սյուն,  
քամու բերանն ընկած տերեւ...

Սեր՝  
Երկնքից ընկած քրքիջ,  
դու՝ երկրի ամենաջինջ,  
ամենապարզ, ամենաքիչ,  
ամեն հոգու անընդունակ,  
դու՝ երկրին, հողին այս խորք,  
դու՝ երկնքին ամենամոտ...

Սեր՝  
ցավերի շտեմարան,  
դու՝ վշտերի անվերջ շարան,  
հոգիների ավետարան,  
եղծված դու բառ.  
եղծված մարմին,  
դու՝ անօրեն, անհնարին...

Հայր, մայր, որդին՝ իրենց Աստծով,  
անընդունակ քեզ տիրելու:  
Սեր՝ երկնքի թերև մի բառ,  
դու՝ երկրի ամենաջինջ,  
ամենամոտ, ամենաքիչ,  
սեր՝ երկնքից ընկած քրքիջ...  
1985 թ.

\*\*\*

Ընդհանուր պատմություն, Եվա՛,  
փշրեցի վերջին սատարս,  
կանգնեցի քո առաջ խորտակված,  
մերկ, որպես Աղամը, Եվա՛:

Չույզ գավաթ, աչքեր ծարավի,  
տրտմության լույսեր դողացող,  
սպասումի կարոտով լեցուն,  
ծարավով անհագուրդ, Եվա:

Դու երկինք փնտրեցիր աչքերում  
ու կրակ, որ վաղուց էի մարել,  
սպասման կրակը իմ վերջին՝  
քեզ համար, քեզ համար, Եվա՛:

Ընդհանուր պատմություն, Եվա՛,  
փշրեցի վերջին սատարս,  
կանգնեցի քո առաջ խորտակված,  
մերկ, որպես Աղամը, Եվա՛:  
1967 թ.

\*\*\*

Ես կգամ, որպես հալածական ամպ,  
կդառնամ գոտի, կապս ու քղանցք,  
կգամ հոգնարեկ, խելահեղ ու բաց,  
բայց դու հեռացիր, հեռացիր շուտով:  
Փակիր տաճարիդ դռները ամեն,  
գնա հեռացիր խորանի ազդու,  
թե կոտրեն խարխուլ դռները վանքիդ,  
թե գտնեմ ես քեզ, գուցե փրկվեմ,  
խաղաղվեմ անդուն,  
ծնկեմ անաղոքը, անտրտունջ, անկիրք,  
ծնկեմ կիսավեր հավատիդ առաջ,  
շշնչամ քարուն.  
- Մարիամ իմ, իմ սուրբ...

Այս Տոշի

Ուստի այսօնություն  
Տոշին սիցու հայու.  
Ճա այս արեւ է,  
Ճա թառջն արեւ...

Ժե՞ ջայռաւ ու մըջը?  
Տոշի թշունք չառ,  
Ժայ ահա արեւ է,  
Ժայօծ արեւ...

Ահա ջայռաւ է  
Ի Տոշի թշունք,  
Երան ջայռաւ է,  
Երան Տոշի...

Ուստի այսօնություն  
Առաք սիցու հայու,  
Արձա ջայռաւ  
Տոշի է չառ...

Միբո՞ ԾԱՂԻԿ

Մանկամարդ աղջիկ՝  
ծաղկի սիրահար,  
քո սերն ուրիշ է,  
քո խոսքը՝ ուրիշ...

Քեզ՝ գարնան բոլոր  
ծաղիկները զառ,  
բայց սերն ուրիշ է,  
բույրը՝ ուրիշ...

Սերը գարուն է  
իր ծաղիկներով,  
կրակ գարուն է,  
կրակ ծաղիկ...

Մանկամարդ աղջիկ՝  
բառի սիրահար,  
սիրո բառերը  
ծաղիկներ են վառ...

\*\*\*

Ծառը ստվեր ձգեց,  
երբ արևը դանդաղ թիկնեց սարի կողին,  
ու ծառերի շարքը, կռանալով մեր դեմ,  
ասես, զլուխ տվեց:

Ու երկինքը կապույտ զատվեց երկրից  
հեռվում մարող կարմիր արեգակի լույսով:  
Քո աշքերում փայլեց բյուրեղացողք մի շող,  
երազներից պոկված, երազային արցունը,  
ու մեր վառվող աշքերի թարթիչներից  
կախվեց խոհերով լի իրիկնամուտ:

\*\*\*

Խորհրդավոր իրիկունն այս  
դարձավ պարզկա մի մայրամուտ:  
Նախ ծանրացան ձեռքերդ գույգ,  
հետո դեմքդ շառագունեց,  
կապույտ քողեր հազան  
սարերն արևապաշտ,  
աչքերդ գույգ դարձան  
այրող կրակարան,  
կարմիր ու բորբ կրակվեցին  
թարթիչներդ,  
լուս մարեցին շրբունքներդ,  
ինչպես մոմի ստվերի տակ  
ճերմակ թղթեր,  
մազերդ ձիգ՝  
անվերջությամբ ձգված, կորան...

Հետո դանդաղ ծունկի իջար  
խորհրդավոր իրիկվա դեմ,  
մայրամուտի աչքը գոցվեց,  
հոնքը պատռվեց լեռների,  
իրիկնային մի մեղմ վտակ  
հոսեց, ինչպես մորմորի գետ:

Ու ծկներդ՝  
հալվող ձյունից ճերմակ ու մեղմ,  
հոսող գետից հստակ ու ջերմ,  
գունատվեցին ու դողացին,  
ու մարեցին գիշերվա դեմ:

Ծունկի իջար առավոտը,  
ու հափոված մայրամուտը  
մեռավ, որպես կրակի գետ:  
Այսպես եղավ, հայտնվեցիր  
Դու՝ իմ ու մուքի,  
կարոտի մեջ:

\*\*\*

Ես հավատում եմ,  
որ մի օր դու կլինես  
օտար, կմնաս հեռու,  
ու սիրտս փախչող,  
ու սիրտս մաշող  
քեզ չի կանչելու,  
քեզ չի կանչելու...

Ես հավատում եմ,  
որ ք ձեռքերդ,  
իմ տաք օրերի  
սիրո մատները  
դառնալու են քար...

Ես հավատում եմ,  
որ սիրտս լացող  
լացից ու սիրուց  
դառնալու է քար...

Հավատում եմ,  
անարգանքի  
կարիք չկա,  
հավատում եմ,  
որ սիրել եմ,  
չարչարել եմ,  
որ ներել եմ  
ու ներվել եմ:

Հավատում եմ,  
որ անուն կա,  
սիրո, հույսի անուն,  
որ քեզ մղում է  
նորից կյանքի:  
Անուն, որ քեզ  
ստրկացնում,

ստորացնում,  
քո մեղքերն է  
քո դեմ հանում:

Ես հավատում եմ...

1970 թ.

\*\*\*

Սերը վիրավոր կրծքով  
ընկել էր կտավների վրա,  
մի հիվանդ հայտնություն,  
նորօրյա մի հայտնություն  
վիրավորված սիրո երգն էր երգում:  
Սերը վիրավոր կրծքով  
ընկել էր,  
բանաստեղծը տողեր էր հորինում  
փրկելու նրան:  
Սերը ընկած էր դիմակներից գունատ  
ձեռքերի վրա,  
և նրա դեմքին մեռնում էին  
բանաստեղծություններ,  
հայտնություններ,  
հույսեր:  
Ես կմեռնեմ ցավով,  
սոսկումը ինձ ու քեզ երազ կդարձնի:  
Բոլոր գույների սկիզբը,  
բոլոր բառերի սկիզբը  
սերն է,  
մեր դարը,  
մեր շարժումները:

\*\*\*

Սի լրիր ինքդ քեզ,  
մի լրիր,  
տարիներ հետոն ես կզամ դեպի քեզ,  
մի լրիր ինքդ քեզ,  
մի լրիր:  
Շերմակած երգերս կփուլեն քո դեմ,  
հավատիս դրմերը սիրով են օծված,  
բառերս կարոտի մոմեր են,  
որ վառվում են սրբապատկերին առաջ:  
Մենակուրյան քողը ծանրացավ ուսերիս,  
հոգմությունս սեր է աղերսում,  
ինչ տիսուր է ապրել առանց քեզ,  
առանց քեզ մենակ եմ աշխարհում:  
Լսո՞ւմ ես, մենակ եմ,  
մենակ է կարոտս,  
մենակ եմ,  
մենակ են բառերս,  
ես:

\*\*\*

Քո՞յլո իմ, աղոքք արա կրկին,  
ինչու ամպես երկինքդ լուրք,  
տե՛ս, լուսինը ձորը սահեց,  
շշնջում են շրմերը սուրբ:  
Աղոքում է ողջ գիշերում  
բնությունը հազարերանգ,  
աղոքք է ողջ ծովը, նայիր,  
և ամպերի թուխապերը բարդ:  
Քո՞յլո իմ, աղոքք արա այսօր,  
տե՛ս, գիշերը սահեց անտես,  
աղոքիր, որ վաղը նորից  
արշալույսի նման զարթնես:  
1965 թ.

\*\*\*

Սերը ծաղիկ է,  
ու այն ապրում է մեր մարմից դուրս,  
նաև՝ մեր հոգում,  
հեռու և մոտիկ,  
որին միայն մեր աչքերն են տեսնում,  
որով սնվում է ծաղիկը սիրո...

Նա՝ մեր երազի երկնքից էլ վեր,  
մեր հոգու անհաս խորխորատներում,  
հեռու, շա՞տ հեռու,  
և այգեպանը մեր կարոտն է լուս,  
որը ջրում է ծաղիկն այդ սուրբ...

Այրվում է սերը քամու հպոմից,  
շշուկից խոսքի,  
սերը ծաղիկ է,  
անմարմին, անտես, և նա չի կարող  
ապրել առանց մեզ,  
և նա մեռնում է, եթե մեռնում ենք մենք:

\*\*\*

Դեղին երեկոն փուլել է խաղաղ,  
արտերն են ծփում ոսկե կոհակով,  
մի մութ տրտմություն լուսնակի պես պաղ  
սիրտս հեծծում է անհոյս տագնապով:  
Արևի պես վառ արտերը սոսյան  
շշնջում են քոյլ Գողթան մի երգ,  
հասկերը ոսկե երազ են հյուսում,  
մի մարող կրակ, անավարտ մի երգ:  
Դեղին երեկոն փուլել է խաղաղ,  
արտերն են ծփում ոսկե կոհակով,  
սիրտս տագնապով շշնջում է պաղ,  
սիրտս խլածիչ կանչում է քեզ, եկ...

1965 թ.

\*\*\*

Քո թովչական աչքերում  
երազներ կան անխորտակ,  
հրդեհվում են քո հոգում  
հրդեհներն իմ անապակ:

Զինջ են նրանք ու մաքուր,  
երազական ու թովիչ,  
քո աչքերում հրապույր,  
կախարդանք կա թովիչ:

Նրանք կանչում են հեռվից  
ու տանում են հեռուներ,  
նրանց մրմունց զանգերից  
գիշերներն են կախարդավել:

Լուս են թախծոտ բերկությամբ,  
ցնորական ու մթին,  
կախարդական գորությամբ  
կաշկանդել են իմ հոգին:

Ես սիրում եմ քո մթին  
կախարդանքը աչքերի,  
շղթայել է իմ հոգին  
հրապույրը քո իրի...

\*\*\*

Սև են օրերն ու հլու,  
դու հեռու ես և օտար,  
երազներիս իմ ուրու,  
շվերծանված հրե փայլ:  
Ես քեզ մոտ եմ, քեզնից զատ,  
սերն անզոր է սիրելու,  
անապակ իմ, իմ անզարդ,  
սև են օրերն ու հլու:

1965 թ.

\*\*\*

Առասպել է արդեն սիրելը,  
սե՛ր իմ, առասպել ես ու միֆ,  
անհնար է քեզ նվիրելը  
բառերիս կարոտն անծիր...

Շարանը՝ ցավերից ծնված,  
չի հասնի այլս քեզ,  
նիրիի մեջ են օրերս ու սերս,  
նվիրումս՝ առասպել ու միֆ...

Խոսում են, չեն լսում իրար,  
անջատման բարձերը փափուկ  
փակել են փողոցներ ու բակ,  
և խուլ է ականջը համայն...

Սրից սուր է ճեղքվածքը հոգուս,  
ցավից մեծ ու մահից ահարկու,  
բառերը ամորք են և օտար,  
սրից սուր է ճեղքվածքը հոգու...

Ո՞վ թերեց ցավն այս մահաբեր,  
քնարեր ցավն այս խելահան,  
անջատման բառով մահարույր  
և խոսքի տարտամը անզգա...

Ո՞վ թերեց անջատման փակուղի,  
նիրվանա՝ կապույտ ու անծիր,  
զնզում է ծննդղան բազմածայն,  
բայց ծայնն այդ չի հասնում ականջին...

Այդ ե՞րբ էր, անցյա՞լ էր, չեմ հիշում,  
խոսքերը թե հուս, թե վիաս,  
հնչում էին, զիլ հնչում օդի մեջ  
և սրտում՝ որպես հավատամք...

Առասպել է արդեն սիրելը,  
սե՛ր իմ, առասպել ես ու միֆ,  
անհնար է քեզ նվիրելը  
բառերիս կարոտն անծիր...  
9 մայիսի, 1988 թ.

### ՆՍՍՆՈՒԹՅՈՒՆ

Սե՛ր իմ, դու նման ես  
քեզ ստեղծողին,  
պարզապես նման,  
նման ես նրան,  
ինչպես զույգ աչքի  
նմանությունը,  
ինչպես ձեռքերի,  
սիրող ձեռքերի  
մենակությունը:

Նման ես նրան  
քո խենթությամբ,  
քո լիությամբ,  
քեզ կյանքի կոչած  
ճշմարտությամբ:  
Սե՛ր իմ, դու նման ես  
քեզ ստեղծողին:  
1970 թ.

\*\*\*

Ասում ես՝ մենակ ես էլի,  
զնում ես հոգնությունն առած,  
աչքերդ խմում են էլի  
երկնքի լույսերը սառած:  
Չես զոնի, իզուր է, դարձի՛ր,  
երկնքի լույսերը հանգան,  
խարում է լույսը արևի,  
երկար է սիրո ճամփան:

\*\*\*

Նորից ես ու դու,  
և աշուն է կրկին,  
խառնվել է ելի  
տրտմությունը մեր հին:  
Անձրևում է քուռ-քուռ,  
երազները մեր՝ տաք,  
նորից ես ու դու,  
և լուսինը մենակ:

Մենք հոգմել ենք խոսքից,  
խոստումներից այն ջերմ,  
որ սիրահար զույգին  
ուղեկցում է եղեմ:  
Մենք հոգմել ենք բախտից,  
քմայթներից թեթև,  
որ մակույկը մեր  
մնաց լեռան ետև:

Նորից ես և դու,  
և լուսինը կրկին,  
խառնվել է ելի  
տրտմությունը մեր հին:  
1970 թ.

### ԼՈՌԻԹՅՈՒՆ

Ատում եմ շշուկը,  
համբույրը խոսքի,  
Տիրամոր աչքերը,  
կյանքը խարուսիկ:

Ուզում եմ լոկ երազ,  
անստվեր, անտարած,  
մեկ էլ քո աչքերը՝  
զգվանքից սառած:

1965 թ.

\*\*\*

Ասել, որ սիրում եմ քեզ,  
ու շշնչալ ինչ-որ բառ,  
իմ երգերի՝ տիրուհի,  
իմ մտերիմ, իմ անբառ...  
Ասել, որ կաս աշխարհում,  
որ կաս, ահա, երգիս մեջ,  
որ խոնարհված քո աչքերում  
հրարուխ կա անշեզ:

Ասել, որ իմն ես դու,  
որ փնտրել եմ քեզ երկար,  
որ անվերջ է երգն այս,  
որ կարոտում եմ քեզ:  
Ասել, որ կա աշխարհում  
սեր վերծանող ինչ-որ բառ,  
ասել, որ սիրում եմ քեզ,  
իմ մտերիմ, իմ անբառ...

1965 թ.

\*\*\*

Օրերում այս ծեր,  
հազարամյա,  
վառվեցին ջահեր  
կամա-ակամա:

Հույսեր վեր ելան,  
խորտակվեցին հույսեր,  
լոկ դու մնացիր,  
անմխիթար սեր:

Ու հեծկլտոցից  
տերևների պես  
լույսեր թափվեցին,  
որպես արցունքներ:

\*\*\*

Ծերմակ թիրեռ,  
Ծերմակ փաքիլ,  
Ծերմակ մոմ,  
բոլորել են  
քո աչքերի  
հայելում:

Ծերմակ քրքիջ,  
Ծերմակ լուսին  
երերուն՝  
քո աչքերի,  
աղոքքների  
երերում:

Ծերմակ, ծերմակ,  
անձեռակերտ  
մի տաճար  
սպասում է  
քո ոտքերին  
ձյունափայլ:

\*\*\*

Գիշեր է, ուշ է,  
կարոտի հետ մենակ  
թերթում եմ հուշեր...  
Խոռվի պես մենակ  
մութ թիրերիս խորքում  
ծիծաղում ես... երգում,  
կատակում ես, լալիս  
ու ծիծաղով քարե  
շշնջում ես մեղմիվ  
գիշերահյուս մի երգ:

1965 թ.

**ՈՍՊՈՍՈՂԻՄ**

Մեկը խոսում էր աշնան համբ այզում,  
մյուսը լալիս էր անձայն,  
լոկ տերևներն էին դեղին, դեղին, դեղին  
նրանց ճամփան ներկում:

Մեկը խոսում էր ինքնամոռաց,  
անհոյս հեկեկում էր մյուսը,  
ու անձրևն էր ընդհատ, ընդհատ  
վառում արշալոյսը:

Բացվում էր հեռվում անձայր  
գորշ, անարև կածան,  
մեկը կամչում էր, կամչում,  
մյուսը՝ համբ արձան:  
Լոկ քամին էր նրանց  
բռնում, կապում իրար,  
ու ճշում էին նրանք,  
ու մահաճայն փախչում,  
մեկը ընկնում էր հար,  
գնում՝ անձայր հեռուն,  
ու լալիս էր մյուսը  
անհոյս, անտեր, անտուն:

\*\*\*

Արժե սիրած  
աղջկա համար  
կյանքը զոհել,  
բայց զոհելն ի՞նչ է,  
սիրելու համար  
պետք է պաշտպանել:

1965 թ.

## ԱՆԴԱՆՈԹՈՒՔՈՒՆ

Որքան էլ ոսկենազի  
Զեր կապույտ զգեստը հեզ,  
կրակը թույլ է երկրի,  
կրակը մատնում է ձեզ:  
Զեր նազող աչքերը պաղ  
արևի կարոտ ունեն,  
անթեղված քնքշանքը հոգու  
անծանոթ ու խորք են ձեզ:  
Ինչքան էլ սիրոս գերի  
Զեր թերեւ սիգանքը պերճ,  
իմ հոգին լուռ է էլի,  
Զեր հոգին ցուրտ է ու խեղճ:  
Սիրում եմ ծփանքը հրավառ  
իմ անհայտ, հեռու երկրի,  
արևոտ իմ հայուիի,  
քո լին կրակը հիր,  
քո մրմունջ արցունքը տաք,  
քո անբառ շշուկը հեզ,  
արնաբուխ զգվանքը քո,  
քո ձկուն իրանը՝ թեզ:  
Որքան էլ ոսկենազի  
Զեր կապույտ զգեստը հեզ,  
կրակը թույլ է երկրի,  
կրակը մատնում է ձեզ:  
1965 թ.

\*\*\*

Օ, հեռու տար արցունքներն այդ,  
հեռու, հեռու,  
թե չէ սիրոս կրակով լի  
արցունքիցդ է բռնկվելու:

\*\*\*

## Սեր՝

տառապած փշե պսակ,  
հոգու անվերջ երկխոսություն,  
լուրջուն մեծ, բառերի սով,  
վայրկյանի մեջ հավերժություն...

Ամենօրյա հյուր մարդկության,  
ամենամարդ,  
քուրճ, խարազան,  
արյան թոխը, արթուն երազ,  
աստղանշան...

Յավի առաջ՝ խոնարհ ու հեզ,  
մահի առաջ՝ կոհվ ու վեճ,  
սուրբ արքեցուն, իրարանցուն,  
փոքրիկ գարուն՝ զարթոնքի մեջ...

## Սեր՝

երկնքի միակ թռչուն,  
մոր գրկի մեջ ու կարոտի,  
սեր՝ երկնքի իմաստություն,  
անհոգություն, անմահություն...

1998 թ.

\*\*\*

Չէ, չեմ կանչի, չեմ կանչի,  
ել չեմ կանչի ես նրան,  
ու ամեն ինչ մութ է, տե՛ս,  
մութ է, ինչպես գերեզման:

Ել չի խաղում շուրթերին  
լույս կարոտը իմ երգի,  
ել չեմ իջնում այտերին  
այրող շիթերն արցունքի:  
Չէ, չեմ կանչի, չեմ կանչի,  
ել չեմ կանչի ես նրան,  
ու ամեն ինչ մութ է, տե՛ս,  
մութ է, ինչպես գերեզման:

\*\*\*

Սիրում եմ ես աչքերդ խաղաղ  
ու երկինքը կապույտ,  
լուսնկայի շշուկը պաղ  
ու երեկոն անփույթ:  
Սիրում եմ ես խոռվահույզ  
առագաստներն արծաթե,  
ալիքների ոսկեփրփուր  
շատրվանները սարե:  
Սիրում եմ ես զիշերներդ  
ու խոհանքը մարդիդ,  
արեգակունք արցունքներդ,  
հեկելանքդ լոին:  
Սիրում եմ ես ամուրջներիդ  
սլացումը հրե,  
ես կախարդված, ես հմայված,  
քեզ անշղբա գերի:  
1965 թ.

\*\*\*

Ես քեզ լոկ երգեր եմ ձոնել  
անափ կարոտի ու սիրո մասին,  
քանի երգեր են աչքերս թերթել,  
քանի երգել եմ, դարձել են հին:  
Ու թվացել է, թե ամեն երգում  
քո ծով կարոտից հրդեհվել եմ ես,  
սիրո իմ, որքան ես շրջվել իմ հոգում,  
քո անհուն բոցով չես գրկել ինձ:

Չես երգել նրան իմ սիրո մասին,  
չես գրկել նրա անափ հոգին,  
գուցե սիրել ես, մոռացել շատ,  
քան գրել սիրո երգի մասին:

1965 թ.

\*\*\*

Իրիկվա պես մենակ ու լուռ,  
իրիկվա պես տրտում,  
միշտ միալար ու միշտ տխուր  
ինչ-որ երգ ես երգում:  
Քարացել է աչքերիս դեմ  
իրիկունը քունոտ,  
ու մաղում է, մաղում է մեղմ  
երգն օրերի քինոտ:  
Իրիկվա պես մենակ ու լուռ,  
իրիկվա պես տրտում,  
միշտ միալար ու միշտ տխուր  
սրտիս երգ ես երգում:  
1965 թ.

\*\*\*

Հոգնած գլուխս կիշեցնեմ կրծքիդ  
ու էլ չեմ տեսնի աստղերը խարող,  
կհաճրեմ մարող զարկերը սրտիդ,  
աչքերով գրկած աչքերդ փակվող:  
Մատներդ ապակե կսահեն անհույս  
ցնորքով արբած աչքերիս ճամփով,  
նորից կրացես ոսկե արշալույս,  
ու էլ չեմ տեսնի աստղերը խարող:

\*\*\*

Մի քննուշ քան կա իրական որպես,  
մի թաքուն երազ բարդիների մեջ,  
կանչող մի քույլ ձայն,  
սփովող մի ձեռք,  
մշտնշենական կախարդող մի երգ:  
Հալվող զիշերը թաքուն գգվանքով,  
ասես, պահում է մի տխուր ճամփա,  
չի խոսում երբեք, չի լռում երբեք,  
ասես, ինչ-որ քան և՛ կա, և՛ չկա:

1965 թ.

\*\*\*

Աշնանային երգը երգիր,  
պուրակի պես թափուր,  
աղոթքի պես տրտում երգիր,  
քույր իմ, աղոթք իմ, քույր:  
Օրորիր ինձ մանկան նման,  
դայակի պես զբուտ,  
ցրիր վիշտս, խինդս վառման,  
խոլ տառապանք ու բոք:  
Աշնանային երգը երգիր  
մեղմ, դողդոջուն ու լուռ,  
դու մի նայիր արցունքներիս,  
քույր իմ, աղոթք իմ, քույր:  
1965 թ.

\*\*\*

Դու՝ իմ վերջին լուսե հավատ,  
դու երգերի աղոթարան,  
Աստվածամոր վերջին շշուկ,  
դու՝ աղոթք, երգ ու երգարան:  
Իմ երգերի թերթերը պիղծ՝  
քո աչքերի, քո հերի դեմ,  
ես՝ կույր մի մոմ Աստվածամոր,  
քո երգերը ինչպե՞ս շնչեմ:  
Ինչպե՞ս հեղեմ կարոտ ու սեր  
և դիցուհուն իմ շտեսած,  
ինչպե՞ս բոցեմ արյունս սև  
ու տենչանքս արյունոտված:  
Դու՝ իմ վերջին լուսե հավատ,  
դու՝ երգերի աղոթարան,  
Աստվածամոր վերջին շշուկ,  
դու՝ աղոթք, երգ ու երգարան:  
1965 թ.

\*\*\*

Ես քեզ կտամ ամեն քան,  
որ դու մնաս միշտ վերում,  
որ չխամրի ոչ մի գույն  
քո երկնասույզ աչքերում:  
1965 թ.

\*\*\*

Դու այնքան մոտ ես ու այնքան հեռու,  
այնքան անգութ ես ու այնքան հլու,  
այնքան պարզ ես դու ու այնքան խոր,  
այնքան մանկամիտ ու այնքան անզոր,  
այնքան հեզ ես դու ու այնքան չար,  
այնքան ծիծաղլու ու այնքան քար,  
այնքան միամիտ ու այնքան մունջ,  
ասես ծնվել ես աղջիկ-տրտունջ,  
այնքան լուսե է քո դեմքը լույս,  
ասես քեզնից է երազ ու հույս,  
այնքան անմեղ է քո խոսքը պաղ,  
ասես, քեզնից է զրկանք ու խաղ,  
այնքան հեռու ես դու՝ այնքան մոտ,  
իմ լուսե, լուսե, իմ կապույտ կարոտ:  
1965 թ.

\*\*\*

Մի իրիկուն մտար դու տուն,  
ուր ճրագն եր իմ բեկրեկուն,  
անփույթ, անտեր ու անընկեր  
հրաժեշտի երգ էի երգում:  
Դու յուղ դարձար իմ ճրագին,  
և լույսը լույս բարձրացավ վեր,  
ու ես, ահա, նստած անքուն  
գրոսում եմ սիրո երգեր:  
1970 թ.

\*\*\*

Ես մի հյուղակ ունեմ մաքուր  
և ճրագ մի փոքրիկ,  
աղոթում են այնտեղ թաքուն  
շրթունքներ մոտիկ:

Աչիկներ զոյզ երազկոտ  
և զոյզ ձեռքեր դալուկ,  
սրտիկն իր ձեռքում պահած՝  
սպասում է անքուն:

Լուսինն այնտեղ լույսով աղոտ  
փայլփլում է սառած,  
արևը խինդ ու քրքիջ է  
թափում ինքնամոռաց:

Սի իրիկուն ունեմ այնտեղ,  
կապոյտ բոցով վառվող,  
որ բռնկվում, վառվում է դեռ  
երազներիս հեռով:

Ես մի հյուղակ ունեմ մաքուր  
և ճրագ մի փոքրիկ,  
աղոթում են այնտեղ թաքուն  
շրթունքներ մոտիկ:

1970 թ.

**ՄԻՐԱԺ**

Դու քնած էիր ոսկե դագաղում,  
լուսեղեն շորեր հագած,  
ծաղիկներ՝ քո կրծքի վրա,  
քո շուրջը՝ աչքեր խոնարհված:

Չտեսար, դու ոչինչ չտեսար,  
դու քնած էիր ոսկե դագաղում,  
սեր իմ, երազ իմ, իմ փա՛յլ,  
մի՞թե այսպես է վերջանում:

\*\*\*

Ելի դու ես, ելի ես  
և հորիզոնն ամենի,  
ես հոգնել եմ, դու նույնապես,  
թախտի խաչից անհատի:

Ուրիշ ոչինչ չմնաց,  
ուրիշ ոչ ոք ել չկա,  
հավատում ենք արևին  
և լուսնին, ոք դեռ կա:

Ելի դու ես, ելի ես,  
ես ու դու ենք մնացել,  
թախտի քմահած խաղերից  
մնացել ենք աներեր:

Հավաքել ենք աստղ, լուսին,  
մի քուր ճամփա փոշեպատ,  
մի քիչ արցունք, մի քիչ լույս  
և հնամաշ մի հավատ:

Նորից ես եմ, նորից դու  
ճամփեքում այս հողմածեծ,  
ես խոցված եմ, դու հոգնած,  
և Աստված է խոռված:

Ուրիշ ոչինչ չմնաց,  
ուրիշ ոչ ոք ել չկա,  
հավատում ենք արևին  
և լուսնին, ոք դեռ կա:  
1970 թ.

**ՊԵՆԵԼՈՊԵ**

Պենելոպե, չքնաղ իմ Պենելոպե,  
չի մարի երբեք այս աշխարհում  
անբաժիրության ծածկոցն այն մեծ,  
որ թեպետ որքան, որքան գործվեց,  
մնաց և թերի, և անբախի:

Այսօր եկել ես կրկին, ահա,  
մի նոր հավատով, իբրև ուրիշ,  
ու որքան, որքան ինձ նզովեն,  
որքան անունդ դարձնեն հուշ,  
Ողիսւսն եմ քո կրկին, նորեն:

Պենելոպե, չքնաղ իմ կին,  
իմ կյանքի հերոս, իմ նոր հեքիաք,  
ես դեն եմ նետում դարերի դին  
և որպես, որպես մի Ողիսւս  
ընդունում եմ քեզ, ինչպես որ կաս:

Պենելոպե, չքնաղ իմ Պենելոպե,  
չի մարի երբեք այս աշխարհում  
անբաժիրության ծածկոցն այն մեծ,  
որ թեպետ որքան, որքան գործվեց,  
մնաց և թերի, և անբախի:

\*\*\*

Ծաղկների մեջ  
առանց վարանման  
ծաղիկ եմ պոկել  
ու տվել քեզ,  
ինչ իմանայի,  
որ մյուս գարնան  
սրտիս ծաղիկը  
պիտի պոկես:

\*\*\*

Սեր իմ,  
դու նման ես այն վարդերին,  
որոնք բացվում են լույսի հետ  
անապատներում դեղին,  
ծովերի հատակում,  
մենակյացի պարտեզում,  
քեզ նայող աչքերի առաջ:

Սիրում եմ  
անապատը դեղին,  
ծովն անեզրությամբ,  
մենակությունը այգիների,  
մեզ նայող աչքերը վճիռ,  
բայց դրանք իմ սերը չեն,  
բայց դրանք իմ սերը չեն:

Սեր իմ,  
ես հորինել եմ քեզ,  
որ չմնամ մենակ  
ծովերի,  
անապատների  
մենակության հետ:

Ու հորինվածքը չեն գողանում,  
չի մեռնում երգը քեզնից ծնված,  
որովհետև դու նման ես այն վարդերին,  
որոնք բացվում են լույսի հետ  
անապատներում,  
ջրերի հատակում,  
մենակյացի պարտեզում,  
քեզ նայող աչքերի առաջ:  
1973 թ.

\*\*\*

Օրորիր, օրորիր,  
քո ձեռքերով օրորիր,  
քո աչքերով, քո շնչով,  
քո համբույրով օրորիր:

Օրորիր, օրորիր,  
թող մոռանամ ամեն քան,  
քո աչքերում բարուրիր,  
օրորիր, օրորիր:

\*\*\*

Իրիկնային հովի նման  
դու էլ եկար անցար  
ու ձուլվեցիր երազների  
հորիզոնին անծայր:

Նույնն են հիմա արևն աշնան  
ու լուսինը դալուկ,  
մեր դեմ ընկած ամեն կածան  
ու աստղերը մանուկ:

Իրիկնային հովի նման  
համբուրեցիր թեթև,  
որպես պատրաճք թաքնվեցիր  
պատրաճքների ետև:

\*\*\*

Քեզ տեսնելիս, ես տեսնում եմ  
ստվերները ծառի,  
անորոշ, բայց մտերմական  
շշուկները ճյուղի,  
տերևների սվավոցը  
ու հպումը քամու,  
ու անորոշ խոստումները  
ստվերներում ծառի:

\*\*\*

Մութ են բառերի աստղանիշերը,  
օրը մթնում է,  
սերս կուրացավ, և օրը ցրտեց,  
միտքս բանտված է:

Սխալ են բոլոր իմ շարժումները,  
հեռացիր շուտով,  
ես մոռացել եմ լույս խոստումները,  
հեռացիր հույսով:

Գնա ու փակվիր մենակության մեջ,  
մինչև լույսը գա,  
սերս նոր մեռավ, սերս հանգել է,  
ցուրտ է, դե գնա:

Երկխոսիր մենակ և խոսիր թաքուն՝  
անգամ մտքիս հետ,  
ես խելագար եմ, երբ զրուցում եմ  
ապրած եսիս հետ:

Ճշմարիտ բառեր ես շատ եմ լսել  
շատերից կյանքում,  
բայց սարսափելին իմ ճշմարիտն է,  
երբ ինքս եմ հեգում...

Մութ են բառերի աստղանիշերը,  
օրը մթնում է,  
սերս կուրացավ, և օրը ցրտեց,  
միտքս բանտված է:

\*\*\*

Սիրո տառապանքը  
հոգնած բառերից դուրս եկավ,  
փողոցներից,  
գյուղերից,  
քաղաքներից,  
և ո՞ւր ...  
ճշգրիտ ոչինչ չասվեց  
սիրո մասին:  
Յուրովի տառապանքը  
հողաքումք դարձավ,  
իսկ մեծերինը՝ անձեռնմխելի:  
Սերը թափառեց այս իին հողի վրա,  
ոտքերն այրեցին անապատներն անտուն,  
քոչունները քրքիջ արձակեցին ցավի,  
հեղեղները տարան սերը ջրերի հետ:  
Վերադարձի խոսքեր մրմնջացին ոմանք,  
հողաքմբեր դարձած, դարձած թիվ ու համար,  
երջանկուրյամբ արքած ոմանք բարբառեցին,  
սերը կարոտ դարձավ, սերը՝ միստերիա:  
Այս իին հողի վրա ես և դու ենք իիմա  
և ծեր՝ անցածներից, և՝ լույսով լի,  
գիշերները մահով ու ահով լի,  
որ մեր սերը մնա, որ չմեռնի:  
Յավի հեծեծանրին ականջն ի լուր,  
տառապանքին գերի քնքուշ սիրով,  
ծաղիկներն անզամ չէին ների,  
թե սև մի ծեռք իրենց հույսով շոյեր:  
Ես կլորչեմ ձեզնից օր ու ժամեր,  
ժամանակից նոյնակ ու համարից,  
որ ոչ մի ծեռք՝ թեկուզ բարերարի,  
իմ երգերի վրա ձեռք չիշեցնի:

Սերը պատառոտված տրեխներով  
և վերքերով հազար, և տրորված,  
կանգնած պատուհանիս տակ՝ իրը գերի,  
սպասում է մահվանն իմ, իմ օրերի:

\*\*\*

Քեզ վերցրի այսպես,  
քնությունից,  
և դրեցի վանդակ մի  
սովորական,  
դու երգեցիր տաղեր  
սիրով լեցուն,  
և փարվեցիր փակված  
իմ վանդակին:  
Հավատով լի բառեր  
շշնջացիր,  
և ես սիրով բացեցի այն,  
դու դուրս եկար սիրո  
իմ վանդակից,  
թափառեցիր աշխարհն այս  
անձայր:  
Ու քեզ փոքրիկ թվաց  
աշխարհն այս,  
վերադարձար սիրո մեր  
հետքերով,  
քեզ դրեցի վանդակ մի  
սովորական  
ու երգեցի տաղեր՝  
սիրով լեցուն:

\*\*\*

Եթե ավելի մոտենամ իրականին,  
կասեմ,  
որ սիրելու համար ոչինչ էլ պետք չէ,  
որ տառապանքը ծիծաղի գին ունի,  
իսկ հավատը՝ տառապանքի:  
Բայց ամենամեծ հավատը՝  
սիրելու համար ոչինչ էլ պետք չէ:  
Մի աղջիկ ինձ ասաց թարուն.  
- Դուք սիրում եք նոյնիսկ ինձ,  
ուրեմն խենք եք:  
Աղջիկը պարզ էր ոչինչ չունեցողի պես,  
ոչինչ չկորցնողի,  
ոչնչի մասին չդատողի,  
տխուր ժպտացողի,  
նոյնիսկ չհասկացողի:  
Ու դեմքը պարզ էր,  
անզարդ էին մազերը,  
պարզ էին աշքերը՝  
անզամ հիմար մտքերի առաջ:  
Եթե ավելի մոտենամ իրականին,  
կասեմ.  
- Սիրում եմ խելագարի պես  
այն միակին,  
որ պարզ է ոչնչի պես,  
հստակ՝ հիմարի նման,  
անգիտակից խորհուրդներին  
և... նոյնիսկ... խենք:  
Ի՞նչ է, վախենո՞ւմ եք,  
ես կիսեցի նրա հետ իմ կյանքը,  
ես որոնեցի նրան մի ամբողջ կյանք,  
ես գտա անկարելին:  
Սերը,  
եթե ավելի մոտենամ իրականին,  
կաղուց լափել է ձեր խորամանկությունները,

դիտված շարժումները  
և գիտակից ժեստերը:  
Սերը,  
այն միակը,  
որը նստած է մեր նմանների  
երազների մեջ, որ կոչում ենք կյանք,  
անիմանալի այն շարժումներն են,  
որ հասնում են իրաք:  
Իսկ դու մի տխրիր,  
ապրիր,  
միայն մոռացիր այդ շարժումները,  
որոնք քոնք չեն:  
Եթե ավելի մոտենամ իրականին,  
կասեմ,  
որ սիրելու համար ոչինչ էլ պետք չէ:

\*\*\*

Սերն է ընկած, ահա, մեր դեմ,  
որպես կորսված գանձը հոգու,  
էլ ո՞ւմ համար պիտի մեռնեմ,  
էլ ո՞վ կպահի կարոտը քո:

Ինչ կտակեմ հեռուներին,  
նեկտար, այո՛, թերևս դեռ կա,  
այս քունելով որքան վազեմ,  
մուրն՝ ուղեկից, լույսը՝ վկա:

Հողմաղացի հինգ թևի պես,  
որ կարու է մի քու քամու,  
որ իր խորքում պահում է դեռ  
հունդը դեղին ոսկի հացի,  
որ չի գալս ոչ մի անցորդ,  
սարդն է միայն կպած ոստին:

## Այս հայրենիք ուրի

- Ապրելի ժիշտ է  
առաջ բռնիք ցնաց թղթեան է  
 - Եղիք հոգի է:  
իւս ամենառաջ օրը  
ոյն թղթամասն է, ոչ ուստի ուրի:  
 - Դա պատճեն է:  
հոգի է ուստի ցնաց թղթեան է  
գոյն բռնիք անդրանիկ թղթեան  
 - Այս փայտակ ուրի:  
Գործած ուրի  
ցույց է են կատարել ուրի:  
 - Կողուց անձայտ չեն անձայտ ուրի:  
Գործած ուրի բռնիք պատճեն է անձի  
անձաւ է շաբաթ, պատճեն է անձի  
 - Այս սոյորի ուրի: Եղացարդ ուրի:  
Որի հոգիք հանձնաց է: Տոյց  
օրի բռնիք անձի է, ու անձաւ ուրի:  
 - Այս սոյորի ուրի:  
Այս ուրի պատճեն է անձի  
գոյն ըստ անձի:  
 - Այս սոյորի ուրի:  
Այս ուրի պատճեն է անձի:  
 - Այս սոյորի ուրի:  
Այս ուրի պատճեն է անձի:

## ՍԵՐԸ ՍԱՐՍԻՆ ՈՒԽԻ

Տերևները մեռնում են

առանց խոսքի:

- Երևի հոգնել են:  
Իմ ամենալավ օրը  
այն իրիկունն էր:

- Դու սպասում էր:  
Հոգնել է անտառը  
քամու խոստումներից:

- Սերը վախճան ունի:  
Չայրված մոմերը  
ձգվում են կրակի:

- Կարոտը անմարմին չէ:  
Չաված բոլոր բառերը  
մեռնում են չապրած:

- Սերը մարմին ունի:  
Մինչև համբույրը  
մերկ խոստումներ են:

- Սերը մարմին ունի:  
Աշունը ինձ պատմեց  
քո լոռության նասին:

- Սերը մարմին ունի:  
Ես մոռացել եմ  
իմ բաշկինակն այնտեղ:

- Սերը մարմին ունի:  
Դու տեսար ինչպես էր  
անտառը բամբասում:

- Սերը մարմին ունի:  
Ծառերը ծածկեցին  
դեմքերը գունատված:

- Սերը մարմին ունի:  
Դու խոստացար լինել  
միշտ կարոտի դեմքով:

- Սերը մարմին ունի:
- Ես մոռացա ասել՝  
հավատում եմ սիրուդ:
- Սերը մարմին ունի:

\*\*\*

Արի, միայն արի,  
կարոտել եմ էլի  
զգվանքներիդ:  
Չըկանքների գնով,  
կարոտների  
հասցրեցիր հոգիս  
կրակներիդ:  
Արի, միայն արի,  
ուշացում չէ երբեք  
գալը,  
երազներիս փարթամ  
արոտներից  
մնաց հոգիդ միայն  
քարե:

Արի, միայն արի,  
կրակներիդ ոսկե  
նավով,  
թող բռնկվի հոգիս,  
հույսս՝  
վերադարձիդ կարմիր  
խարույկներով:

1970 թ.

\*\*\*

Ես չեմ սիրում լուրջունը,  
մենակությունս լի է լուրջամբ,  
բաց աշքերիդ տիրությունը,  
կկարդամ նրանք լուրջամբ:  
Կկանչեմ, չես կարող չգալ,  
չես կարող փախչել լուրջամբ,  
բաց աշքերիդ տիրությունը,  
հոգիս լի է լուրջամբ:

\*\*\*

Դու շիկնող ավագի աղջիկ,  
քարերին, արևին կարոտ,  
մեհյանի քարերին աղոքք  
ու կրակ բորբոքող աղջիկ,  
երգերիս դու միակ հնձան,  
վերքերիս բալասան, նարոտ,  
եկել ես ու հասել, ահա,  
երգերիս երազին կանչող:

Եկել ես աշքերով համառ,  
աշքերով արևոտ ու բաց,  
եկել ես օրերից խավար,  
մեհյանի քարերով արբած,  
բերել ես զգվանքներ ու սեր,  
քարակով արևի սեղան,  
որ պարենք խնջույքում քո տաք,  
որ մնանք հայրենին վահան:

Ինչպես քո ճամփան ոլոր  
և ինչպես հյուղդ խարխուլ,  
հնույա պաշտամունքդ կորսված,  
քրմուհուդ աղոքքը հախուռն,  
որպես արևոտ մի քար  
հեռավոր պարսպից պոկված,  
եկել ես ու հասել համառ  
երգերիս երազին կանչող:

\*\*\*

Ես պառկած եմ էլի  
թախտի վրա,  
ոչ ստվերում ծառի,  
Եվա,  
դու եկել ես նորից  
մենակության մեջ իմ  
ու կանգնել ես էլի  
մերկ:  
Մեղկությունով վառվող  
քո շուրթերին, ահա,  
ես տեսնում եմ էլի  
Եվա,  
ու մերկությամբ իմ տաք  
ու աղերսով քարե  
դու տեսնում ես նորից  
Ադամ:  
Մենակությամբ արբած  
մութ լույսերի միջով  
քայլում եմ ես, ահա,  
որքան  
քավիղներով դարի,  
ատելությամբ բարի,  
քո աչքերի փայլով,  
որ կա:  
Նստիր կողքիս, ահա,  
հողի վիշտը ապրիր,  
ապրիր սիրտս մենակ,  
Եվա:  
Հողի գուղձը ափիդ,  
սերմի հունձը ճամփիդ,  
երգի փոշին մաքրիր,  
Եվա:

Եվա՝  
չքնաղ Եվա՝  
նշխարքների մասունք,  
իմ լուռ  
ու մունջ  
Եվա՝  
Թող երկինքը խարող,  
լույս աստղերի ճամփան,  
սիրիր կարոտ ու հող  
ու մահ:  
Այս էլ քանի դարեր,  
այս էլ քանի սարեր,  
սզի դաշտեր տեսար,  
պատրանքների ճամփա,  
հույս ու մթի դարեր,  
լույս ու հույսի սարեր,  
անապատներ այրվող  
տեսար:  
Ես պառկած եմ մենակ,  
ու պատկերը քո տաք  
արյունում է նորից  
երազ,  
դու պատրանքի պատրանք,  
երազներին անհաս,  
Եվա՝

## ՍԻՐՈ ԾԱՐԱՎ

Նստել ես մուրի մեջ  
կապույտ ու մուրի մեջ  
գործում ես, քանդում, թելում  
կարոտիդ թելն անվերջ...

Ցերեկներդ՝ աղոթք ու շունչ,  
ցերեկներդ՝ ճերմակ սաղափ.  
թե Աստծոց ես դու խոռվ,  
աղոթքդ՝ էլ ո՞ւմ համար...

Աչքերդ՝ խորունկ, խորունկ,  
աչքերդ՝ Աստծու խոռվը,  
մոլոր ես, քայլամոլոր,  
ծաղիկ դու՝ սիրո ծարավ...

\*\*\*

Տե՛ս, հորիզոնը աղճատվեց լույսից,  
աչքերդ փակիր,  
կարոտն ու սերը ընկան լույս մահիճ,  
փակիր, լուս փակիր,  
սեր է մրմնջում գիշերը մքնած,  
հեռացիր շուտով,  
առավոտ կանուխ աշխարհը կօծվի  
արցունք-ծիծաղով:  
Խաղաղվիր, անգին, խաղաղվիր սեր իմ,  
քանի լույս կա քիչ,  
մուրը ընկնում է, ցնորք կդառնա  
արցունքդ վճիռ:

\*\*\*

Մնա հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ  
քո քարակերտ պատվանդանին,  
մնա անբիծ, մնա անմիտ,  
մնա հեռու, հեռու, հեռու:

Ես զոհելու ոչինչ չունեմ,  
դու՝ քրմուիի իմ հավատի,  
դու մեն միակ, իմ մինուճար,  
իմ միամիտ, իմ մութ տաճար:

Դու՝ երգերի իմ լուսատու,  
դու՝ հավատի իմ թագուիի,  
ես՝ թագավոր անթագակիր,  
դու՝ ձեռագիր մազաղաթյա,  
ես՝ լոկ գրիչ, մատենագիր:

Մնա հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ,  
ձեռքիդ քնար առավոտյան,  
արեգնացած լարերիդ հետ,  
լույսերիդ հետ առավոտյան:

Կխաղաղվի և իմ հոգին  
քո ոտքերի ծաղկափոշով,  
քո հեթանոս անմեղությամբ  
կխաղաղվի և իմ հոգին:

Մնա որպես հոգի ու կանչ  
հալածական քո պատմության,  
մնա որպես վերջին թեկոր  
մեռյալների վկայության:

Դու՝ Տիրամայր, իմ հայուիի,  
կրկնախաչված, կրկնապատկված,  
մնա որպես անմեղ մասունք՝  
ընկածներից վերընձյուղված:

\*\*\*

Իրիկնամուտը ստվերում առավ,  
ինչ աչքը կտրեց,  
հոգնած արևն է սպառված, անզոր  
դողաց ու հալվեց:  
Իրիկնամուտը՝ երազներով լի,  
կախվեց զույգերի թարթիչներից ցած,  
ու ստվերն ինքը  
անկայուն, անզոր  
սիրող զույգերի շուրթերին դողաց:

\*\*\*

Հեքիաքների սիրահար  
տասու լրեց,  
լրեցին բոլոր  
շասված բառերը:  
Հոգնած մի ճարտասան՝  
կապույտ հոսքով արյան,  
պատմում է մի հեքիաք՝  
վերնազրված՝ սեր:  
Պատմության բեմին  
մի մերկ որկրամոլ  
խարում է Համեստ,  
Լիր, Էղիա արքա:  
Հուշարարը տիսուր  
խոսքեր է մտմտում,  
թողած թաքստոց,  
բեմ ու վարագույր:  
Սպասիր, և դու էլ  
կհոգնես շուտով,  
տիսուր իմ սեր:

\*\*\*

Այս աշխարհի ճամփերին  
մեր դեմքը զնզացող մի ափսե,  
կարուտներից, երազներից  
և խոհերից մաշվոյ:

Այս աշխարհի ճամփերին  
հանդիպեցինք իրար,  
հանդիպելը որքան հեշտ էր,  
բաժանվելը՝ դժվար:

Այս աշխարհի ճամփերին  
խոհով, ցավով լի,  
որպես սիրո սուրբ նշխար  
կքողնենք մի գիրք:

Այս աշխարհի ճամփերով  
կանցնեն նոր մարդիկ  
ու կկարդան գիրքն այս  
զարմանքով մոտիկ:

Կհամբուրվեն, կխորհեն,  
կասեն մեր մասին՝  
մի ցուրտ պոես ու մի կին  
երգել են լուսին:

Երգել են սեր ու արև,  
կարոտ ու գարուն  
այս աշխարհի ճամփերին,  
լույսի թակարդում:

### ՆԱԶԵԼԻՍ

Այցելիր ինձ գեթ մեկ ամգամ,  
նազելի՞ս,  
թեկուզ արդեն շտեսնեմ ես,  
շիմանամ,  
նայվածքների ծով բեռան տակ  
ծանրացած,  
արցունք թափիր, սերս ողբա,  
նազելի՞ս...

Խոսքեր պետք չեն, սիրտս վերը է,  
նազելի՞ս,  
քայլիր ինձ հետ վերջին անգամ  
ինքնամփոփ,  
մինչև այնտեղ արև կա դեռ  
ու երկինք,  
լաց, արցունք լաց, սիրտդ սրտիս,  
նազելի՞ս...

Ափսոսանքի խոսքեր պետք չեն  
և շշուկ,  
բոլորն անցած և իզուր են,  
նազելի՞ս,  
քայլիր, քայլիր վերջին քայլիս համընթաց,  
մինչև դրախտ դեռ ճամփա կա,  
կա Աստված...

Եվ երբ մարդիկ փորձեն կարդալ  
արցունքներ,  
կարեկցանքի խոսքեր փորձեն  
շշնջալ,  
վերջին իղձա, միակ խոսքս  
կատարիր,  
մի հասկացիր, մի հասկացիր  
խոսքերն այդ,  
սերս ողբա, կյանքս ողբա,  
նազելի՞ս...

1998 թ.

\*\*\*

Դու ինձ մի մաքուր հերիաք հորինիր,  
առանց կեղծելու, կեղեքելու ինձ,  
անցյալից ոչինչ, ոչինչ օրավոր,  
մի խաղաղ ու լուս հերիաք հորինիր:

Ասա՝ լինում է (առանց չինելու)  
մի սիրուն աղջիկ ու մի լույս տղա,  
ասես՝ մի մորից, կարմիր խնձորից,  
աչքերում՝ արև, սրտերում՝ շեփոր,  
ու սիրում են իրար Աստծու հայացքով:

Տիրությունն ինքը վառարան է մի,  
որ ջերմացնում է բառեր թերթելիս,  
քայլում են նրանք թռո-թիրենի պես,  
ոտքերը՝ հողին ու սիրտը՝ երկինք:

Աչքերն աղջկա՝ ծովերի երկինք,  
ուր թպրտուս են ձկներ ու թիթեռ,  
տղամ՝ հողեղեն, կրակով շաղված,  
որ արձակում է անմորմոք բառեր:

Աչքերը՝ թախիծ, սիրելու կարոտ,  
և վախենում է ձեռքը երկարել,  
թվում է, թե իր մի շարժումից  
աղջիկը թոշուն կրառնա հանկարծ:

Վախենում է, թե իր մի շարժումից  
երկիրը կապրի մի տխուր հառաչ,  
ու չասես երբեք՝ աղջիկն ու տղան  
ընկան չար ձեռքեր, եղան ինքնասպան:

Ու չասես երբեք, թե երկնքից  
ընկնում է հանկարծ երեք ինձոր:

Դու ինձ մի մաքուր հերիաք հորինիր,  
առանց կեղծելու, սրտնեղելու ինձ,  
անցյալից՝ ոչինչ, ոչինչ խորհրդավոր,  
մի խաղաղ ու հեշտ հերիաք հորինիր:

\*\*\*

Տղադ գնաց աղջկան իր տեսնելու,  
սիրտդ լիքն է ուրախությամբ ու խիճնով,  
ժամանակն է, շուտով թռո էլ կունենաս,  
բայց դե մեզնից ոչ մի բան էլ չի փոխվել:

Պատերազմը մեզ սեր տվեց ու կարու,  
սովոր լցրեց հոգիները մեր հացով,  
աշքներս՝ կուշտ, սրտներս լի ցավերով,  
պատերազմը աղ ու արցունք տվեց մեզ:

Պատերազմը հույս տվեց մեզ ու հավաստ,  
կարու տվեց, որ միշտ այրվենք կարոսից,  
սոված, ծարավ վազվեցինք փողոցով,  
մեր սրտերը պատերազմով շցվեց...

Եսպես զնա, տատ էլ մի օր կդառնաս,  
Աստված մեզնից չարը վանի, բարին տա,  
բայց և մի բան հիշելու էլ թե մնա՝  
պատերազմն է, արհավիրը ու մահը...

Ասում են, թե զոհը բարի է լինում,  
բարու վրա է բարձրանում խիճը մեծ,  
տղադ գնաց աղջկան իր տեսնելու,  
վաղը գուցե երջանկությամբ օծեն մեզ...

\*\*\*

Արևահամ մի իրիկուն  
մեր դեմ փովեց ծովը կարմիր,  
կարմիր կապեց լուսե գոտիդ,  
հրդեհվեցին աշքերը քո,  
ու աշքերիդ հորիզոնում  
կարմիր ներկվեց արցունքը քո:  
Սի երեկո,  
մի արյունոտ իրիկնամուտ  
կարմիր ներկվեց հույսդ կապույտ:

\*\*\*

Քո մեջ երգը հոսում է լուս,  
աղմուկ չունի, չունի սահման,  
ողջը լինում է ինքնարուխ,  
մտերմական ու միամիտ,  
ուզում եմ ես, որ հավատամ,  
թե ոչ մի երգ դեռ չի գրվել  
աննպատակ ու ինքնակամ:

\*\*\*

Ես կիշնեմ որպես կապույտ իրիկուն  
ու կծավալվեմ ջահերիդ փայլին,  
կիսեմ քեզնից կարոտանք ու քուն,  
կապույտ կրոցեմ կրակներդ հին:  
Ուսկե ջահերիդ քրքիջը լուսնոտ  
քույլ կայծկլտոցով կզրկե հոգիս,  
քունուտ ձեռքով կվառես հատ-հատ  
մթի մեջ կորած աստղերը հոգու:

1965 թ.

\*\*\*


Այն պահերին, երբ լուս եմ ես,  
շնոտենա՛ս,  
այն պահերին, երբ տխուր եմ,  
շեկեկա՛ս,  
այն պահերին, երբ քեզ ունեմ իմ գրկի մեջ,  
չքարանա՛ս,  
այն պահերին, երբ աշխարհն է մեռնում վհատ,  
շնզովե՛ս,  
այն պահերին, երբ աստղերն են զարթնում հատ-հատ,  
չքորբոքվե՛ս,  
այն պահերին, երբ գիշերն է դառնում դժնակ.  
շնոլրվե՛ս,-  
Դրանք պահերն են, որ մեռնում են...  
1965թ.

25 abeying of the 99,

\*\*\*  
Սեր,  
զգեր, անուններ հարափոփոխ,  
քեզ մոտեցող ու հեռացող անուններ...  
Տեսանելի,  
անվիճելի արդեն, արդեն միակ:  
Ընչափեղ օրեր, ժամեր, ժամեր...  
Սեր՝ պատից այն կողմ՝  
քաղաքակրությունից, ժամանակից  
հեռու...  
Չո մեջ, քեզանից դուրս, քո շուրջը,  
Աստծու աչքի տակ:  
Անուններ ունեցող սերերը ծերացան,  
նրանք քայլում են մաշված կոշիկներով,  
ապրում են վիրավոր, վիրավորված...  
Ես քեզ սիրում եմ, իմ սե՛ր,  
և քո անունը ահով եմ կրում,  
և դու սովորական չես միայն ինձ համար,  
որովհետև քեզ առանձնացնելու,  
միակը դարձնելու համար ես խնայեցի  
բառերը, գույները, ձայները...  
Ես լսում ու տեսնում եմ քեզ,  
և ոչ ոք այդպես քեզ չի լսում,  
չի տեսնում,  
չի հավատում...  
Սեր, ես հավատում եմ քեզ,  
քո բոլոր շարժումները, քո խոռվությունը,  
ատելությունը՝ բոլացած,  
խենքությունը՝ վիրավոր,  
հուսահատությունը՝ ապշահար:  
Քեզ կրում եմ իմ մեջ,  
ինչպես ձայնը միակ տաճարում, ուր  
չի վառվում խունկ,  
ուր աչքեր կան տեսլացած և  
ոչ մի վիրավոր հոգի...

Եվ քո անունը չեմ ասի բարձրածայն,  
մինչև այս աշխարհի մաքրվելը,  
մինչև այս աշխարհի մաքրվելը...  
Սեզ մի ամբողջ աշխարհ է պետք՝  
բեռնաթափելու համար մեր սուստ գանձերը,  
մեզ պարտադրած խաղերը,  
կեղծավոր ու հոգնած ժպիտը, իրերը...  
Սերը մեր երկուսի ազատագրումն է  
բեռ ու բարձից, խամաճիկությունից,  
խամաճիկությունից...  
Ինձ հերիք է քո դեմքի լույսը,  
մաքրությունից տառապող զգացումները,  
ուրիշի մեղքերից ծանրացած թերև հոգիդ,  
ժպիտով մաքրվող դեմքդ,  
հոգեխոռվությունից աշխարհաճանաշման,  
ճակատդ՝ վիշտ վանող,  
ատամներիդ տակ փակված  
ծպտյալ, հորդ զգացումները,  
բառերդ՝ եռթյուն փարագուրող,  
հոգնած, հոգնած, հոգնած սերերդ,  
ոչ քեզ համար, ոչ քեզ համար,  
այլ շնչելու, գոյությունից չսպանելու,  
գոնե լինելու, գոնե լինելու համար...

25 սեպտեմբերի, 1999թ.



\*\*\*

Բանաստեղծները  
մարդկության խիղճն են,  
նրա հայելին,  
ինչով ուզում ես  
շպարիք նրանց,  
լուռ կհայտնվեն...

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՆԵՏԻԿՆԵՐԸ

Մի խորախորհուրդ բան կա աշխարհում,  
մթին առեղծված, հերիաքի պես ջինջ,  
աստղերից առնող լույսի պես կապույտ,  
մարդկային լեզվով բարգմանվող տեսիլք...

Գալիս է լույսն այդ ընչաքաղցության  
կարոտի նման մենակ ու անփույթ,  
փաթաթվում է քեզ հեշտ ու հասարակ,  
երազի պես տաք, նրա պես աննյութ...

Մոլագար մի ցավ, անվենապ, անքեն,  
Տառապանքների անկշտում մի ծով,  
Հոգիդ խաղում է ու դրւ չգիտես՝  
երա՞զ է արդյոք, թե՞ տենչի բուրմունք...

Ու դրւ չգիտես ծնունդը նրա,  
կամեցողության սահմանները մութ,  
կուտակվում է նա օրի վրա  
Ու չունի նա կերպ, ու չունես հազորդ...

Աստծու պահնորդն այդ հազարատեսիլ  
ծլում է հոգուս խորխորատներում,  
գայլուկի նման, կորյունի տեսքով,  
և չի պահանջում իր համար ոչինչ...  
1997թ.

\*\*\*

Զարմանալի է, այնպես թեթև,  
և երազները քո՝ այնպես խնդրուն,  
եղբայր իմ, ընկեր ու բանաստեղծ,  
քո այն խոհերը Վենետիկում...

Երբ դու փոքր էիր և պատանի  
այն օրերին դեռ մեր հին Կարսում,  
զարմանահրաշ մի պատանի,  
որ ապշանքով է կարոտն առնում...

Մոլորուն էիր ու ապշահար  
Վարպետի առաջ, տենրով հայտնի,  
այդպես ապագա բանաստեղծն է  
հանձարի առաջ լուս քարանում...

Իսկ դու Տերյանով զմայլված,  
քո հագին և ոչ մի հերանոս երգ,  
նժույգներ՝ կրակից բարձրացող,  
Նավզիկե՝ որպես ուրիշ մի Ուլիս...

Այնտեղ՝ Երկրում, մեռելներ անթաղ,  
մեռելներ՝ իրենց հողը երազող,  
ինչպես հաճատեղեիր Նավզիկեին  
և մանուկներին կրկին մորքվող...

Դու այնպես, ինչպես ժամանակդ,  
վեր ու վար, անսկիզբ ու անվերջ,  
բարձրանում էին ու ընկնում զահեր,  
աշխարհն էր դուրս փախչում հունից...

Խարվել էինք մի հազար անգամ,  
ել չկար պոետը վերջին,  
ընկել էր արճաքամ պոետը  
դավերի խաչուղում չնշին...

Իսկ Ավոն՝ մարգարիտը քո տան,  
թողել էր պատիվ ու անուն,  
դեգերում էր խոռված, անտուն,  
ծովից շպրտված մի ալիք...

Հայրենին՝ վերքի պես կրծքի տակ  
զարկված, բայց քայլում էր նա՝  
մարգարեն, իր տնից քշված,  
իսկ դու՝ բարձրացող ծաղիկ...

Հողմի մեջ բարձրացող ծաղիկ,  
սիրահար կրակին, արևին,  
դու պիտի սանձեիր նժույգներ  
և բաղեիր մեռելներ անժպիտ...

Շունչ տայիր դիակին մեռած,  
մեռնողին՝ հավատ ու կանթեղ,  
երկլեզու աստվածներ ծնեիր,  
սնեիր քնարը բորբոսնած...

Լինում է, բա՞խս է, թե՞ կատակ,  
թե այդպես է կառուցված մեր հոգին,  
ժողովուրդը՝ դարերով տրորված,  
ծնում է իր իսկ պոետին...

Դու պիտի, իբրև մարգարե,  
քո ծոված ուսերի վրա,  
և Տիտան իբրև միֆական,  
պահեիր երկիրը Նախրի...

Եվ մեռնում էր քո Նախրին՝  
զարկված բոլոր, ամեն կողմից,  
դու՝ ծաղիկ հեգ ելման ծովում,  
ուզում էիր ելնել ծովից...

Ասում էիր, ամբաստանում,  
հիշատակներ լցում անվերջ,  
վերջին ճիգով քո խեղվողի  
ափ մը մոխիր էիր պահում...

Զառացանք էր ուղին քո ձիգ,  
անթեր հավատ մի փրկվողի,  
դու ջանում էիր, որ Նախրին  
գոնե մի օր հարատկի...

Եվ հիմա, այս հեռու Վենետիկում,  
ծովահալած ջրերի դեմ  
կանգնած են երկու բանաստեղծներ,  
ինչպես անցյալը և ներկան դժիւեմ...

Կանգնած են մարգարեն ու բանաստեղծը ջահել,  
նոյն արմատների թռչունները երկու,  
մեկը՝ անցյալի աստվածներով լեցուն,  
մեկը՝ լցված նոր աստվածներով...

Մեկը ջահել, լեցուն հավատով ու ուժով,  
մեկը՝ լուծված արդեն իր հավատին,  
մեկի համար կյանքը՝ արև կարմիր,  
մեկի համար կյանքը՝ արյան ծով...

Անցել են օրեր ու տարիներ,  
ել չկան Չարենցն ու Ավոն,  
մնացել է մեղադրանք իբրև՝  
հանդիպման հուշն այն Վենետիկում...

Մնացել է մարգարեն ծեր,  
ջահի պես փոված մեր վրա,  
թիթեղի պես շուրջը ջահի  
ոգին այն ջահել ու ալվան...

Ու զրոյցն այս գնալու է վեր,  
օրերի պես, օրերի պես այն,  
զրոյցն այդ անցնելու է դարեր,  
իբրև միֆ, լեզենդ մի, պատահար...

Իսկ մենք, իբրև մի պատանի,  
կզարկվենք լեռնացած տարերքին,  
կրեքվենք մերք մեկ, մերք մյուս  
նախրյան ամրակուու բերդին...

Եվ ուշիմ պատանին կիմանա,  
որ դասը չի կրկնվում երբեք,  
սերունդներից հաղթում է լոկ նա,  
ով քայլում է իր ճամփով անթեք...

1989 թ.

## ԶՆԾԱՂԻԿ

Կարո՞ղ ես գրել այնպես,  
որ ձնծաղիկ քեզ հիշեցնի,  
կամ նկարվի հենց այդպես՝  
ձնծաղիկ...

Նախ նկարիր դու հոտը,  
հետո՝ արմատը ճերմակ,  
իսկ ձողիկը՝ ձյուն պատող,  
նկարիր նրբին...

Թերթիկներն անհամաշափ՝  
ոչ քափանցիկ և ոչ թույլ,  
մանուշակ չնկարես,  
այլ բաց մանուշակագոյն...

Ձնծաղիկ թե նկարես,  
արբեցումիդ վստահիր,  
չղիպչես քո նկարին,  
եթե դիպար, կմեռնի...

1996 թ.

\*\*\*

## ԶԳՐԵԼ

և ոչ մի բանաստեղծություն,  
զրվածները արյունով են պահվել,  
դրա համար են իին վանքերը այրվել,  
ջրեր ցամաքել, թարմ շիվեր կտրվել,  
որոնք այսօր արդեն առաջաստներ պարզած  
նավեր պիտի լինեին:

Դրա համար են լեզու ու ձեռք կտրել,  
մորթել մանկան ճիշը, քանդել հունդը բերքի,  
սակայն ինչպես պահել թափվող արյան շիքը,  
այրվող գրքի լեզուն և նոր ծնված մանկան  
անժիտ, անուժ խինդը:

\*\*\*

Գանգրահեր տղան  
մաքրեց քարի փոշին  
ու կարդաց վրան.  
«Եղիշե Չարենց,  
ծնված՝ Մակուում» ,  
հետո արտասվեց,  
ու կաթիլն ընկավ  
մարմարե քարին:

Որպես իրական,  
մի պատկեր խաղաց  
մերկ դաշտի վրա:

Սի պիրկ տղամարդ՝  
քառասունին մոտ,  
մազերը գանգուր,  
իր իսկ շիրիմին՝  
մի քիչ զլսահակ,  
թափում էր զինի:

Հետո զնզոցով  
նա մի կողմ նետեց  
զավաթը ձեռքի  
ու նստեց քարին:

Աչքերը նրա  
արտասվում էին  
ու երկրայում  
մոլուցքով վայրի,  
խաժակ աչքերը  
անթարթ մի կետի,  
շշնջում էր նա  
անավարտ տողեր՝  
թերի մնացած  
մի երգ երզոցից:

Հետո նա կանգնեց  
իր իսկ շիրիմին  
ու կրով վայրի  
սկսեց կարդալ:  
Ահեղ մոլուցք կար  
նրա աչքերում, որ  
գիշերվա պահին  
ավելի էր ցավազար թվում:

Զայնը նվազեց,  
կերկերաց քիշ-քիշ,  
ու ինքն էլ չզգաց,  
թե ինչպես զիրքը  
իր ձեռքից սահեց:

Ու կանգնած էր նա՝  
հայացքը երկինք,  
ձեռքերը պարզած,  
անվրդով, անձայն,  
կարծես տեսլացած:

Ասում են այսպես  
ամեն երեկոն,  
գիշերապահին,  
բարձրանում է նա  
լուս գերեզմանից,  
կանգնում է քարին  
ու մտամոլոր  
կարդում է, կարդում  
անավարտ մի երկ՝  
«Գիրք ճանապարհին»:

\*\*\*

Երեկ մեկը խոսում էր Պուշկինի մասին,  
կարդալով նրա գործերն հանձարեղ,  
և ինքնասիրահար կինը խոսում էր այնպես,  
ասես Պուշկինի ապրած կյանքն էր հանձարեղ...

Ծիծաղելի, ո՞վ փառասիրություն,  
որ հատուկ է կնոջը վայրաբարո,  
երբ փառաբանվում է տեսիլը պոետի  
և ոչ բնավ մաքառումը նրա...

Եվ խոսում էր կինն այդ՝  
քափելով արցունք  
և կարկաչ բառերի, և հեծկլտանք,  
ես հասկացա, որ բանաստեղծը հսկա  
զարկվեց երկրորդ անգամ  
երիցս կեղծությամբ...

Ի նշ անհոգություն ապրած կյանքի,  
օ՛, թերեւաբար ճշմարտություն,  
կյանքը կարող է թվալ հերոսություն,  
երբ չկա սերն ակնածանքի...

\*\*\*

Եվ որքան էլ զարմանալի թվա,  
ձյունը բանաստեղծություն է:  
Եվ որքան էլ զարմանալի թվա,  
արքան բանաստեղծություն է:  
Եվ նոյնքան զարմանալի թող թվա,  
մարդը բանաստեղծություն է:  
Եվ նոյնքան բանաստեղծություն են  
շարժվող ու անշարժ իրերը,  
առավել՝ սերը, արևը:  
Եվ որովհետև ամեն ինչ բանաստեղծություն է,  
մե՞զ ինչ բոլոր բանաստեղծները:

\*\*\*

Բա՛ն,  
հոգնած կոպերիս տակից  
հանիր տիսրությունը,  
մոռացումի քողեր մի ձգիր հոգու:  
Ցավը խեղբում է,  
բառերն անզոր են ընդդիմանալու,  
բառերի կարոտ երազները բիրտ  
տենչում են խաղաղ մի անդորրություն,  
մերկացրու հոգիս,  
Չեմ ուզում ապրել գաղտագոյի:  
Բա՛ն,

հանիր կոպերիս հոգնությունը:

**ՔՆՆԱԴԱՏ Ա. Թ.-ԻՆ**

Խոսելով երգի մասին՝  
կարծում է նա իրեն Բուրդա,  
սակայն կյանքում առօրյա  
չի հիշում առած մի հին:

Քայլում է բուրգի վեհությամբ,  
խիղճը փակ հանձարի առաջ,  
թանաքը՝ ոգու չարությամբ,  
և միտքը՝ սատանուց գնած:

Խոսում է տեղի-անտեղի,  
ամենուր բափում է կարծիք,  
գրում է գրողից առատ,  
չի թողնում և ոչ մի առիք:

Ծանաշված քննադատ է նա,  
վայ նրան, ոմ ձեռքը պարզի,  
մի ձեռքով միջնադարն է թերում,  
մյուսով՝ օրերը արդի:

Նա իր խոսքն սկսեց նոր օրից  
և հիմա հասել է միջնադար,  
վաղը, ամշուշտ, հերքն է Հոմերի,  
Աստված իմ, օգնիր, ես չգա:


**ՆԱԶԱՆՁ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՂՆՆԵՐԻ  
(Պարողիա առ Հ. Գրիգորյան)**

Դասականների լուր քանակի դեմ  
մեր Հովհաննեսն է գալիս առանց հանգ,  
ինչպիսի՞ զիջում, դրմերը բացեք,  
այսոք չեն գերումներ, ել այսոք չի նազանք:  
Վարդերն են, ահա, զիշիկոր լալիս,  
սոխակները խենք հեկեկում ցավից,  
բոլորի համար տեղ կա սենյակում,  
բոլորը թող գան՝ առանց կարեկից:  
Չինադադար է, տոն է, խնդրություն,  
զենքերը երգի հանձնեցեք պահեստ,  
խնդրվում է, սակայն, ոչ մեկը թաքուն  
փամփուշտ չտանի սենյակն իր հետ:  
Հաշտության տոն է, լիառատ գեղում,  
քեֆ պիտի քաշենք, պիտի ընդուտենք,  
թույլատրվում է մի քիչ ծիծաղել,  
մի կում արցունք էլ կարող եք քերել:  
Քերեք, ինչ ունեք, եկեք և՛ հարրած,  
ճոխ է սեղանը այս տոնն-հանդեսի,  
խնդրում են, կրկին հարբեցեք, տղե՞րք,  
բայց մի մոռացեք Թաթուլ իշխանին:  
Զեղումը՝ գեղում, թող որ քեֆ լինի,  
եկեք օգտվենք այս հրաշք պահից,  
խնդրվում է, սակայն, արքունքից հետո  
չկախվել ճամփի ծառ ու ծաղիկից:  
Այնտեղ կախված են եղբայրները մեր,  
բանաստեղծների դիմակները հին,  
առածն է ասում՝ ինչ ճամփա թռնես,  
խերը կտեսնես հասնելու պահին:


**ՀԵԼԼԱԴԱ**

Որպես առասպելական երգի կերտվածք,  
հին հավատի երազ  
ու տքնության կորոյ,  
կանգնած է, ահա, բազմարձան,  
քաղաքների նայր Հելլադան:  
Մարմարակերտ շենքեր,  
ավազաններ,  
որոնք փողփողում են արևների փայլով,  
շատրվաններ՝ ճերմակ ու վերընթաց,  
լուսնի ձեռքով կերտված:  
Եվ ճանապարհներ բազում ու լայնանիստ,  
հեռուներ կանչող ու մարմարն,  
ու անցորդներ, կանայք՝  
ճերմակ թեթև քողով,  
քայլքով ճապուկ ու թևաբաց:  
Հելլադա,  
լուր ու անխոս երկիր,  
դո՞ւ իրական՝ ոգու ու թոփքի,  
այդ դու էիր,  
դու, որ քո մանուկ ճիշով  
խորտակեցիր գոտությունը հոգու:  
Այդ քո երկրի վրա դրոշմվեցին  
մարդու ձեռքերն առաջինը,  
և բազմածալք ոգու նրբությանը հատուկ  
քանդակվեցին երազները սրաբւ:  
Հելլադա,  
առաջին անգամ կամարներիդ տակ  
լսվեց ձայնը Ալեքսանդրի,  
և որպես քուրմ լույսի,  
և խավարին ընդդեմ  
քո մարմարները ձայնակցեցին:  
Եվ առաջինը, հենց առաջինը  
կործանվեց կուրության շղթան,

և առասպելական բոլոր աստվածները  
քո գրկում ննջեցին հանգիստ:  
Եվ հեթանոս քո ոզու զորությամբ  
կանգնեցին վերձիգ սյուներ,  
և մարմարիոն իրաններ, և սրունքներ,  
և զրքեր՝ մարմիններ երազող:  
Աստվածների երկիր ու սերերի,  
և հունդերի երկի՛ր,  
քո լուսնի տակ կրած տեսնում եմ, ահա,  
երգիշներիդ,  
որոնք անմար հելլենական փայլով  
նվաճում են երկինք, նվաճում են երկիր:  
Հելլադա՝  
մարմարների, սիրո ու հավատի:



Ով քափանցել է խորըն այս խորհրդի,  
Չի սանձահարել խոյանքն իր սրտի  
Եվ ամրուի դեմ իր սիրտն է քացել,  
Իւազվել է կամ խարոսոկ քարձրացել:  
Վոլֆանգ Գյորե



## ԵՎԻԾԵՒՆ

Չո շուրբերին ծաղկեց երջանկաբեր քամին,  
մահվան թասով բերին գույժը պատերազմի,  
և՛ դու արտասպալի, և՛ դու խոռվահույզ  
ցավիդ պես հյուսեցիր մատյանը հարության...

Ատելությամբ լցվեց երգը քո մատյանի,  
չարի հանդեավ եղար զայրույթածին մի այր,  
ինքնաձաղկման մի ցավ, եղերական մի գույժ  
լլկեց հոգիդ խոռվ՝ ատելությամբ անձայր...

Սերդ բերի եղավ այր ու կնոջ հանդեավ,  
նրանց, որոնք եղան հայրենական վահան,  
սերդ ծաղիկ եղավ, եղավ նեկտար ու լուս,  
և դու մեղրամոմի քնքշությունը հազար...

Դավի հանդեավ դավով, չարի հանդեավ՝ նզուք,  
ցրտի հանդեավ՝ կրակ, մերի հանդեավ հենակ,  
Աստծու նժարների դու անթերի լծակ,  
ավերակի առջև դու՝ ամենասողբ...

Սրտամորմոք մեր երգ, սրտաբորբոք դու բերք,  
քեզնով պիտի չափվի սերը հայրենական,  
քեզնով պիտի դատել, քեզնով պիտի չափվել,  
քանզի ամենամերկ ցավի երգիչն ես դու...

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒՆ

Այնտեղ՝

հեռվում, լեռան լանջին,  
ջրի ափին կապոյտ,  
ձայն ի ծովին ծիծաղախիտ  
աղոթում է արթուն:  
Լեռներն իրար զիրկ են բացել,  
ձորերը՝ մութ, մոայլ,  
ծով ծփում է լիճը անփոյթ,  
երազներն իր՝ կապար:  
Խլրտում են թուփ ու մացառ,  
շաշում քարդիք վերձիգ,  
վանքի նման մոայլ ու պաղ  
աղոթում է անկիրք:  
Աղոթում են երկինք պարզված  
ձեռքն ու հոգին անրիծ,  
աչքերում իր՝ մեղքը մարդկանց,  
և սրտում՝ վիշտ երկինք:  
Մութը տիտոր թելն է մանում,  
անհիմն երգը կյանքի,  
և օրերի շարականն է  
ձգփում երկրից երկինք:  
Այնտեղ՝

հեռվում, լեռան լանջին,  
ջրի ափին կապոյտ,  
ձայն ի ծովին ծիծաղախիտ  
աղոթում է անթուն:

\*\*\*

Նարեկացին, ի սեր Աստծու,  
չի եղել խեղճ մի վանական  
ու շարական չի սիրել նա,  
ու չի վառել մոմ ու աղոթք:

Նարեկացին, ի սեր Աստծու,  
չի եղել խեղճ հավատացյալ  
ու չի բացել Աստծու ճամփան  
թշվառ ու խեղճ ազգի համար:

Նարեկացին զինվոր էր մի,  
Ավարայրից որք մնացած,  
երկնքի հետ դաշինք կնքեց,  
ծնվեց մարդուկ, մեռավ աստված:

## ՍԱՐԴ, ՈՐ ԳԱԼԻՍ Է ԴԵՊԻ ՄԵԶ

Խաչատոր Աբովյանին

Մեր կյանքն անօրինական մի տանջանք է,  
իսկ հույսը գալիս է ապագայից,  
և այս արնոտ ու ցուրտ մղձավանջը  
փարատվում է նույն ապագայով:  
Եվ այսպես, ուղիղ մեկ ու կես դար առաջ  
առաքինի ու սրբված այն հանճարի դեմ  
ընկավ նույն հարցը,  
ինչպես կրակում

շեղը ցորենի:

Եվ փոշոտ ու տամուկ փողոցների միջով,  
կուզիկ պատերին քավելով  
անցնում էր նա՝ ճերմակ ֆրակով մարդը,  
տրորված ու բրիկ երազները գրկած:  
Պետք է սկսել ամեն ինչ նորից,  
ցավատանջ է եղել իր անցյալի վազքը,  
դժվարին՝ անցյալը, իսկ պատերազմը՝ միփ,  
սուտ են եղել երկաքե հեծյալները:

Եվ բարբառելով ոսկեղենիկ ցնորքը,  
վանելով փառքի փափուկ մուժը,  
նա չզգաց, որ սևացել է ֆրակի թևը,  
և քայլում է ինքը ցեխոտ փողոցներով:  
Հեռվում երերաց խոտե զանգակատունը,  
մի ոտքի վրա կանգնած փայտփորիկի նման,  
թերվել էր, ծերացել քարե հրաշքը,  
իլ չէր հմայում նրան:

Անձրեի, քամու դեմ կանգնած ձիգ դարեր,  
որում էր աճել հողեն կտորին,  
պատի գույնի պես խամրել էր փառքը,  
թերել էր գրուխը դեպի անցյալը հին:  
Ամեն ինչ խառնիխուուը, ամեն ինչ կիսատ,  
թերանքսիվայր, անորոշ ու տարտամ,

և հանդարտ հավաքելով իրեն՝  
ճերմակ ֆրակով մարդը ուսք դրեց  
վանքի գավիրը սալաքար:  
Ոչ ապրելն էր հեշտ, ոչ գրելը,  
ոչ խոսելը անցյալի մասին,  
ողջը՝ խարուսիկ, խայտառակ մի երազ,  
տեսածը՝ խելագար միփ:  
Չիմացավ, թե ինչպես մտավ գավիրը,  
թե ինչպես անցավ խուցերի կողքով,  
ողջը տեսիլք էր, կերկերուն շարական,  
որ պատմում էր փառքերից հին:

Եվ օտար էր նրա համար այն մարդը,  
որ հիմա կանգնել էր զորավիզի տեսքով,  
վրան՝ փարազա, սակայն, որի կեցվածքը  
երկընտրանք ու ցավ էր ներարկում:  
Կանգնած էին իրար դեմ ընկճված ու հպարտ  
երկու առաջնեկներ՝ մտքի ու ոգու,  
նրանցից մեկը դրսի նույն վանքն էր,  
մյուսը՝ հուսահատ, անցյալի չափ հայի:  
Եվ սև սքեմի տակից, ինչպես աչքերում,  
երևում էր սուրբ՝ անդեմ ու անուղի,  
իսկ վրայից փարազայի՝ նշաններ փառքի,  
որոնք վկաներ էին անիրական գործի:

Եվ ֆրակով մարդը, որի շուրթերին՝  
ներկուն ժայխ էր, և աչքերում անքուն՝  
երկար ու ձիգ օրերի արքմնի երազ,  
պատրաստ էր բաց աչքերով աղոթելու:  
Սակայն անկոտրում է երազողի բախտը,  
ելի նորից հինը, ելի դավաճանություն,  
կանգնած նայում էին երկար  
քարե ու ֆրակով մարդը,  
ինչպես ճակատագիրն ու միտքը արդար:  
Տարիների միջով նա քայել էր երկար,  
երկար ու ձիգ դարեր ոտնատակ էր արել,

Կրակների բերնից պատառիկներ խլել,  
գրել, գրել անվերջ, գտել բառ ու սատար,  
մանկացել էր հաճախ, հաճախ ըմբուտացել,  
օտարվել էր ցավից, նորից մտերմացել,  
բողել հեռացել էր, վերադարձել կրկին,  
ալիքվել էր դավից, ցավով լուսաբացել,  
կրկնվել էր երկար ու հոգնաբեկ, խռով  
կանգնել էր լուռ, համակ, ներհուն, անմիտ:

Հազար անգամ երգած, հազար անգամ տխուր,  
հազար ճամփա ընկած, հազար անգամ մոլոր,  
առուտուր էր արել, տվել առել իրեն,  
ու գրել էր երգեր ցավի, վերքի մասին:  
Ու գտել էր ճամփան, ու հավատով այդ նոր  
կանգնած էր նա հիմա վեղարի դեմ սևոս:  
Նրա մոտ արդեն ամեն ինչ հաստատ էր,  
ճերմակ ֆրակի պես և խղճի պես մաքուր,  
թափառումները նրան տարել էին հյուսիս,  
և չկար նահանջի ճանապարհ:

Եվ փրկության դուռը, դուռն այդ սրբազնան  
նա տեսել էր արդեն մտովի,  
նրա համար այդ դուռը՝ սերունդների ճամփա,  
և ոչ նոր Տիգրոն՝ ժահրով լի:  
Ու դուրս եկավ մարդը հոգնած ու խարիսված  
դեպի գավիթը սալաքար,  
օրորվում էր վերում հողե զանգակատունը  
իրիկվա դեմ խավար:

Ետևում անցյալն էր, երկդեմ վանականը՝  
սևաքեմ վեղարը հագին,  
որի փեշի տակից երևում էր սուրը,  
և դեմքն անկոտրում էր, պողպատե:  
Եվ բարբառելով ուկեղենիկ ցնորքը,  
մշուշվելով մքնող իրիկվա մեջ,  
գալիս էր հեռվից, ցեխոտ փողոցներով  
այն երազող մարդը՝ ճերմակ ֆրակով:

### ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

Ով ասպետներ հեթանոս,  
ով ասպետի ոսկորներ:  
Դ. Վարուժան

Կրծքիդ տակ մի երկիր՝ վաղուց կորսված,  
վայրի վարդի պես կրծքիդ տակ բացված,  
շուրջդ՝ ավերակ, շուրջդ՝ մահվան բռք,  
երկու կրակի մեջ ընկած ասպետ...

Դու վսեմության իին դարերի հետ,  
աստվածների հետ սեղան կնատեիր,  
մարմինդ թողած զոհասեղանին՝  
միտքդ անցյալի ոգին կպեղեր...

Եվ աստվածները վեհ դիցարանի,  
իրեն սրբացրած ժողովոյի պես,  
կճեմեին հանդարտ, որպես իրեղեն,  
և այս էր միայն քո մեղքը վսեմ...

Կգային հետիոտն, առանց պաճուճանքի,  
արյունով ծնած ծնողների հետ,  
և առանց կեցվածք, քանզի աստվածները  
իրենք էլ տեսակ ժողովուրդ էին...

Օ՛, անշուշտ, ցավից, անվերջ կորստից  
կրափառեիր հեռու դաշտերում,  
ուր ժողովուրդը քո սիրտն ուներ,  
և տարերբն իր՝ քո կիրքը եռուն...

Ո՞ր պիտի գտնեիր բարբառող համայնք,  
իին ասպետների վրեժ ու ցատում,  
արդարության դեմ ժպտացող Աստղիկ,  
գեղեցկության դեմ մերկացող աստված...

Ու կիսենքանայիր իին սարսուներով,  
կպեղեիր անդավ, կպեղեիր անտենդ,  
կուզեիր, որ քո Բրզմիկ գյուղում  
աստվածները իին ճեմեին անվերջ...

Օ՛, ոչ, դու ցեղիդ այն հունդն էիր հողում,  
որ դարեր երկար մնում է պահված,  
և սերմն այդ իր սուրբ ծիլերն է քողմում,  
երբ որ զգում է վտանգը վայրագ...

Մարգարեները առաջնորդներ են,  
ապրում են նրանք նաև այլ հողում,  
մարմինդ քողած զոհասեղանին  
դու ժողովրդիդ օրիներգն էիր պեղում...  
1984 թ.

### ՄԵԾԱՐԵՆՑԻՆ

Նարեկացու որդին  
Մեծարենցն էր,  
անհանգրվան, անտուն  
և հուշիկ,  
ծաղիկների բույրից հսկին,  
ծաղիկների երգից արբուն...  
Բողոքագիրը ուներ ձեռքին  
հայրը խոժոռադեմ,  
որդին՝ ծաղիկներից արբուն  
և երկնքից խոռվ։

Նարեկացին մեռավ հույսով՝  
ծառը երկինք խրած,  
Մեծարենցը հոգմած, մոլոր,  
լույսի ցավից գնաց։

### ԵՐԿՈՒ ԵՐԳ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ

Եվ խնջույքում հրով իին,  
Երբ կարմիր խնդա,  
Չես զգա, որ մեր գինին-  
Մեր արյունն է դա...  
Վ. Տերյան

-Ա-

Համբ, որպես լեռը հսկա,  
ամփոփ, ինչպես Սիս,  
դու՝ նախրյան առաջին ճիշ,  
դու՝ ջահել Մասիս...

Մեր վերքերի ականատես,  
մեր մորմոք, մեր ցավ,  
մանկության խորհրդանիշ,  
մեր զուսպ, մեր պատիվ...

Ծով էր արյունը... 15 թիվ,  
եղեռն ու նախճիր,  
և քո հոգում այրվում էր լուռ  
երգը տարագիր...

Ինչ ձեռքերով դու բռնեցիր  
դրոշը վառվող,  
ինչ աշքերով գրկեցիր  
երկիրդ հառնող...

Ղնկածներին լացող պետք չէ,  
կին կա, կլացի,  
դու առաջին և դու վերջին  
անթագ նախրցի...

Դու՝ արյունից ապշահալած,  
դու՝ այր, զուր ու խիղճ,  
քեզ էր տրված վերքը մաքրել,  
երգել վերքը բաց...

Համբ, որպես լեռը հսկա,  
ամփոփ, ինչպես Սիս,  
դու՝ նաիրյան առաջին ճիշ,  
ջահել դու Մասիս...

-Բ-

Կուգեի քեզ ընկեր լինել,  
մտերիմ ու բաց,  
լաթը ձեռքիս վերքդ կապել  
ու չասել ոչինչ...

Չասել, որ դու մեծ ես ինձնից,  
ապրող դու աստված,  
ու լեռներից լեռը այն մեծ,  
տեսած ու ապշած...

Չրուցեի քեզ հետ նստած՝  
նաիրցուց այն հին,  
հազարամյա դարերի հետ  
խոսող նաիրցուց...

Ու գնայինք Շամիրամի  
ջրանցքը խորունկ,  
Արայի պես հպարտ, անքեն,  
լուս ու անաղմուկ...

Դիցարանի առջև կանգնած,  
ինչպես՝ Անիի,  
իսիծ ու ավագ մաքրեինք մենք  
անցավ ու լոին...

Չվառեիմք ոչ խունկ, ոչ մոմ,  
չայրեինք ոչինչ,  
քող հոլովվեր ոսկորներում  
հպարտ մի քախիծ...

Կուգեի քեզ ընկեր լինել,  
մտերիմ ու բաց,  
ձեռքիս լաթով վերքդ կապել  
ու չասել ոչինչ...

1985 թ.

ԳՐՈՂ ՀԱԿՈԲ ՄԵԶՈՒՐՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ,  
որ միայնակ ապրեց իր մորթված երկրում

Դու չգիտես ու չես տեսել,  
թե ինչպես է այրվում հողը,  
և քաղաքի դարպասները,  
և տները իրար մոտիկ...

Ճանապարհին մորթված մարդիկ,  
ծերերի հետ ընկած մանուկ,  
և ձեռքերը երկինք պարզած  
հարսներ անբաղ, պատվազրկված...

Այրված խուղեր, այրված ծառեր,  
այրված մանուկ, այրված մայրեր,  
ավերումի ձիգ տարիներ,  
դու չգիտես, դու չես տեսել...

Եվ ավերված քաղաքի մեջ  
մի մարդ անցնում է լուսկյաց,  
նա չի փախչում, չի աղմկում,  
մի մարդ անցնում է լուսկյաց...

Եվ տեսնում է նա ամեն օր  
այրված դրոշը, տունը այրված,  
փողոցները, մանուկներին  
և ծերերին, և հարսներին...

Մի մարդ ապրում է ամեն օր  
հիշողության իր դաշտի մեջ,  
և չարության ոչ մի նոպա,  
ինքը հավատ է և ինքը՝ խիղճ...

**ԱՐՅՈՒՆԱԿԻՑ ԲԱՆԱՍԵՂԾԻՆ՝  
ԵՎԻՇԵ ԶԱՐԵՆՑԻՆ**

Հենվել է Մասիս լեռանը,  
ձեռքի տակ՝ դաշտն Այրարատ,  
փուել է իր առջև մազաղաք,  
մեջքը հենած Մասիս լեռանը,  
զիշերվա մուր արգանդում  
թարախել է գրիչն իր լույս  
ու գրել մազաղաքն ի վար՝  
Հայաստան՝ վառվող արշալույս:

\*\*\*

Պարզել է ձեռքերը կրակին,  
աշքերում անթեղված բեկոր,  
վառել է մուրն անթափանց,  
մեջքն հենած մազաղաթին,  
կանգնել է ճամփեքում խաչված  
Նաիրյան երկրի:

\*\*\*

Նորից հիշել եմ ես քեզ,  
իմ մանկության բանաստեղծ,  
ջահելության իմ վահան  
և ծերություն իմ անեղծ:

Սերունդների ուսուցիչ,  
ամենօրյա նորարար,  
ասա՛, ինչպե՞ս դու քո մեջ  
արարեցիր երկիրն այս:

Տիրությունից Տերյանի  
մինչև Ծավարշը այն գոռ,  
երկիրը՝ որք Նաիրի,  
կոմիտասյան մրմունջով:

Ինչպե՞ս, ինչպե՞ս պատահեց,  
որ պատանին իին Կարսից,  
թողած երկիրը մեռնող,  
հառնեց որպես նոր երկիր:

Մահին խառնեց կյանքի թույն,  
կոտորածին՝ սիրո երգ,  
արփենիկյան սուրբ սիրով,  
որ քոնը չէ էլ երբեք:

Անկումներով խառնածին,  
վերելքներով միշտ դյութված,  
քո օրերում այն չնչին  
երկիրը մեր ծննդիր:

Հրաշքի չես հավատում,  
թլոր մանուկ նորածին,  
վաղը լեզենդ կդառնա  
փոքրիկ, փոքրիկ կարսեցին:

Անձրև մաղի, կիշեն,  
արև ծագի, կգա նա,  
չորս տասնամյակ մեր կյանքով  
դժվար նրան հասկանանք:

Նորից հիշել եմ ես քեզ,  
իմ մանկության բանաստեղծ,  
ջահելության իմ վահան  
և ծերություն իմ անեղծ:  
1979 թ.

\*\*\*

Իմանալով՝ չհասկացա,  
մոտենալով ես հեռացա  
և հենց այդպես ես շիմացա,  
թե ով ես դու, թե ով ես դու...

Զարմանալի դու հայաշունչ  
և զառամյալ հայահմա,  
ինչքան փորձեցի մոտենալ,  
այնքան շատ ես հեռացա...

Ծակատագիր, բախտի ծիծաղ,  
հզոր երկիր և քամահրանք,  
քո պոետը հենց քո ննան  
իմանալով չհասկացավ...

Ինչ էլ լինի, և թեկուզ երք,  
ով էլ լինի և որ դարում,  
առասպելը և միջը քանկ  
չի ընկալվի ինչպես հմայք...

Իմանալով՝ չհասկացա,  
մոտենալով՝ ես հեռացա  
և հենց այդպես ես շիմացա,  
թե ով ես դու, թե ով ես դու...

1987 թ.

## ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻՆ

Կապուտաչյա Վահան,  
եղբայր ու արնակից,  
թափանցիկ դու, ինչպես  
լեռների օդ,  
արյոր ինչպե՞ս  
աշխարհի կամոր  
տարար չարչարանքն այն՝  
դժոխքից ցուրտ...

Եվ վիհում քո,  
որպես նորօրյա մի Հիսուս,  
չզարկվելով անզամ  
պատերին մութ,  
մորմոքներին անցյալ  
ու քնքանքին քո սուրբ,  
ի՞նչ գամերով արյոր  
դու կապվեցիր...

Ի՞նչ սոսկումով արյոր  
դու դիմացար,  
անցնելով քո կյանքի  
վերջին ուղին,  
երբ քեզ տանող  
զինվորը լուս  
և դիմավորողը  
քո արյունից էին...

Քայլում է նա, ահա,  
վերջին ճամփան,  
և ոտքերն են սահում  
թաց լորձունքից,  
կապուտաչյա Վահան,  
եղբայր ու արնակից,  
թափանցիկ դու, ինչպես  
լեռների օդ...

## ՁՈՆ ՀՌՎՀԱՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ

(Պոեմների նոր գրքի առթիվ)

Աստված մահ տվեց մարդուն իմաստուն,  
որ իր նմանին մոտեցնի Աստծուն,  
որ կերտի բոլոգմ իր հեզ աստվածության,  
կերտի կտավն իր կատարելության,  
հույս դառնա մեկին, մյուսին՝ սատար,  
և այսպիս ձգտի, հասնի անդադար...  
Եվ ջահը մահվան լինի մի սուրբ հուր,  
որ նա բարբարոս չլինի երբեք,  
որ աշքի մեկը հառնի դեպի մահ,  
մյուսը՝ կյանքի աղբյուրը անմահ,  
և լծակները թե՛ կյանքի, թե՛ մահի  
կշռեն գոյի տենչանքը վայրի...  
Որ միշտ փայփայի ծնունդը մարդու,  
հավերժը կապի անվան հետ որդու,  
և հոլովոյթով մարդ ու մարդկության  
հուսահատության ու թշվառ պահին  
ընպի հրաշքը մեծ, աստվածային,  
ծնունդը տոնեն՝ անմահության կայծ,  
և հարքի երգով, և սիրով արդար...  
Եվ հասկացավ նա՝ մարդը վայրենի,  
որ քարայրում չէ ծաղիկը կյանքի,  
և որքան երկիր, երկինք պեղն,  
այնքան մոտեցավ ցավերին անեղծ...  
Եվ հասկացավ նա, որ եզերքն անեղծ  
որված է այնտեղ, հեզ մարմնի մեջ,  
հեռուներում չէ ծիլն անմահության,  
այլ հենց սրտում իր, ցավում մարդկության...  
Ու որքան ցավից սիրտը տրորվեց,  
այնքան հասկացավ վիշտը՝ ծովից մեծ,  
ու երգեց վշտից, սիրեց ու տեսավ,  
որ սերն է միայն ցավին հավասար...  
Ու երգեց վշտից, սիրեց ու տեսավ,  
որ սերն է միայն երգին հավասար...

Ոսկե օրորոց նա շինեց սիրով,  
սերը բարուրած դրեց օրորոց  
ու այդպես երգեց նանիկ, օր-օրոր...  
Մանկան աշքերը բացվեցին սիրով,  
ու պարուրվեցին բազում ծեսերով,  
հառնեցին մանուկ մարդկության աշքում  
սիրո գգվանքներ և սեր անհատնում...  
Գառան մայունը եկավ լույս աշխարհ,  
ծիլ ու ծաղկի տեսքն էր կատարյալ,  
լեռները դարձան վեհության կմիք,  
երկինքը կապույտ՝ երազի ստիճը...  
Եվ մարդը տեսավ իր նմանակին,  
տեսավ, թեպետ նա տանջվում էր կրկին,  
տանջվում էր անհայտ ցավերից բազում,  
բայց ինչ-որ երազ, երազ էր տեսնում...  
Եվ երազը այդ փայփայեց անվերջ,  
և դարեր այդպես երազների մեջ,  
սրտում մի ուրիշ աշխարհի կմիք,  
սրբնեց ու հուսաց, հուսաց ու տրնեց...  
Եվ դարեր անվերջ տքնանքի ցավով  
երկնեց երազն իր հավերժի դոդով...  
Ի՞նչ է երազը մանուկ մարդկության,  
որ օրորվում է օրոցքում մանկան,  
որ թաքնված է մոր աշքերի մեջ,  
սիրած աղջկա աշքերում անշեջ,  
որ այնպես բյուրեղ բյուրավոր դարեր  
պահել, պահպանել ու մեզ են տվել...  
Որ այնպես թաքուն, զիշերներ անքեն  
միակ երազն այդ ստեղծել են, կերտել...  
Թեպետ և կույր՝  
Հոմերոսն է իր հրաշքը կերտել...  
Եվ բարբառել է, բարբառել անվերջ  
մանուկ Սոկրատը ճշմարիտն իր պերճ...  
Եվ փնտրում ծովում մեծ անտեսության  
մարգարենները մանուկ գիտության

գտել են բառեր, հասարակ, անշուր,  
որ հետո պիտի դարձնեն ուսմունք,  
և կատակերգությունն աստվածային  
Նարեկի բերանով դառնար շշուկ,  
նրանային բառերն ու երազը մեծ,  
երազն այն հրաշք, որ բարուր դրվեց,  
որ հետո գար, ու դեռ պիտի գա,  
քանզի մահվան դեմ ծնված այս շղթան,  
որ հիշողության լույսով է զոդված,  
ծնում է վաղուց մանուկ մարդկության  
երգը հավերժող, երգն անմահության...  
Եվ խեղկատակներ այդ ե՞րբ չեն եղել,  
ե՞րբ մարդը մահվան ջահը չի պեղել,  
ե՞րբ չի մաքառել...  
Եվ օրորդում է երազը մեր դեմ,  
իսկ մյուս կողմում՝ մահը կիսադեմ,  
ու մենք հիշում ենք, որ դարեր առաջ,  
երբ դեռ չեր ծնվել երազը այն մեծ,  
մարդը մենակ էր, մարդը՝ վայրենի,  
և նա ուզում էր իր աչքերը հանել,  
խարիսափում էր նա մթության մեջ խոր,  
և ոչ ոք, ոչ չեր կարող փրկել...  
Ու քանի երազը, մարդը՝ երազող,  
և օրոցքն հույսի՝ մահի դեմ կրվող,  
կան ու կլինեն ծառ ու ծաղկի հետ,  
խելազարներ՝ մահը երազող,  
չեն կարող ծնվել...  
Նրանք ելնում են այդ նույն օրոցքից  
և հենց նրանք են, որ պիտի մեռնեն:  
Նրանք ծնվում են մահ հաստատելու,  
իսկ երազողը՝ նրան դատելու,  
նրանք ծնվում են սպանելու համար,  
իսկ ստեղծողը՝ նրանց փրկելու:  
Այս հին աշխարհում շատ հին խաղ է սա,  
անմահությունը մահով են գտնում...

## ԱԼԻՍՅԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

Մի սեր  
ու ընդմիշտ  
ճանապարհորդող անցորդ,  
բոլոր հատվածներում այս հողե գնդի,  
բոլոր սրտերում քայլող անցորդների:  
Դու իմ հայուիի՛, արգենտինուիի՛,  
օվկիանի այն կողմ իմ սրտի նման,  
իմ արյան նման,  
նման այն բոլոր նահատակների:  
Եվ ապագայի ջահերի նման,  
բոցաշունչ արյան տվայտանքներով,  
մեզ նման լոին, մեզ նման ծիծղուն,  
ծավալածիծաղ:  
Այս հողե գնդի հեռավոր իմ քույր,  
սրտի պես մաքուր, կյանքի պես հստակ,  
երգի պես կարոտ, և ամեն մի երգ՝  
նոր ու հեռավոր:  
Օվկիանից այն կողմ հայ ու հայուիի՛,  
օվկիանից այն կողմ երգի նոր ուղի,  
օվկիանից այն կողմ արյան լույս կաթիլ,  
շընկճված մի երգ, շերգված մի երք,  
դու մեր բանակի ծավալուն ծաղիկ,  
դու նոր Անահիտ այս Արարատի,  
իսկ ինձ համար՝ քույր,  
համբույրից մաքուր:  
Ապրել լույսի մեջ, ընկնել լույսերում,  
սիրել ու մնալ լույս մոխիրներում:

## ՄՀԵՐԻՆ

Որդին, թե մի օր խոռվես ինձնից  
ու դեն շպրտես անունդ տանջող,  
հիշիր, որ կյանքում առավել քեզնից  
զգվել եմ ինքս կյանքից հորանջող:  
Զգվել եմ, սակայն ապրել եմ զգոն,  
մի մաս չտալով կեղծիք ու ստին,  
վիրավորանքը խեղդել եմ արտում,  
փրկել ամենուր, ամենից ոգին:  
Ու եենց այդ ոգին առարում է քեզ,  
որ այդ հին, ազնիվ ասպետի նման,  
թեկուզ հազար մի քարանձավ մտնես,  
չդավաճանես այդ ոգուն անմահ:

1969 թ.

\*\*\*

Եվ խարտյաշ էին մազերը,  
և աչքերը՝ սև,  
և բարձրիկ էին հոնքերը,  
և գանգուրմեր ուներ,  
և սառն ու հանդարտ միտքը,  
ինչպես ձյունն այն լեռան,  
հպարտ իր գրյուրյամբ,  
ինչպես արքա Արան:

Եվ գեղեցիկ աշվունքը,  
և գեղեցիկ լեզուն,  
և դյուրաքեկ միտքը,  
և իմաստուն, խոհուն,  
այս ամենը եղել է  
և կա մինչև այսօր,  
սակայն աշակերտ է հիմա  
տղան այս խենք, խոհուն:

## ՄՀԵՐԻՆ, ԵՐԲ ԼՐԱՑԱՎ 16 ՏԱՐԻՆ

Այնքան դժվար է իմ ուղին եղել,  
տղան, որ ես շատ եմ ինքս ինձ պեղել,  
և կասկածը չար, կասկածը մթին  
ավերել է միշտ իմ մանուկ հոգին:  
Հավատը իմ խոր եղել է դժմի,  
երբեք չեմ մերժել խոսքը ուրիշի,  
բայց հավատը այդ՝ ուրիշից ծնված,  
ընդունել եմ ես շատ քերև գնված,  
սուկ նրա համար, որ բառը կյանքում  
ապրել է իմ մեջ հավերժ ու անքուն,  
չեմ տրվել երբեք սուկածանց փայլի,  
սիրել եմ նրան տեմշանքով վայրի:  
Այնքան դժվար է իմ ուղին եղել,  
այնպես ծանր եմ ամեն ինչ տարել,  
ծանր կեղծիքը և սուտը շրթի  
թվացել են ինձ մահվան գերանդի:  
Խախտել եմ ամեն օրենք ու կանոն  
և ապրել այդպես մերկ ու անկանոն,  
այսքանը, իրոք, հերիք էր, որ ես  
ապրեի աշխարհում ոչ ուրիշի պես:  
Եվ այս ամենին իբրև ապացույց,  
դարձա մենակյաց, դարձա մատնացույց,  
սակայն սերը իմ եղել է միշտ վեր,  
և այդ սիրուց ես դու աշխարհ եկել,  
և այդպես սիրով ապրել եմ վերում՝  
շարհամարհելով երբեք ներքեռում,  
ցածում բնակվող մարմինը իմ հեզ,  
որ արհամարհել չի փորձել երբեք,  
նայիվ հեզությամբ նայել եմ մարդկանց՝  
շմոռանալով օրը վաղանցուկ,  
և դար է եղել վայրկյանը հավերժ,  
և նրա համար ապրել եմ այսպես,

և իմ սերը թաճկ, դու, իմ միակս,  
ծնվել ես նաև ուրիշի նման,  
և քեզ, իմ թա՛նկս, ծնել եմ այնպես,  
որ կարենայի բոլորին տեսնել:  
Իսկ այս ամենը չեն ներում մարդիկ,  
չեն ներում մարդիկ հեռու ու մոտիկ,  
ով որ ուզում է երկնքում ապրել,  
նրան փորձում են ցածում մկրտել,  
և խիստ են միայն նրանց հանդեպ,  
ովքեր ապրում են հոգու վիշտ ու կարիքով,  
որ չեն խոնարհում և չեն կախում ցած  
աչքերը իրենց՝ ցավից արթնացած,  
և դրա համար, հրա՛շը իմ միակ,  
նվիրում եմ քեզ տողերը այս տաք,  
լավ է աշխարհն այս միայն քո սիրով,  
որին հասնում են սրտի արյունով,  
իսկ մնացածը, մնացածը ողջ  
փրփած բերան է, ստամոքս առողջ:  
Դավի աշխարհում կա մի հին կատակ՝  
ապրելու համար պետք չէ նպատակ,  
ով արժեքով է իր կյանքը վարում,  
դժվար է ապրում այս նեղ աշխարհում:  
1983 թ.

### ԼԵՎՈՆ ԶԱՍԴՈՅՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Նա պառկած էր հանգիստ,  
իմացողի նման,  
մահվան պահը քննող իմացողի,  
ուսանում էր նա առաջին անգամ,  
ոչ իբրև հանձնող,  
այլ՝ ուսուցիչ...

Որսի ելած արքաների նման,  
որ չեն սարսում գազաններից,  
շրբոնքները՝ խուփ,  
հոնքերը՝ լուս իջած,  
պահն էր որսում մահվան՝  
գրկում մահի...

Որովհետև կյանքում իր տառապած  
քանի՝, քանի՝ անգամ  
մահի դեմքին  
շպրտել էր բառեր, խոհեր անթեր,  
որոնք դանակի պես երկայր  
խոցել էին թշնամուն և իրեն...

Եվ դժոխքում անցած ճանապարհին,  
իր աչքերով միայն, ոչ ուրիշի,  
նա տեսել էր մահվան շարքեր,  
որոնք պիտի շարժվեին դեպի դրախտ,  
իսկ դրախտը նրա երազային  
ապրում էր իր տառապալից հոգում...

Ու չափարտված իր պոեմի նման,  
կյանքը հանձնած սև ամրոխին,  
տանում էին նրան ջահել տղերքը,  
սյուրի նման, նման չոր խորշակի,  
տանում էին նրա մարմինը հեզ,  
չիմանալով թե ուր, չիմանալով՝ իմչու...

Եվ սերունդներ արդէն քանի՛, քանի՛,  
և ամրոխի մեղքն առած ուսերին,  
նրա վերը մաքրող քանի սերունդ,  
կյանքը տփած մթին, և դժոխքին,  
օրորվում է՝ մահվան ճամփան բռնած,  
ու չի հասնում հոգու երազանքին...

Ո՞վ աստվածներ, հոգնած արարածից,  
ո՞վ խոռված, մենակ, սուրբ աստվածներ,  
ձեր մեղքերը բարդած մարդու վրա,  
ո՞ւր եք քշում այլակս սերունդներին,  
ո՞վ է զալու նրանց հերթափոխի,  
մի՞թե հեշտ է ծնվում որդին անքեն...

Նա պառկած էր անքեք, ինքնախռով,  
արժանավոր մարդու հպարտությամբ,  
և ամրոխը մահի սարսութի մեջ  
տանում էր դիմ՝ ցավից օձագալար,  
տանում է բյուր դարեր, և անհայտ է,  
թե երբ պիտի բարին առնի հանգիստ:  
1991 թ.

### ԱՊՎԱՆ ՍԱԿԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Տառապում է սիրտը մենակ  
այս աշխարհի տակ,  
և հոգեթով զրույց կա լոկ,  
մի կապույտ լճակ:

Եվ ցիր ու ցան  
մի հեգ խոստում,  
մի լուս ծառուղի,  
որ պահում է մեր սիրտը տաք  
և ցուրտ այս ուղին:

Ելնեմ, գնամ այս աշխարհից  
անդեմ ու անխոս,  
սիրտս հառած վերջալույսի  
կարմրին անթոց:

Ու թող վառվեն ու մորմոքան  
այդ վառվող մուժում  
երազներս, կարոտներս,  
ոչինչ չեմ ուզում:

\*\*\*

Ինչպես Աստծու պատկերի դեմ  
կանգնած երկու անմեղ զոհեր,  
որ երթէ չեն հասկանում  
Արարիշի կամքը զորեղ,  
որ նայում են հափշտակված  
կիսալրսնի պայծառությամբ,  
այդպես, ահա, նայում ենք մենք  
վշտակորույս զգացությամբ:  
  
Խամրում է, տե՛ս, դեմքը գունատ,  
նիմա է իջնում ցուրտ կոպերին,  
և հեռավոր մի աշխարհից  
մեզ է նայում անժամանակ:  
Արարիշի ձեռքն է խաղում  
մահամերձի ու մեր միջև,  
զգացությունը կապուտաչ  
դուրս է քափում արցունք ծովեր:  
  
Հեռանում է մեզնից կամաց  
սիրեցյալի դեմքը գունատ,  
երազվում է ու միրաժվում,  
աչքերի դեմ դառնում պատրանք:  
Եվ ցավագար այդ պահի մեջ  
նա չի կարող մեզ հաղորդվել,  
հեռանում է նոր մի հոգի  
այս աշխարհի մարմնից ծեր:  
  
Մահամերձի ցուրտ ճակատին  
և աչքերում զույգ մշուշված  
արարվում են նոր աշխարհի  
պատկերները թիլ ճաճանչված  
հեռացումի այդ լուս պահին  
կանգնած ենք մենք՝ անմեղ զոհեր,  
որ երթէ չենք հասկանում  
Արարիշի միտքը զորեղ:  
1976 թ.

### ՎԱՐՈՒԺՄՆԸ ՕՐՈՐՈՅՈՒՄ

(Թոռնիկիս)

Դրսում ձյուն է, ճերմակ քամի,  
դրսում՝ դար ու փոսեր,  
շշուկները այս ուշ ժամի  
չեն թողնում քեզ քնել...

Աղմուկները հավաք ի մի,  
ներս են խուժել սենյակ,  
փսփսում են ականջն ի լուր,  
աղմկում են խելառ...  
Բազուկները ճերմակ, փափլիկ  
թրատում են օդում,  
չեն հանդրժում կապ ու կապանք,  
բարուրն են պոկում...

Ոտքերն, ահա, երկինք պարզած,  
կորյունի պես վայրի,  
ցանկանում է ժամ առաջ  
ելնել օրորոցից ...

Այս, ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել,  
քաշքում է, խնդում,  
ի՞նչ կդառնա ծուռն այս փոքրիկ,  
երբ բառ առնի լեզուն...  
1989 թ.

## ՕՐՀՆԵՐԳ

Վարուժան Բաբախսանյանին

Սեր, հայրենիք և ամեն բան,  
անցյալիս հետ մոայլ և ապագայի,  
արծվի նման քառարե, սրահայաց,  
դու ես կապում,  
լեզու իմ սիրելի...

Չո մեջ դրված է ամեն բան,  
և՝ զաղտնիքը խորախոհուն,  
և նժարն աշխարհաշափ,  
և մեր լեզուն սիրատոչոր,  
սերը՝ ցրտի նման պարզկան,  
մանվորյունը թոր Դավթի,  
խիդը Աստծու աշխարհաշեն...

Ինչպես շապեմ անմահության  
և զաղտնիքի հրճվանքը սուրբ,  
երբ իմ առջև տրոփում է  
Աստծու պատկերը կրկնության...

Դու եկար ինձ հաստատելու,  
համոզելու վերջին անգամ,  
որ մարմինը թւեր ունի,  
հոգին՝ դռներ տիեզերական...

Եվ կրկնության հոլովույրով  
ես խաղում եմ նորից,  
խաղն իմ մանկան  
բիբլիական հողի վրա այս,  
իբրև տեր,  
իբրև մանուկ մի հրաշաճայն,  
իբրև անցյալ ու ապագա...

Թող տավիղդ հնչի քառածայն...

1996 թ.

## ԵՂԲՈՐՄ ՎԱՀԱԳՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ու թե ձյունն այս չիներ,  
և իրիկունն այսքան լույս,  
այսքան փարթամ փարիլներ,  
այսքան ճերմակ ու անհույս,  
այսօր նորից չէիր զա դու,  
չճերմակած իմ ընկեր,  
իմ միամիտ ու իմ լավ,  
անվերադարձ դու իմ սեր:

Իրիկուն է ձյունարով,  
աղոթաբեր իրիկուն,  
փարարվել են ծառ ու քուի  
ճերմակ, ճերմակ աղոթքով:  
Ծնրադիր մի իրիկուն  
շշուկի ու աղոթքի,  
դու էլ աչքերդ փակիր,  
քո շուրթերով աղոթիր:

Զյունն իջել է ամենքիս,  
ձյունն առել է ծածկի տակ  
քո շիրիմը, իմ հոգին  
և աշխարհը բռվանդակ:

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻՆ**

(Հունիսի 17, 1971թ.)

Պոկված երազ է մի անցողիկ օրը,  
հոգնած այգիները մնացին թափուր,  
տանջող խոստում է մերժված սերը,  
գրված գրքերը մեռնում են անդորրը:

Մնացին միայն անվախ երգերը,  
սերերը մաքուր բարձրացան խարույկ,  
սպասում են մեզ գարնան վարդերը,  
պարտիզանները հեռացան տխուր:

Դու բարձրացել ես Գողթան երգերից,  
մազարաթները մաշվում են մեկ-մեկ,  
քոնն են այսօրվա մաքուր հերկերը,  
օրերից ելնող իմ հրաշք մանուկ:

\*\*\*

Գլուխը թեքած ուսին,  
մազերը խոխվ ու ճերմակ,  
խոռված հոճերի կամարից  
նայում է Սևակը ամպամած:

Տգեղ մայր,  
նոր դարի դու Եզրա,  
որտեղի՞ց քեզ այդքան  
համոզնունք,  
խիղճ արթուն, սեր անքեն,  
այդքան խինդ, այդքան ցավ  
ու թախիծ...

Նայում ես հանճարեղ այս մարդուն՝  
շորքերին Նարեկյան տաղարան,  
բացվում են լայնություն, կանարներ,  
բացվում է մրմունջը ոսկեգիր:

Տգեղ մայր,

նոր դարի դու Եզրա,  
որտեղի՞ց քեզ այդքան  
համոզնունք,  
խիղճ արթուն, սեր անքեն,  
այդքան խինդ, այդքան ցավ  
ու թախիծ...

**ԽԱՉԻԿ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ**

Ոչ ոք չի կարող զատել թշնամուց,  
թեկուզ գնդակը մարմնիդ մեջ թաղված,  
այս ի՞նչ ծաղիկ է կրծքիդ, ճակատիդ,  
մեղքի պես ծանր, դավի պես արբած...

Մեկ վարկյան միայն, և դու կըմբոշինես  
մուժը հեզ բախտի, ծաղրը սրբացած,  
և հերոսական քայլերդ մանրիկ  
մարմինդ ծանր կտապալեն ցած...

Մահն էիր նկարում, պահը գերության,  
որ աչքը կոխեիր անհավատների,  
մուսալեցու անհանգիստ զավակ,  
շարչարանաց որդի հավատարմության...

Ջրքիջն եմ լսում զինվորի վայրի,  
որ խուժել է, տե՛ս, հողն իմ սրբազան,  
գնդակն ու մահը խառնվել են իրար,  
Էլ ո՞վ կարող է մարմնից հանել...

Ո՞վ պսակեց քեզ կույր գնդակի հետ,  
թշնամուն այդ ո՞վ մերձեցրեց հողին,  
տնքում է, ահա, ամբոխը հարբած,  
և ես տեսնում եմ լիրք քրքչողին...

Ոչ ոք չի կարող զատել թշնամուց,  
թեկուզ գնդակը մարմնիդ մեջ թաղված,  
այս ի՞նչ ծաղիկ է կրծքիդ, ճակատիդ,  
մեղքի պես ծանր, դավի պես արբած...

## ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Ծառերի խոնավ ստվերներում  
հոգնած դեմքեր կան թաղված,  
մարդիկ մեռնելուց առաջ  
ցանկանում են խոսել:  
Տիտոր երգերի ցանկը  
տանում է ռեքվիեմ,  
ես չեմ հորինել մահվան գաղափարը,  
ես չեմ հորինել այս փոքրիկ աղջկան,  
այս հոգնած ծիլը  
և արել ներկած:  
Փայտե տնակներին ճերմակ զիշեր է իշել,  
ճերմակ ակացիան բուրվառում է կարոտ,  
երազները երբեք ափ չեն ունեցել,  
մարդիկ մեռնելուց առաջ  
ցանկանում են խոսել:

## ՍԼԱՎԻԿ ԶԻԼՈՅԱՆԻՆ

Աև, մազակալած քո դեմքն եմ իիշում,  
Գյումրու բարբառն է ականջիս վնգում,  
մի քիչ սուզվում եմ աշնան խորքը մառ,  
որ աշունն ինքը քո մասին խոսի...

Բառերն են թափում դանակի պես սուր,  
և քո ծիծաղը՝ քմծիծաղ իբրև,  
ես Սերվանտես եմ մրմնջում իմ մեջ,  
իսկ դու խոսում ես Ֆառուսից թշվառ...

Խելահան աշուն, այս իմշ կատակ է,  
զույգ տերևներ են թափում ծառից ծեր,  
հիշողությունն դարձրել եմ նժար,  
և անցյալն ինքը՝ հալածված բառեր...

Գարեջրատուն և վատ գարեջուր,  
կում-կում սպառող լուռ հաճախորդներ,  
քո ոտքերի տակ թափթփած շշեր՝  
և ծիծաղ վայրի, և ծիծաղ անծայր...

Երեկվա կիսատ մի տխուր հայացք,  
մի նոր դեբոշից մնացած պատառ,  
ամեն ինչ կիսատ, ամեն ինչ մի քիչ,  
և հավատիդ մեջ կուրացած մի դեմք...

- Գնանք,- ասում ես,- գնանք քիչ հեռու,-  
մի հին ջրափոս ոտքերիդ տակ թաց,-  
այստեղ ապրելով՝ մարդը կմեռնի,  
գնանք,- ասում ես,- գնանք, քիչ մնաց:

Ես դեռ չեմ տեսել իմ ապրած կյանքում,  
որ մարդն ապագան իր առաջ դնի,  
և, ահա, կրկին անցյալդ եմ թերթում  
ավելի հստակ և հնամենի:

Մի քիչ մշուշվեց օրը կեսօրվա,  
հաճախորդները դարձան շատախոս,  
գարեջուրը թարմ փոխվել է զինու,  
և նոր մարդիկ են սեղանին իմ, քո:

Գյումրու բարբառը հիմա չի զնգում,  
տիտոր ժայխտն է փաթաթվել դեմքիդ,  
խմում ես արդեն հավատիդ հաշվին,  
ել ոչ մի Ֆառուս քեզ չի փրկելու:

Ու քրքում ես, երևի հիմա  
Վիյոնի կյանքն ես իիշել խորտակված,  
ու պտտվում են շուրը ու ուղեղիդ  
քո հերոսները՝ գրքերից բռած:

Ու հեռանում ես ինքդ քո ներսում,  
խաղը կորցրած Ֆառուսի նման,  
մի քիչ դուրս ելնեմ աշունից այս ծեր,  
օդը մահով է լցվել իմ վրա:

## ՍՈՎԱՏԵՍ

Սովատեսը իմաստուն էր,  
փիլիսոփա՝ Սովատեսը,  
իր տան մեջ էլ նա անտոն էր  
և բոկտոն էր Սովատեսը...

Բարին տալիս ուրիշներին,  
մերկն էր պահում իրեն,  
մերկության մեջ զեղեցիկ էր  
իմաստաերն այն հին...

Մեկն էր ամքող հին Արենքում,  
շաղ էր տալիս մտքեր,  
գիշերը նա զալիս էր տուն  
սոված, ծարավ, անտեր...

Եվ պառկում էր նա կտուրին,  
խսիրը բարձ դարձրած,  
օրորվում էր մտքերում իր  
մինչև արևագալ...

Եվ ուսում էր, ուր պատահի,  
և քնում էր խաղաղ,  
առաքյալն էր նա աշխարհի,  
մանկան նման զուլալ...

Եվ Արենքն էր պաշտում նրան,  
լսում ականջն ի լուր,  
ճանաչում էր Սովատեսը  
մարդուն՝ հոգով արդար...

Շուկայում էր անցնում կյանքը,  
այնտեղ, ուր շատ մարդ կա,  
երեխայի նման խնդրուն,  
կյանքի ճշգրիտ վկան...

Աստվածների հետ էր կանգնում,  
վիճում անքեն ու բաց,

խոսքը նրա աստվածային՝  
ճշմարտությամբ հարբած...

Դատարան էր և հաշտարար,  
և սիրահար կյանքի,  
առատաձեռն խոսք ու բարքի,  
և զուսպ իրի հանդեպ...

Հացկատակին ձաղկում էր նա,  
անքեն՝ որպես աստված,  
փառամոլին քննում էր  
և տալիս էր միջոց...

Ծիծաղն էր լոկ գանձը միակ,  
որ թնդում էր հոգում,  
ծիծաղում էր նա լիաբոք  
հոմերոսյան ոգով...

Մի ամքող կյանք իր տքնությամբ  
նա մշակեց հոգին,  
աշակերտներ տվեց բազում  
սովատեսյան ոգին...

Եվ Արենքը դատեց նրան,  
որպես ետին պոռնիկ,  
և հինգ հարյուր իմաստակներ  
բզկտեցին հոգին...

Մեղադրվեց նա Արենքում,  
որպես չարիք ծնող,  
աստվածներին անհաճելի  
և օրենքը ատող...

Մահը նրան չէր վախեցնում,  
վախեցնում էր միայն՝  
մարդը ա՞յն է, ինչ ծնվել է,  
թե՝ կփոխվի մի բան...

Սովատեսը իմաստուն էր,  
փիլիսոփա՝ Սովատեսը,  
իր տան մեջ էլ նա անտոն էր  
և բոկտոն էր Սովատեսը...

### ՊՈԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ ԲԱՅՐՈՆԻՆ

Խելահեղ ես դու, Բայրո՞ն, սիրելի՞ս,  
ինչպես արմատը հողի մեջ գարնան,  
ժամանակների բերքը ջրելիս  
հառնում ես կրկին հոգով անվարան...

Ինքնակալության թշնամին ես դու  
և պաշտպանը պիրկ մարտունակության,  
վրեմը՝ ընկած ամեն հանճարի,  
վերածնությունը բանականության...

Թարմ, որպես գարնան ծաղիկն առաջին,  
և սերը անզուսպ՝ իմաստ որոնող,  
հավիտենության քունը երջանիկ,  
ծարավն առաջին՝ տենչաքներ պարզող...

Մեղմ, ինչպես ծաղիկ, բիրտ՝ որպես սուսեր,  
բանականության և սիրո միջև,  
բեպետ երկիրը քեզ կյանքի կոչեց,  
բայց դու ապրեցիր նրանից վերև...

Եվ դու ապրեցիր իմաստով վերին,  
որ քեզ երազեն, ու մնաս անհաս,  
բարեբերության հրացող արև,  
մեղադրելու դու եկած վկա...

Ոգիդ կապեցիր ընկածների հետ,  
արհամարհեցիր չարն էլ քո ազգի,  
հանուն բացառիկ մեծ ճշմարտության  
եղար և հայի սատարը ոգու...

Երբ ժամը հնչի, և բոլորն ի մի  
հավաքեն վերջին դատ-դատաստանին,  
ներող հայացքով և վերջին անգամ  
կսպանես սիրով պոետիկներին...

Խելահեղ ես դու, Բայրո՞ն, սիրելի՞ս,  
ինչպես արմատը հողի մեջ գարնան,  
ժամանակների բերքը ջրելիս  
հառնում ես կրկին հոգով անվարան...

### ՖԵՇՐԻԿՈ ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ

Սպանվեց 1936 թ., Գրանադայում

Երկիր ոռմանների ու անդալուզյան երգերի,  
երկիր պոետների ճշմարտության,  
այս ի՞նչ տիսրություն է իշել քո երկնքին  
և ծառերին, մարդկանց և լուսնին լուս:

Ահա իշնում է աստիճանից վերջին  
պոետը քո, քաներո՞րդ դար,  
դեմքին՝ վճիռ մի երկինք և աչքերում՝  
վերջին հավատը քար:

Սուլում է, ինչպես զիշերներին այն,  
երբ փողոցում ճերմակ, ինքը տղա,  
կանայք գունավոր իրենց զգեստներով  
պարում էին անփոյթ, շորթերին՝ տաղ:

Ու ինքը ճերմակ մի շապիկով,  
արյան ոչ մի հետք այդ ճերմակին,  
պարում էր, ինչպես փոքրիկ խենթը,  
երբ շուրջը կյանք էր, կանայք ու կյանք:

Ո-ոմանսն է նորից շուրթերին տաք,  
ահա իշնում է աստիճանից վերջին  
(վերջին անգիտակից իր հավատով  
և սիրով վերջին) ոստիկանից առաջ:

Աղմուկն է հորդում փողոցում շոգ,  
կանայք անցնում են՝ երգ մի հստակ,  
ու նայում է ինքը և՝ անտեղյակ  
իր վերջին, վերջին անցնող օրվան:

Այսպես էր, այսպես, ուղիղ այսպես  
ասպետը նոյն այս Խսպանիայի,  
անցավ՝ ձեռքին սուրը մերկացրած,  
և աչքերում՝ իիդալգոն վիրավորված:

Իջնում է, ահա, ժափտով հար,  
հար ու նման այն անհայտ մարդկանց,  
որ ծիծաղում են անգամ մահի  
և գոյության այս փաստի առաջ:

Ու ժպիտն իր մեռնում է, տես՝  
մի՞թե կույր ես դու, քսաներո՞րդ դար,  
ժպիտը մեռնում է այնտեղ, նայիր,  
ատամնաշարի ստեղների տակ:

Երկիր ոռմանսների ու անդալուզյան երգերի,  
երկիր պոետների ճշմարտության,  
այս ի՞նչ տիսրություն է իջել քո լույսերին  
և հավատին քո, մահիդ անգամ:

1973 թ.

### ՍԻԳԵԼ ՍԵՐՎԱՆՏԵՍԻՆ

Դու ծնվեցիր մի դարում,  
ուր ներում չկար,  
հավատքիդ կույր մի ասպետ,  
այր մի խելագար:  
Կյանքդ անցավ աքսրում,  
սրտերում մեռած,  
սուրդ պատյան չդրիր,  
սուրդ ժանգոտած:  
Ու բարձրացար Լամանչից  
ժանգոտած սրով,  
արքաներից խելագար  
ասպետիդ սիրով,  
դու խելագար մի երազ,  
անհանգրվան սուրբ,  
և պարզապես հենց այդպես՝  
Միգել Դոն Քիշոս:

### ՕՈԼԵԱՆԻ ԿՈՒՅԱԾՈՅ

Եղջերափողերը հնչում են խանդով,  
ավետում վերջին խոսքը նահանջի,  
կրակն է շիջել, շիջել է քամին,  
ոռնում է միայն վայրագ թշնամին ...

Նախանձի ոխը սև ծխի նման  
պատել է հույսի ամեն առաստաղ,  
ընկած են ամեն բարիկադ ու պատ,  
ցավի սյուներ են բարձրանում երկինք...

Եկեղեցական զանգերի տեղակ  
մխում է ձայնը վիրավորների,  
հուսահատության, ցավի աղաղակ,  
անեծքի լեզվով հառնում է երկինք...

Նզովք հայրենի թշնամիներին,  
դավաճաններին հայրենական տան,  
որոնց ձեռքում է զնզում բանալին,  
բազադրումի տենչանքին ներհակ...

Շոռում է դուռը զնդանի մթար,  
ու դուրս են բերում գեղջկուհուն ջահել,  
ձեռքերին ծանր շղթաներ երկարեն,  
դեմքին՝ աստղիկը ճակատագի...

Սև սքեմներով ու կարմիր հազար  
նրա ետևից գալիս են անդաս,  
փառքի, նախանձի ու տփհտության  
սաղրիչներն անդեկ, Աստծուց անարգված...

Օռլեանի կույսը՝ անգիտակ դավին,  
ելնում է, ահա, դարպասներից հին,  
որոնց խորքերում որքան մարտիկներ  
մեռել են անդաս, սուրբ, բայց անանուն...

Եվ այս մեկն, ահա, ոսկորի նման  
կանգնել է ըկին անդավ նախանձի,

անհնարին է թաքցնել նրան,  
անհնարին է և հնազանդել...

Սուրբ ժողովրդի ոգին է իր մեջ,  
ինչպէ՞ս կրանտես ոգին ամրոխի,  
եթե իրենն է, պաշտում է անվեճ,  
ժողովուրդն է լոկ տերը հանճարի...

Մատնված ծխին դավաճանության,  
երկինք է ելնում ազրավների չուն,  
քայլում է ջահել գեղջուկն՝ անտեղյակ  
իրեն սպասող արնոտ խարույկին...

Երեկ էր, այո՛, նա փախավ տնից,  
հոր խոժոռ դեմքն է հայտնվում իր դեմ,  
...Աստված ազատի թագավորից,  
բայց չլ՞որ իր ինքն է նրան թագ դրել...

-Վերջին խոսքը ձեր,- շշնջում է մունջ  
եպիսկոպոսը՝ խաչը պահած վեր:  
Մի՞թե հաղողին այրում են այնտեղ,  
ուր ազատությունն ինքն է պարզել...

...Աստված իմ, աստված, այս ի՞նչ արեցի,  
բայց չէ որ ջահել եմ ես դեռ,-  
նրա աչքերից լուս գլորվեցին  
մահից խուսափող արցունքի գնդեր...

Ու նա ըմբոշինեց վայրկյանը միակ,  
դար ապրելու չափ նայեց շուրջն իր,  
թոյլ ժամանակ խաղաց կույսի շուրբերին.  
...Մրա՞նց հետ ապրել, փրկիր ինձ, Աստված:

Եղօրափողերը հնչում են խանդով,  
ավետում վերջին խոսքը նահանջի,  
կրակն է շիշել, շիշել է քամին,  
ոռնում է միայն վայրագ թշնամին ...

1985 թ.

### ԱՎԱՌ, ՀԱՍԼԵՇ...

Քեզ հիշելու համար  
անհրաժեշտ չէ թերթել  
զրքեր  
կամ ողբերգությունը քո:  
Հիշում եմ լուությունն այն՝  
Հորացին,  
ուղիղ կեսը քո  
և մի քիչ խորիրդավոր,  
և նրա կեսը,  
ուր ապրում են հաշտ  
Գիլդենշտերն, Ռոզենկրանց,  
և նրանց մեջ  
ամրողովին  
աղավաղված Լաերտ,  
Օգրիկ ամբողջական:  
Քեզ հիշելու համար  
բնավ պետք չէ թերթել  
ողբերգությունը քո:  
Սենություն է իշել,  
լողում են ստվերներ  
մոլորակի կեսում,  
բառե՞ր, բառե՞ր,  
վիշտն է իմաստ տվել,  
ու մեր մարմնի միջով,  
ողնաշարից ամուր,  
եղեգով մեր ողի  
հաղորդվում է Աստծուն,  
և փրկություն չէ այն,  
կիսված մեր ցանկությամբ,  
գուցե ամբողջությամբ,  
ավա՞ն, Համեն:

Լսո՞ւմ ես դու, անցո՞րդ,  
որ իմ փոշու միջով,  
ուղեկցությամբ իմ զույգ աչքերի,  
մենակ  
կամ մեկի հետ մենակ  
գալիս ես:  
Մենք սիրում ենք,  
սիրում,  
մեզ խոսել է պետք,  
միայն խոսել,  
որ կես երջանիկ,  
որ կես անհաղորդ,  
կույր անհաղորդ  
ապրենք,  
ու վախենում ենք  
միայն նրանից,  
որ բառերը քիչ են,  
որ բառերը մերկ են:  
Ավա՞ղ, Համլետ:

**ՊՈԼՈՆԻՈՒՄ**

Շարժվիր, կա՞ոք իմ,  
դու մի ամփոփվիր խաչմերուկներում,  
նրանք օրերի գույներն են խաղում  
խաղաղ, ինքնամփոփ  
հավատարմության:  
Թոփիր, բարձրացիր անվերջ,  
լոկ այնտեղից են երևում բոլոր  
ձևերը մարդու,  
շարժումները փակ:  
Նրանք, որ սիրո տագնապ են ապրում,  
նրանց մոտ երբեք սիրո շունչ չկա:  
Շարժվիր, կա՞ոք իմ,  
կրափեմ բոլոր դիմակները ես,  
քանզի ես մերկ եմ,  
ինչպես կեղծիքը,  
և ես ուրախ եմ իմ խսկ մերկությամբ:  
Սլացիր, կա՞ոք իմ,  
թող քո թնդյունը խլացնի իր մեջ  
ինձ համար պահված ճշմարտությունը,  
գաղտնիքը համայն,  
որ կոչվում է սեր  
համամարդկային:  
Ինձ հասկանում են,  
խորհում իմ մասին:  
...Իսկ քե՞զ, սիրելին:

### ՆԱՊՈԼԵՈՆԻՆ

Ո՞ւր է Աքիլլան, ո՞ւր է Աքիլլան,  
դարերի խորքում քնել է նա,  
սիրտը ահով լի, սիրտը մահով լի  
հավերժ քնել է Աքիլլան էն:

Խոռվել է նա, հոգմել, քնել է,  
դավերը ցանց են հյուսել հիմա,  
դավերին ընդդեմ սիրտը լոել է,  
շուրբը հողով լի, ու սիրտը՝ ահ:

Ու խուլ ականջի աղմուկի մեջ  
դարերն են քշում վայրի ու չար,  
սիրտը լոել է, աչքերը՝ քար,  
հավերժ լոել է Աքիլլան էն:

Աքիլլան, նա էլ անցավ փառքով,  
ուկու ու հասկի հյուսվածքի մեջ,  
աչքերը քարձր էին, լեռները համր էին,  
լեռները լուս էին վշտերի մեջ:

Ու սուրը սուր էր,  
ու դարը լուս էր,  
և իրավունք էր, և դավ էր, և քեն,  
Աքիլլան հուր էր, մահահոտ բույր էր,  
իր դարի սուրն էր, հզոր Աքիլլան:

Ո՞ւր է Աքիլլան, ո՞ւր է Աքիլլան,  
դարերի խորքում քնել է նա,  
սիրտը ահով լի, սիրտը մահով լի՝  
հավերժ քնել է Աքիլլան էն:

### ՍԻԾԵԼ ՍՊՆՏԵՆ

Միշել Սոնտեն, դու մահվան հետ  
զրուցել ես ամեն օր,  
ինչպես ամեն մահկանացու,  
որ տանջվում է դարերով...

Ահն է եղել քեզ առաջնորդ,  
երբ խորհել ես մահի շուրջ,  
Աստծու գործին չի խառնվել  
այս աշխարհում ոչ մի շունչ...

Ինչի մասին մարդ դատում է,  
այն է առանցքը ցավի,  
հաճույքի մեջ ապրող այրը  
մահից չի էլ բարբառի...

Մեծ է լոկ նա, որ կյանքը իր  
ոչ մեկի հետ չի կապում,  
իր գործի մեջ հմուտ գիտակ,  
ապրում է ու մահանում...

Միշել Սոնտեն, փիլիսոփա,  
մահը խաղն է Աստծու,  
հիշիր պտուղներն այն,  
որ ուսում էինք ես ու դու...

Այն, ինչ տրվում է մեզ վերից,  
մեզ հետ չունի ոչ մի կապ,  
Միշել Սոնտեն, փիլիսոփա՝,  
Աստծու հետ եղիր հաշտ...

ԸՆԾԱՅԱԳԻՐ



Պերճ Ստեփանյանին՝  
40-ամյա էն սարի վրա

Այս լայն աշխարհի, այս նեղ աշխարհի  
չափերից ծնված կարոտը իմն է,  
քարե սարերը, ծաղկանց խաղերը,  
աչքի դավերը, բոլորը իմն են:

Զրվեժների հետ թափվող մազերը,  
աչքի նազերը, բառերը չքմեղ  
և թիկնեթեկին սահող ամպերը,  
փոքրիկ այս սրբից ծնված խաղերը,  
համրույրից ամեն ելման բառերը,  
երգու տաղերը, բոլորը իմն են:

Սի հարցնող լինի, ախր ո՞վ ես դու,  
ի՞նչ ես աշխարհի շինության առաջ,  
տո հերն անիծած շեն-շինությունը,  
ավերակներն այս բոլորն իմն են:

1977 թ.



## -Ա-

Դու պիտի մեռնես, որ ելնեն նրանք,  
և քո մահն է հրաշք խրախճանք,  
և քո աճյունի՝ բազինի առաջ  
պիտի բարձրանա մանկան անմեղ կան:

Մահ չէ մահը քո, և դու նեռն ես այն,  
որ չի ընդունել քծնանքը համայն,  
սակայն քայլել ես ցավի հետ դաժան,  
ցավն այդ եղել է հոգուցդ անբաժան:

Եվ քե եղել է մի բան այս կյանքում,  
եղել է ու կա քո հոգում թաքուն,  
որ չի արձակել ոչ մորմոք, ոչ ճիչ:

Որ քոնն է եղել, ուրիշից՝ ոչինչ,  
բարձրացրել է քեզ ցեխից այս ճահճոտ,  
սեր, դու ես եղել հավերժող կարոտ...

## -Բ-

Հոգմած է խիղճը, ու մթի մեջ  
երգն է լսվում Տիգրան Մեծի.  
- Աստված, դաժան դու տիրակալ,  
չխղճացիր միայն դու ինձ:

Հարյուր սրով դու փորեցիր  
գերեզմանը ճակատագրիս,  
ծառան, նայի՞ր, կեղծ երկյուղով  
ջուր է լցնում ծեր ձեռքերիս:

Բոլորն, ահա, անմեղ զոհեր.  
(ճրագներ են լուռ առկայժում  
անմահության տեսիլքի մեջ)...

Ինչո՞ւ այդպես նախընտրեցիր,  
որ տառապած ես միշտ ապրեան  
մեռածների, ողջերի մեջ:

-Գ-

Մարմին տվեց Աստված մարդուն,  
որ մարմնանա մարդու հոգին,  
որ մարմինը աստվածատուր  
պահի ոգին տառապածին:

Սակայն ցավը կրեց հոգին,  
ճշմարիտ և անբասիր,  
խիղճը, քենը, սերը տարավ  
և զրկանքը խեղճ մարմնի:

Խղճաց Աստված քոյլ մարմնին,  
մարդը խուժեց երկիրը նոր  
և տեղ խնդրեց լուրք երկնքից:

- Աստված,- դիմեց մարդու հոգին,-  
ծանր է ապրել պատվերով քո:  
Աստված պատժեց ապերախստին:

-Դ-

Փոսն է բացել երախն իր հին,  
բոլորը կեղծ, բոլորը սուտ,  
այստեղ տեղ կա մեզ բոլորին,  
թե որ ծածկեն, կլինի մուր:

Իսկ լույսի մեջ՝ անցած օրեր,  
առավոտներ շառագունող,  
աղոքքներ հին արևի դեմ  
և մուրի հետ մարող խոսքեր:

Սորս տեսա փոսի մեջ ցուրտ,  
ուր հանգչում է տարիներ լուտ,  
ե՞ թը եմ քողել նրան այնտեղ:

Ժամանակը ծույլ ու անդեմ  
փոսն է փորում անմահության...  
Հայր ու որդի են պետություն:

-Ե-

Հայրն է թողնում որդուն կտակ,  
և կտակն է երկիրը հին,  
այնտեղ հողե մեծ բարձի տակ  
հայրն է ննջում՝ կրծքին վերքն իր...

Եվ շղթայով աներևույթ  
ապրողի հետ է վերքն այն ծեր,  
այսպես ապրել են հազար տարի  
և դեռ կապրեն նույնքան դարեր:

Մի քիչ կարոտ ծառ ու ծառկի,  
մի պոտ կարոտ և հեգ մի սար  
թշվառության երկրում անծայր:

Եվ լուռ մի սեր, և մի սուրբ սեր  
պապ ու քոռի ոսկե հովտում,  
ուր հին վիշտն է իր կարկատում:

-Զ-

Հոշոտողների անարգ ճիրանում  
եղնիկներն ու սլյուտները խեղճ,  
վանդակում պահված առյուծն ամեհի  
և ոչխարներն են խսկույն խեղճանում:

Եվ իբրև ուղերձ հղում եմ, ահա.

- Ոգին է դառնում պոետին մարմին,  
մեկնարանը առյուծ արքայի  
թռող նույն վանդակից գրույցն իր վարի:

Արգելել խոսքը՝ թվում է միշտ ինձ  
կեղծ հաստատումը՝ «սոսկ իմ կարծիքով»,  
և արհամարհանքը՝ «այսպես թե այնպես»...

Եվ եթե ճիշտ է ուղերձն այս նոր,  
առյուծը թռող որ իր որսն անի,  
սմբակավորը թռող սնվի կաթով:

-Է-

Ել չեմ սիրոս պոետներին,  
ճշմարտության սուրբ խոսքը վեհ,  
դարեր, ահա, մանկամտի ձեռքին գերի,  
տառապել է ժողովուրդը ճշմարտից խև...

Բոլորի պես հանգիստ ապրել ու տառապել,  
տառապանքով դառնալ իլու ու հնազանդ,  
ո՞վ է տվել քեզ իրավունք ինձնից զատել,  
բառեր շաղել ու բարբառել խենք ու ազատ:

Ճշմարտության ամեն մի բառ դարերի մեջ  
երկար մի օդ դարձավ բռնի մարդկանց ձեռքին,  
և օրեօր խեղդվում ենք շղթայի մեջ:

Աստված, կտրիր մարդկանց ձեռքից պոետներին,  
ծաղրածուներ ու շղթաներ բափիր գետնին,  
պոետներն էլ մարդ են՝ հոգնած ճշմարիտից:

-Ը-

Ծաղկում է կյանքը մահվան եզերքին,  
և մահը կյանքից սնվում, ուռճանում,  
ու մենք սնում ենք քերահասին  
և հենց դրանով քերում ենք մեզ վերջ...

Եվ անտարբերությամբ, ներող ժայռով  
ծաղկում է, փարամանում խոտը չորության,  
զայլուկի նման սաղարթին ձգվող,  
սնվելով անվերջ մեր համբերությամբ:

Իսկ դու ծաղիկն ես խփել քո կրծքին,  
որ երկնքից է սնունդ ստանում  
և քո աշքերից՝ ցավերի շիքից:

Իսկ դու արևն ես կրծքիդ տակ պահում,  
որ ամենքին է ժպտում հավասար,  
ապրելու համար դեռ քիչ է Աստված:

-Ժ-

Սակայն զալիս է մահը հեզ,  
պճնազարդված օրիորդն այդ չար,  
որ ողջ կյանքով է զարդարում  
աճյունը իր ցավից սառած:

Շքեղ հանդիս է մահը հեզ,  
սպասումի անվերջ խոսքեր,  
եսասեր այդ ամբարիշտը,  
որ չի սիրում մեզնից խոսել:

Իսկ նաև թույլ, տկարամիտ,  
հաճույքին է այդ տուրք տալիս,  
և լալիս է սև դագաղին:

Շնորհակալ եմ քեզ, Աստված,  
որ արցունքներդ ինձ տված  
շոայլել ես ապրողներին:

-Ժ-

Շնորհակալ եմ քեզ, Աստված,  
և քեզ, մայր բնություն,  
ծնունդի մեջ հերքն ինձ տալու  
և ծնունդով հայ լինելու:

Հեշտ է լինել, լինել զավակ մեծ տերության,  
կովել հանուն անմահության  
և կրկնակի հեշտ է անեղծ  
կոհիվ մոկել չարի դեմ կեղծ:

Ես ուրախ եմ իմ ծնունդով,  
իմ ազգությամբ փոքրիկ, բայց մեծ,  
հավատարիմ իր բնությամբ:

Դու նման ես այն օրենքին Քրիստոսի,  
որ իր վերջին ունեցվածքն է տալիս մեկին,  
և դեռ հոգի ունի տալու անմահ երգին:

-Ի-

Ես չգիտեի, որ բախտ էի որոնում ձեր երազների մեջ՝  
կորցրած թագ, գայհսոն, պատռված հուշեր,  
շուշանների տեսքով, տեսքով հեռավորի  
հանդիպում էի երբեմն ինքս ինձ:

Ու ինչպես լրված պալատից՝ հեռանում էի ինձնից  
և ձեր դժուների առաջ, մարմնի ու աշքերի  
ես խոնարհում էի գլուխն իմ ճերմակող՝  
հավատալով ձեր նշխարներին, շղավելով մեկին:

Եվ կորացումից փրկվեցի ես,  
և հավատս լցվեց ուրիշ գինով,  
ես մարմինը թողեցի պարիսապների ետև:

Հարատևելու գաղտնիքը քեզ, Տե՛ր,  
ինձ հերիք է դիմակահանդեսն այս  
և հոգնությունից մաշված օրինությունը:


\*\*\*

Մաքրված ու մաքրագործված կրկին հայտնվեց քո դեմքը,  
որպես մոռացումից փրկված մի ափսե,  
և այս ցոլացումը հոգնած օրերի անունից  
խոստանում է հարատևել:

Չի մոռացվում երբեք, չի մոռացվում խստությունը  
և բարությունը՝ հրաշքը միակ,  
և բարության մեջ խառնած սիրո մասունք,  
կանգնած է, ահա, քո դեմքը հար ու հարազատ:

Խոստանում է ապրել այս աշխարհի փոշում,  
իբրև ոչ աքսորված անձ, իբրև մասունք,  
ավազներում թողած երգի դիցուհուն:

Բարությամբ լվանալ ամեն շարիք  
և բարիանալ սերմնացանի նման,  
և ապրել հողի վրա, ինչպես մեռնող արև:



\*\*\*

Ի՞նչ իմանամ՝ ինչ է ուզում սիրտս աննինջ,  
տարին տարվա գումարումով անհանգիստ  
սրտիս ձայնով զրուցել եմ Աստծու հետ,  
ինչ-որ քանից խոռվել է երկրի հետ...

\*\*\*

Խազ են քաշում թղթի վրա մարդիկ,  
չափ են դնում ելման սրտիս անհանգիստ,  
խազ ու չափեր, ոտնահետքերն անգամ  
թողել է նա երգերիս մեջ արնաքամ...

\*\*\*

Ո՞ւմ է տված, ո՞վ է տիրում մեծ ուժին,  
ո՞վ է հզոր, ո՞վ է տիրում ամենքին,  
չար օրերի, չար կատակի այս դարում,  
ո՞ւմ ես սիրել, ո՞վ է սիրվում ամենքից...

\*\*\*

Աստծու խիղճը թե արթուն է հոգուդ մեջ,  
բացառվում է անմիաբան ամեն վեճ,  
այո՛, կյանքի վտանգված է ամենոր,  
թե սուր ընտրես, թե՝ աղոքքը բուրվառող...

\*\*\*

Սինչև վերջ է պայքարը այս աշխարհի,  
կամ դու՝ նրան, և կամ նա քեզ կսպանի,  
հոգին է լոկ ազատ, անկախ ամենից,  
Աստված այսպիս կամեց կյանքը պահպանել...

\*\*\*

Ուրիշ հնար գտիր դու,  
ուրիշ, ուրիշ, ժողովուրդ,  
ցավիդ վախճանը անդուռ,  
բարությունդ անանուն...

\*\*\*

Աստված ինքն է դրել մեր մեջ  
սարքն այս խարազանող,  
թե չիներ սարքը դյուրին,  
կլիմեհնձ խարող...

\*\*\*

Եթե ունեն կյանքում նպատակ,  
նախ և առաջ հող լցրու դու ոտքիդ տակ,  
մի ներշնչվիր, թե կա կյանքում ինչ-ոք ոք,  
կրերի նա միայն թախիծ ու մորմոք:

\*\*\*

Ի՞նչ եղան,  
բոշուններն իմ ո՞ւր բռան,  
քանի՞-քանի՞ տարիներ  
բույն էին դրել իմ դռան:

\*\*\*

Հողն իմ երկիրն է անտարած,  
սերը՝ մահվան դափնեպսակ,  
տիեզերքը՝ բաժակ կյանքի,  
լուրջունը՝ հոգու երգ:

\*\*\*

- Ի՞նչ նմանություն երջանիկ մարդու
- և Աստծու միջն,- հարցնում էր մի կին:
- Այն, որ աշխարհում ես չեմ հանդիպել  
նրանցից ոչ մեկին:

\*\*\*

Աստված բարկացավ,  
երկիր վտարեց իր ստորադասին,  
իսկ նա երկում խիստ փառաբանեց  
իր վերսալասիմ:

\*\*\*

Իմաստունները քանի դար է արդ  
ընկել են ճամփա,  
բայց նրանց մտքի սկզբնատառերի  
հետքն անզամ չկա:

\*\*\*

Սեղը եմ, եթե վեճ եմ բացում ես քեզ հետ,  
հավատս, իրոք, պակասում է հետզհետե,  
քո անունից չեմ հոչակել ինձ գրիչ,  
կամ եղիր տեր, կամ տար այս պիոծ աշխարհից:

\*\*\*

Մարդ լինել քո պատկերով, մեծ բան է, Տե՛ր,  
ծով լուրջամբ համբերել՝ մեծ բան է, Տե՛ր,  
թե ինձանից պահանջում ես ավելին,  
տարբերությունը իմ ու քո մեջ, ո՞րն է, Տե՛ր...

\*\*\*

Թուրք թշնամին այրեց ծառն իմ կեցության,  
կտրեց, ջնջեց մեծություններն Էության,  
չնչինները տարածվում են փշի պես,  
վախենում եմ, Տե՛ր, դաշտերից գորշության...

\*\*\*


Չեմ վախենում իմ այս կյանքի ընթացքից,  
լարած ամեն, ամեն տեսակ թակարդից,  
ինչ-որ լինի, տե՛ր եմ, Աստված ամենայն,  
միայն բարին բող որ չիշնի գերեզման...

\*\*\*

Երկրի վրա մի կարգին ես շապեցի,  
երկնքի հետ հեռու ու մոտ ապրեցի,  
նժարի հետ եղաւ և հաշտ, և՛ զգոն,  
միշտ նրանով վատ ու լավս շափեցի...

\*\*\*

Չիշնես մարդու օրենքին,  
չինես նրան հավասար՝  
հնագանդին տանջելու,  
ապիկարին՝ բալասան...



\*\*\*

Սրտիս մեջ որքան երգ  
զուցե և չկանաչի,  
արարքի համար մարդը  
ցորենից թող ամաչի...

Թե կյանքը հացի կոխվ է,  
թող լույսը մնա մաքուր,  
աշխարհը՝ կրակի մեջ,  
հոգիս՝ պապակած ջուր...

\*\*\*

Երանի միայն նրան,  
այն մեկին հոգեխաղաղ,  
որ աչքը հեռուներին  
ապրում է հանգիստ, անվախ...

Երանի նրան միայն,  
որ չեղավ չար ու բարի,  
տապակվեց ինքնիրեն  
ու չեղավ չափ աշխարհին...

\*\*\*

Սիրում եմ քեզ, սիրում այնքան,  
որքան լույսը հավերժական:

\*\*\*

Սի հանճար կա,  
դար ու դարեր է ննջում,  
որի շուրջը հանճարներն են անքում:

\*\*\*

Ապրիր, բայց ոչ թե լույսի ստվերում,  
հենց այնտեղ է լոկ մահը դեգերում:

\*\*\*

Զև ու իմաստ անիմաստ են հավիտյան,  
թե չգիտես գաղտնիքները բնության:

\*\*\*

Հաճքերիր խոհեմ այնքան ժամանակ,  
մինչև գտնես ճշմարտությունը միակ:

\*\*\*

Գործդ արա և մի զիջիր ոչ մեկին,  
հավատն է լոկ սկիզբ տալիս ամենքին:

\*\*\*

Իմաստնության բանալին թե չգտար,  
խելագար ես, թեկուզ ապիես հարյուր դար:

\*\*\*

Սի աշխատի ապացուցել ինչ-որ բան,  
ապացույցը իր մեջ է միայն:

\*\*\*

Չարք որքան էլ երկարում,  
ինքն իրեն է միայն այրում:

\*\*\*

Իմաստնության ակունքը  
անիմաստնությունն է:

\*\*\*

Երջանկությունը լույսն է արևի,  
իրով թեկրեկուն,  
որ խինդով վայրի լուսավորում է  
միզամած հոգին:

\*\*\*

Կարող են այրել քաղաքներ, բերդեր,  
անգամ գումարն այս հին,  
բայց ոչ երեւէ այս զնդից ծնված  
հրեղեն ոգին:

\*\*\*


Լուսինը աղքատի ճրազն է պարզկա,  
տիսրությունը որք,  
եթե բռնկվի արևի լույսից,  
կլինի նա բորբ:

\*\*\*

Մոմը հալվում է մի պարզ լուությանք,  
բոցկլտում է պաղ,  
այդ նրա համար, որ երազներն իր  
ապրում են անթաղ:

\*\*\*

Քո ձեռքերով գունատ ու խեղճ,  
քո աչքերով ինքնամոռաց,  
դեռ աշխարհներ պիտի տիրես  
և երկինքներ խարված, խոցված:



କମ୍ପ୍ୟୁଟର

#...  
+ + +  
+ - -  
+ - -  
+ + +

-1-

Ծանր է վիճակը իմաստունների,  
մարգարենների վիճակն է անել,  
երբ որ շոյում են ականջն էշերի  
և սանրում մազերը հեզ ոչխարների...

-2-

Երեկ կարմիր էր, այսօր՝ եռագույն,  
զույների հարցում նա չի խեղճացել,  
մեկ մարմին ունի զույգ ժամանակում,  
հոգին քծնության հրում է թրծվել...

-3-

Դու չես կարող բարձրանալ,  
դու չես կարող ընկնել ցած,  
քեզ տրված է, որ ապրես  
հավատարմությունից կախված...

-4-

Մեկը բարձրանում է,  
ընկնում է մյուսը,  
իսկ դու դեռ կշռում ես  
արդարության լույսը...

-5-

Չհասկացար, բարեկա՞մ,  
չհասկացար վերջապես,  
կուշտ լինելու համար  
պետք է լինել իրատես...

-6-

Սատանան նստել Աստծու սեղանին,  
ընդունելություն է անում զանազան,  
իմաստունները՝ խոտը բերանին,  
հայցում են զործին լուծումներ արդար...

-7-

Ով հասցրեց քեզ գահին,  
ով բացեց քեզ ճանապարհ,  
ճակատագիրդ նա է,  
ով մեծամիտ ապիկար...

-8-

Գահընկեց է լինում նա,  
ով շաղփում է մլարով,  
ամրիսն ուժ չէ միայն,  
ամրոխը՝ մի մեռքի ծով...

-9-

Սիջոցը՝ գահ տանող,  
է նաև ճակատագիր,  
վախվորածին գահը  
պատժում է կրկնակի...

-10-

Խումբը խմբին միացավ,  
խումբը խմբից բաժանվեց,  
մոծակների պարսը սև  
քանի գնաց բարակեց...

-11-

Հին գինին անգամ  
դառել է անհամ,  
մզուտած կյանքի  
օրենքն է անմահ...

-12-

Զո զենքն ի՞նչ է՝  
մի թանաք, մի թուղթ,  
օրենքը ինքն է,  
իսկ դու՝ քայլող հոր:

-13-

Իմաստուներ քեզ նման եկել են ու գնացել,  
հավաքական ուժի դեմք քչերն են դիմացել,  
ամենկողմյա է մահը, աշխարհի չորս ծեզերից,  
իսկ դու բռնել ես, ահա, ստամոքսի փեշերից...

-14-

Գրում է զրքեր, վեպեր հաստափոր,  
սատանա է նա Աստծու պատկերով,  
քծնում է մեծին և փոքրին անգամ,  
թե ըմկար ցանցը, կինես արնաքամ...

-15-

Նրան թվում է, թե զիրն է Ռահվիրան,  
ճանապարհն անցողիկ է, ճանապարհը՝ ունայն,  
մի ծեռքով գրում է սրբագրոծված երգեր,  
մյուսով ջնջում, ինչ ուրիշն է երկնել...

-16-

Նա սիրում է լավը, նա սիրում է վատը,  
նա թույլերի հետ է, ուժեղների կողքին,  
գրելս ազնվանում է, խոսելիս՝ քծնում,  
ամենաժամանակակիցն է այս կենդանին...

-17-

Աստծու դեմ խաղ չկա,  
փոքրատառ մեծամիտ,  
կարծում ես քեզ արքա,  
երբ մարմինդ է հողոտ...

-18-

Լավն ու վատը մեկ է,  
ամպրոպի պես, անձրկի նման,  
հաստատում է, մխտում, մեկ ճերմակ է մեկ սև,  
դարձ է ծնել նրան, նա իր դարի հետ է...

-19-

Հանգստանում էր նա  
ծառախիտ անտառում,  
քծնողների շուքի տակ,  
անցյալի հետ արնախում...

-20-

Եռալեզու այս կինը  
հասել է պատվանդանին,  
ուզում է իր մարմինը  
պատվանդանին գասի...

- 21 -

Աստվա՛ծ, ո՞րն է դրախտ տանող քո ուղին,  
զորավիզ ես պալատների՞ն, թե՞ խուղին,  
թալանում, սպանում են քո անունվ,  
մոմեր վառում խեղճերի միս ու արյունով...

-22-

Ապրում էր նա Ղազարոսի նման խեղճ,  
չուներ կրիվ ու չէր բացում իրի վեճ,  
արհամարհից, առանց պատաճք քաղեցին,  
Աստվա՛ծ, ո՞ր է հիշատակը նրա մեծ...

-36-

Հրապարակները դատարկվեցին,  
ժողովեցին ծիծաղ ու ծափ,  
խոսք-զրույցի մի մեծ տակառ  
լողում է դեպի ափը փրկության...

-37-

Ազատություն հրապարակավ,  
դու ամենից տեսանելի,  
անուշ, ինչպես մայրական կաք,  
քնքուշ, որպես երազ անմիտ...

-38-

Խոսք ու զրույցն անցավ,  
ոգեկոչումը մարեց,  
մի մուկ՝ ղժոխքից փախած,  
դրախտի կատվին փարվեց...

-39-

Սրի տակ այրվեցին,  
վերն ու վարը բախվեցին,  
հույսը տվին ամբոխին,  
իրենք շահին փարվեցին...

-40-

Ո՞վ ես դու, խեղճ մտածող,  
դու՝ ցնդած բանաստեղծ,  
նրանք՝ մտքի արյան ծով,  
դու՝ տեսածի թուրակ խեղճ...

-41-

Ըեփորվում է ականջիս  
կարոտարադ մեղեղին,  
հարության թաղումն էր դա,  
առանց բուրվառ ու խաչի...

-42-

Դատարկ էր թեմ ու դահլիճ,  
չկար դրամա կամ պիես,  
հրապարակը վարակիչ  
և թատրոն էր, և կրկես...

-43-

Ծտերը հաշվում են աշնանը,  
ասում է առածը հայտնի,  
նայեցեք հաշող այս շանը,  
որ աշուն է փնտրում ձմռանը...

-44-

Ծաղրածու եմ, ծաղրածո՞ւ,  
ունեմ զրիչ ու քանաք,  
թեաւտ մենք՝ փոքր ածու,  
քայց ունենք առաջնորդ-փրկիչ...

-45-

Գերեզմանում կլուս,  
ո՞վ աներես բանաստեղծ,  
քանզի հողդ էր սերդ  
և այն հողիցդ էլ կառնես...

-46-

Երկիրը նման է ձվի,  
ասել է Շիրակացին մեծ,  
թե շերտերը լավ չգիտես,  
ինչո՞ւ ես զազագել, տո խենճ...

-47-

Ո՞վ Զարենց, Տերյան,  
երկիր իմ նախրյան,  
ձեզանից մնացել է  
նախրյան մի սրճարան...

-48-

Լավը հաճելի է,  
լավը՝ պատվական,  
լավի դեմ սրվում են  
ուժերը թուլակամ...

-49-

Այս աշխարհի ցավերի մեջ ազատությունն ընտրեցիր,  
մորթի, ջարդի, թալանի դեմ՝ բորախտավոր մոմը հին,  
դարերից դար նսեմացար ու փոքրացար, մաշվեցիր,  
քո ցանածը դու քարեցիր ու ապշահար մնացիր...

-50-

Հողդ անզեն տվեցիր,  
քեզ պահեցիր փուշ, տատասկ,  
քարից հաց ես քամում դու,  
մնում կորցրածիդ պապակ...

-51-

Բարձ են դրել գիսիդ տակ,  
ննջեցյալի փափուկ բարձ,  
օրորել են կրոնով,  
որ երբեք դու չարթնանաս...

-52-

Թե լինեիր մարտական,  
հրաշքի տեր, ոչ ստրուկ,  
կխոնարհվեր քո առաջ  
և երկնաքեր, և թե բուրգ...

-53-

Քեզանից տարել են միայն,  
բարակել է սիրտդ նուրբ,  
այնքան է այն բարակել,  
որ դարձել է խունկի բույր...

-54-

Գեղեցիկը Աստծու պարզեւ է անբիծ,  
գեղեցիկով աստվածներն են լոկ արքել,  
խելքը դրել զազանների ոսքի տակ,  
զարմանում ես, որ չեն դառնում քեզ ընկեր...

-55-

Ինքն եղիր քեզ վահան,  
սուրդ ինքդ դարբնիր,  
Աստված պահում է նրան,  
ով պահպանում է իրեն...

-56-

Հետաղարձ է ամեն բան,  
շարին հաղորում են շարով,  
ով մերկանում է անքեն,  
նրան տիրում են սիրով...

-57-

Խարիր, ումից շահ ունես դու, ապիկա՛ր,  
շահի վրա շահ ունես դու, ապիկա՛ր,  
բայց դեռ միայն ինքը քեզ ես բալանում,  
ինքնասպան ես, և ոչ քե շահ, ապիկա՛ր:

-58-

Ես չեմ կարող հավատարիմ շինել,  
լավդ բողած, վատիդ կողքին շինել,  
նման եմ ես ընկերոջն այն միակ,  
որ քեֆից հեռու, տխրությանն է լոկ տեր...

-59-

Հայրս՝ զինվոր, մայրս՝ հլու միշտ նրան,  
դաշտում ծնված, դաշտի զինվոր հայրս խեղճ,  
վերք ու փառքով, ցավով անցավ աշխարհից՝  
դաշտում բողած փուշ ու տատասկ սնամեջ...

-60-

Սուրճի փող չունեցող տղերքը երեկվա  
այսօր ամքարտավան են, բալանչի ու գող,  
հայրենիք բառը շրթներին դողացնելով՝  
դարձրել են նրան կրու կով...

-61-

Թշնամին ընդմիշտ է, որտեղ էլ ապրի,  
մարմնի մեջ, տիրով թե անտեր,  
գտնելու է քեզ անկողմնացույց ու անդեկ,  
թշնամությունը իր ձեռքերն ու ոտքերն ունի...

-62-

Սիրուց եք դուք միշտ խոսում,  
իսկ ես՝ դավից անհամար,  
ձեզ սիրո շողքն է մլարել,  
ինձ՝ ցավերը մեր տան...

-63-

Ատելով ել կսիրեք ինձ,  
ահա սերն ազնվածին,  
սերը ծաղիկ է տալիս  
անգամ հոգում թշնամու...

-64-

Ավազակների բանակը զինված  
քշում է խումբը հավատացյալների,  
առանց անցյալի բանակն այս ծպտված  
շինել է փայտյա մի եկեղեցի:

-65-

Փոփոխամիտ է, ոյուրաքեք,  
սովորական է, անհետաքրքիր,  
պարզամիտ, անդեմ, անընդունելի,  
պարզապես տեր է միլիոնների...

-66-

Դասեր էր տալիս նա պատմությունից,  
իսկ հիմա արդեն՝ ժամանակներից,  
ոյուրությամբ, դանդաղ նա բարձրացավ վեր,  
կյանքը ճոճվում է նրա պարանից...

-67-

Ոչ մի գույն չփրեցիր,  
բացի կապույտից անծիր,  
և մի գույնի պատճառով  
որք ու անտեր մնացիր...

-68-

Չայլերի խումբն երեկվա  
սովածներին միացավ,  
և խնջույքում այսօրվա  
հոգիդ արեց ցիր ու ցան...

-69-

Երկու աշխարհից մեկը,  
կամ ուղիղը, կամ թերը,  
ով երկնքից է նայում,  
ճրամ՝ տականքն ու թեփը...

-70-

Արդարությունը  
ծանր է, ինչպես քարը,  
զալիս է հանկարծ,  
ինչպես երկնաքար...

-71-

Ամպրոպի պես է, անձրևի նման,  
լավն ու վատը մեկ է,  
հաստատում է, ժխտում, մեկ ճերմակ է, մեկ սև,  
դարն է ծնել նրան, նա իր դարի հետ է...

-72-

Երկրի<sup>՞</sup> նման է նա,  
թե<sup>՞</sup> երկիրն է իր պես,  
շնորհյամբ իր, խոսքով  
փոփոխվում է անտես...

-73-


Կռապաշտ է, հարմարվող,  
ունի մարմին ծուռ, խեղվող,  
մերք արձանն է նա լիզում,  
մերք էլ հիմքերը քանրում...

-74-

Զեր աչքերը, օ՛ տիկին,  
թե արձակեին լույս,  
չին կորչի մարդիկ  
խավարում անհույս:

Ու չեր մնա դու ստվերում  
մենակ ու տրսում,  
թե հեկեկար քեզ համար  
գեր մեկը կյանքում:

ل



م

ت ت ت ت ت

\*\*\*

Արվեստների թանգարանում  
գլուխներ է նա վաճառում,  
էժան, նոյնիսկ ձրի...  
Վեպեր գրող գլուխներ են,  
երգեր գրող,  
հայրենական, էժան...

Թափիքված են, առատությո՞ւն,  
որը կուզես, ջոկիր,  
դրսից՝ ամուր, ներսից՝ ամուր,  
բերանին կողպեք... գլուխ...

Սիրալիր էր տերը եղել,  
չորացրել էր, դրել բարձին,  
խնամել էր, մշակել էր,  
չոր էր, մաքուր, անքիծ...

Շուն-շանորդի գլուխներ էին,  
չհասկացան նրան,  
հավաքվեցին, բողոքեցին  
և... գլուխը կերան...

Արվեստների թանգարանում  
անգլուխ են գլուխները,  
էժան, նոյնիսկ անտեր,  
ոչ խնամող, ոչ չորացնող,  
լոկ մի գլխով ավել...

Որքան կուզես լավն արա,  
օգնիր, հոգնիր, սիրիր,  
անտերության զաղափարը,  
դավաճանի սուր տապարը  
խնամողին տարան...

Ի՞նչ գլուխներ իզուր կորան,  
մաքուր, ամուր, անքիծ,  
ոչ քեզ, ոչ ինձ գաղափարը,  
տիրոջ հանդեպ չեղած վախը  
գլուխները, բերանը բաց գլուխները  
տարան...

\*\*\*

Գլխավորը գլուխը չէ,  
այլ մտքերը ծակ,  
ո՞ւմ են արյոց պատժել կյանքում,  
թե գլուխն է եղել դատարկ...

Բարեւում էր նա հարգալից՝  
գլուխը վեր ու վար,  
կախել էր պարանոցից  
երկարեն կշռաքար...

Որքան վերև էր բարձրանում,  
ծանրանում էր քարը,  
գլուխը նա խոնարհում էր  
մինչև ուսրի ծայրը...

Երբ տեղ չկար բարձրանալու,  
դրին նրան պատյան,  
և գրանցվեց այն մատյանում,  
որտեղ կյանքն էր հնազանդ...

\*\*\*

Իր դերի համար չի ծառայում նա,  
ոչ թե դերն է վատ,  
այլ ինքն է ազահ...  
Գլուխը շեղվել է ճշմարիտ ուղուց,  
ոչ թե խորհում է,  
այլ ուտում միայն...

Ծամածուում է շուրթերը յուղու,  
աչքերը քծնող,  
հոնքերը խոնարի,  
ատամներն ազահ ու երկարակուու,  
մսխում են միայն  
և ժպտում ամուր...

Շուրթերը՝ գերի յուղ-համեմունքին,  
քիթն է կորցրել հոտառությունը,  
ավաղ և չարժե խոսել այդ մասին,  
միտք ասած բառը դարձել է էժան,  
ով մտածում է, կեղծ է և անմիտ,  
ով ծիծաղում է, հզոր է, երկմիտ...

Ծույլին կոչում է համարեղ  
և բամբասողին արձակագիր է  
հորջորջում արդեն...

Իր դերի համար չի ծառայում նա.  
ոչ թե դերն է վատ,  
այլ ինքն է ազահ...

\*\*\*

Ճշմարտություն ասած բառը  
ճշմարիտ է այնքան,  
երբ գլուխ դեռ իր տեղն է,  
այնպես, ինչպես որ կա...

Իրեն հարգող ամեն մի մարդ,  
գլուխն իր հարգող,  
սրտում պիտի որ ունենա  
սրտից ելնող մի դող...

Որքան կուզես գլխից խոսիր,  
խոսիր սրտի դողից,  
գլուխդ թե իր տեղում է,  
ճշմարտից մի խոսիր...

\*\*\*

Ասել էին՝ գնա-արի,  
և ճոճվում էր  
գնալ-զալով՝  
ժամացույցի պլաքի պես,  
միայն ուներ մի զույգ աչքեր...

Թվեր էին վրան շարված,  
միայն ներսից,  
որ չերևա.  
գաղտնազիրը թաքցված էր,  
տղամարդ է, թող երևա...

Ասել էին՝ գնա-արի,  
և ճոճվում էր  
գնալ-զալով՝  
ժամացույցի պլաքի պես,  
միայն ուներ մի զույգ աչքեր...

\*\*\*

Ի՞նչ գլուխ էր,  
արդեն՝ մարմին..  
Ազատվել էր  
ցավ ու դավից  
և դարձել էր  
մարմին...  
Եվ ճոճվում էր  
հով ու քանոց,  
անձրևն՝ արցունք,  
ձյունը՝ ծածկոց...  
Ի՞նչ գլուխ էր,  
արդեն՝ մարմին...

\*\*\*

Թե գլուխ իր տեղում չէ,  
սիրտդ կմտնեն,  
կանաց-կամաց սրտից կելնեն  
գլուխդ դատարկ...

Մուկն աղանձ է փնտրում միայն  
անտեր պահեստում,  
անհասցե և ոչ մի նամակ  
տիրոջը չի գտնում...

Չի լցվելու և ոչ մի տուն  
անձարդարնակ,  
անապատն առանց ջրի  
մենակ է, դատարկ...

Տունը տուն չէ առանց մեծի,  
մեծը գլուխն է,  
անգիտության թագը ոսկի  
անգույն պղինձ է...

Թե գլուխ իր տեղում չէ,  
սիրտդ կմտնեն,  
կանաց-կամաց սրտից կելնեն  
գլուխդ դատարկ...

\*\*\*

Մեծ զործիչ է,  
զիսավոր մարդ,  
դեռ այսքանը ոչինչ,  
հանդուրժում է ամեն մի բառ,  
բայց իրավունք չունի...

Թե ունենար նա իրավունք,  
գլուխ առ, փախիր,  
զիսավորը գլուխը չէ,  
զաղափարը մաքուր...

**ԳԼՈՒԽ ՈՒՆԵՍ, ԳՐՊԱՍԴ ԴԻՌ**

Ծիծաղում եմ, հա ծիծաղում  
անօգնական ու խեղճ,  
այ թե հրաշք գլուխ ուներ,  
բառամթերք իր մեջ...

Ուստոստում էր ուսի վրա,  
ելնում-իջնում տեղում,  
իսկ երբեմն լուռ կորչում էր  
ոգու քարանձավում...

Չատ էր ճարպիկ, բազմաբնույթ,  
բազմաժանր նոյնքան,  
բառը ուկու արժեք ուներ,  
ոսկին բառ էր նոյնքան...

Երբ որ մի օր դրին դագաղ  
(խոսքը մեր մեջ մնա),  
թափալվում էր ու պեճակեծում  
մահիճում իր անմահ...

Աստված, հեռու պահի մահից,  
ի՞նչ հասարակ մի բան,  
ծիծաղում էի, չէի տեսել  
սրա ննան մի մահ...

Հաշտվելու, օ՛, ինչ հանճար,  
աղոթում էր լոին,  
բայց չգիտեմ այս օրերի,  
թե այն կյանքի համար...

**ԲԱՆՔԱՎՈՐԻ ԳԼՈՒԽ**

Հանքափորի գլուխ չէ սա,  
բանաստեղծ եմ վաղուց,  
օրորոցից սովորել եմ  
գրել ինքնամոռաց...

Նյութն ինձ համար արժեք չունի,  
նյութ է ամեն տեսած,  
ոսկի, արծաթ, վնաս չունի,  
թեկուզ երկաթ հալված...

Գրում եմ ես ինչ պատահի,  
ընտիր, չափված ձևով,  
կարող են իմ գլուխը կախել  
ոսկյա շրջանակով...

Աստվածամոր շապիկ ունի  
ամեն տողս հազին,  
կտրել եմ այն դասական  
շափով օրենքների...

Ինձ չի կարող ոչ մի գրող  
և խմբագիր խարել,  
և առավել՝ երգերը իմ  
չեն կարող չտպել...

Անզիր գիտեմ ես բոլորին,  
ով ինչով է շնչում,  
և առավել՝ ինչ օրենքով,  
որ ճամփով է սնվում...

Չար աշխարհ է և պահն է չար,  
ոչ ոք ինձ չի տեսնում,  
բոլորին ես անզիր գիտեմ,  
ինձ ոչ ոք չի կարում...

\*\*\*

Ոչ խոսում էր և ոչ քոռում,  
ոչ գոռում էր, ոչ խանգարում,  
դրա համար վերցրին մի օր  
պատվանդանի վրա դրին...

Երբ նայում էր վերևից,  
խղճալի էր տեսքը նրա,  
գլուխը թեք երկար նայեց,  
այնքան նայեց՝ աստվածացավ...

Էլ ավելի վերև դրին,  
էլ ավելի վերից նայեց,  
մարդն աչքին շատ մանրացավ,  
և աչքերից արցունք տեղաց...

Հավատացին, և հավատաց,  
և քարձրացրին ավելի վեր,  
այնքան վերև, այնքան վերև,  
որ վախեցավ՝ ընկնի հանկարծ...

Հիմա ո՞ւր է, մարդ չզիտի,  
շրջում է նա հինա վերում,  
ամեն շշուկ, ամեն ոստյուն,  
քնած, արթուն ահ է թերում...

Մարդու ահով վեր է թռչում,  
վեր է թռչում անգամ քնից,  
չինի թե քնած մնա,  
փորձանք թերի վերևներից...

Ոչ խոսում էր և ոչ քոռում,  
ոչ գոռում էր, ոչ խանգարում,  
դրա համար վերցրին մի օր  
պատվանդանի վրա դրին...


\*\*\*

Գլուխգործոց չէր,  
այլ գործած գլուխ,  
թելը քաշեցին և՝ վերջ,  
հիմա կանգնել են դատարանում  
բացել մահի ու կյանքի վեճ...

Վրան բարդում են չեղած դեպքեր,  
չեղած մարդիկ են վկա դառնում,  
չեղած գործեր են բացել, ահա,  
չեղած վեճեր են երկինք հանում...

Չեղած դեպքեր են արձանագրում,  
չեղած գրով են գրում հիմա,  
արյան գումար են վերադարձնում,  
արյան կոիվ է ու արյան ահ...

Գլուխգործոց չէր,  
այլ գործած գլուխ,  
թելը քաշեցին և վերջ,  
հիմա կանգնել են դատարանում  
բացել մահի ու կյանքի վեճ...



### ԴԻՑԱՐԱՆ

Անահիտի բազինի մոտ  
և Աստղիկի տաճ մութ խորշում,  
վիշապաքաղ Վահագնի հետ  
և Տիր աստծու դպրության մեջ,  
հին և հզոր Բագարանի  
ավերակված լուռ ավանում  
և թալանված բազինների  
մորթված, զարկված դիցարանում  
շրջում եմ ես որք ու մենակ,  
գահակործան ու վիրավոր,  
ինչպէս Մասիսը գիշերվա,  
երք անձրև է, շանք ու որոտ...

Քայց պայծառ է հայացքը մեր,  
ճամփամ դժվար, միտքը՝ հստակ,  
ինչպէս Մասիսն առավոտյան,  
երք բացվում է լույսը հուսուն:  
Գլխին՝ ձյունը արեգական,  
և գծերը՝ սուրբ, անթերի,  
այդպէս միտքը պայծառ է մեր,  
ինչպէս պայծառ է մեր ճամփան...

Ու նստած եմ լուռ ու մենակ,  
ինչպէս զինվորը վիրավոր,  
Անահիտի բազինի մոտ,  
ցրած և՛ միֆ, և՛ կանչ, և՛ խոսք,  
շրբունքներիս չորացել են  
բառերը հին և հերանոս,  
այստեղ չկա և ոչ մի դից,  
այստեղ ագռավն է սևավոր...

Վյատեղ կրինչն է սև հոգու՝  
լուսավորված հիշողությամբ,  
այստեղ դժվար է հասնել  
մուրացիկի զգեստներով...

Լոռությունը ծվարել է  
հպարտության զգեստի տակ,  
վերը բաց է, բաց է սերը  
հերանոսի հպարտությամբ...

Եվ ինչո՞ւ եմ եկել այստեղ  
գիշերային այս ուշ ժամին,  
ավերակ է այստեղ միայն,  
մահ է այստեղ, հողմ է ու ցավ...

Քամի ու ցուրտ, ու զառացանք,  
սիրեցյալի մի գերեզման՝  
անհիշատակ, անմամռակալ,  
այստեղ հիմա ոչինչ չկա...

Բայց անհուն է հայացքը մեր,  
ինչպես զագարը ծեր լեռան,  
ու փոփում է իմ դեմ հպարտ  
աստվածների մի կացարան...

Շեկ մազերով, թել-թել ոսկի,  
մինչն զոտին արծարափայլ,  
և՝ աչքերում՝ կրակ-ոսկի,  
և՝ աչքերում՝ կապույտ կրակ,  
և՝ սիգաճեմ ու հողմաքայլ,  
ինչպես հունձքը առատության,  
զլուխը վեր, միշտ դեպի վեր  
Անահիտն է անցնում, ահա...

Ժպտում է նա խստաբարո,  
դու չես կարող նրան դիպչել,  
նայում է նա, ինչպես քոյրը,  
և ինչպես մայր է հմայում,  
մեկ՝ կնոջ պես բազմանշան,  
մեկ՝ կնոջ պես հոգեպարար,  
ժպտում է նա, նայում է քեզ,  
նա տեսնում է, դու՝ հմայվում...

Ու թեքն է քայլքը նրա,  
անցնում է նա հանդիսավոր,  
ստվերի տակ՝ ծաղիկ որպես,  
թռչում է Աստղիկը մեղավոր...  
Թոփչը չէ դա, ոչ սավառնում,  
մեղմություն է, նեկտար մեղլի,  
աստվածների գեղմից ընկած  
ծարավ սիրո, որ չի մեղմվի,  
կապույտ բորբոք, մորմոք սիրո,  
մեղավորիկ ու մեղրահոս...

Իսկ երկնքում արեգակն է,  
չնչին կապույտ, ողջ ծիրանի,  
ծավալվել է երկնքում ողջ  
արեգակը՝ սպեղանի...  
Խուրձ-խուրձ շողեր կրակափունջ,  
կրակածին խուրձ-խուրձ ծաղիկ  
շաղ է տախս ու ծիծաղում  
երկրի վրա մահու այս պիղծ...

Քրքում է ու շաղ տախս  
բոց-բոց փնջեր կրակակալ,  
հողմի նման արագաշարժ  
Վահագն աստվածը տիրակալ...  
Հայտնվում է ու հեռանում,  
մեղմանում է ծովից ի ծով,  
ալիքների գիրկը բանում,  
հրճվում են ջրերը զով...

Վանքի նման խոժոռադեմ,  
կամարների նման խոժոռ  
Տիրն է նայում զինվորների  
տղայական վազքին հզոր:  
Նայում է լուս ու մքամած,  
ինչպես աստված բազմախորհուրդ,  
որից պիտի ծնվեին դեռ  
գրիշները մեր ծաղկածոր,  
որից պիտի հառնեին դեռ  
սերունդների շղբաներ նոր,  
նրանք, որոնք պիտի ծնեին  
Խորենացի, ապա՝ Նարեկ,  
և ցավագար միջնադարում,  
և դարերում այն հեռավոր  
պիտի ծնեին, ծնեին նոր՝  
աշխարհի դեմ միշտ մեղավոր,  
այրեր հայոց...

Ու նստել է խոժոռադեմ  
Տիր աստվածը կրակի մոտ,  
ու գրում է՝ որպես պատգամ,  
երկարագիր գիրը խրոխտ,  
գրում է նա ու նայում է ժամանակին,  
աստվածային օրերին այն,  
երբ գրում էին աստվածները՝  
ոչ շարական և ոչ աղոթք,  
այլ ծնվում էին գրերը մեր,  
ու դեռ հետո պիտի գար նա,  
որ գրերը վերծանվեին:

Գրում էր նա, շուրջը նայում,  
նայում անհոգ ապրողներին,  
որոնք, մեղա՝, մեղա՝ Աստծուն,  
որոնք նույնպես աստվածներ էին...

Նայում էր նա գոռ Վահագնին,  
որ խուրձեր էր թափում երկնից,  
նայում էր նա, նայում անհազ  
սիզածեմ սուրբ Անահիտին  
և բարուրյամբ ահագնացած  
մեղրամոմիկ մայր Աստղիկին...  
Գրում էր նա խրոխտ ու լուս,  
կրակի հետ խառնած բառեր,  
թռչում էին, թրծվում հատ-հատ  
երկարագիր տառերը մեր:  
Թրծում էր նա խոժոռադեմ,  
զգաստացած ու ինքնամփոփի,  
այն, ինչ կրակից էր հունցված,  
պիտի ապրի երկար դարեր...

**ԱՍԴԻԿԻ ԼՈԳԱՆՔԸ****-Ա-**

Առավոտվա լուսատողի պես,  
երբ քնած են շունչ ու քար,  
երբ ծառերի ստվերներում  
չի շնչում քամին պաղ,  
դուրս է ենում տաք սենյակից  
Աստղիկն անուշ հեշտանքով,  
կրծքին՝ լույսն արեգական,  
շրթին՝ շունչը Վահագնի:  
Դուրս է ենում մուր սենյակից  
թերև քայլով հափոված,  
անցնում բյուրեղ ցող ու շաղով,  
հոգում՝ Վահագնը աստված:  
Տրորելով սինձ ու ծոքրին,  
ոտքն հեշտորեն փոխելով,  
շտապում է լճակը մատ  
վաղվաղակի նվազով:  
Ու պար է մի քայլքը թերևն,  
երգ՝ այտերը փողփոտն,  
լիճն է ենում՝ կուրծքը լեցուն  
գիշերային մրմուճով:  
Ու երբ ցողի, շողի միջով  
ջուրն է մտնում ոտքը քաց,  
ծփում է լուս լիճը լուսե  
հազար կրծքից սարսուած:  
Այնժամ Աստղիկն աճաշկոտ  
կույսի լուսե շղարշով  
ծածկում է իր մարմինը տաք  
և աչքերը երազող,  
որ լիճն անզուսապ  
և սերն իր տաք  
չղառնան մերկ խաղալիք,  
որ տղերքը հեռվում պահված,  
չնկատեն քայլքը հիբ:

Ու մշուշի շղարշի տակ  
մերկ մարմինը դրդալով,  
մեղկ լճակի թևերի մեջ  
հեկեկում է լողալով,  
շշուկներ են ափից ենում  
ու խառնվում ջրերին,  
ու լողում է Աստղիկն աստված  
Վահազն աստծու թևերին:

**-Բ-**

- Տուր ինձ, Աստղիկ,  
սեր մի պուճուր  
և առավոտը քո սիրակեզ,  
ես գաղտնաբար լաց եմ եղել  
և խոռվել,  
և կանչել քեզ:

Քո մազերը՝ մուր, մուր գիշեր,  
քո աչքերն՝ այրող հուշեր,  
որ կանչում են միայն մեկին,  
իսկ ես՝ թողած և հայր, և մայր,  
հույլ-հույլը լիճը վագող կույսեր,  
երազում եմ միայն քեզ՝ կին:

- Արեգակը կպաշտեմ ես,  
երբեք՝ գոռոզ Վահագնին,  
եղիր քիչ մեղմ,  
եղիր քիչ մոտ,  
դու տեսնում ես՝ տրորում եմ  
քո ոտքերի ցողն ու ամոթը:

- Քո աչքերը՝ հովեր ու հողմ,  
քո աչքերը՝ երազի կողմն,  
որ շանթում են ինձ նայելիս,  
դու և միակ,  
և սիրելիս,  
ես չեմ նայի խոլ արևին,  
քո աչքերին ես կնայեմ:

Քո մարմին՝ կրակի պար,  
քո դեմ կանգնած՝ ես սուրբ խավար,  
ինձ մի տանջիր,  
մի շանթիր ինձ,  
կուզե՞ս պաշտածդ աստծու համար  
ելնեմ կրիվ:

-Գ-

Լիճն է առել իր թևերին  
Աստղիկ աստծու մարմինը տար,  
քայլուում են մարմին ու լիճ,  
և հուզվում է լիճը անտակ:  
Եվ լեռների ծեր կատարին  
որոտում են շանթ ու կայծակ,  
ծուխ է ելնում, հսկա մի ծուխ,  
և այրվում են լեռները քար:

Ու հայացքը Աստղիկ աստծու՝  
քարից ժայթքող ծուխ ու բոցին,  
Աստղիկը՝ հեշտանք, Աստղիկը՝ կարու,  
ո՞նց լճումի մի երկնածին...  
Մարմինն այստեղ, ինքը՝ հողին,  
ինքը՝ գոռող Վահագնի մոտ,  
այսպես, ահա, երկար օրեք,  
այսպես՝ ամեն մի առավոտ:  
Յավ կա իր մեջ և խնդություն,  
մարմինն է ցավ, ինքն՝ օրինություն,  
հայացքը սուր՝ լեռը այրող,  
սրտում՝ հավատ, սրտում իր՝ ոխ:

Աստծու ամեն մի առավոտ  
ելնում է նա իր սենյակից,  
ու չգիտի ոչ ոք իիմա՝  
առա՞վ հայացքը Վահագնից:

Ու քող կոչվի Վահագնի տուն  
Աստղիկ աստծու սենյակը մուր,  
ու շշուկները գիշերվա  
քող շշնջա լիճը բաքուն...  
Այնինչ գոռող Վահագնի  
կայծակները հեշտով գրկած,  
ննջում է նա մուր սենյակում  
ու շշնջում առ աստված.

- Մարմինս՝ քեզ, և առավոտս,  
որ մքով եմ փարաքել,  
որ սպասում է միակ արեգակին՝ քեզ,  
ես, որ մարմին չունեի:

## ԷՊԻԿԱԼՆ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Դու էլ գնացիր, էլ չես գալու,  
ինչպես անցած մի հին երազ,

և դաշտերի վրա կախված

հայացքը քո պիտի մնա:

Առավոտ վաղ դու արքնացար,

ցավ կար քո մեջ ու հիացում,

լալիս էիր, թունդ ծիծաղում,

որպես սիրո իրարանցում:

Կյանքն էր խաղում քո կրծքի տակ,

և դու ոչինչ չգիտեիր,

քեզ ծնել էր ճակատագիրը,

որ իր հմայքը հասկանայիր,

հետո միայն կիմանայիր,

որ աստղերը ծով երկնքում

մանկության հետ առկայժում են,

իսկ քնի մեջ թունդ ծիծաղում:

Հետո միայն կիմանայիր,

որ ապրելը նույնն է այնպես,

ինչպես աստղերը երկնային,

որ վառվելիս են մոխրանում:

Խոկ դպրոցում՝ դասեր անկիրը,

հազար անգամ եփված դասեր,

բույր ու ծիծաղ տաք մեղրի պես

ծավալվում են շուրջող, ծնծղում:

Միտքն է միայն հասունանում,

իսկ ծնունդը լինում է սոսկ երկրային,

կրակի պես թափալվում էր միտքը ներսում,

ժամանակը ծիծաղում էր:

Անհոգություն, քաղցր երազ,

մանկությունն է բույնը քո տաք,

երնեկ, հազար երնեկ նրան,

ով ապրել է անհոգության պատրանքը փակ:

Լաստի նման այդպես պիտի օրորվեիր,

պատանության ափը անհաս պիտի մնար,

թե դիպվածով, անօրինակ մի դիպվածով

օրերն իրենք աչքերը մեր լայն չքանային:

Մի զույգ աչքեր ներս սահեցին դասարան,

հետո քայլվածք նկատեցի, հետո՝ շշուկ,

մեղրամոմի, աշնան բարակ երազի պես

մի կիրք խոսվածք լուր ծվարեց նստարանին:

Ինչ չգիտենք աստված բառով ենք վերծանում,

արարում ենք կոչում, երբ որ բառը չկա,

բայց պահեր կան, որ սերված են երկինքներից,

որի հունդը, սակայն, վաղուց մեր ներսում կա:

Չշեղվեցի, չնայեցի նրան թաքուն,

բայց տեսնում էի, որ նայում ենք մենք նույն կետին,

ոչ հիացում, ոչ սարսու կար մանկան հոգում,

մի չգրված տեսրակ էի ես ինձ թվում:

Ի՞նչ էի ես մտամոլոր ծամում իմ մեջ,

որ ոչ բառ էր և ոչ տենդում մի հիացում,

գրելացավ ունեի իմ մեջ

ու միշտ թաքուն ճերմակ թուղթ էի ես երազում:

Այն օրերին, երբ դպրոցից գալիս էի տուն,

երբ դեռ մայր՝ պաղ աչքերով իիվանդագին,

ձեռք էր երկարում ինձ գրկելու,

այդ օրերից թուղթ ու գրիչ էի պաշտում:

Եվ խոսում էի, թառեր կոտրում,

որոնք երբեք միտք չդարձան,

ու անշիրիմ պիտի մնան մանկան սրտի,

բնազրների հանճարաշատ գերեզմանում:

Ախ, մայր, ախ, մայր, մորն անհնար է կին կոչել,

պատված կոչեմ, կվանեմ քեզ ինձնից հեռու,

օտարվել է մեր մեջ արդեն մտերմությունը,

բայց այս հեռվից նորից քեզ եմ ես երազում:

Դու մանկության դրախտն էիր իմ  
և հեռացար անքառ, անքեն,  
քեզնից հետո աշխարհն այս փոխվեց այնքան,  
որ ինձ երբեք այն աշխարհում չես ճանաչի:

Չես ճանաչի այն աշխարհում էլ ինձ քնավ,  
քանզի ամեն որ փոխվում է իր ծննդից,  
բայց ցավալին այն է միայն, որ ծնողը  
այս աշխարհից հեռանում է այդքան արագ:  
Բայց ես պիտի երկար խոսեմ իմ, քո մասին  
և օրերի, որ այնքան տաք մնացին իմ մեջ,  
և մանկության այն արևի, որ բարուրել էր,  
ու կարոտների, որ երազ էին ծնում մեր մեջ:

Հացը թուղը էր, ու դու ինձնից լավ ես հիշում,  
և դու ցավով էիր նայում ինձ՝ վերջինիդ,  
ես քո վերջին միտքն էր, վերջին զգացումը,  
որ սովահար հաց էի խնդրում իմ երազում:  
Եվ դու խաղող տվեցիր ինձ այն առավոտ,  
արևի հետ խայտում էր պաղ ամեն ողկույզ,  
տեսնում էի, որ մեռել է Արշակ պապը,  
և զգում էի իմ մեջ հոսող տխուր մի ցավ:

Պառկած էր նա վեհ ու հանգիստ, ու ինքնամփոփ,  
կրիվներից, ապիներից հանգստացած,  
նա իմ ցեղի վերջին ճիգն էր, վերջին հարգանքը,  
որի առաջ սգում էին մարդիկ խոնարի:  
Իսկ վերարկուն կախված էր այն խոնավ պատից,  
ծոված մեխսն է լոկ մնացել իմ սրտի մեջ,  
ճակատագրի փլվածքն այդ վերջին անգամ  
խոնջացել էր ու քնած էր իին սեղանին:

Եվ ճոճվում էր ամեն անցող-դարձողի հետ,  
և ճոռոցն եմ լսում մեր այն իին սեղանի,  
ինչ իմանայի, որ պապերիս բախտի ճամփան  
ամփոփվում է ցեցը կերած իին սեղանին:

Ու էլ ոչինչ ես չեմ հիշում փոսից բացի,  
ու մի քանդված պատ, որ կանգնած էր փոսի բերնին,  
միայն հետո ես իմացա, որ փոսն էլ այդ  
անհայտ կորավ պատերազմի անցուղարձին:

Սակայն թողնենք փոսն այդ իին ճակատագրի,  
մենք տուն դարձանք, դու ինձ առար քո գրկի մեզ,  
մի ողջ գիշեր ես ննջեցի կրծքիդ վրա,  
մի ողջ գիշեր ես զգացի ինձ փոսի մեզ:

Մոմի նման բարակ-բարակ  
լույս էր եկմում նատարանից,  
Աստծու տված կրակն էր այդ,  
որ այրում էր դրսից, ներսից,  
ու այրում էր, այրում անվերջ,  
ու աղոթք էր ծուխը բարակ,  
ու այդ բոցի մեջ էի ընկել,  
որ կոչում եմ սիրո կրակ:

Ծվարել էր նստարանին  
աղջնակի լույսով անթարթ,  
ոչ բառ, ոչ խոսք դեռ չխոսած,  
խոռվել էինք մենք իրարից,  
հազար տարի ճանաչելուց,  
զրուցելուց հազար տարի,  
զրույցներից մեր խոնջացած,  
զրուցում էինք լրին էլի:

Մնաս բարո՛վ, իմ մանկություն, միակ երազ,  
ճշմարտության լուռ հանգրվան, անքեն հանձար,  
չեմ մոռանա դուռդ կապույտ, մինչև  
երկինքը մուգ իջնի վրաս ու մահանա:  
Չեմ մոռանա պատանության իմ օրերին  
և օրերին ջահելության չեմ մոռանա,  
քեզնով զտած ճամփաներն անմահության,  
քո մեջ են լոկ կյանքի, մահվան սերմերն ամեն:

Մեկ օրվա մեջ գտա ես ինձ լուռ պատաճի,  
մեկ օրվա մեջ հասունացա հանկարծակի,  
ես ինձ գտա մեկ օրվա մեջ, մեկ վայրկյանում,  
որի խորքում մանկությունն էր իմ մահանում:

Եվ ես խոնավ իմ աշքերով քեզ թաղեցի  
արտավեցի մենակ, իմ մեջ ու արցունքով  
պատանության դրները ես լուռ թակեցի,  
ու ծնկեցի ես իմ առաջ՝ արցունքով լի:

Ոսկեփրփուր պատաճին էր իմ մեջ ծաղկում,  
բայց լալիս էի իմ կարոտի, ցավի համար,  
մահվան մի բոք ես զգացի այդ կորստով,  
ես հասկացա՝ կորստով է կյանքը զախի:  
Ես հասկացա, որ նահանջ է ամեն մի քայլ,  
որ թանկ պիտի ես վճարեմ այս կորստին,  
բայց կանգնած էր իմ դեմ իրեւ այն պատաճին  
ու նայում էր, ու ծնծղում, ու հմայում:

Ես զգացի, որ իմ խորքում քարացել է մի մանկություն,  
զգաստությամբ ու լրջությամբ և խոհերով պիրկ ավելի,  
դժվար գտած պատանություն և խենքություն ավելի խիտ,  
ցավի, ցրտի, դժկանության, սովի ձեռքով բրծված մի սիրտ:  
Օրորոցից առաջ գիտե Աստված, թե ինքն ինչ է արարում,  
ճակատագիր է ամեն բան, նա է միայն տնօրինում,  
թվում է մեզ, թե բնական ուժն է եղել մեզ առաջնորդ,  
բայց չարաշար սխալվում ենք, երբ հայտնվում ենք նրա մոտ:

Ցավն էիր ընտրել քեզ առաջնորդ,  
կյանքով պիտի հատուցեիր,  
երազն էլ է դառնում արյունոս,  
երբ ապրեն է դառնում անկիրք:  
Ծիծաղ, երազ և ամեն բան  
փոփոխական է, անմիտ, անսեր,  
թե վերցնելու ոչինչ չունես,  
թե չես տալիս քեզնից ոչինչ:

Դու իրճվանքին չգնացիր,  
այդ էր՝ ապրել սերմից քո իին,  
ժամանակն էր դարսվել քո մեջ,  
և ամենուր կյանքն էր աննինջ:  
Ցավից, ցավից պիտի գոռայիր,  
ծիծաղդ ջինջ պիտի զնզար,  
ինչոր լիներ, թող որ լիներ,  
կյանքը մահից պիտի պոկել:

Հերիաք չէ այս աշխարհը իին,  
հերիաք է ինձ սերը թվում,  
թե ինչպես է մի բուռ սերը  
հող ծանրությանը դիմանում:  
Եվ դու տեսար դասարանում,  
և դպրոցում, հետո՝ դրսում,  
թե ինչպես են լավ տղերքը  
իրենց վաղը լուռ կառուցում:

Դառնում էիր դու չներող,  
չեիր հայցում դու փրկություն,  
ծառին երկինք չեիր կոչում,  
այլանդակին՝ գեղեցկություն:  
Եվ բացվում էին շուրջդ թիշ-թիշ  
հեռուներն անմեկնելի,  
որոնք, սակայն, ծանրանում էին  
ճանապարհիդ՝ նոր ոտք դնող:

Ազատության հաշվին է միշտ ամեն զգացում  
արարքի դեմ իր հատուցում,  
թեպես սիրտն է ընտրում ճամփա,  
բայց կրթերն են առաջնորդում:  
Իսկ դպրոցում ո՞վ է արյոյք առաջնորդում,  
ի՞նչ ասել է՝ հոգի ազատ և խիղճ անքեռ,  
չոր ու ցամաք, ինքնության դեմ կրվող դեմքեր,  
որոնք միայն դասագիրը են անվերջ սերում:

Եվ սերտել են իմանալի մի պարզությամբ,  
որ ոչ թարգման և ոչ խոսք է քեզնից հայցում,  
ուրիշներով հիացումն այդ երկար դարեր  
եղել են մեզ օրենք անդատ, արդարացում:  
Իսկ քո հոգին պիտի թրծվեր այդ հնոցում,  
բռնաբարող մի կանոնիկ ճշմարտությամբ,  
դրանից դուրս հանցագործ է ամեն մի բան,  
ըմբուտություն բառը՝ պարզմիտ, սերն անարգանք:

Իսկ սերն անքեն ծվարել էր նստարանին,  
բնազդների անթագակիր չքմնեղությամբ,  
սերն է ազատ, որ ոչ ոքից չի պատվաստվում,  
սերն է միայն ըմբոստ հոգին նրբակերտում:  
Հենց այդ գիշեր նա ըմբռնեց խոսքերն իմ փակ,  
տարութերվեց իր առաջին մկրտությամբ,  
լուսանփոփի լույսի ներքո՝ շատ քիչ բառեր,  
որոնք կյանքում երկար, երկար պիտի զնան:

Պիտի զնան բառերը այդ կարոտակեզ,  
և գրքերի վարքից հեռու՝ միշտ դեպի քեզ,  
միշտ դեպի քեզ պիտի ձգվի սերը արթուն,  
քանզի նա է գիրք հանճարը միշտ արարում:  
Ստիպում է, որ դու լինես ազատ, անքեն,  
և ծառի պես արմատներդ հողում խրես,  
և սաղարթդ երկինք պարզես ու երկնքից  
կար առնես, ինչպես մանուկը մոր կրծքից:

Կաք էր առնում, ինչպես մանուկը մոր կրծքից,  
և աստղերը դառնում էին հազարանուն,  
և երկնքի անհուն խորքում՝ որպես կոկիծ,  
ծաղկում էր մանկան հոգին ազատամիտ:  
Ծավալվում էր ալիքի պես ծովը հոգու,  
որպես հզոր նվագարան, շվի դյուրող,  
կառուցում էր մանկան հոգին՝ լոյս երազող,  
ճանապարհը, որով մեկն է լուս ընթանում:

Ինչպես ասողերն են կառուցվում  
միլիարդավոր հատիկներից,  
որոնք հատ-հատ միացվում են  
տիեզերքի փոշիներից,  
այդպես եկող ամեն էակ,  
իր մեջ պահած նախնիքը իր,  
նրանով մի ամբողջ դարձած՝  
մեզ է հառնում անցյալներից:

Եվ խոսքը հազարամյա  
չի ամփոփվում ափսեում իին,  
դրա համար անկախ կամքից  
նայում ենք մենք եփվող ծովին:  
Դրա համար երկինքն անժայր  
ծովի տեսքով է մեզ հառնում,  
հողն էլ ծով է մի անտարձ՝  
իր հետ ապրող ծառ ու ծաղկով:

Լինում է, որ անկրկնելի  
բնությունը հազարանուն,  
հատիկի մեջ իմաստնացած  
դնում է իր արյունը իին,  
և նա բոլոր հատիկներով,  
հիշողությամբ ու կարտով,  
պատյանի մեջ զրահապատ  
օրորում է անցյալը իր:

Իսկ անցյալը՝ հզոր քառս,  
խառնաշփոք պապերի երք,  
կոխվներից ու վեճերից,  
նվաճումից քանովլած քերդ,  
իսկ անցյալը՝ անհանգրվան,  
հանճարների անճիշ հառաչ,  
որ երկնքի, ծովի տեսքով  
փովել էր մեր նոր մանկան առաջ:

Եվ լեռան պես այն քաղցրանուն,  
որ վիճում է մեզ հետ, ահա,  
իր ծանրությամբ հազարանուն,  
իր թանձրությամբ կյանք ու մահի,  
կշռույթի պես մեր մեղքերի  
և ցավերի կշիռի պես,  
խղճի նման կարոտ տեսքով,  
գուշակողի տեսքով անմահ...

Հազար անգամ փառաբանված,  
փառքից զրկված հազար անգամ,  
Գողգորայի ծաղկի նման  
նայում է մեզ հեռվից, ահա,  
մեր ցավերի սեղմ-սեղմությամբ,  
մեր մտքերի ամբողջությամբ,  
երեխայի անմեղ տեսքով,  
մեր սիրելու գեղեցկությամբ:

Դաս էր առնում՝  
հայացքն հառած իր լեռներին,  
դաս էր առնում՝  
մտքում պահած երգերը իր,  
և անտառում մայր կորցրած ծագի նման  
մոլորվել էր, ու արցոնք էր սրտին կարում,  
և կարկրոցն այդ միալար  
անցը էր բացում իր հոգու մեջ...

Դժողովության ու կարոտի,  
անեղբության ու հավատի  
դաս էր առնում  
ուսուցի փակված հոգուց:  
Դաս էր առնում այն երդիկից,  
ուր անձրևը՝ ձյան խառնությով,  
հազար տարի ներս էր թափվել,  
և չէր եղել մի կարկատող...

Որ չէր եղել վարպետների այդ հին երկրում  
խաղաղ օրվա գեր մի նշույլ,  
որ կարկատեր իր անցյալը,  
որ ամփոփեր անցյալը իր,  
որ նոր միայն բացվող օրվա մասին երգեր,  
ինչպես բռչունն անտառում,  
բռյանը շինած բռչնի պես այն,  
որ ապրելուց է դայլայլում:

Պատմության ո՞վ հրաշք ձի,  
անսանձ, անքեն և բազմաստված,  
ազատության սուրբ հետևորդ  
և անտեղյակ կիրք ու խանդի:  
Անկիրք՝ չար ու բարու առաջ  
և զրկանքի առաջ՝ անքեն,  
բանտը՝ դրախտ, դրախտը՝ բանտ,  
և ամենուր պարզ ու անզեն:

Եվ դու պիտի ծաղկես այնտեղ,  
որտեղ «չկա» բառը չկա,  
բնավ պետք չէ բանաստեղծել,  
բանաստեղծ է ամեն մանուկ,  
բանաստեղծ է ամեն մանուկ  
իր երկրային սուրբ ծնունդով:

Չկա ոչ քեն, ոչ խինդ, ոչ սեր,  
սեր է ամեն, ամեն ծնունդ,  
որքան կուգեն դեմքը փոխել,  
պիտի մնան, պիտի ապրեն,  
պիտի ապրեն արարման պես,  
սուրբ արարման օրորոցի,  
հուշի նման շոայլ ու բաց,  
վերքի նման հուշ ու ծաղկի...  
1982-83 թթ.

## ԶՐՈՒՅՑ ԱՐԱՐԱՏԻ ՀԵՏ

-Ա-

Մի կողմում լույսը, մյուսում՝ խավար...  
 Արևելքի ու Արևմտութի ճերմակ ադամանն,  
 մերք խավարն է վերքիդ փայլիլում,  
 մերք՝ լույսը զվարք:  
 Վարդագույն լույսի ու կարոտի տեր,  
 մայրամուտների, լուսաբացների  
 անշոռույթ զինվոր...  
 Էլի առավոտ ու էլի դավեր,  
 նորից մայրամուտ  
 ու կրկին ցավեր,  
 ազգահավաքման մարմարե վրան  
 ու գոտեանդման ադամանդ-վահան:  
 Աղոքք մշտարթուն և խաղաղապաշտ՝  
 միջն խավարի ու լուսաբացի,  
 կերոն ճերմակած և ճերմակ աղոքք,  
 անստվեր փրփուր, անձայն պաշտամունք,  
 ներող ու սիրող համայն ազգերի...  
 Մեն մի բառի մեջ ամփոփված կարոտ,  
 մեն մի բառի մեջ խտացված հավատ,  
 չարի դեմ ճերմակ, բարու դեմ կրկին  
 ամենաբարձր, ամենալոին...  
 Հավաքատեղի անքեն, անբարբառ,  
 համբերությամբ քո աստվածածին  
 և սիրով նույնական:  
 Թող այդքան շռայլ չինի սերդ,  
 թող լոռությունդ այդշափ չգերի,  
 խելագարվում են նաև սիրելուց:

-Բ-

Դարերը մանուկներ են,  
 սերունդներով, գործերով ամեն,  
 հավիտենության տագնապներով,  
 աղերսանքներով, ծեսերով, խիճով,  
 դու՝ ազգի և ժողովրդի  
 քարե խառնարան, հաստատուն, վսեմ,  
 քարե պաշտամունք ու քարե հրաշք:  
 Արարման պահից մինչև ի հանգիստ,  
 լուսաբացից մինչև մայրամուտ դու անհաշտ  
 կոիվ ու բացված սեղան  
 ամենքի համար և ամենուրեք:  
 Կանգնած ես այդպես մառախուղների,  
 գարնան զվարքուն աղաղակների,  
 դաժան ձմեռվա քմայքների դեմ,  
 բերքի աշունքվա  
 ու ամոան տապի:  
 Գազարդ՝ ձյունե, գծերդ՝ հստակ,  
 հանդարտ, անքքիք, այլև անբարբառ:  
 Դու՝ մանկան երազ  
 և ծերի սփոփանք,  
 լուսե առազաստ և հույսի թռչուն:  
 Քեզ հետ խաղաղվել ու քուն են մտել  
 բազում սերունդներ:  
 Քեզ հետ երազել  
 ու դարձել են նյութ՝ քար, կտավ, տողեր...  
 Դու՝ մանկաժայիտ ու ծերունազարդ,  
 շիկնող նորահարս ու դարի զինվոր,  
 հարազատ օրրան ու անբարք կեցվածք,  
 սիրահարների խոստովանահայր  
 և խոստովանահայր բոլոր մեղքերի:  
 Հայ տառով գրված բոլոր մեծերի  
 տապանագրի ու վերածնման  
 հավերժ ընթերցող:

Երկինք համբառնեց շղարշդ կապույտ,  
գարուն է, արև,  
մեղմ ձյուներիդ տակ ննջում են հարյավ  
աղմուկներն ամեն, սերեր ու բախտեր,  
ծիծոննակներդ բախտի որոնման մոլոր ճամփերից  
վերադառնել են:  
Արքայավայել քո վեհությունից  
նայիր,  
ընդունիր սերը նորօրյա՝  
քսաներորդ դարի մեր ձեռագրով,  
այս սիրով, ահա:

-Գ-

Բարի լույս, իմ սեր,  
բարի, իմ միակ,  
ինչքան մաքոր է լույսը քո դեմքին,  
որքան ճերմակած,  
անքիծ,  
անստվեր:  
Իմ այս կարճ կյանքը՝ անսովոր կոիվ,  
ասա՛, սիրելին,  
դու ինչպես, ասա, դու ինչպես  
և ինչ խոյանքով,  
ինչ համբերությամբ տարել ես կյանքի  
քաշշովկներն այն,  
չարիքներն ամեն,  
այն առ ու տուրք,  
խարկանքը, սուտը,  
ատելությունը՝ սիրո բերանով,  
պոռնկությունը քաղաքականության,  
կոտորած, դավեր...  
Գուցե, սիրելին,  
դրանից է քո լույսն այդքան լույս  
և գագաթ՝ ձյուն...

-Գ-

Արևելքի ընծաները ողջ՝  
առավոտվա հետ և արեգակի,  
փողփողում են, տես:  
Խարտյաշ մազերով  
և կապուտաչյա մանուկների մեջ  
սերն է բողբոջում,  
ցնցում է լոյսը,  
ու հավերժական գույների մեջ պերծ  
մենում է սերը հյուզե առ հյուզե,  
կարիլ առ կարիլ,  
և պարմանուիու այտերին գունատ,  
և պարմանուիու աշքերում անծիր,  
և նորարողոր ստիճաներին լոյս  
արյան գույներ են խայտիսայտում դանդաղ,  
քայլը դառնում է համր, սիգամեմ,  
խոսքը՝ բրոռուն,  
մատները՝ նրբին:  
Եվ այն պատանին, որ  
Կարն Ծիրի լույսն է նշմարել,  
մենույան գրկում հեծծում է ցալից  
անտեղյակ,  
անգեն լույսի հափոված  
հարձակումներից:  
Արևելքի ընծաները ողջ  
և լոյսը հուսքի  
թեզ պսակել են առավոտը վաղ,  
դու՝ ձյունե արքա հավիտենապաշտ,  
Վյը ու Արարատ:

-Ե-

Պատմություն ուներ ազգերի նման,  
ազգերի նման, համայն ազգերի,  
ավելի տուկուն, ավելի արյուն  
չէր թափի այլշափ ոչ մի ազգություն:

Խճռղված մի երգ, բեկված մի հայացք,  
խելագարված սիրտ, տարագիր երկինք,  
ամեն ինչ օտար, ամեն ինչ դժգույն,  
ապրելը՝ մահվան սև տապանագիր:  
Ինչպէ՞ս է զրվել և ի՞նչ ձեռքերով,  
անձրև է թափվել չարի ու ցավի,  
խեղաքյուրելուց ծանր ու դաժան,  
անվախճան, անվերջ մի սև պատմություն:  
Եվ պատմությանդ նայիր բզկտված,  
արյան ծարավի մարդկության խղճին,  
կարծես խոսում են Աստծու բերանով,  
...ծիծառ ու արյուն, դևի խրախճանք:  
Դարի զավակները ոսկե գրիչով  
և դիվանագետի համրիչը ձեռքին,  
և օտարերկրյա տարագներ հազած,  
փակվել են խոսքի պատյանների մեջ,  
նրբին բառերի բարձերին փափուկ  
և սիրո մասին երգեր են զրում  
լուռ օտարվելով ցավերից երկրի:  
Խճռղված մի երգ, բեկված մի հայացք,  
խելագարված սիրտ, տարագիր երկինք,  
ամեն ինչ օտար, ամեն ինչ դժգույն,  
ապրելը՝ մահվան սև տապանագիր:

-Զ-

Հավիտենապաշտ այս հին աշխարհում  
մենք ճամփա ընկած երկու զինվոր ենք,  
դարեր շարունակ քայլում ենք, քայլում,  
չենք կարողանում միմյանց հասնել:  
Ես հյուսիսից եմ զալիս դեպի քեզ,  
իմ ձեռքում պահած հավատ և գարուն,  
իսկ դու՝ հարավից, ոնց Աստծու տաճար,  
գմբերներով լույս, զահիդ լուռ բազմած:  
Մեր միջն երկիր՝ հացի ու կավի,  
ջրեր՝ կապուտաչ և գիլ ու գլոր

աղբյուրներ ցրտի ու զգոնության,  
և մանուկներ ժիր, և ձկներ քարե:  
Մեր միջն հազար քարայրներ մթին,  
անձավներ լրին, ձորեր ապստամք,  
որոնց շրթներին թափում են թերթեր,  
ծիրանին այս հեզ, լորենին լրին:  
Եվ որձաքարի թերթերին կապույտ,  
որպես հավերժի գունատ մագաղաք,  
հեզ պատմիչների անուններն են մեր՝  
«այր և իմաստուն» բառերով դաշված:  
Եվ հազարամյա ծերպերին լերանց՝  
արծիվների կանչ, բուերի վայուն,  
անցյալի կորուստ, նորի արարում,  
աղոթատներ հերանոս ու հին:  
Հավիտենապաշտ այս հին աշխարհում  
իրար երազող երկու զինվոր ենք,  
ես հյուսիսից եմ՝ զոյց ափիս զարուն,  
բիրիսական հողն այս ես ինչպէ՞ս հատեմ:

-Ե-

Քարտեզի վրա կա արնոտ մի կետ,  
որին կոչում են Հայաստան աշխարհ,  
վառվում է այնտեղ գիշեր ու ցերեկ  
արնագույն բոցով հնագույն մի սիրտ:  
Կրակի հետ է խաղում սիրտն այդ թեժ,  
կրակի գոյն է երազն ու հոգին,  
և հզոր խանդով, մտքով՝ կապույտին,  
ծովսն է բարձրանում տանիքներից թեք:  
Եվ մամոռուտած են տանիքները հին,  
աճում են այնտեղ որում ու ծաղիկ,  
ծուխը գալարուն բարձրանում է վեր՝  
հոգին խառնելով նահատակներին:  
Երկնային խիղճը բարի, անարգել  
մտած է ամեն հարկ-տաճիքի տակ,  
այնտեղ նահապետ հայրը թիկն տված  
զրույց է անում իր իսկ աստծու հետ:

Եվ բարբարոսներ, որքան էլ եկել,  
անհետացել են չար մշուշի պես,  
քարերին կարմիր, նայիր, որպես վերք,  
մնացել են մեր սպիները խեժ:  
Յուրան է վնագցել, փշել է քամին,  
երազի նման ցնդել են հավերժ  
դարեր կուտակված մորմոքք ցավի,  
ավերումները ապստամբների:  
Քարտեղի վրա կա արճուտ մի կետ,  
որին կոչում են Հայաստան երկիր,  
վառվում է այնտեղ կրակով բեկ-բեկ  
արճագույն բոցով հնագույն մի սիրտ:

-Ը-

Զարդարանդակ չէ պատմությունը իին,  
և ոչ էլ երգ են մազաղաքները,  
նրանք ստեղծվում են ամենօրյա  
անցնող, աննահանջ գոռ վայրկյաններից:  
Երգը երգ չէ լոկ, վայրկյանը՝ վայրկյան,  
նորօրյա հոգսին հոգացող կգա,  
ապագան՝ գոյի անվախճան հառաշ,  
դու քո օրերի հոգսերը հոգա:  
Դարերիդ վազքը կցնդի հավերժ,  
թէ վայրկյանդ գուտ անմարմին ցալ է,  
ոչ փուչիկների պայրյունից թնդա,  
ոչ խնդա իզուր գտածիդ համար:  
Զարդարանդակ չէ պատմությունը իին,  
և ոչ էլ երգ են մազաղաքները,  
նրանք մեռնում են ծնվելու համար  
տրնող, անմարմին գոռ վայրկյաններից:  
1981 թ.

## ԱՐԵՎԻ ՏԱճԱՐԸ

Գառնո հերանոսական տաճարի  
վերակառուցողներին և նրանց, ովքեր  
կկանգնեն այս վեհաշուր տաճարի առաջ:

## Նախերգ

Արև իմ շռայլ ու ոսկեծամ,  
արև՝ իմ, զամբիկ մաքուր,  
լոգանքդ երկնային կապույտ  
թափում է լույսերի երամ:  
Դու՝ սկիզբ, դու՝ հավատ ու վկա,  
դու՝ մանկան երազի բեկանում,  
արև՝ իմ, իմ անքիծ լուսնկա,  
ցնորք ու մթության վերծանում:

Դարերով վայրկյանի տատանում,  
հեղում ես միայն լոյս ու գգվանք,  
դու տեսար, թէ ինչպես խավարում  
կանգնեցրին լուսակերտ ապարանք,  
դու տեսար բյուր դեմքեր վայրի,  
պրկված քարերին որձաքար,  
դու տեսար դեմքեր բյուր ահով լի,  
ստեղծագործ հղությամբ կրած:

Թող արեւմ ոսկեծամ քո լույսով,  
թող տեսմեմ աչքերդ արեգակ,  
թող քո այս լուսատու շողերով  
կանգնեցնեմ պալատն իմ կործանված,  
և բառերն իմ գուգակից ու խիտ  
թող հատվեն այն ոսկյա հատումով,  
և կանգնի իմ առջև երկնանիստ  
պալատո՞ դարերով լրված:

-Ա-

Ընտրելով առավել դյուրին ճանապարհ,  
մատնելով մոռացության երկնտրանքն ուղիների,  
քողնելով փաստերի շարադրանքը,  
մատյանների դեղին ու մարմարե փոշին,  
պահպանելով արյան պատմությունը,  
չկորանալով կորույյալ պաշտամունքների առաջ,  
մերկ, ինչպես ծշմարիտը,  
զծերը, գույները,  
ցրելով միֆը,  
թերում են գլուխս դեպի անցյալը վաղեմի,  
ոսկե միքածի խորքերը հեռավոր,  
ուր շարժվում են նախ պատկերներ տարտամ,  
ցոլում են զծեր, դեմքեր հարազատ,  
փայլում են նախ իրեն առաջին հայացք  
ու դանդաղ զատվելով՝ գույները,  
շարժումները դառնում են հստակ,  
բացվում է միքածը ոսկեգույն,  
ու հեռվում, ինչպես արքմնի երազ,  
տեսնում եմ դեմքեր հարազատ ու տար:  
Ահա դարն առաջին,  
ահա լեռները,  
ահա Ազատանին՝ փրփրած երկու ձիգ լեռների մեջ,  
բաղված խորքում,  
սակայն խորքում պահած շշուկները Գառն սուրբ տաճարի:

Նրանից վեր՝ լեռներ,  
կանաչ, վիշապաձայն,  
ուսերին պահած հսկա քարե ձկներ,  
իրենց ոլոր, քարե գոտիներով պնդված,  
պահելով կենտրոնում եռանկյունին:  
«Տրդատա քախտ» - ինչպես կոչում ենք մենք,  
երկու հազար տարվա եռանկյունին՝  
իր նախնական տեսքով, իր բնուրյամբ,

որի պարզկա գիշերներով օծված  
քազմել է քարեղեն լեռան կայմին:  
Կենտրոնում՝ Ազատանու ճերմակ փրփուրներով սրբած  
եռանկյունի տարածք, փակ դրներով,  
լեռների մեջ ոլոր, լեռների մեջ լոած,  
մի մուտք միայն,  
հողոս մի ճանապարհ՝  
աղոթատուն տանող խոհեմությամբ:  
Քարե մի լուրյուն՝ լեռների մեջ գոտկված,  
ծանր մի լուրյուն,  
ու լեռներից եկող կրկնապատկվող մի ձայն՝  
լուրյունը հաստող և սրբությամբ ճնշող:  
Ահա եռանկյունին, իսկ անկյունի կայմին,  
հազիվ մի քանի քայլ ձորից այս կողմ,  
մի բարձրաբերձ, ուսինյ,  
քարեղեն ձայն,  
կանգնած անբարթ, անդորր,  
պատերով չոր:

Հելլենական թե Էտրուսկյան արվեստի,  
հունական կամ հելկտիստիյան տիպի,  
խառնված հարյուր, հազարավոր տարվա  
կորած, չգտնված Ուլարտուի հողմին,  
անիշելի թվի խորհուրդներով հազար  
կանգնած է տաճար՝ կապուտաչյա բազալտ,  
կանգնած է չոր, ուղիղ, հավասի պես հզոր,  
անբարթ, ինչպես հին օրերի սփինքս:

Ու վ Շարդեն, Մորիկեր, Կերպորտեր, Գյուրուա,  
մարդիկ հելլենիզմով ու աշխարհով լեցուն,  
դուր իմացա՞ք արյուր, որ տաճարներ քազում,  
չզիշելով Գառն միակ սուրբ տաճարին,  
կործանվեցին անհաղթ Տրդատ Մեծի ձեռքով:  
Նրանք կանգնած էին Գառնիից զատ  
Բազարիճում ու Երիգայում,  
մեկը՝ հզոր Միհրի փառքի համար,  
մյուսը՝ Անահիտի՝ զգաստության մայր:

Եվ կանգնեցին նրանք հերթով, մեկ-մեկ  
Եկեղյաց զավառի Թիլ ավանում,  
Անի ավանում՝ Գարանաղիի,  
Աշտիշատում ու քաղաքում Անի:  
Մանգնեցին նրանք իրու վահան,  
Տիգրանի ձեռքով ու Տրդատի,  
Տրդատի ձեռքով, որն իր արյամք,  
Խոհեմությամբ ու հավատով,  
Քեկուզ խոնարհեց զլուխն անրազ,  
բայց և լուս հաղթեց Հռոմին զռո:  
Եվ լուս հաղթելով Հռոմին չար,  
կճելով դաշինք Վահագնի հետ,  
արքաները մեր զուսպ ու պայծառ  
ստեղծեցին դաշինք քրմերի հետ:  
Ե՛վ տոն էր լինում, և խնդություն,  
և զոհ՝ ռազմի աստծու համար,  
և Վաստիկի՝ սիրատոչոր,  
և Նանեի համար աստվածամայր:

-Բ-

Այս ժամանակ ինքնակալ Կոստանդինոսից իրովարտակ է հասնում մեր Տրդատ քաջավորին, որ սուրբ Գրիգորին հետն առնելով՝ գնա ժողովին: Բայց Տրդատն հանձն չառավ... Ուստի կասկածի մեջ էր, միզուցե Շապուհը պայմանին ստե՛ հերթանսների սովորությամբ, այս պատճառով էլ մեր երկիրն էլ առանց իր ներկայության չըողեց:

Մովսես Խորենացի

Ամեն ինչ այսպես էր, ճիշտ էր, տեղին էր,  
և եռանկյունին, և ընտրած վայրը,  
քարի մուգ գույնը, պատի չափերը,  
աղոթատուն տանող հողոտ ճամփան:  
Ամեն ինչ ճիշտ էր,  
չափած ու ձևած,

ուշիմ և բանիվ, գործին աղոթած,  
ուշիմ ժողոված փառքին ու ծեսին,  
Վահագնի փառքին, փառքի արժանի,  
գրության, սիրո՝ Վաստիկ աստծուն:

Բայց եկավ հորը, կրակը, բուքը,  
եկավ ամենը՝ խաչի տեսիլքով,  
եկավ իրու բոց, կապույտ թե կարմիր,  
եկավ մաքրելու, սրբելու մեկեն  
դարերով պաշտված պարկեշտությունը,  
քարերով հաստված,  
կամոք արևով աստվածությունը:

Եկավ հոռոմաց ու հելլենական,  
եկավ գոլորշվող մեր ուրարտական,  
մեր փառաց փառքի գույնը փոխելու,  
եկավ հաստելու ձեռքը ձեռնողի,  
հոռմեացիների ու հելլենների անտես ձեռքերի  
ճամփան փակելու,  
լինելու միակն Ասին հողի մեջ:  
Միակը հոգով քիչ է լինել,  
եկավ մարմնով, ստեղծած գործով  
հրաշք կերտելու:

Ու այս ամենը ստեղծելու համար,  
և շրջապատից զատվելու համար,  
հոգու պատկերը ստեղծելու համար  
հարկավոր էր բոց,  
և ավերելու ձեռքեր էին պետք:  
Ձեռքեր՝ սեփական տունը քանդելու,  
ներսից քանդելու,  
որ հոռմեացիք ու հոյները զռո  
չքանդեին դրսից:  
Եվ այս ամենը ստեղծելու համար  
լույս էր հարկավոր:

Եվ եղավ այսպես,  
խառնվեցին իրար ավերակ ու լույս՝  
խաչի տեսիլքով:  
Եվ ժողովվեցին լուսավորչի տեսքով այն միակ,  
և ժողովվեցին թագավորից մեր մինչև սարկավագ:  
Նախ դաշինք կնքվեց խաչի երդումով  
սուրբ Գրիգորի, Տրդատի միջև,  
նախ ներսից սրբվեց հեթանոս երգը.  
«Հեծավ արի արքայն Արտաշես ի սեաւն զեղեցիկ»,:

Հետո գուժեց բորբ ռամկի ականջին,  
հետո եկան սրով, տեգ ու նիգակով,  
ուղեղներում պահած բառեր՝ շոփի պես լափող.  
«Ուկե անձրև էր տեղում  
Արտաշեսի փեսայության ժամանակ»:

Ու ցավի, տենդի, միրաժի մեջ շոգ  
մորթվեցին հազար, հազար սուրբ քրմեր,  
մորթվեցին հազար, հազար մեհյաներ,  
մատյաններ հազար, որոնց խորշերում  
կրակի լեզվով մեռնում էին հատ-հատ  
խաղեր ու տաղեր, երգեր ու տառեր,  
տառեր սրբազն, որոնց ամեն մի կապակցությունը  
երկնում էր երկինք, երկնում էր երկիր,  
և բագինները զոհերի սովոր  
ընկնում էին գետին՝  
տենդի ցավի մեջ:

-գ-

Ինչպես հերիաք մի սովորական  
և՝ պարզ, և՝ խրթին, և՝ հեռավոր,  
և՝ կրակոտ, ինչպես մտերիմ,  
կանչում է ձայն մի մեճավոր,  
կանչում է դյուրող մի ձայն  
անդեմ, բեկրեկուն ու դողդոշ,

և հեկեկոցն այդ միայնակ  
արյանս մեջ է սողում:

Լուս եմ մեռած մի երգ  
արևոտ ու լույս օրերի,  
լուս եմ երգն այն բեկրեկ  
կրակի, սիրո ու երի,  
ու քայլքն եմ լուսմ այն ոփրմիկ  
և շունչը՝ կրակով հաստված,  
հեթանոս երգը քեզ մոտիկ,  
հեթանոս երգն այն մորքված:

Ծաղկանց երկինքը լի արև,  
շեներ՝ արևկող, արևապաշտ,  
հովերի, հողմերի պես կանայք,  
մեջքերը, քաքերը, կուրծքը բաց,  
երկիրն այն դրախտից հեռու,  
օտար մոմերից դեղնակալ,  
արևն եմ տեսնում այն հեռու,  
արևը՝ սիգածեմ, ոսկեփայլ:

Լուս եմ մեճավոր մի երգ  
և տխուր, և բեկրեկ, և խոռվ,  
մահվան դեմ ծառացած մի երգ  
կանչում է հավատով ու սիրով.

- Լսո՞ւմ ես,- ասում է նա ինձ՝  
ձեռքերը թաղելով հողի մեջ,-  
լսո՞ւմ ես, կանգնեցնել է պետք  
այսրանին հողարտումք մի մեծ:

- Կործանվեց,- ասում է նա ինձ,-  
կործանվեց և քաղաք, և տուն,-  
նայում է ուղիղ աշքերիս  
ու ցավից հյուսքերն է քանդում,  
և աշքերը հարազատ ու տար,  
ու մարմինը պինդ ու ոլոր  
հաղում են լույսի պես ճերմակ՝  
դառնալով ավերակ ու հող:

**Բանալի**

Ոչ ոք չի կարող ասել, թե ինչու,  
և արդյոք ինչու կանգնեցի քո դեմ,  
քանզի երկարագամ է քո կամքը,  
և վեհությունդ՝ սրբատաշ ու մարմարե:

Եվ քանի դեռ կա այս գաղտնիքը,  
քանալին քերթության և սիրո,  
կկանգնեն հազար վեհաշուր կորողներ  
և գաղտնի հմայքով, և խոսքով ժլատ:

Եվ, ահա, նորից տարիների միջով,  
տարիների գաղտնի նյութով շաղված՝  
կանգնած է իմ առջև գաղտնիքը մարմարե՝  
նույն խստությամբ, խոսքով, դռներով փակ:

Ո՞վ հորինեց արդյոք այս հրայրը քարե,  
ո՞վ հղացավ արդյոք, և ի՞նչ այրում,  
և ի՞նչ վայրկյան էր այդ, որ բարի այդ հանճարը  
գծեց և չթողեց մոռացության այրում:

Եվ չկամեց գրել անունն իր,  
հղացման տեղը՝ բարու համար,  
և անցավ, ինչպես այն մեծերը,  
որոնք չունեն հուշարձան և տեղ անվան:

Եվ գրեցին դարերը մի քանի բառ,  
ժլատ, անխստում, բայց և հույզով.  
- Տաճարն այս Տրդատը պահեց իբրև հովանոց,-  
և նույն այդ Տրդատը չխստովանեց ոչինչ:

Ո՞վ իմաստուն այրեր և ճորտեր մերկ,  
արքաներ զոռող ու բանիմաց,  
ահա, կանգնած է տաճարը ձեր  
և հերանոս, վայրի, և ավերված:

Ահա, կանգնած է տաճարը ձեր,  
ձեր ձեռքերի, մտքի և սիրով պիրկ,  
որպես խոստում մի ձեր հայրենյաց,  
որպես սիրո խոստում, խիստ ու ժլատ:

Եվ ինչպես ամեն մի դարի կնիք,  
և խոստում, և միտք, և ինչպես նյութ,  
կանգնած է մեր առջև ձեր խոսքը,  
ձեր միտքը, անունը, սերը մարմարված:

Ոչ ոք չի կարող ասել, թե ինչու,  
և արդյոք ինչու կանգնեցի քո դեմ,  
քանզի երկարագամ է քո կամքը,  
և վեհությունդ՝ սրբատաշ ու մարմարե:

-Դ-

**Արևի պաշտամունքը**

Նստել էր ծերունին կույր՝  
փանդիոր սեղմած կրծքին,  
շուրթերը տխուր էին ու լուռ,  
լարերը՝ մարմրող ոսկի:  
Մատները քարեղեն ու պիրկ  
սեղմել էր կրծքին չոր,  
փանդիոր երգամաշ ու պարզ  
քնել էր ցավերից խոր:

Արևը լեռների կայմին  
մարում էր շքեղ ու ոսկե,  
արևը՝ ծիրանի կարմիր,  
թափում էր մահամերձ խոսքեր:  
Նստել էր ծերունին կույր՝  
փանդիոր սեղմած կրծքին,  
շուրթերը պաղ էին ու լուռ,  
լարերը՝ մարմրող ոսկի:

Մի ստվեր անցավ գաղտազող,  
մի թարուն, մի հուշիկ ստվեր,  
ուսերին՝ սևամած մի քոյ,  
գաղտազող անցավ մի ստվեր:  
Ննջում էր տաճարը երկնամերձ,  
արևը մարում էր ոսկի,  
ստվերը սահեց, հեռացավ,  
և օրը ծանրացավ խոսքին:

Անցորդնե՛ր, կանգնեցեք այստեղ,  
իմացեք լեզենդն այս հին,  
լեզենդն այս, որ պարզ է ու խոր,  
լեզենդն այս արևի մասին:  
Փանդիռը կզնզա հիմա,  
կպատմի մի սիրո պատմություն,  
արևը որքան էլ խնդա,  
սերն է լոկ արևից անհուն:

Մեհյանում կար մի քրմուիի,  
քրմուիի՝ արևի աղոթք,  
աչքերը՝ արեգակներ սև,  
մազերը՝ զիշերվա ամոք:  
Վառվում էին աչքերը սիրուց,  
զիշերներն արտապում ցավից,  
ամոքը՝ կարմիր արեգակ,  
թախիծը՝ մարմրող կսկիծ:

Մեհյանում քրմեր կային ջահեկ՝  
բռնված խանդի բոցերով,  
աչքերը՝ երկինքներ կապույտ,  
բազուկները՝ ջլերաց ու պինոց:  
Ամենքը՝ արևի տաճար,  
ամենքը՝ զոհարան ու թագին,  
բայց պինդ էին կպել կրակին՝  
քրմուիոն այն ջահեկ ու պիրկ:

Ու մեկը մյուսից տեղյակ,  
ու մեկը մյուսից թարուն  
պահում էին մտքներում ջահեկ  
կրակե ու վայրի քրմուիոն:  
Լինում էին երրեմն պահեր,  
երբ քուրմն ու քրմապետը ջահեկ,  
շտանելով կրակն այն տաք,  
որ մարում, բորբոքվում էր անընդհատ  
սրտում և հոգում անհատակ,  
այնժամ սողում էին զիշերով  
քրմուիոն մեհյանի մոտով,  
կանգնելով թագինին հանդիման՝  
թափում էին արյունն ալ կրակ:

Քրմուիին անցնում էր հանդարտ  
թագինի, զոհերի մոտով,  
թևում էր արյունը տաք,  
աչքերը՝ ալվան կրակ:  
Բայց պինդ էր կպել հոգին  
այն մեկին հզոր ու ջահեկ,  
որ աչքերն էին զույգ արեգակ,  
և ուներ խատաշունչ թառեր:

Իսկ ջահեկ պատանին այն սեզ,  
որ աչքերն էին զույգ արեգակ,  
սիրո ու կարոտի արանքում  
պահում էր մի հզոր կեցվածք,  
վախենում էր, թե մերժվի սիրուց,  
վախենում էր խանդրով մի թարուն,  
շինի քրմուիոն ոստյունը  
պատրաճը է զիշերվա անրուն:

Անցորդնե՛ր, կանգնեցեք այստեղ,  
իմացեք լեզենդն այս հին,  
լեզենդն այս, որ պարզ է ու խոր,  
լեզենդն այս քրմուիոն մասին:

Փանդիռը կզնա հիմա,  
կրափվի արև ու արյուն,  
արևը որքան էլ խնդա,  
սերն է լոկ արևից անհուն:

Ու սերը վայրի ու բոսոր  
թափում էր քրմուհու աչքերից,  
շուրթերը նվազում էին ցավից,  
բատերը մեռնում էին մոլոր...  
Գիշերը դառնում էր զառացանք,  
պատերը անխորտակ ու պինդ,  
ու խանդր ելնում էր ափերից՝  
դառնալով վրեժի ժպիտ:

.....  
.....  
Ու մի օր,-  
ցավագար գիշեր,  
գիշեր ամորի ու... լրբության,  
գիշերներ աղոքի, սրբության,-  
ու մի օր, երբ սերը թաքուն  
արթացավ իբրև սրբություն,  
երբ պատերը քարե, անխորտակ  
մնացին իբրև մահարձան,  
չտարավ քրմուհին ցավն իր,  
դուրս եկավ գիշերով մեն-մենակ,  
սերներ իր խաղով շարունակ,  
գծելով ձևերը մարմնի,  
մերկացրած քերը հոլանի,  
մերկացրած մարմինը պուրպուր,  
պարելով կրակե մի պար,  
կոտրելով շարժումներն իր համառ՝  
մոտեցավ մահարույր սեղանին  
ու ծնկեց հանդարտիկ ու խաղաղ.  
- Արյունն իմ արևին մենակ,-  
ու հանգան աչքերն արեգակ:

Երգում էր ծերունին այն կույր,  
հոսում էին արցունքները տաք,  
արևը մարել էր վաղուց,  
արևը՝ կրակե մի կատակ,  
և այս երգը մաքուր ու պարզ  
երգում էր ծերունին կույր  
օրերի մասին այն հնարույր  
և սիրո մասին մեզ օտար:

-Ե-

...Իսկ Տրդատը երկու վայրենի ցովերի եղջյուրները  
մի ձեռքով բռնելով պոկեց և վիզը ոլորելով շախօշախեց:

Մովսես Խորենացի

### Վրքաների աղորքը

Նստած էր Տրդատը սիրակեզ,  
կարմիր ծիրանին ուսերին,  
թռչում էին մտքերը անտես  
հեռու, հեռավոր օրերի,  
շուրջը՝ դեմքեր ծպտյալ,  
քահանա, տանուտեր ու ռամիկ,  
բոլորը դժույն ու փակ  
սպասում էին Տրդատի խոսքին:

Վերիուշ էր, թե վայրի մի բնազդ  
(սիրտը սեղմվում էր ցավից),  
մարմրած էր շուրջն ամեն բան,  
դավերը նյութվում էին հեռվից,  
չկար կրակը խոսքի,  
չկար քանավեճ ու կրիվ,  
մտքերը բոլորի խոփիվ,  
շարժումները՝ լուս ու թաքուն:

Իջնում է զահից արքան,  
ծիրանին թափելով գահին,

դիզվում է կարմիր ծիրանին,  
փրփրում է իբրև գիճի,  
իշնում է Տրդատը դանդաղ  
և կանգնում փառահեղ ու պիրկ,  
քահանան գլուխը խոնարհում,  
սպասում է նրա խոսքին:

- Քանդեցեք մեհյաններն հեթանոս,  
ավերեք բոլորը իհմքից,  
թող կանգնեն նրանց տեղն իհմա  
վանքերը սևատաշ ու պիճո,  
և քողեք միայն այնտեղ  
Գառն տաճարը հեթանոս,  
որպես անցյալի հիշատակ  
և որպես արքային հովանոց:

Ժպտում է քահանան թաքուն,  
ժպտում է, ծպտվում իր մեջ,  
խնդում է Տրդատը անփոյթ,  
հոսում է արյունն անշեջ,  
շուկը հոսում է դանդաղ,  
շարժումը դառնում է ընդոստ,  
թնդում է պալատը հանկարծ՝  
բռնված հավատի խոսրով:

- Արքային հաղթանակ ու փառք:  
- Արքային զորավիզ կյանք:  
- Թող հավերժ հիշվի անունդ,  
շնջում է քահանան ծպտյալ:  
Խնդում է Տրդատը հաղթական,  
լցվում են աչքերը խինդով,  
ու նորից մտքերը դանդաղ  
հոսում են առաջվա հունով:

- Կմնա տաճարն այս վեհաշուր,  
որպես իին փառքերի նշան,  
օրերը կրոչեն անշուր,  
օրերն այս և բարի, և չար:

**Կկանգնեն տաճարին զուգակից**

վանքերը սրբազործ ու բաց,  
որպես մեր օրերի բախիծ,  
որպես աղոքքը մեր սրբված:

- Բայց եթե օրերում հեռավոր  
ավերվեն վանքերն աղոքի,-  
կարկանց լեզուն արքայի,  
բառերը բափվեցին շփոք,  
քահանան խորամանկ ու լուս  
հսկում էր բառերին բափվող,  
սողում էին աչքերը նրա մուք,  
հետևում արքային խորհող:

- Թող կանգնեն տաճարին զուգակից  
բարձրաբերձ վանքեր սևատաշ,  
սևատաշ վանքեր նորաստեղծ  
թող կանգնեն ի տես աշխարհի,  
մեր սերը, սերը Միհրի  
թող դառնա ջերմեռանդ աղոքք,  
այս է խորհուրդն արքայի,  
ի սեր Հիսուսի, ամեն:

-Զ-

**Մեռած բռչուն**

Դա՛ր իմ, քաղցրիկ դա՛ր իմ,  
իմ ապավեն, իմ սո՞ւն,  
սրբազն իմ աղբյուր,  
իմ լուս, իմ հույս ու քույր,  
պահպանիր այս մեկին,  
այս միակին անբույն,  
պահպանիր դու թաքուն,  
դա՛ր իմ, քաղցրիկ դար իմ:

Ինչպես կույր մի թռչուն,  
կորցրած երամ ու բույն,  
կծկվել է, ահա,  
ավերակդ անտուն,  
կորցրած երամ ու թն,  
կորցրած ընկեր ու հույս,  
մենուքյան մեջ անհույս  
կծկվել է անբույն:

Եվ վաղվաղիկ կարոտ,  
և վաղվաղիկ շողեր,  
ամենքն անցել անհետ,  
կծկվել են անտեր,  
սնիր կաթով քո լոյս,  
դա՛ր իմ, քաղցրիկ դա՛ր իմ,  
իմ ապավեն ու տուն,  
սրբազն իմ աղբյուր:

Քո անցյալի բախտից  
և անցյալից անտուն,  
և ավերված բախտից  
մնացել է մի տուն,  
ուժ տուր քոյլ թներին,  
լոյս տուր աշքին խավար,  
իմ ապավեն, իմ հույս,  
իմ անցյալի ավար:

Դա՛ր իմ, քաղցրիկ դա՛ր իմ,  
իմ ապավեն, իմ տուն,  
սրբազն իմ աղբյուր,  
իմ լույս, իմ հույս ու քոյլ,  
պահպանիր այս մեկին,  
այս միակին անբույն,  
պահպանիր դու թաքուն,  
դա՛ր իմ, քաղցրիկ դա՛ր իմ:

## -Ե-

Այս ժամանակները Տրդատը ավարտում է Գառնիի ամրոցի շինուալունը տաշած որձաքար վեմերով, որոնք ագուցված էին երկար գամերով ու կապարով. նրա մեջ շինում է հովանոց՝ արձաններով, սրանչելի դրվագներով և բարձրաքանդակներով, իր Խորովադուխտ քրոջ համար, և նրա վրա գրում է իր հիշատակը հունարեն գրերով:

Մովսես Խորենացի

**Պարում էր, ոչ պար էր, ոչ հուշ,**  
պարում էր մենակ ու քաքուն,  
պարում էր սյուների արանքում,  
քաղելով և երազ, և սեր,  
ուուերը հոսում էին, կրծքերը՝ հասուն նոճեր,  
պարում էր քրմուիին այն պիրկ՝  
ժանյակները սեղմած մերկ մարմնին:

**Տաճարը հրաշեկ բոցով**  
գրկել էր և մարմին, և հուշ,  
պարում էր քրմուիին ջահեկ՝  
հիշելով Վահագնին գոռող,  
լուսերի, կրակի կողքին  
կրծքերը ձգվում էին լուս  
դեպի կրակը կարմիր  
և հեռու արևները կույր:

**Ոստյուն էր, խաղ էր ու շփոք,**  
մատները ձգվում էին հեռու,  
մազերը կանչում էին, փլվում,  
փլվում էին ծնկները ոլոր,  
խշում էր գետը Ազատան,  
բերում էր շշուկ ու ամոք,  
պարում էր քրմուիին մերկ,  
կրծքերից հոսում էր արյուն:

- Նոնենի քանդակեք այնտեղ,  
քարերին այն սառը, կապույտ,  
նուռ ու խաղող ճզմեցեք  
պատերին բարձրանատ ու լերկ...

Չեղքերը հոսում էին տաք,  
աչքերը ալ էին ու բոց,  
ոտքերը պրկվում էին սոսկումով,  
թեքերը՝ տիսրություն գոց,  
պարում էր քրմուիին խելահեղ,  
կրակն ու լույսը պրկված,  
դողում էին սյուները եռանիստ  
կրակից, բոցից ու մարմարից:

- Թող լույսը, արևը, լուսնկան  
գաղտագող մտնեն պալատ...

Պարում էր քրմուիին ջահել,  
մարմինը՝ կրակ ու կատակ,  
մազերը փոփում էին կրծքին,  
մքնեցնում կրակներ ու լույս,  
ու երբ շարտում էր մազերը,  
բացվում էր հրաշեկ արշալույս:

Զարկում էր ճորտն այն մերկ,  
զարկում էր քիվերին մուրճով,  
քիվերին գծվում էին դանդաղ  
նուռն ու խաղողը արևոտ,  
զարկում էր ինչպես լարերին,  
քնարի լարերին ինչպես,  
գծվում էր նուռն ալ կարմիր,  
ճարճրում նուռը բռուր:

- Սյուները թող լինեն պիրկ,  
թող ձգվեն երկրից երկինք...  
Զարկում էր ճորտն այն մերկ,  
զարկում էր քարերին մուրճով,

գծվում էին համառ ու խիստ  
այումները՝ երկնամերձ ու բիրտ,  
գծում էր և սեր, և կարոտ,  
և հոսում քրտինքը տաք,  
խոսում էր այն ճորտը ճապուկ  
իր սիրուց, կարոտից ժլատ:

-Ը-

**Պաշտամունքը չի մեռնում**

Մենք թերթեցինք մեր որք պատմությունը չարքաշ,  
խոնահվեցինք ցավի ու առվի դեմ,  
պատմությունը մեր սուրբ եղավ տխուր մի դաս,  
հալածեցին մեզ միշտ թշնամիներն անդեմ:  
Սովոր ու քաղցր, սակայն, մեզ չընկցեցին երբեք,  
քանզի հավատը մեր եղել է միշտ մեզ հետ:  
Անհաս եղավ նրանց գաղափարը մեր սուրբ,  
ցանկությունները մեր եղան նրանց անհաս,  
ինչ երազել ենք մենք՝ հեռավոր մի կրակ,  
իսկ ինչ ուրիշն առավ, ցնորք էր, լոկ պատրանք:  
Մենք մեզանից քարուն փայփայեցինք հոգում  
մեր կարոտն անզին, մեր երազը անտես:

Մեր թշնամին անդեմ մեզնից մնաց դժգոհ,  
դժգոհ մնաց անզամ դիակներից այն սուրբ,  
որոնց այնքան դաժան հալածեցին ու զոհ՝  
չգտնելով շուրբից մեղաչանքի շշուկ:

Մեր թշնամին մեզնից խեց մարմին ու հուշ  
և խածով անզամ մնաց խեղված մշուշ:

Եվ դարերով տարան, տարան անկուշտ, անվիշտ,  
ինչ կարող էին տարան ու մորթեցին,  
քառատեցին դարեր, անարգեցին անտեր,  
արյուն, ավար, ավեր գումարեցին:

Մեզնից տարան մարմին, մեզնից տարան կարոտ,  
տարան, ինչ որ ունեինք, ու մնացին բոկոտն:

Եվ ով ձեռք է զարկել ժողովրդին խաղաղ  
(վերջին ամենամեծ արհավիրքը վկա),  
գտել է միշտ նաև պարտություն, և մահ,  
և տարիներ երկար մնացել է խավար:

-Թ-

Տրդատը լաւելաց Խոսրովադուխստ քրոջը խորապես ճանաչելով, ենոացրեց նրան պալատից, նրա համար ստեղծելով ամեն հարմարություններ և բարիք:

Խոսրովադուխստ ցավով և տրտմությամբ աշխատում էր վանել իրենից ին ու նոր հերանոս ասովածների երանելի պատկերը, սրողելով գիշերները հերանոս ծեսերի արարողությամբ, իսկ ցերեկները՝ ևս սրեմավորների:

Եվ նա հափշտակությամբ լսում էր ծեր գուսանին, բախժագին խնդրում, որ նա վերապատմի անցյալի՝ քաջ Արտաշեսի, ալանաց դատեր՝ Սարենիկի, արեգակունք Վահագնի, Անահիտի ու Աստիկի հետ կապված գրույցները: Ծեր գուսանի միակ ափփանքը Խոսրովադուխստն էր, անցյալը մտապատկերի մեջ հրդեհի էր մատնված, և որը շանում էր փրկել:

### Տոնախմբություն

Աչքերում՝ խավար ու գիշեր,  
աչքերում՝ զույգ եղներ պարարտ,  
վզներին՝ կարմիր բեիեզներ  
և շուրջը՝ մերկ ճորտեր հազար,  
դիմակներ վագրի ու առյուծի,  
ուսերին ճորտերի՝ ուրար,  
արյունոտ ջահեր բռնած,  
և շուրջը արձաններ բազում՝  
ուսկեալոյլ կրակից բռնված:

Տեսնում էր ծերունին մսովի,  
զարկում էր փանդիոին յոթնաղեղ,  
ելնում էին անցած օրերի  
պատկերները խուռն ու աներեր,

զարկում էր լարերին յոթնաղեղ  
մատներով քարեղեն ու պիրկ,  
լցվում էր զավիրը տաճարի,  
կառքեր՝ կույսերով ոսկեիներ:

Եվ ապա ամքոխը ճեղքելով,  
եղներին իրելով առաջ,  
ապա թե հերթով դասվելով  
քրմերի դասակը սևաչ,  
և ապա օդի մեջ առնելով  
եղներին ստրուկները մերկ,  
կույսերին ոսկեգես, մրահոն,  
առնելով կրկին պարի մեջ,  
շաղելով նարգիզ ու ծորքին,  
օվսաննա, կրակ ու բառաչ,  
հանդեալ խառնիխուռը կարգված  
հանդարտվեց տաճարի առաջ:

Մեծ քուրմը՝ ուսերին վարշամակ,  
կանգնած տաճարի սեմին,  
արյուն ու կարոտ պիտ ներարկի  
Վահագնի, Միհրի անունից,  
և ապա երկու արդճահար՝  
ձեռքերին շամփուր պողպատե,  
պիտի կոսցնեն եղներին  
մեն մենակ, առանց լարի,  
ապա շամփրեն ազդրերը՝  
հանձնելով լափող կրակին:

Եվ հետո բառաչը մարմեց,  
կույսերը դողացին մի պահ,  
ուսերի կարմիր բեիեզը  
քրքուց արյունից ցամքած,  
ու հերթով ձգվելով եղները,  
կազմելով մի կլոր շղա,  
ճակատին արյուն խարանեց  
քրմապետը սառն ու անահ:

Օրինվեց արև և արյուն,  
օրինվեց հավատ ու դաշինք,  
ու նորից ծերունին խռնվեց  
մոռացված օրերի հեռվում:

Տեսնում էր ամենն այս տիրուհին,  
Խոսրովադուխտը՝ մանկան պես նազող,  
հառնում էին աչքերը երազող  
օրերին հեռավոր ու հին,  
մանկան պես ծնկները գրկած,  
կռացած ծերունու առաջ՝  
լսում էր, քայլում էր նրա հետ  
դեպի օրերն այն փառապանձ:

-Ժ-

Թոթափելով փոշին հին օրերի  
և սպիները սուրբ մարմարված,  
վարպետները մեր նոր օրերի  
կանգնեցին հանդեպ ավերակի:

Տապալված քարեր, քարե հատակ,  
սյուներ՝ բերանքսիվայր ընկած անշարժ,  
քանդակակերպ քարեր, վեմեր սրբատաշ  
տեսան՝ ընկած են արևի տակ:

Եվ տեսան նրանք այսպես ընկած  
քարե քանդակներ ու քարե բառ,  
ու տեսան նրանք վարպետներին անցած՝  
կրած որձաքարին խիստ ու համառ:

Եվ անցավ նրանց մտքներով լուս  
և ցավ, և ափսոս, և ավերում,  
և ավերակի դեմ կանգնած քափուր՝  
հիշեցին խոսքն այն հին, քայց իմաստուն:

- Կերտիր քեզ համար բյուր հորինվածք  
և դիր նրանց մեջ ավիշ ու արյուն,

աշխարհում այս ամեն մի կատարյալ շինվածք  
սկիզբն է ավերման:

Եվ տեսնելով նրանց այսպես ընկած,  
սյուներ, խարիսխներ, կամարներ պիրկ,  
վարպետները մեր ցավից կքած՝  
երդվեցին բառեր պարզ, միամիտ:

Եվ թոթափելով փոշին հին օրերի  
և սպիները սուրբ լուս մաքրելով՝  
վարպետները մեր նոր օրերի  
կանգնեցին հանդեպ ավերակի:

Եվ զարկեցին նրանք քարերին պիրկ,  
քարերին այն հին ու հեթանոս,  
վարպետները մեր նոր օրերի  
և ցավով, և բիրս, և մտախոն:

Եվ կերտեցին նրանք մի նոր տաճար,  
նոր և սրբատաշ, բարձրագնա,  
արցանելով գամով օրերն իրար,  
հին օրերի ոիթմը՝ խորքում պահած:

Եվ կերտեցին սիրով ու կարոտով,  
մեր այս օրվա երգի մոլեգնությանը,  
հավատի շենքն իրենց հայտնության  
և հավատն իրենց նոր դաշնության:

Որմնադիրների և ձեր երգը

Ճակատագիր ունի այստեղ ամեն մի քար,  
այստեղ ամեն բեկոր իր կարոտն ունի,  
ամեն մորթված կարոտ, ամեն քար ու շինվածք  
պոկել է մի մարմնից, որն իր երազն ունի:  
Խաչից առաջ այստեղ, այս հին հողում,  
այս սրբատաշ քարի, լեռների մեջ  
իր պատմության, նախնյաց իր անունով,  
և իր տոհմիկ կարոտն ու հույսն ունի:

Դուք, ասպետներ սիրո, գեղեցկուրյան,  
որմնադիրներ հեռու, անէաշած,  
ձեր կարտի տեսրով, ահա, նորից  
կանգնած է տաճարն այն՝ կապույտ բազալտ:

Կանգնած է տաճարն այն, որի առաջ  
երգը հոսում էր, ցավ էր, արյուն էր,  
և գուսանները մեր ինքնամոռաց  
երգում էին կարոտ, գինի ու սեր:

Որի առաջ մեր կույսները լույս,  
հոգում՝ կարտոր լուռ Նանեի,  
պարում էին, սերը թաղած խորքում,  
և սրբում էին գուսպ կարոտից:

Կանգնած է տաճարն այն որձաքար,  
որին հորդաները վայրի ու չար,  
սմբակների տակ՝ մահ ու արյուն,  
աշըերում՝ խավար ու հոգում՝ մուր,  
ձիերի բաշին դրած դագաղ,  
տիրելու տենդով ու ավերման  
եկան հողմի պես, բայց և անցան:

Մնացիք լոկ դուր, վարպետներ սուրբ,  
ձեր ուժի, սիրո, հավատի հետ,  
և ավերակը՝ դարեր լրված,  
ընձյուղվեց նորից որպես փյունիկ:

1974-75 թ.

## ԳԱՅՍՆԵ

Երեկ, երք նորից այցի գնացի  
Սուրբ Էջմիածնի լուռ հոգիներին,  
երք լուրջան մեջ ձեռքս պարզեցի  
բակում ամփոփված հիշատակներին,  
իմ դեմ վեր հառնեց Խենքը տառապյալ,  
միշտ զարմանալի և աստվածային  
զորավիզը մեր՝ հզոր ֆիդայի  
Սմբատի հոգին՝ հավերժող, անքառ:  
Դու՝ ծիծաղ բախտի և անհոգ երազ,  
դու՝ ճակատագիր թշնամու ձեռքով,  
ո՞վ է իմացել, որ զորավարի աճյունը համեստ,  
իսկ թշնամունը տիրակալ լինի:  
Եվ լուս ընթացա դարերի խորքը,  
երկմիտ Տրդատի հայրենիքն անծայր,  
որից պահպանվեց անունն ու գործը,  
իսկ ինքը կորավ բոհեմում խավար:

-Ա-

Լուրջուն էր խիստ վանքի գավիթում,  
գարնան համերգն էր ամենուր լալիս,  
վանականների հատուկնենտ խոսքը  
քամու բերանով երթեմն գալիս  
ու մահանում էր լուրջան մեջ խոր:  
Ու իմ հայացքը՝ շիրմաթմբերին,  
շուրջս ճախրում էր Գայանեն այն սուրբ,  
հայացքս զամվել էր Սմբատի շիրմին,  
ու խորհում էի մենակ, ինքնամփոն:  
Թող որ սուրբ մնա Գայանեն՝ սուրբ մայր,  
սրբությունները ինձ չեն խանգարում,  
բայց ինչպես եղավ, որ Տրդատ արքան,  
լինելով արքա և տեր զորքերի,  
մատնվեց վախի, ելավ ինքն իր դեմ  
և հմայքների ծովն ընկնելով՝  
երկիրը մատնեց նոր աստվածներին:

Այդ ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս այդ եղավ,  
երբ սրից նրա պարսիկն էր դոդում,  
երբ Հռոմը բիրտ անցել էր խոսքին փաղաքշական,  
հանկարծ Հռոմից խուժեց սարսափով  
հույյըք կույսերի և աղոքքներով,  
երեսուն և յոթ աղոքքներով սուրբ  
գրավեց մեկեն Հայաստան աշխարհ:  
Սուտ է փառքը մեծ, հզոր Տրդատի,  
նա՝ մեկի կողմից հորինված կերպար,  
ո՞վ է տեսել, որ երկարն աղորի,  
և կամ կրակին աղոքքը լսիի:  
Շուրջս սավառնում, ճախրում էր հանդարս  
Գայանեն՝ մարմին ու խոսքեր հազած,  
իսկ իմ հայացքը Մմբատի շիրմին՝  
հայրենի կապույտ բազալտը գրկած:

-Բ-

Տրդատ և աշխեն  
Ասա ինձ, Տրդա՛տ,  
դու երբեկցե սիրե՞լ ես կնոշ,  
թեկուզ այսպիսի,  
որ խենեշի պես  
մերկ ծծերին ձույլ  
սեղմել է արծար  
ժանյակը ամուր:  
Այն կինը պազշոտ,  
որ հուռուքըն առած՝  
հմայում է քեզ,  
տես, թե ինչպես է գնում ու գալիս,  
ինչպես է ձկվում,  
բախտիս վրա է, ասես, նա լալիս,  
նա ինձ է նայում վիշապի նման,  
բայց երբ դառնում է քո հայացքն առնում,  
փոխվում է այնպես,  
այնքան մեղմանում...

Իսկ այն մյուսը,  
մաքրենին այն ձյուն,  
ճեփ-ճերմակ, ոյութող,  
անահիտատիպ, բայց ավելի մեղմ,  
որ լուս կանգնել է կրակի մոտ հետո...  
Ասա ինձ, Տրդա՛տ,  
ասա հենց այնպես,  
ասա, որ հոգիս միայն երազի,  
ասա, որ միայն Վահագնից հետոն  
դաշնամ զոհը քո:  
Հազար սորուկներ ու հարձեր ընտիր  
գնում, գալիս են՝ իրենց իրանից  
ձույլ, իրանից պիրկ սափորներ գրկած,  
ուր զինին սևաչ եռում է անհույս,  
հարձերի անփույթ կարոտներն առած...  
Իսկ գործակալներն ու նախարարները,  
իրենց ոսկերիզ բարձերին թիկնած,  
հեշտ ու զինովցած,  
իսկ սորուկները մորեմերկ, անկիրը,  
արձանների պես ջահերը բռնած,  
շինականները՝ Անահիտ աստծու գուլսը ոսկյա  
պահած կրակների դեմ, պիրկ մկաններով  
երկինք բարձրացրած,  
օվաննաների և պսակների, և մեկնների,  
և զինու շնչից արդեն բորբոքված...  
Տրդատն է նատած՝ ոտքերի տակ բազ,  
լուսանը՝ բազին զլսահակ, խոնարի,  
արքան է տրտում,  
արքայավայել ծիրանին նետած,  
մերկ, ինչպես ցալը, մեղկ, ինչպես ոգին...  
Աշխենը զինուց նվազել է քիչ  
(մարգարիտներ են բափվում երկնքից),  
Աշխենը Անահիտ դիցուհու նման՝  
Աստղիկի տարփոտ շրջազգեստը հազած,  
Տրդատ արքան՝ վեհերոտ, կրած...

- Եշխանությունը սև է իմ գլխին,  
և նախնիների ծիրանին առած նախարարները,  
և Լուսավորչի կանթեղը, որ արդ  
հունական լույս է վառում մեր հոգում,  
և այն կույսերը երեսուն և յոթ,  
որ փախուստ տվել բիրտ հոռմեացիներից,  
եկել են հայոց երկիրը փափուկ:

Եկել, ապրում են հնձաններում մեր,  
ուզում են մտնել հոգիներն արդար,  
ամեն ինչ պաշտող Հայաստան աշխարհ,  
բայց ինքդ ...  
Մի՞թե կրոն չէ Անահիտը մեծ,  
և կամ Վահագնը,  
որի ծնունդով «Երկներ երկին և երկիր...»

Նոր աստվածների քաղցով լի աշխարհ,  
սորուկներ ենք մենք նորի, միշտ նորի,  
և օտարամոլ, և իրար ատող...  
Հզոր Տիգրանը ընկավ մեր սրից,  
Արշակը, Պապը...  
Ո՞վ խույս կտա իր իսկ դաշույնից:

-Գ-

Այդ ժամանակներում պատահեց, որ Գիտլենտիանոս կայսրը կամեցավ իր համար կին առնել, և այնուհետև իր տերության բոլոր կողմերը սկսեցին շրջել նմանահան ճարտար նկարչներ և դեմքի գեղեցկությունը, մրազարդ հոնքերը ճշգրտորեն, հասակին հարմար, համապատասխան ներկերով նկարում էին տախտակների վրա, որպեսզի նեմ դիմաց ցույց տան քաջավորին՝ ի հաճույս նրա:

Այդ ժամանակ գալով Հռոմ քաղաքը, գտան կույսերի մի արգելավանք, որոնք լեռներում մեկուսացած, բուսակեր, ժումկալ, պարկեշտ և սրբանվեր կանայք էին, քրիստոնեական հավատքով լի, որոնք գիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ փառավորությամբ ու օրինությամբ իրենց աղոքքը արժանավորապես դեալի վեր՝ առ Աստված էին ուղղում:

Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան աստվածապաշտ մարդու դրւատրերից՝ քագավորական տոհմից, որի անունն էր Հոփիսիմե:

Ազարանգեղոս

-Գ-

Գայանե

- Երդվում ենք Հռոմի սահմանով անձայր և հավատով մեր ինքնազնության, չքանա՞ղ Հոփիսիմեն, քո մարգարտափայլ սիրով թրբուն և խոսքով շխտակ՝ չենք դավաճանի ուխտին մեր միակ, կամավոր տված մեր խոստումներին, մեր մարմինը ձյուն, մեր հավատը պարզ զոհ է լինելու մեր աստվածության:  
Տե՛ս, փուշ է պատել ոտքերիդ բորիկ, ուրկից հավատիդ արյունն է կաթում, Հռոմը չար է, Հայաստանը՝ նենա, բայց մենք մեր ուխտի հավատն ենք պահում, ես վախենում եմ քեզ համար, իմ լո՛ւյս, ես վախենում եմ առավել քեզնից, քո հավատից սուրբ, չքանա՞ղ Հոփիսիմեն, ես վախենում եմ քո իսկ հավատից:

- Ինձ չեմ գերել դեռ, մայր ամենասուրբ, քո բարթիչներից արցունքը վանիր, քո հավատով է հավատս պահիր, արդ, ես երդվում եմ իմ իսկ խորանից...

Ուզում եմ ապրել ազատից ազատ, և իմ հավատին լուր հավատարիմ, իմ մեջ չի խոսում այս ամենից զատ ոչ Աստված ինքը, ոչ այլ մտերիմ...

Աստված տվեց ինձ ծնունդն իմ չքնաղ  
և իմանալու արվեսոր կյանքի,  
թող օրինվի նա, բայց չէ որ, ավաղ,  
ես զոհն եմ միայն իմ իսկ պատկերի:  
Այն, ինչ իմն է սոսկ և միայն հավերժ,  
թող որ զոհ դառնա անիմանալի,  
նմանությամբ է կյանքը հավերժող,  
և կյանքը ինքն է գոյի բանալին:  
- Զքնար իմ դուստր, Հայաստանը ողջ  
ոտքի է եկել օրենքներով խիստ,  
Դիոկրետիանոս կայսրի խորով,  
որ մեզ՝ որպես հարձ և կամ թե  
որպես գերված չքնաղ իր,  
ընծա մատուցի գոռող Տրդատին:

Նա հավատի մեջ անհավատ է մեծ  
և գոռող, ինչպես Վահագնը հզոր,  
Աստղիկի նման վավաշոտ է խիստ,  
Անահիտի պես մայրություն իսպառ,  
և նրա աչքը նիզակի նման  
թու պատկերին է հետևում անվերջ:

Երեսուն և յոթ կույսերը այն ջինջ,  
աղավնու պես երեսունյոթ,  
կտուցներից աղոքը կաթող  
և ափերիմ՝ ոսկյա ցորյան,  
հնձաններում շշուկ-շշուկ  
ապրում էին կարոտն իրենց  
և աղոքքը աստվածային:  
Բայց հավատն էլ ունի սահման,  
որ գծվում է իր իսկ արյամք,  
մինչև հոգին զոհ չդառնա,  
հաճո չէ դեռ աստվածներին:

-Ե-

Արդ՝ մինչդեռ սուրբ Հոփիսիմեն այս ամեն աղոքները  
Վստծուն էր մատուցում, եկավ Տրդատ թագավորը,  
մտավ սենյակից ներս, որ նրան արգելափակել էին:  
Ազարանգեղոս

Հոփիսիմե՛ չքնաղ,

այդ ի՞նչ ես այդպես մեղմիվ շշնջում,

այդ ո՞ւմ ես կանչում:

Ինչո՞ւ է դեմքդ այդպես դալկանում,  
երբ դառնում ես ինձ:

Զգիր քեզանից կասկած ու ամոր,

ես քեզ կտանեմ,

կպահեմ ինձ մոտ,

կլինես դու իմ կինը առաջին,

զիտեմ չարության ձևերը բոլոր,

թույլ չեմ տա, որ քեզ երբեւ դավեն:

Մարգարտե զահիս կլինես դու մոտ,  
ոտքերիդ ոսկե շղթա կզարկեմ,

թե կամենում ես Վստծուն պատվել:

Վզիդ երկայնքով հուսութք կշարեմ,  
կտամ ամեն բան, ինչ հաճո է շատ,  
սակայն մի փորձիր արքայիդ խարել:

Նատիր, իմ չքնանց,

նստիր, իմ ընդո՞ւստ,

պատմիր, ինչ որ քեզ հաճելի է խիստ:

- Տրդատ, ազատիր ինձ խկույն ևեթ,  
եթե ուզում ես Վստծուց ներվել,

թող տուր հեռանամ, բաց դուռը այս փակ,  
ուզում եմ ապրել ինքնամփոփ, մենակ:

-Այդ ի՞նչ հավատ է այս փափուկ մարմնում,  
զինվորները իմ արի են, հպատ,

բայց մահվան պահին ես շատ եմ լսել  
նրանց հառաջի խորքերը վհատ:

Աստված բարի է և շռայլ նույնքան,  
նա քեզ տվել է ամեն մի շնորհ,  
ոտքերդ մանրիկ, սրունքներդ գիրգ,  
մեջքդ թևասահ և շրբներդ պիրկ:

Թող, իմ Հոփափիմեն,  
բող ամենն այդ չար,  
մայրությամբ եղիր

Աստծուն հավասար:

Ես էլ կաղոթեմ Աստծուն քեզ համար,  
Որ յոթ մանկիկ տաս դու ինձ ոսկեծամ:  
- Տրդա՛տ, կույր ես դու, թեպետ և՝ արքա,  
ես հավատիս մեջ՝ քեզանից հզոր,  
երեւ չես կարող ներել աղջկա,  
հապա ինչո՞ւ ես բարեառում իզուր:

Զայրացավ Տրդատն ու իշավ թախտից,  
զայրութը բռնեց սենյակը ամբողջ,  
պահակներն այնժամ իրար խառնվեցին,  
ու թե հետևենք պատմիչին մեր հին,  
կոիվ սկսվեց կույսի և Տրդատ արքայի միջև:

Մինչն ուշ գիշեր կովեցին նրանք,  
զարկեցին նրանք մինչն ուշ գիշեր,  
ու թե հետևենք պատմիչին մեր հին,  
կոիվ էր Աստծո- կոսպաշտության:

Ո՞վ հզոր Վահագն, Նանե և կամ Տիր,  
հին Բագարանի աստվածներ ընտիր,  
փոշի էր մաղվում հավատին ձեր ծեր,  
փոշի էր մաղվում, քանզի ամբոխը,  
որ ընդունակ է հավատ ընդունել,  
ընդունակ է և ժխտել հավատն իր:

Եվ կրկնվում է պատմությունը հին,  
ով ձեռք է զարկում նոր աստվածներին,  
շնչում, ինչ նախնյանց ձեռքով է հաստված,  
նրան չի փրկում և ոչ մի աստված:

Ընկած է Տրդատն արճագույն բարձին,  
ընկած խորհում է և չունի հնար,  
զլասպերևում Հոփափիմեն չքնաղ  
կանգնած նայում է ու չի հագենում:

Ծարավ է Աստծուն զոհ մատուցելու,  
սրանից մեծ զոհ, ավելի ավար,  
տառապանքն է սուրբ ոտքերին փարվել,  
Հոփափիմեն ինքն էլ չունի այլ հնար:

Լոռությունն է չար հոսում ինքն իրեն,  
երկուսն էլ մերկ են, երկուսն էլ ծարավ,  
մեկն անզորության բարձին է թիկնել,  
մեկն՝ աստվածների քմայրին խաղաղ:

- Հոփափիմեն, դու կին,  
խորիիք, լավ խորիիք,  
զոհելու եմ քեզ Անահիտ աստծուն,  
բայց ներս նայիր, որ բացել եմ քեզ,  
նա չի կամենում, ես չեմ կամենում:

- Տրդա՛տ, մի փորձիր, բող որ հեռանամ,  
ես կին չեմ դառնա անհավատության,  
որքան բացում ես կիրքդ չարության,  
սերն է բողբոջում իմ աստվածության:

- Սա կին չէ, աստվա՛ծ, սատանա է սա,  
փորձության համար իշած մեր երկիր,  
օգնիր, Վահա՛գն, օգնիր ինձ, Աստղիկ,  
օգնեցեք, մի դեղ ուղարկեք երկնից:

Շրբունքներն արնոտ սեղմվել իրար,  
Տրդատը ցավից շրբներն է կրծում,  
արնոտ աղո՞ք է, թե՞ ստորացում,  
ի՞նչ երկվություն է, այս ի՞նչ հաշտություն:

- Պահակներ, կանչեք սուրբ Գայանեին,  
երեւ հաճն չէ վայրի զոհը այս,

ասեք, թող խորիի, խոսի սրա հետ,  
և խոսքը նրանց կլինի վերջին:

Փակ դրան եռև կանգնել է անլուր  
Գ-այանեն՝ անցած հող, սուրբ սահմանից,  
հայացը՝ երկինք, ձեռքերմ՝ առ Աստված,  
բաւեր են թափվում զունատ շուրթերից:

- Հոփիփիմն, իմ սան,  
հիշիր, իմ չքնան,  
հիշիր երդումը մեր աղոթահունչ,  
վերջին փորձության ժամը հասել է,  
հասել է ժամը վերջին թողության:  
Արյուն կրափվի,  
և արյունն այդ սուրբ  
հաճու է Աստծու որբերին այս քար,  
քեզնով է Աստված արյուն ընդունում,  
իրքն հաշտության միակ սուրբ նշխար:  
Դու ես լինելու վերջին զոհը մեծ,  
և երկիրը այս կրառնա խոնարի,  
զոհիր քեզ, ահա, այդպես է ուզում  
Սուրբ Երրորդության մեծ զոհը արդար:

Տրդատը ոստնեց՝ իրեն կորցրած,  
ինչոր բան այնպիս խարարվեց հոգում,  
Տրդատը ձեռնեց կուրծքը Հոփիփիմեի  
ու պատառուեց շապիկը արդար:

Եվ իհմա արդեն մերկ, ամոքաբաց՝  
կանգնած է կույսը անքեն, անխռով,  
շուրթերը արդեն լույսից կարկամած,  
վերացած արդեն, արդեն վեհացած:

Եվ ինչպես ինքը՝ պատմիչն է ասում,  
ներս խուժեց իսկույն ամբոխը վայրի,  
ձանկեցին կույսի մերկությունը սուրբ,  
քարկոծեցին սուրբ Հոփիփիմեին:

Եվ արյուն կաթեց, և հայացքը իր  
երկինք համբառնող՝ մեղմությամբ բարի,  
և մարմինը սուրբ՝ ցավից խոնջացած,  
անլուր, անբողոք հանձնեցին հողին:

Եվ նրա կողքին ընկած Գ-այանեն՝  
երեսուն և յոթ ցավը իր հոգում,  
երեսուն և յոթ թիվը իր հոգում,  
ամենից խաղաղ աչքերը փակեց:

Միայն Տրդատն էր կանգնած զլսահակ  
ու չէր ընկալում, ու չէր ընկալում,  
արդյոք եղե՞լ է ինքն հավատարիմ,  
ժողովուրդը իր եղե՞լ է հապատ:

Արդյոք պաշտե՞լ է ժողովուրդը իր,  
ունեցե՞լ է նա հավատի սեղան,  
և զոհասեղան ունեցե՞լ է նա,  
թե՞ որովայնի սեղան է եղել:

-Զ-

Աշխեն

Անահին, սուր ինձ կարողություն,  
հաշտ լինելու քեզ և ինձ հետ,  
չտարութերվելու,  
մեկ սիրո համար արյուն թափելու,  
այսպես ծնրադիր զոհ պահպանվելու,  
շիմադրելու, չապականվելու...  
Տրդատը զոհ է միայն երկվության,  
երկվության զոհ է Հայաստանը ողջ,  
միաստվածության արշավը, ահա,  
քրմերի սեղանը իհմնահատակ արեց,  
ժողովուրդը ողջ մնաց անզուխ,  
քառսն ինքը գլուխ բարձրացրեց,  
քանդվում են, ահա, մեհյաններն ամեն,

և փոխարենը,  
Անահի՞ն, ների՞ր,  
քո ոսկեհանդես արձանի տեղակ  
օտար աստվածն է պատվանդան ելնում:  
Բազմությունը չար՝ կորցրած հավատ,  
լուտանք է բափում քո պաշտամունքին,  
իսկ ե՞րբ չի բափել,  
այդ ե՞րբ մեր հոգին ազատ է եղել,  
ե՞րբ չենք խացել ուրիշի փառքից,  
ե՞րբ չենք նզովել, խոռվել մեզնից:  
Ամրոխը վայրի ելել ափերից  
տաճում է իր հետ, ինչ իրենն է, իին,  
տաճում է արյան ու ավերումի  
դարերով պաշտված մատյանները սուրբ:  
Վյդ ո՞ւմ են պաշտել ու չեն հալածել,  
ո՞ւմ են բարձրացրել ու չեն գցել ցած,  
ցածում այդ ո՞ւմ են հավերժ ողորմել,  
ո՞ւմ են, որ սիրու չեն ապականել:  
Ապակինել են աննյութին, ոչնչին,  
նրա համար են եղել աննկուն,  
նրա համար են բափել քեն,  
նախանձ, նրան են սիրել,  
նա է սկզբունք, դավանանք ու սեր...  
Ների՞ր, Անահի՞ն,  
չեմ կարող բաղել մտածմունքը իմ,  
չեմ կարող բաղել, բաղվել ինքս իմ մեջ,  
Հայաստանն ամբողջ՝ առնախանձ մի ծով,  
Հայաստանը ողջ՝ ափից ափ ելման,  
Հայաստանն ինքը իր իսկ երախով  
կրակ է բափում մահի, ավերման:  
Տրդատը չկա, քանզի իր մեղքով,  
իր ձեռքով կուեց շղթաները իր,  
ապիկարության երեսն է արմատ,  
և պալատն ինքը տոփանք է զազիր:

Ու թե արքան է դառնում խաղալիք,  
և կիրքը ինքը՝ գայիսոն ու քագ  
միապետության աստվածն է գալիս,  
որպես իրավունք և սահման, և կարգ:  
Միահեծանության աստվածն է գալիս,  
մաքրելու աղետն ու աղարտը մեր պիղծ,  
ոչինչ չի մնա մեր աստվածներից,  
մեր տառապանքից ոչինչ չի մնա:  
Ցավը կլինի կրկնակի հզոր,  
ատելությունը՝ բանձրացած կրկին,  
գեղեցկությունը կփառաբանվի  
և հավերժահոս մեր հպարտ ողին:

**ՀՈՒԴԱՅԱՎԱՐ**

(Պամֆլետ)

**Փողեր հնչեցին, շեփորներ ցնցող,  
ամրոխն է, ահա, հածում փողոցում,  
մութ ճշմարտության մունետիկները  
գայլի ժանիքն են արևով օծում...**

**Ամրոխն է ոռնում ցալից խելահեղ,  
վրեժի, արյան բոցը շուրբերին,  
մարգարեների քղամիդ հազած  
սատանաներն են քայլում հարթակում...**

**- Ձեզ ազատություն և մեծ հայրենիք,-  
կիկոպի ձայնն է լսվում զորավոր,-  
կվշշենք ամեն խորհուրդ ու տանիք,  
մենք չենք հանդուրժի դրոշներ կարմիր...**

**Խարել են նրանք մեզ՝ ժողովրդիս,  
մատնել են հողը քշնամուն վայրագ,  
տվեք երաշխիք, և մենք շուտափույթ  
կստեղծենք ամուր երկարյա բանակ...**

**Կորչեն աշխատանք, զգացմունքայնություն,  
մենք Տիգրան Մեծի զավակներն ենք մեծ,  
սոսկ միասնություն և սոսկ երաշխիք,  
և դուք կունենաք ծովից ծով երկիր...**

**Լսվում են ձայներ նվազկոտ ու զիյ,  
հարթակ են ելնում զգացումից այրված,  
իին կարգ ու սարքին, օրենքին իլու<sup>1</sup>  
բանաստեղծներ ու զիտուններ միշտ քաջ...**

**Եվ երգահան մի կորբայի տեսքով,  
իր երգերի պես առանց ամորձի,  
պետական դափնին ու փառքը պահած,  
խոսում է ընդդեմ փառք ու օրենքի...**

**Ամրոխի վրա թևածում է լուռ  
երկիր նախրցու պատկերը գունատ,  
խոլ իրմշողով հարթակ են ելնում  
ցուցարարները՝ ՊԱԿ-ով հաստատված...**

**Լսվում է, ահա, մի ձայն աղեխարշ,  
կանացի մի ձայն եկաէջվելով,  
նամակն է կարդում հիվանդ պոետի,  
վերջին խոսքը իր՝ անկողնում գրված...**

**Հիսուն տարիներ օրենքին գերի  
փառաբանել է կոմունիստներին,  
և, ահա, սովոր գուած այրն այս հեզ  
ոչնչացնում է նմանակներին...**

**- Ժողովուրդ, լսեք ձայնն իմ կերկերուն,  
քանզի գրում եմ անկողնուն գամված,  
փառք, ավյուն ու սեր ձեզ՝ մարտիկներիդ,  
որ փշրել եք անցյալը փտած...**

**Ու ծառս է լինում ամբոխը արբած,  
ձգվում են հարթակ ազրավ, բորենի,  
և սոխակներ են հայտնվում մեկ-մեկ,  
իրենց երազից արթնացած հանկարծ...**

**Եվ ձայների մեջ այլազան ու խուռ  
ձգվում է երկինք դրոշ՝ երեք գույն,  
իին կարգերի դեմ մարտնչած մի ուժ  
հարթակ է ելնում հպարտ, հանդուզն...**

**Քառասունամյա այրը տառապած,  
հպարտ ծածանվող դրոշի ներքո  
սուրբ անկախության ներքող է կարդում  
ընդեմ բռնության ու վայրագության...**

**Ինչպես փարախում գայլ տեսած հոտը,  
սատանաները խառնվում են իրար,  
մայր սատանային հասնում է բոքը,  
ճտերը բոլոր նսոում են դատի...**

- Փարախ է մտել մեզ հայտնի մի գայլ  
և հոտը մեր սուրբ փորձում է տանել,  
պետք է անհապաղ զանգել ուր հարկն է,  
որ շարժենք մենք զայրույթը վերին...

Բոլորը՝ ընդդեմ սուրբ անկախության,  
դատապարտում են փարախ մտնողին,  
և շղթայակապ, առանց դատ ու նիստ  
աքսորում նրան Հարշատան երկիր...

Ու կրկին, ելի ճգլում են անվերջ  
ցուցակագրված այրերը մեկ-մեկ  
դեպի եռագույն դրոշը հպարտ,  
որ նոր էին խլել գայլի ճանկերից...

Եվ տկարամիտ մի շեկլիկ գաճաճ  
պատմում է զարմից Դավթի, Խանդուրի,  
Թալինի տիսուր դպրոցն ավարտած,  
քաղաքի հետին խողերում ապրող...

Գինու և օղու թմրությամբ արքած,  
խումարությունը դարձրած հեզություն,  
թորովում է նա բառեր թլպատված  
և խաչակնքում հանուն Հոր, Որդու...

Մի ետին գրչակ բարբառով գեղջուկ  
սասանում է իր գոյության ոխը,  
արձարաններում կրթված, բրծված,  
ոգեկոչում է մթնած ամբոխին...

Եվ ձայնակցում է նրան անհապաղ  
սովահարության մատնված մի նեռ,  
ոջլոտ ու օջլոտ հագուստը պարզած,  
որպես դրոշակ և կամ խիղճ անմեղ...

Շեղ են աչքերը, դիվահար ու մութ,  
խոսում է միայն պատվիրաններից,  
շարչարանքներից անմեղ Հիսուսի  
և հանգանակի կոչում այրերին...

- Փակել,- լսվում է կիկլոպի ձայնը,-  
փակել և դպրոց, և գործարաններ,  
այրել, ինչ հնի արյամբ է հաստված,  
և մշակույթի օջախներն ամեն...

Եկեք հրապարակ, բողեք տուն ու տեղ,  
գամեք դրները այլ աստվածների,  
չկա ազգություն, չկա քշնամի,  
քաղցն է քշնամին ազգությունների...

Ղարաբաղն, այո, մերն է, կլինի,  
քաջանց սահմանը աղեղն ու նետն է,  
վերջ տվեք խոսքին զգացմունքների,  
քշնամի չկա, դա հին պատրանք է...

Եվ ամբոխվում է հարթակ ու տանիք,  
զալարվում ցալից հրապարակը,  
իժերի նման վխտում, մոլեզնում  
պոռնիկներն հեշտոտ ու լրտեսները...

Խոնվել են ի մի միամիտ ու չար,  
պարզամիտները ելել են հանդես,  
փառամոնների տաք մարմիններին  
բարձրախոսներն են բացվել վերքի պես...

\*\*\*

Ես՝ խորիրդային բանտ, բանակ անցած,  
կանգնած եմ, ահա, հրապարակում,  
գիտեմ, թե ինչ են նրանք ճռվողում,  
ով է հանդեսի քավոր-թամադան...

Արևելցի եմ ցեղով զտարյուն,  
խելահեղների տոհմից խսկական,  
փաստարդերս այդ են վկայում  
մեծ խորիրդային բանակում կնքված...

Անցել եմ երկրի դժոխքով հաստված,  
օրինական է ամեն փաստաբուղք,

ճշմարտությունը իմ աչքերի մեջ  
նայում է ուրիշ, ուրիշ սարսափով...

Տեսել եմ ազնիվ, միմու ու կապիկ,  
լրտես, խելագար, փառամոյ, պոռնիկ,  
ինձ քաջ ծանոք են խաղերը մարդկանց,  
խորհրդայինը՝ ամենից մոտիկ...

Լիրիկականը, քննուշը, վեհը  
վաղուց եմ զատել էպիկականից,  
մի ամրող սերունդ՝ Չարենցից հետո,  
մշակվեց, կրթվեց ոգով այդ անրիծ...

Չարի արվեստը տեսել եմ վաղուց,  
ծանոք են վաղուց պոետն ու մուսան,  
եղել եմ այնտեղ, ուր պոետները  
մրցասպարեզում եղել են գուսան...

Մեջլիսում եմ եղել իրական,  
ուր վաճառվում են մարմին ու արվեստ,  
յորանասուն ու երեք տարեկան  
պոռնիկներին գիտեմ խսկական...

Քամելիոնների սուրբ դասից զատկած  
այդ ընտիր ցեղին ես գիտեմ անգիր,  
հարրակ է ենում մեկը նրանցից՝  
նոր կուսակցության լույսով ողողված...

Կոկորդն է մաքրում նա հանդիսավոր,  
ձևոքերն ամորի վրա խաչ դրած,  
մորուքավորն այդ՝ մեծ արձակագիր,  
խոսում է՝ իբրև նոր ճամփա ելած...

Ապրել է կյանքում մկան պես հլու,  
կրել ցորենը հսկա ամբարից,  
կոմունիստ էր նա, խմբագիր, վարիչ,  
խոսում է արդեն իբրև քաջ կատու...

- Մենք մկների հետ եղել ենք անհաշտ,  
ահա, միության որոշումը մեր,  
երեկ կայացավ ճշմարիտ մի նիստ,  
որ մենք չներենք կոմունիստներին...

Դաշնակցական ենք մենք երեկվանից,  
տոմսերն հանձնեցինք հինգ-վեց հոգով,  
այնտեղ մի քանի նորելուկ մկներ  
սպառնում են մեզ իրենց տոմսերով...

Դաշնակցական ենք մենք ազնվածին,  
ահա մեր տոմսը և խիղճն արդար,  
երեկ դահլիճում մենք երդվեցինք,  
որ ելնենք մարտի այսօրվա համար...

Այդպէս է կյանքը և օրենքն՝ այդպէս,  
նորը հենվում է հին թերմացքներին,  
կավը դարերով այնքան է ջրկել,  
որ չի ենթարկվում մեծ ծեփագործին...

Հարթակը հանկարծ դատարկվեց մեկեն,  
շեփորի ձայնն է լսվում ողբացյալ,  
սատանաներից մեկը նրբամիտ  
հարթակ է կանչում մեծ ուրացյալի...

Զառամյալ է նա, կկոցուն աչքերով,  
խաչն ու բուրվառն են ցնցվում վեհօրոր,  
հավատացյալը հոտին ընդառաջ  
սուրբ լուրջուն է սփռում ամենուր...

Քառասուն տարի հոտան է նա քշել,  
անցել է գայլի ժանիքի մոտով,  
քառասուն տարի հղկվել է, կոկվել,  
հեռվից սիրել է, մոտիկից՝ լոել...

- Ժողովուրդ իմ սուրբ,- բարբառում է նա,-  
օծում եմ խաչով ոգիդ իրավան,  
ազատություն՝ շուրբերից կախված,  
նահատակների՝ արյունով սրբված...

Շատ ենք տառապել, մատնվել սրի,  
բայց չենք ուրացել խաչն ու մայրենին,-  
մի պահ լուսմ է գուցե հիշելով  
մեր հողում մորթված մարզարեներին...

Պիղասոսի պես կշում է հանդարտ  
բառերն Աստծու, մարդասպանի,  
մեղմ է բարբառը, լուրջունը մեծ,  
շանում է հոտին իր հունով տանել...

Մերք Աշտարակեցու տարազն է հազնում,  
մերք Խրիմյանի ոգին հայկացյան,  
մերք իր, որ մոտելից կրել է երկար  
վախի վահանը մարմնապատկան...

Իսկ ժողովուրդը ուզում է լսել  
իր փառքի մասին ու ազատության,  
Աստծու պատիժը վաղուց է կիսել,  
ուզում է տնքալ, ուզում է սիրվել...

Նաիրյան տխուր, ցուրտ հոկտեմբերը  
գիլյոտինի պես կախվել է օդում,  
աշունը ցասկու, հրաբորը, նորու  
քամու թերանում տերև է մորթում...

Օդը լցվել է դժոխքի բույրով,  
համբերությունը եկել է հունից,  
հիդրայի նման բազմագլխանի  
ցավն է մոլեգնում հրապարակից...

Իսկ ժողովուրդը ուզում է ծնել  
կես մարմինները ճգլում են իրար,  
երկունքի պահ է, պահ մոռացության,  
- Աստված, հաշտեցրու մարմին ու երազ...  
1992 թ.

### ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

-Ա-

Գաղտնատե՛ս Աստված,  
իմ այս ճրագի բոցը մենակյաց,  
որ ճգլում է վեր,  
հոգուս խոռվը խառնած տենչանքիս,  
մտքիս կարիքը՝ մարմինս իբրև սրբազան մի բոց,  
առաքում եմ քեզ:

Թող մերկ ու գաղտնի, առանց բողբոջի,  
երդման, խոստումի  
բարձրանա առ քեզ:

Դարձյալ ու էլի պիտի ես յուղով ճրազս լցնեմ,  
այրեմ հոտոտանք կոչվող մասերս,  
բող գիշերային գաղտնիքը հոգուս  
չընկնի, չշիշի առավոտ լուսոն,  
ծանր, անխորտակ պատերի ձայնը  
դառնա պատվանդան հեղեղող մտքիս  
և կյանք կոչվածիս ընծայի կայմին բարձած իղձերս,  
և հույս, հավատս առաքի առ քեզ,  
և մենք ամենքս, որ դեռ սկիզբն ենք և ոչ վախճանը,  
և քանզի դու ես ուղերձ առաքում,  
բույլ տուր, ուրեմն, հասնելու ուխտի սրբազան լեռն այն,  
որ մոտ է լոկ քեզ և իմն է հիմա,  
բող հասնեմ լեռն այն իմ բաց աչքերով,  
բող ոտքի վրա, հոտոտանքներիս ամեն զգացումով  
բոլորապույտ և ամենատես հասնեմ լեռն այն,  
և իբրև մի բոց քո բազմարորդոք իրից արձակված,  
կանգնեմ-համբանամ ատյանիդ առաջ:

-Բ-

Վասպուրականը դեռ դրախտը չէ,  
երկիրն Ավետյաց, ծնունդը ողբի,  
ամեն ինչ սկսվեց տասը դար առաջ,  
երբ նա մկրտովեց Նարեկա վանքում:

Հինգ-վեց տարեկան, դեռ ոտարորիկ,  
անտեղյակ վանքի, գավառի մասին,  
հինգ-վեց տարեկան, երբ տոտիկ-տոռտիկ  
մտավ գավիթը վանքի սրբազն:

Ու գերեզմաններ տեսավ գավիթում,  
ուորերը բաեց քարերին մասունք,  
հայրը խոժոռեց աչքերը խոհուն,  
Գրիգորն ընկրկեց հայացքից խոսուն:

Ու վանքի ներառւմ, մուտքի դեմ դիմաց  
տեսավ հորեղորը՝ լրակյաց ու պարզ,  
տեսավ ձեռքերը փայտե սեղանին,  
աչքերը աննինջ, ճակատը բարդված:

Ու սովորական, ամեն ինչ ասող  
քարե սեղաններ, պատկերներ քարե,  
դրսից քարապատ, ներսից քարաշեն,  
ապրեց՝ շուրբերից թափվող աղոթքը:

Ու հորեղքայրը՝ Անանիան Նարեկ,  
երկար նայելով Նարեկին կրտսեր,  
ասաց. «Դու վանքում սովորիր դասեր»,  
ու պատին քաշեց ինը, հինգ, յոթ թվերը:

-գ-

Ո-շոտոնյաց գավառ Վասպուրականի,  
հեռավոր մի միք՝ զարկված ու խաչված,  
դու պիտի լինեիր օջախն հայրենի,  
քո Վանա լճով մինչև առ Վասված:

Վանքի պատերը ծանր, սևակնյա,  
ու ներսում մարդիկ՝ սևով պսակված,  
շուրջը խաղաղ լիճ, պարզ, կապուտաչյա,  
ու մարդիկ՝ սիրուց ու լույսից փակված:

-գ-

Վանականները, իբրև պարզ կանոն,  
ամեն առավոտ, ամեն իրիկուն  
փակվում էին իրենց մենակյաց խցում՝  
ապաշխարելու պղծված հոգին:  
Բարդ էր օրենքը Նարեկի համար,  
բարդ էին ծեսերը, անհասկանալի,  
ու այսպես անցավ երեք իրիկուն,  
Անանիան մինչև կանչեց Նարեկին:  
- Որդի՛ս, Տերը՝ մեզ ու մենք՝ Տիրոջը,  
եղիր համոզված և ուշիմ բանին,  
թող սրտիդ ամուր նատի աղոթքը,  
այս է փրկության միակ բանալին:

-Ե-

«Ճանաչել զիմաստութիւն եւ զիսրատ,  
իմանալ զրանս համճարոյ...»:

Ինչպես մի մարդուկ առաքյալ,  
և ոտարորիկ, և մերկ էությամբ,  
ոչինչ չքարցնող պարզունակությամբ,  
երկնքից իշնող մոտ լսողությամբ,  
սահում էր խցից խուցը ուրիշի,  
թակարդում ընկած թռչունի նման,  
խում էր ելնող աղոթքը հույսի:  
Լսում էր խցի քարերին ամրացած  
բառերը՝ հնչյուններով պերճ,  
ելնում էր՝ որտեղ բառերն էին թռչում,  
ելնում էր, ընկնում,  
խոսում ինքն իր հետ,  
բանավիճում էր իր մեջ համրացած,  
ատում էր հոգում, սիրում էր հոգով,  
խոռվ ու խորիվ գամկած սև պատին,  
գործում էր հոգու լոսե հայելին:

Մանկամիտ հոգի ու աղոթատուն,  
պատերին դեմքեր՝ երկինք համբառնոյ,  
պատերին մոմեր, պատերը՝ սև-սև,  
ու պատուհաններ՝ լիճը միաժամող:  
Ներսն՝ լուս աղոքք, դուրսը՝ լույսի խաղ,  
ներսը՝ աղոթարան, դուրսը՝ աղոթող,  
ա-խ, Վանա իմ լիճ, կապույտ մազաղաք,  
ալիք առ ալիք գիրիկդ բաց արա,  
գիրիկդ բաց արա ավերիդ հանդեա,  
Նարեկա վանքը՝ ավեր ու ավար,  
Նարեկա վանքը, որ քո դեմ խավար,  
խավար ու լուս էր, որ ինքնամփոփ էր,  
որ աղոթում էր ինքն իր համար,  
որ աղոթում էր Աստծու համար,  
չէ որ քո ափին լույսին ու մթին,  
հենց աշքիդ առաջ սև սքեմ հազած,  
վառել է մոմեր, կապել է սքեմ  
վանքը Նարեկա:  
Աչքդ բաց արա, խոսքդ բող դու բաց,  
գեր հազար տարին,  
հազար տարին մեկ խոսիր վշտիդ հետ,  
հազար տարվա կապուտաչ զարմանք,  
չէ որ դու վկա, իսկ մենք անցողիկ,  
պատմիր, դե, խոսիր:  
Եվ դուք, Աղքամար ու Առտեր կղզիք,  
խոսեր, դե խոսեր:  
Դուք, որ տեսել եք ձեր բիլ աշքերով  
հեռավոր ժայռը, նրա քերծերին  
սևամած քուրծով,  
աղոթքով սևող միակ հանձարին,  
խոսեր, դե, խոսեր:  
Դուք, լեռնահողով ու կարծրախարիսխ  
Ռշտունյաց աշխարի,  
դուք, որ անթոփչք, բազմանիստ ու վեհ  
նստած եք, ահա, վասն բյուր դարեր,

խոսեր ձեր միակ,  
միակ գրկիչի,  
նրանով միայն աշխարհում հաստված,  
նրա անվան հետ հավասար պաշտված  
Նարեկի մասին,  
խոսեր, դե, խոսեր:

-Զ-

Ասում են իբրև տարիներ հետոն  
(իսկ աշխարհում միշտ այդպես է եղել),  
բացվել է լեզուն փոքրիկ Նարեկի,  
երբ որ տիրել է մտքին ու բառին,  
երբ որ սիրել է աշխարհը մոտիկից  
և չի ընդվզել, իր սրտից պոկել  
նրա ցավերը,  
և գիշերները  
(անքուն գիշերներ)  
նա չի հեռացել աղոքքի դրնից,  
երբ որ թերթել է հին ու հեթանոս  
բառ ու բարբառը,  
ու երբ որ մոտից, աշքից էլ մոտիկ,  
սրտից էլ այն կողմ  
տեսել է աշխարհ կոչված կարասը,  
ձեռքով շոշափել նրա պատերը,  
դատել կարասի պարունակության  
լավն ու վատը,  
խորհել միածին այս մեծ աշխարհի  
չարի ու բարու մասին,  
ասում են հետոն, տարիներ հետոն  
կտրել է լեզվի կապ ու կապանքը,  
նախ, երբ եղել է վարդապետ վանքի,  
ուսուցանելով ճշմարիտ կոչված միակի մասին,  
որ «ճանաչել զիմաստնութիւն...»,  
ապա այն մասին,  
որը խնամքով բաղված է եղել

ոչ թե Նարեկ կոչված այդ վանքում  
և ոչ Ռշտունիք կոչված ավանում,  
ոչ Հայաստանում,  
այլ համապարփակ, ամենուր քաղված,  
աշխարհի բոլոր վանք ու դպրոցում  
խնամքով պահված կեղծիքի մասին՝  
թեև կամ իբրև  
մարմինը մեր սրբազն մասունք,  
որ պետք է վառվի միակի համար  
(և այդ միակը այդպես էլ չկա):  
«Դրսից՝ հայելի, ներսից՝ ածելի»,  
և երբ ըմբռնեց, շոշափեց մատով  
ծայրը ածելու,  
սարսուսից դողաց միտքը հանձարի,  
բողոքի խոսքը քափվեց նախ խցում,  
որի արձագանքն եղավ սաների աղոթքը ջերմին,  
ապա տարածվեց վանքի խուցերը,  
քերելով հազար ու էլի հազար նորելուկ սաներ,  
ունկն դնելու արդարն խոսքին,  
ապա դուրս եկավ ձայնը բողոքի  
դեպի գավիթը  
ու տարածվելով հեռու հեռավոր ավաններ, զյուղեր,  
հետո՝ աշխարհը,  
ցավից կականող Հայոց աշխարհը,  
ու երբ սրի պես, ճշմարիտ սրի,  
խոսքը միսրամակ օրենք կոչվողի  
նեղիկ ականջը...  
Վսում են իբրև տարիներ հետո  
(իսկ աշխարհում ե՞րբ այդպես չի եղել),  
ճեղքվեց բառերի նեղիկ օրակը,  
ու ապտակելով օրենք կոչվածի թլավիկ երեսին,  
կանչեց իր ձայնով քախծոտ ու հոգնած,  
ձայնեց միակին,  
այն սուրբ միակին, որ խաչ էր եղել  
իր նմանակին փրկելու համար,

ապա գտնելով ճշմարիտ հնար  
(այն էլ՝ պարզելու, լուր խուսափելու  
օրենք կոչվածի աքցաններից բիրտ),  
խոսքից խուսափող ճշգրիտ նազանքով,  
բարբառեց մենակ.  
«Սրտի խորքերից խոսք Վատծու հետ»,  
հենց այն միակին,  
առանց միշնորդի,  
առանց առուժակ դարձնելու միտքը,  
հենց այն միակին,  
որից սերում էր հավատի հենքը,  
հենց այն միակին,  
որին ձգվում էր անկաշկանդ ձեռքը,  
սակայն ի՞նչ օրենք և ի՞նչ իրավունք,  
այստեղ էլ, ահա, ձեռնեց իին ձեռքը,  
այստեղ էլ, ահա, օրենք կոչվածը,  
քաջ գիտակցելով ճշգրիտ սարքը,  
իրոք տեսնելով քանալու փակը,  
...որ հանձարները առաջ են ընկնում՝  
տանելով մեկտեղ ողջ ժողովրդին,  
բայց ուր կտաներ, եթե օրենքը  
վանդակ էր դրել ողջ ժողովրդին,  
այստեղից էլ, ահա, օրենք կոչվածը  
գտավ սանձելու միակ քանալին,  
և աստվածապաշտ մեր ժողովրդի  
օրենք հատվածը՝  
ճշգրիտ գտնելով մեղադրելու մի  
նրբին փաստարկ,  
կարդաց իր ձայնով մի նոր մեղադրանք.  
- Նա, ով չի նատում հաշվի վանքի հետ  
և հոլովում է անունը Վատծու,  
նա, ով չի վառում մոմ ու խունկ վանքում,  
բայց աղոթում է մենակ ինքն իր հետ,  
նա էլ չի կարող լինել Վատծու  
իսկական որդին,

ու բոնդրակյան կոչվող շարժումը, որը,  
իսկապես, ազատման մի ելք որոնող ուժ էր,  
դարձավ ավերման իսկական կենտրոն։  
Ու Նարեկացին՝ մեր իին դպրության և նոր  
օրերի ասպետը անգեն,  
մեր վկայության, սեփական արյան,  
մեր լուրջ գոյության, ապավիճության  
միակը վսեմ,  
կանչվեց դատարան։  
Եվ որպեսզի արմատից կտրեն ծառը բարության,  
արվեստի, սիրո,  
նրա հետ մեկտեղ դատարան կանչվեց  
Անանիան՝ վսեմ,  
տիեզերական վարդապետը մեծ։  
Եվ հավաքվեցին եայսկոպոսներ, իշխաններ,  
նաև ազատներ ու տանուտերեր, որպեսզի նրանց  
հրապարակավ դատեն բոլորի դեմ,  
որպեսզի նրանց լուսախորշ ճակտին դաշեն  
«զնա պատուհասի որպես զիերծվածող...»։  
Ու հավաքվեցին հրապարակում  
իրենց փառանեղ արդուզարդերով  
ճերմակամորուր եպիսկոպոսներ։  
Ու հավաքվեցին հրապարակում  
ծեր վարդապետներ ու ջահել, ու սուրբ,  
ու հավաքվեցին ազատներ, որոնք  
իրենց ողջ կյանքում չեն ընթերցել  
գեր մի տող սիրո ու լույսի մասին։  
Ու հավաքվեցին իշխաններ բազում,  
գոռող, ինքնահավան,  
ու տանուտերեր, ու մարդիկ, որոնք  
մեծն հաճությամբ կդատեն այլոց սխալի մասին,  
ու մի անկյունում զիշահակ կանգնած,  
մեծ շարք կազմեցին ռամիկ, սարկավագ։  
Երկու հանճարներ օրորվում էին լուս,  
երկու հանճարներ՝ նման առտուն բացվող շողի...

## -Ե-

Դու զիտես, ասա՛, թե ինչ է լինում,  
երբ մարդը ինքն իրենից ելնում,  
օտարանում է նախ ուրիշներին,  
իեսոս ներգործում ինքն իր վրա,  
թե ինչ է առնում ու ինչ է տախս,  
ինչպիսի սոսկում ու ցավ է լախս,  
դու զիտես, ասա, թե ինչ է լինում,  
երբ երկրաշարժը զալիս է հեռվից,  
թե ինչ են ապրում մարդ ու կենդանի,  
երբ շունը պոչը շարժում է ցավից,  
երբ սոսկումից խոր կատուն մլավում,  
գայլը ոռնում է, օձը՝ կծկվում,  
իսկ մարդիկ, մարդի՝ կ ինչեր են ապրում,  
իսկ պուտները ինչ են բարբառում,  
պուտներն անմեղ, մեծ ու գեղեցիկ,  
ինչ է գալարվում նրանց ընդերքում,  
ու երբ ելնում է մարդը իրենից,  
նախ ապակիները դողում են ցավից,  
պատովում են նախ ապակիները,  
պատուհանները՝ դառնում կճախքներ,  
ցցվում են դրսից խաչերի նման,  
ներսից դառնում են սպի ու ցավեր,  
նախ ճաքճում է երդիկը վշտի,  
իեսոս թափվում են ծեփ ու գերաններ,  
իետո ամառոպի վերահաս զարկից  
բոցեղեն լեզու դառնում դրախտն այդ,  
ինց այսպես եղավ,  
նախ նա դուրս եկավ իր եսի ափից,  
իետո կորցրեց միտք ու բառերը,  
մեկ-մեկ նա հիշեց վատը կամ լավը,  
գնաց մխրճվեց կորած արտերը,  
տագնապեց անկախ, բարբառեց անգեն,  
խոռվեց անտուն, ատեց խստաշունչ,

կիտվեց մելամաղձ, հավատաց լալով,  
խոժոռվեց սիրոց, դաշնացավ ցավից,  
կորավ ու գտավ ինքն իրեն մեկեն,  
և այս ամենը մի ակնբարբում,  
և այս ամենը անկախ, անհաշիվ,  
իսկ ինչ էր հաշիվն ու թիվը գրում  
ինքը չգիտեր, չգիտեր ոչ ոք,  
մի Հայաստան էր, յոթը տանուտեր,  
մի վարդապետ էր ու հազար պետեր,  
մի վանք էր սևին, հազար վարդապետ,  
մի բողոքական, հազար բռնապետ,  
մի սիրահար էր, սիրապաշտ լույսի,  
հազար չար աղետ,  
մի աղոթող էր, հազար մի մորթող,  
և ամենքն այս իրենց մութ զորքով,  
իրենց դավերով, իրենց ավերով  
եկել էին զաղտնի, ներքին պայմանով,  
եկել էին զորքով, բառով, օրենքով,  
աղոթով անստոյգ,  
խղճով անբերի,  
եկել էին, ինչպես երրևէ, երբեք,  
եկել էին խաչելու, դատելու նրան  
մի վարդապետի,  
միակ պոետին:

Դու գիտես, ասա՛, թե ինչ է լինում,  
երբ մարդը ինքը իրենից ելնում,  
երբ հեռանում է ինքն իրենից...  
Լուր բարձրանում էին բառերը դժնի նրա շուրջերից,  
Նարեկը՝ խոնարի եղեգի նման անբառ ու տրտում,  
Նարեկը՝ տկար,  
Նարեկը՝ սոսկում:  
Նրան տանջում էր մի համառ զգացում,  
նրան հեծծում էր անմարմին մի ցավ,  
թեպետ իրեն էին այնտեղ ամբաստանում,

բայց Նարեկը սուրբ լրիվ չիմացավ,  
թե ինչ կրքեր էին գնում ու գալիս,  
ինչ էր բարբաջում վարդապետը նենզ,  
և եպիսկոպոսն ովստագանց, բայց վեհ,  
ինչի համար էին մեղադրում իրեն:  
Նա ավելի ճիշտ հասկացավ մի բան,  
մի ծանր հանցանք ամենքի կողմից,  
այն է ամենքը և մեծ, և փոքր,  
սուրբ վարդապետից մինչև ոամիկ, մինչև ճորտ,  
աղեղ են լարել ոչ թե Աստծու խորանը մաքուր  
փրկելու ախտից,  
նորելուկ ովստից,  
այլ հենց իրենից, իր աղոթքներից,  
վերահաս ու պիրկ,  
իր շշուկներից,  
ձայնից անսովոր,  
շեշտից զուապ, հաղորդ,  
«Փրկիր ինձ, Աստվա՛ծ,  
թե նենգությամբ են ամենքին դատում...»,  
ու այս բառերը մնացին օդում,  
մնացին ցամաք, չոր շրջունքներին,  
եղեգը ծալվեց,  
փլվեց նա իր մեջ,  
խոռվությունը հեռացավ, գնաց,  
դատարկության մեջ մարմինը մնաց:  
Ու նա չտեսավ դեմքերը տկար,  
ու նա չտեսավ խորհուրդ ու աշքեր,  
ու նա չտեսավ շարժումները ժիր,  
ձեռքերը գունատ, բայց և սոսրագիր,  
որ թերում էին էջերն օրենքի՝  
«Վասն սրբության, վասն ժողովրդի, վասն աղոքքի»,  
ու նա չտեսավ, թե ինչպես հանկարծ  
ճերմակամորուս վեհափառը մեծ  
ինչ ճիգ ու ջանքով,  
ինչ փութկոտությամբ

թերթեց զիրքը մեծ,  
ու նա չտեսավ նրա աշքերը,  
ճերմակամորուս այր իմաստունի  
աշքերը խոժոռ,  
ու երբ նա լսեց  
տիեզերական մեծ վարդապետի մոտիկ շշուկը,  
բայց ոչ բառերը, որոնք տեսացել,  
հեռացել էին ու օտարացել,  
բայց երբ նա զգաց  
մեծ վարդապետի հպումը դողդոց,  
նախ՝ գունատ դեմքին նրա տեսավ ցավը մեծ,  
ապա՝ երկու բառ.  
«Ազատված ենք մենք»:  
Սակայն բառերն այդ օտար էին հնչում սանի ականջին,  
ազատվա՞ծ, ինչի՞ց,  
բառն այդ օտար էր,  
հեռու էր ու խույ,  
ոչ ոք չիմացավ, թե ինչ կատարվեց  
իրենց աշքի դեմ,  
ոչ ոք նրանցից, ոք աղոթել էին տարիներ երկար,  
չտեսան տկար և քոյլ եղեգին,  
որի մեջ պահած էր վիշտն ահազին,  
և հեռացումը, օտարացումը «սուրբ» դատաստանից:  
977 թվականին՝ «Երգ-երգոցի» մեկնության տարուց  
յոթ տարի անց,  
երբ լրանում էր նրա երեսուն և երեք տարին,  
Նարեկը քողեց վանքի խուցն իր,  
քողեց վանքը և վարդապետի սքեմը արդար,  
քողեց բարձրագույն շշուկ ու աղոքք,  
քողեց ժողովուրդ, իշխաններ, ռամիկ,  
քողեց ողջը մեկ  
և 984 թվի գարնանը նորեկ  
հեռացավ մնմակ:

-Ը-

Տե՛ր իմ, ողորմյա,  
քոյլ տուր աղերսի, զրկանքի, այլև  
աղոթքի գնով,  
ապաշխարելու կամովի լեզվով,  
խստաշունչ ձմռան ու ամռան տապին,  
այլոց մեղքերի ու իմ սեփական  
մեղքերի համար ...  
Վաղվաղակի մեղմիկ զորությամբ,  
արևագալի շողին ու շաղին  
շիասած, չտեսած,  
աղոթքիս լեզուն նույնիսկ չըմբռնած,  
մաքրված ամեն, ամեն տարերքից,  
մաքրված ամեն, ամեն գոյությամբ,  
մաքրված ամեն, ամեն օրենքից,  
մաքրված ամեն, ամեն զորության  
իրավունքից,  
խղճից ամենքի, մտքից վերահաս,  
մաքրված ամեն, ամեն էությանց,  
ու մտոր խղճի, ի բարի լեզվի,  
ի սրտի խորքից մաքրելու, տալու,  
և այս վաղորդյան լույսի զորությամբ  
ըմբռնելու  
քո մեծ գոյության, քո անբավ գանձի,  
քո մտոր խղճի, քո լեզվով ճարտար,  
քո ձեռքով բերքի, քո շնչով արդար  
դատելու և բաժանելու հասանելիքը  
և իմ, և այլոց,  
և խաղաղվելու լոյսիդ պես քո պարզ,  
և գոյության իմ երեսուն և երեք տարվա  
մեղքերն ամենը, որ ցույց դնելու,  
փրկելու ամենը, որ ձեռքով ձեռնեցի,  
փրկելու ամենը, որ մարմնի մասերս

առանց տատանման ու երկշոտության  
ապրեցին առ տես,  
մեղա, Տեր իմ,  
և ողորմյա,  
փառք քեզ իմ այս թաց ու խոլ անձավից,  
փառք քեզ իմ այս մութ ու ցուրտ անձավից,  
փառք քեզ ամենից,  
ամեն, ամեն, ամեն:

-Ժ-

Նախ ապավինենք Աստծուն բարեգուր,  
անգամ զեխուրյան, զեղումի պահին,  
ճոխ խնջույքի առաջ,  
որտեղ նորից պերճ,  
ամեն ինչ կարգով,  
լինում է միայն աստվածավայել,  
ու թե ինքն է մեզ տվել իրավունք  
օրինակ լինել հենց իր նմանին,  
նախ խոսենք կարգով:  
Այն ո՞ր սրիկան չասաց հարգանքով,  
թե Աստծու Որդին  
տվեց ճոխ ու պերճ ընծաներ բառի  
հենց այն տկարին  
(որ մարդու հետ է, նաև՝ Աստծու),  
թե մի բաժակ ջուր  
տա աղերսողին:  
Նախ ապավինենք Աստծու Որդուն,  
որ մարմինը իր տվեց իբրև հաց,  
արյունը՝ զինի,  
սովահարմերին,  
և ապավինենք հենց նրա համար,  
ու իինգ նկանակ հացով  
մեր Տերը  
կշտացրեց հազար սովալլուկների:

Նախ ապավինենք Աստծու Որդուն  
հենց նրա համար,  
որ վերջին պատառ հացը,  
գոյության կանչող պատառն այդ  
դառնում էր ամբողու  
սովածի ձեռքին,  
ու ապավինենք հենց նրա համար,  
որ արարածին,  
մարդ արարածին բաժանեց գայլից,  
մարդակերպ գայլից,  
ներեց Երկուսին ներողամտաքար,  
ու երբ ջուր հայցեց մեռնելու պահին,  
տվեցին քացախ,  
ծաղրեցին նրան ավազակերպ,  
բայց և երբեք  
(անգամ իր մահը ճշգրիտ իմացող  
Հիսուսը միակ)  
շխոսեց մահվան դիմացը մահով,  
այլ ասաց հստակ.  
- Կայսրին՝ կայսեր, աստծունը՝ աստծուն:

**ՉԱՐԵՆՑ-ՆԱՍԵ**

Հալածական արդեն միլիոնավոր տարի  
և վերստույգ, ինչպես ձյունը մարմարե,  
տեսիլներով, խինով ու ցավերով դաժան  
մի Հայաստան երկիր՝ հողմի ու ավերի,  
մի ավարի երկիր, ընչազուրկ ու բռկոտն,  
մի քաղցրաւոր բարբառ, աշնան մեկ տերև,  
խարխուլ ճշմարտության քառամերում քազում  
օրորվում էր նավն այս միլիոնավոր տարի:

Իսկ տերերին ինքդ, ինքդ զիտես,  
անտեր ու անխմաստ բարքերի տեր,  
մինչև լույսն այս, արդեն իմաստնացած,  
մինչև օրերը մեր, որ հասան քեզ:  
Քայց մըրիկի բերանն ընկած տաշեն,  
երկիրը քո անտեր օրորվում էր օդում,  
որպես պարանն այն եղեռնական,  
որին պետք չէին զոհեր քեզնից բացի:

Եվ այդ երկրում, ահա, դժնաստեսիլ,  
ոչ Օվիդիոս Նազոն և ոչ Քարոն,  
ոչ որ, ոչ որ և թեկուզ նա  
չէր կարող բերել հանգստություն,  
ոչ Տերյանի մրմունջները սիրո,  
ոչ Դուրյանի տրոտոնջները երգի,  
և ոչ մի հեգ երգիչ և ոչ մի ապստամբ,  
երկիրը բաց էր, ինչպես մըրիկի դեմ մարագ:

Եվ դարման էին ծամում այդ երկրում  
անասունները՝ ահից պրկված,  
և անասնական այդ աշքերում  
կային ցավի միլիոն բառաչ:  
Իսկ երգեր՝ որքան, որքան ուզես,  
Հայաստանը՝ հարուստ պոետներով,  
որոնց երգը, թեկուզ իբրև Նարեկ,  
հասել էր Աստծու քղանցքներին:

**Մինչդեռ Խորենացին՝ փառահեղ մի գրիչ,**  
**մի քանի թերթում մազաղարյա,**  
**որպես իմաստուն մի նափրցի,**  
**որպես ծնունդը լուսաբացի,**  
**արդեն ասել էր ցավերը մեր,**  
**ցավերը՝ ռամկից մինչև արքա,**  
**որոնց չէր մաքրի և ոչ մի արալեզ,**  
**քանի արքնացման ուժը չկար:**

Եվ դու ասացիր լուսաբացին,  
և դու ասացիր՝ որպես զինվոր,  
կանգնած նավին հեղափոխության,  
որպես մարդ, պոետ, քաղաքացի,  
և դու ասացիր պատգամը քո,  
պատգամդ կարմիր, որպես դրոշ,  
կանգնած նավին այն զրահապատ,  
ոչ որպես Վարդան և ոչ իբրև սուրբ:

**Մինչդեռ օրերում քո կարմրահեր,**  
**երբ ալիքվում էր օվկիանն այն մեծ,**  
**դու՝ կարմիր զինվոր, արդեն Չարենց,**  
**իբրև կամավոր կարմիր զինվոր,**  
**դու հասկացար ճիշտ, ասացիր մեզ,**  
**որ ապրելու համար պետք է կրվել,**  
**որ միայն արյունով չէ մարդը ծնվում,**  
**հողն էլ արյամբ է միայն պահվում:**

Քեզ Հոկտեմբերն էր դարձրել զինվոր,  
դու հանճարեղ՝ նախ կոմունիստ,  
ապա բանաստեղծ, ապա գրիչ,  
հետո պատմության հմուտ գիտակ:

Եվ, ահա, երկիրդ հսկա մի դեզ,  
և շուրջը նրա անասնացած,  
ցնդած աշքերով խոր ու մուր,  
անասուններ բազում՝ սմբակավոր,

որոնց թերանում քամի էր ու խոտ,  
ուղեղներում՝ երանելի կարոտ,  
և ոչ մի կոտր վասող, ինչպես տեսար,  
որ անհրաժեշտ պահին մխար:

Եվ դու ասացիր պատգամը քո,  
քո ժողովրդին՝ ձեռքդ հյուսիս,  
ոչ հույսով քոյլ, այլ որպես ուժ,  
քո հոր դասերը սերտած արդեն,  
տեսած վերքերը հազարամյա,  
ողբի հազար մի մատյան թերթած,  
սերտած երգերը մազաղարյա,  
որոնք խունացած մեռնում էին,  
ինչպես քաղաքը՝ ամայացած:

Եվ ոչ մի շեղում լիրիկական,  
դու արդեն այրել էիր հիսուն գազել,  
ժամանակը քո ասպետական  
չէր կարող տանել քնքուշ նազեր,  
դու զինվոր էիր, լեզենդն այն հին,  
որ երկներ երկինք, երկներ երկիր,  
դու ասում էիր ոփրանվ ուժգին.

- Պատերազմ է, բոք, հեյ, արթնացիր:

Եվ թլոր Դավթի ռամկած որդուն,  
և բոռաց բոռին՝ արդեն նիրհած,  
դու կանչում էիր արդար մարտի,  
որ բերեին զենքեր, զինվոր ու հաց,  
որ ի մի գային, ելնեին ոտքի,  
շմնար քնած և ոչ մի մարդ,  
որ հազարամյա սիրով գրված  
խոսքերը դառնան վաստակ ու հաց:

-Ինչքան, ինչքան ազամ հարցրել եմ ես ինձ, թե ի՞նչ է վերջապես - Նայիրին: Գուցե թեզ տարօրինակ թվա այս հարցը, սիրելի ընթերցողն: Քայց դա նոյնաբան է բնական, որքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք, վերջապես-նայիրցիներս: Ի՞նչ ենք մենք և ո՞ւ ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղի:

Եղիշե Չարենց, «Երկիր Նայիրի»

Զարմանալի այդչափ,  
այդրան տարօրինակ,  
ուշիմ, ուղղամիտ, տագնապալի,  
ինչպես ժողովուրդ դարձած ի մի,  
և ինչպես հաճճար տարողունակ,  
սերտած դասերն ամեն նախրական,  
թերթած գրքեր, մտքեր ու ժողովուրդ,  
հավաքում էր ոգին անէացած,  
ոգին հզոր, անհաղթ ու անհագուրդ:

Նա տեսել էր արդեն քաղաքներ ծեր,  
քաղաքներ լրված ու ամայի,  
պարիսպներ քանդված, այրված գրքեր,  
երգեր՝ տաղերով, ողբերով լի:  
Նա տեսել էր հինը՝ չնշին ու սուրբ,  
սուրբ հավատամքին, գերի ոգի,  
և չնշին գնով տրված քաղաքներ,  
և ողբեր կանանց որք ու այրի:

Եվ ենոքներ մեռելատիպ  
և համոներ քազմակեզու,  
որոնք երազում արդեն որքան  
առուտուր էին արել մտքով  
քաղաքներ, տներ ու ավաններ,  
որոնք իրենց մուք հայացրում չոր,  
ինչպես ավագին մերձ ի ծովյա,  
գրել էին Վան, Բիրլիս, Մուշ, Էրզրում,  
Սվագ, Դիարբեքիր՝ վեց վիլայեր:

Իսկ ինքը՝ զինվոր հավատարիմ  
հեղափոխության հզոր նավին,  
ինչպե՞ս ներեր ոգին իր վես,  
ինչպե՞ս ընկալեր տասնյոթամյա  
կամավոր զինվորն այդքան կարմիր,  
մարդուկներին այդ ինքնահավան,  
որոնք նվիրվել էին ինքնակամ:

Իսկ ինքը՝ կարմիր ոտքից գլուխ,  
կարմիր հավատով, գույնով արյան,  
նա, որ բարձրացրել էր դրոշը ալ,  
երգում էր և սեր, և՝ հավատամք:

Իսկ մտքում՝ հազար, հազար երազ,  
իսկ շուրջը՝ դավով հյուսված մի ցանց,  
իսկ երգը շերմին, որպես անհաս  
լւոներ, լուս միսրճված երկինք,  
իսկ շուրջը՝ դեմքեր լուս ծատված,  
անմիտ ցնորդով, հույսով անմիտ,  
իսկ ինքը՝ հազար դրոներ անցած,  
սերմնացան նորի, բուռը՝ ցորյան:

\*\*\*

Եվ կանգնած այսպես վեհ ու հպարտ,  
ձեռքն իշեցրած մինչև գոտի,  
և աչքերը լայն հեռուն բացված,  
և կանգուն, և պարզ, և վեհերոտ,  
ափին ոսկեհասկ ցորյանը նոր,  
թարմ՝ որպես խունկը առավոտի,  
պիտի նա ցաներ հողում խոպան  
և ցողեր ցելերն առավոտին:

Եվ պիտի կանգներ այդպես կանգուն,  
և պիտի ցողեր ցելերն այդ բույլ  
մինչև ցելերի գրափն պնդվեր,  
մինչև ծիլերն արդեն արթուն

իսկեին ավելի խեղճ ծիլերին,  
և հետո սրանք՝ արդեն պնդված,  
ավանդն իրենց պապենական  
հանձնեին նորին, որ պիտի գար:

Ո՛վ դու սերմնացան առավոտի,  
դու՝ զինվոր խղճի, դու՝ ապստամք,  
կանգնած է ոգիդ՝ որպես վահան,  
քո իին ու նոր երազների:

Տես, նրանք, ահա, եկել են նոր,  
եկել են իրրն կարմիր զինվոր,  
եկել են, որ քո հնամենի  
երկիրդ, որին այդքան սիրով  
կոչում էիր հեզ Նակրի,  
եկել են նորերը՝ արդեն բազում,  
որ իրենց սերը, կամքը անմահ  
խառնած քո կարմիր երազներին,  
սրբեն փոշին այն հնամենի,  
և փառքիդ՝ իրրն սրբին հատույց,  
տայի իրենց կամքը, երգը մարուր:

Եվ կասկածն այն՝ սիրտ մաշող,  
տագնապն այն բութ ենորմների  
ցնորմ է կամաց այս երկրից,  
որպես հատուցում քո երգերին,  
և արդեն փոքրիկ հոկտեմբերիկը,  
որ իր թարիկով բույլ ու նվազ  
պիտի բարձրացներ դրոշը ալ,  
երդվում է քո դեմ խոհեմարար:

1975 թ.

**ՏԻԳՐԱՎՆ ՄԵԾ**

(Հասլածներ պրեմից)

**Պատանդ**

Դառն է իջնել ու բարձրանալ  
այլոց սանդուղքներով,  
ավելի դառն է ապեկ  
շուրշվարի տակ:

Սակայն չկա և չի լինի  
ծաղրելի այլ բան,  
բան աշխատել՝ մարդու հոգին  
դարձնել այլաղավան...

Արտավազդը, որ հզոր էր իր ամեն բանով,  
երկրն այս առաջ մղեց կարգ ու կանոնով,  
նա հաստատեց միֆ ու լեզենդ Հայաստանի հին,  
բնակեցրեց, արմատ տվեց նախնյաց երկրին:

Եվ այն փովեց ու տարածեց թևերն ազատ  
երեք ծովի երկինքները՝ նույնքան հարազատ,  
սակայն վիշտը, բարուն վիշտը ամեն բանից բանկ  
թարսում էր սրտի խորքում ամեն ակնքարք...

Ինչի՞ն են պետք այս տարիքում գանձերն անգին  
և գանձերի գանձը նրա՝ Հայաստան երկիրը,  
երբ Տիգրանը պարթևների հզոր ոստանում  
թակարդի մեջ, և ի՞նչ գիտե, ի՞նչ միտք է անում...

Խորամանկ է պարթևների ոստանը ծաղկոյ,  
դարերի հետ մշակվել են փորձեր նորանոր,  
ժպտուն են, քան արեգակի երեսը պայծառ,  
և նույն պահին մթին, ինչպես խավար մի անտառ...

Աշ ձեռքն իր չգիտե, թե ձախն ինչ է անում,  
լրտեսում են իրենք իրենց մթին ոստանում,  
ծորուն են, քան մեղրը մաքուր, ամուշ քաղցրանուն,  
և մտքերի կառափն է սև դանդաղ բարձրանում...

Մակեղոնիան ընկավ ճահիճ, Կարթագենը վեհ,  
Կորմերաք՝ Հելլադայի վերջին պատվանդան,  
և Հռոմը գոռոզամիտ նայեց Միջագետք,  
ուր իր վերջը պիտի գտներ հզոր Սելևկիան...

Եվ բարձրացավ Պարթևական տերությունը հզոր  
Մեղիայում, Սուսիանում և Միջագետքում,  
երեք ցեղեր գետերի պես խառնվեցին իրար  
իրանական գեղմի վրա, որպես մեն մի տարր...

Լուս էր, սակայն, Հայաստանը, հեռու ու լոխն,  
ձայն չէր գալիս նրա անուշ, հուշ բարբառներից,  
Արտավազդը՝ կենտրոնաձիգ իր երկրի խորքում  
քուն էր, ասես, մտել, կամ թե ելք էր որոնում...

Իսկ շուրջը իր՝ դավեր անծայր և բառեր շողում,  
բարձրանում էր Միհրդատի դրոշը ցողուն,  
փոփոխական, խառնիխուռ, մուր անձավներից  
Միհրդատը վեր բարձրացավ արքայիկներից...

Եվ ձգվում էր խնամակալ արքայի խոսքը  
խրատական, մուր, պարտադիր և ահ ներշնչող,  
նա պատմում էր արշավներից, որսից խորամանկ,  
մուր թիրերում ժպիտը կեղծ պահած անկրակ...

Ու լսում էր Տիգրանը զուսպ, երեսունամյա,  
և ուշում էր կործքը նրա՝ ցավից ու դավից,  
զլխով նա մերկ ժեստ էր անում համաձայնության,  
հոգում նյութում սերն հայրենի և արքայության...

Զահել էր նա, փունջ-փունջ խարտյաշ և գանգրահեր,  
լայնարիկունք, ծով աչքերով, թիրերով ահեղ,  
շրբունքները սեղմած էին ուժով հոգեկան,  
շինի թե հոգուց մի բառ կամ հնչյուն թնդա...

Պատանդ էր նա, խոռվի նիշ, լուրջյան անոր,  
գամված էր նա անգործության տարիներ անհույս,  
պարթևների արքան հզոր իր մուր ոստանում  
արքայազնի միտքն էր կոփում և հզին դավում...

Նա ուզում էր արքայագնից ստեղծել մի բան,  
պարթևական, ազգադավան, ինչոր նոր խառնուրդ,  
ին է խորհուրդը իրանական, և փորձն է այդ ինն՝  
իժ ստեղծել, և քող մնա ազգի կոկորդին...

Իսկ Տիգրանը ըմպում էր լուս հյուրը բանական,  
խորք չէր նրան և ոչ մի տարր, ոչ մի մտածում,  
կլանում էր շարն ու բարին և պարթևական  
երկակի ուժը, որից միայն միտքն էր բարձրանում...

Եվ խաղի մեջ, անգամ խաղի, վեհ, գիտակցորեն  
հաշվարկով էր տանու տախս, բազում փորձությամբ,  
նա ափի մեջ ուներ պահած ոսկեհատ ցորեն,  
որ տախս էր, կերակրում ուզած մոլությամբ...

Եվ զգում էր նա միշտ իրեն թշնամու որջում,  
հակադրվել, նա միտք ասել երբեք չէր փորձում,  
պահվածը ուներ արքայագնի և նրին ճաշակ,  
սպասում էր կրծքում ողին բազադրության...

Եվ խնջույքում արքայական որպես արքայազն  
նա բազմում էր Միհրդատի թագադիր թևում,  
անփոյթ, անհոգ, կիսակատակ, երթեմն անքեն  
խնջույքում տաք, զրույցներում դիրք չէր պահում...

Խաղում էր նա չեզոքության դերը միամիտ,  
ըմբռշնում էր քաղցր-մեղցր շողոմը խոսքի,  
խմում էր նա թասից պատկան և միշտ չափավոր՝  
տուրք չտալով մութ դավերին, փորձությանը ստոր...

Եվ հարճերը ձյունափրկուր, հարճերը խանդոս  
գալարվում էին ոտքերն ի վեր մութ ու մեղավոր,  
արքայազնը կասկածամիտ՝ թշնամու որջում,  
փակ էր, ինչպես աղամանդը կենդանի խեցում...

Սակայն երբեք կու չէր տախս քծնանքը խոսքի,  
չէր հանդուրժում նրան, ով որ հոգին էր խուժում,  
Միհրդատի աջ թևն էր նա և սուրն էր նա քաջ,  
և պատրաստ էր ընդոստելու թշնամու առաջ...

Օտարության պարսպի ետև նա հասակ առավ,  
հայացքը միշտ երկրին՝ Հայաստան աշխարհ,  
և երկակի տառապանքով նա սնվեց այստեղ,  
սակայն երբեք չնղավ կլու ու գառան պես հեզ...

Նրա շուրջն էին համախմբվել ուժեր նորելուկ,  
որոնք պիտի վերադառնային Հայաստան երկիր,  
և թլպատված, և անարգված խումբն այս մասուկ  
պիտի գործեր Հայաստանում լուս ու ծածկագիր...

Պարթևական ուղեղը մութ գործում էր անվերջ,  
զյուտեր էին ծնում փորձված, կրիվներ ու վեճ,  
չկան երկու հաղթող բանակ և անշահ մի սեր՝  
այս էր նրանց խորհուրդը ծեր, ուղին աներեր...

Հորինել էին մահվան բազում հնար ու ծեսեր,  
որոնք անփոյթ կատարվում էին Տիգրանի առաջ,  
ի սեր շահի ու երկրի, ի սարսափ նրանց,  
որոնք պիտի փորձեին գործով ելնել ընդառաջ...

Մեղը ու խորտիկ, մահվան ծեսեր, կրեր բորբոքուն  
փոխնիփոխ պտտվում էին զահի եզերքին,  
ամեն ոք իր տեղն ուներ, դեմքը՝ ամեն իր,  
խև ետևում՝ ճակատագրի պատկերն աներեր...

Եվ շարված էին խորհրդանշող բարձերը հատ-հատ,  
ըստ դասերի, աստիճանի և պաշտոնի ըստ,  
թագակիրներ, որոնք հետո պիտի դառնային,  
թափառում էին զահի շուրջը հավատով անկարգ...

Ապա զալիս էին արքաներ բազում՝  
տարազներով, շքախմբով, ծորս ու հարճերով,  
ամեն երկիր իր տեղն ուներ, գեղմն իր և նշանը,  
բույլ կամ ուժեղ՝ նախանշված պարթևաց կարգով...

Երկրների ու մարգերի բյուր խրտվիլակներ  
բազմել էին շուրջը զահի պարթևական,  
հիշեցնում էին սրանք կրկես, ուր վիճը ծորուն  
զինու մեջ էր խեղդում հուրը, սերն անապական...

Այստեղ հարճեր կայիմ՝ սերված խառնուրդներից,  
մեղրամոմե, մեղսական, քնորուշ կամ գոռող,  
որոնք վաղուց տանու էին տվել զարմն իրենց ցեղի  
և տալիս էին, ինչ ունեին՝ քնորուշ կամ հեղ...

Թագուհիներ, որոնք դեռ պիտի ընտրվեին,  
պահած միշտ նախնիների և սերը չքմեղ,  
զարմուհիներ արքաների՝ վաղուց կորաված,  
և Իրանի թեր կանանց, որ ընտրյալ էին...

Պոռնկական մի խառնարան՝ պարթևաց տունը,  
քաղաքական ստոր մի որջ՝ քաղաքներ խարող,  
փոքր ու մեծ երկրների կեղծ բարեռատան,  
ուրիշների միս-արյունով ցնկնած միուրյուն...

Նա լափում էր անկշտուրյամբ, ստով ու սրով,  
ինչ պատահի, ոնց պատահի, պատահի միայն,  
կենքում էր միտքը նրանց, կին ու երեխա,  
պատերազմներ գնում-ծախում՝ օտարի արյամբ...

Եվ դողում էր հոգու խորքում Հռոմից միայն,  
և դողում էր, և բամբասում օրը ցերեկով,  
երբ հեռու էր, ուժեղն ինքն էր, երբ մոտ՝ կարեկցող,  
բուրում էին տաք սրտերի մեջ սյուրման ու հինան...

**Թագադրում**  
(Աղձնիք, 95 ք.ա.)

Այնտեղ, որտեղ Տավրոսները համբուրում են Քաղեց լեռը,  
և Տիգրիսի հորդ ջրերը բաժանում են լեռնաշղթան,  
մերք խիստ՝ որպես լեռնային ձայն, հյուսիսային կողմը երկրի,  
մերք տաք՝ որպես հարավային սահմանները հարթավայրի,  
այնտեղ բազում աղբյուրներով ու գետերով բազմամոլոր  
դեպի Տիգրիսն են շտապում գետերը մեր խորհրդավոր...

Եվ գետերի ափեզերքին և լեռների թամբի վրա  
բազմություն է խուժել, տոհմեր և աշխարհներ բազմահմա,  
Այրարատից ու Սյունիքից, Բարձր Հայքից ու Գուգարքից,  
Ուտիք, Արցախ, Փայտակարան և մնացյալ աշխարհներից

Եկել են կարգ ու կանոնով և տարազով բազմանշան,  
բոլորի մեջ լոկ մի աստված և կրծքներին՝ զինանշան...

Պատվիրակներ հայոց տոհմից, պատվիրակներ բղեշխներից,  
քրմեր, որոնք զինված էին ծաղիկներով խաղաղության,  
և ամեն մի աշխարհի տեր քերում էր իր երկրի արծիվը,  
ու թնդում էր մեհենական երգը խրոխա, հազարաձայն,  
և ամենքը կանգնած դասով, իրենց երկրի գորության չափ,  
և ամենքը հապար իրենց տարածով և սուրբ քաջությամբ...

Այրարատից եկածները բերել էին խաղողի որք,  
սափորներում՝ արյուն-գինի և դեմքերին՝ այրված արև,  
քրմերի դասն էր շարված, և ծոքրին կար նրանց ձեռքին,  
և հաղթության դրոշներին անքրիթ էր արծիվը հաղթ...

Հպարտ էր իր դասով Սյունյաց աշխարհը փառարանված,  
քրմուհիներ կային բազում առաջնային շարքում դասված  
նրանց սևաչ ու լեռնային հայացքները խիստ էին ու լուր,  
և բուրում էին նարգիզները քրմուհիների ձեռքում ծաղկած...

Թագ չկրած արքայազնի հրամանը հենց առաջին  
կատարվել էր և ի նշան, և ի հարգանք  
ուազմիկների դասը երկրի, ոչ բղեշխի,  
ուազմիկների դասը երկրի հավաքել էր մեկ զենքի տակ...

Բազմամբոխ էր ու բազմաճայն նրանց երգի ձայնը վսեմ,  
որոտնորսա, քաջակորով և ալիքվող ձայնը այնքան,  
որ բազավորը բազադրվող, ճերմակ ձիու վրա նստած,  
հայացը իր դարձրել էր նրանց ձայնին, շարքին նրանց...

Սամձն էր կրծում բարակիրան, գավակը ձիգ, սուրբ կենդանին,  
խովանույզ, ամբոխատես ճեմում էր նա վազքով թերն,  
նրա մեջքին զուսպ, տիրաբար, գոհարակապ սանձի վրա  
անփութորեն երկարվել էր բազավորի աջը հպարտ...

Ալիքվում է երիվարը, ծփում հանդարտ ու տիրաբար  
դեպի դասը ընտրյալների՝ խոժոռադեմ, լուր քրմերի,  
նրանք, որոնք բազինեների և սեղանի շուրջը խմբված,  
հեղված գինու ու զոհերի շուրջը սեղմված, սպասում էին...

Եվ մարել էր բառաջը տաք, և եզների արյունը մուգ  
ծորում էր հանց հեղված գինի աստվածների սեղանին սուրբ,  
քրմապետի ձեռքերի մեջ շողում էր բազը ոսկեհուտ,  
ութշղողանի արեգակը բազի վրա որպես զմուս...  
Թեսերը ձիգ, բոխչի մոտ դեպի ութշղող արեգակը,  
զոյգ արծիվները պահապաճ՝ թերված աջ և ափակ կողմեր,  
և ծոփերը ոսկյա բազի եռաժանիք բափվել էին ցած,  
ծնծղում էր բազը շողուն արեգակի ու կրակի, բազինի առաջ:

Մյուսոնն էր կարում ու ծորում գինին,  
և արքայազնը կանգնած քիչ հեռու՝  
նայում էր պարքե, հպարտ քրմերին,  
քրմուիիններին սևաչ ու բոսր,  
որոնք մարմինները սեղմած խույրերում,  
լանջերը փակած զգեստ-խցերում,  
աչքերը՝ երկինք, շրբներին՝ բառեր,  
երգում էին խորխատ, արքայավայել...

Կրակի վրա բափվում էին թերթեր,  
խնկարույր թերթեր, որոնք զգնության,  
զլխապտույտի բույրեր էին տածում,  
հեղվում էր արյունը ցուլ ու խոյերի,  
և բառաչներն էին երկինք համբարձվում...  
Եվ երգի, արյան, խունկ ու բառաչի,  
և որոտընդոսս թնդյունին տեղիք՝  
արքան է իշնում սուրբ երիվարից...

Թագը ցոլում էր, ցոլում էր բազը,  
և ցնծությունն էր թնդում լեռներում,  
և հարքավայրում թնդում էր երգը,  
արքան նայում է ուամկանց դասին,  
քրմուիինները՝ սեղմված խույրերում,  
ձեռքերում բուրող ծորինը ծաղկած,  
քրմուիինները սևաչ ու անբարք  
երգում են, երգը՝ ծովերի հառաչ...

Արքան է իշնում սուրբ երիվարից,  
ծնկում են իսկույն ուղեկիցները,  
նրանք եկել են չորս աշխարհներից,  
ցնծում է ամբողջ Հայոց աշխարհը...  
Հայոց աշխարհում, ահա, այս պահին  
սուրբ է կանգնած արքայազնը լոկ,  
և նրա դիմաց կանգնած է միայն  
քրմապետը լուռ, ահեղ, ինքնապնի...

Թագը ցոլում է, ցոլում է բազը,  
քրմապետն է իշնում աստիճաններից,  
զոհասեղանի սուրբ բազինի դիմաց  
կանգնած է արքան, և նա հպարտ է...  
Քրմապետն իշնում է դանդաղ,  
ասես, տանում է իր երկրի միտքը,  
արքան նայում է ուամկանց հոծ դասին  
և թունդ է առնում արքայի սիրտը...

Քրմուիինների շրբներից պապակ  
ծորում է երգը հավիտենական,  
իշնում է հանդարտ աստիճաններից  
մեծ քուրմը՝ ձեռքին բազն արեգական...  
Երգն ալիքվում է ծորուն մեղրի պես  
և դառնում է բամբ, և շքեղաշուք  
զարկվում է երգը, զրնզում՝ որպես  
դաշտերի եզրից արշավող բուք...

Մերք ավերում է ծաղկունքը դաշտի  
ու մերք լափիզում անապատը շեկ,  
ծփում է երգը բույրի պես ծաղկի,  
ընդհատվում հանկարծ՝ ոգով ամեհի...  
Ծնկել է ամբողջ աշխարհը Հայոց,  
մաղվում է երգը խոնարհված զուխներին,  
ծնկել է, ահա, մեծ քուրմը գոռող,  
և բազինի առջև դրված է բազը...

Թագը զոհ է սոսկ, և բագակիրք,  
զոհ են այս պահին աստվածներն ահեղ,  
զրիոնության մեջ ամեն շունչ, էակ  
զոհ են և գերի Հայոց աշխարհին...  
Երկրի ծեզերից եկած դեսպանները  
շունչները պահած հետևում էին  
և փափում աշքերով իրար՝  
ո՞րն է նշանը այս հանդիսության...

Հաղթ ու տիրաբար ծնկել են, ահա,  
և՝ արքան Հայոց, և աշխարհն ամեն,  
մեկ վայրկյան միայն, միայն գեր մի պահ  
ծնկած են աշխարհն ու արքան ջահել...  
Եվ լոռության մեջ, ծոր լոռության մեջ  
մեծ քուրմը ելնում է տիրաբար,  
վայրկյան մեն միայն, երբ տերության մեջ  
քուրմն է տիրակալ...

Վայրկյանը դար է, ասես, լոռության,  
վայրկյանի տերերն են աստվածներն հայոց,  
թագը իշնում է մեղմ ու տիրաբար,  
և արքան Հայոց ելնում է ոտքի...

1987 թ.

**ԵՐԱԶԻ ԱՍՊԵՏԸ**  
(Անավարտ պոեմ)  
**Գլուխ առաջին**  
Տարօրինակ է բախտը մեր,  
կարող ենք ապրել մի դար,  
լինել պոետ կամ խոհարար,  
եփել-բափել համեղ խորտիկ,  
ընտիր ապուր, թվավածք պես-պես:  
Լինել պոետ և խսկապես,  
գրել երգեր սիրո մասին,  
մտքով թռչել դեպի լուսին,  
սիրել աստղերը, զգալ լեզուն,  
ապրել հավքի թոհջըր վեհ,  
բախտից տնքալ ցնծալ երգով,  
բայց ողջ կյանքում, օրինակ,  
շհանդիպել ու չտեսնել  
վեհ ասպետին:

Սակայն գիտեք, որ աշխարհում  
բախտը ժպտում է մեկին,  
և այս անգամ բախտը չընադ  
ժպտաց փոքրիկ Մհերին:

Տասը տարեկան տղա է նա,  
միտքը՝ խոհուն ու պրպտոյ,  
լեզուն՝ անուշ ու քաղցրաբառ,  
ուշիմ, խելոք, ժիր ու կայտառ:

Միրում է նա գրեեր  
ու ամեն օր դասերի հետ  
կարդում է զրույց ու հերիաքներ:

Վհա և բախտ տարօրինակ  
(իսկ աշխարհում չկան  
բաներ պատահական).  
հերիաքներից այդ բազմազան,

զրոյցներից, պատումներից  
թռավ, ընկալ ճամփա  
ասպետը իին երազների,  
անցավ հազար մոլորակներ,  
աստղեր պայծառ,  
որպես հրաշք մի դյուցազուն,  
իջավ վերից տղայի դեմ:

- Ողջույն,- ասաց ասպետն արի  
ու խոնարհեց գլուխը սեզ,-  
այն հեռավոր մոլորակում,  
երբ լսեցի խորդ թեկրեկ,  
երբ հասկացա միտքդ պայծառ,  
երազներդ ազնիվ ու խոր,  
որոշեցի ամեն գիշեր  
լինել թեզ մոտ,  
ապրել քեզնով,  
և ինչպես կարգն է հարգի,  
որ հասուկ է ասպետներին,  
լսել, խորհել կյանքի մասին:

- Խսկը ասպետ, այ թեզ հրաշք,  
սաղավարտով ու սուր սրով,  
կրծքին աստղ հավերժական,  
սրունքներին՝ կաշվե գոտի,  
պարեգոտ՝ զցած ուսին,  
աչքերը՝ թիլ, թիթը՝ ուղիղ,  
ձեռքին՝ նիզակ, ոսկե վահան,  
խսկը Աքիլեսն հավերժական:

Ծառ էր տեսել նա երազում  
և կարդացել հեքիաթներում,  
պատմության իր դասագրքում  
ասպետների մասին քաջ,  
բայց այս մեկը իր էությամբ  
հարազատ էր ու քնական,

երազներին մոտ էր այնքան,  
ասես բոլորն ի մի եկել,  
տվել-առել էին իրարու  
ամենը, ինչ ունեին քանկ:

Եվ զարմանքն այս տևեց շատ կարճ:

- Ողջույն ասպետ,- ասաց տղան,-  
հավատում էի քո զաստին,  
մինչև գիշեր քանի անգամ  
սպասել եմ թեզ մտովի:  
Սակայն ո՞ւր են զենքերը իմ,  
ճերմակ իմ ձին,  
վահանս թեր,  
թուրս փայլում՝ դեղնափրփուր,  
սրունքների ժապավենը,  
արքայական իմ ծիրանին...

Վյոր գիշերը անտառում այն,  
ուր կաղնիները հաստարուն  
շրջում են մեղմ ու խաղաղ,  
ուր հավը թե զազան,  
սողուն թե մարդ,  
ողջը ի մի,  
հավաքվելու են զրոյցի:

Ուզում եմ ես գնալ այնտեղ,  
քանի հավաքված են մեկտեղ,  
տեսնել, թե ինչպես են նրանք ապրում,  
ո՞վ է փախչում, ո՞վ հարձակվում,  
ո՞վ է վախից կծկված բնում,  
ո՞վ է շրջում խուլ անտառում,  
թե ինչպե՞ս է կկուն լալիս,  
վազրն ինչպե՞ս է որս անում,  
խսկ լուսանը՝ ծառի վրա,  
և թե ինչպե՞ս, ահից նրա,  
մարդը գիշերով անտառ չի մտնում,

և եղիկները բարակիրան,  
քարայծերը, հավերը խեղճ  
հանգիստ չունեն անտառի մեջ:

Ուշիմ լսեց մեր ասպետը,  
Արիլեար աստվածային,  
աչքերում թիլ ծնծղաց արև  
ու խինդ լցվեց աչքերն ահեղ,  
շարժեց նիզակն ալ կարմիր,  
ոտքը ուժգին խփեց գետնին,  
ու նրա դեմ կանգնեց, ահա,  
ճերմակ էն ձին, վրան առած  
վահանը թեք, թուրը ոսկե,  
դեղնափրփուր ու ծիրանին  
արքայական:

Ու այս հրաշք հայտնության հետ  
հայտնվեց իսկոյն և եք  
զինվորների ստվար մի խումբ,  
սաղավարտով ու տեգերով,  
կրծքներին լույս հավերժական,  
սրունքներին կաշվե զոտի,  
պարեգոտով, վահաններով,  
մեկը մեկին այնքան նման,  
ասես, ձևած նույն մկրասով:

Գլուխ երկրորդ

Չեմ կարող ասել հիմա,  
թե զորքը մեր միասնական,  
որքան ժամանակ գնաց,  
ճանապարհին դժվար ու հեշտ  
քանի զիշեր հանգստացավ:  
Բայց երբ լույսը բացվեց նորից  
Արիլեար տեսավ լեռան ստորոտին  
հազար, գուցե և ավելի, մարդկանց,  
որ խմբված էին իրար մոտիկ:

Վյ քեզ իրաշք, աղաղակներ,  
թնդյուն ու կանչ խառնվում են իրար,  
Արիլեար տարերքի մեջ  
քայլում է լուս մեկ վեր, մեկ վար,  
աղմկում են զինվորները,  
թամբում ձիերը խուճապահար,  
փորձությո՞ւն է, թե՝ արկած,  
որ ուղարկել է վերից Աստված:

Մոտենում է զունդը դանդաղ,  
ուր խմբված էր ամբոխը հոծ,  
օ՝, ինչ հրաշք, ինչ քանդակներ,  
Աստծու մատը, անշուշտ խառն է,  
մի զինվոր է կանգնած զլիին  
բազմաքանակ, անծայր զորքի,  
զրկին չքնաղ, մատաղ մի կոյս,  
վլնջում է ճեփ-ճերմակ ձին:

Ու նրանից թիչ այն կողմ  
պառավ մի կին ու ծերունի,  
ճեռքին բռնած ոսկե ձկնիկ,  
պառավի դեմ՝ տաշտակը հին

Ու տեսիլներ հերիաքներից,  
որոնք, երե չեք կարդացել,  
հերիաքասներ իմ բալիկներ,  
սկսեցեք, ուշ չէ քանի:

Վյս պատկերից թիչ այն կողմ,  
նույն հաստաբուն ծառի տակ,  
ոտքերը պիրկ, կուրծքը ճերմակ  
պտտվում է ուսյալ կատուն:

Նա երգում է ինչ-որ երգ,  
կարոտանքով ու համարձակ,  
արձագանքվում է երգն այդ  
լեռներում ու դաշտերում անծայր:

- Թոփր, քաջ իմ,  
արի Ռուպան,  
թոփր անսանձ  
սար ու ձորեր,  
հայելու մոտ  
արդեն որքան  
Լյուդմիլան է  
սպասում քեզ:

Աններող է Չեռնոմորը,  
գիշերը, տես, լի է դավով,  
Լյուդմիլային գերողները  
կանցնեն քո ճանապարհով:

Իսկ այն կողմ,  
դաշտի միջին  
թափառում է  
Ռուսլանի ձին,  
նրա չորս կողմ  
պտտվում է  
վիուկների  
պարերգը՝ հողմ:

Այս պատկերը դեռ չավարտված՝  
ծովն է ծփում՝ ահից հուզված,  
նրա ափին, ձեռքին պարան,  
քրջում է Բալդի ժառան:

Ծովը լի է սատանաներով,  
նրանք անզուսպ աղմկում են,  
իսկ պառավը՝ թաքուն ահով,  
հանգստացնում է տերտերին:

Քիչ էր մնում մոռանայի  
Միերին ու Աքիլլեսին,  
նրանք կանգնած զորքի առաջ  
անզուսպ խինդով քրջում են:

**Եվ Աքիլլեսն աստվածային**  
կոտորվում էր ծիծաղից խենք,  
նման տեսիլ, նման երազ  
նա չէր տեսել կյանքում երբեք:  
**Մերք նայում էր հուզված ծովին,**  
մերք տերտերին ու Բալդիին,  
նրանք իրենց տարերքի մեջ  
բնական են և ուրիշ:

**Չկար հպարտ կեցվածքն աստվածների,**  
**Պրոմեթեսի, նաև Զևսի,**  
**Հկային և կույսերը սիզածեմ**  
**Ոդիսևսի ու Պարիսի:**

**Եվ նա մեկ-մեկ շրջվում ու**  
աչքի պոչով նայում էր այն մեկին,  
որ նստած մեփ-մերմակ ձին՝  
Ռուսլան, Ռուսլան էր շշնչում:

**Աչքերը ջինջ՝ կապույտ անծայր,**  
մազերը թել՝ թափված ուսերին,  
շրբունքները՝ վարդի թերթեր,  
հասակը սեգ՝ մերմակ սոսի:

**Իսկ Բալդին այս, այ քեզ ժառա,**  
այ քեզ կոպախ, այ քեզ բիրտ ուժ,  
բոկը ոլորել, ձգել ծովը,  
սատանաներին խառնել է իրար:

**Իսկ այն մեկը զարմանալի,**  
զլսին կապած սպիտակ չալմա,  
փողքերն ուսած, ոտքերին՝ սոլեր,  
ձեռքին՝ լապտեր հազարամյա:

**Եվ մի օտար բառ ու բանով,**  
կասկածանքով, հայացքով թեր  
արտաքերում է ինչ-որ բառեր  
ու նայում լույսին թեկել:

Այս պատկերը դեռ չավարտված,  
մեկ ուրիշն է բարձրանում թեմ,

Աքիլեսը մեր խանդավառ

թիշ էր մնում տեղը նետեր:

- Խսաղաղվիր, արի՝ ասպետ,-

ասաց Մհերը Աքիլեսին,-

թո դեմ կանգնած է անզեն,

հերիաքների մեր Մաուգլին:

Ճարպիկ է նաև դյուրաքեկ,

անտառների մանուկն այդ խենք,

արդարամիտ ու բարի է նաև՝

Քիվինգի հյուսած զրուցում...

Ու ձգվում են անվերջ, անժայր

կերպարները հերոսների,

ու լցվում են դաշտ ու անտառ

շշուկներով հերիաքնային:

Վհա Հենզելն ու Գրետիխենը,

ծախորդ Փանոսն ու Մյունխաուզենը,

թիշ այն կողմ՝ Մոլիոսը, Անահիտը,

Փոքրիկ իշխանն ու Նազարը քաջ:

Չեխն հասցրել նրանք կարգին

արքնանալ հույզից այս մեծ,

երբ նրանց դեմ ելան, ովքե՞ր,

Սանչո Պանսան և Գոն Քիշոտը մեր:

Այս տեսիլքից դյուրված՝

ասպետը ծնկի իջավ ու ասաց,

որ անտառը կախարդված է

սիրո անտես հմայքներով:

Որ կուսական այդ անտառում,

նաև չի տեսնում ոչ մի գազան,

ամենքը բարի ու հնազանդ

իրենց ապուր են վայելում:

Նայեց Մհերը Աքիլեսին ու շշնչաց.

- Չհասկացա այս հերոսին,

թողնենք նրան այստեղ,

անտառը կանչում է մեզ...

Վրճջում էր անտառը խենք,

ալիքներով բազմահնչյուն,

շաշում էին արմատները,

կողակցի հետ զրուցում:

Թևաբախյուն, կանչեր օտար,

խլրտում էր սաղարթը հին,

ասես, բազում հեծվոր ծառեր

սլանում էին արձակ բաշով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խիզախ հավատարմության բանաստեղծը.Ներսես Աքարեկյան.....	4
ՎԵՐՁԻՆ ՎՆԳԱՄ ԱՂԱԹԻՐ.....	9
Հայունություն.....	11
Նախարան կամ ինքնակենսագրական.....	11
Հերոսական ապր չէ սա սոսկ.....	14
Ռուսմ եմ նկարել իոդին.....	14
Գրիշ բռնելը նույն է.....	15
Մարտ առանց գենքի.....	18
Մեր այգու բարդին ջրում է կամաց.....	20
Քանաստեղծությունը ծնվում է բանտում.....	20
Երեխային համբուրելու չափ մի սեր.....	21
Ո՞ւր եք շտապում.....	21
Գիշերային մեղմիքի.....	22
Խեղկատակը.....	23
Մարդ բանական.....	24
Ասովածամոր աշքերի մեջ.....	26
Ասոված ինքն է գծել ճամփան.....	27
Մոտեցում.....	28
Հանգի՛սու.....	28
Հեռացում.....	29
Իմ մարմնի ու իմ միջով.....	30
Իմ հոգնած տարիների մուժից.....	30
Աղօքը.....	31
Թեաւես երկար է ուղին.....	31
Գնամ, ես կգամ.....	32
Արձանների խաչմերուկում.....	33
Չնչի ես որմ ազատ.....	34
Ապրեցիր, ինչպես հնում.....	34
Երբ իրիկունը դողալով.....	35
Աշնանային խրախճանք.....	36
Փողոցում մի շուն գիշերվա մթում.....	37
Ինձ օտար է այսուհետ.....	37
Վերջին անգամ աղոթիր.....	38
Տե՛ր, դու կապրես հավիտենական.....	39
Վայրյաններ հետո.....	40
Դիմանկար.....	41
Հայմենական.....	41
Ու ցորս լիներ, ու լուր.....	42
Կրակներդ գուր մի մարիր.....	42
Գժվել եմ ես, այս, գժվել.....	43
Իջեցրու պատից խաչը.....	43
Գիշերը Վայնարում.....	44
Լինել բոլորի հետ.....	45
Այնան ուզում եմ խոսել մերկ.....	45
Անհավատություն.....	46
Մարդկային սեր՝ մարմնից հեռու.....	47
Վարդ կիսարան ավերակ.....	48
Կարափի երգն է, որ մուգ երկնից.....	48
Հավատից շատ է իմ հավատամքը.....	49

Հավատում եմ արևներին.....	49
Թե ուզում ես լեռան հասնել.....	50
Երիկունն իջավ աշքերիս մենակ.....	50
Հիմա լուսության եմ մատնել երգերս.....	51
Երկինքը՝ կապույտ.....	51
Խոնարինիր բամու.....	51
Մի ըիշ շատ է լուսունը.....	51
Տուր ինձ մի վայրկյան.....	52
Երազիս մեջ քեզ տեսա.....	52
Մեկ կորցնում եմ ամեն ինչ.....	52
Դրում անձքը լալիս է մենակ.....	53
Հեռու է իմ տունը, մշուշոտ.....	53
Սուսացիր դու.....	54
Ես էլ եմ հոգնել.....	54
Շնորհակալ եմ, Աստված.....	55
Երեկ ես Մարտին Իգենին ասացի.....	55
Իմ օրերը.....	56
Ինձ կախարդել են.....	57
Մայրս՝ տիրությունս.....	57
Նժոյզ իմ.....	58
Թե հոգնել ես.....	58
Ես գնում եմ.....	59
Թղրի վրա իջնում են բառերը.....	59
Մի մոր գիշեր.....	60
Երբ իջնում է գիշերը.....	60
Ծաղիկները մնանում են.....	61
Նրանք, որ երբեք չեն լրել մեզ.....	61
Օրը դառնում է առասպել.....	62
Մարդկան խճույք են սարքել.....	62
Ես իմ երգը դեռ չեմ երգել.....	62
Այդ ես եմ միայն.....	63
Քայլում եմ ու դեռ կամ.....	63
Ես երգում եմ լոկ հավերժությունը.....	64
Ես, որ դեռ որոնում եմ իմն.....	64
Ծառերը զարդարվում են.....	65
Նա, ով չի կարող իր վաղվա մասին.....	66
Նժար.....	66
Հուսահատություն.....	67
Բոլորի նման՝ դու էլ գնացող.....	68
Տե՛ր, բոլ շունչն իմ տամ այս բորին.....	69
Վասծու ատալոս.....	70
Կանցին, ասում եմ, կանցին, իմ սիրս.....	71
Հող ունենայի և ձեռքերով այս.....	72
Վայերից առաջ.....	73
Ինքներդ.....	74
Օրերիս պես ծանր.....	75
Վասված այսօք որոշեց.....	75
Հափշակերպյան ծովը ինձ առել.....	76
Մերն է մարդուն բերել աշխարհ.....	77
Մահապարտիս երգը.....	78
Միրտս ցավում է.....	79
Լուսություն է, ձեմ-ձուն չկա.....	80

Փոստ.....	81
Պարապություն.....	82
Իմ ձեռքը կրակն եմ բնկել.....	83
Բժիշկները կացում են.....	83
Արշալոյաներով անցել եմ հանդարտ.....	83
ՊԱՏԱՌԻՎՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ.....	85
Ասովածամոր տեսրով.....	87
ՀԱՎԱՍԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԸ.....	93
Տար արյուն.....	95
Երեւ մի օր.....	95
Ինչ եմ ուզում ինքս ինձնից.....	96
Մենք այն սերունդ ենք.....	97
Խնձանկար.....	98
Գեղին մոմի նման.....	99
Ես չեմ ուզում, որ գլուխ իմ զարդարի.....	99
Ինչպես դասիճը կացինը սրած.....	100
Կոտա.....	102
Եվ սերն է մեր սփոփանքի հզոր գինին.....	103
Ահա մաքում եմ ապակու վրայից.....	103
Քանաստեղծությունը.....	104
Քանաստեղծին.....	105
Մեկը ուրացավ.....	105
Սպասիք.....	106
Հետապարձ է ամեն մի քար.....	108
Մարդը չի ներում իրենից բարձրին.....	109
Հանգիստ խոսիր, տղան.....	110
Ուրիշ երազը վաճառողը.....	111
Փախած դարերից.....	112
Պարզապես եկել ու անց ենք կենում.....	113
Ծերեքը չեն գրում երգեր.....	113
Ռահիլը.....	114
Կեսօրին է մեր սովերը խիստ երկարում.....	117
Մենք այսուեղ հասանք.....	118
Արքաների աղորքը.....	119
Հավատարմության իիմներ.....	121
Չարչարված ու չարչրկված.....	122
Մեզ թվում է, թե մենք ճիշտ ենք.....	122
Մութ բնկավ.....	123
Պատանության ո՞վ իրաշը ձի.....	123
Մոռացված լուցիու մի քանի հատիկ.....	124
Մերմ ցանկը զարնամ վաղ.....	124
Մեզնից շատ խղճում եմ ես բռչուներին.....	125
Հոգնել եմ սիրուց՝ հանուն սիրու.....	126
Միջնորդություն.....	127
Մարդու առեղծվածն այնքան է մրին.....	131
Ինչ լինում է.....	132
Մեռավ գիշերը.....	132
Իմ բոյր աշումները.....	133
Լուս՝ մե ես.....	134
Դու ամեն օր մենակ.....	134
Ինչքան տիխորդյուն.....	134
Եվ րո սերը, և հոգին.....	135

Ինչ-որ տեղ ինուու.....	135
Ծով գիշերվա գիտերի տակ.....	136
Ասոծու արցունքը ընկել երկնքից.....	136
Հրե կածան.....	136
Լիճը սառեկ էր.....	137
Տառերը բափեցին իրենց սաղարքը.....	137
Մահը՝ կյանքի գերմանիքը.....	138
Երք տեսնում ես րո մեջ.....	138
Հենց նրա համար փառաքանեմ.....	139
Տարիների հատակից.....	140
Խորամանկ է սատանան մարդակերպ.....	141
Հրաշը.....	141
Քոնկվեցին հորիզոնում.....	142
Չիրենմերի պտուղն արդարա.....	142
Անձրևուս է ընդհատված մի երգ.....	142
Կոտմ են նապուենք.....	143
Նա գրեց երգեր.....	143
Գիտեմ, մենք կացնենք այսպես անձանոր.....	144
Չկարծեր, թե փոխվել է աշխարհը.....	144
Կապիկը.....	145
Լինում է բարի.....	146
Մի կոտր լույս՝ քարի վրա.....	146
Ունայնություն չի, ինչ մենք սիրում ենք.....	146
Որքան կրած սերմեր կան.....	147
Մամուն է նստել խաչքարի վրա.....	147
Անկաշան է սերը ձեր.....	147
Գիշերային մի որվական.....	148
Լուսն ճամփա.....	148
Ծառերի խոնավ սովերներում.....	148
Կյանքի ամենալավ երգը.....	149
Ցավմ ամեն ճամապահով սիրու է մտնում.....	149
Գիշերն իջավ.....	150
Կապույտ երկինք.....	150
Արտասմեր, աչքեր.....	150
Դու փնտրում ես ինձ նման.....	151
Ծառերը խոտում են կանգնած.....	151
Աշունը զայխ է.....	151
Արտասմեր, անձը.....	152
Ինչ պարզ է.....	152
Թողմելով անափ բնությունը կույս.....	153
Ոչ սիրեն գիտեսս.....	156
Պատկեր սիրու ու մեղկության.....	157
Եվա.....	162
Դոր Գոն Ժուան.....	164
ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԻԿ.....	167
Սերմակիցների երգը.....	169
Վաճառվեցին բռլոր.....	170
Հուշարձան 1937 թ.....	170
Տիրակալների պատկը.....	171
Երք տերը մարդն է.....	172
Խելահան մի դրդուկի երգ.....	173
Անձրևը չի ննջում.....	173

Իմ մեղերի վրա դրված է ծանր քար.....	174
Ուղեղի մեջ մեռնող օրը.....	175
Հայրենիքը հենվից, օ՛, ինչպես են սիրում.....	176
Սլքուր.....	177
Խոռոչների նման.....	178
Հինա զիտամ, թե ով եմ ես.....	179
Ձեր ծմբատությամբ ինձ մի գարմացրեք.....	180
Լինելույթան ճանապարհին.....	181
Նինվի՝ քաղաք հզորագույն.....	183
Եվ տեսնում եմ, ահա, տափաստանում.....	184
Բուժերան.....	185
Ո՛չ դու հերոս չես սովորական.....	185
Երեկ մեկը պատմեց.....	186
Գահը մարդուն չի դարձնում քազակոր.....	187
Դու ծիծաղո՞ւ ես.....	191
Կյանքից մի վայրկյան.....	192
Ուզում եմ դառնապ անհավատ.....	193
Մի տեսակ վազքի մեջ են.....	194
Քաց նամակ Աւոն Տեր-Պետրոսյանին.....	195
Գահը մարդուն չի դարձնում քազակոր.....	196
Փառքից են խոսում ու սիրոց.....	196
Քնել, ննջել անվերադարձ.....	197
Մահերգ.....	198
Երազին մեջ տխուր, տրոտմ.....	199
Աղոքը ինքնամոռացության.....	200
Վրյունուս բարեկամություն.....	201
Ինչ-որ տեղ կպայքի ոռոմբը.....	204
Երևանից իմ հին.....	205
Երեխաներին մի վախեցրեք.....	205
Քսաներորդ դար, զիսիս մեջ ծափեր.....	206
Ոչ հոլմ կա, ոչ քամի.....	206
Ոչ միայն հացիվ.....	207
Գլուխ տալու արթեստն հզոր.....	208
Խաղաղություն ամենեցուն.....	209
Ուղերձ հոսահատական.....	210
Օ՛, որքան գաղտմիք.....	210
Զիվանու հայրենիքում.....	211
ԳԵՂԻՐ ՄԵԶ ԵԿՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ.....	213
Հայրենականչ.....	215
Վրյոք կարո՞ն եմ ես.....	215
Նայեմ, նայեմ Արարատին.....	216
Ինքնապանություն.....	216
Լեռ մշտական ու վիրավոր.....	217
Հիմն արևի.....	218
Այս լեռան պես ներմակություն.....	219
Գողգորայի ծաղկի նման.....	220
Հացից քարձոր էիր, ցորենից մարուր.....	222
Դու սիրո մասին ինձ մի պատմիր.....	223
Հայրենիքի հետ.....	224
Մեր ցավը չդարձավ ուրիշներին ցավ.....	225
Այս, այս ծանր Արարատը.....	226
Քաղաքակրթության ու սիրո միջն.....	226

Երեխան մեր՝ այրութենք.....	227
Մի ժողովուրդ եմ ճանաչում.....	229
Այս լեռուն, քարքան այս տանջող.....	230
Նորից վայրենի քարքառոսք նենա.....	231
Առավոտն է բուն դրել Արագած լեռան.....	232
Պարտվածի երգը ինում է ընկճված.....	233
Աղքամարի քանակները.....	234
Հուշարձան Ապարանում զրիվածներին.....	236
Մի քանի տող վրիպումներ.....	237
Կիսարքմնի երազ.....	238
Մեր հայրերի շիրիմների.....	239
Երգիր, պետ, երգիր սերը.....	240
Երևան.....	241
Թող աշխարհն իր երգով խնդա.....	242
Կոտակ.....	243
Անահիտին.....	244
Առավոտ է իշեն.....	245
Ելի արյուն, ելի գետեր.....	245
Սպասում.....	246
Քեզ ասելու ոչինչ չունեն.....	247
Զինվորին.....	248
Թեկելոյանը քուրքական կինոնկարում.....	249
Ելնեմ սարեկոյ, ձորեկոյ, լացեմ.....	249
Մայրդ պիտի թեզ օրորեք.....	250
Հավատում եմ.....	251
Օրերի փոշին դեմքս կնաշի.....	252
Ցշմարիտի կեղծ մումետիկը.....	253
Չոհվածների հուշարձանի առաջ.....	254
Օրինյալ է.....	255
Նեսիր, լու՞մ ես, մոմք դյուրաքեկ.....	256
...Եվ անամց փառորվ.....	257
Գիմետան դրները փակեր.....	258
Ցավն է երեկ ինձ առաջնորդ.....	259
Ինչպես սերը հոտապայի Գանքերի.....	259
Դեսի մեզ եկող Հայաստան.....	260
Այնպէս խաղաղ են ծնվում հանգերը.....	261
Հոր Երանելու փորձությամբ խախիվ.....	262
Պատմական Հայաստան քարտեզի առաջ.....	263
Խոսք հրաժեշտի և սիրո.....	264
Մի ողջ գողգորա.....	266
Այս քառերի այբ ու թենը.....	267
Մուշ քաղաքից արևելք.....	268
Գառն է խորհուրդը հայրենի.....	269
Այս ու այն Հայաստանը.....	270
Իմ ժողովների, կրկին, ահա.....	270
Խաչքար.....	271
Անդնդախոր ձորերի սովորում.....	271
15 թիվ, մանկան ճիշեր.....	272
Ծաղկեպսակ.....	273
Դու քո երգը չես կարող երգել.....	274
Քառասովելու, ամոքվելու որքան դարեր.....	275
Ով երկինք չունի.....	275

Ոչ տարեկ է ցավի սրտի մեջ.	276
Ահա թե ինչո՞ւ.	277
Հունիսի 22, 1941 թ.	280
Դեկտեմբերի 9, 1988 թ.	281
Գիշերը Զվարքնոցում.	283
Բանաստեղծության ամեն մի կարիլ.	285
Նորից թեզ հետ.	286
ՄԻՋԱԴԱՐՅԱՎԱՆ ԱՆՁՐԵՎ.	287
Օ՛ ԲՐԱՄԹՅՈՒՆ, Օ՛ ՄԱՐԴ.	301
Արևն է ենում լեռներից մեր պերճ.	303
Գիշերն իջավ.	303
Արևն անզոր է.	303
Ծովերն հովերի բերանով մեղմիվ.	304
Աշուն.	304
Խրիկնամուտ.	305
Նորից աշուն.	305
Տոնվում են ծաները քամո կատակից.	306
Սրվել է ժայռի վրա.	306
Գնում է աշունը.	306
Աշուն.	307
Կապույտ տերևներ քափվեցին.	307
Լուսայգը փոել է թևերը.	308
Լուսինը սարք եղավ.	308
Գարուն է, զարուն.	309
Հանձարձ կարմրեց երկինքը կապույտ.	310
Բնյ-դր ծխաղելի մի բան է կատարվել.	310
Աշնան խոր լուրջան մեջ.	311
Աշունը նորից.	311
Աշուն.	312
Ռութեմի ծանուրն այս առավոտ.	312
Աշուն է.	313
Էլի ձմեռ ու էլի ցուրտ.	314
Ջյուն, ձյուն, ձյուն.	315
Վերջին աշուն, վերջին տերև, վերջին սեր.	315
Մազերդ քափվել է ոստերիդ.	316
Ելեմ, ընկենն ճամփա.	316
Նոր աշուն.	317
Ջյուր հյուսել է փողոց.	318
Ժայռը թիկնել է ծերունու նման.	318
Այս աշունը.	319
Պահ է լինում այնպես մոլոր, այնպես լուս.	319
Տաղ առավոտի.	320
Գարուն է, զարուն.	321
Սևարոյը վարդ.	323
Ծառն այնպես է քափում տերևները.	324
Բարակ ձյուն եկավ.	324
Քեզ ի՞նչ եղավ.	325
Կապույտ երեկոն իջել է պարեզ.	327
Հայ կինը.	328
Օրատորիա.	329
Չարբին իմ սեր.	331
Ձեզ, անձանորութի.	334

ՔԵԶ ՏԵՄՆԵԼԻՒ.	335
Լու՞մ ես, վեր կաց.	337
Սեր՝ երենքից ընկած թիրեն.	338
Քեզ երկար փնտրեցի, Եվա՝.	339
Ես կզան, որպես հալածական ամպ.	339
Սիրո ծաղիկ.	341
Ծայր սովոր ձգեց.	341
Խորիրդավոր իրիկուն այս.	342
Ես հալատում եմ.	343
Սերը վիրավոր կործով.	344
Մի լոիր ինորդ թեզ.	345
Քո՞յլո իմ, առոքք արա կրկիճ.	345
Սերը ծաղիկ է.	346
Դեղին երեկոն վովելի է խաղաղ.	346
Քո բովչական աշքերում.	347
Սև են օրերն ու կու.	347
Սոսակել է արդեն սիրելլ.	348
Նմանություն.	349
Վսում եմ՝ մենակ ես էլի.	349
Նորից ես ու դու.	350
Լուսույն.	350
Վսել, որ սիրում եմ թեզ.	351
Օրերում այս ծեր.	351
Ճերմակ թիրեն.	352
Գիշեր է, ուշ է.	352
Ռապսոնիա.	353
Վրժե սիրած.	353
Անձանորուհուն.	354
Օ՛, հեռու տար արցունքներն այդ.	354
Սեր.	355
Չէ, չեմ կանչի, չեմ կանչի.	355
Սիրում եմ ես աշքերդ խաղաղ.	356
Ես թեզ լոկ երգեր եմ ձոնել.	356
Խրիկվա պես մենակ ու լուս.	357
Հոգնած գոլիսս կիշեցնեմ կրծիդդ.	357
Մի քերուշ բան կա իրական որպես.	357
Աշնանյան երգը երգիր.	358
Դու՝ իմ վերջին լուս հավատ.	358
Ես թեզ կտամ ամեն բան.	359
Դու այնքան մոտ ես ու այնքան հեռու.	359
Մի իրիկուն նորա լուս տուն.	359
Ես մի կյուղակ ունեմ մաքուր.	360
Միրած.	360
Էլի դու ես, էլի ես.	361
Պենելոպե.	362
Ծաղիկների մեջ.	362
Սեր իմ.	363
Օրորիր, օրորիր.	364
Իրիկնային հովի նման.	364
Քեզ տեսնելիս, ես տեսնում եմ.	364
Մութ են բառերիդ աստղանիշերը.	365
Սիրո տառապանքը.	366

Քեզ վերցրի այսպես.....	367
Երե ավելի մոտենամ իրականին.....	368
Սերն Է ընկած, անա, մեր դեմ.....	369
Սերը մարմին ունի.....	371
Արի, միայն արի.....	372
Ես չեմ սիրում լոռոյունը.....	373
Դու շիկնո՞ւ ավագի աղջիկ.....	373
Ես պատկած եմ էլի.....	374
Միրո ծարավ.....	376
Տես հորիզոնը աղճառվեց լուսից.....	376
Մնա հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ.....	377
Իրիկնամուտը ստվերում առավ.....	378
Հերիաքների սիրահար.....	378
Այս աշխարհի ճամփերին.....	379
Նազեին.....	380
Դու ինձ մի մարուր հերիաք հորինիր.....	381
Տղադ գնաց աղջկան իր տեսնելու.....	382
Արևահան մի իրիկուն.....	382
Քո մեջ երգը հոսում է լուս.....	383
Ես կիշենեմ որպես կապույտ իրիկուն.....	383
Այն պահերին, երբ լուս եմ ես.....	383
Մեր.....	385
ՊՈԵԶԻԱՅԻ ԱՐՎԵՍՏ.....	387
Բանաստեղծերը.....	389
Գ-քականության մոնետիկները.....	389
Չարմանայի է, այնպես թերև.....	390
Զննալիկ.....	393
Չգրել.....	393
Գ-անգրահեր տղան.....	394
Երեկ մեկը խսում էր Պուշկինի մասին.....	396
Ել դրամ է զարմանալի թվան.....	396
Բառ.....	397
Քննադատ Ա. Թ.-ԻՆ.....	397
Նահանջ զգացմունքների և այլ գործոնների.....	398
Հելլապա.....	399
ԴԻՄՄԱԿՐՆԵՐ.....	401
Եղիշեին.....	403
Գ-քոյք Նարեկացուն.....	404
Նարեկացին, ի սեր Աստծու.....	405
Մարդո, որ գափս է դեպի մեզ.....	406
Գ-անին Վարուժանին.....	409
Մեծարենցին.....	410
Երկու երգ Վահան Տերյանին.....	411
Գ-ռող Հակոբ Մնձուրու հիշատակին.....	413
Արյունակից բանաստեղծին՝ Եղիշ Չարենցին.....	414
Պարզել է ձեռքերը կրակին.....	414
Նորից հիշել եմ ես թեզ.....	414
Խմանայվ՝ չխակացա.....	416
Վահան Թորովինցին.....	417
Չոն Հովհաննես Ծիրազին.....	418
Ալիսյա Կիրակոսյանին.....	421
Միերին.....	422

Եվ խարտյաշ էին մազերը.....	422
Միերին, երբ լրացավ 16 տարին.....	423
Լսոն Չանոնյանի հիշատակին.....	425
Աղվան Մակարյանի հիշատակին.....	427
Խնչպես Վատծու պատկերի դեմ.....	428
Վարուժանը օրորոցում.....	429
Օրիներու.....	430
Եղրորս՝ Վահագնի հիշատակին.....	431
Պարույր Սևակին.....	432
Գլուխը թեքած ուսին.....	432
Խաչիկ Չարարյանին.....	433
Մինաս Ավետիսյանին.....	434
Սլավիկ Չիլյոյանին.....	434
Սոկրատես.....	436
Պուտների ուսուցչին՝ Բայրոնին.....	438
Ֆեներիկ Գարսիա Լորկա.....	439
Միգել Սերվանտեսին.....	440
Օոլեանի կոյսյոր.....	441
Վաշ՝ Շամետ.....	443
Պոլոնիուս.....	445
Նապոլեոնին.....	446
Միշել Մոնտեն.....	447
Էնծայագիր.....	448
ՍՈՆԵՏՆԵՐ.....	449
ՔԱՌՅԱՎՆԵՐ.....	457
ԿԱՅՑՈՂՈՒԿՆԵՐ.....	463
Է-ՊԻԳՐԱՎՄՆԵՐ.....	469
ԱՍՏԾՈՒ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՅ ԿԱՄ ԳԼՈՒԽՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՎԱՐԱՀ.	483
Արվեստների բանգարանում.....	485
Գլավոլորը գլուխը չէ.....	486
Իր դերի համար չի ծառայում նա.....	486
Ճշմարտություն ասած բառը.....	487
Վաել էին՝ գնա-արի.....	488
Ի՞նչ գոյվս էր.....	488
Թե գլուխդ իր տեղում չէ.....	489
Մեծ գործիչ է.....	489
Գլուխ ունես, գրանի դիր.....	490
Բանաստեղծի գլուխ.....	491
Ոչ խսում էր և ոչ քորում.....	492
Գլուխործոց չէր.....	493
ՊՈԵՄՆԵՐ.....	495
Դիցարան.....	497
Աստղիկի լոգանքը.....	502
Էպիկական մանկություն.....	506
Չրույց Վարասոի հետ.....	516
Արևի տաճարը.....	523
Գ-այանե.....	547
Հոլովայիսապ.....	560
Գ-իգոր Նարեկացի.....	567
Չարենց-Նամե.....	582
Տիգրան Մեծ.....	588
Երազի ասպետը.....	597

**ՀԵՆՐԻԿ ՍԱՐԻԲԵԿՈՎԻՉ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԱՌԵԴ ԾՎԱԾՔ**

Բանաստեղծություններ

**ГЕНРИХ САРИБЕКОВИЧ БАБАХАНЯН  
ТАЙНА ЧЕЛОВЕКА**

Стихи

На армянском языке  
Ереван “Айастан” 2011

Հրատ. Խմբագիրներ՝ Էվելինա Մակարյան,  
Ո-ուզան Մարգարյան  
Համակարգչային մակետը՝ Արմինե Սարգսյանի  
Նկարչական ձևավորումը՝ Նանե Բարախանյանի

Տպագրությունը՝ «Եզեա» հրատարակչատան



Մտորագրված է տպագրությամ՝ 22.11.2011թ.:

Չափսը՝ 60x84 1/16:

Ծավալը՝ 38.5 տպ. մամուլ:

Տպարանակը՝ 300:

Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» հրատարակություն. Երևան, Բանհակյան 28: